

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԲՆԱԿԱԿԱԿՅՐԵՐԸ**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

*(ՀՀ գյուղական տարածքների համալիր
աշխարհագրական հետազոտություն)*

Երկրորդ բարեփոխված և լրամշակված
հրատարակություն

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2017

ՀՏԴ 911
ԳՄԴ 26.8
Պ 876

*Գիրքը հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Սասնագիտական խմբագիր՝

Աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ավագյան

Գրախոսներ՝

Աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Մելքունյան

ՏՆտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Ավետիսյան

Աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յ. Սայադյան

Պոտոսյան Ա.Յ.

Պ 876 Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը/Պոտոսյան Ա. Յ.: -Եր., ԵՊՀ հրատ., 2017 թ., 466 էջ:

Գրքում քննարկված են գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության տեսամեթոդական հիմնահարցերը՝ կարևորելով լեռնային երկրներում նմանատիպ հարցերի ուսումնասիրման խնդիրները: Փաստական ու վիճակագրական հարուստ նյութի մշակման, վերլուծության և ընդհանրացման հիման վրա տրված է ՀՀ-ի, որպես լեռնային երկրի, գյուղական տարածքների ու տարաբնակեցման ձևավորման, շարժընթացի, ժամանակակից վիճակի, տարածաշրջանային առանձնահատկությունների, սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից հիմնախնդիրների վերլուծությունն ու զնահատակումը:

Գիրքն օգտակար է աշխարհագետների, տնտեսագետների, ժողովրդագիրների, ազգագրագետների, քաղաքագետների, պատմաբանների, քարտեզագիրների, հասարակագետների, հայագիտության ոլորտի մասնագետների, ասպիրանտների, ուսուցիչների և ուսանողների համար: Այն արժեքավոր նյութեր է պարունակում ՀՀ-ի կառավարման համակարգի և տարածաշրջանային քաղաքականությամբ զբաղվող մասնագետների համար:

ՀՏԴ 911
ԳՄԴ 26.8

ISBN 978-5-8084-2239-1

© ԵՊՀ հրատ., 2017
© Պոտոսյան Ա., 2017

ՆԱԽԱԲԱՆ

Առանձին երկրներում տնտեսության և բնակավայրերի զարգացումը տեղի է ունենում բնակլիմայական տարբեր պայմաններ ունեցող տարածքներում, որի պատճառով տարածքի նպաստավոր կամ աննպաստ պայմաններն իրենց ազդեցությունն են թողնում հասարակության տարածքային կազմակերպման և վերջինիս հենքը հանդիսացող բնակավայրերի տեղաբաշխման և զարգացման վրա: Այդ երևույթն առավել ցայտուն գծերով է դրսևորվում լեռնային երկրներում, ինչպիսին նաև ՀՀ-ն է:

ՀՀ-ի գյուղական տարածքներն ու բնակավայրերի ժամանակակից ցանցը ձևավորվել է պատմական երկարատև ժամանակաշրջանում, բնաաշխարհագրական, պատմական և սոցիալ-տնտեսական որոշակի գործոնների ներգործության տակ: Դրանով հանդերձ, ՀՀ-ի գյուղական տարածքների ու տարաբնակեցման ժամանակակից պատկերի առաջացման մեջ առավել մեծ է խորհրդային ժամանակաշրջանի ազդեցությունը, երբ երկրի ինդուստրիալ զարգացման և բուռն ուրբանացման հետպատերազմյան ժամանակաշրջանում հիմնականում կայունացավ ՀՀ-ի գյուղական բնակավայրերի ցանցը:

Վերջին մոտ երեք տասնամյակում տեղի ունեցած իրադարձությունները (Սպիտակի երկրաշարժը, ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով երկրում առաջացած էներգետիկ և տնտեսական ճգնաժամը, շուկայական հարաբերությունների ձևավորումը, տարածաշրջանում ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառով առաջացած բնակչության միգրացիաները, ՀՀ-ի քաղաքական համակարգի փոփոխությունները, վարչատարածքային նոր բաժանումը, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման նոր համակարգը, սեփականաշնորհման գործընթացը, տնտեսության ճյուղային կառուցվածքի ձևավորված համասնությունների և ժողովրդագրական իրավիճակում առաջացած փոփոխությունները) զգալի տեղաշարժեր են առաջացրել ՀՀ-ի գյուղական տարածքների ու տարաբնակեցման մեջ:

ՀՀ-ի սոցիալ-տնտեսական հեռանկարային զարգացման խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ և դեր ունեն նաև ագրարային սեկտորի տարածքային կազմակերպման հիմք հանդիսացող գյուղական տարածքներն ու տարաբնակեցումը: Վերջինս խիստ կարևորում և արդիական է դարձնում ՀՀ գյուղական տարածքների համալիր աշխարհագրական ուսումնասիրությունը, որը հնարավորություն կտա բացահայտել ՀՀ-ի գյուղա-

կան տարածքներում տեղի ունեցող գործընթացները և զարգացման ժամանակակերպից միտումները: Դրանց ներքին մեխանիզմների և արտաքին գործոնների վերլուծության ու գնահատման միջոցով հնարավոր կլինի մշակել և իրականացնել գիտականորեն հիմնավորված այնպիսի սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային քաղաքականություն, որը կնպաստի հանրապետության գյուղական տարածքների ու բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին, գյուղական տարաբնակեցման համակարգի կատարելագործմանը և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Գրքի վերահրատարակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջին հրատարակությունից հետո ամփոփվել և հրապարակվել է 2011 թ. ՀՀ-ում անցկացված մարդահամարի արդյունքները, որը հնարավորություն է տալիս ավելի հավաստի տվյալներով ներկայացնելու հանրապետության գյուղական բնակավայրերի ժողովրդագրական իրավիճակը և առկա հիմնախնդիրները: Բացի այդ, աշխատանքում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, ավելացվել է նոր գլուխ, առանձին գլուխներում՝ պարագրաֆներ:

Սույն աշխատանքի ստեղծման համար հիմք են հանդիսացել ՀՀ-ի բնակչության և բնակավայրերի թվաքանակի վերաբերյալ 1831-2015 թթ. տարբեր տարեթվերի պաշտոնական վիճակագրական տվյալներն ու նյութերը, վերջին ավելի քան երեք տասնամյակում հեղինակի կողմից կատարված դաշտային գիտահետազոտական աշխատանքների ընթացքում ձեռք բերված նյութերը, գյուղական տարածքների հետազոտության վերաբերյալ տեսական և գիտական գրականությունը, ՀՀ-ի բնակչության ու բնակավայրերի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքները:

Հեղինակը շնորհակալությամբ կընդունի բոլոր այն դիտողություններն ու առաջարկությունները, որոնք հաշվի կառնվեն մեր հետագա գիտական աշխատանքներում:

ԳԼՈՒԽ 1

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈՒ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

1.1 Գյուղական տարածքների ձևավորման և զարգացման պայմաններն ու օրինաչափությունները

Երկրների ու շրջանների ամբողջ բնակելի տարածքը, որն ընկած է քաղաքային բնակավայրերից դուրս, իր բնական և մարդու կողմից վերափոխված լանդշաֆտներով, բնակչությամբ և բնակավայրերով (որոնք պատկանում են գյուղական բնակավայրերի կատեգորիային) ընդունված է անվանել **գյուղական տարածքներ** [134]: Գյուղական տարածքների գլխավոր տարրերը գյուղական բնակավայրերն են, որոնք իրենց գործառույթային բնույթով կարող են լինել. 1) **գյուղատնտեսական բնակավայրեր** (սրանց բնակչության հիմնական մասը զբաղված է գյուղատնտեսության մեջ), 2) **ոչ գյուղատնտեսական բնակավայրեր** (սրանք իրենց չափերով չեն համապատասխանում քաղաքային բնակավայրերին և սպասարկում են տրանսպորտային ուղիներին, անտառային տնտեսությանը, անտառարդյունաբերությանը կամ էլ ստեղծված են արդյունաբերական ձեռնարկություններին կից, ծառայում են բուժման կամ հանգստի կետեր), 3) **խառը տիպի գյուղական բնակավայրեր** (սրանք համատեղում են գյուղատնտեսական և արդյունաբերական գործառույթները):

Գյուղական բնակավայրերի ամբողջությունը կամ դրանց ցանցը և միջբնակավայրային կապերի ընդհանրությունը որոշակի տարածքի սահմաններում առաջացնում է գյուղական տարաբնակեցում, որը հանդիսանում է տարաբնակեցման միասնական համակարգի գլխավոր օղակներից մեկը:

Ընդունված է համարել, որ **գյուղական տարաբնակեցումը ոչ քաղաքային տարածքներում բնակչության կյանքի տարածքային կազմակերպման ձև է՝ տարբեր տիպի գյուղական բնակավայրերի ընդհանրության տեսքով, որոնք նախատեսված են մշտական կամ ժամանակավոր բնակության համար**: [134]:

Գյուղական տարաբնակեցումը պատմականորեն ձևավորված տարաբնակեցման երկու ձևերից մեկն է, որոնց միջև սահմանն ինչ-որ չափով նաև

պայմանական է, և գործնականում այն կարգավորվում է տարբեր երկրներում ընդունված օրենսդրական ակտերով, ըստ որի այս կամ այն բնակավայրը դասվում է քաղաքային կամ գյուղական բնակավայրերի շարքին: Սակայն գյուղական տարաբնակեցումը քաղաքայինից տարբերվում է հիմնականում նրանով, որ ապահովում է տնտեսական այլ գործառույթների կատարում, քան քաղաքային տարաբնակեցումը: Դրա հետ կապված գյուղական տարաբնակեցումն առանձնանում է բնակավայրերի առավել փոքր մարդաշատությամբ, դրանց ցանցի ավելի բարձր խտությամբ, կառուցապատման տնամերձ տիպի և 1-2 հարկանի տների տարածվածությամբ: Միայն գյուղական տարաբնակեցման դեպքում կարող են հանդիպել տարաբնակեցման այնպիսի ձևեր, ինչպիսիք են մենածուխ տարաբնակեցումը (խոտորային, ֆերմերային, անտառային պահակակետեր, ճանապարհային տնակներ և այլն) և սանր (100-200 բնակիչ և ավելի քիչ) բնակավայրերը [134]:

Աշխարհի երկրների և շրջանների մեծ մասում գյուղական տարաբնակեցման հիմնական մասը կազմում է գյուղատնտեսական տարաբնակեցումը (այն բնակավայրերի ցանցը, որոնց գոյությունն անմիջականորեն պայմանավորված է գյուղատնտեսական արտադրությամբ): Այդպիսին է նաև մեր հանրապետությունը, ուր գյուղական բնակավայրերի ճնշող մեծամասնության (95 %-ից ավելին) հիմնական տնտեսական գործառույթը գյուղատնտեսությունն է, իսկ մնացած գյուղական բնակավայրերում գյուղատնտեսությունն ունի նշանակալից բաժին: Բացի այդ, չնայած 33 ունի 64 % ուրբանացման մակարդակ, սակայն միայն մայրաքաղաքում կենտրոնացված է երկրի բնակչության 35,8 %-ից ավելին, իսկ բնակչության թվով հանրապետության առաջին յոթ քաղաքներում ապրում է քաղաքային բնակչության 76 %-ը: Ամասիայի, Աշոցքի, Արագածի և Բաղրամյանի տարածաշրջաններում չկան քաղաքային բնակավայրեր, իսկ Նոյեմբերյան, Վայք, Մեղրի, Մարալիկ, Տաշիր, Ճամբարակ, Թալին և Ապարան քաղաքային բնակավայրերում, որոնք համարվում են տարածաշրջանային կենտրոններ, մշտական բնակչության թիվը չի անցնում յոթ հազարից:

Բերված փաստերն ապացույցն են այն իրողության, որ 33 տարաբնակեցման միասնական համակարգում գյուղական տարածքներն ու տարաբնակեցումը հանդիսանում են կարևորագույն օղակ և լեռնային մակերևույթի հարուցած դժվարությունների, ինչպես նաև ուրբանացման խիստ օջախայնության պատճառով գյուղական տարածքների զարգացման գործընթացներում առավել մեծ դեր ունեն ոչ թե ուրբանացման, այլ տեղային

գործոնները (բնաաշխարհագրական, պատմաազգագրական, արտադրատնտեսական, սոցիալ-կենցաղային, տարածաշրջանային և այլն): *Դա նշանակում է, որ ԳԳ-ի նման լեռնային մակերևույթ, բնական պայմանների խիստ բազմազանություն և քաղաքային բնակչության բարձր կենտրոնացվածություն ունեցող երկրներում տարաբնակեցման միասնական համակարգում գյուղական տարածքներն ու տարաբնակեցումն ունեն «ինքնուրույնության» բավական բարձր աստիճան, վճռական դեր են խաղում լեռնային տարածքների զարգացման, տարածքային ու մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կայուն հասարակական զարգացման գործում:* Գետևաբար, ԳԳ նման լեռնային երկրներում գյուղական տարածքների ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտությունը և դրանցում տեղի ունեցող գործընթացների և զարգացման միտումների բացահայտումն ունեն տեսամեթոդական և կիրառական կարևոր նշանակություն:

Սոցիալ-տնտեսական աշխարհագրության մեջ բնակչության տարաբնակեցումն ընդունվում է որոշակի տարածքի սահմաններում բնակչության բաշխման և վերաբաշխման գործընթացը և դրա արդյունքը՝ բնակավայրերի ցանցը [114, 139]: Այլ կերպ՝ տարաբնակեցումը որոշակի տարածքում բնակչության տարաբաժանումն է, տարածքային կազմակերպումն ըստ բնակավայրերի և վերջիններիս համակարգի [102,204]: Տարաբնակեցումը երկրի տարածքի բնակեցման պատմական գործընթացն է, որն ուղեկցվում է բնակավայրերի և դրանց համակարգերի առաջացմամբ ու փոփոխություններով: Այն հասարակության տարածքային կազմակերպման ձև է, բնակչության համակենտրոնացումն է տարածքի որոշակի վայրերում: Ի վերջո, տարաբնակեցումը մշտական և ժամանակավոր բնակչություն ունեցող բնակավայրերի ամբողջությունն է: Տարաբնակեցման ձևավորումն ու զարգացումը պայմանավորված է սոցիալ-տնտեսական, աշխարհագրական և ժողովրդագրական բազմաթիվ գործոններով և պայմաններով [224]:

Հասարակության զարգացման ամեն մի նոր փուլ իր ներգործությունն է ունենում թե՛ առանձին բնակավայրերի և թե՛ բնակավայրերի տարածական համակարգի ու ցանցի՝ տարաբնակեցման բոլոր կողմերի վրա: Ներկայումս ավելի ու ավելի լայն տարածում է ստանում այն մոտեցումը, որ *«տարաբնակեցումն»* ավելի լայն հասկացություն է, քան *«բնակավայրերի ցանցը»*, քանի որ տարաբնակեցման գործընթացները կարող են տեղի ունենալ նաև այնպիսի տարածքներում, որտեղ նույնիսկ բացակայում է բնակավայրերի ցանցը: Տարաբնակեցման նման լայն ընկալումը՝ որպես գործընթաց և

միջավայր, հնարավորություն է տալիս այն դիտել որպես հասարակության տարածքային կազմակերպման և՛ նախադրյալ և՛ հիմք [56]:

Տարաբնակեցումն աշխարհագրական տեսանկյունից ուսումնասիրելիս խիստ կարևոր է դառնում բնական միջավայրի հետ փոխազդեցության բացահայտումը [139]: Այս իմաստով առանձնակի հետաքրքրություն և կարևորություն է ձեռք բերում լեռնային երկրներում գյուղական տարածքների ու տարաբնակեցման և բնական միջավայրի հետ փոխազդեցության ուսումնասիրումը, ժամանակակից միտումների բացահայտումը, քանի որ լեռնային տարածքներում բնական միջավայրն առանձնանում է բնակավայրերի ձևավորման և զարգացման համար ինքնատիպ պայմաններով:

Տարաբնակեցման մեջ անընդհատ տեղի են ունենում փոփոխություններ և զարգացում, առաջանում և վերանում են հակասությունները, նորը դուրս է մղում հինի, սակայն միաժամանակ գոյատևում են հինը և նորը, քանակական փոփոխությունները կուտակվելով հանգեցնում են որակականի՝ տարաբնակեցման աստիճանական զարգացումը զուգակցվում է թռիչքաձև փոփոխություններով [164]: Տնտեսության զարգացման շնորհիվ փոխվում են տարաբնակեցմանը ներկայացվող հասարակական պահանջները: Փոխվում են նոր բնակավայրերի ու նրանց խմբավորումների ստեղծման ու զարգացման հնարավորությունները:

Տարաբնակեցման գլխավոր օրինաչափությունը տարաբնակեցման ձևի համապատասխանությունն է տնտեսության զարգացման մակարդակին և առանձնահատկություններին [139]: Նախնադարյան հասարակարգին բնորոշ էր տարածքի բնակեցման դանդաղ գործընթացը, որը պայմանավորված էր արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակով: Այդ ժամանակաշրջանում տարաբնակեցումը բնութագրվում էր ցրվածությամբ և ոչ շատ քոչվորային ձևերի տիրապետությամբ: Անցումը երկրագործության սկիզբ դրեց լոկալ, ամրակցված բնակավայրերի ցանցի ձևավորմանը:

Ինդուստրիալ հասարակարգին բնորոշ է բնակչության ուրբանացված տարաբնակեցումը, որն առանձնանում է քաղաքային բնակավայրերում արտադրողական ուժերի աննախադեպ համակենտրոնացումով, ագլոմերացիաների և ուրբանացված շրջանների ձևավորումով, բնակչության տարածքային շարժունակության կտրուկ բարձրացումով և գյուղական բնակչության մասնաբաժնի նվազումով [139]:

Ցանկացած տարածքում բնակչության տարաբնակեցման գործընթացի զարգացումը պայմանավորում են տարբեր գործոնների ամբողջությունը,

որոնք բաժանվում են երեք խոշոր խմբի. 1. *սոցիալ-տնտեսական գործոններ*, 2. *բնական գործոններ*, 3. *ժողովրդագրական գործոններ*:

Հետինդուստրիալ երկրներում կենսամակարդակի բարձրացումը և էկոլոգիական արժեքների գիտակցումը հանգեցնում է նրան, որ բնակչությունը ձգտում է ապրել ոչ թե գերլցված և աղտոտված քաղաքներում, այլ գյուղերում, բնության գրկում, որին նպաստում են այդ ժամանակաշրջանում ձևավորված գյուղական տարածքների ենթակառուցվածքային հագեցվածությունը: Աճում է ծառայությունների ոլորտի դերը: Դրանց շնորհիվ քաղաքային բնակչությունը սկզբնական շրջանում տեղափոխվում է մերձքաղաքային շրջաններ, իսկ այնուհետև՝ նաև գյուղեր:

Ժամանակակից պայմաններում գործունեության տարբեր ձևերի ինտենսիվացումը և տարածական համակենտրոնացումն զգալիորեն փոխում են բնակավայրերի իրական տարածական սահմանները և տարբեր տիպի բնակավայրերի փոխհարաբերությունների բնույթը: Մասնավորապես՝ գյուղական բնակավայրերը դադարում են լինել միայն զուտ գյուղատնտեսական գործառույթ կատարողներ: Նրանք թե՛ տարածական և թե՛ գործառույթային առումով էլ ավելի են համախմբվում բազմագործառութային տարածքների մեջ [44]: Տրանսպորտային ուղիների ու միջոցների կատարելագործումը, բնակչության շարժունակության աճը, միասնականացման գործընթացները, նոր գործառույթների զարգացումը, մարդկանց պահանջումներին աճը, էկոլոգիական, սոցիալական և տնտեսական բնույթի այլ գործընթացներ օբյեկտիվորեն մեծացնում են մարդկանց գործունեության տարածական սահմանները, որոնք հաճախ դուրս են գալիս բնակավայրի իրավական սահմաններից: Այդ երևույթը դիտվում է նաև լեռնային տարածքների, մասնավորապես, ՀՀ գյուղական տարածքներում, սակայն տեղային մի շարք գործոնների ներգործության պատճառով մեզանում գյուղական բնակավայրերի զարգացման գործընթացներում գերիշխող դեր ունի գյուղատնտեսական գործառույթը: Վերջինիս արդյունավետության աստիճանը, բացի զուտ արտադրատնտեսական գործոններից, մեծապես կախված է նաև գյուղական տարածքների բնաաշխարհագրական ինքնատիպ պայմաններից և առանձին բնակավայրերում առկա սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական իրավիճակից, զարգացման գոյություն ունեցող միտումներից:

Հասարակական արտադրությունը ներգործում է բնակավայրերի ու դրանց ցանցի վրա բազմաթիվ «ուղիներով» և թույլ է տալիս բազմաբնույթ ձևերի առկայությունը: Բնակավայրերի որոշ գծերի համար որոշիչ նշանա-

կույրուն է ձեռք բերում արտադրողական ուժերի զարգացման մակարդակը, մյուսների համար (օրինակ, բնակավայրերի սոցիալ-տնտեսական տիպը, դրանց բնակչության սոցիալական կազմը և այլն)՝ արտադրական հարաբերությունները: Բնակավայրերի վրա հասարակական բնույթի երևույթներից առավել մեծ ազդեցություն են թողնում որոշակի տնտեսական բազայի վրա ձևավորված, պետական և իրավական հաստատությունները, մշակութային և քաղաքական կյանքի կազմակերպումը [203]:

Գոյություն ունեցող տարաբնակեցումն իր բազմազանությամբ կարող է ընկալվել միայն նրա նկատմամբ պատմական մոտեցմամբ [139]: Այն ձևավորվել է տարբեր ժամանակներում, իրենից ներկայացնում է պատմական զարգացման արդյունք և նրա բազմաթիվ գծեր իզուր է վերագրել գոյություն ունեցող արտադրատեղանակին:

Առանձին գյուղերի և դրանց ցանցի ձևավորման գործընթացում տնտեսության որոշիչ դերն առավել հստակ է դրսևորվում, երբ այն դիտում ենք որպես գլխավոր արտադրողական ուժի՝ բնակչության տեղաբաշխում: Բնակչության և արտադրության տեղաբաշխումը միասնական երևույթի երկու կողմերն են: Տնտեսության զարգացման մակարդակից է կախված գյուղական բնակավայրերի բնակչության թիվը, դրանց բաշխումն ըստ գործունեության ու տարածքի տնտեսական օգտագործման և աշխատանքի համակենտրոնացման աստիճանը:

Տնտեսության զարգացման օրինաչափություններից մեկը, պատմական որոշակի ժամանակաշրջանում, գյուղատնտեսական բնակչության թվի աստիճանական նվազումն է: Արտադրության մեջ տեղի ունեցած ցանկացած փոփոխություն, որը պայմանավորված է բնակավայրերի աշխատանքային ռեսուրսների ավելացման կամ նվազման, նրանց կազմի փոփոխության և աշխատանքի տեխնիկական զինվածության, արտադրության նոր տարածքային օջախների առաջացման հետ, անմիջականորեն ազդում են բնակավայրերի վրա: Այս տեսակետից առավել «շարժունակ» են զբաղված բնակչության կառուցվածքը և բնակավայրերի գործառույթային տիպերը, բնակչության ընդհանուր թիվը և բնակավայրերի մարդաշատությունը: Դանդաղ են փոխվում բնակավայրերի նյութական ձևերը: Էլ ավելի դանդաղ է փոխվում բնակավայրերի բուն ցանցը՝ կապված դրանցից որոշների վերացման և նորերի ստեղծման հետ [164]:

Արտադրության տարբեր տիպեր իրենց պահանջներն են թելադրում գյուղական բնակավայրերին ու տարաբնակեցմանը: Գյուղատնտեսական

արտադրության տարբեր տիպեր և դրա հետ կապված տնտեսության համար տարածքի օգտագործման բնույթը նույնպես հատուկ արտադրական պահանջներ են ներկայացնում գյուղական բնակավայրերին, խթանում տարաբնակեման որոշակի ձևերի զարգացումը:

Գյուղատնտեսական տարաբնակեցման այս կամ այն ձևերի ձևավորման վրա կարևոր դեր ունեն նաև տնտեսության տարածքում առավել աշխատատար ճյուղերի տարածքային համակենտրոնացման տարբերությունները: Վարելահողերի միևնույն մակերեսը (մի դեպքում՝ մեծ չափերի, մյուս դեպքում՝ մասնատված փոքր հողակտորները) խթանում են տարաբնակեցման տարբեր ձևերի առաջացումը: Առաջինը նպաստում է տարաբնակեցման համակենտրոնացմանը, երկրորդը՝ մանր-փոքր գյուղային, տարակենտրոնացված տարաբնակեցմանը, որը բնորոշ է նաև ՀՀ-ի շատ շրջանների համար:

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման բնույթի վրա էական ազդեցություն է թողնում նաև հողի նկատմամբ գոյություն ունեցող սեփականության բնույթը: Մասնավոր սեփականության պայմաններում կարող են ձևավորվել գյուղական տարաբնակեցման դիսպերս ձևեր, իսկ համայնավարական պայմաններում՝ խոշոր կոլեկտիվ տնտեսություններ:

Արտադրության տարածքային կազմակերպման համակարգում առանձին բնակավայրեր կամ բնակավայրերի խմբեր ստեղծում են որոշակի հասարակական աշխարհագրական դիրք [164, 209]: Յուրաքանչյուր բնակավայրի համար հասարակական աշխարհագրական դիրքը հանդիսանում է ինքնատիպ միջնորդավորող օղակ: Հասարակական աշխարհագրական դիրքի ստեղծման և դրա օգտագործման միջոցով տարաբնակեցման զարգացման ընդհանուր միտումները նպաստում են առանձին բնակավայրերի զարգացմանը: Բնակավայրերի աշխարհագրական դիրքով է պայմանավորված միջբնակավայրային կապերի բնույթը: Բնակավայրի գործառույթային փոփոխությունները որոշակի ձևով փոխում են նաև նրա կապերը և հասարակական -աշխարհագրական դիրքը, քանի որ այն արտահայտում է բնակավայրի տեղն արտադրության տարածքային կազմակերպման համակարգում: Հասարակական աշխարհագրական դիրքն էականորեն ազդում է բնակավայրի զարգացման վրա, միաժամանակ ինքն էլ փոփոխվում է այդ զարգացման ընթացքում:

Գյուղատնտեսական բնակավայրերի համար հասարակական-աշխարհագրական դիրքն ունի երկակի դեր: Առաջինը՝ դիրքն է բնակավայրի հողա-

տարածքների կամ տնտեսական տարածքի նկատմամբ, որը բնակավայրի գոյության տնտեսական հիմքն է: Երկրորդը՝ դիրքն է մնացած բոլոր տարրերի նկատմամբ, որոնք ունեն բնակավայրի համար որոշակի տնտեսական նշանակություն:

Հասարակական աշխարհագրական դիրքի կարևորությունն առանձին բնակավայրերի կամ դրանց խմբերի համար պահպանվում է պատմական ողջ զարգացման ընթացքում և շատ դեպքերում հենց դրանով է պայմանավորված բնակավայրի «ապագան»:

Հասարակական աշխարհագրական դիրքի ներուժի օգտագործումը և իրականացումը տարաբնակեցման և առանձին բնակավայրերի զարգացման օրինաչափություններից է: Չնայած որ դիրքը պատմականորեն փոփոխվում է, սակայն որպես բնակավայրերի կամ տարաբնակեցման զարգացման գործոն, գոյություն ունի մշտապես, քանի դեռ գոյություն ունեն արտադրությունը և տարաբնակեցումը:

Տարաբնակեցման արտաքին տեսքի ձևավորման համար որոշակի, իսկ երբեմն նաև միանգամայն նկատելի, դեր ունեն տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող իրավական և քաղաքական հաստատությունները, տիրապետող գեղագիտական հայացքները: Գյուղական բնակչության կյանքի մակարդակին, մշակույթին և սոցիալ-տնտեսական պայմաններին համապատասխան ձևավորվում է գյուղական շինարարության որոշակի ավանդույթներ, որոնց առանձին տարրեր պահպանվում են ժամանակակից գյուղերի մեջ: ՀՀ-ի ժամանակակից գյուղերում կան բազմաթիվ տարրեր, որոնք պայմանավորված են խորհրդային ժամանակաշրջանում գոյություն ունեցող վարչաքաղաքական և տնտեսական իրավիճակով:

Ժամանակակից գյուղական բնակավայրերի մեջ պատմական հաջորդականությունը տարբեր աստիճաններով զուգակցվում է հինի, նորի և նորագույնի գծերով: Այդ զուգակցումներն առաջանում են առաջին հերթին նյութական ձևերի կայունության շնորհիվ, նոր պայմաններին, շատ դեպքերում, դրանց հարմարվողականությամբ և տնտեսական անհրաժեշտությամբ: Երկրորդ՝ իրենց դերն ունեն նաև պատմականորեն ձևավորված սովորույթներն, ավանդույթները և բնակչության ճաշակը, որոնք այս կամ այն չափով արտահայտվում են գյուղական նոր շինարարության մեջ: Այս ամենն ընդհանրության մեջ ստեղծում է գյուղական բնակավայրերի պատմական հաջորդականություն, որը ցանկացած ժամանակ հանդիսանում է բնակավայրերի հետագա զարգացման պայմաններից մեկը [162]:

Գյուղական բնակավայրերի և դրանց ցանցի պատմականորեն ստեղծված ձևերի կայունությունը շատ հարաբերական է: Այն կախված է նախ և առաջ նրանից, թե ինչքան սուր է հակասությունը նոր պայմանների և պահանջներին նկատմամբ, որքանով է հասարակությունը ստիպված հանդուրժել այդպիսի հակասությունները: Այնուամենայնիվ, ցրված, խուտորային կամ մանր օջախային տարաբնակեցման գոյությունը ներկայումս տարբեր երկրներում և ՀՀ-ում պատմական հաջորդականության արդյունք է և դեռևս երկար կպահպանվի, պայմանավորված մեր ռելիեֆային պայմաններով, որոշակի ավանդույթներով և սովորույթներով:

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման առանձնահատկություններն իրենց դերն ունեն հասարակության տարածքային կազմակերպման գործում: Դրանք հանդես են գալիս որպես որոշակի տնտեսական գործոն: Միաժամանակ, տարաբնակեցման առանձնահատկությունները խաղում են մշակութաքաղաքական գործոնի դեր: Բնակավայրերի կենտրոնացվածությունը կամ էլ ցրվածությունը ստեղծում են տարբեր պայմաններ սպասարկման ծառայությունների, մշակութային կյանքի և զանգվածային քաղաքական-դաստիարակչական աշխատանքների իրականացման համար: Տարաբնակեցման առանձնահատկությունների դերը ոչ պակաս կարևոր է նաև բնակչության ամենօրյա կյանքի կազմակերպման համար:

Գյուղական տարածքների առանձնահատկություններով է պայմանավորված նաև մարդու ազդեցության աստիճանը բնության վրա: Առավել մեծ չափով վերափոխված են բնակավայրերին մոտ և անմիջականորեն բնակավայրերի տարածքները: Գյուղական բնակավայրերի ձևավորած լանդշաֆտները ստեղծում են մարդկանց կյանքի համար որոշակի հիգիենիկ և գեղագիտական պայմաններ: Բնական միջավայրի վրա գյուղական բնակավայրերի ազդեցության հարցը բնության վրա մարդու ազդեցության ընդհանուր հիմնախնդրի մասն է և ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն:

Գյուղական տարածքներում տեղի ունեցող փոփոխություններն արդյունք են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների ազդեցության: Արտաքին գործոններից են երկրի քաղաքական կառուցվածքի և վարչատարածքային բաժանման փոփոխությունները, տնտեսության բազմազանացումը կամ հակառակը, տնտեսական նոր հարաբերությունների ստեղծումը և զարգացումը, ժողովրդագրական իրավիճակի և տարածքի տնտեսաաշխարհագրական դիրքի փոփոխությունները, տարածքի բնառեսուրսային

ներուժը, ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսները, սոցիալ-տնտեսական, քաղաքական և էկոլոգիական իրավիճակները, ենթակառուցվածքային տարրերը:

ԳՏՀ-ի ժամանակակից պայմաններում տարաբնակեցման գործընթացների ձևավորման ու զարգացման վրա ավելի ու ավելի մեծ ազդեցություն են թողնում ներքին մեխանիզմներն ու գործոնները, այդ թվում նաև՝ ինքնակազմակերպման և ինքնակարգավորման գործընթացներն ու մեխանիզմները (բնակչության բնական վերարտադրությունը, միջբնակավայրային, աշխատանքային, տնտեսաարտադրական և սոցիալ-մշակութային կապերի զարգացումը, մարդկանց տարածաժամանակային գործունեությունը և դրա հետ կապված ժամանակային ռիթմերը) [44]:

Այսպիսով, գյուղական տարածքների ու տարաբնակեցման աշխարհագրական ուսումնասիրություններում ելակետային դեր ունեն տեսական հետևյալ դրույթները.

➤ գյուղական տարածքների ու տարաբնակեցման ձևավորումն ու զարգացումը տեղի է ունենում պատմաաշխարհագրական, բնատնտեսական, սոցիալ-քաղաքական, աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, տարածաշրջանային և էկոլոգիական գործոնների, ինչպես նաև հասարակական կյանքում տեղի ունեցող մի շարք երևույթների ներգործության տակ,

➤ գյուղական տարածքներում տեղի ունեցող գործընթացներն առանձնահատուկ գծերով են դրսևորվում լեռնային երկրներում և տարածաշրջաններում, քանի որ վերջիններս առավել զգայուն են բնատնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, քաղաքական, աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, էկոլոգիական և տեղային այլ գործընթացներում տեղի ունեցած փոփոխությունների նկատմամբ,

➤ ուրբանացման խիստ օջախայնություն ունեցող լեռնային երկրներում գյուղական տարածքների զարգացման գործընթացներում առավել մեծ դեր ունեն ոչ թե ուրբանացման, այլ տեղային գործոնները (բնաաշխարհագրական, պատմաազգագրական, սոցիալ-կենցաղային, տարածաշրջանային և այլն),

➤ ՀՀ-ի նման լեռնային տարածք, բնական պայմանների բազմազանություն և քաղաքային բնակչության բարձր կենտրոնացվածություն ունեցող երկրների տարաբնակեցման համակարգում գյուղական տարածքներն ու տարաբնակեցումն ունեն «ինքնուրույնության» բարձր աստիճան և վճռական դեր են խաղում լեռնային շրջանների զարգացման, տարածքային ու մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, կայուն հասարակական զարգացման գործում:

1.2 Գյուղական տարածքների ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության հիմնական խնդիրները և մեթոդները

Ցանկացած շրջանի գյուղական տարածքների ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտություններում առաջնային խնդիրներից մեկը տեղեկատվության հավաքման, մշակման և ներկայացման եղանակներն են, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն «ցույց տալ», այլ «բացատրել» և «գնահատել» գոյություն ունեցող գյուղական տարածքների ու տարաբնակեցման պատկերը և նրա բազմազանությունը:

Առանձին բնակավայրի և գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության մեթոդական հարցերը սկզբնական շրջանում մշակվել են Յու.Սաուլշկինի [197], իսկ այնուհետև խորացվել և հետագա զարգացում են ստացել Ս.Կովալյովի [117, 164, 166], Վ.Ջառշվիլու [147, 149], Շ. Գեոկչայսկու [135], Վ.Մաքսիմովի [153], Ա.Ալեքսեևի [116] և այլ հեղինակների կողմից:

Գյուղական բնակավայրերի աշխարհագրական հետազոտությունը լուծում է կարևորագույն մի քանի խնդիրներ: Այդպիսի հետազոտության դեպքում, որը գործ ունի առանձին (անհատական) օբյեկտների խիստ բազմազանության հետ, հատուկ նշանակություն ունի ***գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման տիպերի վերլուծությունը***: Վերջինս ենթադրում է ինչպես գյուղական բնակավայրերի, այնպես էլ տարաբնակեցման տարբեր տարրերի (բնութագրիչների) վերլուծություն, որոշակի առանձնահատկությունների բացահայտում և ընդհանրացում: Դա հնարավորություն է ստեղծում հիմնավորված տիպաբանության համար և հիմք է տալիս կատարել տարաբնակեցման շրջանային տարբերությունների վերլուծություն, առանձնահատկությունների բացահայտում և շրջանացում:

Ցանկացած տարածաշրջանի գյուղական տարածքներն ու տարաբնակեցումը հետազոտելիս պետք է նկատի ունենալ, որ ուսումնասիրության նպատակը ոչ թե առանձին գյուղական բնակավայրերի մանրամասն հետազոտությունն է, այլ ամբողջ տարածաշրջանի գյուղական բնակավայրերի համակարգի գործառության և տարածքային կառուցվածքների առանձնահատկությունների ու զարգացման օրինաչափությունների բացահայտումը: Այսինքն՝ գյուղական տարածքների աշխարհագրական հետազոտություններում ***ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում*** բնակավայրերի տարածական խմբերը, այլ ոչ թե առանձին բնակավայրերը:

Ոչ պակաս կարևոր խնդիր է նաև **գյուղական բնակավայրերի գործունեությունը և զարգացումը** բնութագրող կապերի բացահայտումը, որը թույլ է տալիս հասկանալ բնակավայրերի զարգացումը և նրա աշխարհագրական տարբերությունների օրինաչափությունները:

Գյուղական բնակավայրերի աշխարհագրական **հետազոտության կարևոր ուղղություններից** է միջբնակավայրային կազմակերպչատնտեսական և վարչական, տնտեսաարտադրական, աշխատանքային և մշակութային-կենցաղային բազմազան կապերի ուսումնասիրությունը: Առավել կարևոր են և հետազոտությունների հիմնական օբյեկտ են **ներտարածաշրջանային կամ ներմարզային միջբնակավայրային կապերը**: Դրանց հետազոտության շնորհիվ բացահայտվում են տարաբնակեցման համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները և առանձնացվում են ենթակարգության տարբեր աստիճանների վրա գտնվող կենտրոնները: Առանձնակի կարևորություն ունի **տարաբնակեցման կենտրոնների և տարածաշրջանի գյուղական բնակավայրերի միջև առկա տարաբնույթ կապերի վերլուծությունը**:

Լեռնային երկրներում գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության կարևորագույն ուղղություններից է տարաբնակեցման տարածքային կառուցվածքի ուսումնասիրությունը, գյուղական բնակավայրերի խմբավորումը: Ընդունված է գյուղական բնակավայրերի խմբավորումն ըստ **արտաքին ձևերի, արտադրական և ծագումնաբանական տիպերի**: Հետազոտության այդպիսի ուղղությունները հնարավորություն կտան բացահայտել.

➤ թե գյուղական տարածքներն ու տարաբնակեցման արտաքին ձևերն ինչպիսի՞ բնական և սոցիալ-տնտեսական գործոններով են պայմանավորված,

➤ տարաբնակեցման տարբեր ձևերն ինչպիսի՞ ազդեցություն են թողնում բնակչության ապրելակերպի բնույթի և նրա արտադրական գործունեության վրա,

➤ ինչպիսի՞ն է տարածաշրջանի տարբեր շրջանների գյուղական բնակավայրերի արտադրական մասնագիտացման բնույթը,

➤ տարածաշրջանի գյուղական բնակավայրերի ժամանակակից վիճակն ինչքանով է պայմանավորված պատմաաշխարհագրական գործոններով (բնակչության պաշտպանական նկատառումներով), նոր տարածքների յուրացմամբ, վերաբնակեցման և գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացման գործոններով:

Տարաբնակեցման կառուցվածքի վերլուծության միջոցով բացահայտվում են գյուղական բնակավայրերի ցանցի առանձնահատկությունները (գյուղական բնակավայրերի միջին հեռավորությունը և միջին խտությունը) և տարաբնակեցման հիմնական ձևերը (խմբային, գծային, ցրված և այլն): Լեռնային երկրների գյուղական բնակավայրերի ուսումնասիրություններում *առանձնակի կարևորություն են ստանում ռելիեֆի տարբեր ֆիզիկական հատկանիշների* (բացարձակ բարձրության, լանջերի դիրքադրության, թեքությունների, ռելիեֆի մասնատվածության) և *գյուղատնտեսական հողահանդակների կառուցվածքի ազդեցությունը* գյուղական տարածքների բնույթի վրա, ինչպես նաև տվյալ երկրում և նրա առանձին տարածաշրջաններում *գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխման առանձնահատկություններն ըստ բարձրության գոտիների*:

Գյուղական տարաբնակեցման տարածքային կառուցվածքի յուրահատուկ կողմերից է նաև *բնակավայրերի մեծության, տիպերի և զարգացման առանձնահատկությունների փոփոխություններն ըստ մարզկենտրոններից և տրանսպորտային մայրուղիներից ունեցած հեռավորության գոտիների*:

Լեռնային երկրների գյուղական տարածքների աշխարհագրական հետազոտություններում, հատկապես ժամանակակից պայմաններում, երբ այդպիսի տարածաշրջաններն ունեն սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական սուր հիմնախնդիրներ, խիստ կարևոր են *դարձել լեռնային տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման և գյուղական տարաբնակեցման փոխազդեցությունների* հարցերի քննարկումը:

Լեռնային երկրների գյուղական բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրությունները պահանջում են *վերլուծական հետազոտությունների և համադրման զուգակցում*: Այդ իմաստով մեծ դեր ունի համեմատական-աշխարհագրական մեթոդը:

Ինչպես աշխարհագրական հետազոտությունների այլ ոլորտներում, այնպես էլ գյուղական տարածքների ուսումնասիրություններում, համադրումը կարող է ունենալ տարբեր բնույթ: Լեռնային երկրներում գյուղական տարածքների համալիր աշխարհագրական հետազոտությունների համար առավել *տիպական ուղղությունը «տարածաշրջանային» համադրումն է* որոշակի տարածքի տարաբնակեցման ամբողջական բնութագրման ձևով: Վերջինիս միջոցով լիարժեքորեն բացահայտվում են լեռնային երկրների և նրա առանձին տարածաշրջանների գյուղական տարածքների ու տարաբնակեցման առանձնահատուկ կողմերը և օրինաչափությունները: Դրա հետ

միաժամանակ, բնակավայրերի առանձին կողմերի վերլուծությունը և կապերն օրինաչափորեն հանգեցնում են նաև համադրման այլ ձևերի անհրաժեշտությանը [164]:

Այսպիսով՝ գյուղական տարածքների առանձին տարրերի և տարածքային միավորների առանձնահատկությունների ամբողջական պատկերի բացահայտումը, տարաբնակեցման տարրերի, ձևերի և տիպերի բազմազանությամբ աչքի ընկնող լեռնային տարածքներում, հնարավոր է միայն վերլուծության և համադրման տարբեր ձևերի զուգակցմամբ:

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտություններում վերլուծությունը հնարավորություն է տալիս «տրոհել ամբողջը» և ճանաչել այն: Այն դիալեկտիկորեն կապված է համադրման հետ: Տարաբնակեցման վերլուծության միանգամայն բազմազան ձևերի մեջ կարելի է առանձնացնել դրա մի քանի գլխավոր ասպեկտներ [164]: Դրանցից առաջինը բնակավայրի բնակչության, նյութական ձևերի և տարածքի ու նրա աշխարհագրական դիրքի ուսումնասիրությունն է: Երկրորդը՝ տարաբնակեցման տարբեր կողմերի (բնակավայրերի մարդաշատության, խտության, տեղանքում փոխադարձ դասավորության և այլն) համեմատական վերլուծությունն է: Երրորդը՝ բնակավայրերի տարբեր կապերի (պատմական, տարաբնակեցման և տնտեսության, բնական միջավայրի և տարաբնակեցման, փոխադարձ կապերը և այլն) վերլուծությունն է:

Աշխարհագրական տարածքային այլ համակարգերի նման գյուղական բնակավայրերին ևս բնորոշ են ներքին և արտաքին կապերի բազմազանությունը, որը պահանջում է այդպիսի երևույթների ուսումնասիրություններում համալիր մոտեցում: Այդ պատճառով էլ բնակավայրերի աշխարհագրական հետազոտության մեթոդաբանական և մեթոդական կարևոր հարցերից է սահմանել տարրերի այն շրջանը, որոնց ուսումնասիրումն ամբողջությամբ անհրաժեշտ է և բավարար որևէ տարածքի գյուղական բնակավայրերի ցանցի համալիր բնութագրման համար:

Ի տարբերություն քաղաքների, գյուղական բնակավայրերի աշխարհագրական հետազոտությունն առանձնանում է յուրահատուկ գծերով և ընդգրկում է ընդհուպ մինչև առանձին արտադրական կառույցները և կոնկրետ հիմնարկները [52]: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղական բնակավայրերն առավել մեծ չափով է կապված բնական միջավայրի հետ, որն իր բազմազանությամբ առանձնանում է հատկապես լեռնային երկրներում և տարածաշրջաններում: Նման պայմաններում առավել

կարևոր է դառնում գյուղական բնակավայրերի և բնական միջավայրի միջև առկա փոխհարաբերությունների ուսումնասիրությունը:

Գյուղական բնակավայրերի և դրանց ցանցի աշխարհագրական հետազոտության բազային սխեման, որը մշակվել է Ս.Կովալյովի և հարստացվել այլ հեղինակների կողմից, կիրառելի է նաև լեռնային երկրների համար: Սակայն, *ցանկացած տարածաշրջան և հատկապես լեռնային երկրները, ունենալով բնատնտեսական և բնակավայրերի ինքնատիպ գծեր, պահանջում են առավել ուշադրություն դարձնել այն հարցերին, որոնք տիպական են տվյալ տարածաշրջանին և մասնավորապես՝ գյուղական տարածքներին:* Այդպիսի դեպքում գյուղական բնակավայրերի հետազոտությունը, կարելի է ասել, ձեռք է բերում մասնագիտացված ուղղություն:

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման աշխարհագրական հետազոտություններում առավել կիրառելի են *վիճակագրական, պատմաաշխարհագրական, համեմատական - աշխարհագրական, քարտեզագրական, տիպաբանության, շրջանացման և դաշտային* հետազոտության (տեսողական) մեթոդները: Վերջինս ընդգրկում է նաև բնակչության անմիջական հարցումները (սոցիոլոգիական մեթոդը):

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման հետազոտության կարևորագույն ուղղություններից է գյուղական բնակավայրերի դասակարգումը, որը հնարավորություն է տալիս առանձնացնել բնակավայրերի տիպերը և հասկանալ դրանց առանձնահատկությունները, զարգացման միտումները [52]: Առանձնացնում են գյուղական բնակավայրերի խմբավորումն ըստ մարդաշատության, գործառուբային կառուցվածքի, ծագումնաբանական հատկանիշների, սոցիալ-ժողովրդագրական և ձևաբանական կառուցվածքի, աշխարհագրական դիրքի: Ժամանակակից պայմաններում կարևոր նշանակություն է ստանում գյուղական բնակավայրերի համալիրային դասակարգումը կամ տիպայնացումը, երբ հաշվի են առնվում գյուղական բնակավայրերի առավել տիպական և կարևոր հատկանիշները:

77 գյուղական տարածքների հետազոտության երկարամյա փորձը և ստացված արդյունքները հիմք են տալիս նշելու, որ լեռնային երկրների գյուղական տարածքների աշխարհագրական հետազոտություններում առանձնակի կարևորություն են ստանում այնպիսի տարրերի ուսումնասիրումն ինչպիսիք են գյուղական տարածքների ձևավորման բնաաշխարհագրական, պատմական և սոցիալ-տնտեսական նախադրյալները, բնակավայրերի մարդաշատության, բնակչության ու բնակավայրերի տե-

դաբաշխման առանձնահատուկ գծերը լեռնային տարածքներում, բնակավայրերի ձևաբանական, գործառութային (արտադրական) և ժողովրդագրական տիպերը, գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը, տարածքի բնակեցման և տարաբնակեցման տիպերը: Տեսամեթոդական և կիրառական տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն լեռնային երկրների գյուղական տարածքների համալիր տիպաբանության և շրջանացման հարցերի քննարկումը: Դրանք հանդիսանում են լեռնային երկրների գյուղական տարածքների աշխարհագրական հետազոտություններն ընդհանրացնող և զարգացման միտումները բացահայտող ուղղություններ: Առանձնակի կարևորություն ունեն գյուղական բնակչության և բնակավայրերի շարժընթացի ժամանակակից միտումների, զարգացման և վերափոխման վրա ազդող հիմնական գործոնների ուսումնասիրումը, գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացման ուղիների բացահայտումը:

ԴՅ-ի ժամանակակից սոցիալ-տնտեսական և քաղաքաաշխարհագրական իրավիճակը, հանրապետության տարբեր մարզերի ու տարածաշրջանների գյուղական տարածքներում երկրի համար ստեղծված տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական աննպաստ պայմանները խնդիր են դնում աշխատանքում վեր հանել նաև ԴԴ մարզերի գյուղական տարածքների աշխարհագրական առանձնահատկությունները, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն ու դրանց տարածքային տարբերությունները:

Գյուղական տարածքների աշխարհագրական հետազոտության մեթոդաբանական խնդիրներից մեկը նրա ուսումնասիրման տարբեր ասպեկտների հարաբերակցությունն է [116]: Նախկին ԽՍՀՄ-ում ավանդական էր տնտեսական ասպեկտը (նյութական արտադրության տնտեսական արդյունավետության ուսումնասիրությունը): Դրա հետ էր կապված նաև գյուղական բնակավայրերի մնացած բոլոր տարրերի ուսումնասիրությունը (սպասարկման ոլորտի, բնակչության և տարաբնակեցման, բնական պայմանների և ռեսուրսների): Վերջիններիս ուսումնասիրումը տարվում էր նյութական արտադրության վրա դրանց ազդեցության տեսանկյունից և տրվում դրանց տնտեսական գնահատականը: Վերջին 3-4 տասնամյակներին զարգանում է նաև գյուղական տարածքների ուսումնասիրման սոցիալ-աշխարհագրական կողմը, որի էությունը գյուղական տարածքների բոլոր կողմերի գնահատումն է բնակչության, կյանքի պայմանների և գործունեության տեսանկյունից:

Գյուղական տարածքների աշխարհագրական հետազոտության բեմատիկան (շարունակությունը էջ 22 -ում)¹

Ուսումնասիրության ասպեկտները		Գյուղական տարածքների տարրերը Տնտեսություն				
Բնություն	Գյուղատնտեսություն	Ելուքական արտադրության այլ ծյուղեր (արդյունաբերություն, շինարարություն, տրանսպորտ, անտառտնտեսություն)	ԳՀՆՓ ² աշխատանքներ և կարգերի պատրաստում	Սպասարկման ոլորտ (ՍՈ)	Բնակչություն	
Սնտեսական	Բնական պայմանների և ռեսուրսների տնտեսական զննահատում	Գյուղատնտեսության տարածքային արդյունավետ կազմակերպում	Գյուղատնտեսության շրջանում տնտեսության և գյուղական միջնադարի զարգացումը	Դրանց արդյունավետ տնտեսական զարգացումը	ՍՈ-ի տարրեր ձևերի տարածքային կազմակերպման շահավետություն: Աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության, կարգերի կազմի և կայունության վրա	Աշխատանքային ռեսուրսների առկայություն և օգտագործում: Բնակչության աշխատանքային ունակություններ

¹ Алексеев А.И., Многоликая деревня, М., 1990, էջ 22-23:

² Գլխաինտագրտական և ճախագծափորձարարական:

Սոցիալական	Գյուղական տարածքներում ղրպես կյանքի առանձնահատկություն «Մոտիկություն բնությանը»: Բնության ազդեցությունը կյանքի պայմանների և ապրելակերպի վրա, դրա գնահատումը բնակչության կողմից	Գյուղատնտեսության մեջ աշխատանքի պայմանները և բնույթը, դրա ազդեցությունը բնակչության կազմի և նրա ապրելակերպի վրա	տամբային ռեսուրսների համատեղ օգտագործում	Աշխատանքի պայմաններով և բնույթով գյուղատնտեսության հետ փոխկապակցություն (փոխլրացում և մրցակցություն): Բնակչության կազմի և ապրելակերպի վրա ազդեցություն	Դրանց ազդեցությունը բնակչության կազմի և ապրելակերպի վրա	ՍՈ-ի ազդեցության բացահայտում	Բնակչության կազմը, նրա պայմանները և ապրելակերպը: Բնակչության կողմից շրջակա միջավայրի ընկալումը և գնահատումը: Բնակչության ազդեցությունը և համապայման արժեքային համակարգը, ավանդույթները, սովորույթները	Բնակչության կազմը, նրա պայմանները և ապրելակերպը: Բնակչության կողմից շրջակա միջավայրի ընկալումը և գնահատումը: Բնակչության ազդեցությունը և համապայման արժեքային համակարգը, ավանդույթները, սովորույթները
Էկոլոգիական	Լամրշաֆտների փոփոխվածության և արտոտվածության սահմաններում: Դրանց ինքնամաքման հնարավորությունը	Բնության և գյուղատնտեսության փոխազդեցություն: Շրջակա միջավայրի վերափոխում: Միջավայրի աղտոտումը պայարտանյութերով, թունաքիմիկատներով և այլն:	Ազդեցություն բնական միջավայրի վրա: Միջավայրի աղտոտումը ավտոտրանսպորտից, արդյունաբերությունից և այլն	Ազդեցություն բնական միջավայրի վրա. օգտագործման հատուկ ռեժիմ ունեցող տարածքների ստեղծում և այլն:	Ազդեցություն բնական միջավայրի վրա, ոչ արտադրական հուպեր, ջրամատակարարում, վառելիքայտի վառարանում և այլն:	Ազդեցություն բնական միջավայրի վրա, ոչ արտադրական հուպեր, ջրամատակարարում, վառելիքայտի վառարանում և այլն:	Ազդեցություն բնական միջավայրի վրա, ոչ արտադրական հուպեր, ջրամատակարարում, վառելիքայտի վառարանում և այլն:	Ազդեցություն բնական միջավայրի վրա, ոչ արտադրական հուպեր, ջրամատակարարում, վառելիքայտի վառարանում և այլն:

Կատարվում են նաև էկոլոգո-աշխարհագրական ուսումնասիրություններ, որոնց ուշադրության կենտրոնում են տնտեսության և բնակչության փոխազդեցությունը բնական միջավայրի հետ, նրա փոփոխությունները, լանդշաֆտների կայունությունը մարդածին ազդեցության նկատմամբ և այլն:

Ուսումնասիրությունների այդ բոլոր ասպեկտները սերտորեն փոխկապակցված են: Ակնհայտ է տնտեսական և սոցիալական զարգացման փոխայանանավորվածությունը: Նյութական արտադրությունը ստեղծում է հիմք մարդկանց տարաբնույթ պահանջմունքների բավարարման, նրանց կյանքի պայմանների բարելավման և անհատի զարգացման համար: Ձևավորվում են պայմաններ արտադրության սուբյեկտիվ գործոնի (աշխատուժի) ձևավորման համար, որն ունի հատուկ գիտելիքներ, մասնագիտական պատրաստվածություն և տիրապետում է անհրաժեշտ ընդհանուր մշակութային արժեքների: Այդ փոխայանանավորվածությունը կարող է լինել նաև հակառակ ազդեցությամբ՝ տնտեսության ցածր արդյունավետությունը դժվարացնում է գործունեության լիարժեք միջավայրի ձևավորումը (սպասարկման ոլորտ, այդ թվում նաև բնակարանային տնտեսություն, հաղորդակցության ոլորտներ և այլն): Արդյունքում դիտվում է որակյալ մասնագետների հոսք և համապատասխանաբար՝ արտադրության արդյունավետության հետագա նվազում [116]: Ժամանակակից պայմաններում գյուղական տարածքների աշխարհագրական ուսումնասիրություններում պետք է հավասարաչափ ուշադրություն դարձնել տնտեսական, սոցիալական և էկոլոգիական ասպեկտներին: Քանի որ դրանք փոխկապակցված են և միայն դրանց ամբողջությունն ընդհանրական ու համալիրային պատկերացում կտա գյուղական տարածքների, դրանց վիճակի, հիմնախնդիրների և զարգացման հեռանկարների մասին:

Այսպիսով, ՀՀ-ի նման լեռնային երկրներում գյուղական տարածքների ձևավորման, զարգացման և առկա հիմնախնդիրների բացահայտումը կարող է իրականացվել համալիր վերլուծության, համադրման և ընդհանրացման հիման վրա:

1.3 Շրջանացումը և համալիրային տիպայնացումը որպես լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման հեռանկարային պլանավորման, զարգացման և կառավարման հիմք

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության կարևորագույն խնդիրներից և մեթոդներից է համարվում շրջանացումը, որն ունի ոչ միայն տեսական, այլ նաև կիրառական կարևոր նշանակություն: Նրա միջոցով կատարվում է ամբողջի տրոհումը մասերի և ապահովում է դրանց ավելի խորն ու բազմակողմանի ուսումնասիրումը, որն անհնար է ամբողջը հետազոտելու ժամանակ: Միաժամանակ, այդպիսի մասերի ուսումնասիրությունը, համադրումն ու համեմատումը նպաստում են ամբողջը ճիշտ ճանաչելուն, ինչպես նաև ընդհանուր օրինաչափությունները բացահայտելուն: Մեթոդաբանական այդ հիմնադրույթն առավել քան կարևոր դեր ունի բնաաշխարհագրական պայմանների, տնտեսական գործունեության և տարածքի բնակեցման ու տարաբնակեցման խիստ բազմազանությամբ և առանձնահատկություններով աչքի ընկնող լեռնային երկրների ու տարածաշրջանների գյուղական տարածքների շրջանացման ժամանակ: Այդ առումով, որպես լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածքային կառուցվածքի բացահայտման ու հետազոտման, տարաբնակեցման շրջանային տարբերությունների ու առանձնահատկությունների ճանաչման միջոց, շրջանացումը կարելի է համարել անփոխարինելի: Բացի գիտական հետազոտության մեթոդից, այն հանդես է գալիս նաև տարաբնակեցման տարածքային կառուցվածքի կատարելագործման մեթոդ կամ միջոց: Այսինքն՝ ***լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման շրջանացման արդյունքները և ստացված շրջանացման սխեման հնարավորություն են տալիս իրականացնել գյուղական տարածքների ու տարաբնակեցման հեռանկարային տարածքային պլանավորում:***

Աշխարհագրական գիտության մեջ գյուղական տարածքների ու տարաբնակեցման տիպաբանության և շրջանացման հարցերը մշակվել են Վ.Սուխովի [202], Ն.Լյալիկովի [169], Յու.Սաուշկինի [197], Ս.Կովալյովի [160, 161, 162, 164, 166], Բ.Ռոդոմանի [195], Վ.Ջառշվիլու [147], Ա.Ալեքսևի [116] և այլ հեղինակների կողմից:

Բնաաշխարհագրական բազմազան պայմաններ ունեցող լեռնային շրջաններում գյուղական տարածքների ամբողջական վերլուծության հա-

մար հարկավոր է ուսումնասիրել ոչ միայն տարաբնակեցման տիպաբանական առանձին հատկանիշներն, այլ նաև դրանց ընդհանրության բնորոշ կողմերը: Տնտեսության զարգացման և բնակչության կյանքի համար նպաստավոր պայմանների ստեղծման համար կարևոր դեր ունեն բնակավայրերի ինչպես անհատական, այնպես էլ դրանց ընդհանրության տարբեր կողմերը, որոնք առանձնահատուկ ձևով են դրսևորվում Լեռնային տարածաշրջաններում և առանձին երկրներում:

Որոշակի տարածքում բնակավայրերի այս կամ այն ձևերի կամ էլ դրանց տարբեր զուգակցությունների տարածման շնորհիվ առաջանում են տարաբնակեցման տարբեր ձևեր ու տիպեր, որոնք կապված են բնակեցման որոշակի արեալների հետ:

Ինչպես յուրաքանչյուր բնակավայր, այնպես էլ դրանց առանձին խմբեր, առանձնանում են որոշակի հատկանիշներով (աշխարհագրական տեղադիրք, արտաքին տեսք, արտադրական ուղղություն, պատմական անցյալ և այլն), որոնք ենթակա են փոփոխության տեղից տեղ և ժամանակի ընթացքում: Տարաբնակեցման տիպը կարող է առանձնացվել վերը նշված հատկանիշներից յուրաքանչյուրի հիման վրա և տարածվել այնքան, քանի դեռ անփոփոխ է տարաբնակեցման այն հատկանիշը, որի հիման վրա առանձնացվել է տվյալ տիպը [164]:

Լեռնային երկրներում բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական և պատմական գործոնների ազդեցության տակ ձևավորվում է ինչպես գյուղատնտեսական արտադրության, այնպես էլ գյուղական տարաբնակեցման տիպերի բազմազանություն: Երբեմն տարաբնակեցման բնույթը փոփոխվում է նույնիսկ մեկ գյուղի սահմաններում: Այդ ամենի հետևանքով հաճախակի են փոփոխվում տարաբնակեցման ոչ միայն առանձին հատկանիշները, այլ նաև դրանց զուգակցումները: Այսպիսի դեպքում անհրաժեշտ է անցկացնել գյուղական բնակավայրերի ընդհանրության աստիճանաձև (սինթետիկ) տիպաբանություն [147]:

Լեռնային երկրներում գյուղական տարածքներն ու տարաբնակեցման բնույթն ուսումնասիրելիս շատ կարևոր է բացահայտել բոլոր այն կողմերը, որոնք պայմանավորված են ինչպես հասարակական երևույթներով, այնպես էլ բնաաշխարհագրական գործոններով: Այդպիսի դեպքում հարկ է լինում միաժամանակ հաշվի առնել տարաբնակեցման մի քանի հատկանիշներ, որոնք կապված են միմյանց հետ և ազդում են տարաբնակեցման ընդհանուր պատկերի ձևավորման վրա: Տարաբնակեցման մի քանի հատկանիշների հիման վրա առանձնացված տիպը տալիս է ամբողջական պատկեր-

րացում տարաբնակեցման բնույթի մասին: Տարաբնակեցման այդպիսի ձևն ընդունված է անվանել *գյուղական տարաբնակեցման տեղական կամ համալիրային տիպ* [164]: Վ.Ջառչվիլին տարաբնակեցման այդպիսի տիպն անվանում է *սինթետիկ տիպ* [147]:

Գյուղական տարաբնակեցման համալիրային տիպն իր բովանդակությամբ ավելի հարուստ է, քան տարաբնակեցման տիպը: Եթե վերջինս ցույց է տալիս գյուղական բնակավայրերի որոշակի խմբերին բնորոշ կողմերից մեկը (օրինակ, արտաքին տեսքը՝ գծային, ցրված, համատարած և այլն), ապա տարաբնակեցման համալիրային տիպը ցույց է տալիս տարաբնակեցման տարբեր հատկանիշների զուգակցումը որոշակի տարածքի սահմաններում: Տարաբնակեցման տիպն ընդգրկում է ավելի մեծ տարածք, քան համալիրային տիպը, քանի որ տարաբնակեցման մեկ հատկանիշը կարող է անփոփոխ մնալ ավելի ընդարձակ տարածքի վրա, քան մի քանի հատկանիշներ և դրանց զուգակցումը:

Տարածքի միասնական տնտեսական օգտագործումով և տրանսպորտային կապերով կապված բնակավայրերի խումբը ընդունված է անվանել տարաբնակեցման արեալ [197], *իսկ տարաբնակեցման արեալների զուգակցումը տարածքի բնակեցման, բնակչության ազգային կազմի և տնտեսական գործունեության միասնությանը՝ տարաբնակեցման շրջան* (նույն տեղում): Այստեղ, ըստ էության, միավորված են տարաբնակեցման գեներտիկական և արտադրական տիպաբանության տարրերը:

Սովորաբար տարաբնակեցման շրջանն ունենում է տարածքային միասնություն, այսինքն միավորում է իրար կողք ընկած տարաբնակեցման տիպերը: Սակայն, որոշ դեպքերում տարաբնակեցման միևնույն շրջանի առանձին մասեր կարող են իրարից բաժանված լինել այլ շրջանների տարածքով: Այս երևույթն առավել բնորոշ է լեռնային երկրների համար, ուր բնաաշխարհագրական և տարաբնակեցման գրեթե համանման պայմաններ ունեցող առանձին տարածքներ կարող են գտնվել համենմատաբար ոչ մեծ տարածքի տարբեր հատվածներում:

Տարաբնակեցման յուրաքանչյուր շրջանի մեջ կարող են լինել տարաբնակեցման մի քանի տիպեր, որոնք ունեն ձևաբանական կամ էլ գործառնության բնույթի նման գծեր: *Տարաբնակեցման շրջանն առանձնացվում է տարաբնակեցման տիպերի անալոգ հատկանիշների ընդհանրացման միջոցով:*

Ինչպես շրջանացման ցանկացած օբյեկտ, այնպես էլ գյուղական

տարաբնակեցումն ունի չափազանց բարդ ու բազմազան, բայց որոշակի տարածական կառուցվածք, բաղադրիչ մասերի իր հիերարխիան (ենթակարգությունը), հետևապես նաև շրջանացման իր ուրույն կարգաբանական համակարգը: Լեռնային երկրների գյուղական տարաբնակեցման շրջանացման տաքսոնոմիական համակարգի բացահայտումն ունի մեթոդաբանական կարևոր նշանակություն և սերտորեն կապված է ուսումնասիրվող օբյեկտի բազմակողմանի ու սպառիչ հետազոտության հետ: Մի կողմից գյուղական տարաբնակեցման շրջանը հանդիսանում է տիպաբանական առանձին միավոր և մտնում է տաքսոնոմիական ավելի բարձր աստիճանի վրա գտնվող համակարգի մեջ, մյուս կողմից՝ գյուղական տարաբնակեցման շրջանը բաղկացած է ավելի փոքր, ստորին աստիճանի վրա գտնվող համակարգերից (տաքսոնոմիական միավորներից): Այդ առումով մեծ կարևորություն է ձեռք բերում այն հարցը, թե արդյոք արդեն ճանաչել և բացահայտել ենք բարձր կարգի միավորը, որի մեջ մտնում է գյուղական տարաբնակեցման տվյալ շրջանը և տաքսոնոմիական այն միավորները, որոնցից բաղկացած է գյուղական տարաբնակեցման շրջանը: Վերջինս կոնկրետացնելով ՀՀ համար, կարող ենք նշել, որ ՀՀ գյուղական տարաբնակեցման առանձին շրջանները համարվում են ՀՀ տարաբնակեցման միասնական համակարգի առանձին միավորներ և իրենց հերթին բաղկացած են առանձին բաղադրիչներից [93]:

Ինչպես սոցիալ-տնտեսական ցանկացած երևույթի, այնպես էլ գյուղական տարաբնակեցման շրջանացումը կարող է լինել ճյուղային և համալիրային: Դրանց հիմքում ընկած է երևույթների տիպաբանությունը: ***Գյուղական բնակավայրերի այս կամ այն տիպերի և տարաբնակեցման տարբեր տիպերի արեալների տարածումը կամ գերակշռումը երկրի քարտեզում առաջացնում են որոշակի շրջաններ:*** Այդ պատճառով էլ տիպաբանության յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է շրջանացման որոշակի ցանց: Դա կարող է լինել «պարզունակ», հիմնված մեկ էական հատկանիշի վրա, և «համալիրային»՝ արտացոլելով հատկանիշների ընդհանրությունը, որը կբնութագրի տարաբնակեցման տիպերը: Պարզունակ շրջանացումը օժանդակ փուլ է համալիրային շրջանացման համար, սակայն այն ևս ունի իր գիտական նշանակությունը [161]:

Համալիրային շրջանացումը պարզագույն դեպքերում իրականացվում է երկու-երեք հատկանիշների կոմբինացման հիման վրա: Լրացուցիչ ցանկացած հատկանիշ կտրուկ բարդացնում է շրջանացումը և ստեղծում մի շարք մեթոդական պրոբլեմներ: Անհրաժեշտ է լինում հաշվի առնել շրջա-

նացման համար առանձնացված հատկանիշների բոլոր կոմբինացիաները, պահպանել տարածքը շրջանների բաժանելու միասնությունը, բաժանման հերթականությունը՝ ընդհանուրից մասնավորին, հիմնական հատկանիշներից՝ լրացուցիչներին:

Կախված աշխատանքի խնդիրներից, շրջանացման «մասշտաբներից» և ելակետային տվյալների բնույթից պետք է ապահովել շրջանացման համար ընտրված հատկանիշների պատշաճ ընդհանրացում:

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման տիպաբանական շրջանացում կարող ենք կատարել «վերևից» (քարտեզագրական և վիճակագրական տվյալների ուսումնասիրության հիման վրա, բացահայտելով տարաբնակեցման այս կամ այն գծերի տարածվածությունը), կամ էլ «ներքևից» (ընդհանրացնելով տարաբնակեցման տեղական տիպերն այս կամ այն ուղղությամբ):

Տարաբնակեցման անհատական շրջանների առանձնացումը և դրանց ընդհանրացումը կարևորել են Յու.Սաուշկինը և Ն.Լյալիկովը: Ն.Լյալիկովը տարաբնակեցման տիպի տակ հասկանում էր շրջանի սահմաններում կայուն կերպով կրկնվող. 1/ գյուղական բնակավայրերի հարմարվածությունն աշխարհագրական լանդշաֆտի որոշակի տարրերին, 2/ բնակավայրերի խտությունը, 3/ բնակավայրերի մարդաշատությունը, 4/ բնակավայրերի կառուցվածքը, տարածական մեծությունը և կոնֆիգուրացիան [169]:

Գյուղական տարածքների տարաբնակեցման շրջանացման համար տիպաբանական հատկանիշների ընտրություն կատարելիս պետք է ամբողջովին հաշվի առնել տարաբնակեցման և տնտեսության առանձնահատկությունները, որին տիրապետում են տվյալ երկիրը կամ մարզը: Հասկանալի է, որ, օրինակ, լեռնային տարածք ունեցող ՀՀ-ի և հարթավայրային Լատվիայի գյուղական տարաբնակեցման շրջանացման ժամանակ առաջին պլան են մղվում տարբեր հատկանիշներ (տարաբնակեցման գծեր) [164]:

Լեռնային երկրներում, մասնավորապես ՀՀ-ում, գյուղական տարաբնակեցման շրջանները և դրանց մեջ մտնող տեղական (համալիրային) տիպերն իրենց բովանդակությամբ ավելի հարուստ են, ունեն տաքսոնոմիական տարբեր կարգի և քանակի միավորներ: Լեռնային տարածքների հարթավայրային և բլրահարթավայրային թույլ ալիքավոր մակերևույթ ունեցող շրջաններում շրջանացման տաքսոնոմիական միավորները երկուսն են (տարաբնակեցման շրջան և տեղական (համալիրային) տիպ), իսկ մակերևույթի բազմազանությամբ աչքի ընկնող շրջաններում՝ երեքը [93].

➤ տարաբնակեցման շրջան,

- տարաբնակեցման տեղական (համալիրային) տիպ,
- տարաբնակեցման տեղական (համալիրային) ենթատիպ:

Լեռնային տարածքի մասնատվածությամբ աչքի ընկնող շրջաններում գյուղական տարաբնակեցման տեղական (համալիրային) տիպերում ենթատիպերի առանձնացումը պայմանավորված է դրանց աշխարհագրական դիրքով և տեղադիրքով, բնակավայրի մարդաշատության տարբերություններով, միջբնակավայրային տրանսպորտային ուղիների, սոցիալ-կենցաղային և մշակութային ծառայությունների զարգացման մակարդակների տարբերություններով:

Այսպիսով, ՀՀ-ի նման լեռնային երկրներում գյուղական տարածքների ու տարաբնակեցման շրջանացման տաքսոնոմիական ենթակարգությունը (հիերարխիան) կունենա այսպիսի կառուցվածք. ***տարաբնակեցման շրջան, տարաբնակեցման տեղական տիպ և տարաբնակեցման տեղական ենթատիպ***. Շրջանացման սխեման, առանձնացված տարաբնակեցման տեղական (համալիրային) տիպերը, ենթատիպերը և շրջանները հանդիսանում են հիմք տարաբնակեցման տարածաշրջանային և տեղական սխեմաների մշակման, հեռանկարային պլանավորման ու զարգացման և կառավարման համար: Նման եզրահանգումը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով [93].

- ցանկացած տարածքում հասարակության տարածքային կազմակերպման հենքը հանդիսանում է առկա տարաբնակեցման ցանցը,

- գյուղական տարածքների ու տարաբնակեցման համալիրային տիպերը և ենթատիպերը կան դրանց ընդհանրությունը որոշակի տարածքի սահմաններում (տարաբնակեցման շրջանները) լեռնային երկրների բնատնտեսական առանձնակի պայմաններում ստեղծված այնպիսի միավորներ են, որոնց ձևավորումը և զարգացումը պայմանավորում է տվյալ տարածքի միասնական տնտեսական օգտագործում և բնակեցում: Վերջիններս հանդիսանալով տարաբնակեցման միասնական համակարգի ենթակարգության տարբեր մակարդակի վրա գտնվող օղակներ, կարող են ծառայել հիմք տարաբնակեցման հեռանկարային պլանավորման ու զարգացման և կառավարման համար:

1.4 ՀՀ գյուղական տարածքների ու տարաբնակեցման ուսումնասիրվածության վերլուծություն և գնահատում

Գյուղական բնակավայրերի մասին աշխարհագրական ուսումնասիրություններն առաջ են եկել աշխարհագրական գիտության զարգացման հետ միաժամանակ: Աստիճանաբար աշխարհագրական և ազգագրական գրականության մեջ կուտակվել են նյութեր առանձին երկրների գյուղական բնակչության կյանքի ու կենցաղի, ինչպես նաև տարաբնակեցման բնորոշ գծերի մասին: Դրա հետ միասին, փորձեր են արվել ոչ միայն սահմանափակվել նկարագրություններով, այլ բացատրել նաև տարաբնակեցման բազմազանության, առանձնահատկությունների և օրինաչափությունների պատճառները:

Արևմուտքի աշխարհագրական դպրոցներում գյուղական բնակավայրերին նվիրված ուսումնասիրություններն առաջ են եկել XIX դարի երկրորդ կեսին, երբ բնակավայրերի աշխարհագրությունն արդեն դարձել էր անտրոպոաշխարհագրության (հատկապես Գերմանիայում) և «մարդու աշխարհագրության» կարևոր բաղադրիչներից մեկը (Ֆրանսիա և Անգլիա) [164]:

Նախախորհրդային Ռուսաստանում բնակավայրերի բնութագրմանը, դրանց տեղադիրքին և հատակագծային առանձնահատկություններին նվիրված աշխատանքներ կան դեռևս պետրոսյան (XVIII դարի սկիզբ) ժամանակաշրջանում: Վ.Տատիշևի և Մ.Լոմոնոսովի կազմած անկետաներում, որոնց միջոցով հավաքվեց հսկայածավալ նյութ երկրի աշխարհագրական բնութագրման համար, նախատեսված էին հարցեր բնակավայրերի տիպերի, դրանց տնտեսության, կենցաղի և բնակչության վերաբերյալ [164]:

Գյուղական բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրման տեսակետից անգնահատելի ծառայություն է մատուցել ռուս նշանավոր գիտնական, աշխարհագետ և վիճակագիր Պ.Սեմյոնով-Տյան-Շանսկին՝ և՛ որպես հետազոտող և՛ որպես աշխարհագրական վիճակագրական նյութերի հավաքման կազմակերպիչ: Նրա ջանքերի շնորհիվ հավաքվել, մշակվել և հրատարակվել է Ռուսաստանի Եվրոպական 49 նահանգների գյուղական բնակավայրերի վերաբերյալ տեղեկություններ, միաժամանակ նաև տալով այդ բնակավայրերի հողահանդակների կառուցվածքի և սեփականության բնույթի մասին տվյալներ: Առաջին անգամ ռուսական գիտական գրականության մեջ կատարվել է նահանգների գյուղական բնակավայրերի խմբավորում ըստ սոցիալ-տնտեսական տիպերի (բացի բնակավայրերից առանձնացրել է

նաև մենաժուխ տնտեսությունները):

Ռուսաստանում գյուղական բնակավայրերի հետազոտման բնագավառում նշանակալից ավանդ ունեն նաև Ա.Վոյեյկովը և Վ.Սեմյոնով-Տյան-Շանսկին [164]: Նրանց աշխատանքներում քննարկվել են նախահեղափոխական Ռուսաստանի եվրոպական մասի և Արևմտյան Սիբիրի գյուղական բնակավայրերի մարդաշատության և այլ հարցեր:

Խորհրդային աշխարհագրական գիտության մեջ գյուղական բնակավայրերին նվիրված աշխատանքներն ի հայտ են եկել բավական ուշ՝ հիմնականում հետպատերազմյան տարիներին: Մինչ այդ տնտեսաաշխարհագրական ուսումնասիրությունները նվիրված էին հիմնականում արտադրության տեղաբաշխման, երկրի տնտեսական շրջանացման և առանձին շրջանների համալիր զարգացման հարցերին:

Առաջին անգամ ԽՍՀՄ-ի գյուղական բնակավայրերի համալիրային աշխարհագրական ուսումնասիրության ծրագիրը մշակել է Յու. Սաուշկինը [197]: Այս ժամանակաշրջանի աշխատանքներից հիշատակության են արժանի նաև Ռ.Կաբոյի և Լ.Ուստինովայի ուսումնասիրությունները [154, 155, 207]: Դրանցում առաջին անգամ տրվեց առանձին լեռնային շրջանների բնակչության և բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրությունը: Լ.Ուստինովայի աշխատանքում առաջին անգամ հանդիպում ենք տարաբնակեցման վերլուծությանն ըստ բարձրության գոտիների: Այս ժամանակաշրջանի ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Ն.Լյալիկովի աշխատանքները [169]: Չնայած համեմատաբար սահմանափակ փաստական նյութերի առկայությանը, Լյալիկովը տվեց հսկայական երկրի գյուղական տարաբնակեցման աշխարհագրական ընդհանուր ակնարկը և նրա տարածքային տարբերություններն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական տարաբնակեցման զոնայական և գոտիական տարբերություններին, և դրա հետ կապված՝ գյուղատնտեսական արտադրության տիպերին և մասնագիտացման առանձնահատկություններին:

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման աշխարհագրական ուսումնասիրության տեսական և մեթոդական հարցերի մշակման հարցերում անզնահատելի ծառայություն ունի ռուս նշանավոր աշխարհագետ Ա.Կովալյովը [160, 161, 162, 163, 164, 165, 166]: Նա գրական մեծաքանակ աղբյուրների և երկարատև դաշտային գիտահետազոտական աշխատանքների հիման վրա միավորելով ֆիզիկական աշխարհագրության, գյուղատնտեսության և բնակչության աշխարհագրության, հողաշինարարության և մի շարք

այլ գիտությունների տվյալները հիմնավորել է գյուղական տարաբնակեցման ձևավորման պայմաններն ու օրինաչափությունները, գյուղական տարաբնակեցման տիպաբանության ու շրջանացման հարցերը: Առաջին անգամ իրականացրել է հսկայածավալ Խորհրդային միության գյուղական տարաբնակեցման շրջանացումը:

Եթե մինչև 20-րդ դարի 50-ական թվականները գյուղական բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրությամբ զբաղվում էր բացառապես մոսկովյան աշխարհագետների մի խումբ, ապա 50-60-ական թվականներին այդպիսի աշխատանքներ սկսվեցին նաև ԽՍՀՄ-ի բազմաթիվ այլ տարածաշրջաններում: Առաջ եկան գյուղական տարաբնակեցման համալիր աշխարհագրական ուսումնասիրություններ՝ նվիրված ԽՍՀՄ-ի տարբեր տարածաշրջաններին, մասնավորապես նաև Լեռնային մակերևույթ ունեցող հանրապետություններին և տարածաշրջաններին [72, 135, 136, 142 և այլն]:

Սկսած 1970-ական թվականներից գյուղական տարաբնակեցմանը նվիրված ուսումնասիրություններում կան աշխատանքներ, որոնցում քննարկվում են գյուղական տարաբնակեցման և հասարակական արտադրության (հիմնականում գյուղատնտեսության) ու սոցիալական ոլորտի տարբեր ճյուղերի միջև փոխազդեցության, ինչպես նաև գյուղական տարաբնակեցման հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները [13, 14, 15, 40, 48, 59, 70, 72, 73, 115, 116, 124, 125, 129, 143, 156, 167, 168, 173, 185, 190, 194, 199, 201, 200 և այլն]:

Հայաստանի Հանրապետության համար գիտագործնական առավել մեծ կարևորություն ունեն Լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման, բնակչության, մասնավորապես՝ գյուղական տարածքներին ու տարաբնակեցմանը նվիրված աշխարհագրական ուսումնասիրությունները [3, 17, 18, 44, 57, 72, 108, 113, 115, 120, 121, 123, 126, 129, 135, 136, 138, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 157, 158, 171, 172, 176, 177, 178, 179, 180, 187, 188, 189, 191, 192, 198, 205, 206, 208]: Այդպիսի աշխատանքներում Լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնահարցերի շարքում առանձնակի ուշադրություն էր դարձվում նաև գյուղական տարաբնակեցման ձևավորման ու զարգացման աշխարհագրական առանձնահատկություններին, բարձրության տարբեր գոտիներում գյուղական բնակչության ու բնակավայրերի խտության փոփոխություններին, Լեռնային շրջանների բնագրկման, ռեսուրսների օգտագործման և կայուն զարգացման հիմնահարցերին:

ՀՀ-ում գյուղական բնակավայրերի աշխարհագրական ուսումնասի-

րություններն սկսվել են բավական ուշ: Եթե չհաշվենք Պ. Աբելյանի «Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում» [1] աշխատությունը, որն ըստ էության բնակչության վիճակագրությանը նվիրված աշխատանք է, և Ջ. Կորկոտյանի «խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում» (1831-1931 թթ.) աշխատությունը [28], որն իր մեջ ամփոփում է այդ ժամանակաշրջանում կատարված հաշվառումների և մարդահամարների ժամանակ գրանցված բնակավայրերի լրիվ ցուցակները և բնակչության քանակը, ապա մինչև 1960-ական թվականները հանրապետությունում չկար բնակչության աշխարհագրությանը նվիրված որևէ մենագրություն:

Մեր երկրում բնակչության համալիր աշխարհագրական առաջին ուսումնասիրությունը Յ.Գրգեարյանի թեկնածուական ատենախոսությունն է [18]: Օգտագործելով 1926, 1939 և 1959 թ. մարդահամարների, ընթացիկ հաշվառումների, ինչպես նաև հանրապետության տարբեր շրջաններում կատարած դաշտային հետազոտությունների ընթացքում հավաքած նյութերը, Գրգեարյանը կատարել է 1926-1964 թթ. հանրապետության բնակչության թվի, կազմի և տարաբնակեցման մեջ տեղի ունեցած տեղաշարժերի վերլուծություն: Առաջին անգամ Յ.Գրգեարյանի կողմից 1959 թ. մարդահամարի տվյալների հիման վրա տրվեց ՀՀ բնակչության տեղաբաշխումն ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության [141]:

Վերը նշված աշխատանքում, ի թիվս այլ հարցերի, Յ.Գրգեարյանն ընդհանուր գծերով բնութագրել է նաև հանրապետության գյուղական տարաբնակեցումը: Մասնավորապես, անդրադարձել է 1926-1959 թթ. ընթացքում գյուղական բնակավայրերի մարդաշատության փոփոխություններին, ինչպես նաև ՀՀ տարածքում գյուղական բնակելի վայրերի ու գյուղերի միջին մարդաշատության և գյուղական բնակավայրերի գերակշռող մարդաքանակի տարածքային տարբերություններին: Անդրադառնալով ՀՀ տարածքում գյուղական տարաբնակեցման ձևերի բազմազանությանը ՀՀ-ի համար բնորոշ է համարում հետևյալ չորս տիպերը. 1) լեռնային միջակ գյուղային տարաբնակեցում, 2) սարավանդային խոշոր գյուղային տարաբնակեցում, 3) լեռնային խոշոր գյուղային տարաբնակեցում և 4) հարթավայրային խոշոր գյուղային տարաբնակեցում:

Խ.Ավետիսյանի վաթսունական թվականներին հրատարակված աշխատանքը [9] նվիրված է ՀՀ մարզերից Սյունիքի բնակչության ու բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրությանը: Այստեղ հեղինակն անդրադարձել է 1920-1960 թթ. ընթացքում Ջանգեզուրի բնակչության թվի, խտութե-

յան, տարածքի բնակեցման և բնակչության տեղաբաշխման մեջ տեղի ունեցած փոփոխությունների վերլուծությանը:

ՀՀ բնակչության տարաբնակեցման և ռելիեֆի միջև փոխադարձ կապի վերլուծությանն է նվիրված Խ.Ավետիսյանի մեկ այլ աշխատանք [113], որտեղ կատարված հաշվարկների հիման վրա հեղինակն անդրադարձել է հաշվարկային տարեթվին (1970 թ.) ըստ բարձրության գոտիների հանրապետությունում բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկություններին:

ՀՀ բնակչության աշխարհագրական ուսումնասիրման բնագավառում իր նշանակալից ավանդն ունի Գ.Ավագյանը: 1975 թ. հրատարակված «Հայկական ՍՍՀ բնակչությունը» [3] մենագրության մեջ հեղինակն անդրադարձել է նաև հանրապետության գյուղական բնակավայրերի ձևավորման ու զարգացման, դրանց չափերի, տեղադրման, արտաքին տեսքի ու կառուցապատման առանձնահատկություններին, ինչպես նաև անցած տասնամյակների ընթացքում գյուղական բնակավայրերի թվի ու մարդաշատության փոփոխություններին: Մեկ այլ մենագրությունում [108], քննարկելով լեռնային երկրներում բնակչության տարաբնակեցման և ուրբանացման առանձնահատկությունները, Գ.Ավագյանն անդրադարձել է նաև Հայաստանի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացին՝ կարևորելով 1970-1987 թթ. հանրապետության գյուղական բնակավայրերի և բնակչության թվի փոփոխությունները: ՀՀ լեռնային շրջաններից բնակչության միգրացիայի և գյուղական բնակավայրերի բնագրվման հարցերին են նվիրված Գ.Ավագյանի մի քանի այլ հոդվածներ [4, 5, 6, 7, 107]:

ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի ուսումնասիրությանն են նվիրված Գ.Ավագյանի և Հ.Գրգեարյանի [8, 109, 110] մի քանի աշխատանքներ: Դրանցում տրվել է գյուղական բնակչության թվի շարժընթացի տարածքային տարբերությունները 1926-1986 թթ. (ըստ նախկին վարչական շրջանների), ապա ելնելով գործնական նկատառումներից՝ 1970-1986 թթ. համար:

ՀՀ գյուղական բնակչության տեղաբաշխման, բնակավայրերի տիպաբանության, գյուղական տարաբնակեցման վերափոխման գործոնների և տարաբնակեցման գոտիավորման հարցերի քննարկմանն են նվիրված Հ.Ավետիսյանի մի քանի հոդվածներ [11, 12, 13, 14, 112]: Վերլուծելով 1959-1975 թթ. հանրապետության գյուղական բնակավայրերի թվաքանակի և ըստ մարդաշատության բնակավայրերի տարբեր խմբերում տեղի ունեցած փոփոխությունները Հ.Ավետիսյանը բացահայտել է գյուղական տարաբնա-

կեցման շարժընթացի միտումները՝ եզրակացնելով, որ բացի քանակական փոփոխություններից, հանրապետության գյուղական տարաբնակեցման մեջ տեղի են ունենում նաև որակական տեղաշարժեր: Անդրադառնալով հանրապետության գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացման հարցերին Յ.Ավետիսյանը կարևոր է համարում բնակավայրերի տիպերի ճշգրտումը (հաշվի առնելով բնակավայրի մարդաշատությունը, դրանց արտադրատնտեսական գործառույթները, բնակչության կազմն ու զբաղվածության բազմազանությունը, կուլտուր-կենցաղային սպասարկման և բարեկարգվածության մակարդակները, շենքերի տիպն ու հարկայնությունը, տրանսպորտային պայմանները, մոտիկությունը քաղաքին): Նշված հոդվածներում Յ.Ավետիսյանը բարձրացված հարցերը քննարկել է հիմնականում հանրապետության մասշտաբով՝ անտեսելով տարբեր վարչական շրջանների միջև առկա գյուղական տարաբնակեցման տարածաշրջանային տարբերություններն ու առանձնահատկությունները: ՀՀ տարածքում ըստ նախկին վարչական շրջանների գյուղական տարաբնակեցման գոտիներ առանձնացնելիս հեղինակի կողմից անտեսվել է բնաաշխարհագրական գործոնների դերը, որի հետևանքով առանձնացված գոտիներում խմբավորվել են այնպիսի վարչական շրջաններ, որոնք տարբերվում են միմյանցից բնաաշխարհագրական պայմաններով, բնակավայրերի միջին մարդաշատությամբ, գյուղական բնակչության կենտրոնացվածությամբ (զերակշռող մարդաքանակով), գյուղերի արտադրական մասնագիտացման ուղղություններով, տարաբնակեցման արտաքին տեսքով և վերջապես՝ տարաբնակեցման տեղական տիպով:

ՀՀ գյուղական բնակչությանը և բնակավայրերին նվիրված տնտեսավիճակագրական բնույթի առանձին հոդվածներում դրանց հեղինակներն անդրադարձել են ՀՀ-ի գյուղական բնակչության միգրացիայի հարցերին [98,100]: Ա.Սամվելյանը և Լ.Գոմկցյանը [98] 1959-1979 թթ. ընթացքում ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության թվերի միջև գոյություն ունեցող հարաբերակցության շարժընթացի վերլուծության միջոցով բացահայտել են ըստ մարդաշատության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերում տեղի ունեցող տեղաշարժերի հիմնական միտումները, ինչպես նաև գյուղական բնակչության միգրացիայի հետևանքով երկրի սոցիալ-տնտեսական շրջանների միջև բնակչության բաշխման փոփոխությունները: Նրանք գտնում են, որ վերը նշված միտումների ամրապնդումը հետագա տարիներին անցանկալի է և հակասում է հանրապետության զարգացման տնտեսական, սոցիալական և նույնիսկ ազգային շահերին:

Խորհրդային տարիներին ՀՀ գյուղական բնակչության ներհանրապետական տեղաշարժերի և գաղթի շարժառիթների հարցերը քննարկվել են ակադեմիկոս Վ.Խոջաբեկյանի կողմից [27]:

ՀՀ լեռնային շրջանների գյուղական բնակչության, բնակավայրերի, տարաբնակեցման և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնահարցերին են նվիրված Մ.Ադունցի [2], Ս.Դուլյանի [22], Ն.Մանասերյանի [37, 38, 39, 40], Վ.Մանասյանի [59], Մ.Մանասյանի, Ա.Պոտոսյանի [70], Գ.Կիրակոսյանի [159], Ռ.Սարգսյանի [181, 182] և Մ.Ֆահրադյանի [105,210], Մ.Մանասյանի [53, 54, 55, 56], Ա.Պոտոսյանի [65, 66, 67, 68, 69, 71, 74, 75, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91,92,93, 94, 95, 96, 97, 187, 188, 189, 190, 218], Գ.Եղյանի [23], Մ.Քոթանյանի [103] և այլոց աշխատանքները: Դրանցում վերլուծելով հանրապետության լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման և տարաբնակեցման հիմնախնդիրները հեղինակները որպես վերջիններիս զարգացման կարևորագույն գործոն համարում են գյուղական փոքր բնակավայրերի պահպանումն ու խոշորացումը, լքված և վերացված բազմաթիվ բնակավայրերի վերականգնումը և լեռնային շրջաններում տարաբնակեցման համակարգի կատարելագործումը:

Երևանյան-մայրաքաղաքային ռեգիոնում գյուղական տարաբնակեցման կառուցվածքի և նրա շարժընթացի առանձնահատկությունների ուսումնասիրությանն են նվիրված Մ.Մանասյանի [175] և Ա.Լ.Վալեսյանի [129] նշված աշխատանքները:

ՀՀ գյուղական տարաբնակեցման ձևավորման նախադրյալների, 1926-1996 թթ. ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների և առկա վիճակի աշխարհագրական հետազոտությանն է նվիրված Ա.Պոտոսյանի «ՀՀ գյուղական տարաբնակեցումը» աշխատանքը [72]:

Վերջին տասնամյակում ՀՀ-ի և առանձին մարզերի գյուղական բնակչության և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման, տարաբնակեցման կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների, դրսևորվող միտումների, դրանց հետևանքների վերլուծությանը և տարաբնակեցման կառավարման հարցերին են նվիրված Ա.Պոտոսյանի կողմից հրատարակված մի շարք հոդվածներ [80, 81, 83, 84, 87, 88, 89, 90 և այլն]: Շիրակի, Սյունիքի և Լոռու մարզերի բնակչության, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի ու տարաբնակեցման աշխարհագրական հիմնահարցերը քննարկված են թիվ 41, 42 և 43 աշխատանքներում:

Վերջին տարիներին ՀՀ-ում սկսել է ձևավորվել սոցիալ-տնտեսական քաղաքականության նոր ուղղություն, որն ուղղված է գյուղական տարածք-

ների ու բնակավայրերի կայուն զարգացմանը: ՀՀ տնտեսության ագրարային հատվածին և գյուղական բնակավայրերի կայուն զարգացման հիմնախնդիրներին է նվիրված Հ.Սարգսյանի, Խ.Հարությունյանի և Վ.Մանասյանի համատեղ աշխատանքը [99], որտեղ քննարկված են ագրարային ոլորտում աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղմթերքների իրացման, կոոպերացիայի և ագրարային տնտեսավարման ձևերի զարգացման, պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները: Նշված խնդիրների լուծման ուղիներից մեկն էլ հեղինակները համարում են գյուղական բնակավայրերի կայուն զարգացումը, պատմականորեն ձևավորված գյուղական տարաբնակեցման կազմալուծման կանխարգելումը, լեռնային ու սահմանամերձ գյուղական բնակավայրերի պահպանումն ու ամրապնդումը և լքյալ գյուղերի վերականգնումը:

ՀՀ գյուղական տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտության հիմնահարցերն առաջին անգամ ամփոփ քննարկված են Ա. Պոտոսյանի «ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը», Ե., 2013, գրքում [93]:

Բացի վերը նշվածներից, անցած ժամանակաշրջանում հանրապետությունում զգալի աշխատանք է կատարվել նաև գյուղական բնակչության և բնակավայրերի քարտեզագրման բնագավառում [110, 118, 119]: Առանձնակի կարևորություն ունեն 1926, 1939, 1959, 1970, 1979, 1989 և 2001 մարդահամարների տվյալների հիման վրա կազմված ՀՀ-ի բնակչության և բնակավայրերի, ՀՀ-ի բնակչության շարժընթացի, ուրբանացման, գյուղական տարաբնակեցման և տարաբնակեցման գլխավոր սխեմայի քարտեզները, որոնք զետեղված են ՀՀ-ի Ազգային Ատլասի Ա հատորում [30, 77, 78, 79]:

ՀՀ գյուղական տարածքներին նվիրված առ այսօր կատարված աշխարհագրական բնութի ուսումնասիրություններում հիմնականում քննարկվել են բնակավայրերի ձևավորման և շարժընթացի, տարաբնակեցման առանձին տարրերի վերլուծության հարցերը [76]: Սինչեռ վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում տնտեսական, սոցիալական, վարչատարածքային և տարածքային կառավարման ոլորտներում տեղի ունեցած արմատական փոփոխությունները նկատելի տեղաշարժեր են առաջացրել ՀՀ գյուղական տարածքներում և վերջինիս կարևորագույն օղակ հանդիսացող գյուղական տարաբնակեցման մեջ: Տեղի են ունեցել գյուղական տարաբնակեցման կառուցվածքային տեղաշարժեր (ըստ մարդաշատության խմբերի գյուղական տարաբնակեցման բնութի բեռնացում), գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակի փոփոխություն (անբարենպաստ սեռատարիքային

կառուցվածքի առաջացում և այլն), ՀՀ տարբեր մարզերում և տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների սրում, գյուղական բնակավայրերի տարածքային և մարդկային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործում, բնակչության միգրացիայի ավելացում և այլն: Բացի այդ, մինչ այժմ կատարված ուսումնասիրությունները հիմնականում վերաբերվում են ՀՀ գյուղական տարածքների աշխարհագրական ուսումնասիրման մակրոմակարդակին, սակավ են ուսումնասիրությունները մեզո և միկրո մակարդակներով: Առ այսօր չկա ՀՀ առանձին մարզերի և տարածաշրջանների գյուղական տարածքների համալիր աշխարհագրական հետազոտություն և հիմնախնդիրների բացահայտում: Նույնը վերաբերվում է նաև ՀՀ գյուղական համայնքներին և բնակավայրերին:

ՀՀ գյուղական տարածքների ու տարաբնակեցման ուսումնասիրվածության բերված վերլուծությունը և վերջին մոտ երկուսուկես տասնամյակում գյուղական տարածքներում ծագած հիմնախնդիրները խիստ կարևորում են կատարել Հայաստանի Հանրապետության, որպես լեռնային երկրի, գյուղական բնակչության և բնակավայրերի համալիր աշխարհագրական հետազոտություն, առավել կարևորելով դրանցում տեղի ունեցող գործընթացների ու հիմնախնդիրների բացահայտումը, լուծման ուղիների մատնանշումը:

ԳԼՈՒԽ 2

ՀՀ ԳՅՈՒԴԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴԴՅԱԼՆԵՐԸ

2.1 Գյուղական տարածքների ու տարաբնակեցման ձևավորման բնաաշխարհագրական նախադրյալները

Բնակավայրերի ձևավորման ու զարգացման վրա արտադրության որոշիչ դերի ընդունումը չի ժխտում նաև այն փաստը, որ բնակչության արտադրական գործունեությունը տեղի է ունենում բնաաշխարհագրական ոչ միանման պայմաններ ունեցող տարածքներում, որի հետևանքով միջավայրի նպաստավոր կամ աննպաստ պայմաններն անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով իրենց կնիքն են թողնում հասարակության տարածքային կազմակերպման վրա: Բնաաշխարհագրական պայմաններն ավելի կամ պակաս չափով ազդում են բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման վրա՝ պայմանավորելով դրանց այս կամ այն առանձնահատկությունները: Բնական գործոններից բնակավայրերի վրա առավել մեծ ազդեցություն են թողնում ռելիեֆը, ջրագրական և հողաբուսական ծածկը, միկրոկլիման և հանքահումքային ռեսուրսները:

Գյուղական տարածքների վրա բնական պայմանների ազդեցությունն առավել ցայտուն գծերով է դրսևորվում լեռնային երկրներում, ինչպիսին նաև ՀՀ-ն է: Վերջինիս համեմատաբար փոքր տարածքն աչքի է ընկնում բնական պայմանների արտակարգ բազմազանությամբ: Ռելիեֆի հարաբերական և բացարձակ բարձրությունների մեծ տատանումները, բազմաբնույթ դիրքադրությունները և դրանցով պայմանավորված հողաբուսական ծածկի բազմազանությունը, հորիզոնական և ուղղաձիգ խիստ մասնատվածությունը պայմանավորել են ՀՀ բնատարածքային համալիրների ինքնատիպությունը:

ՀՀ տարածքում հստակորեն առանձնանում են յոթ ֆիզիկաաշխարհագրական շրջաններ և տասնմեկ ուղղաձիգ ագրոկլիմայական գոտիներ՝ սկսած չոր մերձարևադարձայինից մինչև ցուրտ, բարձր լեռնային կլիմայական տիպը [29]: Նշված գործոնների ուժեղ արտահայտվածության ու ներգործության հետևանքով գյուղատնտեսական նպատակների համար օգտագործելի են հանրապետության ընդհանուր տարածքի կեսից էլ պակաս մասը (մոտ 46%-ը), երբ Ուկրաինայում, Ղազախստանում և Մոլդովայում

այն հասնում է 72-82%-ի [72]:

ՀՀ տարածքը գյուղական բնակավայրերի ու տարաբնակեցման համար գնահատելիս, նախ և առաջ պետք է նկատի ունենալ նրա ռելիեֆային բարդ պայմանները: Բացարձակ բարձրությունների մեծ տատանումներն ու մակերևույթի կտրտվածությունը նշանակալից ազդեցություն են թողնում տնտեսության զարգացման ու բնակչության տեղաբաշխման վրա: Հանրապետության տարածքի լեռնային բնույթի հետ կապված դրական կամ բացասական ներգործություն ունեցող գործոններն ավելացնում կամ փոքրացնում են առանձին շրջանների տնտեսական ներուժը, որն էլ իր հերթին ակտիվորեն ներգործում է տարաբնակեցման բնույթի վրա: Բարձրության յուրաքանչյուր գոտի յուրովի է ազդում հողատարածքների օգտագործման ու կառուցվածքի, տնտեսության մասնագիտացման, բնակչության զբաղմունքի, տարաբնակեցման ձևերի և բնակավայրերի մարդաշատության վրա:

Լեռնային տարածքների առանձնացման վերաբերյալ կարծիքների բազմազանությունից առավել գիտական և ընդունելի է պրոֆ. Գ.Ավագյանի առաջարկած տարբերակը [106, 108, 111], ըստ որի գյուղատնտեսական օգտագործման, հետևաբար նաև գյուղական բնակավայրերի ու տարաբնակեցման առումով տարածքների առանձնացման համար անհրաժեշտ է հիմք ընդունել ոչ թե մեկ կամ երկու, այլ մի քանի ցուցանիշներ միանգամից: Այդպիսի ցուցանիշներ կարող են լինել տեղանքի բացարձակ բարձրությունը, մակերևույթի կտրտվածությունը և լանջերի թեքության աստիճանը, դիրքադրությունը, ջերմաստիճանային ռեժիմը և այլն: Դրանց հիման վրա առանձնացված լեռնային տարածքը ՀՀ-ում կազմում է նրա ողջ մակերեսի մոտ 85%-ը: Հարթավայրային և լեռնային տարածքների մյան հարաբերակցությունը ստեղծում է տարածքի ոչ հավասարաչափ տնտեսական օգտագործման հնարավորությունը, որն անխուսափելիորեն առաջացնում է հարթավայրային և լեռնային շրջանների բնակչության, արտադրության և բնակավայրերի տեղաբաշխման միմյանցից խիստ տարբերվող պայմաններ:

ՀՀ տարածքի միջին բարձրությունն օվկիանոսի մակարդակից 1830 մ է: Տարածքի ամենաբարձր և ամենացածր կետերի տարբերությունը հասնում է 3700 մ-ի: Տարածքի մոտ 90%-ը գտնվում է օվկիանոսի մակարդակից 1000 մ-ից ավելի բարձրության վրա, իսկ ավելի քան 40%-ը՝ 2000 մ-ից բարձր: «Եթե վերանանք մասնավոր դեպքերից, ապա Հայաստանի աշխարհագրական լայնություններում մարդու կյանքի և աշխատանքի համար առավել նպաստավոր պայմաններ կան մինչև 1400 մ բացարձակ բարձրություն ունեցող գոտում, որից հետո դրանք նկատելիորեն վատանում են:

Սկսած 2000 մ-ից այդ պայմանները դառնում են անբարենպաստ: Երևան են գալիս արտադրական բնույթի դժվարություններ» [102]:

ՀՀ տարածքի մոտ 2/3-ում խորքային մասնատվածությունը գերազանցում է 100 մ-ից՝ առանձին դեպքերում հասնելով մինչև 800 մ-ի, միայն տարածքի 1/3-ում է այդ ցուցանիշը հաշվվում տասնյակ մետրերով [186]: Բավական բարձր են նաև հորիզոնական մասնատվածության ցուցանիշները. ցամաքային տարածքի շուրջ 90%-ի վրա հորիզոնական մասնատվածության ցուցանիշը գերազանցում է 400 մ/քկմ, իսկ հանրապետության տարածքի մոտ 30%-ի վրա այն կազմում է 1000 մ/քկմ (նույն տեղում): Մշակելի հողերի կեսից ավելին՝ 54.8%-ը [113], ունեն մինչև 5 հա մակերես, իսկ առանձին տարածաշրջաններում (Եղեգնաձորի, Կապանի, Մեղրու) այդ ցուցանիշը հասնում է 70%-ի: Հողատարածությունների այդպիսի կառուցվածքը զգալիորեն դժվարացնում է դրանց գյուղատնտեսական մշակումը, մեքենայացումը և գյուղատնտեսության ինտենսիվացումը: Բացի այդ, այդպիսի շրջաններում տեղանքի խիստ մասնատվածությունը դժվարացնում է հաղորդակցությունը գյուղերի և մշակելի հողատարածություններ միջև:

Բնակավայրերի տեղադիրքի և տնտեսության տարբեր ճյուղերի տեղաբաշխման և զարգացման վրա իր ազդեցությունն է թողնում նաև տեղանքի թեքությունների աստիճանը: Թեքությունների մեծացմանը զուգընթաց վատանում են շենքերի կառուցապատման պայմանները, առաջ են գալիս արտադրական բնույթի մի շարք դժվարություններ:

Քարտեզագափական նյութերի և տնտեսության տարբեր ճյուղերի կողմից տարածքի յուրացմանը ներկայացվող պահանջների բազմակողմանի հաշվառման հիման վրա ՀՀ տարածքում ըստ թեքության աստիճանների առանձնացվել են գրադացիաներ և տրվել է դրանց տնտեսաաշխարհազրական ընդհանուր գնահատականը [102, 186]:

Տափարակ և մեղմաթեք հարթությունների (մինչև 3⁰ թեքություն ունեցող տարածքները) ռելիեֆային պայմանները բնակավայրերի պահանջների առումով կարելի է գնահատել իբրև լավագույն: Առավել բարենպաստ և բարենպաստ բնական պայմաններ ունեցող գոտիներին (մինչև 2000 մ) բաժին է ընկնում հարթությունների կեսից ավելին, մնացածը գտնվում է 2000 մ-ից բարձր և գլխավորապես օգտագործվում է իբրև սեզոնային արոտավայր: **Մեղմաթեք լանջերի** (3-8⁰) տնտեսական օգտագործման և բնակավայրերի ձևավորման ու զարգացման համար պայմաններն ընդհանուր առմամբ լավ են: Սակայն այդ տարածքների 47 %-ը ընկած են 2000 մ-ից բարձր, որի պատճառով նվազում է դրանց տնտեսական օգտագործման և բնակեցման

հնարավորությունները: *Միջին թեքության լանջերում* (8-16⁰) զգալի տարածում ունեն բավական ինտենսիվ էրոզիոն գործընթացները: Բնակավայրերի զարգացման հնարավորությունները սահմանափակ են, սակայն ՀՀ սակավահողության պայմաններում ժամանակակից տեխնիկայի օգտագործման հնարավորությունները թույլ են տալիս մինչև 16⁰ թեքության լանջերն ընդգրկել տնտեսապես նպատակահարմար արտադրական օգտագործման ոլորտ:

Ձառիթափ լանջերի (16-30⁰) տարածքի կեսից ավելին ընկած է 2000 մ-ից բարձր շրջաններում: Դրանց գյուղատնտեսական օգտագործման հնարավորությունները խիստ սահմանափակ են և առավելապես պիտանի են խոտհարքերի ու արոտների համար: Այդպիսի տարածքներում բնակեցում և կապիտալ շինարարություն կատարվում է խիստ անհրաժեշտության դեպքում:

ՀՀ տարածքում 30⁰-ից բարձր թեքությունները բնակեցման համար զրեթե պիտանի չեն, օգտագործվում են միայն արոտների և մասամբ նաև խոտհարքերի համար, սկսած 40⁰-ից դրանց հնարավորությունները ևս բացառվում են:

Հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ բնակչության կեսից ավելին (54.5%-ը) ապրում է ծովի մակարդակից 800-1000 մ բարձրության գոտում, որտեղ ընկած են ՀՀ հարթավայրային հիմնական տարածքները: Նշված գոտում 0-3⁰ թեքությունները գրավում են ամբողջ տարածքի 63.2%-ը:

Տեղանքի թեքությունների, մասնատման խորության և խտության, ինչպես նաև հարաբերական բարձրությունների պատճառով ՀՀ տարածքի տնտեսական յուրացման և բնակեցման պայմանները տարբեր են: ՀՀ-ում արտադրության կազմակերպման և բնակավայրերի ձևավորման ու զարգացման համար բավարար բնական պայմաններ ունեցող տարածքը սահմանափակվում է մոտավորապես *16⁰ թեքությունների և մինչև 2000 մ բացարձակ բարձրությունների* սահմաններում, որը կազմում է մոտ 1.2 մլն. հա կամ հանրապետության տարածքի 42%-ը [128]:

Գյուղական տարածքների վրա ազդող ռելիեֆային մյուս տարրը տեղանքի դիրքադրությունն է, որը բնակավայրերի վրա ազդում է ոչ թե անմիջականորեն, այլ բնական միջավայրի մյուս բաղադրիչների՝ ռադիացիայի, խոնավության հաշվեկշռի, հողաբուսական ծածկի, մակերևութային ջրերի հոսքի, տեղատարման և այլ գործոնների միջոցով: Վերջիններիս կախվածությունը դիրքադրությունից նկատելի է դառնում սկսած 5⁰ թեքությունից: ՀՀ տարածքի 22%-ը կազմում են հարթությունները: Մնացած տարածքի

բաշխումն ըստ դիրքադրությունների ունի հետևյալ պատկերը՝ հյուսիսային դիրքադրություններ՝ 28.6%, հարավային դիրքադրություններ՝ 29.9%, արևելյան դիրքադրություններ՝ 8% և արևմտյան դիրքադրություններ՝ 11.6% [186]: ՀՀ-ում նկատի ունենալով նրա աշխարհագրական լայնությունը և դրանով պայմանավորված արեգակնային ճառագայթման մեծությունը, ֆիզիկաաշխարհագրական տարրերի համալիրը մարդու համար առավել նպաստավոր բնական կենսապայմաններ է ստեղծում հյուսիսային և դրան մոտիկ (հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան) համեմատաբար խոնավ և բուսական ծածկով հարուստ դիրքադրության լանջերում, որոնք զբաղեցնում են հանրապետության ընդհանուր տարածքի մոտ 29%-ը [130]:

ՀՀ գյուղական տարածքների վրա ռելիեֆի ազդեցությունը դրսևորվում է մի քանի ուղղություններով: ՀՀ գյուղական բնակավայրերի զգալի մասը գտնվում են ցածրադիր հարթավայրերում և հովիտներում, որտեղ կան բարենպաստ պայմաններ բնակավայրերի կառուցապատման և տնտեսական գործունեության համար: Գյուղերի խիտ ցանց է ձևավորվել Արարատյան, Շիրակի և Լոռվա դաշտերում, Սևանի գոգավորությունում և Տեղի սարահարթում, որտեղ գյուղերի բարձր խտությունը զուգակցվում է մեծ մարդաշատության հետ: Դա պայմանավորված է նշված տարածքներում ոչ միայն հարթ մակերևույթի գերակշռությամբ, այլև տնտեսական գործունեության համար բարենպաստ հողակլիմայական պայմաններով (Վոջցքի և մասամբ նաև Ապարանի և Սիսիանի սարահարթերը, չնայած որ ունեն հարթ մակերևույթ, սակայն կլիմայական ոչ այնքան բարենպաստ պայմանների պատճառով առանձնանում են գյուղերի ոչ մեծ մարդաշատությամբ):

ՀՀ լեռնային կտրատված մակերևույթ ունեցող տարածքներում գյուղական բնակավայրերը կուտակված են լեռնահովիտներում, հատկապես երբ այն զուգակցվում է ջրային ուղիների հետ: Գյուղերի կուտակումներ կան Աղստև, Արփա, Դեբեդ, Հրազդան, Գետիկ, Փամբակ, Մարմարիկ և Ողջի գետերի հովիտներում: Որպես կանոն, լեռնահովիտներում գյուղերի խտությունը և մարդաշատությունն ավելանում է գետերի վերին հոսանքներից դեպի ստորին հոսանքներ շարժվելիս՝ գետահովտի լայնացման և հողակլիմայական պայմանների բարելավման պատճառով [44]:

Բնակավայրերի ձևավորումը և զարգացումը ուղղակիորեն կապված են նաև տարածքի ճարտարագիտաերկրաբանական և սեյսմիկ հատկանիշների հետ: Հայաստանի տարածքն ամբողջովին գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Տարածքի 1/4-ը, որտեղ կենտրոնացված է ամբողջ բնակչության 1/3-ից ավելին, սեյսմիկ տեսակետից համարվում է վտանգավոր: Ըստ

ընդունված սեյսմիկ շրջանցման սխեմայի, այդ տարածքը մտնում է 8 բալանոց գոտու մեջ: Սեյսմիկ ակտիվությամբ աչքի են ընկնում Շիրակի դաշտը, Արարատյան զոգավորությունը, Փամբակի լեռնաշղթան և Ջանգեզուրը: Մեկ անգամ չէ որ ավերիչ ուժի երկրաշարժերը կործանարար հետևանքներ են թողել հայկական լեռնաշխարհում: Միայն վերջին հարյուրամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի են ունեցել ավերիչ ուժի մի քանի երկրաշարժեր:

ՀՀ տարածքի առանձին շրջաններում բնակավայրերի համար անբարենպաստ պայմաններ են ստեղծում նաև սողանքները, սելավները, երկրի մակերևույթին մոտ գտնվող գրունտային ջրերը և ակտիվ գործող այլ բնաաշխարհագրական երևույթներ: Կատարված մանրակրկիտ ուսումնասիրություններից պարզվել է, որ ՀՀ-ում տարածված բազմաթիվ սողանքները և փլվածքներն առաջանում և զարգանում են ակտիվ տեկտոնական խզվածքային գոտիներում՝ մեծ թեքությունների լեռնալանջերում: Ողջաբերդի լեռնաշղթայի, Ուրծի, Հայոց ձորի, Վարդենիսի գառիթափ լեռնալանջերի ստորոտներում տեղադրված բազմաթիվ գյուղական բնակավայրեր դարերի և տարիների ընթացքում տուժել են սողանքային երևույթներից, նրանց մի զգալի մասը տեղափոխվել է ավելի ապահով վայրեր:

Այսպիսով, ՀՀ տարածքի փոքր չափերը, խիստ արտահայտված լեռնային բնույթը, մակերևույթի հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածությունը, տարածքի զգալի մասի բացարձակ մեծ բարձրությունները և թեքությունները, կլիմայական խիստ պայմանները, ջրային և հողային ռեսուրսների անհավասարաչափ բաշխումը, սեյսմիկ ակտիվությունը, մի շարք շրջաններում սողանքները, սելավները, երկրի մակերևույթին մոտ գտնվող գրունտային ջրերը և ակտիվ գործող այլ բնաաշխարհագրական երևույթները, ինչպես նաև տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը պահպանելու անհրաժեշտությունը զգալիորեն նեղացնում են ՀՀ բնակեցման արեալը և իրենց անմիջական ու միջնորդավորված ազդեցությունն են թողնում գյուղական տարածքների, մասնավորապես՝ բնակավայրերի առաջացման և հետագա զարգացման վրա:

2.2 Տարաբնակեցման պատմական նախադրյալները

Տարաբնակեցման ձևերն ու բնակավայրերը պատմական կատեգորիա են: Բնակավայրերի առաջացումն ու դրանց հետագա զարգացումն ընթացել է պատմական կոնկրետ ժամանակաշրջանում՝ բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցության տակ:

Բնակավայրերի պատմականորեն ժառանգված տարբեր տարրեր՝ նյութական ձևերը (ձևավորված բնակավայրերը, դրանց չափերը, արտաքին տեսքը և այլն), ավանդույթները, ծեսերն ու սովորությունները մեծ ազդեցություն են թողնում բնակավայրերի ներկայիս ցանցի ձևավորման վրա: «Նորը ոչ կտրականապես և ոչ ամբողջ ճակատով է դուրս մղում հնին, հաճախ չի էլ ձգտում լրիվ դուրս մղել, այլ՝ ընդհակառակը, պահում է հնի բոլոր արժեքավորները: Եվրոպական կոստյումը կա ի հաշիվ միջինասիական խալաթի կամ կովկասյան չերքեզկայի և այլն» [154]:

Պատմական Հայաստանի տարբեր աշխարհներում գյուղական տարածքների, բնակավայրերի և դրանց ցանցի ժամանակակից ձևերի բազմազանությունն արդյունք է ոչ միայն բնական տարրերի բազմազանության, այլ նաև անցյալի պատմական իրադարձությունների, մասնավորապես՝ անընդհատ կրկնվող ավերիչ պատերազմների: Վերջիններիս հետևանքով կործանվել և ավերվել են բազմաթիվ բնակավայրեր, նվազել է բնակավայրերի թիվը և մարդաշատությունը, փոխվել է բնակչության ազգային կազմը, կենցաղն ու տնտեսությունը, բնակավայրերի արտաքին տեսքը: Բազմիցս ավերվել կամ հիմնահատակ քանդվել են բնակավայրերը, տեղահանվել կամ սրի է քաշվել բնակչությունն օտար զավթիչների կողմից: Դրանք իրենց նկատելի հետքն են թողել բնակավայրերի դիրքի, խտության, արտաքին տեսքի, մարդաշատության և տնտեսական բնույթի վրա:

Հայ ազգի տարաբնակեցումը Հայկական լեռնաշխարհում և հարակից հարթավայրերում (Միջագետք, Քուռ-Արաքսյան հարթավայր) պատմական խորը արմատներ ունի: Այստեղ դեռևս անհիշելի ժամանակներից զբաղվել են հողագործությամբ և ընդերքի հարստությունների օգտագործմամբ: Պատմագիտական աղբյուրների վկայությամբ Հայկական լեռնաշխարհում Ք.ծ.ա. երկրորդ հազարամյակում հիմնվել են գյուղական տիպի առաջին մշտական բնակավայրերը: Բնակչությունն ընտելացել և հարմարվել է տեղանքի ինքնատիպ բնակլիմայական պայմաններին՝ ելնելով հայ ազգի առանձին էթնիկական խմբերի բնօգտագործման պահանջների և ապրելակերպի գենետիկական առանձնահատկություններից: Նույնիսկ հայկական

պետության ամենաընդարձակ տարածքի սահմաններում (Տիգրան Մեծ, 93-66 թթ. Ք.ժ.ա.), ըստ էության, այս բազմազգ հզորագույն պետության մեջ տիրող հայ էթնոսն հարազատ է մնացել իր տարածական աշխարհագրական հիմքին:

ՀՀ ներկա տարածքի սահմաններում տարածքաաշխարհագրական սելեկտիվ տարաբնակեցման տիպի հիմքը, կարելի է ասել, գալիս է 11-րդ դարից՝ Բագրատունյաց թագավորության տրոհման ժամանակաշրջանից: Թեև հետագա հազարամյակում հայ ազգի տարաբնակեցման մեջ շատ փոփոխություններ են եղել՝ օտար նվաճողների անընդմեջ հարձակումների և հալածանքների հետևանքով (ընդհուպ մինչև 1915 թ. եղեռնը), բայց, այնուհանդերձ տեղաբնակների կորիզը դարերի ընթացքում համայնքների ձևով պահպանել և սերունդներին է փոխանցել գեներտիկորեն ընտրված և տվյալ լանդշաֆտին բնորոշ ապրելակերպի առանձնահատկությունները: Վաչկատուն ցեղերի մուտքը և հարյուրամյակներ տևած տիրապետումը Հայկական լեռնաշխարհում, ընդհուպ մինչև հայ բնակչության ոչնչացումը և տեղահանումը Արևմտյան Հայաստանից, չեն կարողացել ջնջել հայ էթնիկական խմբերի ձգտումը՝ ընտրել և հարմարվել Արևելյան Հայաստանի տեղանքի այն բնակլիմայական պայմաններին, որոնք հարազատ են կամ մոտ իրենց համար պատմականորեն արմատացած ապրելակերպին [93]: Փոքր, համայնքային տիպի գաղթօջախները տարիների ընթացքում վեր են ածվել գյուղերի՝ իրենց հատուկ մորֆոլոգիական տիպի կառուցվածքով, և ապա, բնակչության աճին համապատասխան, տարաբնակեցվել են տվյալ բնական (լանդշաֆտային) պայմաններին բնորոշ ավելի ընդարձակ գավառային տարածքներում՝ պահպանելով տվյալ էթնիկաբարբառային համայնքին բնորոշ տարաբնակեցման ինքնատիպությունը:

Պատմական անցած ժամանակների բնաաշխարհագրական, ինչպես նաև հասարակական երևույթները ՀՀ պատմաաշխարհագրական տարբեր մարզերում տարաբնակեցման և գյուղական տարածքների վրա տարբեր կերպ են անդրադարձել՝ պայմանավորելով հանրապետության բնապատմական տարբեր մարզերի տարաբնակեցման ձևերի բազմազանությունը և ինքնատիպությունը: Բնական և պատմաազգագրական գործոններով պայմանավորված ՀՀ տարածքում կարելի է առանձնացնել հինգ խոշոր գոտիներ, որոնք միմյանցից տարբերվում են տարածքի բնակեցման բնապատմական առանձնահատկություններով: Դրանք են.

1. Փոքր Կովկասի արտաքին, ծայքաբեկորավոր, խորը գետահովիտներով մասնատված, անտառային լանջերով լեռնաշղթաների գոտի: Այս գո-

տու մեջ են մտնում Աղստևի, Յախումի, Տավուշի, Խնձորուտի, Միափորի, Մռավի, Խաչենի, Ղարաբաղի, Բարգուշատի, Խուստուփի շրջանները, դրանցից տարարձակվող լեռնաբազուկները և դրանց հարակից տարածքները:

2. Փոքր Կովկասի ներքին, ծալքավոր, չափավոր մասնատված, անտառներով աղքատ, մարգագետնային լանջերի և լեռնաշղթաների գոտի: Այս գոտու մեջ են մտնում Վիրահայոց, Բազումի, Փամբակի, Ծաղկունյաց, Արեգունու շրջանները և հարակից տարածքները,

3. Հրաբխային լեռնավահանների և բարձրադիր սարավանդների, միջլեռնային գոգավորությունների մարգագետնատափաստանային գոտի: Այս գոտու մեջ են մտնում Խոնավ, Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի լեռնավահանները՝ շրջակա սարավանդներով, ինչպես նաև՝ Աշոցքը, Շիրակի և Սևանի գոգավորությունները,

4. Արարատյան դաշտի և հարակից ցածրադիր սարավանդների կիսաանապատային գոտի,

5. Փոքր Կովկասի ներծարաքայան խիստ մասնատված ծալքաբեկորավոր շղթաների անտառազուրկ կամ ֆրիզանաքսերոֆիլ բուսականությամբ լանջերի գոտի: Այս գոտու մեջ են մտնում Ուրծի, Երանոսի, Վայոց ձորի, Սեղրու շրջանները և դրանց հարակից տարածքները:

1. Փոքր Կովկասի արտաքին լեռնալանջերի գոտի: Հիմնականում պատկանում է Քուռ գետի ավազանին (Աղստև, Յախում, Տավուշ Խնձորուտ, Շամխոր, Գյանջա, Թարթառ), ինչպես նաև որոշ չափով Արաքսի ավազանին (Հագարու, Ողջի, Գեղի): Այս գոտում ազատ տարածքները, որտեղ հնարավոր է կառուցել փոքր բնակավայրեր, քիչ են: Մեծ մասամբ դրանք գտնվում են գետերի և նրանց հետ միախառնվող վտակների արտաբերման կոների հատվածներում, որտեղ պահպանված են նաև հնագույն դարավանդների սեղանածև, աստիճանավոր մնացորդները: Գոտու կլիմայական պայմանները բարենպաստ են բնակչության համար, բնորոշ բարեխառն մեղմ սակավածույն ձմեռներով և երկարատև տաք ամառներով: Այս գոտու բնակչության կյանքը պատմականորեն կախված է եղել անտառից ստացվող բարիքներից (հատապտուղներ, զկեռ, հոն, կաղին, մասուր, ընկույզ և այլն): Պատմական ժամանակաշրջանում մեծ չափով տարածված է եղել նաև անտառահատումը և փայտի արտահանումը հարևան տափաստանային (Փայտակարան) կամ ներքին Հայաստանի անտառազուրկ շրջանները:

Այս գոտու տեղաբնիկները Ղարաբաղ-Խաչենի բազմաճյուղ ենթաբարբառներով խոսող հայ բնիկներն են, որոնք վերջնականապես արմատավորվել են տվյալ բնակլիմայական գոտում հավանական է 10-րդ դարից:

Սելջուկյան հորդանների հարձակումների հետևանքով այս գոտու հայ բնակչությունը դուրս է մղվել բերքատու և ապրելու համար բարենպաստ հարթավայրային մասերից և այնուհետև զբաղեցվել աղբբեջանական բնակչության կողմից: Հայ բնակչության տեղաշարժերը և բնակեցումը շարունակվել են նաև Սեֆյան Պարսկաստանի տիրապետության ընթացքում՝ մինչև ռուս-պարսկական պատերազմների վերջը: Տարաբնակեցման նոր հոսանքն արդեն կապված է ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետ, որոնք առաջ են բերել Արևմտյան Հայաստանի և Պարսկահայքի ժողովրդի զանգվածային տեղաշարժեր ամբողջ հանրապետության տարածքում և հարակից շրջաններում՝ որոշակի ազդեցություն թողնելով այս գոտու բնակչության տարաբնակեցման վրա:

2. Փոքր Կովկասի ներքին շղթաների գոտի: Սա բնապատմական Լոռի-Փամբակի բավականին ընդարձակ շրջանն է, ցայտուն արտահայտված շրջափակող լեռնաշղթաներով, ներքին գոգավորություններով ու սարավանդներով: Շրջանը գտնվում է ծովի մակերևույթից 1500-1800 մ միջին բարձրության վրա, ունի բարենպաստ պայմաններ երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու համար:

Բնակչության հիմնական մասը (ինչպես և նախորդում) տեղաբնիկներ են, որոնք հիմնավորվել են այստեղ դեռ պատմական հնագույն ժամանակներից: Մահմեդական, օտար տարրը չի կարողացել այստեղ տևական բնակություն ունենալ և հաստատվել, բացի Փամբակ գետի հովտի և նրա վտակների առանձին հատվածներից՝ փոքր գյուղերի և ագարակախուտորային բնակավայրերի ձևով: Բայց Լոռի-Փամբակում բավական մեծ թվով հայ բնակչություն է տարաբնակեցվել Օսմանյան Թուրքիայի և Իրանի տարածքներից: Սրանք ապաստան են գտել այստեղ հատկապես ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների ժամանակ, երբ արդեն Այրարատի, Շիրակի, Աշոցքի և Սևանի ավազանի ընդարձակ տարածքները լցվել էին փախստականների և տեղահանվածների հոծ զանգվածներով:

3. Հրաբխային բարձրավանդակի լեռնավահանների և բարձրադիր սարավանդների գոտին (1500-3000 մ բարձրությամբ) ձգվում է հանրապետության կենտրոնական մասով (Աշոցք-Շիրակ-Սևանի ավազան և Սյունիքի բարձրավանդակ): Այս լայն գոտին իրենից ներկայացնում է լավաներով ծածկված հարթ ալիքավոր կամ աստիճանաձև սարավանդների, թույլ մասնատված լայնարձակ տափարակ տարածություններ, որոնք անջատվում են իրարից լավածածկի մեջ խորը մխրճված կանխոններով (Ախուրյան, Քասաղ, Հրազդան, Ազատ, Վեդի, Որոտան և սրանց վտակները):

Այս գոտում ևս, ինչպես և նախորդում, բավականին բարենպաստ պայմաններ կան հողագործության և անասնապահության ճյուղերի զարգացման համար:

Վերը նշված բնակլիմայական պայմանները նման են Արևմտյան Հայաստանի Կարինի, Բագրևանդի, Մանազկերտի, Խնուսի, Բասենի, Տարոնի և Կարսի սարավանդների ու դաշտերի լանդշաֆտային պայմաններին, իհարկե, ոչ այնքան բարենպաստ, ինչպես Արևմտյան Հայաստանի ավելի խոնավ և բարեբեր տափաստանները: Բայց, այնուհանդերձ, պատերազմների ընթացքում Արևմտյան Հայաստանից տեղահանված բնակչությունն ընտրել է իր տնտեսական կյանքին և ապրելակերպին հարմար այն տարածքները, որոնք այս կամ այն չափով մոտ են եղել հայրենիքին և հաստատվել է այստեղ համայնքներով, տեղաբնակ բնակչությունից հիմնականում ամայացված վայրերում:

4. Արարատյան դաշտը և հարակից ցածրադիր սարավանդների շրջանը բնակլիմայական պայմաններով տիպիկ կիսաանապատ է՝ չոր, խիստ ցամաքային ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով: Առանց ոռոգման այստեղ հնարավոր չէ բնականոն կյանքը: Բայց պատմականորեն այստեղ է ձևավորվել հայ ազգի բնօրրանը՝ Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունների մայրաքաղաքները (Արտաշատը, Դվինը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Արմավիրը՝ իրենց շրջակա ծաղկուն գյուղերով և ավաններով), Մասյացոտն, Արագածոտն, Կոտայք, Ոստան գավառներն՝ իրենց ստվար գյուղական բնակչությամբ:

Այրարատն իր ծաղկուն դաշտերով, քաղաքային հարուստ շինություններով, եկեղեցիներով և տաճարներով օտար նվաճողների համար եղել է թալանի ու գերեվարության հարմար միջավայր: Մինչև Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալն Այրարատն պատկանելիս է եղել Սեֆյան Պարսկաստանի Երևանի և Նախճևանի խանություններին: Ժամանակ առ ժամանակ օսման և պարսիկ նվաճողների համար հանդիսացել է պատերազմների թատերաբեմ:

Չնայած այս հալածանքներին և կեղեքումներին, հայ բնակչությունն ամեն կերպ ձգտել է վերաբնակվել իր ամայացած հայրենիքում, վերաշինել բնակավայրերը, ոռոգչական ցանցը և այլն:

Պետք է նշել, որ պարսից խաները և սարդարները շատ դեպքերում խրախուսել են հայ բնակչության վերադարձը, արտոնություններ են շնորհել նրանց և հայ մեծամեծերին՝ զարգացնելու համար տնտեսական կյանքը և առևտուրը: Այն առանձնապես նկատելի է եղել 18-րդ դարի երկրորդ կեսում

և հետագա տարիներին, մինչև ռուս-պարսկական պատերազմները:

5. Փոքր Կովկասի մերձարաքսյան շրջանների գոտին (կամ՝ Ուրծ-Հայոց ծորի և Մեղրու բնակլիմայական շրջանը) հայ բնակչության տարաբնակեցման գործում ունեցել է նախորդներից զգալիորեն տարբերվող բնակչության տեղաշարժերի ու պատմական զարգացման ինքնատիպ պատկեր: Լանդշաֆտային և բնակլիմայական պայմանների տեսակետից այս երկու ներփակ գոգավորությունները (խստորեն մասնատված գետահովտային ցանցով, մեծ թեքությունների, զառիթափության հասնող լեռնալանջերով), տեղաբնակների համար ստեղծել են բարենպաստ պայմաններ օտար նվաճողների հարձակումներից պաշտպանվելու համար: Բարձր լեռնալանջերում գտնվող կարստային և վիմափոր քարանձավները ծառայել են ժամանակավոր պաշտպանական բնակավայրեր, թաքստոցներ:

Վայքում, Արփայի դարավանդներում եղել են ծաղկուն բնակավայրեր՝ կառուցված Ջաքարյանների իշխանական տան ճյուղի՝ Խաչբակյանների և Օրբեյանների կողմից: Սրանք հետագայում (մոնղոլական և թուրքմենական տիրապետության տարիներին), պարբերաբար լքվել են բնակչության կողմից: Տեղաբնակները պահպանվել են միայն բարձր լեռնային գյուղակներում և անմատչելի խորը գետահովիտներում, միջնադարյան ամրոցների և վանքերի շրջակայքում:

Պատերազմական ավերածություններից զերծ չմնաց նաև Մեղրու շրջանը, որը հայաթափվեց Շահ Աբասի (1600-1610 թթ.) արշավանքների ժամանակ: Կլիմայական աննպաստ պայմանների, ջարդի և բռնի մահմեդականացման պայմաններում Պարսկաստանի անապատները քշված հայերի մեծ մասը ոչնչացավ: Մեղրիում (Արևիկում) տեղաբնակների մի փոքր մասը միայն կարողացավ պահպանել գոյությունը լեռնային գետերի վերին հոսանքներում, առանձին ազարակատիպ գյուղակներում:

Արևելյան Հայաստանը Պարսկաստանի տիրապետության տակ անցնելուց (1630 թ.) մի քանի տասնյակ տարուց հետո, համեմատաբար խաղաղ պայմաններում, վերստին սկսում է զարգանալ այս գոտու քայքայված տնտեսությունը: Վերաբնակեցվում են ավերված բնակավայրերը, որոնք արդեն 17-րդ դարի երկրորդ կեսին դառնում են քիչ թե շատ բարեկարգ ավաններ: Բայց տնտեսության և բնակավայրերի զարգացման ընթացքը շուտով ընդհատվում է ռուս-պարսկական պատերազմների հետևանքով՝ առաջ բերելով բնակչության նոր տեղաշարժեր, և ի վերջո, Պարսկահայքից (Թավրիզից, Խոյից, Սալմաստից) ներգաղթի նոր ալիք Վայք, Ուրծ և Մեղրի:


Հայաստանն իր աշխարհագրական դիրքի պատճառով հարյուրամյակ-

ներ շարունակ եղել է պատերազմների թատերաբեմ: Պետականության կորուստը և օտարերկրյա զավթիչների բազմիցս կրկնվող ասպատակությունները Հայաստան երկիրը և հայ ժողովրդին հասցրել էին կործանման եզրին: Հարյուրամյակներ շարունակ չէր աճում երկրի բնակչությունը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պահին (1828 թ.) Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում ապրում էր ընդամենը 97.4 հազ. մարդ [102]:

Արևելյան Հայաստանում բնակչության ձևավորման և տարաբնակեցման ընթացքը տեղի է ունեցել քաղաքական և սոցիալ-տնտեսական որոշակի գործոնների ազդեցության տակ: XIX դ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները և դրանց հաջորդած հաշտության պայմանագրերն առաջ բերեցին Արևմտյան Հայաստանի և Պարսկահայքի հայ բնակչության, ինչպես նաև քրիստոնեադավան այլազգի ճնշված խավի զանգվածային տեղաշարժը և գաղթը դեպի ռուսական զորքի կողմից գրաված տարածքներ: Պարսկահայության հիմնական զանգվածները Խոյի, Սալմաստի, Մարանդի խանություններից և Թավրիզից Գյուլիստանի (1813թ.) և Թուրքմենչայի (1828թ.) պայմանագրերի համաձայն հաստատվեցին Արարատյան ու Շարուրի դաշտերում և կից սարավանդներում, Եղեգնաձորում, Շուշիում և որոշ չափով նաև Ջալալօղլիում (Ստեփանավան):

Ռուս-թուրքական պատերազմների ժամանակ Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան և Վրաստան տեղափոխվեց հայ ժողովրդի մի ստվար զանգված Ադրիանապոլսի հաշտության պայմանագրից հետո (1828-29թթ.): Երզրումի, Գյումուշխանեի, Արդահանի և Տրապիզոնի հայ բնակչության հոծ զանգվածներ տեղափոխվեցին և հաստատվեցին Ջավախքի և Ախալցխայի փաշայություններից գրաված տարածքներում: Բաբերդ-Արդվինից մի հոսանք տեղափոխվեց Բուլնիս հաչեն: Երզրումից, Կարսից, Բասենից, Խնուսից տեղափոխված ժողովուրդը տեղավորվեց Շիրակի և Ապարանի դաշտերում, Բայազետից, Ալաշկերտից և Բասենից տեղափոխվածները՝ Դարաչիչակում (Ծաղկաձոր) և Սևանի ավազանում (Գավառ, Մարտունի, Վարդենիս և այլն) [19, 21]:

Միայն 1828-30 թթ. Արևմտյան Հայաստանից և Պարսկահայքից Արևելյան Հայաստան են տեղափոխվել 130-140 հազար հայեր՝ տեղավորվելով վերը նշված շրջաններում [17, 24, 25]: Արդեն 1831 թ. Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքի սահմաններում հաշվվում էր 710 բնակեցված գյուղ և մեկ քաղաք, իսկ բնակչության թիվը կազմում էր 161747 մարդ



Նկ. 1. ՀՀ գյուղական բնակավայրերի թիվը և միջին մարդաքանակն ըստ տարածաշրջանների 1831 թ-ի դրությամբ

[28,184] (նկ. 1): Գյուղական բնակչության թիվը համեմատաբար մեծ էր Արարատյան դաշտում, Շիրակում, Ապարանում և Սևանի ավազանում, որտեղ էլ գտնվում էին առավել մարդաշատ գյուղերը: Գյուղական բնակավայրերի ցանցն առավել նոսր էր Աշոցքում, Լոռիում և Տավուշում: Ամասիայի, Աշոցքի և Տաշիրի նախկին վարչական շրջանները 1831 թ. ունեին ընդամենը 13 բնակեցված գյուղ, իսկ 4050 մարդ դեռևս անօթևան էր [184]: Գյուղական բնակչության խտությունը համեմատաբար բարձր էր մերձերևանյան շրջանում, Ախուրյանի և Արթիկի տարածաշրջաններում (նկ.1):

Ներգաղթի երկրորդ խոշոր հոսքը կատարվեց 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Նույն փառալուծություններից, ինչպես նաև հետագայում Համիդյան հայկական ջարդերի պատճառով մինչև 1896 թ. ներառյալ Բաբերդից, Երզնկայից, Բիթլիսից, Շապին-Գարահիսարից, Խարբերդից, Սեբաստիայից, Մուշից, Սասունից, Վանից և այլ վայրերից հայ բնակչության մի սովորական զանգված տեղափոխվեց Ռուսաստանի կողմից գրավված Կարսի, Կաղզվանի և Օլթիի շրջանները, ինչպես նաև՝ Այրարատ, Շիրակ և Սևանի ավազան՝ ստեղծելով իրենց համայնքային տիպի գյուղական բնակավայրերը:

Մինչ երկրորդ խոշոր ներգաղթը Արևելյան Հայաստանում բնակչության թվաքանակը 1831-1873 թթ. ընթացքում ավելացավ ավելի քան 3 անգամ՝ հասնելով 496140 մարդու: Վերաբնակեցվեցին նախկինում ավերված տասնյակ գյուղական բնակավայրեր, միաժամանակ հիմնվեցին բազմաթիվ նոր գյուղեր: Սոտ քառասուն տարվա ընթացքում գյուղական բնակավայրերի թիվն ավելացավ 279-ով՝ 1873 թ.-ին կազմելով 989 գյուղ: Բնակչության խտությունը 1831 թ. 5,4 մարդ/քվմ-ից հասավ 16.7-ի: Հիմնվեցին երկու նոր քաղաքներ՝ Գյումրին (Ալեքսանդրապոլ) և Նոր Բայազետը (Գավառ):

Ներգաղթի երկրորդ խոշոր ալիքն իրեն զգացնել է տալիս, երբ համեմատում ենք 1873 և 1897 թթ. բնակչության և բնակավայրերի թվաքանակի վերաբերյալ տվյալները (աղ. 1): Այս ընթացքում Արևելյան Հայաստանի բնակչության թիվն ավելացավ ավելի քան 301 հազարով, իսկ գյուղական բնակավայրերի թիվը՝ 298-ով: Չնայած գյուղական բնակավայրերի թվի այդպիսի ավելացմանը, այնուհանդերձ 1873թ. համեմատությամբ գյուղերի միջին մարդաշատությունն ավելացավ ավելի քան 100 մարդով՝ 1897 թ. կազմելով 566 մարդ: Իսկ եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ 1897թ. համառուսական առաջին մարդահամարի ժամանակ բացի սովորական, հանրածանոթ գյուղերից ցուցակագրվել են նաև բազմաթիվ մանր բնակավայրեր [28], ապա հասկանալի կդառնա, որ գյուղական բնակա-

վայրերի մարդաշատության ավելացումն ավելի մեծ է եղել [Ըկ.2]:

Աղյուսակ 1


**ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժմանը
(1831-1926 թթ.)¹**

Տարե-թվեր	Բնակչության թիվը			Գյուղական բնակավայրերի թիվը	Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը
	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական		
1831	161747	11920	149827	710	211
1873	496140	37277	458863	989	464
1897	797853	69558	728295	1287	566
1914	1014255	95320	918935	1170	785
1922	782052	101960	680092	1114	610
1926	881290	135644	745646	1286	580

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962 ր., վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

Առաջին համաշխարհային պատերազմը և մեծ եղեռնը վերջնականապես հայաթափ արեցին Արևմտյան Հայաստանը՝ ներառյալ նաև Թուրքիային զիջված Կարսի, Օլթիի, Կաղզվանի և Սուրմալուի գավառները: Վերջիններիս բնակիչներն արդեն կրկնակի և եռակի տեղահանման պայմաններում ցրվեցին ներկայիս ՀՀ տարբեր մասերում, Վրաստանում, Հյուսիսային Կովկասում և այլուր՝ աշխատելով պահպանել իրենց էթնիկաբարբառային և տարաբնակեցման ինքնատիպությունն առանձին գաղթօջախների մեջ:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը, 1897-1914 թթ. ընթացքում, շարունակվող ներգաղթի և բնական աճի շնորհիվ Արևելյան Հայաստանի բնակչությունը հասնում է նախախորհրդային ժամանակաշրջանի առավելագույն թվին (1014255 մարդ): Չնայած 1897 թ. համեմատությամբ գյուղական բնակավայրերի թվաքանակի որոշ նվազմանը (աղ. 1), տասնութ տարվա ընթացքում գյուղական բնակչությունն ավելացավ ավելի քան 190 հազարով: Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը 1897 թ. համեմատությամբ ավելացավ մոտ 220-ով և 1914 թ. կազմեց 785 մարդ: Ցավոք, հետագա մի քանի տարիները դաժան և մահաբեր եղան Հայաստանի համար: Համաշխարհային պատերազմի, թուրքական ջարդերի, քաղաքացիական կռիվների, սովի ու համաճարակների հետևանքով ընդամենը 6 տարվա ընթացքում բնակչության թիվը 1914 թ. համեմատությամբ նվազեց ավելի քան 23%-ով, ավերվեցին և դատարկվեցին հարյուրավոր



Նկ. 2. ՀՀ գյուղական բնակավայրերի թիվը և միջին մարդաքանակն ըստ տարածաշրջանների 1897 թ-ի դրությամբ

գյուղեր (1919 թ. դատարկ էին 241, ավերակ վիճակում՝ 63 գյուղ) [28]:

Բացի բուն հայ բնակչությունից նշված ժամանակաշրջանում Արևելյան Հայաստան ներգաղթեցին նաև քրիստոնեադավան այլազգիներ և ռուս աղանդավորների տարբեր խմբեր: Քրիստոնեական՝ նեստորաքաղկեդոնական դավանանքին պատկանող ասորիների մի խումբ, օգտվելով թուրք-մենչայի պայմանագրից, 1830 թ. տեղափոխվեց Հայաստան՝ բնակություն հաստատելով Արտաշատի տարածաշրջանի Վ. Դվին (Ասորի), Դիմիտրով (Ղուլլասար) և Արզնի գյուղերում: Թուրքական հալածանքներից պաշտպանվելու համար 1828 թ.-ից մինչև 1915 թ. ներառյալ Հայաստան ներգաղթեցին եզդիներ (քրիստոնեական և այլ աղանդավորական դավանանքի պատկանող իրանալեզու ժողովուրդ), որոնք բնակություն հաստատեցին Արագածի լանջերում և ցածրադիր սարավանդերում (Ապարանի, Արագածի, Թալինի, Էջմիածնի և Արմավիրի տարածաշրջաններում), որտեղ կային նպաստավոր պայմաններ եզդիների ավանդական զբաղմունքի՝ ոչխարաբուծության զարգացման համար:

Սկսած 19-րդ դարի 40-ական թվականներից ռուսական իշխանություններն աղանդավորականների մի ստվար բազմություն վերաբնակեցրին Անդրկովկասում: Դրանք բնակություն հաստատեցին հարավային Վրաստանում (Ջավախք և Օալկա) և հյուսիսային Հայաստանի ազատ տարածքներում՝ ներառյալ նաև Կարսի շրջանը: Լոռի-Փամբակի շրջաններում հաստատվեցին մոլոկանները և այստեղ հիմնեցին կանոնավոր գծային հատակագծերով հարմարավետ ու ընդարձակ գյուղեր (Նիկոլաևկա, Պոկրովկա, Գյառգյառ, Վորոնցովկա, Նովո Սիխայլովկա, Պրիվոլնոյե, Վոսկրեսենովկա, Նիկիտինո): Սևանի ավազանում և հյուսիսային Ջանգեզուրում տեղաբաշխվեցին հիմնականում իկոնոբորները և մոլոկանների մի մասը (Նադեժդինո, Ելենովկա, Սիխայելովկա, Սեմյոնովկա, Կոնստանտինովկա, Բազարչայ, Բարիսովկա):

Օգտվելով իշխանությունների կողմից տրված արտոնություններից ռուսական գյուղերն արագ զարգանում էին (եթե ռուսական կայսրության նոր տարածքներ գաղթող գյուղական բնակչությունը 6 տարով ազատվում էր հարկեր և տուրքեր վճարելուց, ապա ռուս աղանդավորներն ազատվում էին 10 տարվա հարկեր և տուրքեր վճարելուց) [35]: Միաժամանակ, ռուսական գյուղական բնակավայրերի հիմնումը և զարգացումը բարերար ազդեցություն ունեցավ բնակեցված այդ շրջաններում ցեղային տավարաբուծության, ձիաբուծության և թռչնաբուծության զարգացման համար:

2.3 Տարածքի բնակեցման սոցիալ-տնտեսական նախադրյալներն ու գործոնները

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո բացի պատմական նախադրյալներից գյուղական տարածքների ու բնակավայրերի ձևավորման և զարգացման գործում իրենց դերն են ունեցել սոցիալ-տնտեսական գործոնները: Պատմական այդ ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանից գաղթած քաղաքաբնակ արհեստագործական խավն իր հետ բերեց և սկսեց զարգացնել արհեստագործության ավանդական ճյուղերը բնակչությունից լքված ու անայացած գյուղերում, ավաններում և քաղաքներում: Սկսում են ձևավորվել և զարգանալ քաղաքային կյանքին բնորոշ բոլոր բնագավառները: Առանձին վայրերում կառուցվում էին փաստորեն նոր քաղաքներ (Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ) [93]: Քաղաքաշինությանը նպաստում էր նաև Ռուսական կայսրության վարած ռազմական քաղաքականությունը՝ անրացված բերդեր և զորանոցներ կառուցելով գրաված տարածքների սահմանամերձ մասերում (Ախալցխայում, Ախալքալախում, Գյումրիում և այլուր): Հատկանշական է, որ նույնիսկ նոր կառուցվող քաղաքների ռազմավարչական բնույթի հատակագծերի սահմաններում տները կառուցվում էին այն ոճով, ինչն իրենց հետ բերել էին տվյալ վայրը գաղթած և տարաբնակեցված հայերը:

Նիկոլայ 1-ին կայսեր կողմից նոր կազմավորված «Հայկական մարզում» խրախուսվում էր ավերված գյուղերի վերականգնումը և նորերի կառուցումը: Արարատյան դաշտում և հարակից շրջաններում վերակառուցվում է պարսկական ժամանակաշրջանից մնացած ոռոգիչ ցանցը, պարբերաբար յուրացվում են կիսաանապատային հողատարածքները: Ընդարձակվում են խաղողի և մրգատու այգիների, տեխնիկական (բամբակ) և յուղատու մշակաբույսերի ցանքատարածքները (կտավատ, կանեփ, քունջութ), ինչպես նաև դրանց սպասարկող ճյուղերի ցանցը: Ջարգացում է ապրում նաև անասնապահությունը: Տավարաբուծությունը, գոմեշների և ուղտերի բուծումը՝ Արարատյան դաշտում, ոչխարաբուծությունը՝ բարձր սարահարթային և լեռնային շրջաններում, շերամապահությունը՝ Արցախ-Ձանգեզուրում, ձկնորսությունը՝ Սևանի ավազանում, որսորդությունը և այլն:

Գյուղատնտեսության ճյուղերին զուգընթաց զարգանում էր նաև առևտուրը: Առևտրականներն օգտվում էին պետական հովանավորությունից: Առևտրի արտահանության հիմնական ապրանքները գյուղատնտեսա-

կան մթերքներն էին (բամբակ, չոր մրգեր, կաշի, մետաքս):

Քաղաքային բնակավայրերում և խոշոր գյուղերում իր բազմազան կառուցվածքով զարգանում էր արհեստագործությունը: Արհեստագործական արտադրանքը սկզբնական շրջանում տարածվում էր քաղաքների և ավանների ազդեցության ոլորտում գտնվող թե հայ, թե օսմանցի ու ադրբեջանցի կամ պարսիկ բնակչությամբ զբաղեցված գյուղերում, ուր պարբերաբար աճում էր հայ բնակչության բաժինը:

Առևտրի զարգացումն իր հերթին նոր խթան էր դառնում գյուղատնտեսական բնակավայրերի զարգացման համար: Ստեղծվում են կոնյակային սորտերի բարձրորակ խաղողի նոր այգիներ՝ Շուստովի կոնյակի կոմբինատի հարածուն պահանջները բավարարելու համար: Ձուգահեռաբար զարգանում էր նաև բարձրորակ գինիների արտադրությունը:

Հայկական մարզում արագ կերպով սկսեց զարգանալ նաև հանքարդյունաբերությունը՝ Ալավերդու, Շամլուղի, Կապանի պղնձահանքերի և Կողբի բարձրորակ աղհանքի շահագործմամբ: Դրանք հիմք հանդիսացան մասնագիտացված հույն հանքագործների նոր օջախների ստեղծման համար: Դրանց շուրջն առաջանում էին նրանց սպասարկման համար նոր բնակավայրեր, բանվորական ավաններ: Գյուղական բնակչությունը բավարարում էր այդ արդյունաբերական կետերին ոչ միայն բանվորական ուժով, այլև ստանում համապատասխան «պատվերներ» սպասարկման ոլորտի աճող պահանջները բավարարելու համար:

Արևելյան Հայաստանում ձևավորված վարչառազմական համակարգը պահանջում էր ճանապարհների, զորանոցների, ամրությունների կառուցում, որի համար պահանջվող բանվորական ուժը հիմնականում ներգաղթած հայ բնակչությունն էր և որոշ չափով էլ քրիստոնեադավան կամ աղանդավորական խմբակցությունները (հույներ, դուխոբորներ, մոլոկաններ, ասորիներ և այլն):


ՀՀ ժամանակակից տարածքում գյուղական տարածքների ու բնակավայրերի ձևավորման ու զարգացման համար առանձնահատուկ դեր է ունեցել ճանապարհաշինությունը: Երևան-Գյումրի-Ախալքալակ, Երևան-Ապարան-Ղարաքիլիսա-Ձալալօղլի-Բոլնիս – Խաչեն-Թիֆլիս, Երևան-Ելենովկա -Դիլիջան-Իջևան-Թիֆլիս, Երևան-Բայազետ-Մարտունի-Քեշիշքենդ, Գյումրի-Ղարաքիլիսա-Դիլիջան-Թիֆլիս, Կարս-Արդահան-Ախալքալակ, Կարս-Սարիղամիշ-Էրզրում, Երևան-Քեշիշքենդ-Գորիս-Շուշի ռազմավարական բնույթի ճանապարհների շինարարությունը, ինչպես նաև բազմաթիվ այլ բանուկ ճանապարհների վերակառուցումն անգնահատելի դեր խաղացին

գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման համար: Մի կողմից ճանապարհաշինությունը պահանջում էր մեծ չափերի բանվորական ուժ, որն ապահովվում էր հիմնականում գյուղական բնակչության հաշվին, մյուս կողմից կառուցվող ճանապարհների խաչմերուկային հարմար վայրերում ստեղծվում էին իջևանատներ և բանվորական ավաններ: Դրանք դառնում էին ոչ միայն ապրանքի պահեստավորման, փոստի տեղափոխման, ապրանքափոխանակման կամ վաճառքի հարմարավետ վայրեր, այլև շրջակա գյուղերը միմյանց հետ կապող, հաղորդակցման և սպասարկման գլխավոր օջախներ՝ որոշակիորեն ազդելով շրջակա գյուղերի զարգացման վրա: Հետագայում այդ իջևանատների զգալի մասը վերածվեցին կայուն բնակավայրերի՝ իրենց բնորոշ տնտեսությամբ, իսկ դրանց շրջակայքում հիմնվեցին գյուղական նոր բնակավայրեր: Այդ նորաստեղծ և արագ զարգացող բնակավայրերից շատերը, շնորհիվ իրենց նպաստավոր տրանսպորտաաշխարհագրական դիրքի, խորհրդային իշխանության տարիներին դարձան շրջկենտրոններ (Վայք, Եղեգնաձոր, Աշոցք, Մարալիկ և այլն):

Գյուղական բնակավայրերի ցանցի ձևավորման և զարգացման համար մեծ դեր ունեցան նաև երկաթուղագծերի շինարարությունը: 1899 թ. կառուցվեց Թիֆլիս-Գյումրի-Կարս երկաթգիծը, 1908 թ.՝ Գյումրի-Երևան, 1898 թ.՝ Ուլուխանլի-Ջուլֆա, 1913 թ.՝ Կարս-Սարիղամիշ գիծը: Երկաթգծի կառուցման բանավանները և կիսակայարաններն այնուհետև վերածվեցին կայարանամերձ ավանների, իսկ բուն երկաթգծերի ուղեկցությամբ հիմնվեցին բազմաթիվ նոր գյուղական բնակավայրեր:

Այսպիսով, ՀՀ-ի ժամանակակից գյուղական տարածքներն ու տարաբնակեցումը, որն ունի պատմական խորը արմատներ, պայմանավորված բնապատմական և սոցիալ-տնտեսական գործոններով, հիմնական գծերով սկսել է ձևավորվել 19-րդ դարի 30-40-ական թվականներից: Դրան հաջորդած հետագա տասնամյակների ընթացքում շարունակվող ներգաղթի, բնակչության թվի ավելացման, գյուղական նոր բնակավայրերի ստեղծման և նախկինում ավերված ու բնազրկված գյուղերի վերականգնման շնորհիվ հիմնական գծերով ձևավորվում է ՀՀ ժամանակակից գյուղական տարածքների ու տարաբնակեցման հենքը (նկ.3):

Խորհրդային իշխանության տարիներին ՀՀ-ի գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացումը տեղի է ունեցել պլանային տնտեսության պայմաններում, երբ արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ իշխում էր պետական սեփականությունը: Սեփականության համայնավարական-պետական ձևը նպաստում էր խոշոր գյուղային տարաբնակեցման



**Նկ. 3. ՀՀ գյուղական բնակչության խտությունը և գյուղերի թիվը
1926 թ-ի դրությամբ**

առաջացմանը, իսկ երկրում ձևավորված միասնական տարածքաարտադրական համալիրը՝ միասնական-միակենտրոն տարաբնակեցման համակարգի ձևավորմանը՝ մայրաքաղաք կենտրոնով: Խորհրդային տարիներին ԶԶ-ի գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը, վերջինիս տարածքային կազմակերպումը և մասնագիտացումը մեծապես պայմանավորել են հանրապետության գյուղական տարաբնակեցման բնույթը: Արարատյան դաշտում և ոռոգելի հողագործության մնացած շրջաններում (բուսաբուծության աշխատար և ինտենսիվ ճյուղերի զարգացման շնորհիվ) առաջացել են հիմնականում մեծ և խոշոր, իսկ երբեմն նաև գերխոշոր գյուղեր: Դրանց որոշ մասն ագրոարդյունաբերական ինտեգրացման շնորհիվ դարձել էին գյուղատնտեսական արտադրանքի մթերման և վերամշակման կենտրոններ, իսկ հարյուրավոր գյուղերում ստեղծվել էին մայրաքաղաք Երևանի և արդյունաբերական այլ կենտրոնների արտադրական ձեռնարկությունների մասնաճյուղեր: Դրա հետ միաժամանակ, արոտային անասնապահության և երկրագործության համար ոչ բարենպաստ պայմաններ ունեցող շրջաններում տիրապետում էին փոքր և միջին գյուղերը:

Վերջին ավելի քան քսանհինգ տարիներին տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները (հողի և գյուղատնտեսական արտադրության այլ միջոցների սեփականաշնորհումը), միանգամայն նոր տնտեսական պայմաններ են ստեղծել ԶԶ գյուղական տարածքների ու բնակավայրերի համար: Քանի որ տարաբնակեցումն արտադրության համեմատ ավելի իներցիոն և պահպանողական է, ոչ միանգամից և ոչ բոլոր դեպքերում է համարժեքորեն հետևում արտադրության մեջ և արտադրական հարաբերություններում տեղի ունեցած փոփոխություններին: Խոշոր գյուղերը, որոնք սոցիալիստական տնտեսավարման պայմաններում արտադրության զարգացման ու բնակչության սպասարկման տեսակետից համարվում էին միանշանակորեն առավել նպատակահարմար բնակավայրեր, հողի սեփականաշնորհման և ազատ շուկայական տնտեսության զարգացման պայմաններում հաճախ դառնում են ազատ աշխատուժի զգալի ռեզերվներ ունեցող բնակավայրեր: Հողի սակավության և բնակչության վայրից մեծ հեռավորության պատճառով շատ հաճախ լիարժեք և արդյունավետ կերպով չեն օգտագործվում աշխատանքային ռեսուրսները: Հողի սեփականաշնորհումը և անշարժ գույքի շուկայի ձևավորումն ավելի են ապակենտրոնացնում տարաբնակեցումը, վերանում է խոշոր գյուղերի ստեղծման տնտեսական անհրաժեշտությունը [44]:

Բացի զուտ տնտեսական գործոններից ԶԶ-ի գյուղական տարածքների ու

բնակավայրերի ձևավորման համար որոշակի դեր են ունեցել նաև սոցիալ-ժողովրդագրական գործոնները (բնակչության ազգային կազմը, ազգային, մշակութային և կենցաղային առանձնահատկությունները, բնակչության շարժունակության մակարդակը, արժեքային կողմնորոշումները, ժողովրդագրական վարքը, մարդկային հարաբերությունների և կապերի բնույթը): Մասնագետները գտնում են, որ հայերի սոցիալական կազմակերպման հիմնական ձևը եղել է համայնքը: Դա պայմանավորված էր դժվարին բնաաշխարհագրական և աշխարհաքաղաքական պայմաններում համատեղ աշխատելու և պաշտպանվելու անհրաժեշտությամբ, քանի որ կենսամիջոցների արտադրությունը նման պայմաններում անհամեմատ շատ աշխատանք էր պահանջում: Հայ բնակչության էթնոժողովրդագրական առանձնահատկությունները՝ ծնելիության և բնական աճի ավանդաբար բարձր մակարդակը, բազմանդամ ընտանիքների գերակշռությունը, ազգակցական կապերի մեծ դերը և այլ գործոններ հայկական գյուղը դարձրել են հասարակության տարածքային կազմակերպման սկզբնական և հիմնական բջիջը:

Հայաստանում համայնքային-գյուղական կյանքը մի նոր բովանդակություն է ստացել խորհրդային տարիներին: Ընդհանուր նպատակների ու շահերի և համատեղ աշխատանքի պայմաններում, համայնքը որպես միասնական սոցիալական օրգանիզմ ստանում էր իրական տնտեսական բովանդակություն: Վերջինս նպաստում էր գյուղի տնտեսական բազայի ամրապնդմանը, բնակչության թվի ավելացմանը, գյուղերի խոշորացմանը և զարգացմանը:

2.4 Տարածքի բնակեցման ենթակառուցվածքային և աշխարհաքաղաքական գործոնները

Գյուղական տարածքների, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման գործում իրենց կարևոր դերն ունեն նաև արտադրական և սոցիալական ենթակառուցվածքային տարրերը, աշխարհագրական դիրքը, տարածքի վարչատարածքային բաժանումը, արտաքին քաղաքական գործոնները և սահմանամերձ գոտին:

Ենթակառուցվածքային տարրերից տրանսպորտը, էներգագազ և ջրամատակարարման համակարգերը, բնակչության կենցաղային, առողջապահական, առևտրային և մշակութային սպասարկումը, որոնց գործունեությունը տարվա ընթացքում մշտական է, գյուղական բնակավայրերի ձևավոր-

ման և զարգացման համար ունեն էական նշանակություն և կայունացնում ու ամրապնդում են բնակավայրերը: Սպասարկման հիմնարկների կենտրոնացումը, ինչպես նաև եզակի և մասնագիտացված սպասարկման հիմնարկների առկայությունը, բնակավայրերի զարգացման կարևոր խթանիչներ են:

Գյուղական տարածքների և բնակավայրերի ձևավորման և զարգացման համար առանձնահատուկ դեր ունի ոռոգման համակարգը, որի միջոցով իրականացվում է ՀՀ մելիորացիայի գլխավոր տեսակը: ՀՀ առավել խոշոր ոռոգիչ համակարգերը ստեղծվել են խորհրդային տարիներին կամ էլ արմատապես վերակառուցվել են: Արտաշատի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Թալինի, Արզնի-Շամիրամի, Ստորին Հրազդանի, Շիրակի, Կոտայքի, Որոտանի և մի շարք այլ ինքնահոս ջրանցքներ, որոնցով ոռոգվում են ՀՀ առավել ընդարձակ հարթավայրային տարածքներն, էական դեր են ունեցել նշված տարածքներում գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման համար:

ՀՀ նման լեռնային երկրներում գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման համար առանձնահատուկ դեր ունի *տրանսպորտային ցանցը*, որի առանձնահատկությունները զգալի չափով պայմանավորում են տարաբնակեցման բնույթը և զարգացումը: Ժամանակագրական առումով տրանսպորտը որպես սպասարկող ճյուղ հաջորդել է բնակավայրերի և արտադրության այլ ճյուղերի ստեղծմանը: Սակայն, եզակի չեն նաև այնպիսի դեպքերը, երբ այս կամ այն տարածքի տնտեսական զարգացման և բնակավայրերի ձևավորման ու զարգացման հիմքերը դրվել են տրանսպորտի շնորհիվ՝ ժամանակագրական առումով այն նախորդել է բնակավայրերի առաջացմանը և տարածքի յուրացմանը: Վերջինիս դերի մասին նախախորհրդային ժամանակաշրջանում տարաբնակեցման և մասնավորապես գյուղական բնակավայրերի ձևավորման գործում մենք արդեն նշել ենք: Խորհրդային տարիներին ՀՀ-ում ստեղծվեց տրանսպորտային միասնական համակարգ: Այն ձևավորվեց և զարգացավ հանրապետության արտադրողական ուժերի քանակական ու որակական տեղաշարժի պայմաններում, որի արդյունքում ամբողջովին վերափոխվեց նաև ՀՀ տրանսպորտային ցանցը: Ի հայտ եկան նոր ձևեր, փոխվեցին հին ձևերի դերն ու նշանակությունը, բարձրացավ ամբողջ տրանսպորտի տեխնիկական մակարդակը, ընդլայնվեց ու վերակառուցվեց տրանսպորտային ցանցը:

1920-ական թվականներին կառուցվեցին Գյումրի-Արթիկ-Պենզաշեն և Անի-Անիպենզա երկաթուղագծերը: Ավելի ուշ ավարտվեց Կապան-Մինջևան գիծը, որը հետագայում շարունակվեց դեպի Մեղրի: 1950-ականներին ծա-

վալվեց Երևան-Յրազդան-Սևան գծի շինարարությունը, իսկ 1976 թ. շահագործման հանձնվեց Սևան-Շորժա-Ձող հատվածը: ԶՅ-ի տնտեսական կյանքում կարևոր դեր ունեցավ Յրազդան-Դիլիջան-Աղստաֆա գծի շինարարությունը, որն ավարտվեց 1986 թ.: Այս ամենի շնորհիվ երկաթուղային ցանցի խտությունը կազմեց 2,7 կմ/100 քկմ և հանրապետության տարածքի մեծ մասի ֆիզիկական հեռավորությունն ուղիղ գծով երկաթուղուց չէր անցնում 25 կմ-ից: Բնակավայրերի ճնշող մեծամասնությունը (այդ թվում գյուղական), որոնցում ապրում էր հանրապետության բնակչության 90 %-ից ավելին, գտնվում էին անմիջապես երկաթուղու վրա կամ մինչև 15 կմ տնտեսական հեռավորության գոտում: Մի շարք տարածաշրջանների (Սիսիան, Գորիս, Վայք, Մարտունի, Եղեգնաձոր և Տաշիր) թվով շուրջ 150 գյուղ մնացին երկաթուղուց ավելի քան 50, իսկ երկու տասնյակը՝ ավելի քան 100 կմ հեռավորության վրա [102]:

Մեր հանրապետության գյուղական տարածքների և բնակավայրերի զարգացման համար խորհրդային տարիներին բացառիկ նշանակություն է ունեցել ավտոմոբիլային տրանսպորտը, քանի որ ռելիեֆային բարդ պայմաններում ավտոճանապարհների անցկացումն ավելի հեշտ է և բացի այդ ԶՅ-ի փոքր տարածքում բեռների փոխադրման և միջբնակավայրային կապերում միջին հեռավորություններն ավելի կարճ են, քան երկաթուղային տրանսպորտի համար: Մինչև 1990-ական թվականներն արմատապես վերափոխվեց ԶՅ-ի ավտոճանապարհային ցանցը, կառուցվեցին նորերը, ստեղծվեցին ժամանակակից ավտոխճուղիներ: Եթե նախկինում բազմաթիվ գյուղական բնակավայրեր ուղղակի ելք չունեին դեպի գլխավոր ճանապարհները և նրանց հետ կապվում էին Աղրբեջանի տարածքով (Սյունիքում և Տավուշում), ապա 1980-ական թվականներից հանրապետության ավտոմոբիլային ճանապարհները միացված էին միասնական ցանցի մեջ, որն ընդգրկում էր նույնիսկ ամենահեռավոր գյուղերը: Գործնականում գրեթե բոլոր գյուղական բնակավայրերն ավտոբուսային մշտական երթուղիներով կապվեցին շրջանային կենտրոնների և տարածաշրջանային նշանակության քաղաքների հետ:

Հանրապետության տարաբնակեցման համակարգի, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի զարգացման համար իր դերն է ունեցել նաև էներգահամակարգն իր բաղադրիչներով: Խորհրդային իշխանության արդեն վերջին տարիներին ԶՅ-ի հարյուրավոր գյուղական բնակավայրեր ապահովված էին գազամուղներով և ստանում էին բնական գազ: Դեռևս 1960 թ., առաջինը ԽՍՀՄ-ում, էլեկտրականություն ստացան ԶՅ-ի բոլոր

գյուղերը, իսկ 1973 թ. ավարտվեց քաղաքային ու գյուղական բնակավայրերի էլեկտրիֆիկացումը [102]:

Բացի նշվածներից, ժամանակակից պայմաններում ՀՀ հատկապես նախալեռնային և լեռնային շրջաններում, գյուղական առանձին բնակավայրերի և տարաբնակեցման զարգացման վրա իրենց ազդեցությունը կարող են թողնել նաև գործունեության ոչ ավանդական այնպիսի ուղղություններ ինչպիսիք են զբոսաշրջության տարբեր ձևերը (ագրո, գյուղական և էկոլոգիական), փոքր ջրաէլեկտրակայանների կառուցումը, տարբեր տեսակի ռեսուրսների շահագործումը և այլն:

Գյուղական տարածքների ու տարաբնակեցման գործընթացների վրա էական ազդեցություն են թողնում նաև *սոցիալական ենթակառուցվածքի* ճյուղեր և տարրեր: Դրանք անմիջապես կապված լինելով բնակչության թվի, տեղաբաշխման և կազմի հետ, որոշակի դեր են խաղում գյուղական բնակավայրերի զարգացման և տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացներում: ՀՀ-ում սոցիալական ենթակառուցվածքի զարգացումը տեղի է ունեցել տնտեսական և ժողովրդագրական զարգացմանը համընթաց: Հետպատերազմյան տարիներին ՀՀ-ի տնտեսական արագ զարգացումը, բնակչության եկամուտների և պահանջումների աճը պայմանավորեցին սոցիալական ենթակառուցվածքի զարգացումը: Կրթության մակարդակով հանրապետությունը դուրս եկավ միջազգային չափանիշի առաջավոր բնագծեր: Գյուղական բնակավայրերում ստեղծվեցին կենցաղային սպասարկման, առևտրի, մշակութալուսավորչական, առողջապահական, սպորտային ու զբոսաշրջային օբյեկտներ: Արմատապես բարելավվեց գյուղական բնակչության բուժապասարկման գործը: Բացառությամբ փոքր գյուղերի, հանրապետության մնացած բոլոր գյուղերում հանրակրթական դպրոցները դարձան միջնակարգ: Գրեթե բոլոր գյուղերն ապահովված էին մասսայական (ոչ մասնագիտական) գրադարաններով, ակումբային հիմնարկներով ու կինոթատրոններով: Էական տեղաշարժեր կատարվեցին գյուղական բնակչության կենցաղային սպասարկման ոլորտում: Հանրապետության գյուղերի մեծ մասում ստեղծվել և գործում էին կենցաղի մասնագիտացված տներ, կենցաղսպասարկման այլ օբյեկտներ [102]:

Պատմական երկարատև ժամանակաշրջանում *աշխարհաքաղաքական գործունեերը* նպաստել կան էլ խոչընդոտել են Հայաստան աշխարհում բնակավայրերի զարգացմանը: Վարչատարածքային բաժանման մեջ տեղի ունեցած փոփոխությունները կան աշխարհաքաղաքական իրավիճակի նոր տեղաշարժերը կարող են երկարաժամկետ հատվածում տարաբնակեցման

զարգացման գործընթացներում կառուցվածքային և տարածական խորը տեղաշարժեր առաջացնել և զարգացման որակական նոր փուլի հասցնել [44]: Այս իմաստով հարկ է նշել խորհրդային և հետխորհրդային տարիներին ԶԶ-ի վարչատարածքային փոփոխությունների ազդեցությունը գյուղական բնակավայրերի և առանձին տարածքների տնտեսական յուրացման վրա: Այսպես, օրինակ, 1983 թ. նոր կազմավորված Բաղրամյանի վարչական շրջանն ուներ ընդամենը 6 գյուղ, իսկ հետագայում դրանց թիվն ավելացավ 9-ով: Անշուշտ, այդ նոր բնակավայրերի ստեղծման և հետագա զարգացման գործում իր դերն է ունեցել այդ տարածքին վարչական միավորի կարգավիճակ տալը: Իսկ ահա 1995 թ. իրականացված վարչատարածքային ռեֆորմը, տասը մարզերի ստեղծումը, հանրապետության հատկապես լեռնային և կտրտված մակերևույթ ունեցող տարածաշրջանների (Սյունիքում, Վայոց ձորում, Տավուշում, Լոռիում և Շիրակում) գյուղական բնակավայրերի համար առաջացրել է սոցիալ-տնտեսական, կառավարման և սպասարկման որոշակի խնդիրներ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում գյուղական բնակավայրերի հետագա զարգացման և տարաբնակեցման համակարգի վրա: Աշոցք, Ամասիա, Ծաղկահովիտ գյուղերը, որոնք նախկինում ունեին շրջկենտրոնի կարգավիճակ, իրենց վարչական շրջանների մնացած գյուղերի համար կատարում էին կազմակերպիչ կորիզի և տեղական կենտրոնի դեր: Իսկ այժմ այդ տարածաշրջանների գյուղական համայնքների կառավարման մարմինները և բնակչությունը կազմակերպական, վարչական, իրավական, սոցիալական և այլ կարգի խնդիրներ լուծելու համար պետք է հասնեն մարզկենտրոն:

ԶԶ ՏԱԴ-ը, մասնավորապես՝ *սահմանամերձ գոտու տարածքները* նախկինում որպես տարաբնակեցման գործոն չունեին էական նշանակություն: Ներկայումս մեր տարածաշրջանում առկա քաղաքաաշխարհագրական իրավիճակի պատճառով հարևան Ադրբեջանի հետ սահմանային գոտու բնակավայրերի զարգացման համար առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել դրանց քաղաքաաշխարհագրական դիրքը՝ բուն սահմանային գոտում գտնվելը:

Այժմ ԶԶ-ի արտաքին սահմանների ձգվածությունը մեծացել է երեք անգամ և անհրաժեշտ է սահմանամերձ գոտում ստեղծել երկրի անվտանգության, տնտեսական գործունեության ենթակառուցվածքներ, որոնք իրենց դերը կունենան սահմանամերձ գյուղերի պահպանման և սոցիալ-տնտեսական զարգացման համար:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՈՐՊԵՍ ԼԵՈՆԱՅԻՆ ԵՐԿՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈՒ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

3.1 Գյուղական տարածքների ու տարաբնակեցման աշխարհագրական առանձնահատկությունները և զարգացման օրինաչափությունները լեռնային երկրներում

Լեռնային երկրներում բնակչության ձևավորման և տարաբնակեցման հիմք են հանդիսանում ջրաբաժան լեռներով սահմանափակված միջլեռնային գոգավորությունը, գոգհովիտը, գետային ավազանը՝ այն ֆիզիկաաշխարհագրական շրջանը, որի ընդհանուր համալիրում ֆիզիկաաշխարհագրական գործընթացները գտնվում են փոխազդեցության և փոխադարձ կապվածության մեջ (մակերեսային և ստորերկրյա հոսք, գետի ռեժիմ, ծախս, էրոզիա, նյութի տեղատարում, նստեցում և այլն): Տվյալ գետավազանում կան գոգհովտում կատարվող գործընթացները որոշակիորեն տարբերվում է հարևան ֆիզիկաաշխարհագրական շրջանի համալիրից: Գետավազանների վերին հոսանքներում էթնիկական այս կամ այն խմբակցությունը, սահմանափակվելով դժվարանցանելի ջրբաժաններով և լեռնանցքներով, ձեռք է բերում իրեն հատուկ ապրելակերպի, լեզվաբարբառային և այլ առանձնահատկություններ: Տիպիկ օրինակ է հարևան Վրաստանը, որտեղ առանձին գետավազաններում և ֆիզիկաաշխարհագրական շրջաններում ձևավորվել և կազմավորվել են ազգությամբ վրացի, բայց իրարից զգալիորեն տարբերվող ազգային խմբակցություններ՝ մեգրելներ, սվաններ, իմերեթներ, ռաճացիներ, խևսուրեթներ, մթիուլներ և այլն: Գետահովիտների ստորին հոսանքներում, երբ գետերը բացվում են դեպի Ռիոնի և Քուռի հարթությունները, այդ սահմանափակվածությունը վերանում կամ թուլանում է՝ տեղի տալով վրաց ազգի արդեն միատիպ խմբակցության լայն տարաբնակեցման (Քարթլի, Կախեթ, Մեսխեթիա): Տվյալ երևույթը բնորոշ կլիմեր նաև Հայկական լեռնաշխարհի բնակչության տարաբնակեցման համար, եթե չլինեին օտար նվաճողների դարեր տևող ասպատակությունները, երկարամյա տիրապետումը և ավերածությունները, որոնք էականորեն ազդել և փոփոխել են բնակչության տարաբնակեցման վերը հիշատակած

օրինաչափությունները, ստեղծելով նոր՝ բնապատմական (սոցիալական) տարաբնակեցման տիպ [72]:

Լեռնային շրջաններում Լեռնաշղթաները խոչընդոտում են տարածքի համախմբմանը և տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների զարգացմանը: Լեռնային տարածքներին ավելի բնորոշ են գետահովտային և ավազանային տիպի տարաբնակեցման համակարգերը, երբ մեկ գետի ջրահավաք ավազանում ստեղծված է բնակավայրերի որոշակի ամբողջություն, որն ունի սպասարկման միասնական համակարգ, տրանսպորտային և այլ ինժեներական ենթակառուցվածքների ընդհանուր ցանց, միջբնակավայրային սոցիալ-տնտեսական կապեր: Տրանսպորտային ուղիները, սպասարկման հիմնարկներն ու կապերը կենտրոնանում են գետահովիտներում և ստեղծում տարաբնակեցման հենքի գծային բաղադրիչները, իսկ հանգուցային բաղադրիչները ստորին ավազանում գտնվող և խաչմերուկային աշխարհագրական դիրք ունեցող բնակավայրերն են [44] :

Ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման զարգացման օրինաչափությունները վաղուց հետաքրքրել են հետազոտողներին [192]: Սակայն այդ հետազոտություններից շատերն ունեն արմատական մի բացթողում՝ դրանցում բացարձակ բարձրությունը դիտվում է որպես ինքնուրույն գործոն և գրեթե անտեսվում են լանդշաֆտային աշխարհագրական օրինաչափությունները, առաջին հերթին՝ լայնակի զոնայականությունը: Լեռնային երկրներում բնակչության տեղաբաշխման, տարաբնակեցման զարգացման և ուրբանացման մակարդակը վերլուծելիս չի կարելի ժխտել պատմական և սոցիալ-տնտեսական գործոնների նշանակությունը, սակայն չպետք է սահմանափակվել միայն դրանցով, հաշվի չառնելով ցամաքի լանդշաֆտային դիֆերենցացման օրինաչափությունները [152]:

Գյուղական բնակավայրերի ձևավորման և հետագա զարգացման վրա վճռական ազդեցություն ունի արտադրողական ուժերի զարգացման մակարդակը, սակայն քանի որ դրանց տնտեսական գործունեությունը մշտական սերտ կապի մեջ է բնական միջավայրի հետ, ապա քաղաքային բնակավայրերի համեմատությամբ գյուղական բնակավայրերի վրա բնական միջավայրի ազդեցությունն ավելի մեծ է:

Լեռնային երկրներում, ինչպիսին նաև ՀՀ-ն է, մակերևութի խիստ կտրատված և բարձրացած տեղամասերը միահյուսվում են միջլեռնային գոգավորությունների հետ, առաջացնելով տարաբնակեցման ձևավորման ու զարգացման համար ինքնատիպ պայմաններ: Այդպիսի երկրներում կան

տարածքներում գյուղական տարաբնակեցման համար էական դեր ունի լեռնային և հարթավայրային տարածքների հարաբերակցությունը և մակերևույթի մասնատվածության աստիճանը:

Տարածքի բնակեցման և օգտագործման համար լեռնային երկրներում որոշակի խոչընդոտներ և դժվարություններ են առաջացնում մակերևույթի ուղղաձիգ և հորիզոնական մասնատվածության աստիճանը: Աշխարհագրական լայնությունից կախված, որոշակի բարձրությունից սկսած այդպիսի արգելքներ և դժվարություններ է ստեղծում կլիման: ՀՀ-ում այն սկսվում է մոտավորապես 2200-2300 մ բարձրությունից: Դրանից ավելի բարձր ընկած տարածքներն օգտագործվում են որպես սեզոնային արոտներ [93]:

Հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ լեռնային երկրների ռելիեֆի խիստ բազմազանության պայմաններում, լեռնային գոտու սահմաններում, առկա են ընդարձակ գոգավորություններ, սարահարթեր, լայնարձակ ձորեր ու կիրճեր, որտեղ հազարամյակներ առաջ ձևավորվել են գյուղական բնակավայրեր և այժմ էլ պահպանվում են:

Ցածրադիր գոտու համեմատությամբ լեռնային շրջանները սովորաբար (որոշ բացառություններով) ունեն գյուղական բնակավայրերի համեմատաբար նոսր ցանց և փոքր մարդաշատություն: Հնուց ի վեր, լեռնային գոտում գյուղական բնակավայրերը ստեղծվել են մերձգետային դարավանդներում: Գետահովտային լայնացած մասերում առաջացել են նույնիսկ մեծ և խոշոր գյուղեր: Իսկ ահա ձորերի կողային լանջերին և լեռնալանջերին ձևավորվել են փոքր և մանր գյուղական բնակավայրեր:

Լեռնային երկրներում երբեմն բարձրացած տեղամասերը ընդմիջվում են ընդարձակ գոգավորություններով և սարավանդներով, որոնք ունեն առավել նպաստավոր պայմաններ գյուղական բնակավայրերի ձևավորման և հետագա զարգացման համար: Որպես կանոն այդպիսի շրջաններում առաջանում են տարաբնակեցման ընդարձակ արեալներ:

Գյուղական տարածքների համար պիտանիության առումով հարթավայրային և լեռնային շրջանների պայմանների համադրումը ցույց է տալիս, որ բացի այդպիսի տարածքների բացարձակ չափերի հարաբերակցությունից, կարևոր դեր ունեն նաև այն տարածքների հարաբերական մեծությունները, որոնք ժամանակակից ՊՏՀ-ն պայմաններում կարող են օգտագործվել տարաբնակեցման համար: Բացի այդ, լեռնային և հարթավայրային տարածքների ոչ բոլոր շրջաններն են տարաբնակեցման պիտանիության առումով համարժեք:

Լեռնային երկրներում տարաբնակեցման համար տարածքների պիտա-

Որոշումը գնահատելու համար պետք է հաշվի առնել հետևյալ ցուցանիշները. ա/ *ցածրադիր և լեռնային տարածքների հարաբերակցությունը*, բ/ *ցածրադիր գոտում հողերի առկայությունը* (ներառյալ անապատներ, կիսաանապատներ և ճահիճներ), որոնք արտադրողական ուժերի զարգացման տվյալ մակարդակի պայմաններում կարող են օգտագործվել բնակեցման համար, գ/ *Լեռնային գոտում բնակեցման համար անհրաժեշտ հողերի առկայությունը* [147]:

Լեռնային երկրներում գյուղական բնակավայրերի համար առանձնահատուկ նշանակություն ունեն մաս գյուղատնտեսական հողատարածքների կառուցվածքը, մշակելի և մյուս հողատարածքների մակերեսների հարաբերակցությունը, դրանց ուղղաձիգ բաշխվածությունը, մակերևույթի թեքությունները, հողակտորների չափերը և այլն: Մասնավորապես, կարևոր են հողակտորների չափերը, քանի որ միանգամայն տարբեր են խոշոր և փոքր հողակտորների ազդեցությունը գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման ընդհանուր պատկերի վրա:

Լեռնային տարբեր երկրների տարածքների պիտանիությունը տարաբնակեցման համար գնահատելիս կարևոր չափանիշ է համարվում մշակելի հողատարածքների մասնաբաժինն ընդհանուր տարածքի մեջ: Իրենց դերն ունեն մաս տարածքի հողակլիմայական պայմանները, որոնցով պայմանավորված են գյուղատնտեսության մասնագիտացման բնույթը և ինտենսիվացման հնարավորությունները:

Լեռնային երկրներում տարաբնակեցման կոնկրետ պատկերի վրա ազդող գործոններ են մաս ջրագրական ցանցը, ջրային ռեսուրսների առկայությունը, դիրքադրությունները, տեղանքի միկրոկլիման, միջբնակավայրային կապերը, մշակելի հողատարածքների հեռավորությունը բնակավայրից և այլն:

Լեռնային մակերևույթ ունեցող և ջրավազաններով միմյանցից բաժանված երկրներում, ինչպիսին մաս ԳԳ-ն է, տարածքի յուրացման պատմական անցյալը և տնտեսական զարգացման առանձնահատկությունները, բնակչության ազգային առանձնահատկությունները, ձևավորված ավանդույթներն ու սովորույթները ևս իրենց ազդեցությունն են թողել տարաբնակեցման պատկերի վրա: Ընդ որում, վերը նշված բնական և հասարակական գործոնների ազդեցության աստիճանը տարաբնակեցման վրա փոփոխվում է ժամանակի ու տարածության մեջ և այդ գործոնների կոնկրետ միահյուսման արդյունքում, պատմական որոշակի պայմաններում ձևավորվել է այս կամ այն տարածքի գյուղական բնակավայրերի ցանցը:

Ընդհանրացնելով նախորդ հեղինակների [3, 10, 44, 108, 127, 129, 141, 142, 144, 145, 147, 155, 158, 181, 192, 207 և այլն] և մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները կարելի է առանձնացնել լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

➤ գյուղական բնակչության և բնակավայրերի հիմնական մասի կենտրոնացվածությունը նախալեռնային հարթություններում, գետահովիտներում, լեռնային գոգավորությունների ցածրադիր հատվածներում և սարահարթերում,

➤ գյուղական բնակավայրերի և բնակչության խիստ անհավասարաչափ բաշխվածությունը տարածքում,

➤ գյուղական բնակավայրերի մարդաշատության մեծ տատանումները,

➤ ժողովրդագրական գործընթացների յուրահատկությունը,

➤ գյուղական բնակչության զբաղվածության և բնակավայրերի գործառույթային մեծ տարբերությունները,

➤ գյուղերի արտաքին տեսքի և մորֆոլոգիայի բազմազանությունը,

➤ գյուղական բնակավայրերի միջև կապի թուլությունը,

➤ ծովի մակարդակից ունեցած բարձրության համեմատ գյուղական բնակչության, գյուղերի միջին մարդաշատության և բնակավայրերի խտության ոչ միանշանակ փոփոխությունը,

➤ բարձրության միևնույն գոտու սահմաններում գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման, ինչպես նաև խտության զգալիորեն մեծ տարբերությունները,

➤ Համեմատաբար փոքր տարածքի սահմաններում գյուղական տարաբնակեցման ձևերի և համալիրային (տեղական) տիպերի բազմազանությունը:

Լեռնային շրջաններում գյուղական բնակավայրերի և բնակչության անհավասարաչափ բաշխվածության պատճառը բնակեցման պայմանների տարածքային տարբերություններն են: Այստեղ բնակեցման համար պիտանի տարածքները հերթափոխվում են բնակեցման համար ոչ պիտանի ընդարձակ տարածքներով: Քիչ թե շատ համատարած բնակեցում հանդիպում է միայն համեմատաբար ցածրադիր հարթավայրային և նախալեռնաբլրային տեղամասերում, գետահովիտներում, լեռնային գոգավորությունների ցածրադիր հատվածներում և սարահարթերում: Որպես օրինակաբանություն, ծովի մակերևույթից ունեցած բարձրության ավելացման համեմատ, աստիճանաբար նոսրանում է բնակավայրերի ցանցը, իսկ լեռնային առան-

ծին տարածքներում տեղանքի ուժեղ մասնատվածության և մեծ թեքությունների պատճառով՝ բացակայում են բնակավայրերը: Երբեմն լեռնային երկրներում տարածքի համատարած բնակեցում հանդիպում է նաև համեմատաբար բարձրադիր սարահարթերում և գոգավորություններում, որոնք ունեն թույլ մասնատվածություն: Տարաբնակեցման այդ գիծը շատ հստակ դրսևորվում է հատկապես ՀՀ-ում (Շիրակի և Լոռվա դաշտերում, Սևանի մերձլճային սարահարթային տարածքներում, Ապարանի, Գորիսի և Եռաբլրի հարթություններում կան համատարած բնակեցման արեալներ) [93]:

Լեռնային շրջաններում ինչպես ցածրադիր, այնպես էլ բարձրադիր գոտիներում գյուղերի անհավասարաչափ տեղաբաշխման հետևանքով երբեմն ձևավորվում են այսպես կոչված գյուղական ագլոմերացիաներ (խմբային տարաբնակեցման ձևեր): Դրանք հանդիպում են այնպիսի վայրերում, որտեղ բնակեցման համար պիտանի ընդհանուր տարածքը բաժանված է ավելի փոքր տարածքների: Խմբային այդպիսի բնակավայրեր շատ հաճախ հանդիպում են լեռնային հովիտներում և ոչ մեծ գոգավորություններում: Որպես կանոն, խմբային գյուղերը փոքր մարդաշատության պատճառով կազմակերպորեն միավորվում են վարչական մեկ միավորի (համայնքի) մեջ: Այս երևույթը ևս հստակ դրսևորում ունի ՀՀ-ում:

Լեռնային բոլոր երկրներում (որոշ բացառություններով) գյուղական բնակավայրերը համեմատաբար հավասարաչափ են բաշխված ցածրադիր միջլեռնային գոգավորություններում և հարթություններում, այնուհետև՝ լեռնային սարահարթերում ու բարձրավանդակներում, վերջում՝ բարձր լեռնային գոտում: Գրեթե նույն հաջորդականությամբ էլ նշված գոտիները միմյանց հաջորդում են տարածքի յուրացվածության և բնակեցվածության աստիճանով:

Լեռնային շրջաններում գյուղական բնակավայրերի միջև մարդաշատության մեծ տատանումների հիմնական պատճառը մարդկանց տնտեսական գործունեության ոլորտի չափերի տարբերությունն է: Սովորաբար մարդը ձգտում է ապրել այնտեղ, որտեղ աշխատում է, դրանով հանդերձ առավելագույն չափով կրճատելով ամենօրյա աշխատանքի գնալու ժամանակը: Ցանկացած գյուղական բնակավայրի մեծությունը կախված է աշխատանքի կիրառության ոլորտի մեծությունից: Գյուղատնտեսական արտադրության դեպքում աշխատանքի կիրառության ոլորտի մեծությունը պայմանավորված է երկու ցուցանիշով. տարածքի մակերեսով, որտեղ կանոնավոր կերպով տեղի է ունենում գյուղական բնակչության աշխատանքային գործունեությունը և միավոր հողակտորի վրա ծախսված աշխատանքով:

Չնայած մերձքաղաքային գյուղերի բնակչության որոշ մասը կարող է ունենալ ոչ գյուղատնտեսական աշխատանք և գյուղի աշխատանքային գործունեության ոլորտի ձևավորմանը մասնակցում են նաև այլ գործոններ, սակայն հիմնականում որոշիչ նշանակություն ունի գյուղատնտեսական արտադրությունը: Այդ պատճառով էլ, որպես օրինաչափություն, գյուղատնտեսական հողերի կենտրոնացման շրջաններում գյուղերն ավելի մեծ են, քան փոքր հողակտորներ ունեցող շրջաններում:

Լեռնային երկրներում գյուղական բնակավայրերի մարդաշատության վրա ազդող մյուս գործոնը տեղանքի բարձրությունն է: Ըստ բարձրության նվազում է մշակության համար պիտանի հողերի տեսակարար կշիռը, կլիման աստիճանաբար ցրտում է, փոքրանում է աշխատատար մշակաբույսերի տարածման արեալը: Դրանց արդյունքում լեռնային գոտում աստիճանաբար նվազում է գյուղատնտեսական աշխատանքների ոլորտը, որի հետևանքով գյուղերն ավելի փոքր են: Լեռնային երկրների գյուղական բնակավայրերի այս առանձնահատկությունը յուրահատուկ գծերով դրսևորվում է ՀՀ-ում: Մասնավորապես՝ ՀՀ-ի 1500-2100 մ բարձրության գոտիներում, ուր կան համեմատաբար ընդարձակ և բերրի հողատարածքներ, գյուղերն ավելի խոշոր են, քան ավելի ցածրադիր գոտում (1200-1400 մ), որտեղ մասնատված մակերևույթի և փոքր հողակտորների պատճառով գյուղերն ավելի փոքր են [85]:

Այսպիսով, լեռնային երկրներում բնական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտի բազմազանության պատճառով գյուղական բնակավայրերի մարդաքանակի տարբերությունները զգալիորեն մեծ են: ՀՀ-ում այդ տարբերությունը տարաբնակեցման միևնույն արեալի սահմաններում կազմում է հարյուրապատիկ անգամ: Օրինակ՝ Շիրակում, Ախուրյան գյուղը Լեռնագյուղից մեծ է ավելի քան 335 անգամ:

Լեռնային երկրների գյուղական բնակավայրերն առանձնանում են նաև միգրացիոն և ժողովրդագրական գործընթացների ինքնատիպությամբ: Հատկապես վերջին հարյուրամյակի ընթացքում տեղի է ունեցել լեռնային շրջանների բնակչության մշտական արտահոսք դեպի ցածրադիր շրջաններ, որի հետևանքով բարձրադիր գոտում նվազել է գյուղերի մարդաշատությունը, իսկ որոշ մասն էլ ընդհանրապես բնազրկվել են: Դրա արդյունքում բարձրադիր շրջաններում նեղանում է բնակեցման արեալը, իսկ ցածրադիր գոտում՝ ընդարձակվում: Բարձրադիր գոտու բնակավայրերի փոքր չափերը, ցրվածությունը մեծ տարածքի վրա, տրանսպորտային ուղիների փոքր խտությունը և այլ գործոններ նկատելիորեն դժվարացնում են

բնակչության և բնակավայրերի սոցիալ-տնտեսական սպասարկումը և դառնում այդ վայրերից բնակչության միգրացիայի հիմնական պատճառը: Դրա հետևանքով էլ ավելի են սրվում լեռնային բարձրադիր գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները: Դրանք հայտնվում են բնագրկման վտանգի առաջ:

Լեռնային երկրներում գյուղական բնակավայրերի գործառության կառուցվածքի և արտադրական տիպերի բազմազանությունը բացատրվում է գյուղատնտեսական մշակաբույսերի տարածման ուղղաձիգ գոտիականությամբ և տնտեսությունների տիպի տարածքային մեծ տարբերություններով: Լեռնային տարածքի տարբեր գոտիներում հանդիպում են իրարից տարբեր մշակաբույսերի և ճյուղերի զուգակցում, որն իր հերթին փոխում է գյուղական բնակչության աշխատանքի և բնակավայրերի գործառնական բնույթն ու արտադրական դեմքը: Ցածրադիր, հարթավայրային շրջաններից դեպի լեռներ ոչ միայն նվազում են ջերմասեր և աշխատատար մշակաբույսերի տարածման արեալները, այլև երկրագործության բաժինն ամասնապահության համեմատությամբ: Վերջինս լեռնային գոտու բարձրադիր շրջաններում դառնում է ավելի էքստենսիվ:

Լեռնային երկրներում տեղից տեղ բնակավայրերի գործառնական կառուցվածքի փոփոխության պատճառը բնակչության աշխատանքային գործունեության տարածքային մեծ տարբերություններն են: Ինչպես երկրագործների, այնպես էլ անասնապահների աշխատանքի բնույթը լեռնային շրջանների տարբեր մասերում տարբեր է: Եթե համեմատենք լեռնեցու և հարթավայրի գյուղական բնակչության աշխատանքը, ապա կարելի է նկատել, որ հարթավայրի բնակիչները տարվա ընթացքում ունենում են համեմատաբար մշտական աշխատանքային ծանրաբեռնվածություն և զբաղված են աշխատանքի ավելի որակավորված ճյուղերում: Լեռնային գոտու գյուղական բնակչության դաշտային աշխատանքներով զբաղվածության ժամանակահատվածն կարճատև է, քան հարթավայրերում: Այդ պատճառով էլ լեռնային գյուղերի աշխատանքային ռեսուրսներն օգտագործվում են ավելի թույլ և վերջիններս ավելի շատ են մեկնում այլ վայրեր սեզոնային աշխատանքի: Ցածրադիր գոտում, որտեղ գյուղացիական տնտեսությունների ինտենսիվացման հնարավորություններն մեծ են, գյուղատնտեսական աշխատանքները կենտրոնացված են համեմատաբար փոքր տարածքի վրա, իսկ լեռնային գոտում գյուղատնտեսական աշխատանքները տարվում են ընդարձակ տարածքների վրա և առանձնանում են տարակենտրոնացվածությամբ (ցրված են փոքր խմբերով):

Պատմաաշխարհագրական, բնական և սոցիալ-տնտեսական պայմանների բազմազանության պատճառով լեռնային շրջաններում տեղից տեղ և հաճախակի փոփոխության է ենթարկվում բնակավայրերի արտաքին տեսքը և մորֆոլոգիան: Վերջիններս ձևավորվում են դարերի ընթացքում մշակված բնակարանի և տնտեսական կառույցների, գյուղական բնակավայրի ներքին հատակագծային առանձնահատկությունների ու ֆիզիկաաշխարհագրական տեղադիրքի, բնակավայրի արտադրական բնույթի և տեղական այլ գործոնների ազդեցության տակ: Նշված գործոնները գյուղական բնակավայրերի արտաքին տեսքի ձևավորման գործում մեծ փոփոխություններ են կրում ժամանակի և տարածության մեջ: Լեռնային երկրների գյուղական բնակավայրերի համար վերջին տասնամյակների ընթացքում բնորոշ է դրանց նյութական ձևերի արագ փոփոխությունը: Դրանով հանդերձ, այնուամենայնիվ, լեռնային երկրների տարբեր հատվածների բնաաշխարհագրական պայմանների նկատելիորեն մեծ տարբերությունների պատճառով պահպանվում են գյուղական բնակավայրերի արտաքին տեսքի որոշակի տարբերություններ:

Լեռնային երկրների գյուղական տարաբնակեցման առանձնահատկություններից մեկն էլ բնակավայրերի միջև կապի թուլություն է: Շատ հաճախ, այստեղ տարաբնակեցման արեալները տեղաբաշխված են ոչ ընդարձակ տարածքների վրա, որոնք միմյանցից անջատված են դժվարանցանելի լեռնաշղթաներով: Հազարամյակների ընթացքում այդպիսի վիճակը պայմանավորել է ֆեոդալական մասնատվածության գոյությունը լեռնային շատ երկրներում, մասնավորապես՝ Հայաստան աշխարհում: Վերջին տասնամյակների ընթացքում գիտատեխնիկական առաջընթացի և արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ լեռնային երկրներում միջբնակավայրային կապերը, ճիշտ է, նկատելիորեն բարելավվել են, այդուհանդերձ ռելիեֆային խոցելի պայմաններում գտնվող գյուղական բնակավայրերի համար վերը նշվածը, հատկապես տարվա ձմեռային ամիսներին, համարվում է լուրջ հիմնախնդիր:

Լեռնային երկրների մեծ մասում ռելիեֆի մասնատվածության, լանջերի դիրքադրությունների և թեքությունների, ըստ բարձրության գյուղատնտեսական մշակության համար պիտանի տարածքների չափերի զգալիորեն մեծ տարբերությունների, միկրոկլիմայական առանձնահատկությունների, տարածքի ենթակառուցվածքային տարրերով ապահովվածության աստիճանի, ուրբանացվածության մակարդակի և տեղային մի շարք այլ գործոնների ազդեցության հետևանքով **ըստ բարձրության գյուղական բնակչության թվի և խտության, գյուղերի միջին մարդաշատության և բնակա-**

վայրերի խտության փոփոխության որոշակի օրինաչափություն չի դիտվում [85]: Ավելին, լեռնային երկրների և տարածաշրջանների մեծ մասում նույնիսկ, համեմատաբար փոքր տարածքում, բարձրության միևնույն գոտու սահմաններում գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման և խտության նկատելիորեն մեծ տարբերություններ կան: Նշված առանձնահատկությունները տիպիկ ձևով արտահայտվում են նաև ՀՀ-ում, որին առավել մանրամասն կանդրադառնանք աշխատանքի հաջորդ պարագրաֆներում:

3.2 Գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման ժամանակակից պատկերի վերլուծությունը

Լեռնային մակերևույթով պայմանավորված ՀՀ-ում բնակչության և բնակավայրերի հիմնական մասը տեղաբաշխված են նախալեռնային հարթություններում, գետահովիտներում, լեռնային գոգավորությունների ցածրադիր հատվածներում և սարահարթերում: ՀՀ-ի ոչ այնքան մեծ տարածքում գյուղական բնակչությունը տեղաբաշխված է խիստ անհավասարաչափ: Բնակչության առավել մեծ թվով առանձնանում են Արարատյան դաշտը և այն եզրավորող նախալեռնային գոտին, Սևանի ավազանը, Շիրակի և Լոռվա սարահարթերը: Միայն Արարատյան դաշտում և այն եզրավորող նախալեռնային գոտու 9 տարածաշրջաններում (Արարատի, Արմավիրի, Արտաշատի, Աշտարակի, Էջմիածնի, Բաղրամյանի, Մասիսի, Կոտայքի և Նաիրիի) նախկին ապրում է ՀՀ գյուղական բնակչության 46,2 %-ը, երբ այդ շրջաններին բաժին է ընկնում ՀՀ ցամաքային տարածքի ընդամենը 17.8%-ը: Իսկ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում, որոնք զբաղեցնում են երկրի ցամաքային տարածքի 24.3%-ը, ապրում է գյուղական բնակչության ընդամենը 7.2%-ը՝ ավելի քիչ քան միայն Էջմիածնի տարածաշրջանում:

Գյուղական բնակչության միջին խտությամբ (37 մարդ/կմ²) ՀՀ-ը մոտ 1,2 անգամ գերազանցում է ՌԴ խիտ բնակեցված մարզերից մեկին՝ Մոսկվայի մարզին (30 մարդ/կմ²): Տարածքի մակերևույթի բազմազանության և մշակության համար պիտանի հողատարածքների խիստ անհավասարաչափ տեղաբաշխման պատճառով ՀՀ-ում գյուղական բնակչության խտության տարբերությունները մեծ են: ՀՀ տարածքում գյուղական բնակչության բաշխման, խտության և գյուղական տարածքները բնութագրող մի քանի այլ ցուցանիշների մասին հանգամանակից պատկերացում են տալիս թիվ 2 աղյուսակում բերված տվյալները:

ՀՀ գյուղական տարածքները բնութագրող մի քանի ցուցանիշներ
ըստ տարածաշրջանների (2015 թ.)¹

Տարածաշրջանները	Տարածքի մակերեսը ընդհանուրից (%-ներով)	Գյուղատնտեսական հողատարածքների բաժինը ընդհանուր մակերեսից (%-երով)	Բնակչության թիվը		Մի քառակուսի քառակուսիքի ցուցանիշը	Բնակչության խտությունը (մարդ. կմ ²)		Բնակավայրերի խտությունը (բնակ. 100 կմ ²)		Մշտական բնակչությունը չունեցող գյուղատարածքներում
			Թիվը (հազ.)	%-ներով		Ամբողջ տարածքի հաշվով	Գյուղատնտ. հողատարածքի հաշվով	Ամբողջ տարածքի հաշվով	Գյուղատնտեսական հողատարածքների հաշվով	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Աշտարակի	2.4	49	44.3	4.0	33	65	133	4.9	9.0	2
2. Ապարանի	2.1	44	15.6	1.4	20	26	60	3.4	7.0	-
3. Արագածի	1.4	61	13.4	1.3	22	35	57	5.8	9.4	-
4. Թալիճի	3.9	51	28.1	3	41	26	50	3.7	7.4	-
5. Արարատի	4.7	40	57.6	3.0	30	41	103	2.1	5.4	
6. Արտաշատի	1.8	63	70.0	6.7	39	137	210	7.5	12.0	1
7. Մասիսի	0.6	81	58.5	4.9	26	346	427	15	19.0	-
8. Արմավիրի	1.5	67	74.6	6.6	37	177	264	8.8	13.0	-
9. Բաղրամյանի	1.6	52	20.1	1.7	15	44	85	3.3	6.3	-
10. Էջմիածնի	1.3	72	87.3	7.3	43	243	338	11	15.8	-
11. Գավառի	2.3	71	31.4	2.7	11	49	69	1.7	2.4	-
12. Կրասնոսելսկի	2.5	58	7.8	0.7	17	11	19	2.4	4.2	2
13. Մարտունու	4.2	52	77.3	6.4	18	65	125	1.5	2.7	1
14. Սևանի	1.4	62	20.8	1.8	10	54	87	2.6	4.1	
15. Վարդենիսի	4.1	59	25.5	2.2	36	22	38	3.1	5.3	1
16. Գուգարքի	2.7	45	21.2	2.4	26	27	61	3.4	7.3	1
17. Թումանյանի	4.0	35	21.9	2.3	29	20	56	2.6	8.0	-
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015 թ.», վիճակագրական ժողովածուի և «Հայկական ԽՍՀ վարչատարածքային բաժանումը», Ե., 1988 թ., գրքի տվյալների հիման վրա:

18. Սպիտակի	1.9	63	23.2	2.3	20	43	68	3.7	5.9	-
19.Ստեփանավանի	2.3	58	14.5	1.5	18	23	40	2.9	5.0	-
20.Տաշիրի	2.5	68	12.9	1.5	23	17	28	3.3	4.9	-
21.Հրազդանի	3.3	38	21.7	2.2	16	23	62	1.7	4.6	-
22. Կոտայքի	2.9	54	57.9	5.1	30	72	133	3.7	6.7	-
23.Նաիրիի	1.1	67	36.9	3.3	16	107	160	5.2	7.8	-
24.Ախուրյանի	2.1	75	40.4	4.0	35	70	93	6.0	8.0	1
25.Ամասիայի	2.2	67	6.3	0.6	26	10	15	4.3	6.5	3
26.Անիի	1.5	64	13.6	1.3	19	32	49	4.4	6.4	-
27. Աշոցքի	2.0	53	9.3	0.9	25	20	38	4.6	8.7	-
28. Արթիկի	1.7	54	33.3	2.8	23	70	129	4.8	8.6	-
29.Գորիսի	2.7	72	20.7	1.8	27	28	38	3.6	5.0	3
30.Կապանի	4.8	25	7.9	0.7	53	6	23	3.2	14.0	8
31.Մեղրու	2.4	19	2.2	0.2	13	3	17	2.0	10.4	-
32.Սիսիանի	6.2	53	15.0	1.4	34	9	16	2.0	3.7	-
33.Եղեգնաձորի	4.1	38	25.6	2.4	31	23	59	2.7	7.0	4
34.Վայքի	4.2	26	7.7	0.8	20	7	25	1.7	6.5	2
35. Նոյեմբերյանի	1.9	53	21.7	2.1	18	40	76	3.2	5.9	1
36.Իջևանի	4.8	24	33.0	2.4	28	25	103	2.1	6.5	2
37. Տավուշի	2.9	31	18.5	2.0	16	22	73	1.9	6.2	-
ՀՀ-ում	100	48	1097.7 ²	100	944	39	83	3.1	6.5	32


² Առանց քաղաքների ենթակայության տակ գտնվող թվով 12 գյուղի բնակչության թվի:

Սովորաբար այս կամ այն տարածքում գյուղական բնակչության տեղաբաշխման առավել իրական պատկերն արտահայտում է ըստ գյուղատնտեսական հողատարածքների գյուղական բնակչության խտության ցուցանիշը: Այն առավել բնորոշ է ՀՀ-ի նման լեռնային երկրներին, որտեղ բացարձակ բարձրությունների մեծ տարբերությունների և տարածքի մակերևույթի խիստ մասնատվածության պատճառով զգալի տարածքներ դուրս են մնում տնտեսական օգտագործումից և բնակեցումից:

Արդյունավ 3
ՀՀ գյուղական տարածքները բնութագրող մի քանի ցուցանիշներ ըստ նարդերի (2015 թ.)¹

Վարչական նարդերը	(%) ճկմանը -սպանը յոգնակիցը Տարածքի	ճկմանը -սպանը յոգնակիցը Տարածքի	(%) ճկմանը -սպանը յոգնակիցը Տարածքի	ճկմանը -սպանը յոգնակիցը Տարածքի	(%) ճկմանը -սպանը յոգնակիցը Տարածքի	ճկմանը -սպանը յոգնակիցը Տարածքի	(%) ճկմանը -սպանը յոգնակիցը Տարածքի	Խտությունը					
								Բնակչությունը (մարդ/քմ)			Բնակավայրեր (քմակ./ 100քմ)		
								Ա	Բ	Ա	Բ	Ա	Բ
1. Արագածոտն	9.3	79	101.4	9.2	116	12.3	38	48	4.2	5.3			
2. Արարատ	7.0	75	186.1	17.0	95	10.0	87	118	4.5	6.0			
3. Արմավիր	4.2	78	182.0	16.6	95	10.0	152	194	7.6	9.8			
4. Գեղարքունիք	18.0	65	162.8	14.8	92	9.7	41 ⁴	63	1.7	2.6			
5. Կոտայք	7.0	77	116.5	10.6	62	6.6	55	72	3.0	3.8			
6. Շիրակ	9.0	86	102.9	9.4	128	13.6	41	48	4.8	5.6			
7. Լոռի	12.7	66	93.7	8.5	116	12.3	25	38	3.0	4.6			
8. Սյունիք	15.1	74	45.8	4.2	127	13.5	10	14	2.8	3.8			
9. Վայոց ձոր	7.8	90	33.3	3.0	51	5.4	14	16	2.2	2.4			
10. Տավուշ	9.1	41	73.2	6.7	62	6.6	27	66	2.2	5.4			
Երևան	0.8	-	-	-	-	-	-	-	-	-			
Ընդամենը ՀՀ-ում	100	71 ³	1097.7	100	944	100	38.0 ⁴	54.3	3.1	4.4			

¹ Ըստ՝ 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ԱԿԾ ընթացիկ հաշվառման տվյալների: 2. Առանց քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող բնակավայրերի 9 գյուղի (բացառությամբ Դիլիջանի ենթակայության գյուղերի): 3. Ըստ՝ «ՀՀ նարդերը և Երևան քաղաքը բնակավայրերի», Ե., 2015 թ. ժողովածուի տվյալների: 4. Առանց Սևանա լճի տարածքի: Ա - անբնակավայրային տարածքի հաշվով, Բ - գյուղատնտեսական հողատարածքի հաշվով:



Նկ. 4. ՀՀ գյուղական բնակչության խտությունը և գյուղերի միջին մարդաքանակը 2015 թ-ի դրությամբ

ՀՀ-ում գյուղական բնակչության խտությունն ավելի քան երկու անգամ մեծ է ամբողջ տարածքի հաշվով գյուղական բնակչության միջին խտությունից: Գյուղատնտեսական հողատարածությունների հաշվով գյուղական բնակչության խտությունը բարձր է հիմնականում ՀՀ-ի այն շրջաններում, որտեղ այն բարձր է նաև ամբողջ տարածքի հաշվով ՀՀ գյուղական բնակչության միջին խտությունից (աղ. 2): Այդ օրինաչափությունից բացառություն են կազմում Սևանի, Գավառի և Սպիտակի տարածաշրջանները: Հակառակ երևույթը դիտվում է միայն Տավուշի տարածաշրջանում, որտեղ գյուղական բնակչության խտությունն ըստ գյուղատնտեսական հողատարածությունների ավելի քան 3.2 անգամ մեծ է ամբողջ տարածքի հաշվով գյուղական բնակչության խտությունից (նկ. 4):


Գյուղական տարածքների և երկրի բնակեցվածության աստիճանը բնութագրող կարևոր ցուցանիշ է համարվում նաև գյուղական բնակավայրերի խտության ցուցանիշը (նկ. 5): Հաճախ օգտագործվում է նաև հակադարձ ցուցանիշը՝ մեկ բնակավայրին բաժին ընկնող տարածքի չափը: ՀՀ-ում յուրաքանչյուր 100 քմ-ին բաժին է ընկնում միջին հաշվով 3.1 գյուղական բնակավայր (աղ. 2): Սակայն առանձին տարածաշրջանների միջև գյուղական բնակավայրերի խտությունների տարբերությունը 6 անգամից ավելի է: ՀՀ վեց մարզում այդ ցուցանիշը ցածր է ՀՀ միջինից: Արագածոտնի, Արարատի և Շիրակի մարզերում այն կազմում է 4.2-4.8, իսկ ամենամեծն Արմավիրի մարզում է՝ 7.6 գյուղ/100 քմ (աղ. 3):

Ամբողջ տարածքի և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակավայրերի խտության ցուցանիշների միջև տարբերությունը մեծ է հատկապես այն շրջաններում, որտեղ համեմատաբար ցածր է գյուղատնտեսական հողատարածքների տեսակարար կշիռը /աղ. 3/: Գյուղատնտեսական հողատարածությունների հաշվով գյուղական բնակավայրերի առավել բարձր խտությամբ առանձնանում են Արարատյան դաշտում ընկած տարածաշրջանները (տե՛ս թիվ 2 աղյուսակը):

ՀՀ-ի նման լեռնային երկրներում խիստ կարևոր է բացահայտել նաև բնակչության տեղաբաշխման և խտության պատկերն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության, քանի որ լեռնային մակերևույթի պատճառով ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացման կամ նվազման տեղի է ունենում բնական համալիրի տարրերի փոփոխություն: Այդ հանգամանքն իր անմիջական ազդեցությունն է թողնում բնակավայրերի տեղադիրքի, չափերի, ձևաբանական առանձնահատկությունների, բնակչության թվաքանակի և տնտեսական գործունեության վրա:

**ՀՀ գյուղական բնակավայրերի
խտությունը (2015 թ.)**

Մ. 1: 2 300 000



Նկ. 5. ՀՀ գյուղական բնակավայրերի խտությունը

Աղյուսակ 4

ՀՀ տարածքի, բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների (2015 թ.)¹

Բարձրության գոտիները (մետր)	Փոստալային կոդ (կի՞ն)	Լուսնը %	Բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների						Բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների						Միջոցառման ընդհանուր թիվը			
			Սնրոց		Քաղաքային		Վյուրական		Սնրոց		Քաղաքային		Վյուրական					
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ				
Մինչև 800	607.3	2.1	83465	2.7	33886	1.8	49579	4.0	51	5.3	5	10.2	46	5.0	137.0	82	6777	1078
801-1000	2347.5	8.3	1717579	54.5	1286245	67.2	431334	34.9	208	21.6	11	22.5	197	21.6	732.0	184	116931	2190
1001-1400	4123.0	14.5	462537	14.7	249485	13.0	213052	17.3	165	17.2	13	26.5	152	16.7	112.0	52	19191	1402
1401-1800	5648.2	19.8	536737	17.0	261789	13.7	274948	22.3	288	30.0	12	24.5	276	30.3	95.0	49	21816	996
1801-2000	3653.2	12.8	275607	8.8	79160	4.1	196447	15.9	152	15.8	7	14.3	145	15.9	75.0	54	11309	1355
2001-2250	4149.0	14.6	72336	2.3	4490	0.2	67846	5.5	93	9.7	1	2.0	92	10.1	17.0	16.0	4490	737
2250-2500	3035.0	10.7	1710	0.0	-	-	1710	0.1	4	0.4	-	-	4	0.4	0.6	0.6	-	428
2500-ից բարձր	4901	17.2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
ընդամենը	28464.3	100.0	3149971	100.0	1915055	100.0	1234916	100.0	961	100.0	49	100.0	912	100.0	111.0	43.0	39083	1354

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015 թ.»-ի լիցենզիայով հրատարակված տեղեկատվության, Լոգոսյան Դ. Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР, Е., 1986 թ. 16, գրքի տվյալների հիման վրա: 2. Աշտարակի բնակչություն ունեցող գյուղերի թիվը:

*Ստանդարտացված միավորներով՝ 1272.29 կմ2 (4.3 %) և քաղաքային տարածքային մեծությամբ:

ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (բացառման փետրվ, առանց բաղաբային համայնքների մեջ մտնող գյուղերի, 2015 թ.)¹

Աղյուսակ 5

Մարզեր	Բարձրության գոտիներ (մ)																		Գրանցված և փոխադրված քաղաքացիներ	Գրանցված և փոխադրված քաղաքացիներ
	Մինչև 800 մ		801-1000		1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000		2001-2200		2200-ից բարձր			
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
Արագածոտն	2	--	2	2125	14	32180	10	20828	17	14362	16	12030	27	21607	27	18522	1	1326	114	122980
Արարատ	-	-	89	202425	5	7835	1	641	-	-	-	-	-	-	-	-	-	-	94	208777
Արմավիր	-	-	-	-	2	734	1	908	3	328	3	2163	45	122559	32	40623	2	168	88	167483
Չերտքունիք	7	7940	3	3739	10	9947	25	27248	35	20250	31	39169	4	5191	-	-	-	-	115	113484
Լոռի	-	-	-	-	5	19873	12	41690	21	37669	16	22293	5	4588	3	734	-	-	62	126847
Կոտայք	-	-	-	-	-	-	1	474	33	47077	29	33156	37	34175	23	6202	1	216	124	121300
Շիրակ	6	1870	7	791	26	6141	17	7312	17	10141	24	16860	16	4220	3	1422	-	-	116	48757
Սյունիք	-	-	2	3242	3	4762	3	9891	14	11100	11	5204	8	2996	4	343	-	-	45	37538
Վայոց ձոր	31	37922	13	21539	7	8958	5	6976	2	1444	1	8	-	-	-	-	-	-	59	76847
Տավուշ	46	49579	197	431334	75	95903	77	117149	142	142371	134	132577	145	196447	92	64846	4	1710	912	1234916

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը փետրվ, Ե., 2015 թ., վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա .ա/ գյուղերի թիվը բ/ բնակչության թիվը:

ՀՀ մարզերի գյուղատնտեսական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (տուկոսմետրով, առանց բաղադրային համայնքների նեջ նտմող գյուղերի 2015 թ.)

Մարզեր	Բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մ)																		Դյուսթուսիոյցմ Մեյգրոսնեյց	Սլզմոխոխոյցմ Մեյգրոսնեյց
	Մինչև 800		801- 1000		1001-1200		1201- 1400		1401- 1600		1601- 1800		1801- 2000		2001- 2200		2200-ից բարձր			
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
Արագածոտն	-	-	1.0	0.5	18.7	33.6	13.0	17.8	12.0	10.1	11.9	9.1	18.6	11.0	29.3	27.3	25.0	77.6	122980	114
Արարատ	4.4	3.7	41.1	45.8	4.0	5.7	2.6	1.0	-	-	2.2	1.3	2.1	0.6	-	-	-	-	208777	94
Արմավիր	-	-	45.2	46.9	6.7	8.2	1.3	0.5	-	-	-	-	-	-	-	-	-	-	210903	95
Գեղարքունիք	-	-	-	-	2.7	0.8	1.3	0.8	2.1	0.2	2.2	1.6	31.0	62.4	34.8	59.9	50.0	9.8	167483	88
Լոռի	15.2	16.0	1.5	0.9	13.3	10.3	32.5	23.3	24.6	14.2	23.2	29.6	2.8	2.6	-	-	-	-	113484	115
Կոտայք	-	-	-	-	6.6	20.7	15.6	35.6	14.8	25.5	11.9	16.8	3.5	2.3	3.3	1.1	-	-	126847	62
Շիրակ	-	-	-	-	-	-	1.3	0.4	23.2	33.1	21.7	25.0	25.5	17.4	25.0	9.1	25.0	12.6	121300	124
Սյունիք	13.0	3.8	3.6	0.2	34.7	6.4	22.0	6.2	12.0	7.1	17.9	12.7	11.0	2.2	3.3	2.1	-	-	48757	116
Վայոց ձոր	-	-	1.0	0.7	4.0	5.0	3.9	8.4	9.9	7.8	8.2	3.9	5.5	1.5	4.3	0.5	-	-	37538	45
Տավուշ	67.4	76.5	6.6	5.0	9.3	9.3	6.5	6.0	1.4	1.0	0.8	0.0	-	-	-	-	-	-	76847	59
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	1234916	912

Աղյուսակ 6

ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումը ըստ մարդաշատության խմբերի

(բացառաձև թվերով 2015 թ.)

ՀՀ	Գյուղերի խմբավորումը ըստ մարդաքանակի (մարդ)																		Գյուղացիների ընդամենը	Գյուղացիների թվի փոփոխությունը 2010-2015 թթ.	Գյուղացիների թվի փոփոխության ցուցանիշը 2010-2015 թթ.	Գյուղացիների թվի փոփոխության տեմպը 2010-2015 թթ.
	51-100		101-200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի									
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ								
մարզերը	2	17	3	257	12	1717	22	7264	37	25243	28	44898	8	31324	2	12260	114	122980	2			
	-	-	-	-	1	155	4	889	13	9878	57	110266	13	47291	6	40298	94	208777	1			
Արագածոտն	-	-	-	-	2	327	3	1016	6	4158	62	116828	19	69064	3	19516	95	210903	-			
Արարատ	-	-	3	228	9	1370	17	5984	18	11965	19	33600	12	48315	10	66021	88	167483	4			
Արմավիր	3	92	9	659	14	2176	30	9775	17	12982	35	56589	4	13655	3	17556	115	113484	1			
Գեղարքունիք	1	30	-	-	2	272	6	2141	13	9187	28	54476	5	18312	7	42429	62	126847	-			
Լոռու	7	165	5	368	10	1356	28	8617	32	23101	36	59214	4	13026	2	15456	124	121300	4			
Կոտայք	9	271	27	2077	21	3088	28	8902	20	13899	11	20520	-	-	-	-	116	48757	11			
Շիրակ	3	56	1	70	5	781	16	5024	5	3814	14	22698	-	-	1	5095	45	37538	6			
Սյունիք	1	8	-	-	1	175	12	4125	16	11124	22	36188	7	25227	-	-	59	76847	3			
Վայոց ձոր	26	639	48	3659	77	11417	166	5731	177	125351	312	555274	72	266214	34	218631	912	1234916	32			

1. Թիվ 6 և 6.1 աղյուսակները կազմված են «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով», Ե., 2015 թ., վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա: ա./ գյուղերի թիվը բ/ բնակչության թիվը:

Աղյուսակ 6.1
ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի և բնակչության բաշխումը ըստ մարդաշատության խմբերի (2015թ.. տոկոսներով)


ՀՀ մարզերը	Գյուղերի խմբավիությունը ըստ մարդաբանակի (մարդ)																							
	մինչև 50		51-100		101-200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի									
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ								
Արագածոտն	7.7	2.7	6.2	7.0	15.5	15.0	13.3	13.5	20.9	20.1	9.0	8.1	11.1	11.8	11.1	11.8	5.9	5.6						
Արարատ	-	-	-	-	1.3	1.4	2.4	1.6	7.3	7.9	18.3	19.9	18.0	17.8	18.0	17.8	17.6	18.5						
Արմավիր	-	-	-	-	2.6	2.9	1.8	1.9	3.4	3.3	19.9	20.1	26.4	25.9	26.4	25.9	8.8	8.9						
Գեղարքունիք	-	-	6.2	6.2	11.7	12.0	10.2	11.1	10.2	9.5	6.1	6.0	16.7	18.1	16.7	18.1	29.4	30.2						
Լոռի	11.5	14.4	18.8	18.0	18.2	19.1	18.1	18.2	9.6	10.4	11.2	10.2	5.6	5.1	5.6	5.1	8.8	8.0						
Կոտայք	3.9	4.7	-	-	2.6	2.4	3.6	4.0	7.3	7.3	9.0	9.8	6.9	6.9	6.9	6.9	20.6	19.4						
Շիրակ	26.9	25.8	10.4	10.1	13.0	11.9	16.9	16.0	18.1	18.4	11.5	10.7	5.6	4.9	5.6	4.9	5.9	7.1						
Սյունիք	34.6	42.4	56.3	56.8	27.3	27.0	16.9	16.7	11.3	11.1	3.5	3.7	-	-	-	-	-	-						
Վայոց ձոր	11.5	8.8	2.1	1.9	6.5	6.8	9.6	9.3	2.8	3.1	4.5	4.1	-	-	-	-	2.9	2.3						
Տավուշ	3.9	1.2	-	-	1.3	1.5	7.2	7.7	9.1	8.9	7.0	6.5	9.7	9.5	-	-	-	-						
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0						

ՀՀ-ում մշտական բնակչություն ունեցող տարածքը սկսվում է մոտ 400մ-ից և հասնում մինչև 2300մ բարձրությունը: Լեռնային երկրներում, որպես օրինաչափություն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացման բնակչության խտությունը, բնակավայրերի թիվն ու մարդաշատությունն աստիճանաբար նվազում են: Վերջին 5-6 տասնամյակների ընթացքում այդ միտումն ավելի նկատելի է դարձել [44, 121, 122, 144, 150, 188, 198, 205, 208]: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում վերը նշված օրինաչափությունը չի պահպանվում է [4, 5]: Դա պայմանավորված է, նախ և առաջ, հանրապետության տարածքի ռելիեֆի բնույթով: ՀՀ-ում ռելիեֆային նպաստավոր պայմաններ ունեցող շրջանները, չնայած որ ընկած են ծովի մակարդակից տարբեր բարձրությունների վրա (801-2000մ), առանձնանում են բնակչության առավել բարձր խտությամբ:

ՀՀ-ում ամբողջ բնակչության համեմատ գյուղական բնակչությունն ըստ բարձրության գոտիների համեմատաբար ավելի հավասարաչափ է տեղաբաշխված (աղ.4): Եթե ՀՀ բնակչության 54.5 %-ը ապրում է 801-1000մ բարձրության գոտում, ապա այդ գոտում գյուղական բնակչությունը կազմում է ՀՀ գյուղական բնակչության մոտ 35%-ը: Հարկ է նշել, որ ծովի մակարդակից 801-1000 մ բարձրության գոտին զբաղեցնում է ՀՀ տարածքի ընդամենը 8,3 %-ը: ՀՀ-ում իր զբաղեցրած տարածքի համեմատ (ՀՀ տարածքի 12,8%) գյուղական բնակչության քանակով առանձնանում է ծովի մակարդակից 1801-2000 մ բարձրության գոտին: Թեև այդ գոտում բաժին է ընկնում ՀՀ ամբողջ բնակչության 8.8%-ը, սակայն այդ գոտում ապրում է ՀՀ գյուղական բնակչության մոտ 16%-ը: Եթե ծովի մակարդակից 1400մ-ից բարձր շրջաններում ապրում են հանրապետության բնակչության 28.1%-ը, ապա գյուղական բնակչության բաժինը նշված սահմաններում կազմում է 43.8%, որը 4.8 տոկոսային կետով բարձր է մինչև 1000մ բարձրության գոտու գյուղական բնակչության տեսակարար կշռից:

Ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գոտիների ՀՀ-ում գյուղական բնակչության խտությունն ամբողջ բնակչության համեմատ ավելի փոքր տարբերություններ ունի: Բարձրության 5 գոտիներում գյուղական բնակչության խտության ցուցանիշներն ունեն փոքր տարբերություններ կամ գրեթե հավասար են (մանրամասն տես աղ.4):

ՀՀ-ում ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գյուղական բնակավայրերի ամենամեծ թվաքանակը բաժին է ընկնում 801-1000մ բարձրության գոտում (գյուղերի ընդհանուր թվի 21,6 %-ը): Սրան հաջորդող



Նկ. 6. ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի խտությունն ըստ գյուղատնտեսական հողատարածքների 2015 թ-ի դրությամբ

բարձրության երկու գոտիներին (1001-1200 և 1201-1400) բաժին է ընկնում գյուղերի ընդհանուր թվի համապատասխանաբար 8.3 և 8.4 %-ը, չնայած որ միայն 1201-1400մ բարձրության գոտին իր զբաղեցրած տարածքով հավասար է 801-1000մ բարձրության գոտուն:

Մեր հանրապետությունում գյուղական բնակավայրերի 57 %-ը գտնվում են ծովի մակարդակից 1400 մ-ից բարձր շրջաններում: Գյուղերի մեծ թվաքանակով առանձնանում է 1801-2000մ բարձրության գոտին, այստեղ են ընկած 33-ի գյուղական բնակավայրերի շուրջ 16 %-ը (145 գյուղ): Բնակեցված վերջին գոտուն (2001-2250մ և 2250-ից բարձր) բաժին է ընկնում 33 գյուղերի 10.5 %-ը (96 գյուղ):

33-ում գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման կարևոր առանձնահատկություններից մեկն էլ բարձրության միևնույն գոտու սահմաններում բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և խտության զգալիորեն մեծ տարբերությունների առկայությունն է (աղ. 5): Մինչև 800մ բարձրության գոտուն գյուղական բնակչության գրեթե 77 %-ը բաժին է ընկնում Տավուշի, իսկ 16%-ը՝ Լոռու մարզին: Բարձրության 801-1000մ գոտուն գյուղական բնակչության 92%-ից ավելին ապրում է Արմավիրի և Արարատի մարզերում, իսկ Արագածոտնի, Վայոց ձորի, Լոռու և Սյունիքի մարզերում միասին վերցրած՝ ընդամենը 2.3%-ը, մնացած 5 %-ը՝ Տավուշի մարզում:

Գյուղական բնակչության տեղաբաշխման և խտության նմանատիպ տարբերություններ կան նաև բարձրության մյուս գոտիներում, որի մասին հանգամանալից պատկերացում են տալիս թիվ 7 աղյուսակում բերված տվյալները:

Ըստ ծովի մակարդակից ունեցած միջին բարձրության 33-ում առանձնացվում են. ա/ նախալեռնային-հարթավայրային, բ/ լեռնային և գ/ բարձր լեռնային համայնքներ [23]: 33 կառավարության 1998 թ. նոյեմբերի 17-ի թիվ 756 որոշումով լեռնային են համարվում ծովի մակարդակից 1700-2000, իսկ բարձր լեռնային՝ 2000 մ և ավելի բարձրության վրա գտնվող բնակավայրերը: 33 գյուղական համայնքներից 187-ը լեռնային են, իսկ 117-ը՝ բարձր լեռնային: 33 562 գյուղական համայնք ըստ բարձունքային նիշի համարվում են նախալեռնային-հարթավայրային, չնայած դրանց միջև կա 1000 մ-ից ավելի հարաբերական բարձրություն:

Հասկանալի է, որ ծովի մակարդակից բարձրությունների այդպիսի տարբերություններ ունեցող գյուղական բնակավայրերը չեն կարող ունենալ զարգացման նույնանման հնարավորություններ, մանավանդ որ 33 տարածքի

1001-1400 մ բարձրության մակերևույթն առանձնանում է մասնատվածության առավել բարձր աստիճանով և մեծ թեքություններով: Ուստի գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացման առումով ճիշտ կլինի այդ խումբը տրոհել երկու մասի՝ *Մախալեռնային և հարթավայրային*:

Աղյուսակ 7

ՀՀ մարզերի գյուղական բնակչության խտությունն ըստ բարձրության գոտիների

ՀՀ մարզերը	Բարձրության գոտիները (մետր)								
	մինչև 800	801-1000	1001-1200	1201-1400	1401-1600	1601-1800	1801-2000	2001-2250	2250-ից բարձր
1. Արագածոտն	-	130 ¹	85	71	57	71	60	46	-
2. Արարատ	-	320	52	5.0	-	7.0	7.0	-	-
3. Արմավիր	-	201	40	-	-	-	-	-	-
4. Գեղարքունիք	-	-	32	41	10	87	125	45	-
5. Լոռի	68	37	54	88	36	35	11	-	-
6. Կոտայք	-	-	122	284	202	86	15	3.0	-
7. Շիրակ	-	-	-	25	120	83	81	8	-
8. Սյունիք	15	5	29	25	28	43	12	2	-
9. Վայոց Ձոր	-	63	57	58	47	20	9	2	-
10. Տավուշ	78	54	32	24	4	-	-	-	-
Միջինը ՀՀ-ում	62	183	58	53	54	43	53	17	-

ՀՀ գյուղական բնակավայրերն առանձնանում են մակ արտաքին սահմանի նկատմամբ ունեցած իրենց դիրքով: Ըստ այդ ցուցանիշի ՀՀ 173 գյուղական համայնք համարվում են սահմանամերձ: Այդպիսիք առավել շատ են Սյունիքի մարզում՝ 60 գյուղական համայնք [20]:

ՀՀ գյուղական համայնքների մոտ 50 %-ը մախալեռնային կամ հարթավայրային և ոչ սահմանամերձ են, այսինքն՝ զարգացման համար ունեն նպաստավոր պայմաններ: Ներկայումս առավել անբարենպաստ պայմաններում են գտնվում գյուղական համայնքների 2 %-ը (18 համայնք), որոնք և սահմանամերձ են և բարձր լեռնային: Ութսուն գյուղական համայնք լեռնային են և սահմանամերձ, իսկ 125 գյուղական համայնք՝ մախալեռնային հարթավայրային և սահմանամերձ [20]:

¹ Գյուղական բնակչության խտությունը բարձրության տվյալ գոտում:

3.3 Գյուղական բնակավայրերի մարդաշատության առանձնահատկությունները

Գյուղական բնակավայրերի մարդաշատությունն օբյեկտիվորեն արտացոլում է մի շարք գործոնների գումարային ազդեցությունը գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման վրա: Գյուղերի մարդաշատության վրա ավելի մեծ է արտադրատնտեսական գործոնների ազդեցությունը: Ագրոարդյունաբերական ինտեգրացիայի հիման վրա զարգացող բնակավայրերը, որտեղ կենտրոնացվում են մասնագիտացված խոշոր գյուղատնտեսական համալիրներ հումքի վերամշակման ձեռնարկություններ, աճում են ավելի արագ և դառնում են ագրոարդյունաբերական ավաններ, զգալի դեր խաղալով գյուղական տարաբնակեցման համակարգում [65]:

Գյուղական բնակչության աճը, զբաղվածությունը, կրթական մակարդակը, ապահովվածությունը հանրակրթական դպրոցներով, մշակութային օջախներով, բնակելի տարածությամբ և սպասարկման ոլորտի այլ ծառայություններով զգալիորեն ազդում են գյուղական բնակավայրի մեծության վրա: Տարածքի մակերևույթի բնույթը, ապահովվածությունը ջրային ռեսուրսներով, տրանսպորտային մատչելիությունը, ուրբանացման մակարդակը, գյուղական բնակչության ճոճանակային միգրացիայի ինտենսիվությունը, գյուղական բնակավայրի հեռավորությունը քաղաքներից և շրջկենտրոնից գյուղերի մարդաքանակի վրա ազդող կարևոր գործոններ են:

ՀՀ-ն աչքի է ընկնում գյուղական բնակավայրերի համեմատաբար խոշոր չափերով: Այդ ցուցանիշով Հայաստանը նախկին ԽՍՀՄ-ում գրավում էր երկրորդ տեղը Մոլդովայից հետո: Ներկայումս հանրապետության գյուղերի միջին մարդաշատությունը կազմում է մոտ 1204 մարդ (ըստ ՀՀ գյուղական բնակչության թվաքանակի վերաբերյալ 2015 թ. հունվարի մեկի դրությամբ ԱՎԾ ընթացիկ հաշվառման տվյալների), սակայն բնակավայրերն առանձնաձևում են մարդաշատության բավական մեծ տարբերություններով՝ մի քանի տասնյակից մինչև 9 հազ.մարդ:

Ըստ մարդաշատության (մարդաքանակի) գյուղական բնակավայրերի առանձնացման կամ խմբավորման տարբեր մոտեցումներ կան: Մեր հանրապետության համար, ելնելով գյուղական բնակավայրի մարդաքանակի առկա պատկերից, առավել գործածական և ընդունելի է համարվում ըստ մարդաշատության գյուղական բնակավայրերի հետևյալ խմբերը. մինչև 50, 51-100, 101-200, 201-500, 501-1000, 1001-3000, 3001-5000, 5000-ից ավելի մարդ:

ՀՀ գյուղական բնակավայրերի մեջ գերակշռում են մեծ գյուղերը՝ 1001-

3000 մարդաքանակով: Դրանց բաժին է ընկնում հանրապետության մշտական բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերի 34.2%-ը: Թվաքանակով մեծ տարբերություն չունեն փոքր (201-500 մարդ) և միջին (501-1000 մարդ) մեծության գյուղերը: Փոքր բաժին ունեն մինչև 50 բնակիչ ունեցող գյուղերը (26 գյուղ, 2,8%):

Բնակչության բաշխումը ՀՀ գյուղական բնակավայրերի տարբեր խմբերում աչքի է ընկնում են մեծ տարբերություններով: ՀՀ գյուղական բնակչության ավելի քան 84%-ը ապրում են 1000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղերում, որոնք կազմում են մշտական բնակչություն ունեցող գյուղերի ընդհանուր թվի 44.2 %-ը:

Աղյուսակ 8

ՀՀ գյուղական բնակավայրերի խմբավորումն ըստ մարդաքանակի (1.01.2015 թ.)¹

Բնակավայրերի խմբերն ըստ մարդաքանակի (մարդ)	Գյուղերի թիվը	Գյուղերի մասնաբաժինն ընդհանուրից (%-ով)	Բնակչության բաշխումն ըստ բնակավայրերի խմբերի (%)	Բնակավայրերի միջին մարդաքանակը խմբում
Մինչև 50	26	2.8	0.0	25
51-100	48	5.1	0.3	76
101-200	77	8.2	0.9	148
201-500	166	17.6	4,4	324
501-1000	177	18.7	10.1	708
1001-3000	312	33,0	45.0	1780
3001-5000	72	7,6	21.6	3697
5000 և ավելի	34	3.6	17.7	6430
Մշտական բնակչություն չունեցող գյուղեր	32	3.4	-	-
Ընդամենը ՀՀ-ում	944 ²	100.0	100.0	1354

Հանրապետության գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում նկատ

¹ Հաշվարկներն ըստ «ՀՀ մարդերը և երևան քաղաքը թվերով», Ե., 2015 թ., վիճակագրական ժողովածուի տվյալների (armstat.am):

² Առանց քաղաքային համայնքների ենթակայության տակ գտնվող գյուղերի (բացառությամբ Դիլիջանի ենթակայության երեք գյուղի):

տելիորեն ցածր է մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերի բնակչության բաժինը՝ 5.7 %, մինչդեռ վերջիններս կազմում են գյուղերի ընդհանուր թվաքանակի մոտ 34%-ը: Միջին մեծության գյուղերում (501-1000 մարդ), որոնք կազմում են գյուղերի ընդհանուր թվի 18.7 %-ը, ապրում է 33 գյուղական բնակչության ընդամենը 10.1 %-ը:

Գյուղական բնակավայրերի մարդաշատության վրա հատկապես մեծ է արտադրատնտեսական, սոցիալ-մշակութային, ժողովրդագրական, բնական և քաղաքաշինական գործոնների ազդեցությունը [13]: Աշխարհագրական պայմանների փոփոխմամբ թվարկված գործոններից մեկը կամ մի քանիսը կարող են ձեռք բերել վճռական նշանակություն: Մեղրու, Կապանի և Վայքի տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի փոքր մարդաշատությունը պայմանավորված է տեղանքի ռելիեֆային պայմաններով և գյուղատնտեսական հողատարածքների համեմատաբար ցածր տեսակարար կշռով, իսկ Աշոցքի, Սիսիանի, Արագածի, Վարդենիսի և Ամասիայի տարածաշրջանները, չնայած որ ունեն գյուղատնտեսական հողատարածությունների համեմատաբար բարձր տեսակարար կշիռ և ռելիեֆում էլ գերակշռում են սարահարթային տարածքները, գյուղական բնակավայրերի մարդաշատությունը փոքր է: Այս դեպքում արդեն կարևոր են դառնում տարածքի բացարձակ բարձրությունը, կլիմայական պայմանները և, իհարկե, հեռավորությունը մայրաքաղաքից: Նշված տարածաշրջանների 143 գյուղերից 71-ն ունեն ծովի մակարդակից 2000 մ-ից ավելի բարձրություն: Իսկ Մարտունու և Գավառի տարածաշրջանները, որոնք նույնպես աչքի են ընկնում բարձրադիր ռելիեֆով, 33-ում գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությամբ զբաղեցնում են առաջին երկու տեղերը: Այս դեպքում մարդաշատության համար վճռորոշ դեր ունեն բնակավայրերի ցանցի փոքր խտությունը (այս տարածաշրջաններում յուրաքանչյուր գյուղին բաժին է ընկնում 36-41 քկմ հողատարածք, որը գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը 2.4-2.8 անգամ), ժողովրդագրական իրավիճակը (այս տարածաշրջաններն աչքի են ընկնում բնակչության վերարտադրության համեմատաբար բարձր ցուցանիշներով), և, իհարկե, նպաստավոր աշխարհագրական դիրքը Սևանա լճի նկատմամբ [72]:

Արարատյան դաշտում և այն եզրավորող նախալեռնային շրջաններում, ինչպես նաև Շիրակի սարահարթում, գյուղական բնակավայրերի համեմատաբար բարձր մարդաշատությանը նպաստել են ռելիեֆային և կլիմայական նպաստավոր պայմանները, բերրի հողերը, ոռոգման առավել նպաստավոր պայմանները, գյուղատնտեսական հողատեսքերի և վարելահողերի բարձր

տեսակարար կշիռը, ինչպես նաև քաղաքային բնակավայրերի զարգացած ցանցի առկայությունը [72]:

ՀՀ-ում գյուղական բնակավայրերի առավել բարձր մարդաշատությամբ առանձնանում են Արարատի, Կոտայքի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերը: Նշված մարզերում են գտնվում հանրապետության 5000-ից ավելի մարդ ունեցող գյուղերի 76, 4 %-ը: Այս մարզերի մշտական բնակչություն ունեցող 339 գյուղերից մինչև 500 բնակիչ ունեն 44 բնակավայր, իսկ մինչև 200 բնակիչ՝ ընդամենը տասնչորս գյուղ:

ՀՀ-ում գյուղական բնակավայրերի առավել փոքր մարդաշատությամբ առանձնանում է Սյունիքի մարզը: Գյուղերի միջին մարդաշատությունն այստեղ կազմում է ընդամենը 420 մարդ (3.2 անգամ պակաս հանրապետության միջինից): Մարզի գյուղերի 74 %-ն ունեն մինչև 500 բնակիչ:

ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի միջին մարդաշատության և ըստ մարդաքանակի գյուղերի խմբավորման մասին հանգամանալից պատկերացում է տալիս թիվ 10-ը աղյուսակում բերված տվյալները:

Շիրակի և Լոռվա մարզերի միջև գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակի տարբերությունը փոքր է: Այս երկու մարզերում էլ գյուղերի մարդաշատության վրա իրենց կնիքն են թողել ինչպես 1988 թ. երկրաշարժը, այնպես էլ այդ նույն ժամանակ շարունակվող ազգամիջյան հարաբերությունների սրումը: Երկու մարզերում էլ գյուղերի ընդհանուր թվաքանակում գերակշռում են փոքր, միջին և մեծ գյուղերը: Նախորդ չորս մարզերի համեմատությամբ այս մարզերում զգալիորեն փոքր է խոշոր և գերխոշոր գյուղերի բաժինը: Լոռու մարզում այդպիսիք յոթն են, իսկ Շիրակում՝ ընդամենը 6-ը:

Գյուղական տարաբնակեցման ու գյուղերի մարդաշատությամբ առանձնանում է Տավուշի մարզը: Գյուղերի միջին մարդաշատությունն այստեղ փոքր է հանրապետության միջին ցուցանիշից: Գերակշռում են մեծ և միջին մեծության գյուղերը:

Գյուղական բնակավայրի միջին մարդաքանակը ՀՀ միջին ցուցանիշից փոքր է նաև Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում: Սակայն դրանցում գյուղերի միջին մարդաքանակը 2-2,6 անգամ մեծ է Սյունիքից: Արագածոտնում գերակշռում են միջին (501-1000 մարդ), մեծ (1001-3000) և փոքր (201-500 մարդ) գյուղերը, իսկ Վայոց ձորում՝ մեծ, փոքր և մեծ գյուղերը:

ՀՀ-ում ինչպես գյուղական բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման, այնպես էլ գյուղական բնակավայրերի մարդաշատության նկատելի տարբերություններ կան նաև բարձրության տարբեր գոտիների միջև:

**ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի խմբավորումն ըստ մարտաքանակի
(առանց քաղաքային համայնքների մեջ մտնող գյուղերի, 2015թ.)¹**

Մարզերը	Գյուղերի խմբավորումն ըստ մարտաքանակի (մարդ)																								Ընդամենը	
	մինչև 50		51-100		101-200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի		Միլիոնից ցածր		Միլիոնից բարձր		ա	բ				
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ				
Արագածոտն	2	17	3	257	12	1717	22	7264	37	25243	28	44898	8	31324	2	12260	1079	114	122980							
Արարատ	-	-	-	-	1	155	4	889	13	9878	57	110266	13	47291	6	40298	2221	94	208777							
Արմավիր	-	-	-	-	2	327	3	1010	6	4158	62	116828	19	69064	3	19516	2220	95	210903							
Գեղարքունիք	-	-	3	228	9	1370	17	5984	18	11965	19	33600	12	48315	10	66021	1903	88	167483							
Լոռի	3	92	9	659	14	2176	30	9775	17	12982	35	56589	4	13655	3	17556	987	115	113484							
Կոտայք	1	30	-	-	2	272	6	2141	13	9187	28	54476	5	18312	7	42429	2046	62	126847							
Շիրակ	7	165	5	368	10	1356	28	8617	32	23101	36	59211	4	13026	2	15456	978	124	121300							
Սյունիք	9	271	27	2077	21	3088	28	8902	20	13899	11	20520	-	-	-	-	420	116	48757							
Վայոց ձոր	3	56	1	70	5	781	16	5024	5	3814	14	22698	-	-	1	5095	834	45	37538							
Տավուշ	1	8	-	-	1	175	12	4125	16	11124	22	36188	7	25227	-	-	1302	59	76847							
Ընդամենը	26	639	48	3659	77	11417	166	53731	177	125351	312	555274	72	266214	34	218631	1354	912 ²	1234916							

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015», Եր., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Արագածոտնում՝ 2, Արարատում՝ 1, Գեղարքունիքում՝ 4, Լոռիում՝ 1, Շիրակում՝ 4, Սյունիքում՝ 11, Վայոց ձորում՝ 6, Տավուշում՝ 3 գյուղ մշտական բնակչություն չունեն:

ՀՀ-ում գյուղական բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացմանը համեմատ գյուղերի միջին մարդաշատության նվազման կամ ավելացման որոշակի օրինաչափություն չի դիտվում (աղ. 1): Ըստ բարձրության գոտիների գյուղական բնակավայրերի միջին մարդաշատության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ տարածքում գյուղական բնակավայրերի մարդաքանակը կախված է ոչ միայն տարածքի բացարձակ բարձրությունից, այլ նաև տեղանքի մասնատվածության և թեքությունների աստիճանից: Դրանով է պայմանավորված այն իրողությունը, որ 1800-2000 մ բարձրության գոտում գյուղերն ավելի մարդաշատ են, քան ավելի ցածրադիր գոտիներում:

Աղյուսակ 10

ՀՀ գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունն ըստ բարձրության գոտիների (1.01. 2015 թ.)

Բարձրության գոտիները	Բարձրության գոտու տարածքն ընդհանուրից (%) ¹	Գյուղերի ընդհանուր քանակը ²		Բնակչության բաժինը ընդհանուրից %-ներով	Գյուղերի միջին մարդաշատությունը
		Ընդամենը	Բնակչություն չունեցող գյուղեր		
Մինչև 800	2,1	46	-	4.0	1079
801-1000	8.3	197	1	35.0	2190
Մինչև 1000	10.4	243	1	39.0	1979
1001-1200	6.2	75	1	7.8	1279
1201-1400	8.3	77	4	9.5	1521
1000-1400	14.5	152	5	17.3	1402
1401-1600	9.4	142	6	11.5	1003
1601-1800	10.4	134	9	10.7	989
1401-1800	19.8	275	14	22,2	1000
1801-2000	12.8	145	9	15.9	1355
2001-2250	14.6	92	2	5.5	737
2250-ից բարձր	27.9	4	2	0.1	427
Ընդամենը	100.0	912	32	100.0	1354

¹ Սկզբնաղբյուրը՝ Погосян Д. Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Арм. ССР, Е., 1986, стр. 16:

² Ըստ՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով», Ե., 2015 թ.. վիճակագրական ժողովածուի տվյալների:

ՀՀ տարբեր տարածաշրջաններում բարձրության միևնույն գոտու սահմաններում գյուղերի միջին մարդաշատության տարբերությունները շատ մեծ են: Այս երևույթն առավել ցայտուն գծերով է դրսևորվում 1801-2000 մ բարձրության գոտում (աղ. 11): Բարձրության այդ գոտում գյուղական բնակավայրերի բարձր մարդաշատությունը պայմանավորված է հիմնականում, Սևանի մերձլճային հարթություններում ընկած գյուղական բնակավայրերով: Գոտու մնացած տարածքներում գյուղերի միջին մարդաշատությունը 2.3-7.2 անգամ պակաս է Սևանի մերձլճային հարթությունների գյուղերի միջին մարդաշատությունից:

Աղյուսակ 11

Գյուղական բնակավայրերի մարդաշատությունը 1800-2000 մ բարձրության գոտում

Բարձրության գոտում ընկած տարածքները	Գյուղական բնակավայրերի թիվը նշված տարածքներում	Գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակը
1. Ապարանի հարթություն	18	948
2. Սևանի մերձլճային հարթություններ	42	2876
3. Աշոցքի սարահարթ	19	540
4. Արթիկի, Կարմրաշենի և Մարալիկի հրաբխային սարահարթեր	19	1289

* Աղյուսակում տրված են 1800-2000 մ բարձրության գոտու այն տարածքները, որոնք ավելի մեծ մակերես ունեն և աչքի են ընկնում գյուղական բնակավայրերի մեծ թվով:

Հանրապետության տարբեր մարզերում ծովի մակարդակից բարձրության բոլոր գոտիներում գյուղերի միջին մարդաքանակի զգալի տարբերություններ կան: Սյունիքի մարզի 800-1000 մ բարձրության գոտում գյուղերի միջին մարդաշատությունն ավելի քան 10 անգամ զիջում է հանրապետությունում ծովի մակարդակից 801 -1000 մ բարձրության գոտու գյուղերի միջին մարդաշատությանը: Նման օրինակներ կարելի է բերել նաև բարձրության գրեթե բոլոր գոտիներից:

3.4 Գյուղական բնակավայրերի ձևաբանական (մորֆոլոգիական) առանձնահատկությունները և աշխարհագրական դիրքը

Գյուղական բնակավայրերի ձևաբանական բնութագիրը ներառում է բնակավայրերի տեղագրական և հատակագծային առանձնահատկությունները: Մի դեպքում տրվում են բնակավայրերի գոյության արտաքին բնական պայմանները՝ շեշտը դնելով ռելիեֆի տարրերի և շրջապատի մյուս տարրերի նկատմամբ բնակավայրերի գրաված դիրքին: Ուսումնասիրման մյուս կողմը բնակավայրի ներքին կառուցվածքն է (բնակելի տների, տնտեսական և հասարակական կառույցների, սպասարկման ծառայությունների փոխադարձ դասավորությունը): Արտաքին բնական պայմանների և բնակավայրի ներքին կառուցվածքի միաժամանակյա փոխազդեցությամբ ձևավորվում են գյուղական բնակավայրերի ձևաբանական որոշակի տիպեր [66]:

Մինչև այժմ Հայաստանում գյուղական բնակավայրերի ձևաբանական տիպերի բազմազանությունը և դրանց աշխարհագրական տարածումը դեռևս չեն բերված միասնական համակարգի: Ամիրաժեշտ ուշադրություն չի դարձվել բնակավայրերի ձևաբանական առանձնահատկությունների կիրառական նշանակությանը, դրանց գնահատմանը՝ հողաշինարարական և հատակագծման աշխատանքներ կատարելիս:

Գյուղական բնակավայրերի ձևաբանական տիպերը ձևավորվում և զարգանում են սոցիալ-տնտեսական, պատմաազգագրական և բնաաշխարհագրական գործոնների ազդեցության տակ: Տարաբնակեցման այս բնորոշ կողմը ևս պատմական կատեգորիա է:

Բնակավայրերի նյութական ձևերի ձևավորումը և զարգացումը նախ և առաջ պայմանավորված է սոցիալ-տնտեսական պայմաններով: Բնակարանի տիպը, մեծությունը և շինանյութերի տեսակները, բնակավայրում տնտեսական կառույցների առկայությունը, տնտեսության մեծությունն ու բարեկարգման աստիճանը հիմնականում պայմանավորված են արտադրողական ուժերի զարգացման մակարդակով, գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական պայմաններով և մշակութային մակարդակով:

ՀՀ-ում գյուղական բնակավայրերի ձևաբանական առանձնահատկությունները որոշակիորեն պայմանավորված են նաև պատմաազգագրական գործոններով: Նախկինում անընդհատ կրկնվող հարձակումները հնարավորություն չեն տվել որպես գյուղատեղ ընտրել բնակվելու համար հարմար վայրերը: Շատ դեպքերում որպես գյուղատեղ ընտրվել են պաշտպանության

համար նպաստավոր, անմատչելի լեռնալանջերը, ձորերով ու կիրճերով մեկուսացված վայրերը: Դարեր առաջ կառուցված այդ բնակավայրերի մի մասը մինչև օրս մնում է իր տեղում [66]:

Չայաստան աշխարհում բնակավայրերի ձևաբանական բնույթի մեջ էական փոփոխություններ են մտցրել նաև բնակչության ազգային կազմի մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Քրդական և ռուսական գյուղերի առաջացումն ազգագրական նոր տարրեր են մտցրել տարաբնակեցման մեջ, շատ դեպքերում զգալիորեն փոփոխվել են բնակարանի տիպը, փողոցների ու բակերի փոխադարձ դասավորությունը և այլն [72]:

Գյուղական բնակավայրերի ձևավորման ու զարգացման և նրա արտաքին տեսքի վրա զգալի ազդեցություն է թողնում բնակավայրի կողմից այս կամ այն գործառույթի կատարումը: Տնտեսական և սպասարկման որոշ գործառույթներ առարկայանում են նյութական կոնկրետ ձևերում: Տեղական կենտրոններում սովորաբար լինում են հասարակական շենքեր՝ վարչատնտեսական, մշակութային, առողջապահական և այլ հաստատություններ:

Ի վերջո, գյուղական բնակավայրերի ձևաբանական այս կամ այն տիպ առաջանում և զարգանում է կոնկրետ որոշակի բնաաշխարհագրական պայմաններում: Բնակավայրը, կարծես թե, հարմարվում է շրջակա միջավայրին. ռելիեֆի առանձնահատկություններին, միկրոկլիմայական պայմաններին, ջրագրական ու հողաբուսական ծածկին: «Չաշվի առնելով մակերևույթի կառուցվածքը, դիրքադրումը, քամիների ուղղությունները, խոնավությունը, տարվա եղանակների տևողության տարբերությունները, գյուղատնտեսական հողային ուղղածիզ տեղաբաշխումը, խմելու և ոռոգելի ջրերի առկայությունը և դրանց ավելի նպատակահարմար օգտագործելու հնարավորությունները, Չայաստանում բազմաթիվ գյուղեր տեղադրված են քամիներից պաշտպանված գոգհովիտներում, խմելու ջրի (աղբյուրի) շուրջ կամ հոսող ջրի (գետերի, առուների, ջրանցքների) եզրերին և բնության առավել շքեղ ու առողջարար վայրերում», - նշում է Գ. Ավագյանը [3]: Ձանգեզուրի գյուղերի մասին շատ դիպուկ է ասել նշանավոր ազգագրագետ և աշխարհագետ Ս.Լիսիցյանը. «... Ձանգեզուրի գյուղերը խորը մտնում են ձորերի մեջ և կաչում նրանց կողերին: Այս գյուղերում տների մի խոշոր մասը ծիծեռնակի բների պես ծեփված է ձորի կողին առանց որևէ կանոնավորության՝ քմահաճ ելևէջ շավիղներով իրար հետ միացած: Նրանցից շատերն իրենց ետևի կեսերով խրվում են մայր ժայռի մեջ, որպես քարայրներ: Կան և անբողջովին քարայր-

ներ ներկայացնող բնակարաններ՝ քրատակներ» [26]:

ՀՀ-ում ռելիեֆային պայմանների արտակարգ բազմազանության հետևանքով առկա է տեղանքում գյուղական բնակավայրերի տեղադրման բազմազան տիպեր: Ըստ բարձրաչափության դրանք կարելի է ներկայացնել չորս հիմնական խմբերով. 1) *Նախալեռնային հարթությունների և հովիտների գյուղեր*՝ 400-1000 մ բացարձակ բարձրությամբ, 2) *Նախալեռնային գյուղեր*՝ 1000-1600 մ բացարձակ բարձրությամբ, 3) *լեռնային գյուղեր*՝ 1600-2000 մ բացարձակ բարձրությամբ և 4) *բարձր լեռնային գյուղեր*՝ 2000-2300 մ բացարձակ բարձրությամբ:

Գյուղական բնակավայրերի ձևաբանական նկարագիրը բացի նրա տեղագրական առանձնահատկություններից ընդգրկում է նաև բնակավայրի հատակագծային առանձնահատկությունները: Ս.Ա. Կովալյովը հաշվի առնելով այլ հեղինակների առաջարկած սխեմաները և հատակագծման պրակտիկայում ընդունված նորմերը, ինչպես նաև օգտագործելով դաշտային դիտարկումների արդյունքները, նախկին ԽՍՀՄ-ի գյուղական բնակավայրերի համար նշում է 15 հատակագծային տիպեր, որոնք խմբավորել է հետևյալ ձևերի մեջ. 1) պարզ գծային, 2) բարդ գծային, 3) ճառագայթաձև-շրջանային, 4) կուլտավոր (անկանոն կառուցապատում), 5) թաղամասային և 6) ազատ հատակագծեր [164]: Նշված ձևերը, առանց բացառության, տարածված են նաև ՀՀ-ում: Միաժամանակ հանդիպում են նաև մի շարք անցումային և խառը ձևեր, որոնք չեն արտահայտվել վերը բերված սխեմայում: Անցումային և խառը ձևերի առկայությունը բացատրվում է ռելիեֆի խիստ բազմազանությամբ, որը հայաստանում ենթակա է փոփոխության նույնիսկ մեկ գյուղի սահմաններում: Բացի այդ, գյուղական բնակավայրերի հատակագծային դասակարգման ժամանակ կարևոր ցուցանիշ է նաև շինությունների ներքին խտության աստիճանը, քանի որ լեռնային երկրներում մի շարք գործոնների ազդեցության տակ այդ ցուցանիշը տատանվում է բավական լայն սահմաններում: Հայաստանում գյուղական բնակավայրերի շինությունների ավելի մեծ խտությամբ առանձնանում են Արարատյան դաշտի գյուղերը (մինչև 50 մարդ/հա): Շինությունների խտությունը համեմատաբար փոքր է հանրապետության նախալեռնային և լեռնային գոտու գյուղերում: Ամենացածր (15-20 մարդ/հա) խտություն ունեն Վայքի, Ջանգեղուրի և Հյուսիս-արևելքի նախալեռնային և լեռնային գոտու գյուղերը: Հարևան Վրաստանում այն տատանվում է 5-40 մարդ/հա սահմաններում [147]:

Ներքին, հատակագծային կառուցվածքը և տեղադիրքը գյուղական բնա-

կավայրի ձևաբանական բնութագրման կարևոր տարրերն են: Սակայն բնակավայրի ձևաբանական տիպն առաջանում է մի շարք տարրերի միաժամանակյա ազդեցության տակ: Բացի տեղագրական և հատակագծային առանձնահատկություններից, որոնք ունեն որոշիչ նշանակություն բնակավայրի ձևաբանական տիպի առաջացման համար, կարևոր նշանակություն ունեն նաև բնակավայրի մարդաքանակը, գեներտիկական տիպը (հին և նոր գյուղեր), գործառույթային նշանակությունը, բնակարանների և տնտեսական շինությունների տիպը և տեղական նշանակության այլ տարրեր:

Հաշվի առնելով նախորդ հեղինակների (Ն.Ի.Լյալիկովի [169], Ս.Ա.Կովալյովի [164], Մ.Վ. Վիտովի [132], Վ.Ի. Սուխովի [202], Վ.Շ.Ջառշվիլու [147] և այլոց) համանման աշխատանքները և մեր կողմից կատարված քարտեզագրական և դաշտային դիտարկումների արդյունքներն առանձնացրել ենք ՀՀ գյուղական բնակավայրերի ձևաբանական հետևյալ տիպերը:

1. Նախալեռնային հարթություններում և հովիտներում տարածված են գյուղերի ձևաբանական հետևյալ տիպերը:

1. Մեծ, խոշոր և խոշորագույն գյուղեր` թաղամասային հատակագծերով և շինությունների բարձր խտությամբ: Տարածված են առավելապես Արարատյան դաշտում: Կառուցապատման և բարեկարգման համար ունեն լավագույն պայմաններ: Աչքի են ընկնում մարդաշատությամբ: Առանձին գյուղերում կան գյուղատնտեսական հունքի վերամշակման ձեռնարկություններ կամ էլ արդյունաբերական արտադրություններ:

2. Միջին, մեծ, խոշոր և խոշորագույն գյուղեր` անկանոն խմբային հատակագծերով և շինությունների բարձր խտությամբ: Նույնպես տարածված են Արարատյան դաշտում: Գեներտիկորեն հին գյուղեր են: Բազմաթիվ փողոցներն ունեն անենատարբեր ուղղություն, որոնցից մեկն ունի կենտրոնական դիրք, իսկ մնացածները դրա ճյուղավորություններն են: Գյուղերի մեծ մասն ունի 2000-ից ավելի բնակիչ:

3. խոշոր, խոշորագույն և մեծ գյուղեր` փողոցային հատակագծով և շինությունների բարձր խտությամբ: Հանդիպում են Արարատյան դաշտում: Ձգվում են Երևան-Արտաշատ-Արարատ, Երևան-Էջմիածին և մի քանի այլ գլխավոր ավտոճանապարհների երկայնքով: Հիմնական փողոցը, սովորաբար, համընկնում է գլխավոր մայրուղու հետ: Գյուղերն աչքի են ընկնում մարդաշատությամբ (3000-ից ավելի բնակիչ): Գլխավորապես հին գյուղեր են, վերակառուցված վերջին տասնամյակներին:

4. Արարատյան հարթավայրի մեծ և խոշոր գյուղեր` կիսաթաղամասային

հատակագծերով, շինությունների բարձր խտությամբ: Սրանք հիմնականում երիտասարդ գյուղեր են, հիմնադրվել են վերջին վեց տասնամյակների ընթացքում՝ Արարատյան հարթավայրի նոր յուրացվող հողերի վրա: Սկզբնական շրջանում հիմնականում 3-4 հարկանի շենքերով կառուցապատված ավաններն ունեին թաղամասային հատակագծեր, որն այնուհետև որոշ չափով խախտվել է անհատական բնակարանային շինարարությամբ:

5. Հանրապետության հյուսիս-արևելյան շրջանների միջին, մեծ, խոշոր և հաճախ նաև շատ խոշոր գյուղեր՝ անկանոն խմբային և փողոցային հատակագծերով, շինությունների բարձր խտությամբ: Տարածված են ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրություն ունեցող բլրա-հարթավայրային և գետահովտային շրջաններում: Գրեթե յուրաքանչյուր գյուղ առանձնանում է տեղագրական և հատակագծային առանձնահատկություններով, որոնց միավորում է հատակագծային և կառուցապատման նման գծերը և տեղանքի ռելիեֆային պայմաններին հարմարվածությունը:

6. Գետահովիտների և ձորերի փոքր, միջին և մեծ գյուղեր՝ անկանոն - գծային և անկանոն- պարսաձև հատակագծերով և շինությունների միջին խտությամբ: Տարածված են հիմնականում այն նույն շրջաններում, ինչ-որ նախորդը: Գյուղերն ընկած են Աղստև, Դեբեդ, Հախում և Խնձորուտ գետերի և դրանց վտակների հովիտներում: ՀՀ հարավային շրջաններում գյուղերի ձևաբանական այս տիպը հանդիպում է Կապանի և Մեղրու տարաշրջաններում:

II. Նախալեռնային գոտում տարածված են գյուղերի ձևաբանական հետևյալ տիպերը:

7. Սարահարթային հարթ մակերևույթի վրա տեղադրված միջին, մեծ, խոշոր և շատ խոշոր գյուղեր՝ անկանոն փողոցային հատակագծերով և շինությունների բարձր խտությամբ: Տեղանքի ռելիեֆային նպաստավոր պայմանները և արգավանդ սևահողային տարածքների առկայությունը պայմանավորել են գյուղերի զարգացումը և համեմատաբար բարձր մարդաշատությունը: Տարածված են Շիրակի և Լոռվա սարահարթերի մինչև 1600 մ բարձրության հարթ տեղամասերում:

8. Լոռվա սարահարթի միջին և մեծ գյուղեր՝ պարզ և բարդ գծային հատակագծերով, շինությունների միջին խտությամբ: Գյուղերի այս տիպի ձևաբանական առանձնահատկությունը պայմանավորված է ազգագրական գործոններով: Գրեթե բոլոր գյուղերն էլ բնակեցված են ռուսներով, որոնք պահպանել են բնակավայրերի կառուցապատման և հատակագծման ազգա-

յին ավանդույթները:

9. Սարահարթային թուլալիքավոր մակերևույթի վրա տեղադրված մեծ և խոշոր գյուղեր՝ թաղամասային հատակագծերով, շինությունների բարձր խտությամբ: Հիմնականում երիտասարդ բնակավայրեր են, որոնք ստեղծվել են 1950-ական թվականներին մերձերևանյան շրջաններում նոր հողերի յուրացման արդյունքում (սովխոզային ավաններ): Կառուցապատման մեջ գերակշռում են 2-3 հարկանի շենքերը մի քանի ընտանիքների համար: Վերջին 3-4 տասնամյակներում այս բնակավայրերում ընթանում է անհատական բնակարանային շինարարություն: Առավել շատ տարածված են Նաիրիի և Կոտայքի տարածաշրջաններում:

10. Սարահարթային բլրավոր մակերևույթի վրա տեղադրված մեծ և խոշոր գյուղեր՝ առավելապես անկանոն հատակագծերով, շինությունների բարձր խտությամբ: Գերազանցապես հին բնակավայրեր են: Չնայած վերջին տասնամյակներին նշանակալից չափով բարեկարգվել են, սակայն բնակավայրերի հատակագծային և տեղագրական նախկին գծերը գրեթե պահպանվել են, որը պայմանավորված է տեղանքի ռելիեֆային պայմանների բազմազանությամբ: Ամենատարբեր ուղղությամբ ձգվող փողոցներն ու թաղամասերը գյուղերին տալիս են անկանոն տեսք: Տարածման հիմնական շրջաններն են Եղվարդի, Կոտայքի և Արագածոտնի սարահարթերը:

11. Նախալեռնային սարահարթերի փոքր, միջին և մեծ գյուղեր՝ շինությունների միջին խտությամբ: Գյուղերի տեղագրական և հատակագծային առանձնահատկություններով նման է նախորդին: Սակայն գյուղերն այստեղ ավելի փոքր են, ընկած են հիպսոմետրիկ ավելի մեծ բարձրության վրա և շինությունների խտությունն ավելի ցածր է: Ունի տարածման բավական ընդարձակ շրջան: Տարածված են Արագածոտնի, Եղվարդի, Կոտայքի և Շիրակի սարահարթերում:

12. Գետահովիտների և ձորերի լանջերին տեղադրված փոքր, միջին և մեծ գյուղեր՝ անկանոն խմբային հատակագծերով, շինությունների միջին խտությամբ:

Սրանց բնորոշ է շինությունների փոխադարձ դասավորության և հողօգտագործման դարավանդային ձևը: Մի շինության հարթ տանիքը ծառայում է որպես բակ մյուսի համար: Տնամերձներն ընկած են զառիկող լանջերի վրա: Տարածված են ՀՀ տարբեր շրջաններում (Ջանգեզուրում, Վայքի, Եղեգնաձորի, Գուգարքի և այլ տարածաշրջաններում):

III **Լեռնային և բարձր լեռնային շրջանների համար բնորոշ են գյուղերի**

ձևաբանական հետևյալ տիպերը:

13. Սևանի մերձափնյա հարթությունների մեծ, խոշոր և շատ խոշոր գյուղեր՝ անկանոն խմբային և փողոցային հաստակագծերով, շինությունների բարձր խտությամբ:

Գեներտիկական առումով բացառապես հին գյուղեր են, սակայն վերջին հինգ տասնամյակների ընթացքում կրել են զգալի փոփոխություններ: Տեղադրված են ծովի մակարդակից 1950-2100 մ բարձրություններում, Սևանա լճից մի քանի կմ հեռավորության վրա: Աչքի են ընկնում մարդաշատությամբ:

14. Սևանի մերձափնյա շրջանների մեծ, միջին և փոքր գյուղեր՝ անկանոն ցրված հաստակագծերով, շինությունների միջին խտությամբ: Տեղադիրքի տեսակետից նման են նախորդին, սակայն բնակավայրերն ունեն ավելի ցրված տեսք և մարդաշատությամբ զիջում են նրանց: Տարածված են նույն տարածաշրջաններում:

15. Արեգունու լեռնաշղթայի հարավահայաց լանջերի փոքր և միջին գյուղեր՝ անկանոն հաստակագծերով, շինությունների միջին խտությամբ: Տեղադրված են հիմնականում Սևանա լիճ թափվող գետերի ստորին՝ գետաբերանային շրջանում, լճից մինչև 3 կմ հեռավորության վրա: Որպես կանոն ձգվում են գետերի երկայնքով: Գետի հոսանքով դեպի վեր բնակավայրերն ունեն գծային, իսկ ներքին լայնացած մասերում՝ անկանոն խմբային կամ էլ ցրված հաստակագծեր:

16. Բարձրադիր սարահարթերի փոքր, միջին և մեծ գյուղեր՝ հիմնականում անկանոն հաստակագծերով, շինությունների փոքր և միջին խտությամբ: Գյուղերի ձևաբանական այս տիպն ունի տարածման բավական ընդարձակ արեալ (Աշոցքի և Ապարանի սարահարթերում, Շիրակի և Արագածոտնի սարահարթերի բարձրադիր շրջաններում, Սիսիանի տարածաշրջանում):

17. Գետահովիտներում և լեռնահովիտներում տեղադրված միջին, մեծ և խոշոր գյուղեր՝ հիմնականում անկանոն հաստակագծերով, շինությունների միջին և բարձր խտությամբ: ՀՀ-ում առավել տարածված գյուղերի ձևաբանական տիպերից է: Գյուղերը տեղադրված են հիմնականում գետահովտի կամ լեռնահովտի լայնացած մասերում կամ էլ գետի մեջ թափվող վտակների գետաբերանային լայնացած մասերում: Սովորաբար գյուղերն ունեն քամիներից պաշտպանված դիրք, ձգվում են հովտի երկարությամբ: Աշխարհագրական տարածման արեալը բավական ընդարձակ է (Հրազդան, Մարմարիկ, Փամբակ, Գետիկ և այլ գետերի ու դրանց վտակների հովիտներում):

3.5 Տարածքի բնակեցման տիպերը, գյուղական տարածքների ու տարաբնակեցման շրջանացումը

Ցանկացած տարածքի բնակեցվածության աստիճանը պայմանավորված է փոխադարձորեն միմյանց հետ կապված սոցիալ-տնտեսական և բնաաշխարհագրական գործոններով, պատմական անցյալով, տարածքի յուրացվածության աստիճանով և այլ գործոններով: Նշվածներից յուրաքանչյուրը կոնկրետ շրջանում և կոնկրետ ժամանակում կարող է ձեռք բերել վճռական նշանակություն [93]:

Բնակեցման տիպերի առանձնացման համար ընդունված է սահմանափակվել միայն մի քանի կարևոր ցուցանիշներով: Որպես այդպիսիք Ս.Ա. Կովալյովը համարում է. ***1/ շրջանի բնակչության խտությունը, 2/ բնակչության տեղաբաշխման համեմատաբար հավասարաչափությունը կամ օջախայնությունը, 3/ քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը*** [164]: ԳՂ-ում բնակեցման տիպերն առանձնացնելու համար Գ.Ավագյանը որպես լրացուցիչ ցուցանիշ օգտագործել է նաև բնակչության խտությունը գյուղատնտեսական հողատեսքերի և վարելահողերի հաշվով, ինչպես նաև բնակչության բացարձակ թիվը [3]: Դրանց վերլուծության և համադրման միջոցով պարզվել է, որ որպես լեռնային բազմազան մակերևույթ ունեցող երկրի, ԳՂ-ում բնակեցման տիպերը բաշխված են ոչ թե համատարած շրջանների ձևով, այլ մեծ ու փոքր արեալներով: Այդ պատճառով էլ բնակեցման միևնույն տիպը երբեմն հանդես է գալիս հանրապետության շրջանների մեծ մասում կամ նույն շրջանում հանդիպում են բնակեցման տարբեր տիպեր:

ԳՂ-ն աչքի է ընկնում տարածքի բնակեցման բազմաթիվ տիպերով, որոնք ընդհանրացնելով կարելի է առանձնացնել հետևյալ հինգ առավել բնորոշ տիպերը [67] (դրանց առանձնացման համար հիմք ենք ընդունել բնակչության խտությունը, գյուղական բնակավայրերի մարդաբանակը, քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը):

1. Համատարած խիտ բնակեցված շրջաններ՝ առավելապես մեծ և խոշոր գյուղերով, քաղաքային բնակավայրերի զարգացած ցանցով: Հանրապետության ամենախիտ բնակեցված շրջանն է: Ընդգրկում է ամբողջ Արարատյան դաշտը: Այստեղ գյուղատնտեսական հողահանդակների տեսակարար կշիռը հանրապետության միջին ցուցանիշից բարձր է: Գյուղատնտեսությունը մասնագիտացված է աշխատատար և եկամտաբեր մշակաբույսերի (խաղողագործության, բանջարաբուծության և այգեգործության) ուղղությամբ, որոնք պայմանավորել են տարածքի համատարած և խիտ բնակեցումը,


գյուղերի մեծությունը: Բնակեցման այս տիպը զբաղեցնում է 33 տարածքի մոտ 12 %-ը, սակայն այստեղ են ապրում հանրապետության բնակչության մոտ 55 և գյուղական բնակչության 34 %-ը: Աչքի է ընկնում ոչ միայն բնակչության, այլ նաև բնակավայրերի խտությամբ:

2. Համեմատաբար խիտ բնակեցված շրջաններ՝ տարածքի անհավասարաչափ բնակեցումով, խոշոր և մեծ գյուղերով, քաղաքային բնակավայրերի համեմատաբար թույլ զարգացած ցանցով: Այդպիսի շրջաններում գյուղական բնակչության խտությունն ամբողջ տարածքի, գյուղատնտեսական հողատեսքերի և վարելահողերի հաշվով բարձր է 33 միջին ցուցանիշից: Բնակեցման այս տիպը չունի տարածքային միասնություն և տարածված է 33 տարածքի տարբեր շրջաններում, որոնք իրարից տարբերվում են բնաաշխարհագրական պայմաններով և տնտեսության զարգացման ուղղություններով: Ընդգրկում է Աշտարակի, Կոտայքի, Նաիրիի, Գուգարքի և Մարտունու տարածաշրջանները:

3. Լեռնային օջախներով բնակեցման շրջաններ՝ փոքր, միջին և մեծ գյուղերով, քաղաքային բնակավայրերի թույլ զարգացած ցանցով: Տարածված է 33-ի Լեռնային մակերևույթ ունեցող շրջաններում, որոնք առանձնանում են մասնատված ռելիեֆով, բարձրաչափական մեծ տատանումներով և թեքություններով: Այդպիսի շրջաններում փոքր են գյուղատնտեսական հողատարածքների բաժինն ու հողակտորների չափերը, առավել բարձր են արտավայրերի և խոտհարքերի բաժինը: Գյուղական բնակավայրերի ընդարձակման և զարգացման հնարավորությունները սահմանափակ են: Բնակեցման այս տիպը զբաղեցնում է 33-ի տարածքի 27 %-ը, որտեղ ապրում է 33-ի բնակչության 8 և գյուղական բնակչության՝ 13 % -ը: Տարածված է Վայոց Ձորում, Սյունիքի հարավում և 33 հյուսիս-արևելքում:

4. Նոսր բնակեցված շրջաններ՝ հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերով, առանձին շրջաններում քաղաքային բնակավայրերի բացակայությամբ: Զբաղեցնում են 33 տարածքի մոտ 20 %-ը, որտեղ ապրում է երկրի բնակչության ընդամենը 4.0 %-ը: Տարածված է հիմնականում բարձրադիր Լեռնային շրջաններում: Առավել ցայտուն է արտահայտված Աշոցքի և Ապարանի սարահարթերում: Այստեղ բնակեցմանը խոչընդոտող հիմնական գործոն է հանդիսանում կլիման, ինչպես նաև այդ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար ցածր մակարդակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ



Սկ. 8. ԴՊ գյուղական տարաբնակեցման շրջանացումը

5. Կոմպակտ բնակեցված շրջաններ՝ բնակչության և բնակավայրերի միջին խտությամբ, տարբեր մեծության գյուղական բնակավայրերով: Սա ՀՀ-ում բնակեցման առավել շատ հանդիպող տիպն է: Տարածված է Շիրակի և Լոռվա սարահարթերում, Սևանի մերձլճային հարթություններում, Հրազդանի, Նոյեմբերյանի և Սպիտակի տարածաշրջաններում: Բնակեցումը մեծ մասամբ ունի համատարած բնույթ, իսկ առանձին հատվածներում տարածված են նաև բնակեցման խմբային ձևեր:

Այսպիսով, ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ. երկրի տարածքի մոտ 14 %-ը դուրս է մնում բնակեցման շրջանից, 20 %-ը բնակեցված է շատ նոսր (ՀՀ միջին խտությունից մոտ 5 անգամ պակաս), բնակչության ավելի քան կեսն ապրում է ՀՀ տարածքի ընդամենը 12 %-ի վրա: Բնակավայրերն ավելի խիտ և ընդարձակ ցանց են ստեղծել նախալեռնային հարթություններում, լեռնային գոգավորություններում և սարահարթերում: Բնակչության համեմատաբար խիտ կուտակումներով առանձնանում են նաև գետահովիտները և լեռնահովիտները, որտեղ կան հարմար հողատարածքներ երկրագործությամբ զբաղվելու համար:

ՀՀ տարածքն աչքի է ընկնում ոչ միայն բնակեցման, այլ նաև գյուղական տարածքների ու տարաբնակեցման տիպերի բազմազանությամբ, որը ձևավորվել է պատմական երկարատև զարգացման ընթացքում՝ բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական և քաղաքաաշխարհագրական գործոնների ազդեցության տակ:

Մինչև այժմ ՀՀ-ի գյուղական տարածքների ու տարաբնակեցման տիպերի տարբերակված ուսումնասիրություն և դրանց շրջանացում չի կատարվել: Ս.Ա.Կովալյովը ԽՍՀՄ-ի գյուղական տարաբնակեցման աշխարհագրական տարբերություններն ուսումնասիրելիս առանձնացրել է գյուղական տարաբնակեցման 8 հիմնական զոնայական տիպեր և ավելի քան 56 շրջաններ [182], որոնց մեջ 7-ը (լեռնային օջախներով տարաբնակեցում՝ կապված անասնապահության և մանր օջախային հողագործության հետ) և 8-րդը (հարավային լեռնային շրջանների նախալեռնային հարթությունների և լեռնալանջերի ստորին մասերի խիտ տարաբնակեցում, բարձր աշխատատար գյուղատնտեսությամբ, առավելապես ջրովի հողագործությամբ, խաղողագործությամբ և այգեգործությամբ), հանդես են գալիս նաև Հայաստանում: Ընդ որում, նշված զոնայական երկու տիպերի մեջ Կովալյովն առանձնացնում է տարաբնակեցման 11 շրջաններ, որոնցից երեքը բնորոշ են ՀՀ-ի գյուղական

տարաբնակեցման համար (VII... 5. Հարավ-Արևմտյան Անդրկովկասյան միջին գյուղային խոշոր օջախներով տարաբնակեցում, լեռնային սարահարթերում զարգացած երկրագործությամբ, 6. Դարալագյազ-Ղարաբաղյան մանրօջախային, մանրգյուղային, ... VIII... 3. Արարատյան հարթավայրի միջին և խոշոր գյուղային խիտ տարաբնակեցում):

ՀՀ-ում գյուղական տարածքների ու տարաբնակեցման տիպաբանության հարցերին առաջին անգամ անդրադարձել է Հ.Գրգեարյանը, որը ՀՀ-ի համար բնորոշ է համարում գյուղական տարաբնակեցման հետևյալ չորս ձևերը. *1/ լեռնային միջակ գյուղային տարաբնակեցում, 2/ սարավանդային խոշոր գյուղային տարաբնակեցում, 3/ լեռնային մանր գյուղային տարաբնակեցում և 4/ հարթավայրային խոշոր գյուղային տարաբնակեցում* [18]:

Հիմք ընդունելով հանրապետության գյուղական տարաբնակեցման աշխարհագրական տարբերությունները Ս.Դուլյանն առանձնացրել է տարաբնակեցման հետևյալ երեք տիպերը, որոնք կապված են գյուղական բնակչության տնտեսական գործունեության և բնական պայմանների ու ռեսուրսների օգտագործման առանձնահատկությունների հետ. *1/ հարթավայրային՝ զրեթե համատարած և նախալեռնային հովիտների ստորին մասերի խմբային տարաբնակեցում, 2/ սարավանդների խմբային և ցրված տարաբնակեցում, 3/ լեռնահովտային օազիսային, ցրված կամ շղթայանման տարաբնակեցում* [21]:

Սեր կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ՀՀ ոչ մեծ տարածքն աչքի է ընկնում գյուղական տարածքների ու տարաբնակեցման ձևերի և համալիրային (տեղական) տիպերի խիստ բազմազանությամբ, որը պայմանավորված է տարածքի բնաաշխարհագրական պայմանների և տնտեսական գործունեության տարբերություններով: Բնական և տնտեսական պայմանների փոփոխմամբ փոփոխվում են գյուղական բնակավայրերի մեծությունը, դիրքը ռելիեֆային պայմանների նկատմամբ, արտադրական մասնագիտացման ուղղությունը, որի հետևանքով փոփոխության են ենթարկվում նաև գյուղական բնակավայրերի արտաքին տեսքը (տարաբնակեցման ձևը) և արտադրական ուղղությունը: Քանի որ ՀՀ տարածքում գյուղական տարածքների բնաաշխարհագրական և տնտեսական պայմանները փոփոխության են ենթարկվում ոչ միայն մեկ բնալանդաֆտային գոտուց մյուսին անցնելիս, այլ նաև դրանցից յուրաքանչյուրի ներսում, ապա միևնույն բնալանդաֆտային գոտու սահմաններում առանձնանում են գյուղական տարաբնակեցման համալիրային (տեղական) մի քանի տիպեր:

Ընդհանրացնելով ՀՀ գյուղական տարածքների ու տարաբնակեցման

առանձին տարրերի վերլուծության արդյունքները և օգտագործելով ձեռքի տակ եղած փաստական, քարտեզագրական և դաշտային-արշավախմբային դիտարկումների արդյունքները կատարել ենք ՀՀ գյուղական տարածքների ու տարաբնակեցման շրջանացում՝ առանձնացնելով գյուղական տարածքների ու տարաբնակեցման 7 շրջան, տեղական (համալիրային) 37 տիպ և 21 ենթատիպ (նկ. 8): Դրանք առանձնացրել ենք հաշվի առնելով տարաբնակեցման հետևյալ հատկանիշները. *ա/ աշխարհագրական դիրքը և տարաբնակեցման արտաքին պատկերը, բ/ բնակավայրերի մարդաշատությունը, գ/ բնակավայրերի արտադրական մասնագիտացման ուղղությունը, դ/ միջբնակավայրային տրանսպորտային ապահովվածությունը, ե/ բնակեցվածության տիպը [93]:*

1. Արարատյան հարթավայրի և այն եզրավորող նախալեռնային գոտու համատարած տարաբնակեցման շրջան՝ առավելապես մեծ և խոշոր գյուղերով, ոռոգելի հողագործության ինտենսիվ և աշխատատար ծյուղերի զարգացումով, առանձին տեղերում՝ տավարաբուծության հետ զուգակցված:

1. Արարատյան հարթավայրի համատարած-շղթայածև տարաբնակեցում: Տարածված է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասում: Մեծ և խոշոր գյուղերը ձգվում են Արտաշատի ջրանցքի և գլխավոր մայրուղու (Երևան-Արտաշատ-Արարատ) երկայնքով: Շատ հաճախ գյուղերի տարածքներն ձուլվում են իրար՝ առաջացնելով տարաբնակեցման համատարած-շղթայանման արեալ: Բնակավայրերի մեծ մասի համար բնորոշ է բանջարաբուծական-խաղողագործական ուղղությունը: Ունի ընդհանուր տարածքի և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակչության ՀՀ միջինից բավական բարձր խտություն, միջբնակավայրային զարգացած տրանսպորտային ցանց, գյուղական բնակավայրերի սոցիալ-կենցաղային, մշակութային և ծառայությունների այլ տեսակներով համեմատաբար լավ ապահովվածություն:

2. Արարատյան հարթավայրի համատարած հոծ-տարաբնակեցում, տեղ-տեղ բնակավայրերի առավել խիտ կուտակումներով: Գյուղական բնակավայրերի առավել խիտ կուտակումներով առանձնանում են Երևանի հարավային և հարավ-արևմտյան քաղաքամերձ գոտին, Վաղարշապատ, Արմավիր և Մասիս քաղաքների շուրջը՝ 10-15 կմ շառավղային գոտում: Արարատյան հարթավայրի և ամբողջ ՀՀ ամենախիտ բնակեցված շրջանն է: Առավելապես մեծ, խոշոր և խոշորագույն գյուղերն ընկած են իրարից ոչ մեծ հեռավորության վրա՝ կազմելով մեկ ընդհանուր բնակեցված զանգված, միայն

առանձին դեպքերում դրանց միջև հեռավորությունն անցնում է 3-4 կմ-ից: Բնակեցված գրեթե ամբողջ տարածքն օգտագործվում է ոռոգելի հողագործության աշխատատար և ինտենսիվ ճյուղերի (խաղողագործության, այգեգործության և բանջարաբուծության) զարգացման համար: Արտադրական մասնագիտացման և ենթակառուցվածքային տարրերի ապահովվածությամբ մնան է նախորդին:

3. Բլրահարթավայրային տարածքների օջախային-ցրված տարաբնակեցում, տարրեր մեծության գյուղական բնակավայրերով: Ջբաղեցնում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևմտյան հատվածը, Բաղրամյանի տարածաշրջանը և Թալինի տարածաշրջանի հարավային հատվածը: Տարաբնակեցման տեղական տիպի ձևավորման տնտեսական բազան ոռոգելի երկրագործությունն է (խաղողագործություն, այգեգործություն և բանջարաբուծություն) անասնապահության հետ զուգակցված: Տարածքի միասնական տնտեսական օգտագործման և միջբնակավայրային կապերի հաստատման համար կարևոր դեր ունեն Արմավիր-Դալարիկ-Քարակերտ-Գյումրի ավտոճանապարհը և Մյասնիկյան, Դալարիկ, Քարակերտ, Բաղրամյան գյուղերը: Վերջիններս հանդիսանում են օջախային-ցրված տարաբնակեցման արեալի հենակետային բնակավայրեր: Գյուղերի մոտ կեսը ձևավորվել են 1980-ական թվականներին, որոնց սոցիալ-կենցաղային (ջրմուղ, կոյուղագիծ) և մշակութային ծառայություններով ապահովվածությունը դեռևս թույլ է:

4. Նախալեռնային գոտու սարահարթաբլրային գրեթե համատարած տարաբնակեցում: Տարածվում է Արարատյան հարթավայրը հյուսիսից և հյուսիս-արևելքից եզրավորող նախալեռնային գոտում (Եղվարդի, Արագածոտնի և Կոտայքի սարահարթերում): Այստեղ ևս բնակեցված տարածքն օգտագործվում է ոռոգելի հողագործության աշխատատար ու ինտենսիվ ճյուղերի (խաղողագործության, այգեգործության), դաշտավարության և տավարաբուծության զարգացման համար: Հիմնականում մեծ և խոշոր գյուղերը համարյա հավասարաչափ տեղաբաշխված են բնակեցված տարածքում: Անցած տասնամյակներին նոր հողերի յուրացման շնորհիվ հիմնադրվել են բազմաթիվ նոր գյուղեր: Գյուղական բնակչության խտությամբ սա ևս գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը և ունի բնակեցվածության համեմատաբար բարձր աստիճան: Առկա է միջբնակավայրային տրանսպորտային ուղիների համեմատաբար խիտ ցանց, ենթակառուցվածքային տարրերով միջին և բարձր ապահովվածություն: Տարաբնակեցման համալիրային տիպի և միասնական արեալի ձևավորման համար հենակետային դեր ունեն Աբովյան, Աշ-

տարակ, Եղվարդ, Բյուրեղավան, Նոր Հաճն քաղաքները և Գառնի, Գեղաշեն, Արգել, Ջովունի, Նոր Գեղի, Կարբի, Բյուրական և Օշական գյուղերը:

II. Սարավանդային մարզերի խոշոր օջախներով տարաբնակեցման շրջան, տարբեր մեծության գյուղական բնակավայրերով, անասնապահության և երկրագործության տարբեր ճյուղերի զարգացումով:

5. Շիրակի սարահարթի ցրված տարաբնակեցում՝ բնակչության և բնակավայրերի միջին խտությամբ: Բնակեցման համար նպաստավոր հողատարածքներում բնակավայրերը բաշխված են տարածքի տարբեր հատվածներում, որոնք կապված են միմյանց հետ տրանսպորտային ուղիներով և տարածքի միասնական տնտեսական օգտագործումով՝ ստեղծելով տարաբնակեցման միասնական արեալ: Բնակչության խտությունը ՀՀ միջինից բարձր է: Սարահարթերի կենտրոնական շրջանում, որտեղ մակերևույթն առավել հարթ է, բնակավայրերը համեմատաբար ավելի մեծ են, դեպի եզրամասեր գյուղերը փոքրանում են: Դրանց մեծ մասում գյուղատնտեսության առաջատար ճյուղը հացահատիկի մշակությունն է տավարաբուծության հետ զուգակցված: Գյուղական բնակավայրերի սպասարկման և տնտեսական զարգացման վրա նկատելի է Գյումրիի ազդեցությունը: Չնայած դրան, մարզկենտրոնից հեռանալուն համեմատ մեծանում են գյուղերի սոցիալական, մշակութային, կենցաղային սպասարկման և տնտեսաարտադրական զարգացման խնդիրները:

6. Բարձրադիր սարավանդային շրջանների ցրված տարաբնակեցում, առավելապես փոքր և միջին մեծության գյուղերով, անասնապահության և դաշտավարության տարբեր ճյուղերի զարգացումով: Տարածված է Ապարանի և Աշոցքի բարձրադիր սարահարթերում, որտեղ գյուղատնտեսական հողատարածքների կազմում վարելահողերի հետ միասին զգալի տարածք են զբաղեցնում բազմանյա խոտհարքերը և արոտավայրերը: Ձևավորվել է տարաբնակեցման ոչ խիտ ցանց: Առանձնանում է Աշոցքի սարահարթը, որը հանրապետության ամենանոսր բնակեցված շրջաններից է: Չկան քաղաքային բնակավայրեր, գյուղական բնակավայրերի մեջ մեծ թիվ են կազմում 201-500 և մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերը: Ապարանի սարահարթում՝ Աշտարակ-Ապարան-Վանաձոր գլխավոր ճանապարհի, միջբնակավայրային տրանսպորտային ավելի խիտ ցանցի, մայրաքաղաքի և Ապարան քաղաքի ազդեցության շնորհիվ, գյուղերն ունեն տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման և սպասարկման ավելի լայն հնարավորություններ: Գյուղերն ավելի մարդաշատ են, քան առավել բարձրադիր և տնտեսաաշխարհագրական ոչ այնքան բարենպաստ դիրք ունեցող Գյումրու տնտեսա-

կան, սոցիալական, մշակութային սպասարկման ներուժից սահմանափակ չափով օգտվելու հնարավորություն ունեցող Աշոցքի սարահարթի գյուղերը:

Տարաբնակեցման համալիրային այս տիպի մեջ հստակորեն առանձնանում են երեք ենթատիպեր, որոնք կազմելով մեկ ընդհանրություն, միմյանցից տարբերվում են տարաբնակեցման ենթատիպի աշխարհագրական դիրքով և տեղադիրքով, գյուղերի միջին մարդաշատությամբ, միջբնակավայրային տրանսպորտային ուղիների, սոցիալ-կենցաղային և մշակութային սպասարկման ծառայությունների զարգացման մակարդակով:

7. Սարահարթաբլրային ցրված տարաբնակեցում, առանձին շրջաններում բնակավայրերի խմբային օջախներով, տարբեր մեծության գյուղական բնակավայրերով, անասնապահության և դաշտավարության տարբեր ճյուղերի զարգացումով: Ընդգրկում է Արագածոտնի սարահարթը, ինչպես նաև Շիրակի սարահարթի բարձրադիր՝ սարահարթաբլրային շրջանները: Գյուղական բնակավայրերը ցրված են տարածքի տարբեր հատվածներում, առանց որևէ կանոնավորության: Հաճախ բնակեցված տարածքներն ընդհատվում են բնակեցման համար անհարմար լեռնային մասնատված տեղամասերով, որի հետևանքով դժվարանում է կապը բնակավայրերի միջև: Գերակշռում են 501-1500 մարդ ունեցող գյուղերը, որոնք մասնագիտացված են հացահատիկայինների, տավարաբուծության, ոչխարաբուծության, բանջարաբուստանային մշակաբույսերի, իսկ համեմատաբար ցածրադիր շրջաններում՝ նաև այգեգործության ճյուղերով: Զարգացման ավելի մեծ հնարավորություններ ունեն Աշտարակ-Թալին-Գյումրի և Ապարան-Արթիկ-Գյումրի ավտոճանապարհների երկայնքով և դրանց մերձակայքում ընկած գյուղական բնակավայրերը (Աշնակ, Մաստարա, Կաթնաղբյուր, Դավթաշեն, Մեծ և Փոքր Մանթաշ և այլն), որոնց վրա որոշակի ազդեցություն ունեն նաև Արթիկ, Մարալիկ և Թալին քաղաքները: Ինչպես նախորդում, այստեղ ևս առանձնանում են տարաբնակեցման համալիրային տիպի ենթատիպեր, որոնք չորսն են:

III. Լռոռի-Փամբակի ցրված, տեղ-տեղ բնակավայրերի խմբային կուտակումներով տարաբնակեցման շրջան, տարբեր մեծության գյուղական բնակավայրերով, հիմնականում տավարաբուծության, կարտոֆիլագործության և հացահատիկային տնտեսության մասնագիտացմամբ:

8. Լռովա սարահարթի ցրված տարաբնակեցում, առանձին շրջաններում բնակավայրերի առավել խիտ ցանցով: Ընդգրկում է Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջանները: Առավելապես մեծ, միջին և փոքր գյուղական բնակավայրերը տեղաբաշխված են հիմնականում Չորագետի և

նրա վտակների երկայնքով, որոնք մասնագիտացված են տավարաբուծությամբ, կարտոֆիլի և հացահատիկայինների մշակությամբ: Գյուղական բնակավայրերի զարգացման համար իր դերն ունի Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհը, որից հեռանալուն համեմատ նվազում է բնակավայրերի միջին մարդաշատությունը, միջբնակավայրային կապերի զարգացման մակարդակը և տարածքի բնակեցվածության աստիճանը: Տարաբնակեցման համալիրային միասնական տիպի ձևավորման և զարգացման համար հենակետային դեր ունեն Ստեփանավան և Տաշիր քաղաքները, ինչպես նաև և Գյուլագարակ և մի քանի այլ գյուղեր: Առանձնանում են տարաբնակեցման համալիրային տիպի երկու ենթատիպ՝ Տաշիրի և Գյուլագարակի:

9. Շիրակամուտի գոգավորության ցրված տարաբնակեցում: Ընդգրկում է հիմնականում Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների տարածքը: Մեծամասամբ մեծ և միջին մեծության գյուղերը ցրված են գոգավորության տարբեր մասերում՝ մշակության համար նպաստավոր հողակտորների մերձակայքում՝ կարտոֆիլագործության, հացահատիկայինների, բոստանային մշակաբույսերի և անասնապահության տարբեր ճյուղերի զարգացումով: Տարաբնակեցման համալիրային տիպի ձևավորման համար հիմնական դեր են կատարում Փամբակի հովիտը և գոգավորությունը՝ ստեղծելով գետավազանային տարաբնակեցման տիպիկ օրինակ, իսկ սոցիալ-տնտեսական գործոններից՝ Գյումրի-Սպիտակ-Վանաձոր, Վանաձոր-Դիլիջան և Վանաձոր-Թումանյան ավտոճանապարհը, Վանաձոր և Սպիտակ քաղաքները, Գուգարք տարածաշրջանային կենտրոնը և Շիրակամուտ գյուղը: Ընդգրկում է երկու ենթատիպ՝ Գուգարքի և Սպիտակի:

10. Ստորին Փամբակ-Դեբեդի առանձին օջախներով տարաբնակեցում, միջին, մեծ, իսկ առանձին դեպքերում նաև խոշոր բնակավայրերով: Տարածված է Փամբակի ստորին հոսանքի շրջանից մինչև Դեբեդի վերին և միջին հոսանքի շրջանը՝ Դեբեդի կանյոնին զուգահեռ նեղ գոտիով տարածվող Օծունի, Աքորիի, Սանահինի, Հաղպատի և լավային այլ սարավանդներում, որոնք ունեն սեղանաձև մակերևույթ և ծածկված են լեռնային սևահողերով: Նշված տարածքներում ձևավորվել են գյուղական բնակավայրերի խմբային օջախներ՝ հացահատիկի, կարտոֆիլագործության և անասնապահության ճյուղերի զարգացումով: Ռելիեֆի մասնատվածության և բարձրաչափական միջերի բավական մեծ տարբերությունների պատճառով գյուղական բնակչության խտությունը և գյուղերի միջին մարդաշատությունը (բացառությամբ

Օձուն, Դսեղ, Աքորի և Շնող գյուղերի) մեծ չէ: Հենակետային դեր ունեն Օձուն գյուղը, Թունանյան և Ալավերդի քաղաքները: Գյուղական բնակավայրերի մեծ մասի համար բնորոշ է սոցիալ-ժողովրդագրական լարված իրավիճակը: Առանձնանում են գյուղական տարաբնակեցման համալիրային տիպի երեք ենթատիպ:

IV Միջլեռնային գոգավորությունների, լեռնահովիտների և հարթությունների տարաբնակեցման շրջան, հիմնականում մեծ և խոշոր գյուղերով, անասնապահության և բուսաբուծության տարբեր ճյուղերի զարգացումով: Ընդգրկում է Սևանի գոգավորության մերձլճային շրջանները և Մարմարիկի հովիտն ու մերձակա տարածքները:

11. Սևանի մերձլճային հարթությունների շրթայածև-աղեղնածև տարաբնակեցում, առանձին հատվածներում բնակավայրերի խմբային օջախներով, առավելապես խոշոր, մեծ և միջին մեծության գյուղերով: Տարածվում է Սևանա լճից հարավ և հարավ-արևելք ընկած հարթություններում և բլրահարթավայրային տարածքներում, ավելի քան 40 կմ երկարությամբ և 10-20 կմ լայնությամբ՝ առաջացնելով տարաբնակեցման շրթայածև-աղեղնածև արեալ: Տարաբնակեցման մեջ աչքի ընկնող դեր ունեն խոշոր և գերխոշոր բնակավայրերը, որոնք մասնագիտացված են տավարաբուծության, ոչխարաբուծության, հացահատիկի և կարտոֆիլի մշակությամբ: Տարաբնակեցման միասնական արեալի ձևավորման համար հենակետային դերն ունեն մարզկենտրոն Գավառը, Մարտունի և Վարդենիս քաղաքները, Սևան-Գավառ-Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհը և Վարդենիկ, Գեղիովիտ Սարուխան, Լիճք, Ներքին Գետաշեն գերխոշոր գյուղերը: Առանձնանում են Կարմիրգյուղ-Վարդենիկի և Մասրիկի ենթատիպերը:

12. Սևանի հյուսիս-արևմտյան ափերի շրթայածև-ցրված տարաբնակեցում, մեծ և միջին մեծության գյուղերով, անասնապահության և դաշտավարության տարբեր ճյուղերի զարգացումով: Բնակավայրերն ընկած են Սևանա լճի ափամերձ տարածքներում՝ Ծովագյուղից մինչև Նորատուս գյուղը, առաջացնելով տարաբնակեցման շրթայածև արեալ: Մակերևութում բլրահարթավայրային տարածքների գերակշռությունը նվազեցնում է գյուղերի զարգացման և ընդարձակման հնարավորությունները: Բնակավայրերն ընկած են գլխավոր ավտոճանապարհի անմիջական մերձակայքում, որը հիմնական դեր է կատարում դրանց զարգացման և սպասարկման համար:

13. Սևանի արևելյան ափերի շրթայածև տարաբնակեցում, հիմնականում միջին մեծության գյուղերով, տավարաբուծության, ոչխարաբուծության և

դաշտավարության առանձին ճյուղերի զարգացումով: Բնակավայրերն ընկած են Արեգունու և Սևանի լեռնաշղթաների դեպի լիճն իջնող լանջերի այն հատվածներում, ուր կան քիչ թե շատ հարմար հողատարածքներ դաշտավարությամբ, իսկ մերձակա շրջաններում՝ անասնապահությամբ զբաղվելու համար: Մշակելի հողատարածքների համեմատաբար փոքր մակերեսները, տեղանքի թեքությունները, բնակավայրերի սահմանամերձ կարգավիճակը, թույլ ուրբանացումը, տարածաշրջանային զարգացած կենտրոնի բացակայությունը և մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությունը նվազեցնում են գյուղերի զարգացման հնարավորությունները:

Գյուղերի մեծ մասի բնակչությունն Ադրբեջանից բռնագաղթվածներ են: Այդպիսի գյուղերի համար լուրջ հիմնախնդիր է կոմունալ-կենցաղային, կրթաառողջապահական և սոցիալ-մշակութային սպասարկման ցածր մակարդակը և միջբնակավայրային թույլ կապը:

14. Մարմարիկ-Յրազդանի գետահովտային շրթայածև տարաբնակեցում, միջին և մեծ գյուղերով, առավելապես անասնապահության և դաշտավարության ճյուղերի զարգացումով: Ձգվում է Մարմարիկի հովտի երկայնքով (վերին հոսանքից մինչև գետաբերանային շրջան), ինչպես նաև Յրազդանի վերին հոսանքի շրջանում՝ Վարսեր գյուղից մինչև Ջրառատ գյուղը: Գյուղերն ընկած են հիմնականում Մարմարիկի հովտի լայնացած մասերում և Յրազդանի հովտի մերձակայքում, ուր թեքությունները մեծ չեն, կան ընդարձակ վարելահողային տարածքներ (Յրազդան քաղաքից մինչև Յանքավան գյուղը ձգվող ավտոճանապարհի և քաղաքի անմիջական մերձակայքում): Յեռանկարում դրանց զարգացմանը մեծապես կնպաստի Մարմարիկի հովտի ռեկրեացիոն ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը, զբոսաշրջության և ծառայությունների ոլորտի զարգացումը:

V. ԴԴ հյուսիս-արևելքի նախալեռնային հարթությունների և հովիտների ստորին հատվածների առանձին օջախներով խմբային և ցրված տարաբնակեցման շրջան, առավելապես մեծ, միջին, հաճախ նաև խոշոր գյուղերով, այգեգործության, դաշտավարության և անասնապահության տարբեր ճյուղերի զարգացումով: Ընդգրկում է Տավուշի մարզի ամբողջ տարածքը, Թունանյանի տարածաշրջանի հյուսիս-արևելյան հատվածը և Գետիկի միջին և ստորին հոսանքի շրջանները:

15. Խնձորուտ-Ոսկեպարի ցրված տարաբնակեցում, առանձին տեղերում խմբային տարաբնակեցման օջախներով: Ընդգրկում է Խնձորուտ և Ոսկեպար գետերի միջև ընկած տարածքը: Ռելիեֆային պայմանների և ան-

տառապատվածության պատճառով գյուղերն ընկած են հիմնականում Աղստև, Տավուշ, Հախում, Խնձորուտ, Ոսկեպար և այլ գետերի հովտային և հարակից տարածքների ցածրադիր շրջաններում: Դրանց մեծ մասին բնորոշ են այգեգործության, խաղողագործության, ծխախոտագործության, կարտոֆիլագործության և դաշտավարության այլ ճյուղերի զարգացումը տավարաբուծության հետ զուգակցված: Տարածաշրջանային առումով մեծ թիվ են կազմում սահմանամերձ բնակավայրերը, որը ժամանակակից աշխարհաքաղաքական պայմաններում խոչընդոտում է բնակավայրերի զարգացմանը: Մարզկենտրոն Իջևանից և Բերդ քաղաքից բացի տարաբնակեցման միասնական արեալի համար հենակետային դեր ունեն մաս Աշաջուր, Գանձաքար, Այգեհովիտ, Սևքար, Արծվաբերդ, Մոսեսագեղ և Վերին Կարմիր աղբյուր գյուղերը, ինչպես նաև Իջևան-Բերդ և Իջևան-Նոյեմբերյան ավտոճանապարհները: Առանձնանում են գյուղական տարաբնակեցման հինգ ենթատիպ, որոնք միմյանցից տարբերվում են բացառապես աշխարհագրական դիրքով և տեղադիրքով, իսկ տարաբնակեցման տեղական տիպին բնորոշ մնացած հատկանիշներով նման են միմյանց:

16. Կոթի-Բագրատաշենի բլրահարթավայրային ցրված տարաբնակեցում, այգեգործության և տավարաբուծության ճյուղերի զարգացումով: Տարածվում է Նոյեմբերյանի տարածաշրջանում և Թումանյանի տարածաշրջանի հյուսիս-արևելքում: Մեծ, միջին և խոշոր գյուղերը տարածված են բլրահարթավայրային մակերևույթի տարբեր մասերում՝ առաջացնելով տարաբնակեցման ոչ խիտ ցանց: Առանձին գյուղերի սահմանամերձ դիրքը, իսկ մյուսների համար՝ տարածքի աննպաստ պայմանները խոչընդոտում են բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Տարաբնակեցման համալիրային տիպի ձևավորմանը նպաստում են միջպետական ճանապարհի Իջևան-Նոյեմբերյան-Բագրատաշեն հատվածը, Նոյեմբերյան և Այրում քաղաքները, Կողբ, Կոթի, Բագրատաշեն և Բերդավան հենակետային նշանակություն ունեցող գյուղերը:

VI. Դահնակ - Վայքի առանձին օջախներով տարաբնակեցման շրջան, հիմնականում փոքր և միջին մեծության գյուղական բնակավայրերով, անասնապահության և երկրագործության տարբեր ճյուղերի զարգացումով:

17. Արփայի գոգահովտի և հարակից սարավանդային տարածքների ցրված տարաբնակեցում, հիմնականում մեծ և միջին մեծության գյուղական բնակավայրերով: Ջբաղեցնում է Արփայի միջին հոսանքի շրջանը: Գյուղերն ընկած են Արփայի հովտի դարավանդային լայնացած մասերում և հարակից

սարավանդային տարածքներում: Ազրոկլիմայական նպաստավոր պայմանների շնորհիվ գյուղերում զարգացած են ոռոգելի երկրագործության ճյուղերը (խաղողագործությունը, այգեգործությունը) և անասնապահությունը: Տարածքի մասնատվածության, հողակտորների ոչ մեծ չափերի պատճառով բնակավայրերի ընդարձակման և զարգացման հնարավորությունները սահմանափակ են: Միջբնակավայրային կապերն առավելապես իրականացվում են գլխավոր ավտոմայրուղու միջոցով: Վերջինիս նկատմամբ ունեցած հեռավորությունը և տրանսպորտային մատչելիությունն էական դեր ունեն գյուղերի զարգացման և սպասարկման համար: Տարածքի բնակեցվածության աստիճանը բարձր չէ, սակայն ըստ գյուղատնտեսական հողատարածքների գյուղական բնակչության խտությունը բարձր է 33 միջինից՝ գյուղատնտեսական հողատարածքների ցածր տեսակարար կշռի պատճառով: Միջբնակավայրային կապերի և տարաբնակեցման միասնական արեալի ձևավորման համար կարևոր դեր ունի Եղեգնաձոր մարզկենտրոնը:

18. Շատին-Աղնջաձորի շրթայածև տարաբնակեցում, հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերով: Բնակավայրերն ընկած են Սելիմի գոգավորության տարբեր մասերում՝ ստեղծելով տարաբնակեցման Շատին-Աղնջաձոր շրթայածև արեալը: Գյուղերի արտադրական մասնագիտացման մեջ գերակշռում է ոչխարաբուծության ճյուղը, որը զուգակցվում է այգեգործության և մեղվաբուծության հետ: Տարածված է Եղեգնաձորի տարածաշրջանի ավելի բարձրադիր տարածքներում, հասնելով մինչև 2100-2200 մ բարձրությունները: Բնակավայրերի զարգացման համար նկատելիորեն թույլ են գլխավոր ավտոմայրուղու և մարզկենտրոնի ազդեցությունը: Դրանց զարգացման համար կարևոր դեր կարող են խաղալ Սելիմի լեռնանցքով անցնող ճանապարհը և այս շրջաններում զբոսաշրջային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

19. Եղեգիսի գոգավորության շրթայածև-ցրված տարաբնակեցում, առավելապես փոքր և միջին մեծության գյուղերով: Նախորդի համեմատությամբ տարաբնակեցման արեալն այստեղ ավելի ընդարձակ է և տարածված է Շատինից մինչև Գետիկվանք: Արտադրական մասնագիտացման առումով նման է նախորդին: Բնակավայրերն ունեն լեռնային և բարձրլեռնային տեղադիրք: Տարաբնակեցման տեղական տիպի ձևավորման համար հենակետային դեր ունի Շատին գյուղը, որը նաև կապող օղակ է տարաբնակեցման այս և նախորդ տիպերի միջև: Այստեղ ևս բնակավայրերի հեռանկարային զարգացման համար կարևոր դեր կարող է ունենալ զբոսաշրջային

ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը:

20. Արփայի վերին հոսանքի ցրված տարաբնակեցում, առավելապես փոքր և միջին մեծության գյուղերով: Տարածված է Վայքի տարածաշրջանի հյուսիս արևելքում: Ռելիեֆի ձևերի բազմազանության, սելավային ու սողանքային երևույթների տարածման պատճառով քիչ են բնակեցման համար հարմար տարածքները: Բնակավայրերն ընկած են ընդարձակ տարածքի տարբեր մասերում՝ առաջացնելով տարաբնակեցման բավական նոսր ցանց: Գյուղերը մասնագիտացված են հիմնականում անասնապահական ուղղությամբ: Ըստ տարածաշրջանային նշանակության դրանց մի մասը սահմանամերձ բնակավայրեր են և ունեն լեռնային, հաճախ նաև բարձրլեռնային տեղադիրք: Միջբնակավայրային կապը թույլ է, այն առավելապես իրականացվում է գլխավոր ավտոմայրուղու միջոցով: Հենակետային բնակավայրի դեր ունեն Վայք և Ջերմուկ քաղաքները:

21. Զահուկի վերնագավառի ցրված տարաբնակեցում, հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերով: Ընդգրկում է համեմատաբար փոքր տարածք: Միջբնակավայրային կապերը զարգացած չեն և խոչընդոտում են տարածքի միասնական տնտեսական օգտագործմանն ու տարաբնակեցման համալիրային տիպի զարգացմանը: Ոչխարաբուծության և տավարաբուծության հետ միաժամանակ բնակավայրերի արտադրական գործունեության մեջ որոշակի դեր ունեն նաև այգեգործությունն ու մեղվաբուծությունը:

VII. Զանգեզուրի օջախային և ցրված տարաբնակեցման շրջան, առավելապես փոքր, միջին և մանր գյուղական բնակավայրերով, երկրագործության և անասնապահության տարբեր ճյուղերի զարգացումով:

22. Որոտանի վերին հոսանքի շղթայածև-ցրված տարաբնակեցում, փոքր և միջին մեծության գյուղերով, տավարաբուծության և ոչխարաբուծության մասնագիտացումով: Ընդգրկում է Գորայք-Սպանդարյան շղթայածև գոտին: Գյուղերն ընկած են ծովի մակարդակից 2000-2150 մ բարձրությունների վրա, գլխավոր ավտոմայրուղու երկարությամբ կամ դրա անմիջական մերձակայքում: Վերջինս հանդիսանում է տարաբնակեցման ենթատիպի ձևավորման հիմնական նախադրյալը:

23. Անգեղակոթ-Ցղունի գետավազանային ցրված տարաբնակեցում, փոքր, միջին և մեծ գյուղերով, հացահատիկային տնտեսության և անասնապահության մասնագիտացումով: Ընդգրկում է Սիսիան և Այրիգետ գետերի ավազանների տարածքում ընկած գյուղական բնակավայրերը, ինչպես նաև

Նորավան, Վաղատին և Որոտան գյուղերը: Սրա մեջ մտնող **Շամբ-Շենաթաղի տարաբնակեցման ենթատիպը** ընդգրկում է Սիսիանի տարածաշրջանի հարավ-արևելյան հատվածի վեց գյուղերը (Շամբ, Լծեն, Դարբաս, Գետաթաղ, Լոր, Շենաթաղ), որոնք ևս ունեն առավելապես անասնապահական մասնագիտացում:

24. Խոզնավար-Կոռնիծորի սարահարթա-բլրային տարաբնակեցում, առավելապես մեծ գյուղերով, հացահատիկային տնտեսության և անասնապահության մասնագիտացումով: Ընդգրկում է Տեղի և Եռաբլրի բլրահարթավայրային տարածքները, որոնք ունեն քիչ թե շատ նպաստավոր պայմաններ երկրագործության և անասնապահության վերը նշված ճյուղերի և գյուղական բնակավայրերի զարգացման համար:

25. Խնձորեսկ-Վերիշեն-Չարժիս-Չալիծորի սարահարթա-բլրային ցրված տարաբնակեցում, առավելապես մեծ գյուղերով, հացահատիկայինների, անասնապահության և այգեգործության ճյուղերի մասնագիտացումով: Տարաբնակեցման տեղական տիպի հատկանիշներով նման է նախորդին:

26. Տաթև-Սվարանցի խմբային տարաբնակցում, փոքր և միջին գյուղերով, երկրագործության և անասնապահության տարբեր ճյուղերի զարգացումով: Ընդգրկում է Որոտանի միջին հոսանքի աջափնյա հատվածը, Քաշունի գետի միջին և ստորին հոսանքի շրջանները: Տարաբնակեցման համալիրային տիպի ձևավորման բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական նախադրյալների առումով նման է Գորիսի տարածաշրջանի գյուղական տարաբնակեցման համալիրային մյուս տիպերին:

27. Ողջիի գետահովտային շղթայածև տարաբնակեցում, փոքր և մանր գյուղերով, անասնապահության և երկրագործության ճյուղերի զարգացումով: Բացի երկրագործության համար օգտագործվող Ողջիի հովտից ընդգրկում է նաև գետափնյան դարավանդային, անտառազուրկ տարածքները և ավելի բարձրադիր շրջանների խոտհարքներն ու արոտները: Գյուղական բնակավայրերի միջև հիմնական կապող օղակը Կապան-Քաջարան ավտոճանապարհն է: Այստեղ գտնվող Կաթնառատ և Փուխրուտ գյուղերը ձմեռային ամիսներին բնակեցված չեն լինում:

28. Գեղիի գետահովտային տարաբնակեցում, փոքր և մանր գյուղերով, տավարաբուծության, մեղվապահության և երկրագործության որոշ ճյուղերի զարգացումով: Տարաբնակեցման բնույթով հիմնականում կրկնում է նախորդին: Միջբնակավայրային համեմատաբար թույլ կապերի զարգացմանն առաջիկայում կարող է նպաստել Աջաբաջում բացված հանքավայրի շահա-

գործումը: Այստեղ ևս կան ժամանակավոր բնակչություն չունեցող գյուղեր: Տարաբնակեցման տեղական այս տիպի ենթատիպ է կազմում Վերին և Ներքին Գիրաթաղ գյուղերը և հարակից տարածքները, որոնք ունեն ավելի թույլ կապ Գեղիի հովտի մնացած բնակավայրերի հետ:

29. Կապանի գոգավորության (Սյունիք-Վաչագան-Շղարշիկի) ճառագայթածն-ցրված տարաբնակեցում, հիմնականում փոքր գյուղերով, այգեգործության, անասնապահության և բանջարաբուծության ծյուղերի զարգացումով: Տարաբնակեցման տեղական տիպը ձևավորվել է Կապանից առավելագույնը 5-6 կմ շառավղային գոտու տարածքում: Բոլոր գյուղերը Կապանի հետ ունեն ճոճանակային-միգրացիոն կապ և սպասարկվում են հիմնականում վերջինիս կողմից:

30. Աճանան-Քաշունիի գետավազանային տարաբնակեցում, փոքր գյուղերով, հիմնականում անասնապահության ծյուղերի զարգացումով: Այստեղ առանձնանում են Նորաշենիկ-Տանձավեր-Աղվանիի և Ուխտավայր-Անտառաշատ ենթատիպերը: Սրանք միմյանցից տարբերվում են տարաբնակեցման արտաքին բնույթով, ինչպես նաև բնակավայրերի տնտեսական զարգացման առումով: Տարաբնակեցման միասնական համալիրի ձևավորման համար հիմնական դեր կարող է կատարել բարեկարգվող Տանձավեր-Տաթև ավտոճանապարհը, որն ապահովում է նաև կապը մարզկենտրոնի հետ:

31. Արծվանիկի շառավղային-ճառագայթածն տարաբնակեցում, փոքր և միջին գյուղերով, հիմնականում անասնաբուծության ծյուղերի (տավարաբուծություն) զարգացումով: Տարաբնակեցման տիպի ձևավորման համար հիմնական դեր ունեն Գորիս-Կապան ավտոմայրուղին, Արծվանիկ և Դավիթ Բեկ գյուղերը: Արծվանիկից ճառագայթածն դուրս եկող ճանապարհների ուղղությամբ ընկած են տարաբնակեցման տեղական տիպ ձևավորող գյուղական բնակավայրերի խումբը:

32. Բարգուշատի լեռնաշղթայի հարավային մասի օջախային տարաբնակեցում, փոքր գյուղերով, հացահատիկայինների, տավարաբուծության և մեղվաբուծության զարգացումով: Տարաբնակեցման տիպի համար հենակետային դեր ունի Եղվարդ գյուղը, որը ավտոճանապարհով կապված է ԼԴՅ Քաշաթաղի շրջանի հետ:

33. Շիկահող-Ճավի շղթայածն-ցրված տարաբնակեցում, փոքր գյուղերով, տավարաբուծության և բանջարաբուծության զարգացումով: Ընդգրկում է 5-6 գյուղ: Տարաբնակեցման համալիրային տիպն ավելի կամբողջանա նորակառույց Կապան-Մեղրի ավտոճանապարհի շնորհիվ: Ներքին Հանդ

գյուղով կապ կա ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Կովսական բնակավայրի հետ:

34. Տաշտուն-Լիճքի փոքր-օջախային տարաբնակեցում: Տարաբնակեցման այս փոքր օջախն ընկած է Մեղրու տարածաշրջանի առավել բարձրադիր հատվածում՝ ծովի մակարդակից 1750-2000 մ բարձրությունների վրա և ընդգրկում է ընդամենը երկու գյուղ՝ Լիճքը և Տաշտունը: Վերջիններս ունեն առավելապես անասնապահական արտադրական ուղղվածություն՝ բանջարաբուծության և մեղվաբուծության հետ զուգակցված: Բնակավայրերի և տարաբնակեցման արեալի ձևավորման և զարգացման համար իր դերն ունի Քաջարան-Մեղրի ավտոճանապարհը:

35. Ալվանք-Նոնաձորի օջախային-շղթայաձև տարաբնակեցում: Ընդգրկում է Մեղրու տարածաշրջանի հարավային, առավել ցածրադիր շրջանները. Շվանիձոր և Նոնաձոր գետակների հովիտները, ինչպես նաև Մերձարաքսյան տարածքները: Մեղմաթեք լանջերի յուրացման և էրոզիոն գործընթացների դեմ պայքարելու շնորհիվ ստեղծվել են մերձարևադարձային մշակաբույսերի աճեցման համար նախադրյալներ: Բնակավայրերի զարգացման համար կարևոր դեր ունի Արաքս գետը: Հեռանկարում այդ գործընթացին էապես կարող է նպաստել նաև նոր կառուցված Մեղրի-Կապան ավտոճանապարհը, որն ունի տարանցիկ նշանակություն:

36. Թխկուտ-Լեհվազի շղթայաձև տարաբնակեցում: Տարաբնակեցման համալիրային այս տիպի համար առանցքային նշանակություն ունի Քաջարան-Մեղրի միջպետական նշանակության ավտոմայրուղին: Բնակավայրերի արտադրական զարգացման մեջ հիմնական դեր ունեն այգեգործությունը, պտղաբուծությունը և այծաբուծությունը: Մշակելի հողակտորների փոքր չափերը, տարածքի մասնատվածությունը, թեքությունները և էրոզիոն գործընթացները սահմանափակում են գյուղական բնակավայրերի ընդարձակման հնարավորությունները:

37. Վահրավար-Կարճևանի շղթայաձև-հովտային տարաբնակեցում: Ձբաղեցնում է Մեղրի և Կարճևան գետերի հովիտները: Տարածքի տնտեսական յուրացման և գյուղական բնակավայրերի արտադրական գործունեության բնութիվ զգալիորեն նման է նախորդին: Ինչպես այս, այնպես էլ Մեղրու տարածաշրջանում ընկած տարաբնակեցման նախորդ երկու տեղական տիպերի համար համեմատաբար սահմանափակ են Մեղրի և Ագարակ քաղաքների ազդեցությունը գյուղական բնակավայրերի զարգացման վրա:

ԳԼՈՒԽ 4

ՀՀ ԳՅՈՒԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

4.1 Գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը (1831-2015 թթ.)

Լեռնային տարածք ունեցող երկրներում գյուղական տարածքների ու բնակավայրերի բնույթը և դրանց բնութագրող ցուցանիշներն առավել «զգայուն» են ինչպես բնաաշխարհագրական պայմանների, այնպես էլ հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ: Իր հերթին, գյուղական տարածքներում, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացներն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում հասարակական կյանքի տարբեր կողմերի վրա: Այդ հանգամանքը խիստ կարևորում է ՀՀ գյուղական բնակավայրերում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրությունը և առկա միտումների բացահայտումն ու զնահատումը:

ՀՀ բնակավայրերի ձևավորման, զարգացման և շարժընթացի հարցերին իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են Հ. Գրգեարյանը [17, 8], Գ.Ավագյանը [3, 108, 110], Խ. Ավետիսյանը [10], Ա.Վալեսյանը [101], Մ.Մանասյանը [44], Հ. Սարգսյանը [196] և Ա.Պոտոսյանը [70,72]: ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի հիմնահարցերն առավել խորությամբ քննարկվել են Գ.Ավագյանի [3, 6, 7, 8, 107, 108, 109], Հ.Գրգեարյանի [17], Մ.Մանասյանի [44, 57], Ա.Պոտոսյանի [68, 71, 72, 74, 78, 81, 83, 84, 87], Վ.Խոջաբեկյանի [27] աշխատանքներում:

Ամփոփելով և ընդհանրացնելով ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի 1831-1926 թթ. շարժընթացի վերլուծության արդյունքներն առանձնացրել ենք ժամանակագրական երեք փուլ (I. 1831-1926 թթ., II. 1926-1988 և III. 1988-2015 թթ.), որոնք միմյանցից տարբերվում են ՀՀ ներկայիս տարածքում քաղաքական իրավիճակի, սոցիալ-տնտեսական պայմանների, վարչատարածքային և սահմանային փոփոխություններով և դրանցով պայմանավորված գյուղական բնակչության և բնակավայրի թվի շարժընթացի բնույթով:

Առաջին փուլ (1831-1926 թթ.): Սույն աշխատանքի երկրորդ գլխուն հիմնական գծերով ներկայացրել ենք նաև ՀՀ գյուղական բնակչության և

բնակավայրերի թվի շարժընթացի որոշ մանրամասներ 1831-ից 1926 թթ. ընկած ժամանակահատվածի համար: Այդ մասին հանգամանալից պատկերացում են տալիս նաև թիվ 12 աղյուսակում բերված տվյալները: Նշված ժամանակահատվածում ՀՀ-ում գյուղերի թիվն ավելացել է ավելի քան 1,8 (702-ից՝ 1277), բնակչության թիվը՝ շուրջ 5, իսկ գյուղերի միջին մարդաքանակը՝ ավելի քան 2,7 անգամ

Աղյուսակ 12

ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը (1831-1926 թթ.)¹

Տարածաշրջանները	1831			1897			1926		
	Գյուղերի վիճակը մինչև 1831-ից	Մինչև 1831-ից	Միտրոյմոնս-մուրցիկ	Գյուղերի վիճակը մինչև 1897-ից	Մինչև 1897-ից	Միտրոյմոնս-մուրցիկ	Գյուղերի վիճակը մինչև 1926-ից	Մինչև 1926-ից	Միտրոյմոնս-մուրցիկ
1	2	3	4	5	6	7	8	9	10
Անիի	13	2578	198	25	17696	708	26	16487	634
Վայքի	32	2775	87	53	18190	343	38	11729	309
Թումանյանի	10	2191	219	33	19138	580	54	29234	541
Ամասիայի	3	3446*	149	37	12288	332	32	10270	321
Ապարանի	27	5394	200	28	20466	731	25	22099	884
Արտաշատի	39	7250	186	69	33334	483	59	27332	463
Արթիկի	24	4537	189	24	23555	981	24	26822	1118
Ախուրյանի	27	14969**	489	34	29490	867	39	27779	712
Աշտարակի	30	5574	186	41	23975	585	34	24587	723
Վարդենիսի	21	4111	196	39	24812	636	38	22203	584
Արարատի	23	4335	188	81	35585	439	67	17340	259
Գորիսի	20	5039*	244	32	25882	809	33	20672	626

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг», Е., 1962 г., վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

* 1831 թվականին նշված տարածաշրջաններում բացի առկա բնակավայրերում գրանցված բնակչությունից գոյություն է ունեցել նաև հաշվառված բնակչություն. Ամասիայում՝ 3000, Ախուրյանում՝ 1759, Գորիսում՝ 161, Աշոցքում՝ 524, Տաշիրում՝ 526, Կապանում՝ 812, Գուգարքում՝ 2446, Մեղրիում՝ 537, Սիսիանում՝ 494, Ստեփանավանում՝ 600 մարդ:

** որից 3444-ը նախկին Գյումրիի բնակչություն է:

1	2	3	4	5	6	7	8	9	10
Աշոցքի	7	1425*	129	27	11830	438	27	11459	424
Եղեգնաձորի	38	3953	104	59	23890	405	43	18345	427
Իջևանի	15	5197 ¹	346	33	21033 ²	637	43	28124	654
Տաշիրի	3	827*	100	19	11260	593	29	18671	644
Գավառի	12	5148	429	13	17336 ³	1334	13	21370	1644
Կապանի	49	3612*	57	109	26317	241	102	23146	227
Գուգարքի	14 ⁴	4172*	123	21	16972 ⁵	808	28	22525	804
Կոտայքի	20	1985	99	52	22493	433	40	23447	586
Կրասնոսելսկի	7	1442	206	16	10684	668	24	17238	718
Մարտունու	17	3811	224	25	25498	1020	26	36723	1412
Մեղրիի	20	2174*	82	27	9866	365	30	8965	299
Նոյեմբերյանի	11	3942	358	15	11100	740	22	14354	652
Արմավիրի	22	5140	234	38	25291	666	38	25026	659
Հրազդանի	28	5346	191	32	25611	800	32	29507	922
Սևանի	12	3403	284	14	14173	1012	14	15720	1123
Սիսիանի	27	3207*	100	45	25187	560	41	22410	547
Սպիտակի	16	2390	149	22	22086	1004	26	26858	1033
Ստեփանավանի	11	1550*	86	22	15450	702	25	24279	971
Թալինի	20	1820	91	72	20641	287	56	16059	288
Տավուշի	10	3063	306	14	11268	805	35	20142	575
Էջմիածնի	27	8685	322	40	26639	666	39	19053	488
Մասիսի	28	10538	376	29	20437	705	33	15234	462
Արագածի	11	2857	260	25	13173	527	27	16484	610
Բաղրամյանի	3	692	231	3	1116	372	5	1043	209
Նաիրիի	5	633	127	10	6014	601	10	6574	657
ՀՀ-ում	702	149211	197	1278	719776	559	1277	739310	579

1 և 2՝ այդ թվում նաև Դիլիջանի ենթակայության տակ գտնվող գյուղերի բնակչությունը:

3. Առանց քաղաք Գավառի բնակչության:

4. Այդ թվում նաև քաղաք Վանաձորի բնակչությունը:

5. Առանց Վանաձոր քաղաքի բնակչության:

Երկրորդ փուլը ըստ էության համընկնում է Հայաստանում խորհրդային ժամանակաշրջանի հետ: Սակայն, վիճակագրական տվյալների հավաստիության առումով, վերլուծության համար նպատակահարմար ենք համարել հիմք ընդունել 1926 թ. մարդահամարի և 1988 թ. նախաերկրաչարժային ժամանակվա՝ 1988 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բնակչության և բնակավայրերի թվի վերաբերյալ ԱՎԾ ընթացիկ հաշվառման տվյալները:

ՀՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի բազմազանությունը, ուրբանացման գործընթացները, բնակչության բարձր բնական աճը և միգրացիոն ակտիվությունը, գյուղատնտեսության զարգացման բնական սահմանափակ հնարավորությունները, երկրում տարվող ագրարային և տարածաշրջանային զարգացման քաղաքականությունը եղել են այն հիմնական ազդակները, որոնք խորհրդային տարիներին իրենց անմիջական և միջնորդավորված ազդեցությունն են թողել ՀՀ գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման վրա: Այդ ամենի հետևանքով առաջացրել են ինչպես քանակական, այնպես էլ որակական և տարածքային փոփոխություններ ՀՀ գյուղական տարածքների, բնակչության ու բնակավայրերի, ինչպես նաև գյուղական տարաբնակեցման կառուցվածքում:

Ժամանակագրական առումով ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցն առավել մեծ փոփոխություններ է կրել 1926-1970 թթ.: Եթե 1926-70 թթ-ին բնորոշ էր ՀՀ գյուղական բնակավայրերի թվի նվազումը, ապա 1970-88 թթ-ին՝ գյուղերի թվի կայունացումը:

1926-1988 թթ. ընթացքում ՀՀ-ում գյուղական բնակավայրերի թիվը նվազել է 361-ով, վերացել են 274 գյուղ և 138 գյուղական տիպի ժամանակավոր բնակելի կետ, 41 գյուղ դարձել են քաղաքային բնակավայրեր, իսկ 97 գյուղ միացել են այլ բնակավայրերի (քաղաքների կամ գյուղերի): Այդ ժամանակահատվածում ՀՀ-ում ստեղծվել են 97 նոր և վերականգնվել նախկինում վերացած 2 գյուղ (աղ. 13):

Սկսած 1980-ական թվականների կեսից ՀՀ-ում ի հայտ է եկել նոր երևույթ՝ սկսել են վերականգնվել նախկինում բնազրկված և վերացված գյուղական բնակավայրեր: Իսկ 1988 թ-ից հետո, կապված տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների հետ, 44 գյուղական բնակավայր զուրկ էին մշտական բնակչությունից:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բացի Բաղրամյանի, Էջմիածնի և Նաիրիի տարածաշրջաններից, որտեղ գյուղական բնակավայրերի թվաքանակն ավելացել է, մնացած բոլոր տարածաշրջաններում տեղի է ունեցել դրանց թվաքանակի նվազում:

**ՀՀ գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխությունները
(1926-2015 թթ)¹**

	Բնակավայրերի թիվը ժամանակահատվածի ընթացքում					
	1926-1959	1959-1970	1970-1988	1988-1995	1995-2015	1926-2015
Ընդամենը հանրապետությունում						
ա/ Գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը ժամանակահատվածի սկզբում և վերջում	$\frac{1286}{1117}^2$	$\frac{1117}{931}$	$\frac{931}{909}$	$\frac{909}{925}$	$\frac{925}{942}$	$\frac{1286}{942}$
բ/Վերացված գյուղական բնակավայրերի թիվը	202	184	26	5	-	417
այդ թվում՝ գյուղեր	169	79	26	5	-	279
գ/ Քաղաքներ դարձած գյուղերի թիվը	27	10	4	-	2	43
դ/ Այլ բնակավայրերի միացած գյուղերի թիվը	66	19	12	2	-	99
ե/ Նոր ստեղծված գյուղական բնակավայրերի թիվը	126	27	18	7	-	178
զ/ այդ թվում գյուղեր	62	27	18	7	-	114 ³
է/Վերականգնված գյուղերի թիվը	-	-	2	16	-	18
ը/ Նախկին քաղաքային բնակավայրերից առաջացած գյուղերի թիվը	-	-	-	-	8	8

1926-1988 թթ. ընթացքում ՀՀ-ն բնակչության թիվն ավելացել է ավելի քան 3,9 անգամ (քաղաքային բնակչությունն ավելացել է 14.1, , իսկ գյու-

¹ Աղյուսակը կազմված է Զ.Կորկոտյան, «Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931 թթ.)», Երևան, 1932 թ., «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Е., 1962, վիճակագրական ժողովածուի և ՀՀ ԱՎԾ ՀՀ բնակչության և բնակավայրերի վերաբերյալ ամենամյա հրապարակումների տվյալների հիման վրա:

² Համարիչում՝ բնակավայրերի թիվը ժամանակահատվածի սկզբում, հայտարարում՝ բնակավայրերի թիվը ժամանակահատվածի վերջում:

³ 1926-2015 թթ. ՀՀ-ում ստեղծվել է 104 գյուղ, մնացած 10-ի վերաբերյալ տե՛ս այս պարագրաֆում տրված բացատրությունները:

ղական բնակչությունը՝ ընդամենը 1,5 անգամ): Եթե 1926 թ. քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը կազմում էր 19.0 և 81.0 %, ապա 1988 թ.՝ 69.0 և 31.0 %:

Աղյուսակ 14

ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի մի քանի ցուցանիշների շարժընթացը 1926-2015 թթ.¹

	1926	1959	1970	1979	1988	2015
1	2	3	4	5	6	7
1. Արագածոտնի						
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{142}{11.0}$ ²	$\frac{122}{10.9}$	$\frac{103}{11.1}$	$\frac{105}{11.5}$	$\frac{106}{11.7}$	$\frac{117}{12.3}$ ³
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{79229}{10.6}$	$\frac{90280}{10.1}$	$\frac{86284}{8.5}$	$\frac{83473}{8.0}$	$\frac{88028}{8.2}$	$\frac{101436}{9.2}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը	558	740	838	795	830	882
դ/ Գյուղական բնակչության խտությունը	29	33	31	30	32	37
2. Արարատի						
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{159}{12.4}$	$\frac{116}{10.4}$	$\frac{95}{10.2}$	$\frac{89}{9.7}$	$\frac{90}{9.9}$	$\frac{95}{10.0}$
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{59906}{8.0}$	$\frac{111581}{12.5}$	$\frac{143245}{14.1}$	$\frac{153106}{14.7}$	$\frac{166383}{15.5}$	$\frac{186126}{17.0}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը	377	962	1508	1720	1849	1980
դ/ Գյուղական բնակչության խտությունը	29	53	68	73	79	89

¹ Աղյուսակը կազմած է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, ՀՀ մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ 1970, 1979, 1988 հունվարի մեկի դրությամբ ՀՀ ԱԿԾ հրապարակումների և «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015 թ.», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Համարիչում՝ բացարձակ թիվը, հայտարարում՝ տոկոսներով ընդհանուրից:

³ Ներառյալ նաև քաղաքային համայնքների մեջ մտնող գյուղերը:

3. Արձափրի						
1	2	3	4	5	6	7
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{82}{6.4}$	$\frac{89}{8.0}$	$\frac{84}{9.0}$	$\frac{86}{9.4}$	$\frac{91}{10.0}$	$\frac{95}{10.0}$
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{45122}{6.0}$	$\frac{84556}{9.5}$	$\frac{123043}{12.1}$	$\frac{136568}{13.2}$	$\frac{151523}{14.1}$	$\frac{182007}{16.6}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը	550	950	1465	1588	1665	1915
դ/ Գյուղական բնակչության խտությունը	36	68	99	110	122	145
4. Գեղարքունիքի						
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{115}{89}$	$\frac{125}{11.2}$	$\frac{94}{10.1}$	$\frac{89}{9.7}$	$\frac{89}{9.8}$	$\frac{93}{9.8}$
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{113254}{15.2}$	$\frac{146706}{16.5}$	$\frac{162209}{15.9}$	$\frac{163259}{15.7}$	$\frac{170359}{15.9}$	$\frac{162794}{14.8}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը	985	1174	1726	1834	1914	1829
դ/ Գյուղական բնակչության խտությունը	28	36	40	40	42	40
5. Լոռու						
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{162}{12.6}$	$\frac{129}{11.5}$	$\frac{122}{13.1}$	$\frac{121}{13.2}$	$\frac{115}{12.7}$	$\frac{122}{12.8}$
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{121567}{16.3}$	$\frac{123706}{13.9}$	$\frac{129178}{12.7}$	$\frac{122736}{11.8}$	$\frac{120292}{11.2}$	$\frac{93689}{8.5}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին արդաշատությունը	750	959	1059	1014	1046	774
դ/ Գյուղական բնակչության խտությունը	32	33	34	32	32	25
6. Կոտայքի						
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{82}{6.4}$	$\frac{69}{6.2}$	$\frac{59}{6.3}$	$\frac{59}{6.4}$	$\frac{61}{6.7}$	$\frac{62}{6.5}$
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{59528}{8.0}$	$\frac{59529}{6.7}$	$\frac{74165}{7.3}$	$\frac{88813}{8.6}$	$\frac{100603}{9.4}$	$\frac{116525}{10.6}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը	726	859	1257	1505	1649	1879
դ/ Գյուղական բնակչության խտությունը	28	28	35	42	48	56
1	2	3	4	5	6	7

7.Շիրակի						
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{148}{11.5}$	$\frac{138}{12.4}$	$\frac{128}{13.7}$	$\frac{128}{14.0}$	$\frac{122}{13.4}$	$\frac{128}{13.4}$
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{92817}{12.4}$	$\frac{91796}{10.3}$	$\frac{101309}{10.0}$	$\frac{102956}{10.0}$	$\frac{102495}{9.6}$	$\frac{102884}{9.4}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը	627	665	791	804	840	829
դ/ Գյուղական բնակչության խտությունը	35	34	38	38	38	38
8.Սյունիքի						
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{206}{16.0}$	$\frac{160}{14.3}$	$\frac{126}{13.5}$	$\frac{122}{13.3}$	$\frac{122}{13.4}$	$\frac{127}{13.3}$
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{75193}{10.1}$	$\frac{65444}{7.3}$	$\frac{66418}{6.5}$	$\frac{59033}{5.7}$	$\frac{48791}{4.5}$	$\frac{45752}{4.2}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը	365	409	527	484	400	394
դ/ Գյուղական բնակչության խտությունը	17	15	15	13	11	10
9. Վայոց ձորի						
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{81}{6.3}$	$\frac{55}{4.9}$	$\frac{54}{5.8}$	$\frac{50}{5.5}$	$\frac{49}{5.4}$	$\frac{52}{5.4}$
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{30074}{4.0}$	$\frac{36434}{4.1}$	$\frac{41122}{4.0}$	$\frac{40065}{3.8}$	$\frac{40512}{3.8}$	$\frac{33316}{3.0}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը	371	662	762	801	827	724
դ/ Գյուղական բնակչության խտությունը	13	16	18	17	18	14
10. Տավուշի						
ա/ Գյուղական բնակավայրերի թիվը	$\frac{100}{7.8}$	$\frac{112}{10.0}$	$\frac{63}{6.8}$	$\frac{64}{7.0}$	$\frac{61}{6.7}$	$\frac{62}{6.5}$
բ/ Գյուղական բնակչության թիվը	$\frac{62620}{8.4}$	$\frac{80073}{9.0}$	$\frac{84862}{8.3}$	$\frac{81619}{7.8}$	$\frac{75625}{7.1}$	$\frac{73141}{6.7}$
գ/ Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը	626	715	1347	1275	1240	1240
դ/ Գյուղական բնակչության խտությունը	23	27	31	30	28	27

ՀՀ գյուղական բնակչության թվի շարժմնաբացի տարածքային տարբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1926-1988 թթ. ինչպես

հանրապետության տարածաշրջանների, այնպես էլ ներկայիս մարզերի միջև գյուղական բնակչության թվի շարժընթացի նկատելիորեն մեծ տարբերություններ կան: Հանրապետության գյուղական բնակչության թվի 1926-1988 թթ. շարժընթացի վերլուծության արդյունքների ընդհանրացումը թույլ է տալիս առանձնացնել երեք խումբ մարզեր, որոնք միմյանցից տարբերվում են քննարկվող ժամանակահատվածում ՀՀ գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում առանձին մարզերի ունեցած բացարձակ և հարաբերական ցուցանիշներով (աղ. 14).

ա) մարզեր, որտեղ 1926-88 թթ. տեղի է ունեցել գյուղական բնակչության ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական մեծության աճ (Արարատի, Արմավիրի, և Կոտայքի), բ) մարզեր, որոնցում տեղի է ունեցել գյուղական բնակչության բացարձակ թվի աճ, սակայն հարաբերական մեծությամբ այդ մարզերում գյուղական բնակչության քանակը նվազել է (Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի), գ) մարզեր, որտեղ տեղի է ունեցել գյուղական բնակչության թվի նվազում (Սյունիք):

Քննարկվող ժամանակաշրջանում տեղի է ունեցել հանրապետության տարբեր տարածաշրջանների և մարզերի միջև գոյություն ունեցող գյուղական բնակչության բաշխման տարբերությունների մեծացում: Վերջինիս պատճառով ՀՀ մարզերի միջև գյուղական բնակչության խտությունների տարբերությունները 2,8-ից հասել է 11, իսկ տարածաշրջանների միջև՝ 6-ից 32 անգամի:

1926-1988 թթ. ՀՀ-ի գյուղական բնակչության տեղաբաշխման մեջ էապես բարձրացել է Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի բաժինը: Եթե 1926 թ. այդ մարզերի տարածքում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության 22 % -ը, ապա 1988 թ.՝ 39 %-ը: Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում, եթե 1926 թ. ապրում էր ՀՀ գյուղական բնակչության մոտ 39 , ապա 1988 թ.՝ ընդամենը 25.3 %-ը:

1926-1988 թթ-ին տեղի է ունեցել ըստ մարդաքանակի ՀՀ գյուղական բնակավայրերի խոշորացման գործընթաց: Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը 1926-1988 թթ. ընթացքում ավելացել է ավելի քան 2 անգամ (580-ից 1180 մարդ): Այն տեղի է ունեցել ինչպես մանր և փոքր գյուղերի ու գյուղական տիպի այլ բնակավայրերի վերացման, այնպես էլ գյուղական բնակչության բացարձակ թվի ավելացման շնորհիվ: Արմավիրի և Արարատի մարզերում այն ավելացել է 3.0-4.9, իսկ Սյունիքի մարզում՝

ընդամենը 1,1 անգամ: Այստեղ 1970 թ-ից հետո տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի միջին մարդաշատության նվազում: Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատության փոփոխությունների տարբերությունն առավել մեծ է ՀՀ-ի տարածաշրջանների միջև: Եթե 1926 թ. ՀՀ-ում գյուղական բնակավայրերի ամենամեծ և ամենափոքր միջին մարդաշատություն ունեցող տարածաշրջանների միջև տարբերությունը կազմում էր մոտ 8 անգամ (Գավառի և Բաղրամյանի տարածաշրջանների միջև), ապա 1988թ.՝ 19 անգամ (Մարտունու և Կապանի տարածաշրջանների միջև):

Քննարկվող ժամանակաշրջանում արմատական փոփոխություններ են կրել նաև ըստ մարդաշատության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերը և դրանց բնակչության թվաքանակը: ՀՀ-ի գյուղական բնակավայրերի մեջ զգալիորեն նվազել է մանր, փոքր և միջին մեծության (մինչև 1000 մարդ) գյուղերի թիվը: 1926 թ. այդպիսիք կազմում էին հանրապետությունում բոլոր գյուղական բնակավայրերի 83.2 %-ը և դրանցում ապրում էր գյուղական ամբողջ բնակչության 48.2 %-ը, 1959 թ.՝ համապատասխանաբար՝ 73.4 և 37 %, իսկ 1988 թ.՝ 58.5 և 22.6 %-ը: Առանձնապես նկատելի է մանր (մինչև 200 մարդ) գյուղական բնակավայրերի թվաքանակի նվազումը (1926-88 թթ. սրանց թվաքանակը նվազել է 4,2 անգամ), 437-ից՝ 105:

1926-1988 թթ. ըստ մարդաքանակի ՀՀ գյուղական բնակավայրերի տարբեր խմբերում տեղի ունեցած հաջորդ խոշոր փոփոխությունը 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերի թվի և դրանց բնակչության քանակի ավելացումն է: Այդ ընթացքում դրանց թիվն ավելացել է ավելի քան 1,7 անգամ (217-ից՝ 378): 1926 թ. այդպիսի գյուղերում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության 51.8, իսկ 1988 թ.՝ 77.4 %-ը: Հատկապես արագ տեմպերով է ավելացել խոշոր (3001-5000 մարդ) և զերխոշոր (5000 մարդուց

Աղյուսակ 15
ՀՀ գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժմանը ըստ մարդաշատության խմբերի (1926-2015 թթ.)¹

Տարեթիվ	Միլիոն հոգով	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժումը ըստ մարդաշատության խմբերի (մարդ)																
		մինչև 50		51-100		101-200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի		
		ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	
1926	1286	144	4074	128	9643	165	24018	360	119565	272	202715	202	323796	14	55319	1	6516	
1970	931	1017216	4	157	13	1086	48	7525	232	80050	270	191114	317	542564	41	57686	6	37034
1979	916	1038511	13	402	20	1543	52	7957	228	82049	224	164395	318	530387	50	182887	11	68891
1988	909	1072570	10	320	28	2123	67	10099	220	78797	206	151074	309	524412	53	201142	16	104603
2011	913 ²	1103415	32	765	48	3727	92	13936	190	65169	180	132409	293	521096	54	211932	24	154381
2015	912 ²	1234916	26	639	47	3659	77	11417	166	53731	177	125351	312	555274	72	266214	34	218631
Սույնը տրվում էրով																		
1926	100.0	11.2	0.5	10.0	1.3	12.8	3.2	28.0	16.0	21.2	27.2	15.7	43.5	1.1	7.4	0.0	0.9	
1970	100.0	100.0	0.4	0.0	1.4	0.1	5.2	0.7	24.9	7.9	29.0	18.8	34.0	53.3	4.4	15.5	0.7	3.7
1979	100.0	100.0	1.4	0.0	2.2	0.2	5.7	0.8	24.9	7.9	24.5	15.8	34.7	51.1	5.4	17.6	1.2	6.6
1988	100.0	100.0	1.1	0.0	3.1	0.2	7.4	0.9	24.2	7.4	22.7	14.1	34.0	48.9	5.8	18.7	1.7	9.8
2011	100.0	100.0	3.5	0.0	5.3	0.4	10.1	1.3	20.8	5.9	19.7	12.0	32.1	47.2	5.9	19.2	2.6	14.0
2015	100.0	100.0	2.9	0.0	5.2	0.3	8.5	0.9	18.2	4.3	19.4	10.2	34.2	45.0	7.9	21.6	3.7	17.7

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Е., 1962, ժողովածուի, 1970, 1979, 1988 թթ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության և բնակավայրերի վերաբերյալ ՀՀ ԱԿԾ հրատարակումների, 2011 թ. մարտի 1-ի համարի և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով 2015» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա: 2. 2011 թ-ին 31, 2015 թ-ին՝ 32 գյուղ մշտական բնակչություն չեն ունեցել:

ՀՀ գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժման և բնակչության ըստ բարձրության գոտիների (1926-2015թթ.)

Վեցամյակ	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մետր)	801-1000		1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000		2001-2200		2200-ից բարձր			
		ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ				
		միլիոն	հազար	միլիոն	հազար	միլիոն	հազար	միլիոն	հազար	միլիոն	հազար	միլիոն	հազար	միլիոն	հազար				
1926	1286	745646	41 28303	240	133059	96 50564	139	76864	191 108899	216	131182	219	151490	132	63023	12	2262		
1970	931	1017216	40 47278	203	301386	65 62998	79	90720	145 125724	145	139256	158	172669	92	74916	4	2269		
1979	916	1038511	45 49765	195	318464	68 69923	79	93374	141 123295	141	131249	151	173203	92	76659	4	2579		
1988	909	1072570	41 45130	204	346861	68 71360	75	100918	137 127055	139	124303	149	177139	92	77286	4	2518		
2011	913 ²	1103415	46 46501	197	379825	75 84290	77	105439	143 124004	134	116552	145	187106	92	58266	4	1432		
2015	912 ²	1234916	46 49579	197	431334	75 95903	77	117149	142 142371	134	132577	145	196447	92	67846	4	1710		
Նույնը տոկոսներով																			
1926	100.0	100.0	3.2	3.8	18.7	7.5	6.8	10.8	10.3	14.8	14.6	16.8	17.6	10.3	8.5	0.9	0.3		
1970	100.0	100.0	4.3	4.6	21.8	29.7	7.0	6.2	8.5	8.9	15.5	12.4	15.5	13.7	17.0	10.0	7.3	0.4	
1979	100.0	100.0	4.9	4.8	21.3	30.7	7.5	6.7	8.6	9.0	15.4	11.9	15.4	12.6	16.5	10.0	7.4	0.4	
1988	100.0	100.0	4.5	4.2	22.4	32.3	7.5	6.7	8.3	9.5	15.1	11.8	15.3	11.6	16.4	10.1	7.2	0.4	
2011	100.0	100.0	5.0	4.2	21.6	34.4	8.2	7.6	8.4	9.6	15.7	11.2	14.7	10.6	15.9	17.0	10.1	5.3	0.4
2015	100.0	100.0	5.1	4.0	21.6	35.0	8.2	7.8	8.4	9.5	15.6	11.5	14.7	10.7	15.9	10.1	5.5	0.4	

¹ Աղյուսակը կազմված է թիվ 15 աղյուսակում նշված սկզբնաղբյուրների հիման վրա:

² Տես թիվ 15 աղյուսակի տողատակի համապատասխան նշումներով բացատրությունը:

ավելի) գյուղերի թիվը: 1926 թ. խոշոր և գերխոշոր գյուղերը կազմում էին հանրապետության գյուղական բնակավայրերի ընդամենը 1,1, իսկ 1988 թ.՝ 7,5 %-ը: Այդ ժամանակահատվածում 20.2 տոկոսային կետով ավելացել է այդպիսի գյուղական բնակավայրերի ու բնակչության մասնաբաժինը ՀՀ գյուղական բնակչության թվաքանակում (1926 թ.՝ 8.3, 1988 թ.՝ 28.5 %-ը (աղ. 15):

Եթե խոշոր և գերխոշոր գյուղերի թիվը և բնակչության քանակը քննարկվող ժամանակաշրջանում մշտապես ունեցել են աճման միտում, ապա նույնը չի կարելի ասել մեծ (1001-3000 բնակիչ ունեցող) գյուղերի համար: Ինչպես 1926 թ., այնպես էլ 1988 թ. գյուղերի այս խումբն առաջինն էր հանրապետությունում բնակչության բացարձակ թվաքանակով: Եթե 1926-70 թթ. ավելացել է այդպիսի գյուղերի ոչ միայն բնակչության բացարձակ թիվը, այլ նաև դրանցում ապրող բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում, ապա 1970 թ-ից հետո տեղի է ունեցել ՀՀ գյուղական բնակչության մեջ այդ խմբի գյուղերի բնակչության մասնաբաժնի նվազում:

Բերված վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ 1926-1988 թթ. ընթացքում ՀՀ գյուղական բնակավայրերի և բնակչության թվաքանակում կատարված փոփոխությունների պատճառով տեղի է ունեցել ըստ գերակշռող մարդաքանակի ՀՀ գյուղական տարաբնակեցման բնույթի փոփոխություն: Եթե 1926 թ. ՀՀ-ի համար ըստ գերակշռող մարդաքանակի բնորոշ էր *մեծ, միջին և փոքր գյուղային տարաբնակեցումը*, 1959-1970 թթ.՝ *մեծ, միջին և խոշոր գյուղային տարաբնակեցումը*, ապա 1979-1988 թթ.՝ *մեծ, խոշոր և միջին գյուղային տարաբնակեցումը*:

ՀՀ-ի նման լեռնային երկրներում գիտագործնական առումով առանձնակի կարևորություն ունի նաև գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացի վերլուծությունն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գոտիների:

1926-1988 թթ. ընթացքում ՀՀ-ում գյուղական բնակավայրերի թիվը նվազել է ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության բոլոր գոտիներում: Հարաբերական մեծությամբ գյուղական բնակավայրերի թիվն ավելացել է մինչև 1000 և 1401-1600 մ բարձրության գոտիներում: Ծովի մակարդակից մինչև 2200 մ բարձրության բոլոր գոտիներում 1926-1988 թթ. ընթացքում գյուղական բնակչության թիվն ավելացել է: Հաշվարկները ցույց են տալիս, որ գյուղական բնակչության թվի ավելացման մեծ մասը բաժին է ընկնում 801-1000 մ բարձրության գոտուն: 1926 թ. այդ գոտում ապրում էր

հանրապետության գյուղական բնակչության ընդամենը 17.8 %-ը (ավելի քիչ, քան 1801-2000 մ գոտում), իսկ 1988 թ.՝ 32.3 %-ը: Դրա հետևանքով 1200 մ-ից բարձր բոլոր գոտիներում քննարկվող ժամանակաշրջանում տեղի է ունեցել գյուղական բնակչության մասնաբաժնի նվազում (աղ. 16):

Երրորդ փուլ: Սկսած 1980-ական թվականների վերջերից ՀՀ գյուղական տարածքներում և բնակավայրերում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք էականորեն տարբերվում են մինչ այդ տեղի ունեցող գործընթացներից: Եթե մինչ այդ հանրապետության գյուղական տարածքների և բնակավայրերի զարգացման համար վճռորոշ դեր էին խաղում սոցիալ-տնտեսական գործոնները, ապա 1988 թ. Սպիտակի երկրաշարժը, ութուճական թվականների վերջերին ծավալված ժողովրդավարական գործընթացները, անկախության հաստատումը և դրա անմիջական հետևանք հանդիսացող քաղաքական ու տնտեսական փոփոխությունները և անդրկովկասյան տարածաշրջանում ազգամիջյան հարաբերությունների սրման հետևանքով առաջացած բնակչության միգրացիաներն իրենց անմիջական ազդեցությունը թողեցին ՀՀ հասարակական կյանքի բոլոր կողմերի, այդ թվում նաև՝ գյուղական տարածքների ու բնակավայրերի վրա: ՀՀ-ի քաղաքական համակարգի փոփոխությունները, վարչատարածքային նոր բաժանումը, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման նոր համակարգը, հողի, արդյունաբերական ձեռնարկությունների, տրանսպորտային միջոցների և սպասարկման ծառայությունների սեփականաշնորհումը, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը, բնակչության սոցիալական կազմի, վերարտադրության, սեռատարիքային կառուցվածքի, ազգային կազմի և միգրացիոն շարժերի փոփոխությունները զգալի տեղաշարժեր են առաջացրել ՀՀ-ի տարաբնակեցման ողջ համակարգում, մասնավորապես՝ գյուղական տարածքներում և բնակավայրերում:

Այս փուլի առաջին 7 տարիների ընթացքում ՀՀ բնակչության թվաքանակում գյուղական բնակչության բացարձակ աճը կազմել է ավելի քան 146 հազ. մարդ, որի շնորհիվ 1988-ի համեմատությամբ ՀՀ-ում ավելացել է գյուղական բնակչության մասնաբաժինը (1988թ.՝ 31.0 %, 1995 թ.՝ 32.6 %): Դրան նպաստել են հողի սեփականաշնորհումը, էներգետիկ ճգնաժամի և Աղբբեջանի կողմից տրանսպորտային շրջափակման պատճառով արդյունաբերական արտադրանքի ծավալների խիստ կրճատումը, գյուղից քաղաք միգրացիայի նվազումը և դրան հակառակ՝ քաղաքաբնակների որոշ մասի վերադարձը գյուղական բնակավայրեր:

1988-1995 թթ. ընթացքում հանրապետությունում գյուղերի թիվն էական

փոփոխություններ չի կրել: Արմավիրի մարզում ստեղծվել է երկու նոր գյուղ (Արտամետ և Կողբավան գյուղերը Բաղրամյանի տարածաշրջանում): Այս տարիներին սկսվել է նախկինում վերացած գյուղերի վերականգնման գործընթացը: Մինչև 1990-ական թվականների վերջը պաշտոնական որոշումներով վերականգնվել է 10 գյուղ, սակայն դրանց մի մասում մինչև այժմ էլ մշտական բնակչություն չկա:

Սյունիքի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերից բացի 1988-95 թթ-ին գյուղական բնակչության թիվն ավելացել է հանրապետության բոլոր մարզերում: Գյուղական բնակչության թիվը նվազել է այն տարածաշրջաններում, որտեղ մինչև 1988թ. գյուղական բնակչության մեջ համեմատաբար բարձր էր աղբյուրանցիների մասնաբաժինը: Շիրակի, Արագածոտնի, Լոռու և Տավուշի մարզերում, ուր մինչև 1988 թ-ը դիտվել է գյուղական բնակչության թվի նվազում կամ էլ մնացել է գրեթե նույնը, 1988-1995 թթ. ընթացքում գյուղական բնակչության թիվն ավելացել է: Դա բացատրվում է այդ ժամանակահատվածում ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական նոր իրավիճակով:

1988-1995 թթ. համար հատկանշական է 3000 մարդուց ավելի բնակչություն ունեցող գյուղերի թվի ավելացումը և ՀՀ գյուղական բնակչության մեջ 8,9 կետով այդ խմբի գյուղերի մասնաբաժնի ավելացումը: Նույն այդ տարիներին ՀՀ-ում բնակչության թվաքանակը նվազել է 101-1000 բնակիչ ունեցող գյուղերի բոլոր խմբերում: Գյուղական բնակչության թիվն ավելացել է ծովի մակարդակից մինչև 2000 մ բարձրության բոլոր գոտիներում, իսկ դրանից բարձր գոտում գյուղական բնակչությունը նվազել է մոտ 17 %-ով: Վերջինիս պատճառը բարձրության այդ գոտում Վարդենիսի և Ամասիայի տարածաշրջանների նախկին աղբյուրանաբնակ 12 գյուղի մշտական բնակչությունից զուրկ լինելն էր:

1995 թ-ից հետո ՀՀ-ում գյուղական բնակչության և բնակավայրերի շարժընթացի մանրամասներին առավել հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ պարագրաֆում:

Գիտագործնական առումով կարևոր է ոչ միայն քննարկվող ժամանակաշրջանում գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխություններն, այլ նաև տարաբնակեցման ցանցի կայունության աստիճանը: Վերջինիս վերաբերյալ պատկերացում է տալիս գյուղական բնակավայրերի ցանցի ռոտացիայի գործակիցը, որը հաշվարկվում է

$$Q = \frac{U+V+i+j}{L}$$

բանաձևով, որտեղ Ա-ն տվյալ ժամանակահատվածում վերացած բնակա-

վայրերի թիվն է, Մ-ն՝ տվյալ ժամանակահատվածում միավորված բնակավայրերի թիվը, Ն-ն՝ նոր ստեղծված բնակավայրերի թիվը, Վ-ն՝ վերականգնված բնակավայրերի թիվը և Բ-ն՝ տվյալ տարածքում առկա բնակավայրերի ընդհանուր թիվը [44]:

ՀՀ-ի գյուղական տարաբնակեցման ցանցի ռոտացիայի գործակիցը 1926-2015 թթ. համար կազմում է 0,342 կամ մեկ տարվա համար՝ 0,004: Ըստ առանձին ժամանակահատվածների այն ունի հետևյալ պատկերը. 1926-1959 թթ.՝ 0,175, մեկ տարվա համար՝ 0,005, 1959-1970 թթ.՝ 0,117, մեկ տարվա համար՝ 0,011, 1970-1988 թթ.՝ 0,034, մեկ տարվա համար՝ 0,002 և 1988-2015 թթ.՝ 0,008, մեկ տարվա համար՝ 0,000: Ինչպես երևում է բերված տվյալներից ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցը ռոտացիայի առավել բարձր գործակից ունի 1959-1970 թթ-ին՝ մեկ տարվա համար 0,011, որից հետո այդ ցուցանիշը կտրուկ նվազում է, իսկ 1988 թվականից հետո այն հավասարվում է գրեթե զրոյի: Հետևաբար՝ ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցը մինչև 1970-ական թվականները կրել է զգալի փոփոխություններ, որից հետո տեղի է ունեցել հանրապետության գյուղական բնակավայրերի ցանցի կայունացում:

4.2 Գյուղական բնակչության թվի շարժընթացի ժամանակակից միտումները և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները

Գյուղական տարածքների ու բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրման կարևոր խնդիրներից է բնակչության թվի շարժընթացի միտումների բացահայտումը, գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման հիմնախնդիրների վերհանումը և հեռանկարային զարգացման ուղիների մատնանշումը, քանի որ գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացումը կախված լինելով մի շարք գործոններից, իր հերթին նշանակալից ազդեցություն է թողնում տնտեսության զարգացման, տարածքի յուրացվածության և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: Ավելիին գյուղական տարածքներում ու բնակավայրերում տեղի ունեցած փոփոխությունները և զարգացման առկա միտումներն էական ազդեցություն են թողնում ինչպես հասարակության տարածքային կազմակերպման, այնպես էլ տնտեսության տարբեր ոլորտների վրա:

Անկախացումից հետո ՀՀ գյուղական բնակավայրերում տեղի ունեցող գործընթացները և բնակչության թվի շարժընթացի առկա միտումները պայ-

մանավորել են հետևյալ գործոնները.

➤ ԶՅ-ում տեղի ունեցած հողի սեփականաշնորհումը և դրա հետ կապված գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և նյութատեխնիկական բազայի կրած փոփոխությունները,

➤ Երկրի տարածքի խիստ անհավասարաչափ բնակեցվածությունը և մասնատվածության բարձր աստիճանը,

➤ ԶՅ-ն ուրբանիզացվածության համեմատաբար բարձր մակարդակի պայմաններում վերջինիս տարածաշրջանային մեծ տարբերությունները,

➤ ԶՅ-ից, մասնավորապես՝ լեռնային ու նախալեռնային շրջաններից բնակչության շարունակվող միգրացիան (արտաքին և ներքին),

➤ մեր տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակի պատճառով ԶՅ տրանսպորտաաշխարհագրական դիրքի կրած փոփոխությունները (Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ԶՅ տրանսպորտային շրջափակումը և երկրի տնտեսության զարգացման համար ստեղծված սահմանափակումները),

➤ 2008-2009 թթ. ընթացքում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրավիճակը:

ԶՅ գյուղական բնակչության թվի շարժընթացի ժամանակակից միտումները և զարգացման հիմնախնդիրները քննարկելիս պետք է ելակետ համարենք այն հանգամանքը, որ ԶՅ, մասնավորապես՝ սահմանամերձ և լեռնային շրջանների գյուղական տարածքների ու բնակավայրերի ամրացումը, կայունացումն ու սոցիալ-տնտեսական առաջանցիկ զարգացումը մեր երկրի համար առաջնահերթ ռազմավարական խնդիր է:

ԶՅ գյուղական բնակավայրերի բնակչության թվի շարժընթացի վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած մոտ երկու տասնամյակի ընթացքում հարյուրավոր գյուղական բնակավայրերում նկատելիորեն պակասել է առկա և մշտական բնակչության թիվը: Այդ երևույթն առավել ցայտուն է դրսևորվել մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերում, որոնց զգալի մասը կարող են հայտնվել բնագրկման վտանգի առջև: Այդպիսի գյուղերում նկատելիորեն խախտվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքը, առաջացել է ոչ բարենպաստ ժողովրդագրական իրավիճակ: Այս երևույթն առավել սուր դրսևորում ունի երկրի սահմանամերձ և բարձրալեռնային շրջանների գյուղական բնակավայրերում: Այդպիսի շրջաններից բնակչության հեռացումն ու բնակավայրերի լքումը կնվազեցի հանրապետության տարածքի տնտեսական տարողունակությունը:

Աղյուսակ 17

ՀՀ գյուղական բնակչության բվաքանակի շարժընթացն ըստ մարզերի և տարածաշրջանների (2001, 2011 թթ. մարդահամարների և 2015 թ. տվյալներով)¹

ՀՀ մարզերը և տարածաշրջանները	Գյուղական բնակչության թիվն ըստ տարիների (մարդ)				
	2001		2011		2015
	Առկա	Մշտական	Առկա	Մշտական	Մշտական
1	2	3	4	5	6
Արագածոտնի մարզ	96671	105437	96378	102330	101436
Աշտարակի տ/շ	41614	45179	43082	45453	44301
Ապարանի տ/շ	14416	15413	14668	15578	15562
Արագածի տ/շ	12619	14073	12020	13250	13448
Թալինի տ/շ	28022	30772	26608	28049	28125
Արարատի մարզ	179196	192131	177636	186264	186126
Արտաշատի տ/շ	72197	77532	67604	70744	70062
Արարատի տ/շ	55277	58898	53856	57293	57609
Մասիսի տ/շ	51722	55731	56176	58227	58455
Արմավիր մարզ	166995	177941	173802	180720	182007
Արմավիրի տ/շ	72254	76057	71167	73582	74610
Էջմիածնի տ/շ	77331	82233	83347	86847	87326
Բաղրամյանի տ/շ	17411	19651	19288	20291	20071
Գեղարքունիքի մարզ	144513	158693	145138	163652	162794
Գավառի տ/շ	28922	31963	26884	31922	31419
Կարմիրի տ/շ	8978	9225	7461	7938	7774
Մարտունու տ/շ	63350	72023	67654	77330	77349
Սևանի տ/շ	18423	19645	18321	20547	20781
Վարդենիսի տ/շ	24840	25837	24818	25915	25471
Լոռու մարզ	104667	116455	86595	97753	93689
Գուգարքի տ/շ	23448	27148	19970	22675	21184
Թումանյանի տ/շ	25865	27247	20870	22161	21887

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները», Ե., 2003 թ., ժողովածուի, «ՀՀ առկա և մշտական բնակչության բաշխումն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և սեռի 2011 թ. մարդահամարի» և armstat.am տվյալների հիման վրա:

1	2	3	4	5	6
Սպիտակի տ/շ	24001	26509	20252	23349	23209
Ստեփանավանի տ/շ	15941	17206	13675	15156	14518
Տաշիրի տ/շ	15412	18345	11828	14412	12891
Կոտայքի մարզ	109985	118488	112818	116916	116525
Հրազդանի տ/շ	22807	24516	20158	21845	21691
Կոտայքի տ/շ	53554	57371	56379	58081	57934
Նաիրիի տ/շ	33624	36601	36281	36990	36900
Շիրակի մարզ	95944	109129	95826	105033	102884
Ախուրյանի տ/շ	39989	45589	38151	41546	40409
Ամասիայի տ/շ	6576	7686	5625	6306	6340
Անիի տ/շ	13080	14668	11922	13560	13625
Աշոցքի տ/շ	9375	9917	8345	9090	9261
Արթիկի տ/շ	26924	31269	31783	34531	33249
Սյունիքի մարզ	46051	48537	39269	46601	45752
Կապանի տ/շ	7980	8413	6580	8203	7867
Գորիսի տ/շ	19392	20610	17470	20982	20686
Մեղրիի տ/շ	2538	2627	2255	2368	2243
Սիսիանի տ/շ	16141	16741	12964	15048	14956
Վայոց ձորի մարզ	34902	36392	30825	33875	33316
Եղեգնաձորի տ/շ	26319	27563	23571	26051	25617
Վայքի տ/շ	8583	8829	7254	7824	7699
Տավուշի մարզ	78156	83655	66360	74423	73141
Դիլիջանի ք/հ	5602	6322	5371	6248	6039
Իջևանի տ/շ	25095	27410	23343	26793	26952
Նոյեմբերյանի տ/շ	25144	26473	19699	21910	21684
Տավուշի տ/շ	22315	23450	17947	19472	18446
Ընդամենը	1057080	1146858	1024647	1107567	1097670

Հատկանշական է այն փաստը, որ գյուղական բնակավայրերի վերը նշված հիմնախնդիրները, եթե նախկինում բնորոշ էին հիմնականում բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերին, ապա ներկայումս նմանատիպ խնդիրներ ունեն նաև ՀՀ գյուղական բնակավայրերի մեծ մասը:

Թիվ 17 աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2001 թ. համեմատությամբ 2015 թ-ին ՀՀ գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է 49188-ով (4,3 % -ով): Այդ ժամանակահատվածում բա-

ցի Արմավիրից և Գեղարքունիքից գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է ԶԶ բոլոր մարզերում: 2001 թ. մարդահամարի տվյալներով ԶԶ-ում գյուղական առկա բնակչության թիվը մոտ 90 հազ.-ով պակաս էր մշտական բնակչության թվից, իսկ 2011 թ. մարդահամարի ժամանակ այդ տարբերությունը կազմել է շուրջ 83 հազ. մարդ: Չնայած վերջին տարիների համար հանրապետության գյուղական բնակչության առկա թվաքանակի վերաբերյալ չկան վիճակագրական հավաստի տվյալներ, սակայն մեր դիտարկումները ցույց են տալիս, որ ԶԶ-ում գյուղական բնակչության մշտական և առկա թվաքանակի վերը նշված տարբերությունը ոչ միայն պահպանվում է, այլ էլ ավելի է մեծացել: Վերջինիս մասին է վկայում նաև այն փաստը, որ վերջին տասնամյակի ընթացքում ԶԶ գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է համեմատաբար բարենպաստ բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ ունեցող այնպիսի մարզերում, ինչպիսիք են Արագածոտնը և Արարատը (աղ. 17): Արագածոտնի մարզի 111 գյուղական համայնքների մեծ մասում այդ ընթացքում դիտվել է գյուղական մշտական բնակչության թվի նվազում: Բնակչության թվի նվազում է դիտվել ոչ միայն փոքր և միջին մեծության գյուղական բնակավայրերում, այլ նաև Արագածավան, Արտենի, Բյուրական, Ծաղկահովիտ, Մաստարա, Կաթնաղբյուր և մի շարք այլ մեծ և խոշոր գյուղերում: Արմավիրի մարզում գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է այնպիսի գերխոշոր և խոշոր գյուղական համայնքներում ինչպիսիք են Նալբանդյանը, Բամբակաշատը, Չայթաղը, Ակնալիճը և այլն:

Չափարկները ցույց են տալիս, որ 2001 թ. համեմատությամբ 2015 թ.-ին ԶԶ նախկին վարչական շրջաններից 28-ում գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է (տես աղ. 17), իսկ 2011-2015 թթ. ընթացքում այդպիսի տարածաշրջանների թիվը հասել է 31-ի: Ինչպես բացարձակ թվով, այնպես էլ հարաբերական մեծությամբ 2001-2015 թթ. ընթացքում ԶԶ-ում գյուղական մշտական բնակչության թիվն առավել մեծ չափով նվազել է Լոռու մարզում (22777-ով կամ 19.6 %-ով): Գյուղական մշտական բնակչության թվի նվազման համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրվել նաև Տավուշի (12.6 %) և Վայոց ձորի (8.6 %) մարզերում, իսկ ամենացածրը՝ Կոտայքի մարզում (1,6%): ԶԶ մարզերի և տարածաշրջանների գյուղական բնակչության թվաքանակի 2001-2015 թթ. շարժընթացի մասին հանգամանալից պատկերացում են տալիս թիվ 17 աղյուսակում բերված տվյալները:

ԶԶ գյուղական բնակավայրերի բնակչության թվի 2001 և 2011 թթ. մարդահամարի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ Շիրակի

մարզի 116 գյուղական համայնքներից մշտական բնակչության թիվը նվազել է 80-ում, իսկ Լոռու մարզի 105 գյուղական համայնքներից ընդամենը 8-ում է բնակչության թիվն ավելացել կամ պահպանվել նույնը, մնացած 97 համայնքում այն նվազել է: Նմանատիպ պատկեր է նաև Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Արարատի մարզերում: Չնայած Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում 2001-2015 թթ. ընթացքում արձանագրվել է գյուղական մշտական բնակչության թվի աճ, սակայն այս մարզերում ևս զգալի թվով գյուղերում տեղի է ունեցել բնակչության բացարձակ թվի նվազում:

ՀՀ գյուղական բնակչության թվաքանակի վերը նշված փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողել նաև գյուղական բնակավայրերի ըստ մարդաքանակի տարբեր խմբերի բաշխվածության վրա: Ըստ մարդաշատության խմբերի ՀՀ գյուղական բնակավայրերի բաշխվածության շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1970 թ-ի համեմատությամբ 2015 թ. հանրապետությունում մինչև հարյուր բնակիչ ունեցող գյուղերի թիվն ավելացել է 4.2 անգամ (աղ. 15): Եթե այդպիսի գյուղերը 1970 թ-ին կազմում էին ՀՀ գյուղերի 1.8 %-ը, ապա 2015 թ` 8,1 %-ը: Նույն այդ ժամանակաշրջանում 101-200 բնակիչ ունեցող գյուղերի թիվը հանրապետությունում ավելացել է 1,6 անգամ` 48-ից հասնելով 82-ի: Նշված ժամանակահատվածում մինչև 200 բնակիչ ունեցող մանր և փոքր գյուղերի թվաքանակի ավելացումը հիմնականում տեղի է ունեցել 201-500 բնակիչ ունեցող գյուղերի հաշվին: Վերջիններիս թիվը 1970 թ-ի համեմատությամբ նվազել է 66-ով (աղ.15):

Հանրապետությունում մանր և փոքր գյուղերի թվի ավելացումն ավելի արագ տեմպերով է տեղի ունեցել հատկապես 1988-2015թթ. ընթացքում (մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերի թիվը 1988 թ. 105-ից 2015 թ. հասել է 150): Ներկայումս հանրապետությունում մշտական բնակչություն ունեցող գյուղերի 16.6 %-ը կազմում են մանր և փոքր գյուղերը, այն դեպքում, երբ 1988 թ. այդպիսիք կազմել են ՀՀ գյուղերի 11.6 %-ը, իսկ 1970 թ.` ընդամենը 7.1 %-ը: Այսինքն` 1970-2015 թթ. ընթացքում հանրապետությունում մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերն ավելացել են մոտ 1.8 անգամ:

ՀՀ գյուղական բնակավայրերի 29 %-ը 1970 թ. ուներ 501-1000 բնակիչ և դրանցում ապրում էր երկրի գյուղական բնակչության մոտ 19 %-ը: 1970-2015 թթ. ընթացքում այդպիսի գյուղերի թիվը նվազել է 93-ով, իսկ 2015 թ-ին դրանց բաժին էր ընկնում ՀՀ գյուղական բնակչության ընդամենը 10.2 %-ը: 1970-2015 թթ. ընթացքում համեմատաբար կայուն է մնացել ըստ մարդաքանակի 1001-3000 բնակիչ ունեցող գյուղերի խումբը: Չնայած դրանցում

գյուղերի թիվը մնացել է գրեթե նույնը, սակայն 8.3 տոկոսային կետով նվազել է այդպիսի գյուղերի բնակչության բաժինը ՀՀ-ում (աղ. 15):

Հաջորդ նկատելի փոփոխությունն ըստ մարդաքանակի ՀՀ-ի գյուղական բնակավայրերի բաշխվածության մեջ տեղի է ունեցել խոշոր և գերխոշոր գյուղերի խմբերում (3001-5000 և 5000-ից ավելի մարդ ունեցող գյուղերը): 1970 թ-ի համեմատությամբ 2015 թ. 3000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղերի թիվը հանրապետությունում ավելացել է մոտ 2.3 անգամ (47-ից հասնելով 106-ի): Առավել նկատելի է այդ ընթացքում 5000-ից ավելի մարդ ունեցող գյուղերի թվի աճը՝ ավելի քան 6 անգամ: 1970 թ-ից հետո Հանրապետության գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում ավելի քան 2 անգամ ավելացել է նաև 3000-ից ավելի մարդ ունեցող գյուղերի բնակչության բաժինը: Եթե 1970 թ. այդպիսի գյուղերում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության 19.2 %-ը, ապա 2015 թ-ին՝ 39.3 %-ը: Այսինքն՝ ՀՀ մշտական բնակչություն ունեցող գյուղերի 11.6 %-ին (106 գյուղ) բաժին է ընկնում երկրի գյուղական բնակչության մոտ 40 %-ը:

Բերված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ անկախացումից հետո ՀՀ գյուղական բնակչության թվաքանակի շարժընթացի և ըստ մարդաքանակի գյուղական բնակավայրերի տարբեր խմբերում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով հանրապետությունում առաջացել է ըստ մարդաքանակի գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև հարաբերակցությունների բևեռացում:

Այսպիսով, ՀՀ գյուղական բնակչության թվի վերջին տասնամյակների շարժընթացի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- եթե մինչև 1990-ական թվականները հանրապետությունում գյուղական բնակավայրերի բնակչության թվի նվազումը բնորոշ էր հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերին, ապա հետագա ժամանակաշրջանում այդ երևույթը դիտվում է նաև բազմաթիվ մեծ, խոշոր և նույնիսկ գերխոշոր գյուղերում,

- 2001 թ.-ից հետո գյուղական բնակավայրերի բնակչության թվի նվազում տեղի է ունեցել ՀՀ բոլոր մարզերում և տարածաշրջաններում, ընդգրկելով նաև առավել նպաստավոր բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ ունեցող մարզերի ու տարածաշրջանների մեծ, խոշոր և գերխոշոր գյուղական բնակավայրերը,

- 2001-2015 թթ. ընթացքում ՀՀ հարյուրավոր գյուղական բնակավայրերում մշտական բնակչության թվի նվազման պատճառով ստեղծվել է անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակ, որի հետևանքով առաջա-

նուն են գյուղական բնակավայրերի տնտեսական, սոցիալական ու կենցաղային կյանքի կազմակերպման բազմաթիվ հիմնախնդիրներ,

➤ 1970-2015 թթ. ընթացքում ըստ մարդաշատության հանրապետության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով նկատելիորեն ավելացել է մանր և փոքր գյուղերի (մինչև 200 բնակիչ) բաժինը (15.6 %): Չնայած 1970-2015 թթ. ընթացքում համեմատաբար կայուն է մնացել 1001-3000 բնակիչ ունեցող գյուղերի թիվը, սակայն 8,3 տոկոսային կետով նվազել է այդպիսի գյուղերի բնակչության բաժինը ԶԶ գյուղական բնակչության մեջ,

➤ ներկայումս ըստ գերակշռող մարդաքանակի հանրապետության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև գյուղական բնակչության բաշխման տարբերություններն ավելի են մեծացել: Մինչև 1000 բնակիչ ունեցող 493 գյուղական բնակավայրերում (ԶԶ մշտական բնակչություն ունեցող գյուղերի 54,1 %-ը) ապրում է երկրի գյուղական բնակչության ընդամենը 15.7 %-ը, որի հետևանքով նվազում է այդ բնակավայրերի տարածքային և գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետությունը,

➤ ԶԶ գյուղական բնակչության շարժընթացի և դրանով պայմանավորված գյուղական տարածքների ու տարաբնակեցման համակարգում առաջացած հիմնախնդիրներն առավել սուր և տագնապալի բնույթ ունեն հանրապետության բարձրլեռնային և սահմանամերձ շրջաններում, որտեղ գյուղերի միջին մարդաշատությունը փոքր է և շարժընթացի նման միտումների պահպանման դեպքում մոտ ապագայում դրանք կկանգնեն բնազրկման վտանգի առաջ:

4.3 Գյուղական բնակչության բնական շարժի տարածաշրջանային տարբերությունները և հիմնախնդիրները

Ինչպես արդեն նշեցինք, անկախացումից հետո ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային փոփոխությունները զգալի տեղաշարժեր են առաջացրել բնակչության թվաքանակի ու կառուցվածքի, տեղաբաշխման ու տարաբնակեցման, ժողովրդագրական իրավիճակի և այլ գործընթացների մեջ: Այդ երևույթներն առավել ցայտուն և տիպիկ են դրսևորվում ՀՀ-ի նարգերում ու տարածաշրջաններում, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում, քանի որ վերջիններս առավել զգայուն են տնտեսական և սոցիալական ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ:

1960-2015 թթ. ընթացքում ՀՀ-ի գյուղական բնակչության բնական շարժի գործընթացներում տեղի ունեցած փոփոխությունների մասին հանգամանալից պատկերացում են տալիս թիվ 18 աղյուսակում բերված տվյալները: Այդ ժամանակահատվածում, չնայած հանրապետության գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է ավելի քան 205 հազ-ով, սակայն ՀՀ գյուղական բնակչության ծնելիության բացարձակ ցուցանիշը նվազել է 2,9, իսկ հարաբերական ցուցանիշն՝ ավելի քան 3.5 անգամ: Դրան հակառակ, տեղի է ունեցել գյուղական բնակչության մահացության բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացում (աղ. 18): Եթե մահացության բացարձակ ցուցանիշի ավելացումն ինչ որ չափով պայմանավորված է գյուղական բնակչության բացարձակ թվի ավելացումով (1960-2015 թթ. ընթացքում գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է մոտ 1,3, իսկ մահացության բացարձակ թիվը՝ ավելի քան 1,5 անգամ), ապա մահացության հարաբերական ցուցանիշի ավելացումը պայմանավորված է գյուղական բնակչության սոցիալական պայմաններով, գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակի բաղադրիչներում տեղի ունեցած փոփոխություններով և ժողովրդագրական գործընթացներով: 2015 թ. դրությամբ ՀՀ գյուղական բնակչության մահացության գործակիցը 1970 թ. համեմատությամբ ավելացել է 3.4 պրոմիլային կետով կամ մոտ 70.4 %-ով: Ծնելիության և մահացության ցուցանիշների վերը նշված փոփոխությունների պատճառով 2015 թ. ՀՀ-ի գյուղական բնակչության բնական հավելաճի գործակիցը կազմել է ընդամենը 4,1 %, որը 1960 թ. համեմատությամբ պակաս է 9.6 անգամ:

ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները (1960-2015 թթ.)¹

Տարիներ	Ծնվածներ	Մահացածներ	Բնական հավելված	Գործակիցը, 1000 բնակչի հաշվով, (%)		
				Ծնելիություն	Մահացություն	Բնական հավելված
1960	42509	6591	35918	46.6	7.2	39.4
1970	23980	5445	18535	23.7	5.4	18.3
1980	26327	6609	19718	25.1	6.3	18.8
1990	29738	7292	22446	27.0	6.7	20.3
1995	19829	8079	11750	18.1	7.4	10.7
2000	12886	8343	4543	11.4	7.3	4.1
2005	13737	9251	4486	11.9	8.0	3.9
2006	13846	9513	4333	12.0	8.2	3.8
2007	14586	9617	4969	12.6	8.3	4.3
2008	15009	9961	5048	12.9	8.6	4.3
2009	16153	10127	6026	13.9	8.7	5.2
2010	16562	10083	6479	14.1	8.6	5.5
2011	15727	10131	5596	14.2	9.1	5.1
2012	15357	9996	5361	13.8	9.0	4.8
2013	14992	9803	5189	13.5	8.8	4.7
2014	15157	10067	5090	13.8	9.2	4.6
2015	14639	10135	4504	13.3	9.2	4.1

¹ Սկզբնաղբյուր՝ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Ե., 2016 թ.:

Թիվ 18 աղյուսակում բերված տվյալների վերլուծությունից պարզվում է, որ ՀՀ գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակը բնութագրող կարևորագույն բաղադրիչներում՝ վերարտադրության գործընթացներում, առավել ինտենսիվ փոփոխություններ են տեղի ունեցել 1990-ական թվականներից հետո: 1990-2015 թ. ընթացքում ՀՀ գյուղական բնակչության ծնելիության գործակիցը նվազել է 2,0, իսկ բնական հավելաճի գործակիցը՝ 5 անգամ: Առավել անհանգստացնող է ՀՀ գյուղական բնակչության մահացության ցուցանիշում տեղի ունեցած փոփոխությունը: Չնայած 1990-2015 թթ. ընթացքում գյուղական բնակչության բացարձակ թիվը մնացել է նույնը, սակայն տեղի է ունեցել մահացության գործակցի և բացարձակ թվի էական ավելացում: Առաջինն ավելացել է 2,5 պրոմիլային կետով, իսկ երկրորդը՝ շուրջ 1,4 անգամ:

Գիտագործնական առումով առավել կարևորություն և մեծ նշանակություն ունի ՀՀ գյուղական բնակչության վերարտադրության վերջին տարիների իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և հիմնախնդիրների բացահայտումը:

Աղյուսակ 19

ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշներն ըստ մարզերի և տարածաշրջանների (2005-2015թթ.)¹

Մարզերը և տարածաշրջանները	2005			2015			փոփոխությունը 2005-2015 թթ		
	Ծ	Մ	Բ _ս	Ծ	Մ	Բ _ս	Ծ	Մ	Բ _ս
1	2	3	4	5	6	7	8	9	10
Արագածոտնի մարզ	12,5	7,7	4,8	13,6	8,8	4,8	1,1	1,1	0,0
Աշտարակի	11,6	7,4	4,2	14,3	9,4	4,9	2,7	2,0	0,7
Ապարանի	12,5	8,6	3,9	12,9	8,4	4,5	0,4	-0,2	0,6
Թալինի	12,2	8,1	4,1	12,3	9,1	3,2	0,1	1,0	-0,9
Արագածի	15,5	6,2	9,3	15,2	6,8	8,4	-0,3	0,6	-0,9
Արարատի մարզ	11,5	7,9	3,6	14,3	8,9	5,4	2,8	1,0	1,8
Արտաշատի	11,2,	8,2,	3,0	14,5	9,4	5,1	3,3	1,2	2,1
Արարատի	13,0	7,3	5,7	15,8	8,1	7,7	2,8	0,8	2,0
Մասիսի	10,5	8,0	2,5	12,7	8,9	3,8	2,2	0,9	1,3
Արմավիրի մարզ	12,1	7,3	4,8	12,1	8,3	3,8	0,0	1,0	-1,0
Արմավիրի	12,3	7,6	4,7	12,6	9,2	3,4	0,3	1,6	-1,3
Քաղրամյանի	13,1	5,4	7,7	13,6	6,5	7,1	0,5	1,1	-0,6

¹ Աղյուսակը կազմված է armstat.am կայքի տվյալների բազա, ժողովրդագրական տվյալների բազայի ցուցանիշների հիման վրա:

1	2	3	4	5	6	7	8	9	10
Էջմիածնի	11,7	7,4	4,3	11,3	8,0	3,3	-0,4	0,6	-1,0
Գեղարքունիքի մարզ	13,5	7,3	6,2	13,6	7,4	6,2	0,1	0,1	0,0
Գավառի	13,2	7,5	5,7	13,7	9,0	4,7	0,5	1,5	-1,0
Կրասնոսելսկի	11,0	13,4	-2,4	10,3	10,0	0,3	-0,7	-3,4	2,7
Մարտունու	13,8	6,0	7,8	13,9	5,9	8,0	0,1	-0,1	0,2
Սևանի	13,1	7,1	6,0	14,2	7,8	6,4	1,1	0,7	0,4
Վարդենիսի	13,5	8,4	5,1	13,3	8,6	4,7	-0,2	0,2	-0,4
Լոռու մարզ	10,2	9,1	1,1	14,6	12,1	2,5	4,4	3,0	1,4
Գուգարքի	11,7	8,2	3,5	12,9	13,2	-0,3	1,2	5,0	-3,8
Թումանյանի	7,5	8,4	-0,9	13,8	12,1	1,7	6,3	3,7	2,6
Սպիտակի	9,9	8,8	1,1	17,1	10,3	6,8	7,2	1,5	5,7
Ստեփանավանի	9,2	10,8	-1,6	13,8	11,8	2,0	4,6	1,0	3,6
Տաշիրի	12,9	9,6	3,3	14,9	13,8	1,1	2,0	0,9	-2,2
Կոտայքի մարզ	11,6	7,6	4,0	12,8	9,2	3,6	1,2	1,6	-0,4
Ջրագղանի	12,0	7,9	4,1	17,2	9,3	7,9	5,2	1,4	3,8
Կոտայքի	11,8	8,2	3,6	12,1	9,1	3,0	0,3	0,9	-0,6
Նաիրիի	10,9	6,6	4,3	11,2	9,1	2,1	0,3	2,5	-2,2
Շիրակի մարզ	12,1	7,6	4,5	15,0	9,1	5,9	3,1	1,5	1,4
Ախուրյանի	11,0	7,4	3,6	16,6	9,9	6,7	5,6	2,5	3,1
Ամասիայի	9,0	6,2	2,8	13,9	7,3	6,6	4,9	1,1	3,8
Աշոցքի	16,9	8,7	8,2	15,8	9,5	6,3	-1,1	0,8	-1,9
Անիի	14,2	6,6	7,6	15,0	9,2	5,8	0,8	2,6	-1,8
Արթիկի	11,9	8,2	3,7	13,0	8,2	4,8	1,1	0,0	1,1
Սյունիքի մարզ	12,4	9,0	3,4	11,3	10,4	0,9	-1,1	1,4	-2,5
Կապանի	11,9	9,8	2,1	9,4	14,6	-5,2	-2,5	4,8	-3,1
Գորիսի	13,9	8,4	5,5	12,0	8,4	3,6	-1,9	0,0	-1,9
Մեղրու	6,5	15,4	-8,9	7,1	13,4	-6,3	0,6	-2,0	2,6
Սիսիանի	11,6	8,5	3,1	12,0	10,6	1,4	0,4	2,1	-1,7
Վայոց ձորի մարզ	11,4	9,8	1,6	11,9	11,1	0,8	0,5	1,3	-0,8
Եղեգնաձորի	10,9	9,4	1,5	11,9	10,9	1,0	1,0	1,5	-0,5
Վայքի	11,8	10,0	1,8	11,8	11,8	0,0	0,0	1,8	-1,8
Տավուշի մարզ	11,5	9,8	1,7	11,7	12,2	-0,5	0,2	2,4	-2,2
Իջևանի	12,8	9,1	3,7	13,5	9,9	3,6	0,7	0,8	-0,1
Նոյեմբերյանի	10,8	9,2	1,6	11,0	12,2	-1,2	0,2	3,0	-2,8
Տավուշի	10,3	11,5	-1,2	9,4	16,3	-6,9	-0,9	4,8	-5,7
ՀՀ-ում	11,9	8,0	3,9	13,3	9,2	4,1	1,4	1,2	0,2

2005-2015 թթ. ընթացքում ՀՀ-ում գյուղական բնակչության միջին տարեկան բնական հավելաճը կազմել է 5189 մարդ, իսկ բնական հավելաճի միջին տարեկան գործակիցը՝ 4,6 %: Հանրապետության մասշտաբով գյուղական բնակչության ծնելիության գործակիցը 2005-2015 թթ-ին

ավելացել է 1,4 %-ով, իսկ մահացության գործակիցը 1,2 %-ով: Թիվ 18 աղյուսակի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածի առաջին վեց տարիներին (2005-2010 թթ.) գյուղական բնակչության բնական հավելաճի գործակիցն ունեցել է աճման միտում (3,9-ից՝ 5,5 %), որից հետո այն սկսել է նվազել (5,5-ից՝ 4,1 %): Նույն այդ ժամանակահատվածում գյուղական բնակչության մահացության գործակիցն ունեցել է աճման միտում (2005-ից 2015 թթ.-ին այն ավելացել է 1,2 %-ով): Իսկ 2000 թ-ի համեմատությամբ ՀՀ գյուղական բնակչության մահացության միջին տարեկան գործակիցն ավելացել է 1,9 %-ով:

Մարզային կտրվածքով 2005-2015 թթ. ընթացքում ՀՀ գյուղական բնակչության վերարտադրության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

➤ Սյունիքից և Արմավիրից բացի մնացած բոլոր մարզերում տեղի է ունեցել գյուղական բնակչության ծնելիության գործակցի ավելացում: Հանրապետության 5 մարզերում (Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի) տեղի է ունեցել բնական հավելաճի գործակցի նվազում, Լոռու, Շիրակի և Արարատի մարզերում՝ ավելացում, իսկ Գեղարքունիքի և Արարատի մարզերում՝ այդ ցուցանիշը մնացել է նույնը,

➤ գյուղական բնակչության ծնելիության գործակցի առավել բարձր (2,5 %-ից ավելի) աճ են ունեցել Արարատի, Լոռու և Շիրակի մարզերը,

➤ գյուղական բնակչության բնական հավելաճն առավել մեծ չափով ավելացել է Արարատի մարզում (1,8 %), իսկ Լոռու և Շիրակի մարզերում այն կազմում է 1,4%,

➤ ՀՀ բոլոր մարզերում տեղի է ունեցել գյուղական բնակչության մահացության գործակցի ավելացում, որն առավել մեծ է Լոռու (3 %) և Տավուշի (2,4 %) մարզերում:

Երևան քաղաքում և մարզկենտրոններում 2005-2015 թթ. բնակչության վերարտադրության բաղադրիչների շարժընթացը որոշակիորեն տարբերվում է մարզերում և տարածաշրջաններում գյուղական բնակչության վերարտադրության բաղադրիչների շարժընթացից: Այսպես՝ 2005-2015 թթ. Գյումրի և Վանաձոր քաղաքներն ունեցել են բնական հավելաճի գործակցի նվազում, մինչդեռ Շիրակի և Լոռու մարզերում 2005 թ-ի համեմատությամբ 2015 թ-ին գյուղական բնակչության բնական հավելաճն ավելացել է:

Աղյուսակ 20

Երևան քաղաքի և մարզկենտրոնների բնակչության բնական շարժի ցուցանիշները (2005-2015 թթ.)¹

Երևան քաղաք և մարզկենտրոնները	2005			2015			Փոփոխությունը 2005-2015 թթ		
	Ծ‰	Մ‰	Բ _ւ ‰	Ծ‰	Մ‰	Բ _ւ ‰	Ծ‰	Մ‰	Բ _ւ ‰
Երևան	11,1	8,3	2,8	14,9	8,6	6,3	3,8	0,3	3,5
Գյումրի	11,4	10,2	1,2	13,6	12,5	1,1	2,2	2,3	-0,1
Վանաձոր	12,6	9,8	2,8	12,1	12,7	-0,6	-0,5	2,9	-3,4
Աշտարակ	12,4	9,3	3,1	14,1	9,7	4,4	1,7	0,4	1,3
Արտաշատ	10,5	7,5	3,0	16,2	10,8	5,4	5,7	3,3	2,4
Արմավիր	13,8	8,9	4,9	15,8	10,5	5,3	2,0	1,6	0,4
Գավառ	12,0	8,8	3,2	14,5	10,1	4,4	2,5	1,3	1,2
Հրազդան	10,7	6,9	3,8	13,9	9,6	4,3	3,2	2,7	0,5
Կապան	8,9	7,5	1,4	7,8	8,2	-0,4	-1,1	0,7	-1,8
Եղեգնաձոր	12,9	6,8	6,1	12,7	11,1	1,6	-0,2	4,3	-4,5
Իջևան	10,9	7,2	3,7	11,3	7,6	3,7	0,4	0,4	0,0
Միջինը ՀՀ-ում	11,7	8,2	3,5	14,4	9,3	5,1	2,7	1,1	1,6

¹ Աղյուսակը կազմված է armstat.am կայքի տվյալների բազա, ժողովրդագրական տվյալների բազայի ցուցանիշների հիման վրա:

Ըստ մարզերի և տարածաշրջանների ՀՀ գյուղական բնակչության 2015 թ. բնական շարժի ցուցանիշների միջև կան նկատելի տարբերություններ: **Ծնելիության գործակցի ՀՀ միջինից (13,3 %) բարձր ցուցանիշ ունեն Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու և Արարատի մարզերը:** Ծնելիության համեմատաբար բարձր ցուցանիշով առանձնանում են նաև Արագածի, Արարատի, Ախուրյանի, Սպիտակի, Հրազդանի, Ամասիայի և Աշոցքի, Անիի տարածաշրջանները, որոնցում գյուղական բնակչության ծնելիության գործակիցը բարձր է 15 %-ից: Ծնելիության գործակցի առավել ցածր ցուցանիշ ունեն (Մեղրու 7,1 %), Տավուշի (9,4%), Կապանի (9,4 %) և Կրասնոսելսկի (10,3 %) տարածաշրջանները: Դրանցում գյուղական բնակչության բնական հավելաճի փոփոխությունը 2005-2015 թթ. եղել է բացասական: ՀՀ մարզերից հինգում գյուղական բնակչության ծնելիության գործակիցը ցածր է ՀՀ միջին ցուցանիշից, մնացած հինգում՝ բարձր: Բացի Կոտայքից և Արմավիրից մնացած երեք մարզերը, որոնք գյուղական բնակչության ծնելիության ցուցանիշով զիջում են ՀՀ միջին ցուցանիշին, առանձնանում են սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնա-

խնդիրներով, ունեն մեծ թվով սահմանամերձ գյուղական համայնքներ, աչքի են ընկնում մակերևույթի առավել խիստ մասնատվածությամբ և բարձրաչափական նիշերի մեծ լայնությով, հեռու են ընկած մայրաքաղաքային գոտուց և գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությամբ զիջում են ՀՀ միջին ցուցանիշին (բացի Տավուշի մարզից):

Նշված մարզերի մեջ մտնող տարածաշրջաններից բացի գյուղական բնակչության ծնելիության ՀՀ միջինից ցածր ցուցանիշ ունեն նաև Ապարանի, Թալինի Կրասնոսելսկի, Վարդենիսի, Մասիսի, Գուգարքի և Արթիկի տարածաշրջանները:

2015 թ. տվյալներով **ՀՀ միջինից գյուղական բնակչության մահացության գործակցի ցուցանիշը ցածր է Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի, Շիրակի և Արարատի մարզերում**, իսկ Արագածոտնի Տավուշի, Սյունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզերում՝ բարձր է ՀՀ միջին ցուցանիշից, Կոտայքի մարզում հավասար է ՀՀ միջին ցուցանիշին: ՀՀ գյուղական բնակչության մահացության գործակիցն առավել ցածր է Արագածի, Մարտունու, Բաղրամյանի, Սևանի և Ամասիայի տարածաշրջաններում և չի անցնում 7,8 %-ից: Կապանի, Կրասնոսելսկի, Մեղրու, Թումանյանի և Տավուշի տարածաշրջաններում այդ ցուցանիշը մինչև 2 անգամ գերազանցում է վերը նշված տարածաշրջաններին: Մահացության գործակցի բարձր ցուցանիշով առանձնանում են նաև Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները, որտեղ այն տատանվում է 11,8-13.2 % սահմաններում: ՀՀ մնացած տարածաշրջանների գյուղական բնակչության մահացության գործակցի մասին հանգամանալից պատկերացում են տալիս թիվ 19 աղյուսակում բերված տվյալները:

Դժվար չէ նկատել, որ ՀՀ գյուղական բնակչության **մահացության գործակիցն առավել բարձր է այն տարածաշրջաններում և գյուղական համայնքներում, որտեղ հանրապետության մասշտաբով ցածր է ծնելիության գործակիցը**: Սա, անշուշտ, խոսում է այդ տարածաշրջանների գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների մասնաբաժնի ավելացման և երիտասարդ տարիքի բնակչության նվազման մասին: Վերջինս բացատրվում է այդ տարածաշրջանների գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման նվազ հնարավորություններով, գյուղատնտեսության ցածր ապրանքայնությամբ, աշխատատեղերի խիստ սահմանափակ հնարավորություններով և այդ ամենի պատճառով երիտասարդների միգրացիայով դեպի հանրապետության կենտրոնական տարածաշրջաններ, մայրաքաղաք Երևան կամ էլ արտերկիր:

Հասկանալի է, որ ՀՀ-ում ծնելիության համեմատաբար ցածր և մահա-

ցության բարձր գործակից ունեցող տարածաշրջանների գյուղական բնակավայրերում բնական հավելաճի գործակիցը կարող է լինել ցածր կամ նույնիսկ բացասական: ՀՀ հինգ (Գուգարքի, Կապանի, Մեղրու, Նոյեմբերյանի, Տավուշի) տարածաշրջաններում, որոնք միասին ունեն մշտական բնակչություն ունեցող թվով 116 գյուղական բնակավայր և մոտ 72 հազ. բնակչություն, բնական հավելաճի գործակիցը բացասական է՝ կազմելով - 0.3-ից – 6.9 % (աղ. 19): Գյուղական բնակչության հավելաճի ցածր գործակից ունեն նաև Կրասնոսելսկի, Թումանյանի, Տաշիրի, Նաիրիի, Վայքի, Ստեփանավանի, Եղեգնաձորի, Սիսիանի, տարածաշրջանները: Դրանցում այն կազմում է 0,3-2,1 %:

ՀՀ-ում գյուղական բնակչության բնական հավելաճը 2015 թ. ՀՀ միջինից առավել բարձր է եղել Արագածի, Մարտունու, Արարատի, Բաղրամյանի, Հրազդանի, Ամասիայի, Աշոցքի և Ախուրյանի տարածաշրջաններում: Նշված տարածաշրջաններում գյուղական բնակչության բնական հավելաճի ցուցանիշը ՀՀ միջինից մեծ է 1,5-ից 2 անգամ: Մարզերից այդ առումով առանձնանում են Շիրակը, Գեղարքունիքը Արագածոտնը և Արարատը: Դրանցում գյուղական բնակչության բնական հավելաճը ՀՀ միջին ցուցանիշից մեծ է 1,2-1,5 անգամ: Մնացած հինգ մարզերում գյուղական բնակչության բնական հավելաճի գործակիցը պակաս է ՀՀ միջինից, մասնավորապես՝ Տավուշի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում:

Այսպիսով, կատարված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ.

➤ վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի (վերարտադրության) գործընթացներում տեղի են ունեցել նկատելի փոփոխություններ, որոնք առավել ինտենսիվ բնույթ են ունեցել 1990-ական թվականներից հետո, պայմանավորված մեր երկրում տեղի ունեցած քաղաքական, վարչական, տնտեսական և սոցիալ-մշակութային վերափոխումներով,

➤ գյուղական բնակչության ծնելիության բացարձակ և հարաբերական ցուցանիշի նվազման պայմաններում տեղի է ունեցել մահացության բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացում, որը հանգեցրել է գյուղական բնակչության բնական հավելաճի կտրուկ նվազմանը՝ հատկապես 1990-2015 թթ. ընթացքում: Եթե 1960-1990 թթ. այն նվազել է 1,9, ապա 1990-2015 թթ.՝ շուրջ 5 անգամ,

➤ վերջին տասնհինգ տարիներին (2000-2015 թթ.) ՀՀ գյուղական բնակչության ծնելիության գործակցի մոտ 2 պրոմիլով ավելացումը չի հանգեցրել բնական հավելաճի ավելացման, քանի որ այդ ժամանակա-

հատվածում նույնքան ավելացել է մահացության գործակիցը,

➤ ԶԳ-ում կենտրոնական և առավել նպաստավոր աշխարհագրական դիրք, հիմնականում հարթավայրային մակերևույթ, ոռոգելի հողատարածքների և խոտհարքերի ու արոտավայրերի ավելի մեծ մակերես, ենթակառուցվածքային տարրերի ավելի բարձր ապահովվածություն և գյուղական բնակավայրերի համեմատաբար մեծ մարդաշատություն ունեցող մարզերում և տարածաշրջաններում 2005-2015 թթ. ընթացքում գյուղական բնակչության ծնելիության և բնական հավելաճի ավելի բարձր ցուցանիշներ են արձանագրվել, քան ծայրամասային ու սահմանամերձ դիրք և լեռնային բարդ մակերևույթ ունեցող մարզերում և տարածաշրջաններում,

➤ ԶԳ մարզերի և տարածաշրջանների միջև առկա է գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշների զգալիորեն մեծ տարբերություններ, որոնք պայմանավորված է դրանց տարածքի աշխարհագրական դիրքով, բնատնտեսական առանձնահատկություններով և սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից իրավիճակով: Գյուղական բնակչության մահացության գործակիցն առավել բարձր է ԶԳ այն տարածաշրջաններում և գյուղական համայնքներում, որտեղ հանրապետության համեմատ ցածր է ծնելիության գործակիցը, որը վկայում է այդ տարածաշրջանների գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների մասնաբաժնի ավելացման և երիտասարդ տարիքի բնակչության մասնաբաժնի նվազման մասին,

➤ ԶԳ գյուղական բնակչության վերարտադրության շարժընթացի առկա միտումները և ժամանակակից վիճակը հղի են ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներով (բնակչության սեռատարիքային կառուցվածքի խախտում և ծերացում, գյուղական բնակավայրերի մեծ մասում բնակչության թվաքանակի նվազում և այլն) և կարող են պատճառ դառնալ ԶԳ մարզերում, տարածաշրջաններում ու գյուղական բնակավայրերում տնտեսական և սոցիալական վիճակի էլ ավելի վատթարացման, ընդհուպ՝ առանձին գյուղերի վերացման:

4.4 Գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակի բարելավումը որպես բնակավայրերի զարգացման նախադրյալ

Յուրաքանչյուր բնակավայրի ժողովրդագրական իրավիճակն անմիջական, սերտ կապ ունի երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ գործընթացների հետ, իր վրա է կրում այդ գործընթացների անմիջական և միջնորդավորված ազդեցությունը: Իր հերթին երկրում տիրող ժողովրդագրական իրավիճակը նշանակալից ազդեցություն է թողնում քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ երևույթների վրա՝ պայմանավորելով դրանց հետագա զարգացման միտումները: Ժողովրդագրական գործընթացների վերջնական արդյունքում ձևավորվում է տվյալ երկրի կամ բնակավայրի բնակչության սեռատարիքային կառուցվածքը, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում ինչպես առանձին բնակավայրերի զարգացման և առաջընթացի, այնպես էլ տարաբնակեցման վրա [96]:

2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ի գյուղական մշտական բնակչության թիվը կազմել է 1097684 մարդ, որից 552980-ը (50.4 %-ը) կանայք, 544704-ը (49.6 %-ը)՝ տղամարդիկ: Ըստ հիմնական տարիքային խմբերի այն ունի հետևյալ պատկերը: Մինչև 15 տարեկանները կազմում են ընդհանուր բնակչության 21.5 %-ը, որից 11.6 %-ը՝ տղամարդիկ, 9,9 %-ը՝ կանայք: Աշխատանքային տարիքի բնակչությունը կազմում է 68.4%-ը (34.0 %-ը՝ տղամարդիկ, 34.4 %-ը՝ կանայք), իսկ մեծահասակները՝ 10.1 %-ը (4.0 %-ը՝ տղամարդիկ, 6,1 %-ը՝ կանայք):

ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքն ըստ մարզերի առանձնանում է որոշակի տարբերություններով, որն ընդհանրացված տեսքով ունի հետևյալ պատկերը:

1) Տարիքային հիմնական խմբերից մինչաշխատունակ բնակչության բաժինն առավել բարձր է Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում: Դրանցում մինչաշխատունակ բնակչության բաժինը հանրապետության միջին ցուցանիշից բարձր է համապատասխանաբար 1,4 և 1,1 տոկոսային կետերով (աղ.42):

2) Գյուղական բնակչության մեջ հանրապետության միջին ցուցանիշից մինչաշխատունակ բնակչության առավել ցածր տոկոս ունեն Լոռու, Վայոց ձորի և Շիրակի մարզերը: Իսկ Տավուշի, Սյունիքի, Արարատի և Արմավիրի մարզերում այդ ցուցանիշը քիչ է տարբերվում հանրապետության միջին ցուցանիշից (աղ. 42):

3) ՀՀ-ում գյուղական բնակչության տարիքային կառուցվածքում աշխատանքային տարիքի բնակչության ամենամեծ բաժին ունի Կոտայքի

մարզը: Արարատի և Արմավիրի մարզերում այդ ցուցանիշը ՀՀ-ի միջինից մեծ է տոկոսային 1,1 կետով, իսկ Գեղարքունիքում՝ հավասար է ՀՀ միջին ցուցանիշին (տես աղ. 42):

4) ՀՀ-ում գյուղական բնակչության մեջ աշխատունակ բնակչության ամենափոքր տոկոսային ցուցանիշ ունի Տավուշի մարզը, որտեղ աշխատունակ բնակչության բաժինը ՀՀ միջինից ցածր է 4,6 %-ով: Այդ ցուցանիշը ՀՀ միջինից ցածր է նաև Սյունիքի, Արագածոտնին, Վայոց ձորի և Լոռու մարզերում:

5) ՀՀ մարզերի գյուղական բնակչության տարիքային կառուցվածքում առավել ակնհայտ տարբերություններ կան հետաշխատունակ բնակչության մեջ: Այդ ցուցանիշով ամենաբարձր (16,4 %) և ամենացածր (10,8%) տվյալներ ունեցող Տավուշի և Գեղարքունիքի մարզերի միջև տարբերությունը կազմում է 5,6 տոկոսային կետ: Այն ՀՀ միջինից մեծ է նաև Սյունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզերում: Արագածոտնի և Շիրակի մարզերում այն մոտ է ՀՀ միջին ցուցանիշին, իսկ Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերում ՀՀ միջին ցուցանիշից ցածր է համապատասխանաբար 1,3, 1,0 և 0,9 տոկոսային կետերով:

6) ՀՀ բոլոր մարզերում մինչաշխատունակ բնակչության տարիքային խմբում տղամարդկանց տոկոսային բաժինը գերազանցում է կանանց, իսկ հետաշխատունակ տարիքային խմբում՝ գերազանցում են կանայք: Բացառությամբ Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց ձորի, մնացած բոլոր մարզերում աշխատունակ տարիքի գյուղական բնակչության մեջ ավելի մեծ տոկոս են կազմում կանայք:

Գիտագործնական առումով խիստ կարևոր է ՀՀ գյուղական առկա բնակչության հիմնական տարիքային խմբերի բաշխման վերլուծությունն ըստ գյուղական համայնքների, որը հնարավորություն է տալիս առանձնացնել գյուղական համայնքների ու բնակավայրերի այնպիսի խմբեր, որոնք միմյանցից տարբերվում են բնակչության հիմնական տարիքային խմբերին բնորոշ առանձնահատկություններով՝ զարգացման միտումներով և հեռանկարով: Այդպիսի խմբերի առանձնացման համար որպես չափորոշիչ մեր կողմից ընտրվել է ՀՀ գյուղական առկա բնակչության մեջ հիմնական տարիքային խմբերի հանրապետության միջին տոկոսային ցուցանիշները:

**ՀՀ գյուղական բնակչության բաշխումն ըստ հիմնական տարիքային խմբերի և սեռի
01.01.2012 թ.¹**

Մարզերը	Ընդամենը՝ բացարձակ թվերով և %-ով						Տղամարդիկ, բացարձակ թվերով և %-ով						Կանայք, բացարձակ թվերով և %-ով					
	Մինչաշխատունակ		Աշխատունակ		Ռետաշխատունակ		Մինչաշխատունակ		Աշխատունակ		Ռետաշխատունակ		Մինչաշխատունակ		Աշխատունակ		Ռետաշխատունակ	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
Արագածոտն	24988	21.6	76357	65.9	14485	12.5	13228	11.4	38200	33.0	6181	5.3	11760	10.2	38157	32.9	8304	7.2
Արարատ	42888	20.4	143917	68.4	23640	11.2	22205	10.6	71318	33.9	9749	4.6	20683	9.8	725955	34.5	13891	6.6
Արմավիր	41813	20.3	141085	68.4	23216	11.3	21986	10.7	69384	33.6	9480	4.6	19827	9.6	71701	34.8	13736	6.7
Գեղարքունիք	36423	21.9	112221	67.3	18122	10.8	19316	11.6	56714	34.0	8077	4.8	17107	10.3	55507	33.3	10045	6.0
Լոռի	22014	18.9	77536	66.8	16600	14.3	16684	10.0	38520	33.2	6663	5.7	10330	8.9	39016	33.6	9937	8.6
Կոտայք	25528	20.4	86036	68.7	13726	10.4	13500	10.8	41997	33.5	5575	4.4	12028	9.6	44039	35.2	8151	6.5
Շիրակ	24743	19.8	85076	68.1	15041	12.1	13016	10.4	42237	33.8	6356	5.1	11727	9.4	42839	34.3	8685	7.0
Սյունիք	10140	20.6	31565	64.1	7552	15.3	5246	10.7	15627	31.8	3196	6.5	4894	9.9	15938	32.3	4356	8.8
Վայոց Ձոր	7500	19.6	25427	66.7	5203	13.7	4006	10.5	12800	33.6	2152	5.6	3494	9.1	12627	33.1	3051	8.1
Տավուշ	16588	20.9	49629	62.7	12973	16.4	8681	10.7	24124	30.5	5347	6.8	7907	10.2	25505	33.2	7626	9.6
ՀՀ-ում	252625	20.5	828849	67.3	150558	12.2	132868	10.8	410912	33.4	67776	5.1	119757	9.7	417928	33.9	87782	7.1

¹ Արյուսակը կազմված է 01.01.2012 թ. դրությամբ «ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կազմի մասին» պետական վիճակագրական հաշվետվության տվյալներով:
ա/ բնակչության բացարձակ թիվը, բ/ նույնը տոկոսներով:

Գյուղական ցանկացած բնակավայրի զարգացման և հեռանկարի առումով կարևորագույն դեր ունի բնակչության տարիքային կառուցվածքում աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը: Դրա համեմատաբար բարձր ցուցանիշի դեպքում բնակավայրը կարող է ապահովված լինել աշխատանքային ռեսուրսներով (երբեմն ունենալ նաև աշխատանքային ռեսուրսների ավելցուկ), իսկ ցածր լինելու դեպքում՝ ունենալ աշխատանքային ռեսուրսների պակաս: Բացի դրանից, գյուղական բնակավայրերում աշխատանքային տարիքի բնակչության բարձր ցուցանիշը նպաստում է գյուղատնտեսության աշխատատար և ինտենսիվ ճյուղերի զարգացմանը և բնակավայրի սոցիալ-տնտեսական առաջընթացին, իսկ ցածր ցուցանիշի դեպքում գյուղատնտեսության ինտենսիվացման և բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները նվազում են:

ՀՀ-ի գյուղական բնակչության մեջ աշխատանքային տարիքի բնակչությունը կազմում է 67,3%: Այն հանրապետության միջինից բարձր է կամ հավասար ՀՀ գյուղական համայնքների 48,7 %-ում (421 գյուղական համայնքում): Աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից տոկոսային բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքներն առավել մեծ թիվ են կազմում Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Շիրակի մարզերում, իսկ ավելի փոքր՝ Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերում: Տավուշի մարզի 57 գյուղական համայնքից 52-ում աշխատունակ բնակչության բաժինը ցածր է ՀՀ-ի միջին ցուցանիշից: Մարզի 16 գյուղական համայնքում այն չի հասնում նույնիսկ 60 %-ի, իսկ Բարեկամավան համայնքում՝ կազմում է ընդամենը 45,7 %:

Սյունիքի մարզում գյուղական համայնքներից աշխատունակ բնակչության առավել ցածր տեսակարար կշիռ ունեն Սեղրու և Կապանի տարածաշրջանները: Կապանի տարածաշրջանի 35 գյուղական համայնքներից ընդամենը 4-ում է աշխատունակ բնակչության բաժինը գերազանցում ՀՀ-ի միջին ցուցանիշը, իսկ Սեղրու տարածաշրջանում՝ 11 գյուղական համայնքից մեկում: Կապանի տարածաշրջանի 35 գյուղական համայնքներից 15-ում աշխատունակ բնակչության տոկոսը չի անցնում 60-ից, իսկ 4 գյուղական համայնքում այդ ցուցանիշը տատանվում է 44-ից 50%-ի սահմաններում: Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների 41 գյուղական համայնքում (գյուղական համայնքների 74,5 %-ում) աշխատունակ բնակչության մասնաբաժինը ցածր է ՀՀ միջին ցուցանիշից, իսկ 15 գյուղական համայնքում այն պակաս է 60 %-ից:

ՀՀ նարդեղի գյուղական համայնքների բնակչության հիմնական տարիքային խմբերի տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը (01.01.2012 թ.)¹

ՀՀ նարդեղը	Աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Չափազանց ցածր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Հետաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Ընդամենը թվերով և %-ով					
	Բարձր	Ցածր	Բարձր	Ցածր	Բարձր	Ցածր	Բարձր	Ցածր						
Արագածոտն	53	47.3 ²	59	52.7	43	38.4	69	61.6	58	51.8	54	48.2	112	100
Արարատ	63	67.7	30	32.3	28	30.1	65	69.6	41	44.1	52	55.9	93	100
Արմավիր	65	69.1	29	30.9	24	25.5	70	74.5	41	43.6	53	56.4	94	100
Գեղարքունիք	41	48.2	45	51.8	35	40.7	51	59.3	49	57.0	37	43.0	86	100
Լոռի	44	41.9	61	58.1	73	69.5	32	30.5	39	37.1	66	62.9	105	100
Նոտայք	40	66.7	20	33.3	17	28.3	43	71.7	25	41.7	35	58.3	60	100
Շիրակ	70	66.7	45	33.3	40	34.8	75	65.2	49	42.6	66	57.4	115	100
Սյունիք	19	18.8	82	81.2	81	80.2	20	19.8	44	42.6	57	57.4	101	100
Վայոց Ձոր	21	50.0	21	50.0	28	66.7	14	33.3	11	26.2	31	73.8	42	100
Տավուշ	5	8.8	52	91.2	49	86.0	8	14.0	31	54.4	26	45.6	57	100
ՀՀ-ում	421	48.7	444	51.3	418	48.3	447	51.7	388	44.9	477	55.1	865	100

¹ Թիվ 22 և 23 աղյուսակները կազմված են 01.01.2012 թ. դրությամբ «ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կազմի մասին» պետական վիճակագրական հաշվետվության տվյալներով:

² Համարիչուն՝ գյուղական համայնքների թիվը, հայտարարում՝ նույնը՝ տոկոսով:

Լոռու մարզում գյուղական համայնքների ավելի քան 58 %-ում (105-ից՝ 61-ում) աշխատունակ բնակչության բաժինը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից (աղ.43): Թունանյանի ու Գուգարքի տարածաշրջանների 13 գյուղական համայնքում աշխատունակ բնակչության բաժինը չի գերազանցում 60 %-ը, Արդվի, Դեսեղ, Շամուտ, Չկալով, Ձորագյուղ և Քարաբերդ գյուղական համայնքներում այդ ցուցանիշը տատանվում է 43,0-ից 47,6 %-ի սահմաններում, իսկ Ազնվածոր գյուղում՝ ընդամենը 36 %: Մարզի տարածաշրջաններից աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է Սպիտակի (20-ից՝ 13-ում) և Ստեփանավանի (18-ից 10-ում) տարածաշրջանների գյուղական համայնքներում:

Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում ևս գյուղական համայնքների ընդհանուր թվաքանակում գերակշռում են այն համայնքները, որոնցում աշխատունակ բնակչության բաժինը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից (աղ.43): Այդպիսիք ավելի մեծ թիվ են կազմում Արագածի (22-ից՝ 19-ը) և Թալինի (40-ից՝ 24-ը) տարածաշրջաններում: Մարզի մյուս՝ Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում գերակշռում են աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ հանրապետության միջինից բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները:

Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի և Մարտունու տարածաշրջաններում գերակշռում են աշխատունակ բնակչության մասնաբաժնով ՀՀ-ի միջինից բարձր տոկոս ունեցող գյուղական համայնքները, իսկ Կրասնոսելսկի և Վարդենիսի տարածաշրջաններում՝ ՀՀ միջինից ցածր տոկոս ունեցող գյուղական համայնքները:

Վայոց ձորի մարզում աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը հավասար է:

Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Շիրակի բոլոր տարածաշրջաններում, բացառությամբ Ամասիայի մնացած բոլոր տարածաշրջաններում գերակշռում են աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները:

Այսպիսով, ՀՀ գյուղական համայնքների աշխատունակ բնակչության տարածքային տարբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1) ՀՀ գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում աշխատունակ բնակչության մասնաբաժինն ունի տարածաշրջանային զգալի տարբերություններ,

2) ՀՀ-ում առավելապես կենտրոնական դիրք ունեցող և մայրաքաղա-

քին մոտ ընկած Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Շիրակի մարզերում առավել մեծ թիվ են կազմում ՀՀ միջինի համեմատ աշխատունակ բնակչության ավելի բարձր տոկոս ունեցող գյուղական համայնքները: Դրանց 362 համայնքից 235-ում (65,7 %) աշխատունակ բնակչության բաժինը բարձր է ՀՀ միջինից: Նշված մարզերի բոլոր տարածաշրջաններում, բացառությամբ Ամասիայի, առավել մեծ թիվ են կազմում ՀՀ միջինի համեմատ աշխատունակ բնակչության ավելի մեծ տոկոս ունեցող գյուղական համայնքները,

3) Տավուշի, Սյունիքի, Լոռու, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում, որոնք առանձնանում են լեռնային բարդ ռելիեֆով, սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախնդիրներով, իսկ Տավուշի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերը՝ նաև սահմանամերձ դիրքով, ավելի մեծ թիվ են կազմում ՀՀ միջին ցուցանիշի համեմատ աշխատունակ բնակչության ավելի ցածր տոկոս ունեցող գյուղական համայնքները: Դրանց 461 գյուղական համայնքից 299-ում (64,8%) աշխատունակ բնակչության բաժինը ցածր է ՀՀ միջին (67,3%) ցուցանիշից:

Գյուղական բնակավայրերի զարգացման և հեռանկարի առումով բացի աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը էական դեր ունի նաև մեծահասակ բնակչության մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվաքանակում: Վերջինիս բարձր լինելու դեպքում նվազում են տվյալ բնակավայրի բնակչության վերարտադրության ցուցանիշները, մեծանում է բնակչության ծերացման նախադրյալները և փոքր ու միջին մեծության գյուղեր կարող են հայտնվել բնագրկման վտանգի առաջ:

ՀՀ 418 (48,3 %) գյուղական համայնքում մեծահասակ բնակչության մասնաբաժինը բարձր է միջին հանրապետական ցուցանիշից (12,2%-ից): Տավուշի, Սյունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզերում ակնհայտորեն գերակշռում են մեծահասակ բնակչության տոկոսային բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները: Այդ մարզերի 305 գյուղական համայնքներից 231-ում (75,7 %) մեծահասակ բնակչության մասնաբաժինը բարձր է ՀՀ միջինից: Այդպիսի գյուղական համայնքներն առավել բարձր (86%) տեսակարար կշիռ ունեն Տավուշի մարզում: Մարզի 57 համայնքից 38-ում (66,7%) մեծահասակ բնակչության բաժինը մեծ է 15 %-ից, իսկ 9-ը գյուղական համայնքում՝ 20 %-ից:

Սյունիքի մարզի բոլոր տարածաշրջաններում ևս ավելի մեծ թիվ են կազմում մեծահասակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշը գերազանցող գյուղական համայնքները (աղ. 44): Մտահոգիչ է այն փաստը, որ Սյունիքի մարզում զգալի թիվ (42) են կազմում այն գյուղական

համայնքները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության բաժինն անցում է 20 %-ից: Միայն Կապանի տարածաշրջանում այդպիսիք են 35 գյուղական համայնքից 23-ը, իսկ 17 գյուղական համայնքում այդ ցուցանիշը գերազանցում է 25 %-ը:

ՀՀ-ի գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության բաժինը հանրապետության միջին ցուցանիշից բարձր է նաև Լոռու մարզում: Այստեղ այդպիսի ցուցանիշ ունեն գյուղական համայնքների 69,5 %-ը: Մարզի բոլոր տարածաշրջաններում գյուղական համայնքների կեսից ավելին ունեն մեծահասակ բնակչության 12,2%-ից բարձր ցուցանիշ, սակայն դրանք առավել մեծ թիվ են կազմում Թումանյանի տարածաշրջանում (27 գյուղական համայնքից 24-ը): Մարզի 10-ը գյուղական համայնքի բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության մասնաբաժինը 25 %-ից ավելի է, իսկ դրանցից 5-ում՝ 30 %-ից ավելի:

Վայոց ձորի մարզում ՀՀ միջինից բարձր մեծահասակ բնակչություն ունեցող գյուղական համայնքների թիվը երկու անգամ գերազանցում է մնացածին: Վայքի տարածաշրջանում այդպիսիք են 16 գյուղական համայնքից 14-ը, իսկ Եղեգնաձորի տարածաշրջանում՝ 26-ից 14-ը:

Գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության մասնաբաժնի առավել բարենպաստ պայմաններ ունեն Արմավիրի, Կոտայքի, Արարատի, Շիրակի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերը: Այդ մարզերի 560 գյուղական համայնքներից 373-ում (66,6%) մեծահասակ բնակչության բաժինը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից (մանրամասն տե՛ս աղ. 44):

Այսպիսով, ՀՀ գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում հետաշխատունակ բնակչության տարածաշրջանային տարբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1) ՀՀ-ում ծայրամասային ու սահմանամերձ դիրք զբաղեցնող Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման սուր հիմնախնդիրներով աչքի ընկնող Լոռու մարզերի բոլոր տարածաշրջաններում ավելի մեծ տոկոս են կազմում մեծահասակ բնակչության ՀՀ միջինից ավելի բարձր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքները: Վերջինս իր բացասական ներգործությունն է ունենում այդ գյուղական համայնքների ինչպես ժողովրդագրական իրավիճակի, այնպես էլ դրանց սոցիալ-տնտեսական զարգացման վրա,

2) Ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զարգացման համար

գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակ բնակչության տոկոսային ցուցանիշի քիչ թե շատ բարենպաստ պայմաններ ունեն Արմավիրի, Արարատի, Կոտայքի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերը:

Իրենց նշանակությամբ գյուղական բնակավայրի բնակչության տարիքային կառուցվածքում առանձնահատուկ դեր ունեն մինչաշխատունակ բնակչության բացարձակ թիվը և տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում: Դրա մեծությամբ է պայմանավորված գյուղական բնակավայրերում կրթա-մշակութային, առողջապահական, սպորտային և սոցիալական որոշակի ծառայությունների զարգացման մակարդակը, աշխատանքային տարիքի բնակչության համալրումը նորերով և սոցիալ-տնտեսական բնույթի մի շարք այլ խնդիրների լուծումը: ՀՀ-ի պարագայում գյուղական բնակավայրերում մինչաշխատունակ բնակչության բացարձակ թիվը և տոկոսային մեծությունն ունեն բացառիկ դեր և նշանակություն, քանի որ հանրապետության հարյուրավոր գյուղական բնակավայրերում կրթամշակութային և առողջապահական հաստատությունների պահպանումն ու հետագա զարգացումը մեծապես պայմանավորված են նաև տվյալ գյուղական բնակավայրի բնակչության տարիքային կառուցվածքով, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաների թվաքանակով:

ՀՀ գյուղական համայնքների թվաքանակում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ հանրապետության միջինից (20,5%) մեծ և փոքր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թվաքանակների միջև տարբերությունն էլ ավելի մեծ է (աղ. 43): ՀՀ մարզերից յոթում (բացի Արագածոտնից, Գեղարքունիքից և Տավուշից), գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ-ի միջինից փոքր մեծություն ունեցող գյուղերը: Դրանց 610 գյուղական համայնքից 361-ում (59,2 %) մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությունը փոքր է ՀՀ (20,5 %) միջինից: Այդպիսի գյուղական համայնքներն ավելի մեծ տոկոս են կազմում Վայոց ձորում: Լոռու մարզի չորս տարածաշրջանում, բացի Տաշիրից, գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից փոքր մեծություն ունեցող գյուղական համայնքները:

Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Արարատի և Արմավիրի մարզերում, բացի Ամասիայի, Աշոցքի, Գորիսի, Սիսիանի և Արարատի տարածաշրջաններից, մնացածներում գյուղական համայնքների թվաքանակում ավելի մեծ

թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից փոքր մեծություն ունեցող բնակավայրերը:

Գեղարքունիքի և Տավուշի մարզում, չնայած որ գյուղական համայնքների ընդհանուր թվաքանակում գերակշռում են մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշը գերազանցող գյուղական համայնքները, սակայն Գավառի, Կրասնոսելսկի, Տավուշի և Նոյեմբերյանի տարածաշրջաններում ավելի մեծ թիվ են կազմում այդ ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյուղական համայնքները: Նմանատիպ պատկեր կա նաև Արագածոտնի մարզում:

Այսպիսով, ՀՀ գյուղական համայնքների բնակչության մինչաշխատունակ տարիքային խմբի տարածաշրջանային վերլուծությունը ցույց է տալիս, որ 37 տարածաշրջանից 23-ում ավելի մեծ թիվ են կազմում մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից փոքր մեծություն ունեցող գյուղական համայնքները:

Բերված վերլուծության արդյունքներն ավելի ամբողջական կլինեն եթե կատարենք գյուղական համայնքների բնակչության հիմնական տարիքային խմբերի ցուցանիշների համադրում և գյուղական համայնքների առանձին խմբերի առանձնացում, որոնք միմյանցից տարբերվում են բնակչության տարիքային կառուցվածքի ու ժողովրդագրական իրավիճակի պատկերով և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններով: Այդպիսի խմբերի առանձնացման համար որպես չափանիշ մեր կողմից ընտրվել է գյուղական համայնքների բնակչության տարիքային հիմնական խմբերի տարբեր զուգակցումները: Դրանց հիման վրա համակարգչային ծրագրի օգնությամբ առանձնացվել են ՀՀ գյուղական համայնքների 5 խումբ և մեկ ենթախումբ, որոնք առանձնանում են բնակչության տարիքային հիմնական խմբերի ու ժողովրդագրական իրավիճակի նշանակալից տարբերություններով և, իհարկե, նաև սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններով:

Առաջին խմբի մեջ մտնում են այն գյուղական համայնքները, որոնք ունեն *առավել բարենպաստ* ժողովրդագրական իրավիճակ և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններ: Սրանք ունեն աշխատունակ և մինչաշխատունակ տարիքի բնակչության ՀՀ միջինից բարձր ցուցանիշներ: ՀՀ-ում այդպիսի գյուղական համայնքները 107 են: Դրանք առավել շատ են Արագածոտնի (15), Արարատի (18), Արմավիրի (17), Գեղարքունիքի (14) և Շիրակի (20) մարզերում, քիչ՝ Լոռու (9), Սյունիքի (2), Տավուշի (3) և Վայոց ձորի (1) մարզերում:

Երկրորդ խմբի մեջ մտնում են 62 գյուղական համայնք: Սրանք ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զարգացման առումով ունեն **բարենպաստ** իրավիճակ և հնարավորություններ: Սրանցում աշխատունակ տարիքի բնակչության բաժինը բարձր է միջին հանրապետականից (67,3 %), իսկ մինչաշխատունակ տարիքի բնակչության բաժինը չի գերազանցում ՀՀ միջին (20,5 %) ցուցանիշը, բայց ոչ պակաս դրանից մինչև 1 %: Այս խմբի բնակավայրն ավելի շատ են Արմավիրի (13), Կոտայքի (11), Շիրակի (10), Արագածոտնի (13) և Արարատի (8) մարզերում, քիչ՝ Լոռու (3), Սյունիքի (3) և Վայոց ձորի (1) մարզերում: Տավուշի մարզում այդպիսի գյուղական համայնք չկա:

Երրորդ խմբի մեջ մտնող գյուղական համայնքների ժողովրդագրական իրավիճակը և սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները կարելի է գնահատել **լավ**: Սրանք ընդամենը 29 գյուղական համայնք են: Այս գյուղական համայնքների աշխատունակ տարիքի բնակչության բաժինը չի գերազանցում ՀՀ միջին ցուցանիշը (67,3 %), բայց ոչ պակաս է 66,3 %-ից, իսկ մինչաշխատունակ բնակչության բաժինը մեծ է 19,5 %-ից: Սրանք թվաքանակով (8) ավելի շատ են Արմավիրի մարզում, իսկ մնացած մարզերում դրանց թիվը տատանվում է մեկից չորսի սահմաններում:

Չորրորդ խմբի մեջ մտնող գյուղական համայնքները ժողովրդագրական իրավիճակի և սոցիալ-տնտեսական զարգացման առումով ունեն **բավարար** պայմաններ: Դրանցում աշխատունակ բնակչության բաժինը գերազանցում է 67,3 %-ը, իսկ մինչաշխատունակ բնակչության բաժինը փոքր կամ հավասար է ՀՀ միջին (20,5 %) ցուցանիշից, բայց վերջինից 1,5 անգամից ոչ պակաս: Այս խումբն ամենախոշորն է: Ընդգրկում է 300-ից ավելի գյուղական համայնք: Այդպիսիք ավելի քիչ են Տավուշի (5) և Սյունիքի (17) մարզերում, շատ են Արագածոտնի (39), Արարատի (44), Արմավիրի (48), Լոռու (42) և Շիրակի (45) մարզերում:

Հինգերորդ խմբի մեջ մտնող գյուղական համայնքները ժողովրդագրական իրավիճակի և սոցիալ-տնտեսական զարգացման առումով ունեն **վատ** պայմաններ: Այդ համայնքներում մինչաշխատունակ բնակչության բաժինը փոքր է ՀՀ միջինից (20,5 %), իսկ մեծահասակ բնակչության բաժինը մեծ է ՀՀ միջին (12,2 %) ցուցանիշից: Այս խմբի մեջ մտնում են շուրջ 244 գյուղական համայնք բոլոր մարզերից: Այդպիսիք են Սյունիքի գյուղական համայնքների գրեթե կեսը (51 համայնք), 46 գյուղական համայնք Լոռու մարզից, 26-ական համայնք Շիրակի և Տավուշի մարզերից, 17 համայնք Վայոց ձորից, 23 համայնք Արագածոտնից: Թվաքանակով և տոկոսային

մեծությամբ դրանք առավել քիչ են Արարատի (17 համայնք), Արմավիրի (11), Կոտայքի (11) և Գեղարքունիքի մարզերում: Այս խմբից կարելի է առանձնացնել ենթախումբ կամ պայմանականորեն 6-րդ խումբ: Դրանք այն գյուղական համայնքներն են, որոնք ժողովրդագրական առումով գտնվում են *շատ վատ* կամ *ծայրահեղ վատ* իրավիճակում:

Աղյուսակ 23

ՀՀ տարածաշրջանների գյուղական համայնքների բնակչության հիմնական տարիքային խմբերի տոկոսային մեծությամբ ՀՀ միջինից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը (01.01.2012 թ.)

Մարզերը և տարածաշրջանները	վերջին համայնքների ցուցանիշի միջին ցուցանիշը	Աշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Հետաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը		Մինչաշխատունակ բնակչության տոկոսային մեծությամբ ՀՀ միջին ցուցանիշից բարձր և ցածր ցուցանիշ ունեցող գյուղական համայնքների թիվը	
		Բարձր	Ցածր	Բարձր	Ցածր	Բարձր	Ցածր
1	2	3	4	5	6	7	8
Արագածոտնի մարզ	112	53/47,3	59/52,7	43/38,4	69/61,6	59/51,8	53/48,2
Արագածի	22	3	19	7	15	20	2
Աշտարակի	30	21	9	11	19	7	23
Ապարանի	20	13	7	9	11	4	16
Թալինի	40	16	24	16	24	28	12
Արարատի մարզ	93	63/67,7	30/32,3	28/30,1	65/69,9	41/44,1	52/55,9
Արտաշատի	38	29	9	9	29	11	27
Արարատի	29	15	14	11	18	18	11
Մասիսի	26	19	7	8	18	12	14
Արմավիրի մարզ	94	65/69,1	29/30,9	24/25,5	70/74,5	41/43,6	53/56,4
Արմավիրի	37	21	16	15	22	17	20
Բաղրամյանի	15	13	2	1	14	7	8
Էջմիածնի	42	31	11	8	34	17	25
Գեղարքունիքի մարզ	86	41/47,7	45/52,3	35/40,7	51/59,3	49/57,0	37/43,0

1	2	3	4	5	6	7	8
Գավառի	11	9	2	1	10	2	9
Կրասնոսելսկի	14	3	11	12	2	5	9
Մարտունու	16	11	5	0	16	14	2
Սևանի	10	7	3	3	7	6	4
Վարդենիսի	35	11	24	19	16	22	13
Լոռու մարզ	105	44/41,9	61/58,1	73/69,5	32/30,5	39/37,1	66/62,9
Գուգարքի	21	6	15	16	5	8	13
Թումանյանի	27	7	20	24	3	8	19
Սպիտակի	20	13	7	11	9	8	12
Ստեփանավանի	18	10	8	12	6	4	14
Տաշիրի	19	8	11	10	9	11	8
Կոտայքի մարզ	60	40/66,7	20/33,3	17/28,3	43/71,7	25/41,7	35/58,3
Կոտայքի	30	19	11	9	21	12	18
Նաիրիի	16	12	4	3	13	6	10
Հրազդանի	14	9	5	5	9	7	7
Շիրակի մարզ	115	70/60,9	45/39,1	40/34,8	75/65,2	49/42,6	66/57,4
Ախուրյանի	33	24	9	11	22	7	26
Ամասիայի	18	9	9	1	17	11	7
Անիի	16	11	5	4	12	7	9
Աշոցքի	25	14	11	11	14	15	10
Արթիկի	23	12	11	13	10	9	14
Սյունիքի մարզ	101	19/18,8	82/81,2	81/80,2	20/19,8	44/43,6	57/56,4
Գորիսի	23	5	18	16	7	17	6
Կապանի	35	4	31	32	3	5	30
Մեղրու	11	1	10	10	1	3	8
Սիսիանի	32	9	23	23	9	19	13
Վայոց ձորի մարզ	42	21/50,0	21/50,0	28/66,7	14/33,3	11/26,2	31/73,8
Եղեգնաձորի	26	18	8	14	12	3	23
Վայքի	16	3	13	14	2	8	8
Տավուշի մարզ	57	5/8,8	52/91,2	49/86,0	8/14,0	31/54,4	26/45,6
Իջևանի	24	2	22	19	5	19	5
Նոյեմբերյանի	17	2	15	14	3	7	10
Տավուշի	16	1	15	16	0	5	11
Ընդամենը	865	421/48,7	444/51,3	418/48,3	447/51,7	387/44,7	478/55,3

Այդպիսի գյուղական համայնքներում մինչաշխատունակ բնակչության բաժինն ավելի քան 1,5 անգամ պակաս է ՀՀ միջին ցուցանիշից, իսկ մեծահասակ բնակչության բաժինն ավելի քան 1,5 անգամ գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը: Այս կարգավիճակում են ՀՀ 30 գյուղական համայնք, որի կեսից ավելին (17 համայնք) գտնվում են Սյունիքում, չորս համայնք Լոռու մարզում, 3 համայնք Արագածոտնում, երկուական համայնք Գեղարքունիքում և Շիրակում, մեկական համայնք Տավուշի և Վայոց ձորի մարզերում, իսկ Արարատի և Արմավիրի մարզերում այդպիսիք բացակայում են: Վերը բերված խմբերը միասին ընդգրկում են 759 գյուղական համայնք, մնացած 107 համայնքները չեն մտնում նշված խմբերից որևէ մեկի մեջ և զբաղեցնում են միջանկյալ դիրք նշվածների միջև:

Այսպիսով, ՀՀ գյուղական առկա բնակչության սեռատարիքային կառուցվածքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

1) Վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակն իր անմիջական ազդեցությունն է թողել գյուղական բնակչության սեռատարիքային կառուցվածքի վրա,

2) ՀՀ մարզերի և տարածաշրջանների գյուղական բնակչության բաշխումն ըստ հիմնական տարիքային խմբերի և սեռի ունի նկատելի տարբերություններ, որն առավել ցայտուն է դրսևորվում գյուղական համայնքների մակարդակով,

3) ՀՀ հարյուրավոր գյուղական համայնքներում և բնակավայրերում առաջացել է առկա բնակչության տարիքային հիմնական խմբերի ոչ նպաստավոր իրավիճակ՝ տարիքային հիմնական խմբերի տոկոսային մեծությունների նկատելի շեղումներ հանրապետության միջին ցուցանիշից, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում այդ գյուղերի ժողովրդագրական գործընթացների և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման վրա,

4) ՀՀ միջին ցուցանիշի համեմատ գյուղական համայնքների բնակչության տարիքային հիմնական խմբերի տոկոսային մեծությունների առավել ակնհայտ տարբերություններ կան Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Լոռու մարզերում, որոնք առանձնանում են լեռնային բարդ ռելիեֆով, բնական համալիրի տարրերի բազմազանությամբ, սահմանամերձ ու ծայրամասային դիրքով, տարածաշրջանային իրավիճակով և վերջապես սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախնդիրներով,

5) ՀՀ գյուղական համայնքներից բնակչության տարիքային հիմնական խմբերի, ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգացման համար առավել բարենպաստ, բարենպաստ և լավ իրավիճակ

ունեն ընդամենը 198 գյուղական համայնք, բավարար իրավիճակ՝ մոտ 300 գյուղական համայնք, իսկ վատ և շատ իրավիճակ՝ շուրջ 244 գյուղական համայնք (ՀՀ գյուղական համայնքների 28 %-ից ավելին),

6) Հանրապետությունում առավելապես կենտրոնական դիրք ու մարաքաղաքին մոտ ընկած մարզերում և տարածաշրջաններում գերակշռում են այնպիսի գյուղական համայնքները, որոնք բնակչության հիմնական տարիքային խմբերի, ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգացման առումով գտնվում են քիչ թե շատ լավ և բարենպաստ իրավիճակում, իսկ ծայրամասային ու սահմանամերձ դիրք զբաղեցնող Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման սուր հիմնախնդիրներով աչքի ընկնող Լոռու մարզերում ավելի մեծ թիվ են կազմում բնակչության հիմնական տարիքային խմբերի, ժողովրդագրական գործընթացների և սոցիալ-տնտեսական զարգացման առումով վատ և շատ վատ իրավիճակ ունեցող գյուղական համայնքները:

Վերը բերված վերլուծության արդյունքներն ու ամփոփիչ եզրահանգումները հիմք են տալիս պնդելու, որ ՀՀ գյուղական համայնքներում առկա բնակչության սեռատարիքային կառուցվածքում ստեղծված իրավիճակը հանրապետական, մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջում է իրականացնել սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, հարկային և տարածաշրջանային այնպիսի քաղաքականություն, որոնք կնպաստեն գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, ժողովրդագրական գործընթացների բարելավմանը և գյուղական համայնքներում բնակչության սեռատարիքային կառուցվածքի առավել նպաստավոր իրավիճակի ձևավորմանը: Վերջինս իր հերթին դառնում է ՀՀ գյուղական համայնքների և տարաբնակեցման համակարգի զարգացմանն ու առաջընթացին նպաստող գործոն:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5.1 Գյուղական բնակավայրերի գործառույթային կառուցվածքը, արտադրական տիպերը և զարգացման հիմնախնդիրները

ՀՀ բոլոր գյուղական բնակավայրերին բնորոշ է գյուղատնտեսական գործառույթը: Հանրապետությունում ոչ գյուղատնտեսական գործառույթ իրականացնող գյուղեր գրեթե չկան:

ՀՀ համենատարբար փոքր տարածքի սահմաններում ագրոկլիմայական ռեսուրսների խիստ բազմազանության պատճառով առկա է գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի նկատելի տարբերություններ: Հաշվի առնելով այդ հանգամանքը նպատակահարմար է կատարել գյուղական տարածքների գործառույթային տիպերի առանձնացում ըստ արտադրական մասնագիտացման ուղղությունների: Վերջինս թույլ է տալիս առավել խորությամբ բացահայտելու գյուղական տարածքների արտադրական դեմքը և զարգացման միտումները:

Հայտնի է, որ յուրաքանչյուր բնակավայրում աշխատանքային ծախսումների կառուցվածքը հանդիսանում է բնակավայրերի արտադրական մասնագիտացման հիմնական ցուցանիշը: Սակայն ոչ միշտ է, որ ծախսված աշխատանքի չափը համապատասխանում է տնտեսությունում այդ ճյուղի գրաված տեղին: Հետևաբար գյուղական տարածքների արտադրական ուղղությունները որոշելիս պետք է հաշվի առնել ոչ միայն արտադրական ծախսումների կառուցվածքը, այլ նաև տվյալ ճյուղի համախառն արտադրանքի բաժինը:

ՀՀ գյուղական բնակավայրերի արտադրական տիպերը որոշելու և տիպաբանություն կատարելու համար որպես ելակետային տվյալներ օգտագործել ենք 1990-ական թվականների դրությամբ բոլոր կոլտնտեսությունների և խորհրդատնտեսությունների տարեկան հաշվետվությունները, նկատի ունենալով այն հանգամանքը, որ հողի սեփականաշնորհումն էական փոփոխություններ չի մտցրել հանրապետության գյուղական բնակավայրերի արտադրական մասնագիտացումների մեջ, և կոլտնտեսությունների և խորհրդատնտեսությունների վերացումից հետո հանրապետությունում առանձին գյուղական բնակավայրերի համար այդպիսի վիճակագրություն

չկա: Բացի այդ, հանրապետության բոլոր մարզերի և տարածաշրջանների գյուղական բնակավայրերի արտադրական մասնագիտացումների, զարգացման ուղղությունների և անկախացումից հետո գյուղացիական տնտեսությունների արտադրական գործունեության մեջ տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ ճշգրտումներ ենք կատարել 2016 թ-ին մեր կողմից կատարված մարզային այցելությունների և դաշտային դիտարկումների ընթացքում հավաքված տվյալների հիման վրա: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ շուկայական տնտեսական հարաբերությունների խորացումը և զարգացումը հեռանկարում կարող է որոշակի փոփոխություններ մտցնել ՀՀ գյուղական բնակավայրերի արտադրական մասնագիտացումների մեջ:

Գյուղական բնակավայրերի արտադրական մասնագիտացումներն առանձնացրել ենք տնտեսությունների ապրանքային արտադրանքի կառուցվածքի վերլուծության միջոցով: Յուրաքանչյուր տնտեսության արտադրական ուղղությունը որոշվել է տնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում առաջին երեք ճյուղերի գրաված տեսակարար կշռով: Արտադրական մեկ ուղղություն առանձնացված է այն տնտեսություններում, որտեղ հիմնական ճյուղի արտադրանքի տեսակարար կշիռը տնտեսության համախառն արտադրանքի արժեքի 50%-ից ավելին է կազմում, երկու արտադրական ուղղություն, երբ առաջին երկու ճյուղերից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը տնտեսության համախառն արտադրանքի արժեքի մեջ կազմում է 20%-ից ոչ պակաս, իսկ դրանց գումարը՝ 50%-ից ավելի, և երեք արտադրական ուղղություն, երբ առաջին երեք ճյուղերից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը տնտեսության համախառն արտադրանքի արժեքի մեջ կազմում է 20%-ից ոչ պակաս, իսկ դրանց գումարը՝ 75%-ից ավելի [119]:

Հանրապետության գյուղացիական տնտեսությունների ապրանքային արտադրանքի կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ գյուղերն աչքի են ընկնում արտադրական մասնագիտացման բազմազանությամբ: Հանդիպում են քսանից ավելի արտադրական մասնագիտացման ուղղություններ: Շատ բնակավայրերում գյուղատնտեսության բազմազան ճյուղերի առկայությունը ստեղծում է դրանց ամենատարբեր զուգորդություններ, այդ պատճառով էլ, ինչպես բոլոր կարգի դասակարգումների ժամանակ, այս դեպքում ևս կատարել ենք ընդհանրացումներ:

ՀՀ գյուղական բնակավայրերի արտադրական տիպերի ողջ բազմազանությունից կարելի է առանձնացնել առավել բնորոշ հետևյալ տիպերը [93]:

1. *Անասնապահական (տավարարուծական, ոչխարարուծական)*

մասնագիտացման գյուղեր: Այս տիպի գյուղերն ամենաշատն են հանրապետությունում: Անասնապահության նշված ճյուղերն արտադրական այս տիպի գյուղական բնակավայրերում զուգակցված են հացահատիկայինների և կերային մշակաբույսերի աճեցման և կարտոֆիլի մշակության հետ: Այդպիսի բնակավայրերն առավել շատ են Շիրակում, Ջանգեզուրում և Գեղարքունիքում: Բացի հանրապետության հյուսիս-արևելյան շրջաններից և Արարատյան դաշտից, բնակավայրերի արտադրական մասնագիտացման այս տիպը հանդիպում է մնացած բոլոր շրջաններում: Գյուղերի այս տիպը մեծ տարածում ունի նաև Վայոց ձորում և Լոռիում: Այդպիսի գյուղական բնակավայրեր կան նաև ԶԶ նախալեռնային և լեռնային գոտու տարբեր շրջաններում, մասնավորապես՝ Ապարանի տարածաշրջանում: Գյուղական բնակավայրերի արտադրական մասնագիտացման այդպիսի ուղղություն ունեն նաև Արարատի և Կոտայքի տարածաշրջանների առանձին գյուղեր, որոնք ընկած են նախալեռնային և լեռնային շրջաններում:

Մեր հանրապետությունում անասնապահական (տավարաբուծական-ոչխարաբուծական) ուղղություն ունեցող գյուղերի առավել մեծ չափով տարածումը (ընդհանուր թվաքանակով դրանք կազմում են ԶԶ բոլոր գյուղերի մոտ 28%-ը) պայմանավորված է հանրապետության տարածքում նախալեռնային և լեռնային գոտիների զբաղեցրած մեծ տարածքով (70.6%):

2. Տավարաբուծական մասնագիտացման գյուղեր : Արտադրական մասնագիտացման այս տիպի գյուղերը թվաքանակով և տարածման շրջաններով երկրորդն են հանրապետությունում: Դրանք առավելապես տարածված են հանրապետության հյուսիսային շրջաններում: Լոռու մարզում այդպիսիք կազմում են բոլոր տիպի գյուղերի մոտ կեսը և ունեն կաթնային ուղղություն, որը պայմանավորված է մարզում հյութալի արոտավայրերի ու կերային կայուն բազայի առկայությամբ: Շիրակի մարզում այդպիսի տնտեսություններն շատ չեն, տարածված են հիմնկանում Աշոցքի և Ամասիայի տարածաշրջաններում, հատուկենտ նաև՝ Աթթիկի և Ախուրյանի տարածաշրջաններում:

Տավարաբուծական մասնագիտացման գյուղերի տարածման հաջորդ արեալը Ջանգեզուրում է: Ի տարբերություն նախորդ շրջանի այստեղ զարգացած է անասնապահության մասկաթնային ուղղությունը: Հանրապետության մյուս շրջաններում այս տիպի գյուղերը քիչ են (հանդիպում են նաև Իջևանի, Կրասնոսելսկի, Սևանի և Գավառի տարածաշրջաններում): Տավարա-

բուժական ուղղություն ունեն Նաիրիի և Ապարանի տարածաշրջանների մի քանի գյուղական բնակավայրեր, որոնք Երևանի բնակչությանն ապահովում են թարմ կաթով և կաթնամթերքներով:

3.Տավարաբուծական-դաշտավարական մասնագիտացման գյուղեր : Գյուղերի այս տիպը առավելապես տարածված են ՀՀ հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններում: Տաշիրի, Ստեփանավանի, Ախուրյանի, Սպիտակի և Արթիկի տարածաշրջաններում արտադրական այդպիսի մասնագիտացում ունեցող բնակավայրերեում տավարաբուծությունը զուգակցվում է կարտոֆիլի և հացահատիկի մշակության, հյուսիս-արևելքում՝ Իջևանի, Թումանյանի և Նոյեմբերյանի տարածաշրջաններում՝ այգեգործության, իսկ Տավուշի տաածաշրջանում՝ ծխախոտագործության հետ: Տավարաբուծական-դաշտավարական գյուղեր կան նաև Հրազդանի, Մարտունու, Եղեգնաձորի և Աշտարակի տարածաշրջաններում, որտեղ տավարաբուծությունը զուգակցվում է դաշտավարության և այգեգործության ճյուղերի հետ: Ընդհանուր առմամբ այս տիպի բնակավայրերը կազմում են հանրապետության բոլոր գյուղերի մոտ 8%-ը:

4. Ոչխարաբուծական մասնագիտացման գյուղեր: Այս տիպի գյուղերն ամենաքիչն են հանրապետությունում: Դրանք տարածված են Թալինի, Եղեգնաձորի, Սիսիանի և Վարդենիսի տարածաշրջաններում, որտեղ գյուղացիական տնտեսությունների այդպիսի մասնագիտացումը զուգակցվում է երկրագործության տարբեր ճյուղերի, մասնավորապես՝ հացահատիկայինների և կերային մշակաբույսերի աճեցման հետ:

5. Բանջարաբուծական մասնագիտացման գյուղեր: Տարածված են Արարատյան դաշտում, առավելապես՝ Էջմիածնի և Մասիսի տարածաշրջաններում: Սրանց գլխավոր գործառույթը մայրաքաղաքի բնակչությանը թարմ բանջարեղենի մատակարարումն է:

Նշված տարածաշրջանների որոշ գյուղական բնակավայրերում բանջարաբուծության հետ միասին մասնագիտացման նշանակություն ունի նաև կաթնային տավարաբուծությունը:

6. Բանջարաբուծա-խաղողագործական մասնագիտացման գյուղերը: Արտադրական այսպիսի ուղղության գյուղերը տարածված են միայն Արարատյան դաշտի բոլոր տարածաշրջաններում: Դրանց 70%-ից ավելին գտնվում են Արարատի և Արտաշատի տարածաշրջաններում:

7) Խաղողագործական մասնագիտացման գյուղեր: Արարատյան դաշ-

տից բացի արտադրական մասնագիտացման այդպիսի ուղղություն ունեն մաս Արարատյան դաշտը եզրավորող Նաիրիի, Աշտարակի, ինչպես նաև Բաղրամյանի և Տավուշի տարածաշրջանների առանձին գյուղական բնակավայրեր: Չնայած գյուղերի մասնագիտացման խաղողագործական ուղղությունը Հայաստանում ունի խորը արմատներ, սակայն այդպիսի գյուղեր են ստեղծվել նաև խորհրդային տարիներին՝ նոր հողերի յուրացման շրջաններում: Աշխատատարության և մեքենայացման ոչ բարձր մակարդակի պատճառով ՀՀ-ում խաղողագործական գյուղերն առանձնանում են բնակչության առավել մեծ թվով:

Վերը նշված տարածաշրջաններում ինչպես նաև հանրապետության հյուսիս-արևելքում և Մեղրու շրջանում կան շուրջ չորս տասնյակ գյուղեր, որտեղ խաղողագործության հետ միասին զարգացած են այգեգործությունը (հյուսիս-արևելքում), իսկ մնացած տարաշրջաններում՝ տավարաբուծությունը:

8) Այգեգործական մասնագիտացման գյուղեր: Գյուղերի արտադրական այս տիպը ՀՀ-ում տարածված է ծայր հյուսիս-արևելքում (Նոյեմբերյանի և Թումանյանի շրջաններում) և ծայր հարավում՝ Մեղրու շրջանում, ուր կան մերձարևադարձային նպաստավոր կլիմայական պայմաններ այգեգործության զարգացման համար: Այգեգործական մասնագիտացում ունեն նաև Արմավիրի, Աշտարակի, Նաիրիի և Կոտայքի տարածաշրջանների առանձին գյուղեր: Նույն այդ շրջանների մի շարք գյուղերում այգեգործությունը զուգակցված է տավարաբուծության հետ:

9) Ծխախոտագործական-տավարաբուծական- մասնագիտացման գյուղեր: Տարածված են հանրապետության հյուսիս-արևելքում՝ Տավուշի տարածաշրջանում: Ծխախոտագործությունը այստեղ զուգակցվում է այգեգործության և տավարաբուծության հետ:

Բացի վերը նշված տիպերից, որոնք տալիս են հանրապետության գյուղական բնակավայրերի գործառույթային կառուցվածքի և արտադրական մասնագիտացման ընդհանուր պատկերը, կան նաև մոտ չորս տասնյակի հասնող գյուղական բնակավայրեր, որոնք նշված տիպերից ոչ մեկի մեջ չեն մտնում: Դրանք հիմնականում խառը արտադրական մասնագիտացում ունեցող բնակավայրեր են, որոնք տարածված են մեծ մասամբ Արարատյան դաշտում, Շիրակում և Սևանի ավազանում:

ՀՀ գյուղական համայնքները և բնակավայրերն առանձնանում են նաև իրենց տնտեսական իրավիճակի բազմազանությամբ և տարածաշրջանային

մեծ տարբերություններով:

ՀՀ գյուղական տարածքների ժամանակակից տնտեսական իրավիճակին առավել հանգամանորեն կանդիդատական ըստ մարզերի գյուղական տարածքների վերլուծության ժամանակ (6-րդ գլխում): Կատարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս առանձնացնել ՀՀ գյուղական տարածքների տեսական զարգացման ժամանակակից առավել հրատապ հետևյալ հիմնախնդիրները.

➤ ֆինանսների պակասի, ոռոգման ցանցի բացակայության, բնակավայրից հեռու գտնվելու, տարածքի թեքությունների և այլ պատճառներով ՀՀ բոլոր մարզերի գյուղական տարածքներում զգալի տոկոս են կազմում չօգտագործվող նշակելի հողատարածքները (առանձին տարածաշրջաններում և գյուղական տարածքներում այն հասնում է մինչև 50 %-ի),

➤ տասնյակ հազարավոր գյուղացիական տնտեսություններում ապրանքային արտադրության ծավալների ավելացմանը խոչընդոտում է գյուղմթերքների ընդունման ցածր գները և մթերման ոչ ճիշտ կազմակերպման պատճառով բերքի ոչ ամբողջական մթերումը,

➤ պարբերաբար կրկնվող ցրտահարությունների, կարկտահարությունների և կլիմայական այլ աննպաստ երևույթների պատճառով գյուղացիական տնտեսությունները կրում են նյութական զգալի վնասներ,

➤ գյուղացիական տնտեսություններին տրվող համեմատաբար բարձր տոկոսով վարկերը երբեմն հնարավորություն չեն տալիս կատարել վարկային պարտավորությունները և վերջիններս հայտնվում են ֆինանսական լուրջ խնդիրների առաջ,

➤ գյուղացիական տնտեսություններին տրվող վարկերի բարձր տոկոսը և գյուղմթերքների իրացման շուկայական ցածր գները խոչընդոտում են բարձրացնել տնտեսությունների ինտենսիվացման մակարդակը,

➤ գյուղացիական տնտեսությունների մեծ մասում օգտագործվող գյուղտեխնիկայի, մեքենաների, շարքացանների, մամլիչների և այլ գործիքների ու մեխանիզմների մեծ մասը հին է, որը չի ապահովում գյուղատնտեսական աշխատանքների անհրաժեշտ արդյունավետություն:

5.2 Գյուղական բնակավայրերի սոցիալ-աշխարհագրական բնութագիրը և հիմնախնդիրները

Գյուղական տարածքների ու բնակավայրերի ձևավորման և զարգացման համար բացի զուտ տնտեսաարտադրական գործոններից իրենց դերն ունեն նաև սոցիալ-մշակութային նախադրյալները: Դարեր շարունակ հայ շինականը ստեղծել է հազարավոր գյուղական բնակավայրեր, որոնք տեղադրված են եղել բնական շքեղ ու առողջարար վայրերում: Սակայն գյուղական այդ գեղատեսիլ բնակատեղեքում, շատ հաճախ, բնակչության կյանքը եղել է խղճուկ ու մռայլ: Օտարազգիների պարբերաբար ներխուժումները, ավերումները, կոտարածը, թալանը և դրանց պատճառով ստեղծված տնտեսական ծանր վիճակն ու հարկահանությունը հնարավորություն չեն տվել հայ գյուղացուն բարելավելու իր բնակավայրի ու բնակարանի սոցիալ-կենցաղային պայմանները: Հայ շինականը զրկված է եղել լիարժեք կառուցելու, արտադրելու և իր բնակավայրի ու բնակարանի սոցիալ-կենցաղային պայմանները բարելավելու հնարավորությունից:

Հայաստանի Հանրապետությունում գյուղական բնակավայրերի տնտեսական առաջընթացի, բարեկարգման, սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման, մշակութային կյանքի ձևավորման ու զարգացման համար միանգամայն նոր պայմաններ ստեղծվեցին խորհրդային իշխանության տարիներին: Խաղաղ տնտեսական կյանքի համար երկրում ստեղծված նախադրյալները, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, հնարավորություն տվեցին բարեկարգել հանրապետության գյուղական բնակավայրերը, նոր հողերի յուրացման շրջաններում կառուցել տասնյակ գյուղական բնակավայրեր: Հանրապետության գրեթե բոլոր գյուղական բնակավայրերում նախկին խուլ պատերով կամ գետնափոր տների փոխարեն կառուցվեցին քարակերտ ու լուսավոր, շքեղ բնակարաններ, կառուցապատվեցին գյուղերի փողոցները: Հարյուրավոր գյուղական բնակավայրերի համար ստեղծվեցին ճարտարապետական հատակագծումներ և դրանց հիման վրա վերակառուցվեցին գյուղական բնակավայրերը:

Հետպատերազմյան շուրջ 4.5 տասնամյակի ընթացքում սոցիալ-տնտեսական աննախադեպ առաջընթաց ապրեցին ՀՀ գյուղական բնակավայրերը: ՀՀ ժամանակակից բոլոր մարզերի և տարածաշրջանների գյուղական բնակավայրերը վերակառուցվեցին պաշտոնապես հաստատված գլխավոր հատակագծով [102]: Դրանցում ստեղծվեցին կենցաղսպասարկման, առևտրի, առողջապահական, մշակութային, կապի և այլ ծառայութ-

յուններ իրականացնող օբյեկտներ: Դեռևս 1950-ական թվականների սկզբներին հանրապետության բոլոր գյուղական բնակավայրերն ապահովված էին էլեկտրականությամբ, հնարավորություն ունեին օգտվելու ռադիոյից, իսկ 1960-70-ական թվականներից՝ հեռուստացույցից: Խորհրդային վերջին երկու տասնամյակներին հարյուրավոր գյուղական բնակավայրեր մուտք գործեց գազամուղը և գյուղական բնակչությունը կենցաղում սկսեց օգտագործել բնական գազը:

Գյուղական բնակչության կենսամակարդակը բնութագրող կարևոր բնագավառներից է բնակարանային և կոմունալ-կենցաղային տնտեսությանը և վերջիններիս զարգացման մակարդակը: 1980-ական թվականների կեսերին հանրապետության բնակելի ընդհանուր ֆոնդը կազմում էր շուրջ 46 մլն. քկմ, որից 35 % բաժին էր ընկնում գյուղական բնակչությանը: Եթե հաշվի առնենք, որ 1980-ական թվականներին ՀՀ-ում ուրբանացման մակարդակը հասնում էր 68 %-ի, ապա պարզ է դառնում, որ հանրապետության գյուղական բնակչության մեկ շնչին ավելի շատ բնակ մակերես էր բաժին ընկնում, քան քաղաքային բնակչությունը: Բացի այդ, ի տարբերություն քաղաքային բնակչության, գյուղական բնակչության գրեթե յուրաքանչյուր ընտանիք ուներ իր մեկուսացված բնակարանը:

Քարակերտ տներով, հարմար հատակագծով և կուլտուր-կենցաղային հարմարավետ շինություններով գյուղական բնակավայրեր կային հատկապես Արարատյան դաշտի վարչական բոլոր շրջաններում, Լոռիում, Շիրակում, Սևանի ավազանի վարչական շրջաններում, Վայքում, Աղստևի հովտում, Ջանգեզուրում, ինչպես նաև Կոտայքի և Արագածոտնի ժամանակակից մարզերի տարածքներում [3]:

Խորհրդային տարիներին արմատապես բարելավվեց ՀՀ գյուղական բնակչության բուժսպասարկման գործը, թեև դրանում դեռևս մեծ էր շրջանային տարբերությունները: Եթե Վայքի, Եղեգնաձորի, Բաղրամյանի, Նոյեմբերյանի, Մարտունու վարչական շրջաններում բնակչության 10 հազ. շնչին ընկնում էր 35-40 հիվանդանոցային մահճակալ, ապա Ապարանի, Գորիսի, Թալինի Ստեփանավանի, Թումանյանի և Մեղրու շրջաններում՝ մեկուկեսից-երկու անգամ ավելի [102]:

Բացի սոցիալ-կենցաղային ծառայություններից խորհրդային տարիներին արմատապես բարելավվեց ՀՀ գյուղական բնակավայրերի կրթամշակութային սպասարկման մակարդակը: Բացառությամբ փոքր գյուղական բնակավայրերի, հանրապետության մնացած գյուղերում գործում էին միջնակարգ կամ ութամյա դպրոցներ, տասնյակ գյուղերում՝ երաժշտական

կամ արվեստի և սպորտդպրոցներ: Հանրապետության տարբեր վարչական շրջանների մի շարք գյուղական բնակավայրերում գործում էին նաև միջ-նակարգ պրոֆտեխնիկական ուսումնարաններ:

Արմատական փոփոխություններ տեղի ունեցան գյուղական բնակ-չության մշակութային սպասարկման բնագավառում: 1985 թ. դրությամբ ոչ մասնագիտական գրադարաններ կային հանրապետության գրեթե բոլոր գյուղերում: Ակունքային հիմնարկների և կինոթատրոնների օբյեկտներ ստեղծվեցին հանրապետության բոլոր գյուղական բնակավայրերում [102]:

Գյուղական բնակչության մշակութային սպասարկման և կրթական մակարդակի բարձրացման գործում անգնահատելի դեր է ունեցել նաև տպագրական գործի զարգացումը հանրապետությունում: Միութենական և հանրապետական ամենօրյա թերթեր, տասնյակ անուն ամսագրեր և այլ պարբերական հրատարակություններ կանոնավոր կերպով հասցվում էր նաև ՀՀ գյուղական բնակչությանը: Հանրապետության բոլոր վարչական շրջկենտրոններում գործում էին տպարաններ, որտեղ տպագրվում էին շրջանային ամենօրյա թերթեր և հասցվում նաև գյուղական բնակավայրեր:

Հանրապետության գյուղական բնակավայրերում մշակութային սպասարկման վերը նշված օբյեկտների ստեղծումը, բնակչության կրթական ցենզի բարձրացումը, ինչպես նաև գյուղատնտեսական աշխատանքների համատեղ կազմակերպումը ստեղծում էր նախադրյալներ գյուղական կյանքի և միջավայրի որակական մի նոր աստիճանի ձևավորման համար: Այդ ամենն իր արտացոլումն է գտել ժամանակի զեղարվեստական գրականության (Հ.Մաթևոսյան և ուրիշներ), երաժշտության և արվեստի ստեղծագործություններում («Մենք մեր սարերը», «Ոսկե ցլիկ», «Աշնան Արև» կինոնկարները, երաժշտական բազմաթիվ ստեղծագործություններ և այլն):

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրավիճակն իր անմիջա-կան ազդեցությունն է թողել նաև գյուղական բնակավայրերի սոցիալական իրավիճակի վրա: Անցումային անցած ժամանակաշրջանում ՀՀ գյուղական բնակավայրերում առկա հաստատությունների զգալի մասը դուրս է եկել շարքից, իսկ որոշ մասն էլ դառնալով մասնավոր սեփականություն փոխել է իր գործունեության ուղղությունը: Վերանորոգման արհեստանոցների, բաղ-նիքների, վարսավիրանոցների, երաժշտական կամ արվեստի դպրոցների և սպորտային հիմնարկների թիվը գյուղական համայնքներում փոքր է և կարելի է համարել, որ գյուղական համայնքների զգալի մասը զուրկ են նշված հաստատություններից և տեղում համապատասխան ծառայություններից

օգտվելու հնարավորություններից [20]: Հանրապետության լեռնային և բարձրլեռնային տասնյակ գյուղական համայնքներում ծննդան ամիսներին միջհամայնքային և համայնքները մայրուղուն միացնող ճանապարհները դառնում են անանցանելի, որի պատճառով այդպիսի համայնքները կրթական և առողջապահական խնդիրներ իրականացնելիս հանդիպում են լուրջ դժվարությունների: Հանրապետության գյուղական համայնքների զգալի մասը տեղում հոգևոր և մշակութային բարիքներից օգտվելու հնարավորություն չունեն, չեն ստանում հանրապետական և մարզային մամուլ, բավականին մեկուսացած են:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ՀՀ գյուղական բնակավայրերն առանձնանում են սոցիալ-մշակութային իրավիճակի, կրթական, առողջապահական և կենցաղսպասարկման ծառայությունների զարգացման զգալիորեն մեծ տարբերություններով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի մարզերը, ինչպես նաև Շիրակի, Լոռու, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի ցածրադիր շրջանների համեմատաբար խոշոր գյուղական բնակավայրերն ունեն կրթական, առողջապահական, մշակութային և կոմունալ-կենցաղային ծառայություններով գյուղական բնակչության սպասարկման քիչ թե շատ բավարար պայմաններ: Իսկ Շիրակի, Լոռու, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի լեռնային և բարձրլեռնային (հատկապես բնակչության թվով փոքր գյուղական բնակավայրերի զգալի մասը), գրեթե զուրկ են նման ծառայություններից:

Կրկնություններից խուսափելու համար նպատակահարմար ենք համարում ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերի սոցիալ-աշխարհագրական նկարագրին առավել մանրամասն անդրադառնալ ՀՀ մարզերի գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածաշրջանային առանձնահատկություններին և հիմնախնդիրներին նվիրված հաջորդ՝ 6-րդ գլխում:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒԴԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈՒ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տիպաբանությունը գյուղական տարածքների ու տարաբնակեցման ուսումնասիրման եղանակներից մեկն է, սակայն այն չի բացահայտում վերջիններիս բոլոր կողմերը: Գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման տարբեր տիպերի ու դրանց տարածման շրջանների առանձնացումով չի սահմանափակվում գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածքային կազմակերպման բնութագրումը: Տիպ առաջացնող հատկանիշներից բացի, կան նաև գյուղական տարածքների ու տարաբնակեցման ոչ քիչ տարրեր, որոնց ուսումնասիրումը հնարավորություն է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել գյուղական տարածքների, մասնավորապես՝ բնակչության և բնակավայրերի տարածքային կազմակերպման առանձնահատկություններին: Բացի այդ, որոշակի տարածքի սահմաններում տիպաբանությունը չի կարող փոխարինել գյուղական տարածքների ամբողջական բնութագրմանը:

ՀՀ-ում գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածաշրջանային առանձնահատկությունների ակնարկային վերլուծություններ կան Հ.Գրգեարյանի [18], Ս.Դուլյանի և Լ.Վալեսյանի [22], Գ.Ավագյանի [3, 7, 107, 108], Խ.Ավետիսյանի [9, 10], Հ.Ավետիսյանի [11, 14], Հ.Բաբայանի, Մ.Մանասյանի և Ա.Պոտոսյանի [15], Ա.Պոտոսյանի և Մանասյանի [70], Ռ.Մարգարյանի [181, 182], Մ.Քոթանյանի [103] և այլոց աշխատանքներում: ՀՀ առանձին մարզերի և տարածաշրջանների տարաբնակեցման աշխարհագրական առանձնահատկություններին անդրադարձել են Մ.Մանասյանը, Ա.Պոտոսյանը, Գ.Եղյանը [23, 41, 42, 43] և Ն.Գաբրիելյանը [16]: ՀՀ տարաբնակեցման համակարգի հիմնահարցերը և զարգացման հիմնախնդիրները քննարկվել են Մ.Մանասյանի աշխատանքներում [44, 46, 47, 49, 51, 53, 54, 55, 56, 57, 175, 176]: Առ այսօր ՀՀ գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածաշրջանային առանձնահատկությունների և զարգացման հիմնախնդիրների հարցերը հիմնականում քննարկվել են Ա.Պոտոսյանի [69, 72, 73, 79, 80, 83, 84, 88, 90, 187, 189] և Մ.Մանասյանի [60] կողմից:

ՀՀ-ում բնակչության տարաբնակեցումը դարերի ընթացքում իր վրա է կրել պատմական, սոցիալ-տնտեսական և բնաաշխարհագրական գործոն-

ների ազդեցությունը: Լեռնային մակերևույթի բարդ կառուցվածքի և բնաաշխարհագրական պայմանների բազմազանության հետևանքով ՀՀ-ում հստակորեն առանձնանում են բնատնտեսական միավորներ: ՀՀ-ում ընդունված է առանձնացնել բնատնտեսական հետևյալ շրջանները. Արարատ, Շիրակ, Գուգարք, Ուտիք, Սևան, Վայք և Ջանգեզուր, որոնց սահմանները հիմնականում անցնում են խոշոր լեռնաշղթաների և զանգվածների ջրբաժաններով: Դրանցից յուրաքանչյուրը աչքի է ընկնում պատմաազգագրական, բնական համալիրի և տնտեսության զարգացման ու մասնագիտացման ինքնատիպ գծերով, որոնք պայմանավորում են առանձին բնատնտեսական միավորների տարաբնակեցման բնույթը: Բնատնտեսական միավորների միջև տարբերություններն ակնառու է նաև գյուղական տարածքների ու տարաբնակեցման առումով, քանի որ գյուղական տարածքներն առավել մեծ չափով են իրենց վրա կրում բնական համալիրի տարրերի անմիջական և միջնորդավորված ազդեցությունը: Որպես կանոն, բնատնտեսական միավորներն իրենց տարածքի սահմաններում ունենալով տարաբնակեցման լավ արտահայտված գծեր, առաջին հերթին միմյանցից տարբերվում են բնակչության տարածքային կազմակերպման առանձնահատկություններով: Չնայած որ վերջին տասնամյակներին այդ տարբերություններն ինչ որ չափով համահարթվել են, այնուամենայնիվ բնատնտեսական միավորները պահպանում են գյուղական տարածքների ու տարաբնակեցման իրենց բնորոշ գծերն ու ինքնատիպ առանձնահատկությունները:

ՀՀ-ի ներկայիս վարչական մարզերից Շիրակը, Լոռին, Տավուշը, Գեղարքունիքը, Վայոց ձորը և Սյունիքն իրենց տարածքով, հիմնականում, համապատասխանում են Շիրակ, Գուգարք, Ուտիք, Սևան, Վայք և Ջանգեզուր բնատնտեսական շրջաններին, իսկ Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի տարածքները միասին վերցրած մասնակի շեղումներով, համապատասխանում են Արարատ բնատնտեսական շրջանին:

Հիմք ընդունելով վերը նշվածը և ելնելով աշխատանքի գիտական - գործնական ու կիրառական նշանակությունից, նպատակահարմար ենք համարում ՀՀ գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածաշրջանային առանձնահատկությունների և առկա հիմնախնդիրների վերլուծությունը ներկայացնել ըստ վարչական մարզերի:

6.1 Արագածոտնի մարզ

Արագածոտնի մարզն առանձնանում է բնաաշխարհագրական պայմանների բազմազանությամբ: Այստեղ առկա են ՀՀ-ում հանդիպող գրեթե բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները, որոնք ընկած են 950-ից մինչև 4090 մ բարձրությունների վրա: Մարզին բաժին է ընկնում ՀՀ տարածքի մոտ 9,3, բնակչության՝ 4,4 և գյուղական բնակչության՝ 10 %-ը: 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզն ուներ գյուղական 117 և քաղաքային երեք բնակավայր:

Չնայած մարզի տարածքում բարձրաչափական միջերի մեծ տարբերություններին, այստեղ բնակեցման համար առավել նպաստավոր համարվող մինչև 1500 մ բարձրություններում ընկած են տարածքի 36 %-ը, իսկ մինչև 2000 մ բարձրություն ունեցող տարածքները կազմում են մարզի ավելի քան 64 %-ը: Մարզում 2000-2500 մ բացարձակ բարձրություն ունեցող շրջաններին բաժին է ընկնում տարածքի 19 -ը, իսկ 2500 մ-ից բարձր շրջաններին՝ 17 %-ը [հաշվարկներն ըստ 128-ի տվյալների]:

Արագածոտնի ժամանակակից տարածքի բնակեցման, բնակավայրերի առաջացման և հետագա զարգացման համար առանձնահատուկ դեր են ունեցել պատմաաշխարհագրական նախադրյալները: Այն մեր հանրապետության տարածքի առավել վաղ բնակեցված շրջաններից մեկն է Արտենի լեռան մոտ է գտնվում մարդու ամենահինագույն բնակավայրը Հայկական լեռնաշխարհում, որտեղ հայտնաբերված քարե գործիքներն ունեն շուրջ մեկ միլիոն տարվա հնություն: Մարզի տարածքը մասամբ համապատասխանում է պատմական Արագածոտն գավառին: Այդ ամենով հանդերձ, պատմական երկարատև ժամանակաշրջան, մարզի ներկայիս տարածքի զգալի հատվածներ յուրացված չեն եղել և մշտական բնակչություն չեն ունեցել: Առկա բնակչությունը և բնակավայրերն առավելապես կենտրոնացված է եղել Քասաղի և Նրա վտակների միջին հոսանքի շրջաններում:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, սկսած 1829 թ-ից, Արագածոտնի մարզի տարբեր տարածքներում (Ապարանի, Թալինի, Արագածի և Աշտարակի ներկայիս տարածաշրջաններում), Արևմտյան Հայաստանից (հիմնականում Մուշից, Սասունից, Մանազկերտից, Ալաշկերտից, Վանից, Խոյից) վերաբնակեցվել են մեծ թվով հայ գաղթականներ: Ներդրի երկրորդ մեծ հոսքն այստեղ տեղի է ունեցել 1915-22 թթ., երբ Արևմտյան Հայաստանի վերը նշված շրջաններից, Մեծ եղեռնից փրկված-

ներից մի մասը վերաբնակեցվեցին ներկայիս Արագածոտնի մարզում: Բացի հայ բնակչությունից այդ նույն ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից այստեղ ներգաղթել են նաև եզդիներ, որոնք հաստատվել են առավելապես մարզի ներկայիս տարածքի Արագածի և Թալիհի տարածաշրջաններում:

1831 թ-ին մարզի ժամանակակից տարածքի սահմաններում ապրող բնակչության թիվը կազմում էր 15645 մարդ, բնակավայրերինը՝ 88, բնակչության միջին խտությունը՝ 5,8 մարդ/քկմ: Առավել մարդաշատ գյուղերից էին Աշտարակը (826 մարդ), Օշականը (611 մարդ), Կարբին (694 մարդ), Քուչակը (531 մարդ), Մաստարան (561 մարդ): Համեմատաբար խիտ էին բնակեցված Աշտարակի (8,2 մարդ/քկմ) և Ապարանի (9,1 մարդ/քկմ) տարածաշրջանները, նոսր էր բնակեցված Թալիհի տաչածաշրջանը (1,7 մարդ/քկմ) [184]:

Մինչև XIX դարի վերջը 1831 թ. համեմատությամբ Արագածոտնի մարզի տարածքում բնակչության թիվն ավելացել է հինգ անգամ, իսկ բնակավայրերինը՝ գրեթե կրկնապատկվել է: Հետագա մոտ երեք տասնամյակի ընթացքում (1897-1926 թթ.) մարզի բնակչության թիվը մնացել է գրեթե նույնը, որի հիմնական պատճառն առաջին համաշխարհային և քաղաքացիական պատերազմի տարիներին բնակչության թվաքանակի զգալի կորուստներն էին (աղ. 24):

Ինչպես հանրապետության մի քանի մարզերում Արագածոտնում ևս խորհրդային իշխանության տարիներին դիտվել է բնակավայրերի թվի նվազում և հետագա կայունացում, իսկ բնակչության թվաքանակի՝ կայուն աճ: 1926-1995 թթ. ընթացքում մարզի բնակչության թիվն ավելացել է ավելի քան երկու անգամ, ընդ որում այն առավել արագ է աճել 1979-1995 թվականներին: Եթե 1926-1979 թթ. մարզի բնակչության տարեկան միջին բացարձակ հավելաճը կազմել է ընդամենը 680 մարդ, ապա 1979-95 թթ. ընթացքում 3114 մարդ (աղ. 24):

Մարզի ժամանակակից տարածքում բնակավայրերի ցանցի ձևավորումը և հետագա զարգացումը պայմանավորված է նաև համեմատաբար նպաստավոր աշխարհագրական դիրքով: Ղա նախ և առաջ հարևանությունն է մայրաքաղաք Երևանին: Երևան-Աշտարակ-Թալիհ-Գյումրի, Երևան-Աշտարակ-Ապարան-Վանաձոր և Երևան-Արմավիր-Քարակերտ-Արագածավան-Գյումրի համապետական նշանակության ավտոճանապարհներն իրենց դրական ազդեցությունն են թողնում մարզի բնակավայրերի զարգացման վրա:

Բնակեցման և բնակավայրերի ցանցի ձևավորման ու զարգացման համար պակաս կարևոր չեն նաև մարզի բնառեսուրսային նախադրյալները: Այստեղ առկա բազմագույն տուֆերը, բազալտի, պեռլիտի և հրաբխային խարամի պաշարները որակյալ շինարարական ռեսուրսներ են ոչ միայն Արագածոտնի մարզի, այլ նաև ՀՀ համար: Մարզում շատ են նաև լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները, որոնք ունեն տնտեսական կարևոր նշանակություն մարզի բնակավայրերի համար:

Աղյուսակ 24

Արագածոտնի մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացը (1831-2015 թթ.)¹

Տարեթվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության միջին խտությունը	Գյուղատեղիների ցամաքային	Գյուղատեղիների միջին խտությունը
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական			
1831	-	88	15645	-	15645	5,8	5,8	178
1897	-	166	78255	-	78255	28,4	28,4	471
1926	-	142	78841	-	78841	28,6	28,6	555
1959	-	122	90320	-	90320	32,8	32,8	740
1970	3	103	106380	20026	86284	38,6	31,5	838
1979	4	104	114184	31249	82935	41,4	30,3	797
1988	4	106	133149	39520	93629	48,3	34,2	883
2001	3	117	138301	32864	105437	50,2	38,3	901
2011	3	117	133.300	30800	102500	48,4	37,2	876
2015	3	117	131.300	29900	101400	47,6	36,8	867

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության և բնակավայրերի վերաբերյալ ՀՀ ԱՎԾ հրապարակումների, 1970, 1979, 2001, 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

* Թալինի տարածաշրջանի Արագածավան բնակավայրը 1979 և 1988 թթ-ին համարվել է քաղաքատիպ ավան, իսկ 1996 -ից՝ գյուղական բնակավայր:

Արագածոտնի մարզի ագրոկլիմայական ռեսուրսները հնարավորություն են տալիս տարածքի ստորին զոտում զբաղվել խաղողագործությամբ և այգեգործությամբ, միջին զոտում՝ հացահատիկայինների մշակությամբ և

անասնապահության տարբեր ճյուղերով, իսկ վերին գոտում՝ արոտային անասնապահությամբ: Մարզի գյուղական բնակավայրերի համար առանձնահատուկ տնտեսական նշանակություն ունեն նաև տարածքի մեծ մասը զբաղեցնող լեռնային սևահողերը, իսկ բարձրլեռնային մասերում՝ մերձալպյան և ալպյան մարգագետինները: Մարզի բնակավայրերի ժամանակակից ցանցի ձևավորումը և զարգացումը որոշակիորեն պայմանավորված է նաև բնածին և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներով: Դրանց դերն առավել կարևորվում է ժամանակակից պայմաններում, երբ զբոսաշրջությունը դառնում է ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը:

Արագածոտնի տարաբնակեցման, մասնավորապես գյուղական տարածքների համար իրենց առանձնահատուկ դերն ունեն նաև Արզնի-Շամիրամի և Թալինի մայր ջրանցքները, դրանցից սնվող ոռոգման ողջ համակարգը: Վերջիններս համարվում են մարզի գյուղական տարածքների գոյատևման և տնտեսական զարգացման համար կարևորագույն գործոն:

Արագածոտնը ՀՀ թույլ ուրբանացված մարզերից մեկն է: Այստեղ գյուղական բնակչության թիվն ավելի քան չորս անգամ գերազանցում է քաղաքային բնակչության թվին: Քաղաքային բնակավայրերում ապրում է մարզի բնակչության ընդամենը 22.8 %-ը:

Արագածոտնի մարզի բնակչության կազմի բնորոշ կողմերից մեկն ազգային հատկանիշն է: Այստեղ, ի տարբերություն այլ մարզերի, հայ բնակչության տեսակարար կշիռը համեմատաբար ցածր է: 1989 թ. մարդահամարի տվյալների մարզով բնակչության մոտ 8 %-ը կազմում էին եզդիները (ընդհանուր թվով 10551 մարդ): 2011 թ. մարդահամարի ժամանակ այդ ցուցանիշը կազմել է 4% (5474 մարդ):

Մակերևութի խիստ բազմազանության և բարձրաչափական նիշերի ու տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունների պատճառով մարզի տարածքի տարբեր հատվածներում բնակչության խտության ցուցանիշները նկատելիորեն տարբեր են: Մարզը բնակչության խտությամբ (48,4 մարդ/քվմ) մոտ երկու անգամ զիջում է ՀՀ բնակչության միջին խտությանը: Աշտարակի տարածաշրջանում այդ ցուցանիշն ավելի քան 3 անգամ մեծ է քան Թալինի տարածաշրջանում, իսկ Ապարանի և Արագածի տարածաշրջաններին գերազանցում է 2,5-2,6 անգամ:

Արագածոտնի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (2015 թ.)¹

Տարածաշրջան ները և մարզը	Բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մետր)																		Ընդամենը բնակչու- թյուն	Ընդամենը գյուղեր
	1000- մինչև		1001- 1200		1201- 1400		1401- 1600		1601- 1800		1801- 2000		2001- 2200		2200-ից բարձր					
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ				
Աշտարակի	2	2125	13	28400	5	13965	4	6271	7	3203	0	0	0	0	0	0	0	31	53964	
Ապարանի	0	0	0	0	0	0	0	0	0	0	17	16938	3	1421	0	0	0	20	18359	
Արագածի	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	132	20	15372	1	1326	22	16830		
Թալինի	0	0	1	3780	5	6863	13	8091	9	8827	9	4537	4	1729	0	0	0	41	33827	
Ընդամենը մարզում	2	2125	14	32180	10	20828	17	14362	16	12030	27	21607	27	18522	1	1326	114 ²	122980		

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով 2015 թ.», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Արագածոտնի մարզի գյուղական բնակավայրերի ընդամուր թիվը 117 է, որից 2-ը մշտական բնակչություն չունեն (Աշտարակի տարածաշրջանի Նիզատուն և Լուսադրուր գյուղերը), իսկ Մուղնի գյուղը Աշտարակի քաղաքային համայնքի ենթակայության տակ է:

ա/ Գյուղերի թիվը, բ/ Բնակչության թիվը:

Արագածոտնի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումը ըստ մարդաբանակի (2015 թ.)¹

Տարածաշրջանները և մարզը	Բնակավայրերի և բնակչության թվի բաշխումը ըստ մարդաբանակի (մարդ)																Ընդամենը բնակչություն	Ընդամենը գյուղեր
	51-100		101-200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի					
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ				
Աշտարակի	1	3	1	93	2	293	4	1460	5	3646	11	18721	6	23633	1	6115	31	53964
Ապարանի	0	0	0	0	2	317	4	1166	9	6623	4	6342	1	3911	0	0	20	18359
Արագածի	0	0	0	0	1	132	7	2285	8	5126	6	9287	0	0	0	0	22	16830
Թալինի	1	14	2	164	7	975	7	2353	15	9848	7	10568	1	3780	1	6145	41	33827
Ընդամենը մարզում	2	17	3	257	12	1717	22	7264	37	25243	28	44898	8	31324	2	12260	114 ²	122980

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015 թ.»-ի, Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Արագածոտնի մարզի գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը 117 է, որից 2-ը մշտական բնակչություն չունեն (Աշտարակի տարածաշրջանի Սիգատուն և Լուսառբյուր գյուղերը), իսկ Մուղնի գյուղը Աշտարակի քաղաքային համայնքի ենթակայության տակ է: ա/ Գյուղերի թիվը, բ/ Բնակչության թիվը:

Աղյուսակ 27
Արագածոտնի մարզի բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների (2015 թ.)¹

Բնակավայրեր	Բնակավայրերի և բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների (մետր)													
	մինչև 1000	1001-1200	1201-1400	1401-1600	1601-1800	1801-2000	2001-2200	2200-ից բարձր	Ընդամենը					
ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	
քաղաքային	-	1	18458	-	1	5025	-	1	6413	-	-	-	3	29896
գյուղական	2	2125	14	32180	10	20828	17	14362	16	12030	27	21607	27	18522
ընդամենը	2	2125	15	50638	10	20828	18	19387	16	12030	28	28020	27	18522
%-ով	1,7	1,4	12,8	33,1	8,5	13,6	15,4	12,7	13,7	7,9	23,9	18,3	23,1	12,1
													0,9	0,9
													114	122980
													117	152878
													100,0	100,0

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:
 ա/Բնակավայրերի թիվը , բ/ Բնակչության թիվը:

Արագածոտնի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժմանը ըստ բարձրության գոտիների (1926-2015 թթ.)¹

Տարի		Բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մետր)																	
		1001-1200		1200-1400		1401-1600		1601-1800		1801-2000		2001-2200		2200-ից բարձր		Ընդամենը			
ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1926	-	21	14467	11	5980	24	8583	18	6614	35	24840	33	18745	-	-	142	79229		
1979	4	4364	10	17754	9	10124	13	10529	16	9625	27	15930	26	15147	-	-	105	83473	
2011	2	1695	14	26510	10	17321	17	12036	16	10044	27	18970	27	13750	1	1223	114	101549	
2015	2	2125	14	32180	10	20828	17	14362	16	12030	27	21607	27	18522	1	1326	114	122980	
նույնը տոկոսներով																			
1926	-	14.8	18.3	7.7	7.5	16.9	10.8	12.7	8.3	24.7	31.4	23.2	23.7	-	-	-	100	100	
1979	3.8	5.2	9.5	21.3	8.6	12.4	12.6	15.2	11.5	25.7	19.1	24.8	18.2	-	-	-	100	100	
2011	1.7	1.7	12.3	26.1	8.8	17.1	14.9	11.8	14.0	9.9	23.7	18.7	23.7	13.5	0.9	1.2	100	100	
2015	1.7	1.7	12.3	26.2	8.8	16.9	14.9	11.7	14.0	9.8	23.7	17.6	23.7	15.0	0.9	1.1	100	100	

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Е., 1962, վիճակագրական ժողովածուի, 1979 և 2011 թ. մարդահամարի և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա, ա/ Բնակավայրերի թիվը և տոկոսը, բ/ Բնակչության թիվը և տոկոսը:

Արագածոտնում բնակեցվածությամբ հստակորեն առանձնանում են բարձրության 1001-1200 և 1801-2000 մ գոտիները, որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության շուրջ 44 %-ը (26,2%-ը՝ 1001-1200 մ, իսկ 17,6%-ը՝ 1801-2000 մ բարձրության գոտուն): Մարզի գյուղական բնակչության 28 %-ից ավելին տեղաբաշխված է 1201-1600 մ բարձրություններում, ավելի քան 16 %-ը՝ 2000 մ-ից բարձր շրջաններում և ընդամենը 1,7 %-ն է ապրում մինչև 1000 մ բարձրության գոտում (աղ. 25):

Մարզի գյուղական բնակավայրերի 32 %-ից ավելին միջին մեծության գյուղեր են (501-1000 մարդ), որոնցում ապրում է Արագածոտնի գյուղական բնակչության 22,3 %-ը: Թվաքանակով երկրորդը մեծ գյուղերն են (1001-3000 մարդ), որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության գրեթե 40 %-ը: Մարզում մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերում է ապրում գյուղական բնակչության մոտ 72 %-ը, որոնք կազմում են գյուղերի ընդհանուր թվի ընդամենը 33,3 %-ը: Իսկ մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերին (39 գյուղ) բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության ընդամենը 7,5 %-ը:

Անցած տասնամյակների ընթացքում Արագածոտնում տեղի է ունեցել գյուղական բնակչության և բնակավայրերի թվի ըստ բարձրության գոտիների բաշխվածության նկատելի փոփոխություններ: Տեղի է ունեցել մարզի ցածրադիր շրջաններում (մինչև 1400 մ բարձրություններն ընկած տարածքներում) ապրող գյուղական բնակչության ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշների էական ավելացում: Եթե 1926 թ. նշված տարածքներին բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության 25,8 %-ը, ապա 2015 թ-ին՝ 44,8 %-ը (աղ.27): Նույն այդ ժամանակահատվածում տոկոսային 21,4 կետով նվազել է մարզի լեռնային և բարձրլեռնային շրջանների (1801-2250 մ) բաժինը գյուղական բնակչության թվաքանակում: Մարզի մնացած տարածքներում՝ 1401-1800 մ բարձրության շրջաններում, թեև 1926-2015 թթ. ընկած ժամանակահատվածում գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է ավելի քան 1,7 անգամ, սակայն հարաբերական ցուցանիշով այն էական փոփոխություն չի կրել (19,1 %-ից հասել է 21,5 %-ի) (աղ. 28):

Մարզի ժամանակակից տարածքում գյուղական բնակավայրերի ամենամեծ թվաքանակը գրանցվել է 1897 թ.-ին անցկացված մարդահամարի ժամանակ (166 գյուղ): Հետագա տասնամյակների ընթացքում մարզի բարձրադիր շրջաններում գյուղերի բնագրկման ու վերացման պատճառով դրանց թվաքանակը նվազել է: Դրա հետ միաժամանակ մարզի ցածրադիր շրջաններում խորհրդային տարիներին նոր հողերի յուրացման շնորհիվ

ձևավորվել են գյուղական մի շարք նոր բնակավայրեր: Սկսած 1950-ական թվականներից մարզում տեղի է ունեցել գյուղերի թվաքանակի նվազում և բնակավայրերի ցանցի աստիճանական կայունացում:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած տասնամյակների ընթացքում Արագածոտնում տեղի է ունեցել գյուղերի խոշորացում և ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական բնակավայրերի խմբերի նկատելի փոփոխություններ: 1926-2015 թթ. ընթացքում մարզում առավել կայուն է մնացել 1000-3000 մարդ ունեցող գյուղերի բնակչության մասնաբաժինը (աղ. 29): 501-1000 մարդ ունեցող գյուղերի թվաքանակը թեև 1926-2015 թթ. ընթացքում քիչ է փոխվել, սակայն տոկոսային գրեթե 10 կետով նվազել է այդ խմբի գյուղերի բնակչության մասնաբաժինը մարզում: Առավել նկատելի է փոփոխությունը մարզի խոշոր (3001-5000 մարդ) գյուղերի խմբում (1926 թ. համեմատությամբ 2015 թ-ին այդպիսի գյուղերում ապրող բնակչության բաժինն ավելացել է շուրջ 4,2 անգամ) (աղ. 29): Մյուս կողմից տեղի է ունեցել մինչև 500 մարդ ունեցող գյուղերի ինչպես թվաքանակի, այնպես էլ բնակչության մասնաբաժնի կտրուկ նվազում: 1926թ. համեմատությամբ 2015 թ. այդպիսի գյուղերի թիվը նվազել է 2,2 անգամ, իսկ դրանց մասնաբաժինը մարզի գյուղական բնակչության մեջ՝ 3,4 անգամ (աղ.29)

Արագածոտնի մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը 218219 հա է, որը կազմում է մարզի ընդհանուր հողային ֆոնդի 79.2 %-ը: Գյուղատնտեսական հողատեսքերն ունեն հետևյալ կառուցվածքը. արոտավայրեր (60,2 %), վարելահողեր (24,5 %), բազմամյա տնկարկներ (2,2 %), խոտհարքեր (1,7 %), մնացածը՝ այլ հողատեսքերն են:

Արդյուական 29
Արագածոտնի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժմբացն ըստ մարդաշտտության խմբերի (1926-2015 թթ.)¹

Այլիժիժս		Գյուղական բնակավայրերի խմբավորումն ըստ մարդաբանակի (մարդ)													
		մինչև 200 մարդ		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի		Ընդամենը	
		ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
1926	35	3431	52	16875	35	24044	19	30026	1	4853	-	-	142	79229	
1979	9	1028	34	12125	39	25537	19	29859	3	9880	1	5044	105	83473	
2011	24	2744	29	10535	32	22918	23	40062	5	20237	1	5053	114 ²	101549	
2015	17	1991	22	7264	37	25243	28	44898	8	31324	2	12260	114 ²	122980	
Նույնը տուկումներով															
1926	24.6	4.3	36.7	21.3	24.6	30.4	13.4	37.9	0.7	6.1	-	-	100.0	100.0	
1979	8.6	1.2	32.4	14.5	37.1	30.6	18.1	35.8	2.9	11.8	0.9	6.1	100.0	100.0	
2011	21.1	2.7	25.4	10.4	28.1	22.6	20.2	39.4	4.4	19.9	0.8	5.0	100.0	100.0	
2015	14.9	1.6	19.3	5.9	32.5	20.5	24.6	36.5	7.0	25.5	1.7	10.0	100.0	100.0	

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962 Դ., վիճակագրական ժողովածուի, 1979 և 2011 թ. մարդահամարի և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզի գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը 117 է, որից 1-ը՝ Մուղնին, Աշտարակի քաղաքային համայնքի ենթակայության տակ է, իսկ Լուսավորչուր և Նիզատուն գյուղերը նշտական բնակչություն չունեն:

Մարզի գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թիվը մոտ 35 հազ է, որը 1990-ական թվականների համեմատությամբ նվազել է մոտ 2 հազ-ով: Գյուղացիական տնտեսությունների հողատարածքների միջին չափերն ավելի մեծ են Արագածի տարածաշրջանում, երկրորդն այդ ցուցանիշով Ապարանի տարածաշրջանն է, երրորդը՝ Թալինի, չորրորդը՝ Աշտարակի: Իսկ գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության առումով առավել բարձր ցուցանիշներ ունեն Ապարանի և Աշտարակի տարածաշրջանի գյուղական համայնքների տնտեսությունները, այնուհետև Թալինի և Արագածի:

Բնակլիմայական պայմանների բազմազանության պատճառով մարզն առանձնանում է գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման տարբերություններով: Աշտարակի տարածաշրջանի Կարբի, Օհանավան և Ուշի գյուղերն ունեն հիմնականում պտղաբուծական մասնագիտացում (առավելապես խնձորենու մշակության ուղղությամբ), Ոսկեվազ, Բյուրական, Աղծք գյուղերը՝ գետնաեփածկի և պտղաբուծության, Աշտարակ, Սասունիկ, Կոշ, Ուջան, Եղեսիա, Արուճ՝ համայնքները խաղողագործական մասնագիտացում: Տարածաշրջանի մնացած գյուղերն առավելապես ունեն անասնապահական և երկրագործական տարբեր ճյուղերի զուգակցմամբ ձևավորած արտադրական մասնագիտացումներ:

Աշտարակի տարածաշրջանի ցածրադիր և միջին բարձրություններում ընկած գյուղացիական տնտեսություններին բնորոշ է տնտեսության վարման ինտենսիվ եղանակը, մնացած գյուղական համայնքներում դեռևս գերակշռում է էքստենսիվ ուղղությունը: Ապարանի տարածաշրջանի գյուղական համայնքների մեծ մասը զբաղվում են կարտոֆիլի մշակությամբ և անասնապահությամբ, ինչպես նաև բանջարաբուծությամբ (կաղամբի մշակություն՝ Շենավան, Զարթավան, Ափնա, Արագած, Ծաղկաշեն, Քուչակ և այլ գյուղերում):

Արագածի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններում հիմնականում զբաղվում են տավարաբուծությամբ (ոչխարաբուծության հետ զուգակցված) և հացահատիկի (գարու) մշակությամբ: Թալինի տարածաշրջանի ցածրադիր գոտու (Արտենի, Արագածավան, Լուսակն գյուղերում) տնտեսական գործունեության հիմնական ուղղությունը խաղողագործությունը և պտղաբուծությունն է, իսկ մնացած գյուղական համայնքներում՝ հացահատիկի մշակությունը և անասնապահությունը:

Մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվում են

առկա վարելահողերի 70-75 %-ը, մնացածը չեն օգտագործվում (ֆինանսների սղության, բնակավայրից հեռու գտնվելու, ոռոգման համակարգերի բացակայության, տարածքի թեքությունների, քարքարոտության և այլ պատճառներով):

Ներկայումս մարզում ոռոգման համակարգի հիմքը կազմում են Արզնի - Շամիրամի և Թալիհի (Ախուրյանի ջրամբարից սնվող) ջրանցքները, Ապարանի և 28 փոքր և միջին մեծության (շուրջ 110 մլն մ³ ջրի ծավալով) արհեստական ջրամբարները, Քասախ և Գեղածոր գետերի ջրերը:

Մարզում գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության ավելացման ուղիներից մեկը ներկայումս ոռոգման առկա համակարգի վերակառուցումն ու բարեկարգումն է, նոր ջրագծերի անցկացումը, ագրոտեխնիկական միջոցառումների և գյուղատնտեսական աշխատանքների մեթոդայացման մակարդակի բարձրացումը: Խնդրի լուծմանը կնպաստի նոր ջրամբարների կառուցումը: Մասնավորապես ծրագրվում է կառուցել Մաստարայի ջրամբարը մոտ 100 մլն մ³ ջրատարողությամբ:

Արագածոտնի մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրանքն հիմնականում իրացվում է «Աշտարակ Վայն», «Հայասի», Կոշ, Ոսկեվազ և Սասունիկ գյուղերի խաղողի մշակման ձեռնարկություններում, «Թամարա Ֆրուտ», «Իշխան» ՍՊԸ-ի և Աղծքի պտղի վերամշակման գործարաններում: Բացի այդ մի շարք բնակավայրերում կան սառնարանային տնտեսություններ, որոնք ապահովում են մոտ 20 հազ. տոննա բերքի պահեստավորում:

Մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության (Աշտարակ-Լանջիկ, Աշտարակ-Ապարան-Սպիտակի լեռնանցք) մոտ 144 կմ և հանրապետական նշանակության 160 կմ ճանապարհահատվածները կարևոր դեր ունեն դրանց մերձակայքում կամ անմիջապես ճանապարհի վրա գտնվող գյուղական համայնքների զարգացման համար: Մարզային նշանակության ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 389 կմ, որոնք ապահովում են գյուղական համայնքների տրանսպորտային կապը մարզկենտրոնի, նախկին վարչական շրջանների և տարբեր գյուղերի միջև: Ընդհանուր առմամբ մարզի գյուղական բնակավայրերին սպասարկող ավտոճանապարհները գտնվում են բավարար և լավ վիճակում, իսկ Արագածի տարածաշրջանի և Թալիհի տարածաշրջանի լեռնային շրջաններում գտնվող գյուղերի ճանապարհները գտնվում են վատ վիճակում և հիմնադրոգման կարիք ունեն:

Մարզի գյուղական բնակավայրերից 61-ը (53,5 %-ը) գազաֆիկացված են (Աշտարակի տարածաշրջանում՝ 18, Թալիհի տարածաշրջանում՝ 16, Ապարանի և Արագածի տարածաշրջաններում 27 գյուղ): Գյուղական բնակավայրերի սոցիալական կարևոր հարցերից մեկը՝ ջրամատակարարումը, Արագածոտնի մարզում որոշակի խնդիրներ ունի: Մարզի Թալիհի, Արագածի և Աշտարակի տարածաշրջանի մի շարք գյուղերում ջրամատակարարումն իրականացվում է ոչ շուրջօրյա: Մարզում կա խմելու ջրի պակաս, ջրագծերի բարեկարգման և նոր ջրագծերի կառուցման անհրաժեշտություն:

Արագածոտնի մարզի գյուղական համայնքները սոցիալ-մշակութային ծառայությունների զարգացման մակարդակով միջին տեղ են զբաղեցնում ՀՀ-ում: Մարզի գյուղական 114 բնակավայրում գործում են 79 միջնակարգ և 29 հիմնական դպրոցներ, 26 գյուղում գործում են մանկապարտեզներ: Նախակրթական հաստատություններ կան 35 գյուղի դպրոցներում: Օշական, Ուջան, Ոսկեվազ, Կոշ, Արագած, Արագածավան գյուղերում գործում են երաժշտական և արվեստի դպրոցներ: Մարզի գյուղական համայնքներում առկա մշակութային օբյեկտները ստեղծվել են դեռևս խորհրդային տարիներին: Մարզի գյուղական բնակավայրերի ապահովվածությունը մշակութային օբյեկտներով ըստ տարածաշրջանների ունի հետևյալ պատկերը. Ապարանի տարածաշրջան՝ 14 գրադարան և 11 մշակույթի տուն, Արագածի տարածաշրջան՝ 7 գրադարան, 7 մշակույթի տուն, Աշտարակի տարածաշրջան՝ 30 գրադարան և 20 մշակույթի տուն:

Մարզի գյուղական բնակչության առաջնային բուժապասարկումն իրականացվում են գյուղական բնակավայրերում առկա առողջության պահպանման կենտրոնները, բուժկետերը և բուժհաստատությունները:

Այսպիսով, Արագածոտնի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության վերաբերյալ փաստական և վիճակագրական տվյալների մշակումը, վերլուծությունը և ընդհանրացումը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

➤ մարզի ժամանակակից տարածքի բնակեցման, բնակավայրերի ցանցի ձևավորման և հետագա զարգացման համար առանձնահատուկ դեր են ունեցել 1829-30 և 1915-22 թթ.-ին Արևմտյան Հայաստանից բնակչության ներգաղթի ալիքները, տնտեսաաշխարհագրական և տրանսպորտաաշխարհագրական համեմատաբար նպաստավոր դիրքը և սոցիալ-տնտեսական գործոններն ու ռեսուրսները,

➤ մարզում բնակչության թվաքանակի կայուն աճ է դիտվել խորհր-

դային իշխանության տարիներին: 1926 և 1989 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում մարզի բնակչության բացարձակ թվաքանակն ավելացել է 1,7, իսկ գյուղական բնակչությունը՝ 1,2 անգամ: Վերջին երկու տասնամյակի ընթացքում մարզում տեղի է ունեցել ինչպես ընդհանուր, այնպես էլ գյուղական բնակչության թվաքանակի նվազում,

➤ մարզի տարածքում բարձրաչափական միջերի մեծ տարբերությունների, մակերևույթի բազմազանության, առանձին շրջանների միջև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների տարբերության և այլ գործոնների պատճառով առկա է բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման և խտության նկատելիորեն մեծ տարբերություններ: Մարզի գյուղական բնակչության ավելի քան 43 %-ը տեղաբաշխված է 1001-1400, իսկ մոտ 33 %-ը՝ 1801-2200 մ բարձրության գոտում: Գյուղական բնակավայրերի առավել մեծ թվաքանակով աչքի է ընկնում 1801-2200 մ բարձրության գոտին, որտեղ ընկած են մարզի գյուղերի ընդհանուր թվի ավելի քան 47 %-ը (54 գյուղ),

➤ Արագածոտնին բնորոշ են մեծ, խոշոր և միջին մեծության գյուղական բնակավայրերը: Դրանց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 82,5 և գյուղերի ընդհանուր թվի՝ 64 %-ը,

➤ անցած տասնամյակների ընթացքում Արագածոտնի մարզում տեղի է ունեցել գյուղական բնակչության և բնակավայրի բաշխվածության զգալիորեն մեծ փոփոխություններ՝ ինչպես ըստ բարձրության գոտիների, այնպես էլ ըստ գյուղական բնակավայրերի մարդաշատության խմբերի: Ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշներով գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում ավելացել է մարզի ցածրադիր՝ մինչև 1400 մ բարձրության գոտու բնակչության բաժինը: Մյուս կողմից՝ մարզի գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում տեղի է ունեցել լեռնային և բարձրլեռնային շրջանների (1800-2250 մ) գյուղական բնակչության մասնաբաժնի նվազում,

➤ Արագածոտնում գյուղացիական տնտեսությունների և գյուղական համայնքների տնտեսական զարգացման լուրջ հիմնախնդիրներից է ոռոգման ջրի հարցը: Այստեղ ոռոգելի հողատարածքները կազմում են մոտ 24 հազ. հա և ոռոգվում են տարեկան միջին հաշվով 2,5-3 անգամ, որը բարձր բերք ապահովելու համար բավարար չէ: Պատճառը ոռոգման ջրի պակասն է և ոռոգման համակարգի մաշվածության պատճառով ջրի զգալի կորուստները,

➤ Արագածոտնի մարզի գյուղական տարածքների, մասնավորապես

բնակչության և բնակավայրերի վերաբերյալ վերը բերված վերլուծության արդյունքները, ինչպես նաև մարզի գյուղական տարաբնակեցման մեջ տեղի ունեցած քանակական և որակական փոփոխություններն ու շարժընթացի առկա միտումները պետք է հաշվի առնվեն ինչպես հանրապետական, այնպես էլ մարզային իշխանությունների կողմից սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր կազմելիս և տարածաշրջանային քաղաքականության խնդիրներ լուծելիս:

6.2 Արարատի մարզ

Արարատի մարզն ընկած է Արարատյան գոգավորությունում: Այն զբաղեցնում է Արարատյան ֆիզիկաաշխարհագրական շրջանի հարավարևելյան կեսը, ունի հարթավայրային ու լեռնային հատվածներ: Հարթավայրային շրջանների բարձրությունը ծովի մակարդակից տատանվում է 800-ից մինչև 1000 մ-ի սահմաններում: Մարզի լեռնային տարածքի մեծ մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը, Ուրծի և Երանոսի լեռները: Դրանց նախալեռնային շրջաններում շատ են երկրագործության և բնակեցման համար ոչ պիտանի «վատահողերը» (բեդլենդները):

Արարատի մարզին բաժին է ընկնում ՀՀ տարածքի 7,0 և բնակչության՝ 8,6 %-ը: 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի գյուղական բնակչության թիվը կազմել է 186126 մարդ (ՀՀ գյուղական բնակչության մոտ 17 %-ը), որը բաշխված է 94 գյուղական բնակավայրերում (մարզի մեկ գյուղ մշտական բնակչություն չունի): Արարատին բաժին է ընկնում ՀՀ գյուղական բնակավայրերի ընդհանուր թվաքանակի 10 և մշտական բնակչություն ունեցող գյուղերի՝ 10.3 %-ը:

Արարատի մարզի տարածքի բաշխվածությունն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության ունի հետևյալ պատկերը. մինչև 800 մ բարձրություն ունեցող շրջաններին բաժին է ընկնում ընդամենը 1,2, 801-1000 մ շրջաններին՝ 22,6, 1001-1500 մ բարձրության շրջաններին՝ 27,8, 1501-2000 մ շրջաններին՝ 16,7, 2001-2500 մ՝ շրջաններին՝ 16.9 և 2500 մ-ից բարձր շրջաններին՝ 14,8 % -ը [հաշվարկներն ըստ 128-ի տվյալների]: Բերված ցուցանիշները ցույց են տալիս, որ բնակեցման և տնտեսական գործունեության համար առավել նպաստավոր և նպաստավոր պայմաններ ունեցող տարածքները (մինչև 2000 մ բացարձակ բարձրության շրջանները) մարզում կազմում են ավելի քան 68 %-ը:

Բացի ռելիեֆային պայմաններից մարզի բնակեցման և բնակավայրերի տնտեսական զարգացման համար պակաս կարևոր դեր չունեն նաև համեմատաբար նպաստավոր կլիմայական պայմանները: Մարզի հարթավայրային շրջաններին բնորոշ է տևական (4-5 ամիս), շոգ ամառը, կարճատև գարունը և ձմեռը, տևական աշունը: Իսկ լեռնային մասերում կլիման չափավոր լեռնային է, Գեղամա լեռների բարձրադիր մասերում՝ ցուրտ լեռնային: Հարյուրամյակներ շարունակ ագրոկլիմայական նշված պայմանները հնարավորություն են տվել ոռոգելի երկրագործության զարգացման համար, ինչի շնորհիվ մարզի տարածքում բնական, հումուսից աղքատ գորշահողերը վեր են ածվել կուլտուր-ոռոգելի հողերի, կիսաանապատային բուսականությունը փոխարինվել է ծաղկուն այգիներով ու մշակելի դաշտերով: Մարզի ավելի բարձրադիր վայրերում գերիշխում են լեռնատափաստանային և մերձալպյան լանդշաֆտները, որոնք օգտագործվում են անասնապահական նպատակներով:

Արարատի մարզը ՀՀ-ում առանձնանում է առավել նպաստավոր աշխարհագրական դիրքով, որը, նախ և առաջ, պայմանավորված է մայրաքաղաքին հարևանությամբ, ՀՀ հյուսիսային և հարավարևելյան մարզերի ու տարածաշրջանների միջև տարանցիկ տրանսպորտաաշխարհագրական դիրքով: Մարզի տնտեսաաշխարհագրական և տրանսպորտաաշխարհագրական դիրքերի վերը նշված բարենպաստ կողմերը, հատկապես վերջին հարյուրամյակի ընթացքում, իրենց անմիջական ազդեցությունն են թողել Արարատի մարզի ժամանակակից տարածքում առանձին բնակավայրերի և տարաբնակեցման ողջ համակարգի ձևավորման և զարգացման վրա: Ներկայումս ևս մարզի գյուղական տարածքների ու բնակավայրերի համար առանձնահատուկ դեր ունեն միջպետական՝ Երևան-Արտաշատ-Երասխ-Եղեգնաձոր, հանրապետական նշանակության Արտաշատ-Վեդի-Ուրցաձոր-Շաղափ-Ջանգակագուն ավտոճանապարհները և դրանցից սկզբնավորվող ներմարզային ավտոխճուղիները: Խորհրդային տարիներին մարզի ժամանակակից տարածքի և մասնավորապես բնակավայրերի տնտեսության զարգացման համար կարևոր դեր է խաղացել նաև երկաթուղին, մասնավորապես՝ Երևան-Մասիս-Արտաշատ-Արարատ-Երասխ հատվածը: Ցավոք, ՀՀ անկախացումից հետո, Ադրբեջանի կողմից ՀՀ մուտք գործող տրանսպորտային ուղիների շրջափակման պատճառով, հատկապես երկաթուղային տրանսպորտի դերը մարզի ժամանակակից զարգացման գործընթացներում զգալիորեն նվազել է:

Ինչպես ՀՀ շատ այլ տարածաշրջաններում, Արարատի մարզում ևս, տարածքի բնակեցման գործում կարևորագույն դեր են ունեցել նաև պատմական նախադրյալները: Մարզի տարածքը համարվում է պատմական Հայաստանի Արարատ նահանգի Ոստան գավառի մի մասը, որը միջնադարում հայտնի էր որպես մայրաքաղաքների գավառ: Հայաստան աշխարհում տնտեսական ու քաղաքական վերելքներն այստեղ ուղեկցվել են քաղաքային և գյուղական բնակավայրերի առաջընթացով, հարյուրավոր նոր բնակավայրերի առաջացումով: Այստեղ էին գտնվում միջնադարյան Հայաստանի Արտաշատ և Դվին մայրաքաղաքներն իրենց հարակից գյուղական բնակավայրերով: Մարզի տարածքի ժամանակակից բնակավայրերի հենքի ձևավորման համար առանձնահատուկ դեր է ունեցել Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, երբ 1830-ական թվականներից սկսած տասնյակ հազարավոր հայեր Պարսկահայքի Սալմաստի և Խոյի գավառներից ներգաղթեցին Արևելյան Հայաստանի ժամանակակից տարածք և վերաբնակեցվեցին նաև Արարատի մարզի ներկա տարածաշրջաններում: 1831 թ. դրությամբ Արարատի մարզի ժամանակակից տարածքում բնակչության թիվը կազմում էր ավելի քան քսաներկու հազար մարդ, որը բաշխված էր իննսուներեք գյուղերում: Բնակչության միջին խտությունը կազմում էր 11 մարդ/կմ² [184]: Մարզում առավել խտաբնակ էր ժամանակակից Արտաշատի տարածաշրջանը (18,6 մարդ/կմ²), իսկ Արարատի տարածաշրջանում բնակչության խտությունը կազմում էր ընդամենը 3,1 մարդ/կմ²: Բնակչության թվաքանակով առավել խոշոր գյուղերից էին Վեդին (1244 մարդ), Արարատը (661 մարդ), Ագատավանը (534 մարդ), Արտաշավանը (408 մարդ), Այգեզարդը (353 մարդ), Վ.Արտաշատը (370 մարդ), Ոստանը (352 մարդ), Աղամազուն (435 մարդ), Կաֆարլուն (652 մարդ) և այլն [184]:

1831-1987 թթ-ի ընթացքում մարզի բնակչության թվաքանակն ավելացել է ավելի քան 3,6, իսկ հետագա մոտ երեք տասնամյակում՝ նվազել է 1,5 անգամ (աղ.30): Մարզի և՛ ընդհանուր և՛ գյուղական բնակչության թվաքանակի կայուն աճ է դիտվել խորհրդային ժամանակաշրջանում: 1926-1988 թթ. ընթացքում մարզի ընդհանուր բնակչության թիվն ավելացել է ավելի քան չորս անգամ, իսկ գյուղական բնակչության թիվը՝ 2,8 անգամ (աղ. 30):

Արարատը ՀՀ-ի այն մարզերից է, որտեղ անկախացումից հետո առաջին տասնամյակի ընթացքում դիտվել է ինչպես ընդհանուր, այնպես էլ գյուղական բնակչության թվաքանակի աճ (համապատասխանաբար՝ 10,8 և 15,5 %-ով): Վերջին մեկուկես տասնամյակում (2001-2015 թթ.) մարզի և

ընդհանուր և գյուղական բնակչության թվաքանակը նվազել է: Առաջին դեպքում այն կազմել է 4,4, իսկ երկրորդ դեպքում՝ 3,1 %:

Աղյուսակ 30

Արարատի մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժունքացը (1831-2015 թթ.)¹

Տարեթվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության ընդհանուր	-ից բնակավայրերում	ընդհանուր
	Քաղաքային	գյուղական	ընդհանուր	Քաղաքային	գյուղական			
1831	-	90	22123	-	22123	10.6	10.6	246
1897	-	179	89356	-	89356	42.8	42.8	499
1926	-	159	59906	-	59906	28.7	28.7	377
1959	2	116	124270	12689	111581	59.5	53.4	962
1970	4	95	178369	35124	143245	85.3	68.5	1508
1979	4	89	205191	52085	153106	98.2	73.2	1720
1988	4	90	245532	79149	166383	117.4	79.6	1849
2001	4	95 ²	272016	79885	192131	130.2	92.0	2044
2011	4	95 ²	260367	74103	186264	124.6	89.1	1982
2015	4	95 ²	260102	73976	186126	124.5	89.1	1980

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Е., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության և բնակավայրերի վերաբերյալ ՀՀ ԱՎԾ հրապարակումների, 1970, 1979, 2001 2011 թթ. մարդահամարի և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Սարգում 1 գյուղ մշտական բնակչություն չունի:

Արարատի մարզի ժամանակակից տարածքում առավել մեծ թվով գյուղական բնակավայրեր գրանցվել է 1897 թ-ին անցկացված մարդահամարի ժամանակ (179 գյուղ): Հետագա ժամանակաշրջանում աստիճանաբար տեղի է ունեցել մարզի գյուղական բնակավայրերի թվաքանակի նվազում, որը հիմնականում պայմանավորված էր մարզի լեռնային ու նախալեռնային շրջաններում այսպես կոչված «ոչ հեռանկարային բնակավայրերի»

վերացումով: 1970 թ-ից հետո մարզում գյուղական բնակավայրերի թիվն էական փոփոխություններ չի կրել:

Արարատի մարզի տարածքի ագրոկլիմայական ռեսուրսները, ձևավորված ոռոգման համակարգը (Արտաշատի ջրանցքը, Մխչյանի ջրիան կայանը և այլն), բավարար նախադրյալներ են ստեղծել ցածրադիր-հարթավայրային շրջաններում գյուղատնտեսության աշխատատար և եկամտաբեր ճյուղերի (բանջարաբուծության, այգեգործության և խաղողագործության) զարգացման, խոշոր ու գերխոշոր գյուղերի ձևավորման համար:

Արարատը 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության ընդհանուր թվաքանակով երկրորդն էր հանրապետությունում, իսկ գյուղական բնակչության թվով՝ առաջինը: Մարզի բնակչության ավելի քան 71.5 %-ը ապրում է գյուղական բնակավայրերում: Գյուղական բնակչության խտությամբ (87 մարդ/կմ²) Արարատը զիջում է միայն Արմավիրի մարզին, իսկ գյուղական բնակավայրերի խտությամբ՝ միջին տեղ է զբաղեցնում հանրապետությունում: Մարզն առաջին է հանրապետությունում՝ գյուղերի միջին մարդաքանակով (2221 մարդ):

Արարատի մարզին առավել բնորոշ է շրթայածև տարաբնակեցումը: Գյուղական բնակավայրերի հիմնական մասը տեղաբաշխված են մարզի հարթավայրային մասում՝ գլխավոր ավտոմոբիլային ճանապարհի և երկաթուղու երկայնքով, իսկ սահմանափակ թվով գյուղեր՝ նախալեռնային և լեռնային շրջաններում: Գյուղական բնակավայրերի 86 %-ից ավելին տեղաբաշխված են ծովի մակարդակից 801-1000 մ բարձրություններում: Դրանց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 94.5 %-ը: Մարզի ընդամենը 6 գյուղ գտնվում են ծովի մակարդակից 1601-2000 մ բարձրության շրջաններում, որոնց բաժին է ընկնում Արարատի մարզի գյուղական բնակչության ընդամենը 1,3 %-ը:

Ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության Արարատի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխվածության մասին հանգամանալից պատկերացում են տալիս ստորև բերվող թիվ 31 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 31

Արարատի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (2015 թ.)¹

Մարզը և տարածաշրջանները	Բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մետր)												Ընդամենը			
	մինչև 800		801-1000		1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800				1801-2000	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
Արարատի	2	1847	18	57831	2	3887	2	1181	-	-	3	1694	3	1111	30	67551
Արտաշատի	-	-	37	77302	1	1584	-	-	-	-	-	-	-	-	38	78886
Մասիսի	-	-	26	62340	-	-	-	-	-	-	-	-	-	-	26	62340
Արարատի մարզում	2	1847	81	197473	3	5471	2	1181	-	-	3	1694	3	1111	94 ²	208777

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզում 1 գյուղ մշտական բնակչություն չունի:

Ըստ մարդաքանակի Արարատի մարզին առավել բնորոշ են մեծ (1001-3000 մարդ) գյուղերը, որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության մոտ 53 %-ը:

Աղյուսակ 32

Արարատի մարզի և տարածաշրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ մարդաքանակի (2015 թ.)¹

Տարածաշրջանները և մարզը	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ մարդաքանակի (մարդ)						Ընդամենը							
	101-200		201-500		501-1000				1001-3000		3001-5000		5000-ից ավելի	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
Արարատի	1	155	4	889	6	4584	12	27809	4	15046	3	19068	30	67551
Արտաշատի	-	-	-	-	5	3903	25	45122	7	24771	1	5084	38	78886
Մասիսի	-	-	-	-	2	1391	20	37335	2	7468	2	16146	26	62340
Արարատի մարզում	1	155	4	889	13	9878	57	110266	13	47291	6	40298	94 ²	208777

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզում 1 գյուղ մշտական բնակչություն չունի:

Մարզում կան 13 խոշոր և 6 գերխոշոր գյուղեր, որոնցում ապրում է Արարատի գյուղական բնակչության շուրջ 42 %-ը: Արարատում սահմանափակ թիվ(5) են կազմում փոքր (մինչև 500 մարդ) գյուղերը: Դրանց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության ընդամենը 0,5 %-ը:

Աղյուսակ 33

Արարատի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացն ըստ մարդաշատության խմբերի (1926-2015 թ.)¹

Տարեթվեր	Գյուղերի թիվը	Բնակչությունը թիվը	Գյուղական բնակավայրերի և բնակչության բաշխումն ըստ բնակավայրերի մարդաքանակի (մարդ)													
			Մինչև 200		201-1500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի			
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1926	159	59906	71	6039	49	15799	26	18441	13	19627	-	-	-	-		
1988	90	166383	3	442	6	2508	13	9827	56	103423	10	36826	2	13357		
2011	94	186264	4	679	6	2506	10	7328	62	116759	9	35641	3	23351		
2015	94	208777	1	155	4	889	13	9878	57	110266	13	47291	6	40298		
Նույնը տոկոսներով																
1926	100.0	100.0	44.6	10.1	30.8	26.4	16.4	30.8	8.2	32.7	-	-	-	-		
1988	100.0	100.0	3.3	0.2	6.7	1.5	14.5	5.9	62.2	62.2	11.1	22.2	2.2	8.0		
2011	100.0	100.0	4.2	0.4	6.4	1.4	10.6	3.9	66.0	62.7	9.6	19.1	3.2	12.5		
2015	100.0	100.0	1.1	0.0	4.3	0.5	13.8	4.7	60.6	52.8	13.8	22.7	6.4	19.3		

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության և բնակավայրերի թվի վերաբերյալ ՀՀ ԱԿԾ հրապարակումների, 2011 թ. մարդահամարի և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա: ա/ բնակավայրերի թիվը և տոկոսը, բ/ բնակչության թիվը և տոկոսը:

Թիվ 33 աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին 90 տարվա ընթացքում մարզում ըստ մարդաքանակի գյուղական բնակավայրերի տարբեր խմբերում տեղի ունեցած առավել նկատելի փոփոխություններից են.

- փոքր (մինչև 500 մարդ) գյուղերի թվաքանակի կտրուկ նվազումը (եթե 1926 թ-ին այդպիսիք մարզում կազմում էին գյուղերի ընդհանուր թվի ավելի քան 75%-ը, ապա 2015 թ-ին` ընդամենը 5,4 %-ը),

➤ մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերի թվի (1000-ից ավելի մարդ) կտրուկ ավելացումը (1926 թ-ին այդպիսիք մարզում կազմում էին ընդամենը 8,2 %, ներկայումս՝ մոտ 81 %),

➤ մի կողմից՝ գյուղական բնակչության կենտրոնացումը մեծ և խոշոր (1001-5000 մարդ) գյուղերում (1926 թ. այդպիսի գյուղերին բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության ընդամենը 32,7 %-ը, ներկայումս՝ 75.5 %-ը), մյուս կողմից՝ մարզի գյուղական բնակչության մեջ ըստ մարդաքանակի փոքր և միջին մեծության գյուղերի ընդհանուր մարդաքանակի կտրուկ նվազումը (1926 թ-ին մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում ապրում էր մարզի գյուղական բնակչության 67.3 %-ը, իսկ 2015 թ-ին՝ ընդամենը 5.2 %-ը),

➤ եթե 1926 թ-ին Արարատի մարզի ներկայիս տարածքն ըստ մարդաքանակի ուներ մեծ, միջին և փոքր գյուղային տարաբնակեցում, ապա ներկայումս՝ մեծ, խոշոր և գերխոշոր գյուղային տարաբնակեցում:

Թեև Արարատում գյուղական բնակչությունը և բնակավայրերն առավելապես տեղաբաշխված են եղել մարզի ցածրադիր - հարթավայրային շրջաններում, սակայն այստեղ ևս անցած տասնամյակների ընթացում տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի և բնակչության ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության բաշխվածության որոշակի փոփոխություններ: 1926 թ-ի համեմատությամբ ներկայումս (2015 թ.) մարզի 1600 մ-ից բարձր շրջաններում գտնվող գյուղական բնակավայրերի բացարձակ թիվը նվազել է 32 –ով (աղ.34) կամ 17 տոկոսային կետով: Եթե 1926 թ. մարզի նախալեռնային և լեռնային շրջաններում (1200 մ-ից բարձր) ապրում էր գյուղական բնակչության 10 %-ը, ապա 2015 թ-ին՝ ընդամենը 1,9 %-ը: Մյուս կողմից տեղի է ունեցել մարզի հիմնական բնակեցված գոտու (մինչև 1000 մ բարձրության շրջանների) ինչպես գյուղական բնակավայրի, այնպես էլ բնակչության հարաբերական մեծությունների ավելացում:

Արարատի մարզի գյուղական բնակավայրերի գոյության տնտեսական բազան հիմնականում գյուղատնտեսական արտադրությունն է: Մարզը գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշով 2015 թ. դրությամբ երրորդն էր հանրապետությունում: Այն տալիս է ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մոտ 14,2 %-ը (2015 թ.), որն արժեքային արտահայտությամբ կազմում է շուրջ 140 մլրդ դրամ:

Արարատի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացն ըստ բարձրության գոտիների (1926-2015 թ.)¹

Տարիներ		Բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մետր)															
		Գյուղերի թիվ	Բնակչության թիվ	մինչև 1000		1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000		2001-2200	
				ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
1926	159	59906	107	52462	6	1500	5	403	3	167	19	2969	16	2255	3	150	
1988	90	166383	82	159665	2	4019	1	772	-	-	2	1104	3	823	-	-	
2011	94	186264	83	178628	3	4320	2	1067	-	-	3	1410	3	839	-	-	
2015	95	208777	83	199320	3	5471	2	1181	-	-	3	1694	3	111	-	-	
Նույնը տոկոսներով																	
1926	100.0	100.0	67.3	87.5	3.8	2.5	3.1	0.7	1.9	0.3	11.9	5.0	10.1	3.8	1.9	0.2	
1988	100.0	100.0	91.1	96.0	2.2	2.4	1.1	0.4	-	-	2.2	0.7	3.4	0.5	-	-	
2011	100.0	100.0	88.3	95.9	3.2	2.3	2.1	0.6	-	-	3.2	0.7	3.2	0.5	-	-	
2015	100.0	100.0	88.3	95.5	3.2	2.6	2.1	0.6	-	-	3.2	0.8	3.2	0.5	-	-	

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության և բնակավայրերի թվի վերաբերյալ ՀՀ ԱԾ հրապարակումների, 2011 թ. մարդահամարի և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա: ա/ Բնակավայրերի թիվը և տոկոսը, բ/ Բնակչության թիվը և տոկոսը:

Մարզի 93 գյուղական համայնքներում գյուղատնտեսական արտադրական գործունեություն են իրականացնում 52 հազ. գյուղացիական տնտեսություններ, որոնք ընդհանուր հաշվով ունեն շուրջ 164366 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ (այդ թվում նաև 7404 հա տնամերձ հողատարածքները): Գյուղատնտեսական նշանակության հողատարածքներն ունեն հետևյալ կառուցվածքը. վարելահողեր՝ 29636 հա, բազմամյա տնկարկներ՝ 12499 հա (այդ թվում նաև խաղողի այգիները), խոտհարքեր՝ 2689 հա, արոտավայրեր՝ 78129 հա, մնացած 41412 հա-ն այլ հողատեսքեր են:

Մարզի գյուղացիական տնտեսություններից մշակելի հողատարածքները միջին հաշվով ավելի մեծ չափեր ունեն Արտաշատի տարածաշրջանի գյուղական համայնքներում, երկրորդը Արարատի տարածաշրջանն է, երրորդը՝ Մասիսը: Մարզի գյուղական բնակավայրի արտադրական մասնագիտացման մեջ հիմնականն այգեգործական, խաղողագործական և բանջարաբուծական տնտեսություններն են, անասնապահության (տավարաբուծության) հետ զուգակցված: Մարզի տարածաշրջանների միջև առկա է գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման որոշակի տարբերություններ, որը պայմանավորված է առանձին գյուղական համայնքների ագրոկլիմայական պայմանների տեղային առանձնահատկություններով և բնակչության տասնամյակներով ձևավորված արտադրական հմտություններով ու ավանդույթներով: Արտաշատի տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունների համար ըստ առաջնահերթության բնորոշ են պտղաբուծությունը, խաղողագործությունը և բանջարաբուծությունը, որոնք գրեթե բոլոր գյուղերում զուգակցված են տավարաբուծության հետ: Արարատի տարածաշրջանում պատկերն հետևյալն է. խաղողագործություն, պտղաբուծություն, բանջարաբուծություն: Այստեղ ևս նշված ուղղությունները գրեթե բոլոր գյուղերում զուգակցված են տավարաբուծության հետ: Այս տարածաշրջանի նախալեռնային և լեռնային հատվածի գյուղերում արտադրական մասնագիտացման հիմնական ուղղությունը տավարաբուծությունն է, որը զուգակցվում է երկրագործության որոշ ճյուղերի հետ: Միայն Ուրցաձորի գյուղական համայնքում պահվում է ավելի քան 4 հազ. գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Մասիսի տարածաշրջանի գյուղերում առավելապես բանջարաբուծական տնտեսություններ են անասնապահության հետ զուգակցված:

Մարզի գյուղացիական տնտեսություններից եկամտաբերության ավելի բարձր ցուցանիշներ ունեն Արտաշատի տարածաշրջանի գյուղական համայնքները, ցածր՝ Մասիսի: Արտաշատի տարածաշրջանում գյուղացիական տնտեսությունների ավելի բարձր եկամտաբերությունն առավելապես պայմանավորված է մասնագիտացման բարձր մակարդակով և տնտեսավարման ինտենսիվ մեթոդներով: Այստեղ շատ գյուղեր ունեն տասնամյակներով ձևավորված մասնագիտացման ուղղություն (խաղողագործական կամ պտղաբուծական ուղղություններով), գյուղական բնակչության ձևավորված արտադրական ավանդույթներ և հմտություններ: Մասիսի տարածաշրջանի գյուղական բնակչության մեջ անկախացումից հետո տեղի ունեցած փոփո-

խությունն (տարածաշրջանի գյուղերուն մեծ թվով փախստական հայ բնակչության առկայությունը) իր ազդեցությունն է թողել տարածաշրջանի մի շարք գյուղական համայնքների արտադրական գործունեության վրա: Վերաբնակեցված բնակչության մեծ մասը նախկինում ունեցել է աշխատանքային գործունեության այլ բնագավառ (արհեստագործություն և այլն), որի պատճառով այդ գյուղացիական տնտեսությունների համար գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելն ինչ որ առումով դեռևս «խորթ» է:

Մարզում արդեն կան ձևավորված ֆերմերային խոշոր տնտեսություններ և ջերմատներ: Վերջին մեկ տասնամյակում մարզի գյուղացիական տնտեսություններում նկատելիորեն կրճատվել է հացահատիկայինների ցանքատարածքները և գյուղական բնակավայրերն իրենց արտադրական մասնագիտացումով գրեթե ամբողջությամբ կրկնում են նախկինում (մինչև 1990-ականների սկիզբը) ունեցած ուղղությունները (այգեպտղաբանջարաբուծական տնտեսություններ անասնապահության հետ զուգակցված):

Վերջին տասնամյակում Արարատի մարզի գյուղական համայնքների տնտեսական զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ հազարամյակի մարտահրավեր ծրագրով և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ոռոգման համակարգում իրականացված աշխատանքները: Մարզում անցկացվել են նոր ջրատարներ, վերանորոգվել են պոմպակայանները, հորատվել են նոր հորեր: Մարզի ոռոգման համակարգի հիմքը կազմում են Արտաշատի, Կախանովի, Դվինի, Սայաթ-Նովայի և Արբաթի ջրանցքները, Խորվիրապի, Արմաշի և Արագափի ջրհան կայանները և դրանցից ճյուղավորված ոռոգման ցանցը: Ներկայումս մարզի գյուղացիական տնտեսությունները ոռոգման ջրի խնդիր չունեն:

Մարզի գյուղական որոշ համայնքների համար եկամտի լրացուցիչ աղբյուր է համարվում արհեստական լճակներում իրականացվող ձկնաբուծությունը, իսկ նախալեռնային և լեռնային գոտու գյուղերի համար՝ մեղվապահությունը:

Արարատի մարզում գյուղական առանձին տարածքների ու բնակավայրերի տնտեսական զարգացման համար իրենց դերն ունեն նաև այստեղ հայտնաբերված կրաքարի, տրավերտինների, հանքային և արտեզյան ջրերի բնական հարստությունները: Պակաս կարևոր չեն նաև մարզի զբոսաշրջա-ռեկրեացիոն ռեսուրսները՝ Խոր Վիրապի վանքը (այստեղից նաև՝ Մասիսի անկրկնելի տեսարանը), Պարյուր Սևակի տուն թանգարանը և էկոլոգիական զբոսաշրջության զարգացման համար բավարար նախադր-

յալներ ունեցող խոսրովի պետական արգելոցը:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզի Արտաշատի և Արարատի տարածաշրջաններում վերջին տարիներին մշակելի հողատարածքների ավելացման միտում կա: Գյուղմթերքների իրացման խնդրի հստակ կարգավորման դեպքում այդ միտումը կպահպանվի: Մարզի գյուղատնտեսական հողատարածքների էկոլոգիական խնդիրներ գրեթե չկան:

Արարատի մարզի գյուղական բնակավայրերը ՀՀ-ում առանձնանում են սոցիալ-մշակութային և կենցաղային սպասարկման համեմատաբար բարձր մակարդակով: Բացառությամբ Սուրենավան, Արմաշ, Պարույր Սևակ և Ջանգակատուն համայնքների մնացածները գազաֆիկացված են: Բացի Մասիսի տարածաշրջանի Սիփանիկ, Ռանչպար և մի քանի այլ գյուղերի մարզի մնացած բոլոր համայնքներն ունեն կենտրոնացված ջրամատակարարում:

Մարզի տարածքով անցնող միջպետական ավտոճանապարհի 104 կմ հատվածը, հանրապետական նշանակության 151,5 կմ և ներմարզային (տեղական) նշանակության 355 կմ ավտոճանապարհներն ապահովում են ինչպես ողջ մարզի, այնպես էլ գյուղական բոլոր համայնքների համար տրանսպորտային սպասարկում:

Մարզի 93 գյուղական համայնքներից 48-ում գործում են առողջության պահպանման կենտրոններ, իսկ Արմաշ գյուղում՝ առողջության կենտրոն: Մնացած գյուղական համայնքներն ունեն բուժմանկաբարձական կետեր:

Արարատի մարզի գյուղական համայնքների 47 %-ը (45 գյուղ) ունեն գործող մանկապարտեզ, իսկ 23 գյուղում կան դպրոցներին կից նախակրթական հաստատություններ: Մարզը հանրապետությունում առաջատար է գյուղական բնակավայրերի սոցիալ-մշակութային սպասարկման ծառայություններով: Մարզի 82 գյուղական համայնքում գործում են գրադարաններ, 68 գյուղում՝ մշակութի տներ, 11 գյուղում (Այգեգարդ, Քաղցրաշեն, Շահունյան, Վ.Արտաշատ, Նորաշեն, Արգավանդ, Նոր Խարբերդ, Մխչյան, Վ.Վեդի և Արևշատ)՝ երաժշտական և արվեստի դպրոցներ: Մարզի գյուղական համայնքների սոցիալ-մշակութային զարգացմանն են ուղղված պետական, ազգային և հիշատակի օրերի հետ կապված մշակութային տարբեր միջոցառումների անցկացումը: Մարզի Ջանգակատուն և Արարատ գյուղերում են գտնվում համապատասխանաբար Պարույր Սևակի և Վազգեն Սարգսյանի տուն թանգարանները:

Արարատի մարզում գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական

զարգացման, զբոսաշրջային միջավայրի բարելավման համար առանձնահատուկ դեր կարող են ունենալ գյուղական և ագրոզբոսաշրջության ռեսուրսների օգտագործումը: Այս իմաստով առաջին քայլերն արդեն արվում են (Փոքր Վեդիում կազմակերպվում է «Լավաշի փառատոն», ծրագրվում է զբոսաշրջիկների համար կազմակերպել «Ծիրանի փառատոն»):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արարատի մարզի գյուղական տարածքների և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման ներկայիս թիվ մեկ խնդիրը գյուղացիական տնտեսությունների արտադրած գյուղմթերքների իրացման և մթերող կազմակերպությունների կողմից գյուղմթերքների ընդունման ցածր գներն են: Բանջարեղենի, խաղողի և մրգի բերքառատ տարիներին մթերող կազմակերպություններն այն ընդունում են համեմատաբար ցածր գներով, կամ էլ մթերման ոչ ճիշտ կազմակերպման պատճառով հարյուրավոր տոննաներով բերք փչանում կամ չի մթերվում: Այդ ամենի հետևանքով գյուղացիական տնտեսությունները կրում են հսկայական ֆինանսական կորուստներ, որը չի խթանում գյուղացիական տնտեսությունների տնտեսական զարգացումը և դրանից կախված սոցիալական տարբեր խնդիրների լուծումը:

Այսպիսով, Արարատի մարզի գյուղական տարածքների սոցիալ-տնտեսաաշխարհագրան վերլուծության բերված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ.

➤ մարզն առանձնանում է գյուղական տարածքների ձևավորման ու զարգացման առավել նպաստավոր և նպաստավոր ռելիեֆային պայմաններով, նպաստավոր աշխարհագրական դիրքով և բարենպաստ ագրոկլիմայական ռեսուրսներով,

➤ մարզի բնակեցման և գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման համար առանձնահատուկ դեր են ունեցել պատմական նախադրյալները և ենթակառուցվածքների զարգացումը,

➤ խորհրդային տարիներին դիտվել է մարզի և՛ ընդհանուր և՛ գյուղական բնակչության թվի կայուն աճ, իսկ վերջին մեկուկես տասնամյակում այդ ցուցանիշների նվազում,

➤ Վերջին 90 տարիների ընթացքում մարզի գյուղական տարաբնակեցման մեջ տեղի է ունեցել փոքր գյուղերի թվաքանակի կտրուկ նվազում, մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերի թվի՝ կտրուկ ավելացում, բնակչության կենտրոնացում խոշոր գյուղերում, մարզի հիմնական բնակեցված գոտում (մինչև 1000 մ բարձրության շրջանների) ինչպես գյուղական բնակավայ-

րերի, այնպես էլ բնակչության թվի հարաբերական մեծությունների ավելացում,

➤ Արարատին բնորոշ է մեծ, խոշոր և գերխոշոր գյուղային տարաբնակեցումը, որը պայմանավորված է ագրոկլիմայական նպաստավոր պայմաններով ու ռեսուրսներով, ինչպես նաև գյուղատնտեսության աշխատատար ու եկատմաբեր ճյուղերի զարգացումով,

➤ մարզի տարածաշրջանների և առանձին գյուղական բնակավայրերի գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման մեջ առկա են որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են ագրոկլիմայական պայմանների տեղային առանձնահատկություններով, բնակչության տասնամյակներով ձևավորված արտադրական հմտություններով և ավանդույթներով,

➤ Արարատի մարզի գյուղական բնակավայրերն ԶԶ-ում առանձնանում են սոցիալ-մշակութային ու կենցաղային սպասարկման և ենթակառուցվածքների զարգացման համեմատաբար բարձր մակարդակով,

➤ մարզի գյուղական տարածքների ու բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման թիվ մեկ խնդիրը գյուղմթերքների իրացման և մթերող կազմակերպությունների կողմից դրանց գնման ցածր գներն են, որի պատճառով գյուղացիական տնտեսությունները կրում են ֆինանսական կորուստներ: Վերջինիս լուծման համար պետական և տեղական կառավարման համապատասխան մարմինների կողմից պետք է իրականացվեն տնտեսական և իրավական կարգավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք կնպաստեն գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվող մթերքների քանակի և տնտեսությունների եկամտաբերության ավելացմանը, ի վերջո՝ գյուղական տարածքների ու բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

6.3 Արմավիրի մարզ

Արմավիրը ՀՀ-ում տարածքով ամենափոքր մարզն է (մարզին բաժին է ընկնում ՀՀ տարածքի ընդամենը 4,2 %-ը), բայց բնակչության քանակով ամենամեծն է: Այստեղ 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ապրում էր հանրապետության մշտական բնակչության 8,9 և գյուղական բնակչության 16,6 %-ը: Արմավիրի մարզն Արարատից հետո երկրորդն է ՀՀ-ում գյուղական բնակչության թվաքանակով: Մարզին բաժին է ընկնում ՀՀ մշտական բնակչությունն ունեցող գյուղական բնակավայրերի 10,4 և գյուղերի ընդհանուր թվաքանակի 10 %-ը:

Արմավիրի մարզը զբաղեցնում է Արարատյան գոգավորության արևմտյան հատվածը և ունի հիմնականում հարթավայրային մակերևույթ (800-1100 մ բարձրությամբ): Հյուսիս-արևմուտքից մարզը եզրավորված է Կարմրաշենի և Շամիրամի լավային սարավանդներով, որտեղ տեղանքի առավելագույն բարձրությունները հասնում են մինչև 1300 մ-ի: Մարզի տարածքի մոտ 81 %-ը գտնվում է ծովի մակարդակից մինչև 1000 մ, մնացածը՝ 1001-1300 մ բարձրություններում: Մարզում մինչև 3⁰ թեքություն ունեցող շրջանները կազմում են տարածքի 83, իսկ մինչև 5⁰ թեքություն ունեցող շրջանները՝ 92 %-ը [հաշվարկներն ըստ թիվ 128 գրականության տվյալների]: Բարձրաչափական և տեղանքի թեքությունների վերը բերված ցուցանիշները ցույց են տալիս, որ մարզի տարածքն առանձնանում է բնակեցման համար ռելիեֆային առավել նպաստավոր պայմաններով:

Ի տարբերություն Արարատի, Արմավիրի մարզի գրեթե ամբողջ տարածքին բնորոշ է տևական, շոգ ամառը, կարճատև գարունը և ձմեռը, տևական աշունը: Այստեղ ևս իշխողը կուլտուր-ոռոգելի հողերի վրա ձևավորված մարդածին լանդշաֆտներն են: Ագրոկլիմայական ռեսուրսների բերված նկարագիրը ևս խոսում է մարզի տարածքի բնակեցման նպաստավոր պայմանների մասին:

Արմավիրի մարզի տարածքը Հայաստան աշխարհում պետականության ձևավորման օրրաններից է: Այստեղ են գտնվել հայոց առաջին մայրաքաղաք Արմավիրը և Երվանդունիների թագավորության վերջին մայրաքաղաքը՝ Երվանդաշատը, որոնք դարեր շարունակ եղել են պետական և մշակութային խոշոր կենտրոններ: Մեծամորի բլրի լանջին հայտնաբերված հինգհազարամյա մետաղաձուլարանը, ուրարտական քաղաք Արգիշտի-խինլիի ավերակները, Ջվարթնոց տաճարի ավերակները, Վաղարշապատի վանական համալիրները և բազմաթիվ այլ պատմական հուշարձաններ

վկայուն են Արմավիրի մարզի ժամանակակից տարածքի հազարամյակներ առաջ բնակեցման փաստի մասին: Այդուհանդերձ, պատմական ճակատագրի բերումով, ինչպես ՀՀ մարզերի ու տարածաշրջանների մեծ մասում, Արմավիրի մարզում ևս ժամանակակից բնակավայրերի ցանցի հենքը ձևավորվել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո: 1831 թ-ին ցարական կառավարության կողմից Արևելյան Հայաստանի տարածքում անցկացված ժողովրդագրի տվյալների համաձայն Արմավիրի մարզի ժամանակակից տարածքում եղել է 52 գյուղական բնակավայր, որոնք միասին ունեցել են 14517 բնակիչ [184]: 1831 թ. էջմիածնի տարածաշրջանն ունեցել է 27 բնակավայր (8685 բնակչով), Արմավիրի տարածաշրջանը՝ 22 (5140 բնակչով), Բաղրամյանի տարածաշրջանը՝ ընդամենը 3 (692 բնակչով): Հարկ է նշել, որ էջմիածնի տարածաշրջանն այդ ժամանակաշրջանում (1831 թ.) բնակչության թվաքանակով ՀՀ ժամանակակից տարածաշրջանների մեջ զիջում էր միայն Ախուրյանի և Մասիսի տարածաշրջաններին: Բնակչության միջին խտությունը մարզում կազմում էր 11,7 մարդ/կմ² (էջմիածնի տարածաշրջանում՝ 24, Արմավիրի տարածաշրջանում՝ 12,2, Բաղրամյանի տարածաշրջանում՝ 1,5 մարդ/կմ²): Բնակչության քանակով առավել խոշոր գյուղերից էին էջմիածինը (2175 մարդ, քաղաքի կարգավիճակ է ստացել 1924 թ-ին), Հոկտեմբերը (1487 մարդ), Չոբանքարան (951 մարդ), Ներքին Խաթունարիսը (870 մարդ), Ջրառատը (885 մարդ), Արշալույսը (419 մարդ), Նալբանդյանը (630 մարդ), Ալաշկերտը (413 մարդ) և այլն [184]:

19-րդ դարի ավելի քան վեցուկես տասնամյակի (1831-1897 թթ.) ընթացքում Արմավիրի մարզի բնակչությունն ավելացել է ավելի քան 3,6 գյուղական բնակավայրերի քանակը՝ 1,6 անգամ (52-ից՝ 81): 1897-1926 թթ. ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների պատճառով մարզում ընդհանուր բնակչության թվաքանակը մնացել է գրեթե նույնը: Խորհրդային տարիներին մարզի ինչպես ընդհանուր, այնպես էլ գյուղական բնակչությունն ունեցել է կայուն աճ: 1926 թ-ի համեմատությամբ 1988-ին մարզի ժամանակակից տարածքում բնակչության ընդհանուր թիվն ավելացել է ավելի քան 4,8, իսկ գյուղական բնակչության թիվը՝ 3,4 անգամ (աղ. 35):

Արմավիրը ՀՀ մնացած մարզերից տարբերվում է անցած տասնամյակների ընթացքում գյուղական բնակավայրերի թվաքանակում տեղի ունեցած փոփոխությունների բնույթով: Եթե հանրապետության մնացած

բուր մարզերում և տարածաշրջաններում (մինչև 1970-ական թվականները) տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի թվաքանակի նվազում, ապա Արմավիրում կատարվել է հակառակ գործընթացը՝ գյուղերի թվաքանակն ավելացել է (աղ 35): Արմավիրն այն մարզն է, որտեղ խորհրդային տարիներին ստեղծվել են առավել մեծ թվով գյուղական տիպի նոր բնակավայրեր (հատկապես Արմավիրի՝ նախկին Հոկտեմբերյանի և Բաղրամյանի տարածաշրջաններում), քան որևէ այլ մարզում: Միայն 1980-ական թվականներին այստեղ ստեղծվել են 9 նոր գյուղ (հիմնականում՝ նորաստեղծ Բաղրամյանի տարածաշրջանում):

Արմավիրի մարզը բացառիկ է նաև մեկ այլ ցուցանիշով: Այստեղ անկախացումից հետո դիտվել է գյուղական բնակչության թվաքանակի կայուն աճ: Թեև 2001 թ. մարդահամարից հետո մարզի մշտական բնակչության ընդհանուր թվաքանակը մինչև 2015 թ-ը նվազել է 9231-ով (3,3 %-ով), սակայն գյուղական բնակչությունն այդ ժամանակահատվածում ավելացել է ավելի քան 4 հազ. -ով կամ 2,3 %-ով (աղ. 35):

Արմավիրի մարզում գյուղական տարածքների ձևավորման, դրանց տնտեսական բազայի ամրապնդման և սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացների վրա իրենց դրական ազդեցությունն են ունեցել նաև մարզի համեմատաբար նպաստավոր աշխարհագրական դիրքը և անցած տասնամյակների ընթացքում ձևավորված, հատկապես, արտադրական ենթակառուցվածքները: Մարզն անմիջականորեն սահմանակցում է մայրաքաղաքին: Նրա տարածքով անցնում են տարանցիկ նշանակություն ունեցող ավտոճանապարհներ (մասնավորապես՝ Երևան-Վաղարշապատ-Արմավիր-Քարակերտ-Արագածավան-Գյումրի-Բավրա-Վրաստան) և երկաթուղի: Մարզի գյուղական տարածքների տնտեսական զարգացման համար բացառիկ դեր ունեն նաև Արաքսից սնվող՝ Արմավիրի Մեծ, Հրազդանից սնվող՝ Ստորին Հրազդանի և Ախուրյանի ջրամբարից սնվող՝ Թալինի ջրանցքներն ու դրանցից սկզբնավորվող ոռոգման ողջ համակարգը, ինչպես նաև Արարատյան արտեզյան ավազանը:

Մարզի գյուղական տարածքների համար տնտեսական կարևոր նշանակություն ունեն նաև այստեղ հայտնաբերված շինարարական հումքի՝ տուֆերի, հրաբխային խարամի և պեռլիտի պաշարները:

2015 թ. հունվարի 1-ի դրությամբ Արմավիրի մարզի բնակչության 68.2 % ապրում էր գյուղական բնակավայրերում: Մարզի գյուղական բնակչության գրեթե 48 %-ը բաժին էր ընկնում միայն Էջմիածնի տարածա-

շրջանին, որն այս ցուցանիշով հանրապետության նախկին վարչական շրջանների մեջ առաջինն է: Գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակով (2220 մ) Արմավիրը հավասար է Արարատի մարզին:

Մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխվածությունն ըստ տարածաշրջանների և գյուղերի թիվն ըստ մարդաքանակի տրված է ստորև բերված թիվ 36 աղյուսակում:

Աղյուսակ 35

Արմավիրի մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացը (1831-2015 թթ.)¹

Տարեթվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության միջին խտությունը	Գյուղական բնակավայրերի միջին խտությունը	Մարդկային զիջումը
	Քաղաքային	Գյուղական	ընդամենը	Քաղաքային	Գյուղական			
1831	-	52	14517	-	14517	11,7	11,7	279
1897	-	81	53046	-	53046	42,7	42,7	655
1926	1	82	53558	8436	45122	43,1	36,3	550
1959	2	89	119187	34631	84556	96,0	68,0	950
1970	3	84	180743	57700	123043	145,5	99,0	1465
1979	3	86	220274	83706	136568	177,4	110,0	1588
1988	3	91	258961	107438	151523	208,5	122,0	1665
2001	3	95	276233	98292	177941	222,4	143,3	1873
2011	3	95	265770	85050	180720	214,0	145,5	1902
2015	3	95	267002	84995	182007	215,0	146,5	1916

¹Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988 թ. հունվարի 1-ի դրությամբ 33 մշտական բնակչության և բնակավայրերի թվի վերաբերյալ 33 ԱԿԾ հրապարակումների, 2011 թ. մարդահամարի և «33 մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

Արմավիրի մարզում գերակշռում են բնակչության թվով մեծ (1001-3000 մարդ) գյուղերը (գյուղերի ընդհանուր թվի 65 %-ը), որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 55.4 %-ը: Խոշոր և գերխոշոր գյուղերում է ապրում Արմավիրի գյուղական բնակչության 42 %-ը: Մարզում մինչև 500 մարդ ունեցող գյուղերի թիվն ընդամենը հինգն է:

Արմավիրի գյուղական բնակչության գրեթե 96 %-ը տեղաբաշխված է ծովի նակարդակից 801-1000 մ, 3,7 %-ը՝ 1001-1200 մ, ընդամենը 0,3 %-ը՝ 1201-1400 մ բարձրության գոտիներում: Էջմիածնի և Արմավիրի տարածաշրջաններին բնորոշ է տարածքի համատարած տարաբնակեցման տիպը, իսկ Բաղրամյանի տարածաշրջանին՝ բլրահարթավայրային ցրված տարաբնակեցումը:

Աղյուսակ 36

Արմավիրի մարզի և տարածաշրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ մարդաքանակի (2015 թ.)¹

Տարածաշրջանները և մարզը	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ մարդաքանակի (մարդ)												Ընդամենը	
	մինչև 200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի			
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
Արմավիրի	-	-	-	-	2	1501	28	55507	5	17833	2	12756	37	87597
Էջմիածնի	-	-	1	361	1	516	29	54740	11	37526	1	6760	43	99903
Բաղրամյանի	2	327	2	649	3	2141	5	6581	3	13705	-	-	15	23403
Ընդամենը մարզում	2	327	3	1010	6	4158	52	116828	19	69064	3	19516	95	210903

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:
ա/ Բնակավայրերի թիվը բ/ Բնակչության թիվը:

Ի տարբերություն ՀՀ մի շարք մարզերի, որոնցում անցած տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել բարձրադիր լեռնային շրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի թվի նվազում և մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի ընդհանուր թվաքանակում այդպիսի տարածքների մասնաբաժնի նվազում, ապա Արմավիրի մարզում տեղի է ունեցել հակառակ գործընթացը: Մարզի համար քիչ թե շատ բարձրադիր համարվող 1000 մ-ից բարձր շրջաններում 1926 թ. կար ընդամենը մեկ գյուղ, իսկ ներկայումս այդպիսիք վեցն են (դրանց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 4 %, 1926 թ-ի 0,3 %-ի դիմաց):

Աղյուսակ 37

Արմավիրի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացն ըստ մարդաշատության խմբերի (1926-2015 թ.)¹

Տարեթվեր	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ բնակավայրերի մարդաքանակի (մարդ)											
			մինչև 200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի	
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
1926	82	45122	27	2766	20	7386	22	15282	13	19688	-	-	-	-
1988	91	151523	3	344	5	2098	15	11087	59	102143	8	30722	1	5129
2011	95	180720	3	492	3	977	14	10929	62	114121	11	43425	2	10776
2015	95	210903	2	327	3	1010	6	4158	62	116828	19	69064	3	19516
Նույնը տոկոսներով														
1926	100.0	100.0	32.9	6.1	24.4	16.4	26.8	33.9	15.9	43.6	-	-	-	-
1988	100.0	100.0	3.3	0.2	5.5	1.4	16.5	7.3	64.8	67.4	8.8	20.3	1.1	3.4
2011	100.0	100.0	3.2	0.3	3.2	0.5	14.7	6.0	65.3	63.2	11.6	24.0	2.0	6.0
2015	100.0	100.0	2.0	0.2	3.2	0.5	6.3	2.0	65.3	55.4	20.0	32.7	3.2	9.2

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988 թ. հունվարի 1-ի դրությամբ 73 մշտական բնակչության և բնակավայրերի վերաբերյալ 73 ԱԿԾ հրապարակումների, 2011 թ. մարդահամարի և «73 մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա: ա/ Բնակավայրերի թիվը և տոկոսը բ/ Բնակչության թիվը և տոկոսը:

Ըստ մարդաշատության մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ Արմավիրում տեղի է ունեցել բնակավայրերի խոշորացման գործընթաց: 1926-ի համեմատությամբ կտրուկ նվազել է մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերի բացարձակ թիվը (1926թ-ի՝ 69-ից 2015 թ-ին՝ 11): Եթե 1926 թ. այդպիսի գյուղերին բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության 56,4 %-ը, ապա 2015 թ-ին՝ ընդամենը 2,7 %-ը: Ներկայումս մարզին ըստ մարդաքանակի բնորոշ է մեծ, խոշոր և գերխոշոր գյուղային տարաբնակեցումը:

Արմավիրի մարզի բոլոր գյուղերում գյուղացիական տնտեսությունների

հիմնական տնտեսական բազան գյուղատնտեսական արտադրությունն է: Վերջին շուրջ տասը տարում մարզի հողային ֆոնդի կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Մարզի 124211,4 հա ընդհանուր տարածքից 97022.2 հա-ը (78.1%) գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 47381 հա-ը 2015 թ. օգտագործվել է գյուղատնտեսական արտադրության մեջ (31771 հա-ը՝ վարելահողեր, 67.1 %), 7120 հա-ը (15.0 %-ը)՝ խաղողի և 849.0 հա-ը (17,9 %-ը)՝ պտղատու այգիներ:

Արմավիրի մարզի 94 գյուղական համայնքներում կան շուրջ 55 հազ. գյուղացիական տնտեսություններ: Գյուղացիական տնտեսությունների ապահովվածությունը գյուղատնտեսական հողատարածքներով առավել բարձր է Բաղրամյանի, այնուհետև՝ Արմավիրի տարածաշրջանում: Այդ ցուցանիշով վերջին տեղում էջմիածնի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններն են: Վերջին հինգ տարիներին մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվել է միջին հաշվով տարեկան 160 մլրդ դրամի համախառն արտադրանք (մոտավորապես 337 մլն ԱՄՆ դոլար):

Մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվող հողատարածքներն ամբողջովին ոռոգելի են, որի համար ինչպես արդեն նշել ենք, օգտագործվում են Արմավիրի Մեծ, Ստորին Հրազդանի և Թալինի ջրանցքներով մարզի տարածք հասցվող ջրերը: Առանձին տարիներին, երբ ջրամբարներում ջրի պակաս է լինում մարզի առանձին գյուղական համայնքների գյուղացիական տնտեսություններ ունենում են ոռոգման խնդիր: Գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության (տնտեսական արդյունավետության) առումով մարզում առաջատար են էջմիածնի և վերջինիս սահմանակից Արմավիրի տարածաշրջանի գյուղական համայնքների տնտեսությունները, որոնք ավելի մեծ հնարավորություններ ունեն գյուղատնտեսության ինտենսիվացման ուղղությամբ: Մասնավորապես՝ մարզի շուրջ 70 գյուղական համայնքներում առկա են 463 հա ընդհանուր մակերեսով ջերմատներ (առավելապես պոլիէթիլենային թաղանթով): Դրանցից 332 հա-ը մասնագիտացված են բանջարեղենի (լոլիկ, վարունգ, սմբուկ) արտադրությամբ: Ջերմատների առավել մեծ մակերեսով առանձնանում են էջմիածնի տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունները: Մասնագետների գնահատմամբ մարզում գյուղատնտեսության ինտենսիվացման և գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության բարձրացման ուղիներից մեկը ջերմատների մակերեսի ավելացումն է:

Գյուղացիական տնտեսությունների եկամտաբերությամբ մարզում երկ-

րորդն Արմավիրի տարածաշրջանի մնացած գյուղական համայնքներն են, երրորդը՝ Բաղրամյանի:

Մարզի գյուղական բնակավայրերն ունեն այգեպտղաբանջարաբուծական արտադրական մասնագիտացման ուղղություն, որն ըստ տարածաշրջանների ունի հետևյալ պատկերը.

➤ **Արմավիրի տարածաշրջան** խաղողագործություն, պտղաբուծություն և բանջարաբուծություն,

➤ **Էջմիածնի տարածաշրջան** բանջարաբուծություն և խաղողագործություն,

➤ **Բաղրամյանի տարածաշրջան** բոստանային մշակաբույսերի (առավելապես՝ ձմերուկ և սեխ) աճեցում:

Մարզի գրեթե բոլոր գյուղերում երկրագործության վերը նշված ճյուղերը զուգակցվում են կաթնային տավարաբուծության, իսկ առանձին գյուղերում՝ նաև ոչխարաբուծության հետ:

Վերջին հինգ տարում մարզում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները չեն գերազանցում 6 հազ. հա-ը (1998-2000 թթ. մարզում մշակվում էր 18-20 հազ. հա հացահատիկ), որը վկայում է այն մասին, որ մարզի գյուղական համայնքներում վերականգնվում է մասնագիտացումը գյուղատնտեսության առավել եկամտաբեր ճյուղերի՝ խաղողի, պտուղների և բանջարեղենի տարբեր տեսակների արտադրության ուղղությամբ:

Ի տարբերություն ՀՀ մի շարք այլ մարզերի Արմավիրում գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողատարածքները համեմատաբար քիչ մակերես են զբաղեցնում: Մարզում կա մոտ 3 հազ. հա աղակալած հողեր, իսկ շատ հողատարածքներ էլ չեն մշակվում ոռոգման ցանցի բացակայության և ջրի սակավության պատճառով: Նախատեսվում է կառուցել ջրամբար 100 մլն մ³ ծավալով (Սելավ-Մաստարայի հեղեղատարի հիման վրա), որը հնարավորություն կտա գյուղատնտեսական շրջանառության մեջ ներառել նոր հողատարածքներ: Մարզում ավագի արդյունահանման հետևանքով մոտ 2 հազ. հա հողատարածք դուրս է եկել գյուղատնտեսական շրջանառությունից և գոյացել են արհեստական լճակներ:

Արմավիրի մարզի գյուղական բնակավայրերի տրանսպորտային սպասարկումը իրականացվում է միջպետական նշանակության 109, հանրապետական՝ 88 և ներմարզային՝ 398 կմ ավտոճանապարհային ցանցի միջո-

ցով: Մարզի գրեթե բոլոր գյուղական բնակավայրերը մարզկենտրոնի կամ տարածաշրջանային կենտրոնի հետ ունեն ավտոբուսային կամ միկրոավտոբուսային երթուղային սպասարկում:

Արմավիրի մարզի գյուղական բնակավայրերի ապահովվածությունը սոցիալ-մշակութային օբյեկտներով և կենցաղային սպասարկման ծառայություններով ունի հետևյալ պատկերը.

➤ գյուղական համայնքներից երկուսը՝ Ծաղկունքը և Կողբավանը չունեն դպրոցներ, իսկ մնացած գյուղական համայնքներում գործում են 91 միջնակարգ և 3 հիմնական դպրոցներ,

➤ ցածր է մարզի գյուղական համայնքների ապահովվածությունը նախակրթական հաստատություններով (մարզի ընդամենը 39 գյուղական համայնքներում են գործում մանկապարտեզներ),

➤ դեռևս խորհրդային ժամանակաշրջանում մարզի գյուղական բնակավայրից 82-ում ստեղծվել էին մշակույթի տներ, որոնք ունեին նաև գրադարաններ և իրականացնում էին բնակչության մշակութային սպասարկում: Ներկայումս դրանց մեծ մասը չեն իրականացնում վերը նշված գործառնությամբ և ունեն հիմնանորոգման կարիք,

➤ մարզի գյուղական բնակչության առաջնահերթ բուժսպասարկումն իրականացնում են համայնքային ենթակայության 52 բուժհաստատությունները (նշվածներից շատերը սպասարկում են երկու բնակավայր) ,

➤ մարզի գյուղական բնակավայրերից գազաֆիկացված չեն 9-ը (Երվանդաշատը, Բագարանը, Արտամետը, Լեռնամերձը, Արզինան, Արաքսը (Էջմիածնի տարածաշրջան), Մեծամորը, Յայկաշենը, Կողբավանը), որոնցից 5-ը միայն Բաղրամյանի տարածաշրջանում են:

➤ Բացի Բաղրամյանի տարածաշրջանի մի քանի գյուղերի, մարզի մնացած գյուղերն ունեն խմելու ջրի ներքին ջրագծեր:

Մարզի 94 գյուղերից միայն 48-ն ունեն կենտրոնացված ջրամատակարարում, որտեղ սահմանված կարգով կատարվում է նաև ջրի վարակազերծում: Մնացած գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են ոչ բարվոք վիճակում: Այդ հանգամանքը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը որակյալ ջրամատակարարում իրացնելու գործում:

Արմավիրի մարզում են գտնվում Սարդարապատի հուշահամալիրը (Յայաստանի ազգագրության և ազգային ազատագրական պայքարի պատ-

մության պետական թանգարանը), Մուսալեռի հուշահամալիր-թանգարանը, Զվարթնոցի պատմաճարտարապետական արգելոց-թանգարանը, Մեծամորի պատմահնագիտական թանգարանը: Մարզի 9-ը (Մրգաշատ, Ալաշկերտ, Արևիկ, Հացիկ, Նալբանդյան, Դալարիկ, Լեռնագոգ, Բաղրամյան, Մյասնիկյան) գյուղում գործում են երաժշտական, Փարաքար, Արմավիր, Արշալույս գյուղերում՝ արվեստի դպրոցներ, իսկ 6 գյուղում՝ մարզադպրոցներ և տարբեր մարզական ընկերությունների և միությունների մասնաճյուղեր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արմավիրի մարզի գյուղական համայնքների արտադրական հիմնական գործունեությանը՝ գյուղատնտեսության զարգացմանը և բնակավայրերի ընդհանուր սոցիալ-տնտեսական առաջընթացին ներկայումս խոչընդոտող հիմնական գործոններից են.

- գյուղմթերքների իրացման խնդիրը,

- պարբերաբար կրկնվող ցրտահարություններից, կարկտահարությունների և կլիմայական այլ աննպաստ երևույթներից գյուղացիական տնտեսությունների կրած վնասները,

- գյուղացիական տնտեսություններին տրվող համեմատաբար բարձր տոկոսներով վարկերը:

Համառոտակի անդրադառնալով նշված խնդիրներից յուրաքանչյուրին:

1. Եթե մինչև 1990-ական թվականների սկիզբը մարզում գործում էին պահածոյագործական երեք խոշոր գործարաններ (որոնք ունեցել են միութենական նշանակություն), ապա ներկայումս դրանք չեն գործում: Մարզում այժմ կան գյուղմթերքների վերամշակող երեք ձեռնարկություն (ՄԱՊ-ը, «Նոյան» Եվրոսել ՓԲԸ-ն և «Բյուրակն» ՍՊԸ-ն), որոնք դեռևս լիարժեք չեն գործում:

2. Մարզն իր աշխարհագրական դիրքով գտնվում է Թուրքիայի Կողբասարի հատվածից ներթափանցող կարկտաբեր ամպերի ազդեցության շրջանում: Այս առումով առավել ռիսկային են Բաղրամյանի և Արմավիրի տարածաշրջանի գյուղական համայնքների տարածքները: Վերջին տարիներին մարզի գյուղացիական տնտեսությունների կրած վնասը կակտահարությունից կազմել է տարեկան միջին հաշվով 20-25 մլրդ. դրամ: Պակաս վնաս չեն պատճառում նաև վաղ գարնանային ցրտահարությունները, որոնք կրկնվում են միջին հաշվով 2-3 տարին մեկ և մեծ կորուստներ պատճառում մարզի գյուղացիական տնտեսություններին (կարելի է հիշատակել 2014 թ. մարտի 30-31-ի և 2016 թ. մարտի 16-18-ի ցրտահարությունները):

3. Ապահովագրված չլինելով բնակլիմայական պայմանների պատճառած վնասներից, իսկ երբեմն նաև գյուղմթերքների իրացման հետ կապված խնդիրների պատճառով գյուղացիական տնտեսությունների կրած ֆինանսական կորուստները հնարավորություն չեն տալիս ժամանակին կատարել վարկային պարտավորությունները և վերջիններս հայտնվում են ֆինանսական լուրջ խնդիրների առաջ (2016 թ. հունիսի 10-ի ուժեղ կարկտահարությունից մարզի 10-ը համայնքի հարյուր տոկոսով վնասված 1413 գյուղացիական տնտեսություններ ունեին 1,4 մլրդ դրամի վարկային պարտավորություններ որից 1,2 մլրդ-ը մայր գումարն է, 200 մլն դրամը՝ տոկոսագումարը):

Արմավիրի մարզի գյուղական տարածքների աշխարհագրական հետազոտության բերված արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ.

➤ մարզն առանձնանում է գյուղական տարածքների ձևավորման ու զարգացման համար ռելիեֆային առավել նպաստավոր պայմաններով, բարենպաստ աշխարհագրական դիրքով և ագրոկլիմայական ռեսուրսներով,

➤ մարզում բնակավայրերի ձևավորման և զարգացման համար առանձնահատուկ դեր են ունեցել պատմական նախադրյալները և խորհրդային տարիներին ձևավորված արտադրական ենթակառուցվածքները,

➤ մարզը հանրապետությունում առանձնանում է անցած տասնամյակների ընթացքում գյուղական բնակչության և բնակավայրերի թվի կայուն աճով, գյուղական նոր բնակավայրերի կազմավորումով,

➤ ագրոկլիմայական բարենպաստ ռեսուրսները, գյուղատնտեսության աշխատատար ու եկամտաբեր ճյուղերը և նպաստավոր աշխարհագրական դիրքը պայմանավորել են մարզի տարածքում մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերով հարթավայրային համատարած և բլրա-հարթավայրային ցրված տարաբնակեցման ձևավորմանը,

➤ մարզի գյուղական համայնքներն ունեն առավելապես պտղաբան-ջարաբուծական արտադրական մասնագիտացում, որը բոլոր տարածաշրջաններում զուգակցված է կաթնային տավարաբուծության, երբեմն՝ ոչխարաբուծության հետ,

➤ մարզի գյուղական համայնքների տնտեսական զարգացման և գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության բարձրացման ուղիներից մեկը ջերմատնային տնտեսությունների ընդարձակումն ու զարգացումն է,

➤ մարզի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգաց-

ման հրատապ լուծում պահանջող խնդիրներից են գյուղմթերքների իրացման հարցը, պարբերաբար կրկնվող բնական աննպաստ երևույթների գյուղացիական տնտեսությունների կրած վնասները նվազագույնի հասցնելը և գյուղացիական տնտեսություններին առավել նպաստավոր պայմաններով վարկերի տրամադրումը: Նշված խնդիրների լուծումը կնպաստի մարզի գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության բարձրացմանը և բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

6.4 Շիրակի մարզ

Շիրակի մարզն ընկած է ՀՀ-ի հյուսիսարևմտյան մասում և իր մեջ ընդգրկում է գերազանցապես Ախուրյանի ավազանի ծախսփնյակը՝ նրա միջին հոսանքի սահմաններում, իսկ վերին հոսանքում՝ նաև նրա աջափնյա մի հատվածը: Նրան բաժին է ընկնում հանրապետության տարածքի 9 % -ը: 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ այստեղ ապրում էր ՀՀ-ի բնակչության 8,2, գյուղական բնակչության՝ 9,4 % -ը: Շիրակում են գտնվում ՀՀ-ի մշտական բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերի 13,6 % -ը: Մարզն առաջինն է հանրապետությունում գյուղական բնակավայրերի թվաքանակով (128 գյուղ):

Շիրակի բնական պայմանների համալիրում գյուղական տարածքների ու տարաբնակեցման համար առաջնային նշանակություն ունի տարածքի ընդհանուր բարձրադիր դիրքը: Մարզում ծովի մակարդակից 1500 մ-ից բարձր գոտում է ընկած տարածքի 88.4%-ը, իսկ 1500-2500 մ բարձրության գոտում՝ 75.4%-ը (հաշվարկներն ըստ 128 աշխատանքի տվյալների): Հաշվարկները ցույց են տալիս, որ բարձրաչափական առումով տարաբնակեցման և տնտեսական գործունեության համար առավել բարենպաստ պայմաններ ունի Շիրակի մարզի տարածքի 50 %-ը:

Տարածքի բնակեցման և յուրացման համար ռելիեֆի մյուս տարրը թեքություններն են: Այդ իմաստով Շիրակում շատ ավելի բարենպաստ են տափարակ և մեղմաթեք հարթությունները (մինչև 3°), ինչպես նաև մեղմաթեք լանջերը (3°– 8°), որոնք զբաղեցնում են տարածքի մակերևույթի 80 %-ը: Չնայած դրանց որոշ մասն ընկած են 2200 մ-ից բարձր շրջաններում, այդուհանդերձ մակերևույթի թեքությունները Շիրակում գյուղական տարաբնակեցմանը խոչընդոտող գործոն չեն: Մարզի համար բնորոշ են համե-

մատաբար հարթ և սակավ մասնատված տարածքների գերակշռությունը: Ղյուսիսում ընկած է Աշոցքի բարձրադիր սարահարթը, հարավում՝ համեմատաբար ցածրադիր, հարթ և թույլ մասնատված Շիրակի սարահարթը: Մեծ մասնատվածություն ունեցող և զառիթափ լանջերով ընդարձակ տարածքներն ընկած են մարզը եզրավորող լեռնալանջերում, որոնք բնակեցման համար չեն օգտագործվում:

Շիրակի մարզի կլիման ընդհանուր առմամբ բարեխառն է, աչքի է ընկնում ցամաքայնությամբ և ըստ բարձրության դառնում է խիստ: Տարաբնակեցման համար աննպաստ են մարզի հյուսիսային և հյուսիս - արևմտյան հատվածի (Աշոցքի սարահարթի) կլիմայական պայմանները: Աշոցքի սարահարթն առանձնանում է կարճատև զով ամառներով և երկարատև ու ցուրտ ձմեռներով, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում տարածքի գյուղատնտեսական յուրացման, գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման վրա: Մարզում տիրապետողը լեռնատափաստանային ու ալպյան բնական լանդշաֆտներն են լեռնային սևահողերի և լեռնամարգագետնային հողերի ծածկով: Շիրակի բնակկլիմայական պայմանները բարենպաստ են հացահատիկայինների (ցորենի, գարու), կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի և բանջարաբուստանային մշակաբույսերի աճեցման, իսկ հյութալի արոտներն ու խոտհարքերն՝ անասնապահության հիմնական ճյուղերի (տավարաբուծության և ոչխարաբուծության) զարգացման համար:

ԽՍՀՄ-ի տարիներին Շիրակի տնտեսական շրջանը, որը հիմնականում համապատասխանում է ներկայիս Շիրակի մարզի տարածքին, իր տնտեսական ներուժով հանրապետությունում գրավում էր երկրորդ տեղը, Արարատյան տնտեսական շրջանից հետո: Սակայն, 1988 թ. ավերիչ երկրաշարժը և դրան հաջորդած ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը վերջին 25 տարում էապես փոխել են մարզի տեղն ու դերը հանրապետությունում: Այժմ ՀՀ-ում արդյունաբերության արտադրանքի ծավալով Շիրակը վեցերորդն է մարզերի մեջ, իսկ գյուղատնտեսական արտադրանքով՝ չորրորդը: Նախկինում ունեցած տնտեսական ներուժի այդպիսի կտրուկ անկումն իր անմիջական ազդեցությունն է թողել մարզի հասարակական և սոցիալ-տնտեսական իրավիճակի, այդ թվում նաև գյուղական տարածքների ու տարաբնակեցման համակարգի, առանձին գյուղական բնակավայրերի սոցիալ - տնտեսական զարգացման տարբեր կողմերի վրա:

Չնայած Շիրակն ունի եզրային դիրք ՀՀ-ի ծայր հյուսիս-արևմուտքում, այդուհանդերձ, տարածքի բնակեցման և բնակավայրերի զարգացման հա-

մար նրա տրանսպորտաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքերը համարվում են բարենպաստ: Մարզի տարածքն ունի կարևոր տարանցիկ նշանակություն ունի ՀՀ-ի ճանապարհատրանսպորտային ցանցում և հանգուցային դեր է կատարում: Այստեղով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթուղին և ավտոճանապարհը: Հաղորդակցության նշված ուղիները վերջին 100 -150 տարվա ընթացքում իրենց դրական դերն են ունեցել Շիրակ աշխարհի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Մայրուղիների մերձակայքով և դրանց ազդեցության շրջաններում ձևավորվել են բնակավայրեր, յուրացվել են հազարավոր հեկտար հողատարածքներ: Վրաստանի հետ պետական սահմանը և սահմանամերձ գոտում նորմալ տնտեսական գործունեությունը, սահմանամերձ առևտրի և տարանցիկ փոխադրումների շնորհիվ, սահմանային այդ հատվածում գտնվող մի շարք բնակավայրերի համար, ներկայումս ևս զարգացման բարենպաստ նախադրյալներ կարող են համարվել:

Շիրակի բնակեցման և գյուղական բնակավայրերի առաջացման համար կարևոր դեր է խաղացել նաև պատմական գործոնը: Այն ՀՀ-ի հնագույն հայաբնակ տարածքներից է: Նրա ներկայիս տարածքը կազմում է պատմական Շիրակ գավառի արևելյան մասը: Շիրակի ներկայիս բնակչության նախնիներն այստեղ հաստատվել են 19-րդ դարի առաջին տասնամյակներից սկսած, երբ ռուս-պարսկական (1804-1813 թթ. և 1828թ.) և ռուս – թուրքական (1828-1830թթ.) պատերազմներից հետո Արևելյան Շիրակը մտավ ռուսական կայսրության կազմի մեջ: Ներգաղթողների մեջ գերակշռում էին Կարսից, Կարինից, Բիթլիսից, Մուշից, Վանից, Դիարբեքիից, Բասենից և Սասունից տեղափոխված հայ ընտանիքները: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում նոր բնակեցված տարածքը շենացավ: Արդեն 1837 թ. հնագույն Կունայրի գյուղից արևմուտք, Ախուրյանի ձախափնյակում հիմնադրվեց նոր բերդաքաղաք և կոչվեց Ալեքսանդրապոլ, որը դարձավ ռուսական զորամիստ - կենտրոն (տես թիվ 42 աշխատանքը):

Ցարական կառավարության կողմից Հայկական մարզում անցկացված առաջին աշխարհագրի տվյալների համաձայն 1831 թ. ներկայիս Շիրակի մարզում կար յոթանասուներեք գյուղական բնակավայր, որոնց բնակչության թիվը կազմում էր 20260 մարդ [184, էջ 58, 62, 66 - 68, 75 - 76]: Գերակշռում էին մանր և միջին մեծության գյուղական բնակավայրերը: Գյուղերի միջին մարդաշատությունը կազմում էր 263 մարդ: Հազարից ավելի բնակչություն ունեին ընդամենը երկու բնակավայր՝ Կունայրի (Գյումրին)՝ 3444 և

Ազատանը՝ 1450 բնակիչ: Բնակչության միջին խտությունը կազմում էր 7.5 մարդ/քկմ: Խիտ էին բնակեցված ներկայիս Ախուրյանի և Արթիկի տարածաշրջանները, որոնցում բնակչության խտությունը կազմում էր համապատասխանաբար 26.4 և 9.5 մարդ/քկմ: Մնացած շրջաններում բնակչության խտությունը չէր անցնում 7 մարդուց: Ներկայիս Աշոցքի տարածաշրջանում այն կազմում էր ընդամենը 2.6 մարդ/քկմ (հաշվարկներն ըստ թիվ 184-ի տվյալների):

Շիրակի մարզի բնակչության թիվը 1831 թ. համեմատությամբ 1897-ին ավելացել է ավելի քան 4 անգամ, իսկ բնակավայրերի թվաքանակը՝ կրկնապատկվել: Նույն այդ ժամանակահատվածում գյուղական բնակչության թիվն ավելացել է մոտ 4,7 անգամ (աղ.38): Բնակչության և բնակավայրերի թվաքանակի նման աճը պայմանավորված էր ինչպես բնական շարժով, այնպես էլ այդ ընթացքում շարունակվող ներգաղթով: Մասնավորապես՝ 1877-78 թթ. ռուս – թուրքական պատերազմից հետո, ինչպես նաև համիդյան հայկական ջարդերի պատճառով Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից հայ բնակչության մի ստվար զանգված տեղափոխվեց Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններ, այդ թվում նաև Շիրակի մարզ:

Շիրակի մարզի բնակչության թիվը համեմատաբար դանդաղ է աճել 1897 -1926 թթ. ընթացքում: Մոտ 30 տարվա ընթացքում մարզի բնակչության թվի բացարձակ աճը չի անցել տասը հազարից: Հասկանալի է, որ եթե չլինեին 1914 - 1920 թթ. մահաբեր իրադարձություններն, ապա այդ ավելացումն ավելի մեծ կլիներ, մանավանդ որ այդ տարիներին, հատկապես Մեծ Եղեռնից հետո, շարունակվում էր ներգաղթը Արևմտյան Հայաստանից:

Շիրակի մարզում խորհրդային իշխանության տարիներին տեղի է ունեցել բնակչության թվաքանակի համեմատաբար կայուն աճ: Այն 1926 – 1979 թթ. ավելացել է մոտ 2.5 անգամ: Հետագա 10 տարիների ընթացքում ևս, ըստ էության, տեղի է ունեցել բնակչության թվաքանակի ավելացում, սակայն 1988 թ. երկրաշարժը զգալի ազդեցություն թողեց մարզի բնակչության թվի հետագա շարժընթացի վրա:

**Շիրակի մարզի բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը
(1831-2015 թթ.)¹**

Տարեթվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			նրաբնակչության	նրաբնակչության	նրաբնակչության միջին խտությունը
	Գյուղ	Քաղաք	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական			
1831	77	-	20260	-	20260	7.5	7.5	263
1897	147	1	125475	30616	94859	47.0	36.0	645
1926	148	1	135130	42313	92817	50.4	35.0	627
1959	139	4	214294	122235	92059	80.0	35.0	662
1970	128	5	286241	184932	101309	207.0	39.0	791
1979	128	5	332606	229650	102956	124.0	39.0	8
1989	122	5	319643	213415	106228	119.0	41.0	870
2001	128	3	283389	182460	100929	106,0	38,0	788
2011	128	3	282300	169500	112800	105,0	42,0	881
2015	128 ²	3	246400	143500	102900	99,0	41,0	829

Սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, և հասարակական այլ հիմնախնդիրների առումով կարևոր է և կիրառական մեծ նշանակություն ունի Շիրակի մարզի բնակչության թվաքանակի շարժընթացի ուսումնասիրությունը հատկապես վերջին տասնամյակներին, մասնավորապես՝ հանրապետության անկախացումից հետո: 2001 թ. մարդահամարի տվյալներով մարզում մշտական բնակչության թիվը 1989 թ. համեմատությամբ նվազել է 36254-ով, իսկ 2001-2015 թթ. ընթացքում՝ գրեթե 37 հազարով:

Աղյուսակ 38-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Շիրակի մարզում, հատկապես խորհրդային իշխանության տարիներին, առավել արագ տեմպերով աճել է հիմնականում քաղաքային բնակչությունը: Մարզի ներկայիս տարածքում 1897 թ. գյուղական բնակչության թվաքանակը 3.1 անգամ գերազանցում էր քաղաքային բնակչությանը, իսկ 1926 թ.՝ 2.2 անգամ:

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Е., 1962, վիճակագրական ժողովածուի, 1970, 1979, 1989, 2001 և 2011 թթ. մարդահամարների և 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ ԱՎԾ տվյալների հիման վրա:

2. Մարզի մշտական բնակչություն ունեցող բնակավայրերի թիվը 124 է, 4 գյուղ մշտական բնակչություն չունեն:

**Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի թվաքանակի
փոփոխությունները (1926-2015 թթ.)¹**

	Բնակավայրերի թիվը ժամանակահատվածի ընթացքում				
	1926-1959	1959-1970	1970-1988	1988-2015	1926-2015
ա) Գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը ժամանակահատվածի սկզբում և վերջում	$\frac{148}{138}$	$\frac{138}{128}$	$\frac{128}{122}$	$\frac{122}{128}$	$\frac{148}{128}$
բ) Վերացված գյուղական բնակավայրերի թիվը	10	10	5	-	25
այդ թվում` գյուղեր	8	5	5	-	18
գ) Քաղաքներ դարձած գյուղերի թիվը	3	1	-	-	4
դ) Այլ բնակավայրերի միացած գյուղերի թիվը	3	-	2	-	5
ե) Նոր ստեղծված գյուղական բնակավայրերի թիվը	6	1 ²	1 ³	-	8
այդ թվում` գյուղեր	3	1	1	-	5
զ) Վերականգնված գյուղերի թիվը	-	-	-	-	-
է/ Նախկին քաղաքներից առաջացած գյուղեր	-	-	-	-	2

Խորհրդային առաջին 3-4 տասնամյակների ընթացքում Շիրակի մարզում արդյունաբերության արագ զարգացման շնորհիվ արդեն 1959 թ. քաղաքայնացման մակարդակը կազմում էր 57%: Ընդ որում, այդ տարիներին,

¹ Աղյուսակը կազմած է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Е., 1962, վիճակագրական ժողովածուի, 1970, 1979, 1989, 2001 և 2011 թթ. մարդահամարների և 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ ԱՎԾ տվյալների հիման վրա:

² Արթիկի տարածաշրջանի Լեռնակերտ գյուղը 1959 թ-ին հաշվառվել է Պենգաշեն քաղաքատիպ ավանի հետ, իսկ 1970 թ-ին` որպես առանձին գյուղական բնակավայր:

³ Ախուրյանի ջրամբարի կառուցման կապակցությամբ Վերին և Ներքին Ջրափի գյուղերն ապաբնակեցվել են և հիմնադրվել է Ջրափի գյուղը:

մարզում բնակչության թվաքանակն ավելացել է հիմնականում քաղաքային բնակչության հաշվին: 1926-1989 թթ. ընթացքում Շիրակում գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է ընդամենը 13411-ով (14.5 %-ով), իսկ 1989- 2001 թթ. ընթացքում մարզի գյուղական բնակչության թիվը ոչ միայն չի ավելացել, այլ նվազել է մոտ շուրջ 5300-ով (5 %-ով):

Անցած տասնամյակների ընթացքում Շիրակում որոշակի փոփոխություններ են կրել նաև գյուղական բնակավայրերի թիվը և դրանց միջին մարդաքանակը: Մարզն առավելագույն թվով բնակավայր ունեցել է 1926 թ.-ին (149 բնակավայր):

1831–1926 թթ. ընթացքում մարզում գյուղական բնակավայրերի թիվն ավելացել է ուղիղ երկու անգամ: Այնուհետև, 1926–1970 թթ. ընթացքում մարզի գյուղերի թիվը նվազել է, հասնելով մինչև 128-ի: Այդ թվաքանակն էլ պահպանվում է մինչև օրս: Նախկինում քաղաքատիպ ավաններ համարվող Անիպենզան և Պենզաշենն այժմ դասվում են գյուղական բնակավայրերի շարքին:

Աղյուսակ 40

Շիրակի մարզի գյուղական բնակչության թվաքանակի շարժումն ըստ տարածաշրջանների (1970-2015 թթ.)¹

Տարածաշրջաններ	Գյուղական բնակչության թիվն ըստ տարիների				
	1970 թ.	1979 թ.	1989 թ.	2001 թ.	2015 թ.
Ախուրյանի	34910	35811	38117	46159	40400
Ամասիայի	18809	20576	19497	7141	6300
Անիի	13116	12899	12526	14668	13600
Աշոցքի	9991	9277	6424	9917	9300
Արթիկի	24483	24393	22931	31244	33300
Ընդամենը	101309	102956	102495	109129	102900

¹ Աղյուսակը կազմված է ՀՀ մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ 1970, 1979, 1989, 2001 և 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ԱԿԾ հրապարակած տվյալների հիման վրա:

Եթե մինչև 1980-ական թվականները Շիրակի մարզին ըստ գերակշռող մարդաքանակի բնորոշ էր մեծ, միջին և փոքր գյուղային տարաբնակեցումը, ապա ներկայումս՝ մեծ, միջին և խոշոր գյուղային տարաբնակեցումը (աղ. 44):

Աղյուսակ 41

Շիրակի մարզի տարածաշրջանների գյուղական բնակավայրերի թվի և միջին մարդաշատության շարժմանը (1831-2011 թթ.)¹

	1831 թ.		1926 թ.		1959 թ.		1979 թ.		1988 թ.		2015թ.	
	միվթ վնգնրսն	մրսնթստոճ-ոնմտոց դվճվո	միվթ վնգնրսն	մրսնթստոճ-ոնմտոց դվճվո	միվթ վնգնրսն	մրսնթստոճ-ոնմտոց դվճվո	միվթ վնգնրսն	մրսնթստոճ-ոնմտոց դվճվո	միվթ վնգնրսն	մրսնթստոճ-ոնմտոց դվճվո	միվթ վնգնրսն	մրսնթստոճ-ոնմտոց դվճվո
Ախուրյանի	27	424	39	712	38	849	33	1023	33	1155	34	1458
Անասիայի	3	149	32	321	30	437	26	791	26	750	23	341
Անիի	13	198	26	634	23	724	21	645	16	783	19	867
Աշոցքի	7	129	27	424	26	374	26	371	25	377	25	437
Արթիկի	27	181	24	1118	21	955	22	1109	22	1042	23	1587
Շիրակի մարզ	77	263	148	627	138	665	128	804	122	840	124 ²	881

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Е., 1962 г., վիճակագրական ժողովածուի, 1979 թ. մարդահամարի, 1988 և 2015 թթ. ԳԶ բնակչության և բնակավայրերի և բնակավայրերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա:

**Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության բնակչության քվի բաշխումն ըստ բարձրության գոտիների
(2015 թ.)**

Աղյուսակ 42

Տարածաշրջան- ներ և մարզ	մինչև 1400		1401-1600		1601- 1800		1801- 2200		2001- 2200		2200-ից բարձր		Ընդամենը	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
Ախուրյանի	-	-	15	33223	13	13759	6	2595	-	-	-	-	34	49577
Ամասիայի	-	-	1	575	4	2057	6	3422	12	1785	-	-	23	7839
Անիի	1	474	12	7538	3	2823	3	5636	-	-	-	-	19	16471
Աշոցքի	-	-	-	-	-	-	14	7535	10	3163	1	216	25	10914
Արթիկի	-	-	5	5741	9	14517	8	14987	1	1254	-	-	23	36499
Շիրակի մարզում	1	474	33	47077	29	33156	37	34175	23	6202	1	216	124 ²	121300

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով», Ե., 2015 թ. վիճակագրական ժողովածուի տվյալներով: ա/ բնակավայրերի թիվը, բ/ բնակչության թիվը:

² Մարզի գյուղական բնակավայրերի թվաքանակը 128 է, Ախուրյանի տարածաշրջանում՝ 1 և Ամասիայի տարածաշրջանում՝ 3 գյուղ ընդամենը բնակչություն չունեն:

Ինչպես ԴՀ Լեռնային այլ տարածաշրջաններում, այնպես էլ Շիրակի մարզում վերջին շուրջ 90 տարիների ընթացքում տեղի է ունեցել բարձրագույն Լեռնային գոտու բնակչության և բնակավայրերի թվաքանակի նվազում և ցածրադիր գոտում բնակչության և բացարձակ թվաքանակի և՛ տեսակարար կշռի ավելացում (աղ. 43): Նշված ժամանակահատվածում մարզի ծովի մակարդակից 2000 մ-ից բարձր շրջաններում գյուղական բնակչության բացարձակ թիվը ոչ միայն չի ավելացել, այլ 2015 թ.-ին 1926թ.-ի համեմատությամբ նվազել է մոտ 1.6 անգամ, իսկ գյուղերի թիվը նվազել է 7-ով: Ըստ բարձրության գոտիների մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի մասին հանգամանալից պատկերացում են տալիս թիվ 43 աղյուսակում բերված տվյալները:

Շիրակն առանձնանում է բնակչության անհավասարաչափ տեղաբաշխմամբ: Չնայած մարզը բնակչության խտությամբ (97 մարդ/քվմ) մոտ է ԴՀ-ն միջին ցուցանիշին, սակայն դա չի արտահայտում մարզի տարածքի իրական բնակեցվածության և տարածքային ռեսուրսների օգտագործման աստիճանը: Գյումրին իր շրջակա բնակավայրերի հետ միասին զբաղեցնում է մարզի տարածքի մոտ 23%-ը, սակայն այստեղ կենտրոնացված է Շիրակի բնակչության ավելի քան 68%-ը: Այստեղ բնակչության խտությունը կազմում է 300 մարդ/ք.կմ, իսկ առանց Գյումրիի՝ 75 մարդ/քվմ:

Մարզում գյուղական բնակչության խտությունը (41 մարդ/քվմ) քիչ ավելի է ԴՀ գյուղական բնակչության միջին խտությունից: Սակայն մարզի տարածաշրջանների միջև այդ ցուցանիշն ունի մեծ տարբերություններ: Շիրակի մարզի գյուղական բնակչության 39 %-ից ավելին բաժին է ընկնում միայն Ախուրյանի տարածաշրջանին, իսկ Ախուրյանի և Արթիկի տարածաշրջանների միասին՝ 71.6%-ը: Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, որոնց բաժին է ընկնում մարզի տարածքի 43 %-ը, ապրում է Շիրակի գյուղական բնակչության ընդամենը 15.2% -ը:

Մարզում բնակեցվածության և տարաբնակեցման առումով առանձնանում են Ախուրյանի, Աշոցքի և Արթիկ-Անիի արեալները, որոնք միմյանցից տարբերվում են գյուղական բնակչության և բնակավայրերի խտությամբ, մարդաշատությամբ, տնտեսական մասնագիտացումով և գործառույթներով:

Չնայած Շիրակում գյուղատնտեսական հողահանդակների տեսակարար կշիռը հանրապետության միջին ցուցանիշից բարձր է 1.3 անգամ, սակայն գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությամբ (829 մարդ) Շիրակը մոտ 1.5 անգամ զիջում է ԴՀ միջին ցուցանիշին: Այս փաստը հիմք է

տալիս պնդելու, որ մարզի գյուղատնտեսական հողահանդակներն արդյունավետ չեն օգտագործվում, քանի որ բազմաթիվ այլ գործոնների թվում տարածքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը կախված է նաև բնակչության խտությունից, գյուղական բնակավայրերի մարդաշատությունից և խտությունից: Եթե Ախուրյանի և Արթիկի տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակը նույնիսկ մեծ է է հանրապետության միջին ցուցանիշից, ապա Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում այն մարզային միջին ցուցանիշից պակաս է մոտ 2.3 անգամ, իսկ ՀՀ գյուղերի միջին մարդաքանակից, համապատասխանաբար՝ 4.0-ից 2.9 անգամ:

Շիրակի մարզի բնակչության գրեթե 70 %-ը տեղաբաշխված է մինչև 1600 մ բարձրության գոտում: Այստեղ են գտնվում Գյումրի քաղաքը և 34 գյուղական բնակավայր: Հաջորդ բարձրության գոտիներին բաժին է ընկնում մարզի բնակչության համապատասխանաբար 18.7, 9.3 և 1.8%-ը: Մարզում ծովի մակարդակից 2200 մ-ից բարձր է գտնվում Աշոցքի տարածաշրջանի Սարագյուղ բնակավայրը:

Վերջին քսանհինգ տարում ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, որոնք առավել սուր են դրսևորվում Շիրակում, նշանակալից ազդեցությունն են թողել մարզի գյուղական բնակավայրերի վրա: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ մարզում գյուղական բնակչության առկա թիվը զգալիորեն զիջում է մշտական բնակչության թվին: Շարունակվող արտագաղթի և ծնելիության ցուցանիշի նվազման պատճառով մարզի 116 գյուղական համայնքների մեծ մասում բնակչության թիվը նվազել է: Մարզի փոքր և միջին մեծության գյուղերում առաջացել է ոչ բարենպաստ ժողովրդագրական իրավիճակ: Այս երևույթն առավել սուր է արտահայտվում Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, որոնք առանձնանում են նաև ոչ բարենպաստ բնաաշխարհագրական պայմաններով, ընկած են մարզկենտրոնից ավելի մեծ հեռավորության վրա, գյուղերն ունեն ավելի փոքր մարդաշատություն և մարզի մյուս տարածաշրջանների համեմատությամբ սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները սահմանափակ են:

Շիրակում գյուղական բնակչության թվաքանակի նվազումն առավել բնորոշ է 1801-2000 մ բարձրության գոտում: Այստեղ են գտնվում մարզի գյուղերի մոտ 50 %-ը, իսկ միայն 2001-2000 մ բարձրության գոտում՝ ավելի քան 19 %-ը (աղ. 43):

**Շիրակի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժմբացն ըստ բարձրության
Աղյուսակ 43
գոտիների 1926-2015 թթ.¹**

Տարեթիվ	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը	Գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (ն)											
			1400-1600		1600-1800		1800-2000		2000-2200		2200-ից բարձր			
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1926	148	92817	-	39	26390	36	30082	41	26156	31	10037	1	152	
1979	128	102956	-	35	34726	29	26342	38	30326	25	11275	1	287	
2011	124 ²	105033	1	260	39431	29	29823	37	30222	23	5123	1	174	
2015	124 ²	121300	1	474	47077	29	33156	37	34175	23	6202	1	216	
Նույնը սուղյաներով														
1926	100.0	100.0	-	26.4	28.4	24.3	32.4	27.7	28.2	20.9	10.8	0.7	0.2	
1979	100.0	100.0	-	27.3	33.7	22.7	25.6	29.7	29.5	19.5	10.9	0.8	0.3	
2011	100.0	100.0	0,8	26,6	37,5	23,4	28,4	29,8	28,8	18,6	4,9	0,8	0,2	
2015	100.0	100.0	0,8	0,4	26,6	38,8	23,4	27,3	28,2	18,6	5,1	0,8	0,2	

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Е., 1962 г., վիճակագրական ժողովածուի, 1979 և 2011 թթ. մարտահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով- 2015» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզի գյուղական բնակավայրերի իրական թիվը 128 է, որից 4 գյուղ մշտական բնակչություն չունեն։
235

Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի փոփոխություններն ըստ գյուղերի մարտաբանակի (1926-2015 թթ.)¹

Սնվման թվական	Միլիոն մարդ	Գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ մարտաբանակի (մարդ)													
		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի					
		ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ				
1926	148	92817	28	2731	53	18290	37	26988	29	41640	1	3168	-	-	
1979	128	102956	16	1474	42	14386	36	26108	31	47405	2	7219	1	6364	
2011	124 ²	105033	29	2851	38	9927	29	21793	31	49070	4	14279	1	7113	
2015	124 ²	121300	22	1889	28	8617	32	23101	36	59211	4	13026	2	15456	
Նույն տույններով															
1926	100.0	100.0	18.9	2.9	35.8	19.7	25.0	29.1	19.6	44.9	0.7	3.4	-	-	
1979	100.0	100.0	12.5	1.4	32.8	14.0	28.1	25.4	24.2	46.0	1.6	7.0	0.8	6.2	
2011	100.0	100.0	23.4	2.7	24.2	9.5	23.4	20.7	25.0	46.7	3.2	13.6	0.8	6.8	
2015	100.0	100.0	17.7	1.6	22.6	7.1	25.8	19.1	29.0	48.8	3.2	10.7	1.6	12.7	

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Е., 1962 г., վիճակագրական ժողովածուի, 1979 և 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով- 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզի գյուղական բնակավայրերի իրական թիվը 128 է, որից 4 գյուղ մշտական բնակչություն չունեն:

Բարձրադիր այդ գոտում գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունն ավելի քան 2,8 անգամ զիջում է մարզի միջին ցուցանիշին և գյուղական բնակչության շարժընթացի նման միտումների պահպանումը կարող է հանգեցնել այդ գոտում տասնյակ գյուղական բնակավայրերի աստիճանաբար բնազրկմանը, տարածքային, գյուղատնտեսական և այլ ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմանը:

Շիրակն առանձնանում է գյուղական տարաբնակեցման ձևերի և տեղական տիպերի իրեն բնորոշ գծերով: Մարզի տարածքն ամբողջությամբ մտնում է սարավանդային մարզերի խոշոր օջախներով տարաբնակեցման շրջանի մեջ: Այստեղ առանձնացնում են տարաբնակեցման տեղական հետևյալ տիպերն իրենց ենթատիպերով.

- Շիրակի սարահարթի ցրված տարաբնակեցում, բնակչության և բնակավայրերի միջին խտությամբ, առավելապես հացահատիկային տնտեսության և տավարաբուծության զարգացմամբ,

- բարձրադիր սարավանդային շրջանների ցրված տարաբնակեցում, առավելապես փոքր և միջին մեծության գյուղերով, անասնապահության և դաշտավարության տարբեր ճյուղերի զարգացումով,

- Սարահարթաբլրային ցրված տարաբնակեցում, առանձին շրջաններում բնակավայրերի խմբային օջախներով, տարբեր մեծության գյուղական բնակավայրերով, անասնապահության և դաշտավարության տարբեր ճյուղերի զարգացումով:

Շիրակի մարզի 128 գյուղական բնակավայրերում գործում են շուրջ 27 հազ. գյուղացիական տնտեսություններ: Մարզի գյուղատնտեսական հողատարածքների ընդհանուր մակերեսը 2016 թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 21109 հա, որից 78163 հա-ը՝ վարելահողեր, 44.5 հազ.-ը՝ բազմամյա տնկարկներ, 112129 հա-ն՝ արոտավայրեր, 9838 հա-ը՝ խոտհարքեր, մնացածն՝ այլ հողատեսքեր: Մարզում 2016 թ-ի դրությամբ օգտագործվում էր մշակելի հողատարածքների մոտ 90 %-ը: Դրանց ավելի մեծ չափեր ունեն Աշոցքի և Ամասիայի, իսկ ավելի փոքր՝ Արթիկի տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունները:

Մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացումների մեջ առավել տիրապետող են հացահատիկայինների մշակությունն, անասնապահության հետ զուգակցված: Ըստ տարածաշրջանների մարզի գյուղական համայնքների արտադրական մասնագիտացումն ունի հետևյալ պատկերը.

➤ *Ախուրյանի տարածաշրջան*՝ հացահատիկայինների (հիմնականում ցորենի) և կարտոֆիլի մշակություն, բանջարաբուծություն և անասնապահություն,

➤ *Անհի տարածաշրջան*՝ հացահատիկայինների (ցորեն, գարի) և կերային մշակաբույսերի աճեցում, անասնապահություն,

➤ *Աշոցքի տարածաշրջան*՝ անասնապահություն (տավարաբուծություն և ոչխարաբուծություն), կերային մշակաբույսերի և հացահատիկայինների (գարի, վարսակ) աճեցում,

➤ *Ամասիայի տարածաշրջան*՝ անասնապահություն (տավարաբուծություն և ոչխարաբուծություն), կերային մշակաբույսերի աճեցում, ցածրադիր հատվածի մի քանի գյուղական համայնքներում՝ նաև ցորենի մշակություն,

➤ *Արթիկի տարածաշրջան*՝ հացահատիկայինների (ցորեն, գարի) և կերային մշակաբույսերի աճեցում, անասնապահություն, մի շարք գյուղական համայնքներում՝ նաև բանջարաբուծություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզի գյուղացիական տնտեսություններից առավել բարձր եկամտաբերություն ապահովում են Ախուրյանի և Արթիկի գյուղական համայնքները, որոնք ունեն գյուղատնտեսության ինտենսիվացման (հատկապես՝ ոռոգման) առավել մեծ հնարավորություններ և առանձնանում են նպաստավոր ագրոկլիմայական ռեսուրսներով: Այդ ցուցանիշն առավել ցածր է Աշոցքի և Ամասիայի գյուղական համայնքներում, որոնք ընկած են բարձրադիր գոտում (Աշոցքի սարահարթում) և դրանցում գերակշռում է տնտեսավարման էքստենսիվ ուղին:

Անկախացումից հետո մարզի գյուղական համայնքների արտադրական գործունեության մեջ տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ. շաքարի ճակնդեղը փոխարինվել է կարտոֆիլով և հացահատիկով, ներդրվել է եգիպտացորեն (սիլոսի և հատիկի համար): Մարզի առանձին գյուղական համայնքներում մշակում են նաև կտավատ և հնդկաձավար, նախկինի համեմատ ավելացել են կերային մշակաբույսերի (հատկապես կորնգանի) ցանքատարածքները:

Շիրակի մարզի գյուղացիական տնտեսությունները վերջին 5 տարում (2011-2015 թթ.) միջին հաշվով տարեկան արտադրել են 110 մլրդ դրամի համախառն արտադրանք:

Շիրակի գյուղական տարածքների մշակելի հողատարածքների ոռոգումն իրականացվում է Արփի լճի, Կառնուտի, Մանթաշի, Վարդաքարի, Սառ-

նաղբյուրի և Թավշուտի ջրամբարների, ինչպես նաև Շիրակի ու Աջափնյա ջրանցքների ջրերով: Ընթացքի մեջ է Կապսի ջրանցքի ջրամբարի վերակառուցման ծրագիրը: Մարզի ոռոգելի հողատարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 20 հազ.հա, որը մշակելի հողատարածքների 25,5 %-ն է:

Միջպետական 116, հանրապետական 135 և մարզային նշանակության 461 կմ ավտոճանապարհային ցանցն ապահովում են Շիրակի մարզի գյուղական համայնքների տրանսպորտային սպասարկումը: Մարզի տարածքում ներմարզային ավտոճանապարհները, որոնցով իրականացվում է գյուղական բնակավայրերի տրանսպորտային սպասարկումը, տեխնիկական առումով բավարար և վատ վիճակում են:

Շիրակի բոլոր գյուղերը մարզկենտրոնի և տարածաշրջանային կենտրոնների հետ ունեն ավտոբուսային կամ միկրոավտոբուսային կանոնավոր կապ:

Շիրակի նման բնակլիմայական պայմաններ ունեցող մարզում առանձնահատուկ նշանակություն ունի գյուղական բնակավայրերի կենցաղային ջրամատակարարման և գազամատակարարման հարցը: Մարզի բոլոր գյուղերն ունեն ներքին ջրամատակարարման համակարգ և առկա ջրային ռեսուրսները բավարար են շուրջօրյա ջրամատակարարում իրականացնելու համար, սակայն մատակարարման տեխնիկական թերությունների և ներքին ցանցերում ջրի կորուստների պատճառով այդ խնդիրը դեռևս լուծված չէ: Մարզի 128 գյուղից 59-ը դեռևս գազաֆիկացված չեն: Այդպիսիք առավել շատ են մարզի բարձրադիր գոտում:

Շիրակի գյուղերից ընդամենը 5-ը չունեն բժշկական ամբուլատորիաներ և սպասարկվում են հարևան բնակավայրերի կողմից: Մարզում 4 գյուղական բնակավայր ունեն տարրական, 12 գյուղ՝ հիմնական, իսկ մնացած գյուղերը՝ միջնակարգ դպրոցներ: Ախուրյան գյուղում գործում է ավագ դպրոց: Մարզի 46 գյուղում գործում են դպրոցահեն նախակրթական հաստատություններ, իսկ 24 գյուղում՝ համայնքային ենթակայության մանկապարտեզներ (Ախուրյան գյուղն ունի երեք մանկապարտեզ): Ախուրյան, Ամասիա, Ագատան գյուղերում գործում են համալիր մարզադպրոցներ, իսկ Ախուրյան, Աշոցք և Ամասիա գյուղերում՝ Հայաստանի Շախմատի Ակադեմիայի մասնաճյուղ - խմբակներ: Մարզի Ախուրյանի՝ 21, Անիի՝ 11, Արթիկի՝ 19, Աշոցքի 10 և Ամասիայի տարածաշրջանի 6 գյուղական համայնքներում գործում են գրադարաններ, իսկ 10 գյուղում՝ երաժշտական և արվեստի դպրոցներ: Մարզի 40 գյուղական համայնքում կան մշակույթի տուն կամ

կենտրոն, իսկ Ազատան և Ջաջուռ գյուղերում՝ թանգարաններ (Ջաջուռում է գտնվում Մինաս Ավետիսյանի տուն թանգարանը): Ամասիա և Աշոցք գյուղերում գործում են արտադարձական մարզամշակութային կենտրոններ:

Շիրակի մարզի գյուղական տարածքների վերը բերված վերլուծության արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ.

➤ բնատնտեսական համեմատաբար նպաստավոր ու բավարար պայմանները, պատմական զարգացման ընթացքը և տնտեսաաշխարհագրական քիչ թե շատ նպաստավոր դիրքը պայմանավորել են Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի ցանցի ձևավորումը և զարգացումը: Խորհրդային տարիներին մարզի տնտեսական հզոր ներուժը և Գյումրին էապես նպաստում էին տարաբնակեցման համակարգի զարգացմանը: Սպիտակի երկրաշարժը և ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը խստորեն նվազեցրին մարզի տնտեսական ներուժը և Գյումրիի ազդեցությունը տարաբնակեցման և առանձին գյուղերի սոցիալ-տնտեսական առաջընթացի վրա,

➤ մարզի տարաբնակեցման և գյուղական բնակավայրերի զարգացման ընթացքի վրա էական ազդեցություն են թողել պատմաաշխարհագրական գործոնները և իրադարձությունները, մասնավորապես՝ 19-րդ դարի 40-ական թվականներից հետո մարզի վարչատարածքային տարբեր կարգավիճակները և Ալեքսանդրապոլ-Գյումրիի դերը տարածաշրջանում,

➤ բնակեցվածության և տարաբնակեցման առումով մարզը բաժանվում է իրարից որոշակիորեն տարբերվող երեք արեալների. Ախուրյանի, Աշոցքի և Արթիկ-Անիի, որոնք միմյանցից տարբերվում են գյուղական բնակչության և բնակավայրերի խտությամբ, բնակավայրերի մարդաշատությամբ, տնտեսական մասնագիտացումով և գործառույթներով: Գյուղական բնակավայրերի մարդաշատության վրա առավել մեծ ազդեցություն ունի մարզկենտրոն Գյումրին և գլխավոր տրանսպորտային ուղիների նկատմամբ բնակավայրերի ունեցած դիրքը,

➤ մարզի գյուղական բնակչության 2/3-ից ավելին տեղաբաշխված է 1401-1800 մ բարձրություններում, իսկ 2000 մ-ից բարձր շրջաններում՝ ընդամենը 4,9%-ը, չնայած վերջինիս բաժին է ընկնում մարզի տարածքի գրեթե կեսը: Ըստ գերակշռող մարդաքանակի մարզին բնորոշ է մեծ, միջին և խոշոր գյուղային տարաբնակեցումը,

➤ նախկինում ունեցած տնտեսական ներուժի անկումը և վերջին երկու տասնամյակում մարզում ստեղծված սոցիալ-տնտեսական ճգնա-

ժամային իրավիճակն առավել սուր դրսևորում ունի հատկապես Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանների և մարզի լեռնային ու բարձր լեռնային գյուղական բնակավայրերում, որոնք առանձնանում են փոքր մարդաշատությամբ, ոչ նպաստավոր աշխարհագրական դիրքով, մարզկենտրոնից ունեցած մեծ հեռավորությամբ և վերջինից ունեցած թույլ ազդեցությամբ: Նման իրավիճակը զգալիորեն խոչընդոտում է մարզի գյուղական բնակավայրերի զարգացման ու առաջընթացի գործին և կարող է պատճառ դառնալ նշված տարածաշրջաններում առանձին գյուղական բնակավայրերի բնազրկման ու վերացման:

Մեր կողմից կատարված դաշտային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ Շիրակի մարզում գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններից են.

- ոռոգման ներքին ցանցի մաշվածության պատճառով ջրի կորուստները հասնում են 50-60 %-ի, որը նվազեցնում է ոռոգման արդյունավետությունը,

- գյուղացիական տնտեսությունների մեքենատրակտորային պարկը, գյուղտեխնիկական և գործիքներն առավելապես հնացած են, ֆինանսական միջոցների սղության պատճառով վերջիններիս թարմացումը քիչ է,

- գյուղացիական տնտեսություններին տրվող վարկերի բարձր տոկոսը և գյուղմթերքների իրացման շուկայական ցածր գները հնարավորություն չեն տալիս բարձրացնել տնտեսությունների ինտենսիվացման մակարդակը,

- մարզի բոլոր տարածաշրջաններում, հատկապես՝ Ամասիայի և Աշոցքի գյուղական համայնքներում և տնտեսություններում, գյուղմթերքների արտադրության բարձր ինքնարժեքի պատճառով տնտեսությունները դառնում են անմրցունակ,

- մարզում վերանշակող ձեռնարկությունների սակավությունը (գործում են կաթի մշակման մի քանի փոքր և միջին ձեռնարկություններ) չի խթանում գյուղմթերքների համախառն արտադրանքի ավելացմանը:

6.5 Լոռու մարզ

Լոռու մարզում 2015 թ. ապրիլում էր ՀՀ-ի բնակչության 7,6, գյուղական բնակչության՝ 9,2 %-ը: Մարզն ունի ընդհանուր թվով 122 գյուղ, որից 6-ը գտնվում են քաղաքային բնակավայրերի ենթակայության տակ, իսկ 1-ը մշտական բնակչություն չունի:

Լոռու մարզին բաժին է ընկնում ՀՀ-ի տարածքի 12,7 %-ը: Այն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը և առանձնանում է մակերևույթի սուր հակադրություններով: Մարզի տարածքի մակերևույթը ծալքաբեկորավոր լեռների, հրաբխային զանգվածների, բարձրադիր հարթավայրերի ու սարավանդների, միջլեռնային գոգավորությունների, նեղ ու խորը գոգահովիտների մի համակցություն է: Մարզի 3789 քկմ-ի սահմաններում տեղանքի բացարձակ բարձրությունները տատնվում են 400-3186 մ-ի միջև: Բազումի լեռնաշղթայով և Դեբեդի հովտով մարզի տարածքը բաժանվում է երկու մասի՝ Լոռվա սարահարթի և Փամբակի հովտի: Լոռին ՀՀ-ի հյուսիսում ամենաընդարձակ մարզն է: Տարածքի մակերևույթի նման բնույթն իր անմիջական և միջնորդավորված ազդեցությունն է թողնում տարածքի բնակեցման, գյուղական տարածքների ու բնակավայրերի ձևավորման և զարգացման վրա:

Լոռում առավել մեծ բաժին ունեն ծովի մակերևույթից 1500 -2000մ բարձրության շրջանները, որոնք կազմում են տարածքի գրեթե 43%-ը: Նշված բարձրության սահմաններում է գտնվում նաև մարզի տարածքի առավել ընդարձակ և տարաբնակեցման համար նպաստավոր պայմաններ ունեցող Լոռվա սարավանդը, իսկ մինչև 2000 մ բացարձակ բարձրություն ունեցող տարածքներին բաժին է ընկնում մարզի ավելի քան 72 %-ը: Համեմատաբար փոքր է ծովի մակերևույթից մինչև 1000 մ բարձրություն ունեցող տարածքների բաժինը (5,1%): Բնակեցման և տնտեսական գործունեության համար առավել նպաստավոր պայմաններ ունեցող մինչև 8⁰ թեքություն ունեցող տարածքները Լոռու մարզում կազմում են տարածքի 25,8%-ը, ոչ բարենպաստ (16⁰-ից բարձր թեքության) տարածքները՝ 42,5%-ը, իսկ բավարար պայմաններ ունեցող շրջանները (8-16⁰)՝ 31,7%-ը (հաշվարկներն ըստ 128-ի տվյալների):

Մակերևույթի խիստ կտրատվածության, տարբեր ուղղությամբ ձգվող լեռնաշղթաների և դիրքադրությունների տարբերությունների պատճառով Լոռու մարզում կլիմայական տիպերի ավելի մեծ բազմազանություն է նկատվում,

քան Շիրակում: Մարզի տարածքի մեծ մասի համար բնորոշ են չափավոր-ցուրտ, չափավոր-ցամաքային, չափավոր-տաք, համեմատաբար խոնավ և չոր մերձարևադարձային կլիմայական տիպերը: Կլիմայական պայմանների նշված բազմազանությունն իր ազդեցությունն է թողնում մարզի գյուղական տարածքների, մասնավորապես՝ բնակավայրերի զարգացման վրա: Մարզի տարածքին առավել բնորոշ են անտառների, լեռնային (մարգագետնային) տափաստանների և ալպյան մարգագետինների լանդշաֆտները:

Տարածքի բնակեցման տնտեսական նախադրյալների առումով Լոռու բնական պայմանները նպաստավոր են հացահատիկայինների, կարտոֆիլի և կերային մշակաբույսերի աճեցման համար: Լեռնային խոտհարքերն ու հյութալի արոտավայրերը ծառայում են բազա անասնապահության երկու հիմնական ճյուղերի՝ տավարաբուծության և ոչխարաբուծության զարգացման համար:

Լոռու մարզի տարածքում գունավոր մետաղների հարուստ պաշարների առկայությունը և էներգետիկ հզորությունների ստեղծումը պայմանավորել են մի շարք քաղաքային բնակավայրերի ձևավորումը: Մարզի կենտրոնական մասով անցնում է Հայաստանի գլխավոր երկաթուղին, իսկ բարեկարգ ավտոճանապարհներով Լոռին կապված է հարևան մարզերի և մայրաքաղաքի հետ:

Բնաշխարհագրական նշված պայմանների և սոցիալ-տնտեսական ու քաղաքաշխարհագրական որոշակի գործոնների համալիր ազդեցության շնորհիվ պատմական զարգացման ընթացքում ձևավորվել է Լոռու մարզի ժամանակակից գյուղական տարածքների ու բնակավայրերի հիմքը:

Լոռին ևս Հայաստանի ամենավաղ բնակեցված տարածքներից է: Թեպետ Լոռու բնակեցումը եղել է դեռևս քարեդարյան ժամանակներից, սակայն պատմական իրադարձությունների պատճառով հիմնական բնակեցումը և բնակավայրերի ցանցի ձևավորումը կատարվել է XIX դարի 20-ական թվականներից: Մարզի բնակչության հիմնական մասը տեղաբնիկներ՝ արմատական հայ բնակիչներ են, որոնք հաստատվել են այստեղ պատմական հնագույն ժամանակներից: Տաշիր -լոռեցիներն իրենց ինքնատիպ էթնիկաբարբառային հատկանիշներով հիմնականում պահպանվել են անաղարտ, կարողացել են դիմագրավել և փրկել երկիրն օտար նվաճողների ասպատակություններից, որոնց մուտքն այս գոտում կրել է դրվագային բնույթ:

Վրևեյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Վրևնտյան Հա-

յաստանից և Պարսկահայքից այստեղ ներգաղթեց հայ բնակչության սովոր մի զանգված [43, էջ 82]: XVIII դարի երկրորդ կեսերից (1763թ.) Լոռիում հիմնադրվել են հույները (Ալավերդի, Ախթալա և այլն), որոնք այստեղ են գաղթել Գյումուշխանեից (Տրապիզոնի վիլայեթ): Սկսած 1840թ-ից Լոռիում ապրում են նաև ռուս աղանդավորական համայնքներ (մոլոկաններ), որոնք այստեղ հիմնել են ազգագրական ինքնատիպ առանձնահատկություններով աչքի ընկնող մի շարք գյուղական բնակավայրեր: Քանի որ Լոռին կապող օդակ էր Հայաստանի մնացած տարածքների և Ռուսաստանի միջև, ապա ռուսների բնակեցումը հիմնականում տեղի էր ունենում ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող ճանապարհների երկայնքով:

Աղյուսակ 45

Լոռու մարզի բնակավայրերի ու բնակչության թվի շարժընթացը (1831-2015 թթ.)¹

Տարեթվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության խտությունը	Գյուղական բնակչության խտությունը	Գյուղերի միջին մարդաքանակը
	Գյուղական	Քաղաքային	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական			
1831	54	-	11130	-	11130	2.9	2.9	209
1897	118	-	88823	-	88823	23.5	23.5	753
1926	162	1	130207	8640	121567	34.0	33.0	750
1959	128	8	217916	94210	123706	57.6	33,4	966
1970	119	9	296088	170367	125721	78.2	34.0	1056
1979	119	9	339326	215540	123786	90.0	33.5	1040
1989	113	9	309518	198521	110997	82.0	30.0	982
2001 թ. մարդահամ.	122	8	286408	169953	116455	76.0	31.5	945
			253351	148684	104667	67.0	28.8	858
2011	122	8	235537	137784	97753	64.0	26.4	801
2015	122	8	227999	134310	93689	61.6	25.3	768

¹ Աղյուսակը կազմված է Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг., Е., 1962, վիճակագրական ժողովածուի, 1970, 1979, 1989, 2001 և 2011 թթ. մարդահամարների ցուցանիշների և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

Լոռու մարզի ներկայիս տարածքի բնակչությունը 1831 թ. կազմում էր 11130 մարդ, բնակավայրերի թիվը՝ 54, բնակչության միջին խտությունը՝ 29

մարդ/կքմ: Գերակշռում էին բնակչության թվով մանր և փոքր (մինչև 200 մարդ) գյուղերը: Գյուղերի միջին մարդաշատությունը կազմում էր 206 մարդ: Հինգ հարյուր մարդուց ավելի բնակիչ ունեին ընդամենը երեք գյուղ (Ուզունլարը (Օծուն), Շնողը և մեծ Պարնին): Համեմատաբար խիտ էին բնակեցված Գուգարքի և Սպիտակի տարածաշրջանները (6,4 և 4,4 մարդ /քվմ): Նոսր էին բնակեցված Տաշիրի (1,2 մարդ /քվմ) և Թումանյանի (2 մարդ /քվմ) տարածաշրջանները [հաշվարկներն ըստ թիվ 184-ի տվյալների]:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին քառորդին Հայաստան աշխարհի տարբեր հատվածներում տեղի ունեցած իրադարձություններն իրենց դերն են ունեցել ՀՀ ժամանակակից տարածքի բնակչության և բնակավայրերի ձևավորման գործում: 1877-78 թթ. թուրքերի կազմակերպած ջարդերի պատճառով Արևմտյան Հայաստանից (հատկապես Մուշից, Բասենից, Ալաշկերտից, Խնուսից), ինչպես նաև Ղարաբաղից և Շուլավերից ներգաղթած հայ բնակչության մի մասը հաստատվել են նաև Լոռիում: 1880թ. Լոռիում կար 66 գյուղ, որոնցից խոշորներն էին Ուռուտը, Ագարակը, Լեջանը, Լոռիբերդը, Ուզունլարը, Ջալալօղլին և այլն [43]:

Լոռու տարածքում բնակչության թվի ավելացման գործում մեծ դեր են խաղացել 19-րդ դարի երկրորդ կեսին մարզի տարածքում արհեստների, առևտրի և արդյունաբերության որոշ ճյուղերի զարգացումը: Այդ նույն ժամանակահատվածում մարզում գյուղական բնակավայրերի ձևավորման համար վճռորոշ դեր են ունեցել նաև հաղորդակցության ուղիների ստեղծումը: Երևան -Ղարաքիլիսա – Թիֆլիս երկաթուղու և Երևան -Ապարան - Ղարաքիլիսա- Դիլիջան ավտոխճուղիների անցկացումը խթանեցին նոր գյուղերի ձևավորմանը և մինչ այդ գոյություն ունեցող գյուղերի խոշորացմանը: Նշված ճանապարհների երկայնքով, հարմար վայրերում հիմնվում էին իջևանատներ և փոստատներ, որոնց կից ստեղծվում էին դարբնոցներ, բուժկետեր և այլն: Հետագայում դրանց մեծ մասը դարձան բնակավայրեր (Փամբակ, Վահագնաձոր, Չորագետ և այլն):

1926 թ. Լոռին արդեն ուներ 162 գյուղ և մեկ քաղաք: Ընդհանուր առմամբ 1831-1989թթ. ընթացքում մարզի բնակչության թիվն ավելացել է ավելի քան 35 անգամ: Սկսած 20-րդ դարի 20-ական թվականներից առավել բարձր տեմպերով աճել է մարզի քաղաքային բնակչությունը (վերջինս 1926-1989 թթ. ընթացքում ավելացել է մոտ 23 անգամ): Նույն այդ ժամանակամիջոցում գյուղական բնակչության թիվը նվազել է ավելի քան 10,5 հազ-ով:

Լոռու մարզում բնակչությունը տեղաբաշխված է խիստ անհավասարաչափ: Միջին խտությունը կազմում է 62 մարդ /քկմ, իսկ գյուղական բնակչության խտությունը՝ 31.0 մարդ/քկմ: Մարզի բնակչության 70-75%-ը կենտրոնացված է Փամբակ, Ջորագետ և Դեբեդ գետերի ավազաններում: Գյուղական բնակչության խտությունն ավելի բարձր է Սպիտակի և Գուգարքի տարածաշրջաններում, իսկ մնացած տարածաշրջաններում այն փոքր է մարզի գյուղական բնակչության խտության միջին ցուցանիշից:

Աղյուսակ 46

Լոռու մարզի գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխությունները (1926-2015թթ.)¹

	Բնակավայրերի թիվը ժամանակահատվածի ընթացքում				
	1926-1959	1959-1970	1970-1988	1988-2015	1926-2015
ա) Գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը ժամանակահատվածի սկզբում և վերջում	$\frac{162}{129}$	$\frac{129}{122}$	$\frac{122}{115}$	$\frac{115}{122}$	$\frac{162}{122}$
բ)Վերացված գյուղական բնակավայրերի թիվը,	23	10	7	-	40
այդ թվում՝ գյուղեր	9	1	7	-	17
գ)Քաղաքներ դարձած գյուղերի թիվը	7	1	-	-	8
դ)Այլ բնակավայրերի միացած գյուղերի թիվը	16	-	-	1	17
ե)Նոր ստեղծված գյուղական բնակավ. թիվը,	13	4 ¹	-	-	17
այդ թվում՝ գյուղեր	5	4	-	-	9
զ)Վերականգնված գյուղերի թիվը	-	-	-	5	5
է) Նախկին քաղաքներից առաջացած գյուղեր	-	-	-	1	1

Լոռու մարզում գյուղական բնակչության անհավասարաչափ տեղաբաշխումը պայմանավորված է տարածքի մակերևութի բազմազանությամբ, տնտեսական յուրացվածության և տնտեսության կառուցվածքի տարածքային տարբերություններով, տրանսպորտային ցանցի խտությամբ և այլ գոր-

¹ Հավելարկներն արված են «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի և ՀՀ ԱԿԾ տվյալների հիման վրա:

ծոններով: Մարզի բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման և տարաբնակեցման ցանցի ձևավորման գործում վճռորոշ դեր են ունեցել տրանսպորտային ուղիները: Մարզի բնակավայրերի գերակշռող մասը կենտրոնացված են Երևան – Վանաձոր – Թբիլիսի երկաթուղու մերձակա տարածքներում: Սպիտակի, Գուգարքի և Թումանյանի տարածաշրջանների գյուղերի 71%-ը գտնվում են կամ երկաթուղու անմիջական հարևանությամբ, կամ նրանից մինչև 3 կմ հեռավորության վրա [43]:

Ունենալով ծովի մակարդակից բարձրությունների մեծ տարբերություններ և մասնատված լինելով Փամբակ, Ձորագետ և Դեբեդ գետերի ու նրանց վտակների հովիտներով, Լոռու տարածքն աչքի է ընկնում նաև գյուղական բնակավայրերի խիստ անհավասարաչափ տեղաբաշխմամբ: Մշտական բնակության տարածքը մարզում տատանվում է ծովի մակարդակից 505 մետրից մինչև 1930 մ բացարձակ բարձրությունների միջև: Բնակավայրերի բացարձակ բարձրությունների մեծ լայնությով աչքի է ընկնում Թումանյանի տարածաշրջանը, որտեղ այն կազմում է 1145 մ: Մարզի գյուղական բնակավայրի շուրջ 80 %-ն ընկած են 1200-1800 մ բացարձակ բարձրություններում: Նշված գոտում ապրում է Լոռու գյուղական բնակչության ավելի քան 76%-ը:

Մարզի ամենաբարձրադիր տարածաշրջանը Սպիտակն է, որտեղ գյուղական բնակչության 80 %-ը տեղաբաշխված է ծովի մակարդակից 1601-1800 մ բարձրություններում, իսկ 14%-ը՝ 1800 մ-ից ավելի բարձրություններում: Տաշիրի տարածաշրջանում գյուղական բնակչության 39 %-ը կենտրոնացած է 1401-1600 մ բարձրություններում, իսկ 53%-ը՝ 1601-1800մ բարձրություններում: Դա պայմանավորված է Տաշիրի տարածաշրջանի նշված գոտիներում բնական հարուստ արոտների առկայությամբ և անասնապահության զարգացման բարենպաստ հնարավորություններով: Սպիտակի տարածաշրջանում դրան ավելանում են նաև հացահատիկայինների, շաքարի ճակնդեղի, կաղամբի և այլ մշակաբույսերի աճեցման համար ագրոկլիմայական բարենպաստ պայմանները:

Լոռու մարզի բնակչության տեղաբաշխման և խտության, ինչպես նաև գյուղերի մարդաշատության ցուցանիշների վրա իրենց ազդեցությունն են թողել 1988 թ. երկրաշարժը և ազգամիջյան հարաբերությունների սրումը: Վերջինիս հետևանքով մեծ թվով աղրբեջանաբնակ գյուղեր դատարկվեցին, իսկ որոշ գյուղերի բնակչության թիվը նվազեց, որը կապված էր նաև մեծ

թվով հույների Չունաստան տեղափոխվելու հետ: Մեծ էր նաև ժողովրդագրական աննպաստ վիճակի և տնտեսական ճգնաժամի ազդեցությունը, որոնց հետևանքով վատացան գյուղական բնակչության սոցիալական պայմանները և տեղիք տվեցին արտագաղթի: Դրան նպաստեցին նաև գյուղատնտեսական մեքենաների, պարարտանյութերի և վառելիքի պակասը, սեփականաշնորհված հողերի հեռու գտնվելը, դրանց օգտագործման և գյուղատնտեսական ապրանքների իրացման դժվարությունները և այլ գործոններ:

Լոռու տարածաշրջանները գյուղական տարածքների ու տարաբնակեցման բնությամբ զգալիորեն տարբերվում են միմյանցից: Մարզի հարավում, որտեղ մակերևութի մասնատվածության աստիճանը համեմատաբար փոքր է, բնակեցվածության աստիճանը բարձր է (մոտ 41 մարդ/քկմ): Այս մասի համար բնորոշ է տարաբնակեցման խմբային ձևի տարածումը: Բնակավայրերի առանձին խմբեր տարածված են Սպիտակ և Վանաձոր քաղաքների շրջակայքում: Մարզի հյուսիսային մասն առանձնանում է հարթ մակերևութով և բարձրաչափական նիշերի ոչ մեծ տատանումներով: Այն ունի քիչ թե շատ համատարած տարաբնակեցում և ընդգրկում է Տաշիրի տարածաշրջանի մեծ մասը, բացի նրա արևմտյան մասից, որտեղ բարձրանում է Ջավախքի լեռնազանգվածը:

Լոռու մարզի կենտրոնական մասում բնակեցված հիմնական տարածքն ընկած է Ստեփանավան-Վլավերդի-Եղեգնուտ եռանկյունու հատվածում: Այստեղ գյուղերը տարածված են Չորագետի և Դեբետի երկայնքով: Նոսր է բնակեցված մարզի արևելյան հատվածը, որտեղ բնակավայրերի մի առանձին խումբ տարածված է ծայր հյուսիս-արևելյան մասում, իսկ մնացած մասերում տարածված առանձին բնակավայրերը տարաբնակեցման արեալ չեն ստեղծում:

Ի տարբերություն Շիրակի, Լոռիում գյուղերի մարդաշատության տատանումները մեծ չեն: Գերակշռում են 1000-3000, 200-500 և 500-1000 բնակիչ ունեցող գյուղերը: Առավել մարդաշատ են շրջանի հարավային մասի (Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանների) գյուղերը:

Գյուղերի միջին մարդաքանակով Լոռին 1.4 անգամ զիջում է ՀՀ միջին ցուցանիշին: Մարզում կա մինչև 50 բնակիչ ունեցող 3 գյուղ (բացի Ախթալա, Թումանյան և Շամլուղ քաղաքների ենթակայության տակ գտնվող գյուղերից), սակայն մարզի բնակեցված 115 գյուղից 73 %-ն ունի մինչև 1000 բնակիչ: Երեք հազարից ավելի բնակիչ ունեն մարզի ընդամենը 7 գյուղ: Դրանցում 2015 թ-ին ապրում էր մարզի գյուղական բնակչության 27,5 %-ը:

Աղյուսակ 47
ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի ցուցանիշների շարժումը
(1926-2015 թթ.)¹

Ցուցանիշներ	Տարեթվեր									
	1926	1959	1970	1979	1988	1995	2001	2011	2015	
Գյուղական բնակավայրերի թիվը (բաժինը ՀՀ-ում)	162 (12.6%)	129 (11.5%)	122 (13.2%)	121 (13.2%)	115 (12.7%)	119 (12.9%)	122 (12.8%)	115 (12.6%)	115 (12.6%)	
Գյուղական բնակչության թիվը	121567 (16.3%)	123706 (13.9%)	129178 (12.7%)	122736 (11.8%)	120292 (11.2%)	122918 (10.1%)	127469 (11.2%)	96705	11384	
Գյուղական բնակավայրերի միջին մարդաբանակը	750	959	1059	1014	1046	1088	1118	840	987	
Գյուղական բնակչության խտությունը (մարդ./քմ)	32.4	32.9	34.4	32.7	32	32.7	33.8	25	30	

¹ Աղյուսակը կազմված է Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг., Е., 1962 г., վիճակագրական ժողովածուի, 1970, 1979, 1989, 2001 և 2011 թթ. մարդահամարների ցուցանիշների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 48
Լոռու մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժումից ըստ բարձրության գոտիների (1926-2015 թթ.)

Տարիներ	Գյուղական բնակչության թիվը	Գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումը ըստ բարձրության գոտիների (մ)												
		մինչև 800	801-1000	1001-1200	1201-1400	1401-1600	1601-1800	1801-2000	ա	բ	ա	բ		
1926	162	4350	10	2690	21	15818	34	28220	39	31731	48	351165	3	3589
1979	121	7796	4	3814	11	10362	26	22512	37	29194	30	43584	4	5474
2011	115 ²	6160	3	2992	10	8591	25	22694	36	18851	30	32666	4	4751
2015	115 ²	7940	3	3739	10	9947	25	27248	35	20250	31	39169	4	5191
Խույնը տոկոսներով														
1926	100.0	4.3	3.6	6.2	2.2	13.0	24.0	23.2	24.1	26.2	29.6	28.9	1.8	2.9
1979	100.0	7.4	6.4	3.3	3.1	9.1	8.4	21.5	18.3	30.6	23.8	24.8	35.5	3.3
2011	100.0	6.1	6.4	2.6	3.1	8.7	8.8	21.7	23.5	31.3	19.5	26.1	33.8	3.5
2015	100.0	6.1	7.0	2.6	3.3	8.7	8.8	21.7	24.0	30.9	17.8	27.0	34.5	3.5

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Е, 1962 г., վիճակագրական ժողովածուի, 1979 և 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով-2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզի գյուղական բնակավայրերի իրական թիվը 122 է, որից 1-ը նշտական բնակչություն չունի, իսկ 6-ը գտնվում են քաղաքային բնակավայրերի ենթակայության տակ:

Գյուղական բնակավայրերի բարձրաչափական տեղադիրքի առումով Լոռու բնակավայրերի թվով և բնակչության քանակով առանձնանում է ծովի մակարդակից 1401-1800 մ բարձրության գոտին, որին բաժին է ընկնում մշտական բնակչություն ունեցող գյուղերի 57 և գյուղական բնակչության 52 %-ը: 1979 թ. համեմատությամբ 2015 թ. այդ գոտու գյուղական բնակչության մասնաբաժինը նվազել է տոկոսային 7 կետով, որը տեղի է ունեցել հիմնականում վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում: Գյուղական բնակչության և բնակավայրերի ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության տեղաբաշխման նկատելի փոփոխություն է տեղի ունեցել նաև մարզի մինչև 1000մ բարձրության գոտում: 1926թ. համեմատությամբ 2015 թ. այստեղ, ճիշտ է, գյուղերի թիվը նվազել է, սակայն բնակչության մասնաբաժինն ավելացել է մոտ 1.8 անգամ (աղ.48):

Լոռու մարզում ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գոտիների բաշխման գյուղական բնակչության թվի շարժընթացը որոշակիորեն տարբերվում է ԳԳ-ում տեղի ունեցած ընդհանուր գործընթացից: Եթե 1926-2015 թթ. մարզում ծովի մակարդակից 1801-2000 մ բարձրության գոտում գյուղական բնակչության մասնաբաժինն ավելացել է 1,9 տոկոսային կետով, ապա ԳԳ-ում բարձրության այդ գոտում տվյալ ժամանակահատվածում գյուղական բնակչության մասնաբաժինը նվազել է 4.4 տոկոսային կետով:

Անցած տասնամյակների ընթացքում Լոռու մարզի գյուղական բնակավայրերի բնակչության թվաքանակում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով փոփոխվել է նաև մարզի գյուղական տարաբնակեցման բնույթն ըստ գերակշռող մարդաքանակի: Եթե 1926 թ. մարզի համար առավել բնորոշ էր մեծ և միջին մեծության գյուղային տարաբնակեցումը, ապա ներկայումս՝ մեծ և գերխոշոր գյուղային տարաբնակեցումը: Վերջիններիս թեև բաժին է ընկնում գյուղերի ընդհանուր թվի ընդամենը 33 %-ը, սակայն գյուղական բնակչության՝ 65,3 %-ը: Անշուշտ, գյուղական բնակավայրերի խոշորացումը դրական երևույթ է: Նույնչափ վտանգավոր է նաև գյուղական բնակավայրերի մարդաքանակի նվազումը: Լոռու մարզում առավել խոցելի են մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերը: Մարզից դեռևս շարունակվող միգրացիան հիմք է տալիս պնդելու, որ մոտ ապագայում բնագրկման վտանգը կարող է սպառնալ վերը նշված գյուղերին, որոնց թիվը 2015 թ. կազմում էր 56: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարզում ժողովրդագրական ծայրահեղ վատ և վատ վիճակ ունեն առավելապես մանր ու փոքր գյուղական համայնքները, որոնք նախկին

Աղյուսակ 49
Լոռու մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի փոփոխությունները ըստ գյուղերի մարտաբանակի (1926-2015թթ.)¹

Տարե- թիվը	Գյուղերի Քիվը	Բնակչության Քիվը	Գյուղական բնակավայրերի բաշխումը ըստ մարտաբանակի (մարդ)											
			Մինչև 200 մ		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի	
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
1926	162	121567	57	4997	29	10794	37	28379	33	52165	6	25232	-	-
1979	121	122736	17	1931	31	11352	27	20818	41	67475	4	14600	1	6560
2011	115 ²	96705	25	2808	34	1106	20	15580	31	47785	5	19466	-	-
2015	115 ²	113484	26	2917	30	9775	17	12982	35	56589	4	13655	3	17556
Նույնը տոկոսներով														
1926	100.0	100.0	35.2	4.1	17.9	8.9	22.8	23.3	20.4	42.9	3.7	20.8	-	-
1979	100.0	100.0	14.1	1.6	25.6	9.2	22.3	17.0	33.9	55.0	3.3	11.9	0.8	5.3
2011	100.0	100.0	21.7	2.9	29.6	11.5	17.4	16.1	27.0	49.4	4.3	20.1	-	-
2015	100.0	100.0	22.6	2.6	26.1	8.6	14.8	11.4	30.4	49.9	3.5	12.0	2.6	15.5

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Ե., 1962 ր., վիճակագրական ժողովածուի, 1979 և 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով- 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզի գյուղական բնակավայրերի իրական թիվը 122 է, որից 1-ը մշտական բնակչություն չունի, իսկ 6-ը գտնվում են քաղաքային բնակավայրերի ենթակայության տակ:

շրջկենտրոններից, մարզկենտրոն Վանաձորից և մայրուղիներից գտնվում են համեմատաբար մեծ հեռավորության վրա (Զիլիզա, Ապավեն, Արծն, Գոգավան, Պաղաղբյուր, Ձյունաշող և այլ գյուղեր) [23]:

Մարզի գյուղական բնակավայրերում դիտվող էական փոփոխություններից է նաև գյուղերի միջին մարդաշատության նվազումը, որը տեղի է ունեցել նաև խոշոր և գերխոշոր գյուղերում:

Լոռու մարզն ընդգրկում է Լոռի- Փամբակի ցրված, տեղ-տեղ բնակավայրերի խմբային կուտակումներով տարաբնակեցման շրջանը, գյուղական տարածքների և տարաբնակեցման տեղական հետևյալ տիպերով.

- Լոռվա սարահարթի ցրված տարաբնակեցում՝ առանձին շրջաններում բնակավայրերի առավել խիտ ցանցով,

- Շիրականուտի գոգավորության ցրված տարաբնակեցումը,

- Ստորին Փամբակ-Դեբեդի առանձին օջախներով տարաբնակեցում՝ միջին, մեծ, իսկ առանձին դեպքերում նաև խոշոր բնակավայրերով: Վերջիններս իրենց մեջ ունեն գյուղական տարաբնակեցման յոթ ենթատիպեր:

Ինչպես ԳԳ այլ մարզերում, այնպես էլ Լոռիում գյուղական տարածքների տնտեսական գործունեության հիմքը գյուղատնտեսությունն է: Այստեղ գործում են 39700 գյուղացիական տնտեսություններ: Դրանց կողմից գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար պիտանի տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 251054 հա (մարզի տարածքի 66.1 %-ը), որից 42089 հա-ը (16.8 %-ը)՝ վարելահողեր, 1,1 %-ը՝ բազմամյա տնկարկներ, 58 %-ը՝ արոտավայրեր, 14 %-ը՝ խոտհարքեր, մնացածը՝ այլ հողատեսքեր: Ըստ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության տվյալների ներկայումս գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվում են մարզի մշակելի հողատարածքների մոտ 70 %-ը (մի քանի տարի առաջ այն կազմել է ընդամենը 50 %): Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են մոտ 9300 հա կամ մշակելի հողատարածքների 22 %-ը: Դրանք ավելի մեծ մակերես են կազմում Սպիտակի, Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջաններում:

Մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման մեջ առավել մեծ բաժին ունեն խոշոր եղջերավոր անասնապահությունը, կարտոֆիլի և հացահատիկի մշակությունը: Ըստ առանձին տարածաշրջանների գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացումն ունի հետևյալ պատկերը.

➤ **Գուգարքի տարածաշրջան**՝ խոշոր և մանր եղջերավոր անասնապահություն, կարտոֆիլի և հացահատիկի մշակություն, բանջարաբուծության (տարածաշրջանում վարելահողերի համեմատաբար փոքր բաժինը և հողակտորների փոքր չափերը սահմանափակում են երկրագործության զարգացման հնարավորությունները),

➤ **Սպիտակի տարածաշրջան**՝ հացահատիկի և կարտոֆիլի մշակություն, անասնապահություն (առավելապես՝ խոշոր եղջերավոր): Տարածաշրջանի մի շարք գյուղերում զբաղվում են նաև բանջարաբուծությամբ, որն ունի առավելապես սպառողական նշանակություն: Նախկինում այստեղ մշակվող շաքարի ճակնդեղի ցանքատարածքները փոխարինվել են հիմնականում հացահատիկի (ցորենի) և կարտոֆիլի ցանքատարածքներով: Տարածաշրջանում ձևավորվել են Ագրոհոլդինգ ՍՊԸ, որն իրականացնում է տավարի գտարյուն ցեղերի բազմացում: Տարածաշրջանի գյուղական համայնքներից գյուղացիական տնտեսությունների առավել բարձր եկատմաբերությամբ առանձնանում է Մեծ Պարնի գյուղը, որն ունի արգավանդ հողատարածքների առավել մեծ տարածքներ,

➤ **Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջաններ**՝ կարտոֆիլի և հացահատիկի մշակություն, տավարաբուծություն և սպառողական նշանակության բանջարաբուծություն: Տարածաշրջանի գյուղերում խորհրդային տարիներին գոյություն ունեցող տոհմաբուծական խոշոր տնտեսություններ ներկայումս չկան,

➤ **Թումանյանի տարածաշրջան**՝ պտղաբուծություն, անասնապահություն, բանջարաբուծություն:

Մարզում մշակելի հողատարածքների միջին չափն առավել մեծ է Սպիտակի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններում: Նրան հաջորդում են Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունները, իսկ Գուգարքի և Թումանյանի տարածաշրջաններում այդ ցուցանիշը նկատելիորեն ցածր է:

Մարզի գյուղացիական տնտեսությունների ինտենսիվացման մակարդակն առավել բարձր է Սպիտակի և Տաշիրի տարածաշրջանների գյուղերում, որոնք առանձնանում են մշակելի հողատարածքների ավելի ընդարձակ և հողակտորների մեծ չափերով, հողերի բնական բերրիությամբ, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման (հատկապես ցանքաշրջանառության) ավելի լայն հնարավորություններով: Այդ ամենի շնորհիվ նշված տարածաշրջանների գյուղացիական տնտեսություններում եկամտաբերությունն

ավելի բարձր է քան մարզի մյուս տարածաշրջանների գյուղացիական տնտեսություններում:

Վերջին հինգ տարիներին (2011-2015 թթ.) Լոռու մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված համախառն արտադրանքը կազմել է մոտ 73.5 մլրդ դրամ, որը կազմում է ՀՀ համապատասխան ցուցանիշի մոտ 7.3 %-ը:

Մարզի գյուղացիական տնտեսությունների տնտեսական զարգացման առավել հրատապ հիմնախնդիրներից են.

➤ ոռոգման ջրի պակասը և ցանցի մաշվածությունը հնարավորություն չեն տալիս սեզոնին ապահովել անհրաժեշտ քանակով ոռոգում և մշակելի տարածքների բերքատվության բարձրացում: Այս խնաստով խիստ հրատապ է մարզում նոր ջրագծերի ստեղծումն ու ոռոգման ցանցի վերանորոգումը,

➤ չնայած վերջին տարիներին գյուղատնտեսության զարգացման ծրագրի շրջանակներում մարզի գյուղացիական տնտեսություններում ներդրվել է որոշակի թվով տրակտորներ, շարքացաններ, մամլիչներ և այլ գործիքներ ու մեխանիզմներ, սակայն գյուղտեխնիկական առավելապես հին է, որը չի ապահովում գյուղատնտեսական աշխատանքների անհրաժեշտ արդյունավետություն: Մասնավորապես՝ մարզի գյուղացիական տնտեսություններում հացահատիկահավաք կոմբայնների փոքր թիվը և հին լինելը հնարավորություն չեն տալիս ժամանակին կատարել բերքահավաքը և խուսափել բերքի կորուստներից,

➤ զգալի թվով գյուղական համայնքների տարածքներ չունեն հակակարկտային կայաններ, որի պատճառով գյուղացիական տնտեսությունները կրում են ֆինանսական զգալի կորուստներ,

➤ մարզում չկան հացահատիկի և այլ մշակաբույսերի լաբորատորիաներ, որոնք հնարավորություն կտան լուծել սերմնաբուծության և սորտաթարմացման հիմնահարցերը և բարձրացնել սերմնաապահովվածության մակարդակը,

➤ մարզի գյուղացիական տնտեսությունների զարգացմանը խոչընդոտում է գյուղմթերքների իրացման առկա խնդիրը (վերջին մի քանի տարիներին զգալիորեն նվազել է մարզից գյուղմթերքների արտահանումը Ռուսաստան ռուսական ռուբլու արժեզրկման պատճառով): Մարզի տարածքում մսի, կաթի, կաշվի և բրդի մթերման և վերամշակման ձեռնարկությունների, գյուղատնտեսական կենդանիների նախկինում գոյություն ունեցող սպանդանոցների վերականգնումը, մրգի և բանջարեղենի սառնարանային տնտեսությունների և

չորանոցների ստեղծումը էապես կնպաստեն նշված խնդրի լուծմանը:

Լոռու գյուղական տարածքների ու բնակավայրերի ապահովվածությունը արտադրական ենթակառուցվածքներով և սոցիալ-մշակութային ծառայություններով ունի հետևյալ պատկերը: Գյուղական բնակավայրերի տրանսպորտային սպասարկումն իրականացվում է մարզի տարածքում առկա միջպետական 219, հանրապետական 264 և մարզային նշանակություն ունեցող 408 կմ ավտոճանապարհների միջոցով: Բացառությամբ մի քանի փոքր գյուղերի, մարզի մնացած բոլոր գյուղական բնակավայրերը ներմարզային գործող երթուղիներով կապված են մարզկենտրոնի և տարածաշրջանային կենտրոնների հետ: Ներմարզային ավտոճանապարհների տեխնիկական վիճակն ընդհանուր առմամբ գնահատվում է բավարար: Առավել բարվոք են Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջանների գյուղական բնակավայրերի ավտոճանապարհները:

Մարզի բոլոր գյուղերն ունեն ջրամատակարարման ներքին ցանց: Իրականացվում են նոր ծրագրեր ջրագծերի բարեկարգման ուղղությամբ, որը հնարավորություն կտա ապահովել ջրի անհրաժեշտ ծավալ և բնակավայրերի շուրջօրյա ջրամատակարարում: Մարզի 27 գյուղական համայնք 2016 թ-ի դրությամբ գազաֆիկացված չէր: Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջանների գրեթե բոլոր գյուղերը գազաֆիկացված են: Ամենաքիչ գազաֆիկացված է Տաշիրի տարածաշրջանը: Մարզի բոլոր գյուղական համայնքներում կան առողջապահական հաստատություններ: Մարզահովիտ, Վահագնի, Լեռնապատ, Գուգարք, Շահումյան, Մեծ Պարնի, Ջրաշեն, Արևաշող, Մեծավան, Ուռուտ, Վարդաբլուր, Աքորի, Դսեղ, Արևածագ, Օծուն, Գոճկան, Շնող գյուղերում գործում են առողջության կենտրոններ կամ բժշկական ամբուլատորիաներ, որոնք սպասարկում են հարակից մի քանի այլ գյուղերի: Մարզի մնացած գյուղերի առողջապահական սպասարկումն իրականացվում է Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի, Ախթալա, Թումանյան և Սպիտակ քաղաքների ենթակայության տակ գտնվող բուժականակաբարձական կետերի կողմից:

Լոռու մարզի 7 գյուղում չկան հանրակրթական դպրոցներ, իսկ Օծուն, Մեծավան և Շիրականուտ գյուղերում գործում են 2-ական դպրոց: Մարզի 69 գյուղում կան մանկապարտեզներ, իսկ 22-ում՝ նախակրթական հաստատություններ: Մարզի գյուղերի կրթական հաստատությունների հրատապ հիմնախնդիրներից են նյութատեխնիկական բազայի բարելավումը, փոքր գյուղերում՝ դասարանների համալրումը աշակերտ-թվով, իսկ առանձին

գյուղերում՝ նաև մասնագետ մանկավարժների պակասը:

Այսպիսով՝

➤ Լոռու բնական պայմանների բազմազանությունը, ագրոկլիմայական ռեսուրսների և սոցիալ-տնտեսական զարգացման նախադրյալների նշանակալից տարբերությունները ստեղծել են գյուղական տարածքների բնակավայրերի ձևավորման և զարգացման միանգամայն տարբեր պայմաններ, որն արտահայտվում է մարզի ժամանակակից գյուղական տարածքների ու տարաբնակեցման բնորոշ գծերով և ինքնատիպությամբ: Դրանում իրենց դերն են ունեցել նաև մարզի տարաբնակեցման ձևավորման պատմական և ազգագրական գործոնները:

➤ Տարածքի տնտեսական յուրացվածության և տնտեսության տարածքային կառուցվածքի նկատելիորեն մեծ տարբերությունները պայմանավորել են մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի խիստ անհավասարաչափ տեղաբաշխումը: Գյուղերն առավելապես տեղաբաշխված են 1200-1800 մ բարձրության գոտիներում, տրանսպորտային ուղիների երկայնքով և մերձակա հատվածներում, Լոռվա սարահարթում և գետահովտային ու լեռնահովտային հարմար շրջաններում՝ առաջացնելով տարաբնակեցման միանգամայն տարբեր ձևեր և համալիրային (տեղական) տիպեր և ենթատիպեր:

➤ Սպիտակի երկրաշարժը, մեր տարածաշրջանում տեղի ունեցած քաղաքաաշխարհագրական իրադարձությունները և բնակչության շարունակվող արտագաղթը վերջին քսանհինգ տարում էական ազդեցություն են թողել մարզի գյուղական բնակավայրերի վրա. նվազել է բնակավայրերի մարդաքանակը, տասնյակ գյուղական բնակավայրերում առաջացել են աննպաստ ժողովրդագրական իրավիճակ և սոցիալ-տնտեսական մի շարք հիմնախնդիրներ: Առանձնապես նկատելի է մարզի 1401-1800 մ բարձրություններում գյուղական բնակչության մասնաբաժնի նվազումը, որը 1979 թ-ից հետո պակասել է 7,3 տոկոսային կետով: Վերջինիս հետևանքով նշված շրջանների գյուղական բնակավայրերի ժողովրդագրական իրավիճակի վատթարացումից բացի էապես նվազում է հատկապես 1600-1800 մ բարձրությունների յուրացվածության աստիճանը և տնտեսական արդյունավետությունը:

➤ Լոռու մարզի գյուղական տարածքների ու գյուղերի առավել հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներն են համարվում գյուղական բնակավայրերի մարդաքանակի նվազման կանխումը, տասնյակ գյուղերում ստեղծված բնակչության ծայրահեղ աննպաստ սեռատարիքային կառուց-

վածքի ու ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, գյուղական բնակավայրերի տարածքային, մարդկային և այլ ռեսուրսների արդյունավետ ու նպատակային օգտագործումը:

6.6 Կոտայքի մարզ

Կոտայքի մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 7 %-ը: Մարզին բաժին է ընկնում ՀՀ բնակչության 8,5 և գյուղական բնակչության 10,6 %-ը: Մարզն ունի 60 գյուղական համայնք և 62 գյուղ (ՀՀ մշտական բնակչություն ունեցող գյուղերի 6,8 և գյուղերի ընդհանուր թվաքանակի՝ 6,5 %-ը):

Կոտայքի մարզի տարածքը բնակեցման և տնտեսական գործունեության տեսանկյունից զմահատելիս պետք է նախ և առաջ նկատի ունենալ մարզի նպաստավոր աշխարհագրական դիրքը: Մարզը կենտրոնական դիրք է զբաղեցնում ՀՀ տարածքում և միակ մարզն է, որ չունի արտաքին սահմաններ: Այն մայրաքաղաքի հետ ունի սահմանագծի նույնքան երկարություն, որքան Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերը միասին վերցրած: Կոտայքի մարզի կենտրոնական մասով են անցնում ՀՀ-ի համար առանցքային նշանակության Երևան - Հրազդան - Սևան-Դիլիջան-Իջևան ավտոմայրուղին և Արարատ-Երևան-Հրազդան-Սևան-Սոթք երկաթգիծը: Աշխարհագրական դիրքի նշված կողմերը, հատկապես խորհրդային իշխանության վերջին 4-5 տասնամյակների ընթացքում, իրենց դրական դերն են ունեցել Կոտայքի մարզի ժամանակակից տարածքի բնակեցման, մասնավորապես՝ գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Կոտայքի մարզում ծովի մակարդակից մինչև 2000 մ բարձրություն ունեցող շրջանները կազմում են տարածքի մոտ 48 %-ը, 2001-2500 մ բարձրության շրջանները՝ մոտ 30 %-ը, իսկ մնացած 22 %-ը՝ 2500 մ-ից բարձր շրջաններն են [հաշվարկներն ըստ 128-ի տվյալների]: Մարզում բնակեցման և տնտեսական գործունեության համար առավել նպաստավոր պայմաններ ունեն Եղվարդի և Հրազդանի սարավանդները: Առաջին երկուսն ունեն ծովի մակարդակից 1350-1550 մ բարձրություն և հյուսիսից եզրավորում են Արարատյան գոգավորությունը:

Մարզի կենտրոնական հատվածը զբաղեցնում է Հրազդանի սարահարթը, որն ունի ծովի մակարդակից 1700-1800 մ բարձրություն: Կոտայք-

քի տարածքը արևելքից եզրավորվում է Գեղամա լեռնաշղթայով, հյուսիսից՝ Փամբակի, Հյուսիս-արևմուտքից՝ Ծաղկունյաց:

Կոտայքի մարզ հարավային շրջաններին (Կոտայքի և Եղվարդի սարավանդներին) բնորոշ է չոր ցամաքային, միջին բարձրություններին՝ բարեխառն լեռնային, իսկ ավելի բարձրադիր շրջաններին՝ ցուրտ կլիման: Ցածրադիր վայրերում ամռանը շոգ է, միջին բարձրություններում՝ չափավոր տաք, լեռներում՝ զով: Սարգում մթնոլորտային տեղումների տարեկան քանակը տատանվում է 400-800 մմ-ի միջև:

Սարգի գյուղական տարածքների համար առանձնակի նշանակություն ունեն լեռնատափաստանային սևահողային վարելահողերի և լեռնամարգագետնային ամառային արոտավայրային տարածքները: Գեղամա և Փամբակի լեռների լանջային հսկայական տարածքներ համարվում են հյութալի արոտավայրեր և խոտհարքեր մարզի գյուղական տարածքների համար:

Կոտայքի մարզը բացառիկ հարուստ է տարածքի բնակեցման և բնակավայրերի զարգացման համար կարևորագույն դեր և նշանակություն ունեցող ջրային ռեսուրսներով: Սարգի տարածքում հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերն աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, Հրազդան և Ազատ գետերի կիրճերում: Հայտնի են Քառասունակնի, Արզնիի և Գառնիի աղբյուրները: Կարևոր նշանակություն ունեն նաև տեղական (Հրազդան գետի ու նրա վտակների) և տարանցիկ ջրային ռեսուրսները: Սարգի տարածքում կան նաև հանքային ջրերի մի շարք (Արզնու, Բջնիի, Հանքավանի և այլն) աղբյուրներ, որոնք ունեն տնտեսական և ռեկրեացիոն բացառիկ նշանակություն:

Դեռ հին ժամանակներից և մասնավորապես՝ վերջին հարյուրամյակի ընթացքում մարզի ժամանակակից տարածքի բնակեցման, գյուղական տարածքների ձևավորման և զարգացման գործում իրենց դերն են ունեցել այստեղ առկա շինարարական բազմազան ռեսուրսների, հատկապես՝ բազալտի, պեռլիտի և մարմարի պաշարները:

Բնառեսուրսային ու աշխարհագրական վերը նշված գործոնները և ժամանակի ընթացքում ձևավորված ենթակառուցվածքներն իրենց անմիջական ազդեցությունն են թողել մարզի ժամանակակից տարածքում բնակավայրերի ցանցի ձևավորման և զարգացման վրա:

Կոտայքի մարզի ժամանակակից տարածքը ևս մեր հանրապետության վաղ բնակեցված շրջաններից է, որի մասին են վկայում այստեղ առկա պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ (Գառնիի հեթա-

նուսական տաճարը, Գեղարդի Վիմափոր և Կեչառիսի վանքերը, Բջնիի բերդը և այլն): Մարզի տարածքի տարբեր շրջաններում կան երեքհազարամյա կենդանակերպ քարե հսկաներ՝ «վիշապներ»: Այդ ամենն ապացուցում են մարզի ժամանակակից տարածքում դեռ հազարամյակներ առաջ բնակավայրերի գոյության և դրանց նյութական ու հոգևոր մշակույթի զարգացման մասին:

Կոտայքի մարզի տարածքը հնում մտել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի մեջ և համապատասխանում է Կոտայք և Նիգ գավառներին: Մարզի ժամանակակից բնակչության ձևավորման վրա մեծ դեր է ունեցել 1828-30 թթ.-ին պարսկահայքից և Արևմտյան Հայաստանից (Բայազետից, Ալաշկերտից, Սուրմալուից, Էրզրումից, Մուշից և այլ շրջաններից) բնակչության ներգաղթը Կոտայքի մարզի ժամանակակից տարածք: Մարզի ժամանակակից տարածքի բնակչության և բնակավայրերի թվաքանակի վերաբերյալ առավել հավաստի տվյալներ կան 1831 թ.-ից: Ըստ առկա սկզբնաղբյուրների տվյալների այստեղ 1831 թ. եղել է 53 գյուղական բնակավայր, որոնք բոլորը միասին ունեցել են 7964 բնակիչ: Առավել խտաբնակ էր Հրազդանի տարածաշրջանի տարածքը (5,8 մարդ/քկմ), որն ուներ 28 գյուղական բնակավայր: Կոտայքի և Նաիրիի տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի և բնակչության թիվը 1831 թ. կազմել է համապատասխանաբար 20 գյուղ, 1985 մարդ և 5 գյուղ, 633 մարդ: 1831 թ. Կոտայքի մարզում համեմատաբար խոշոր գյուղեր էին Արամուսը (228 մարդ), Առինջը (243 մարդ), Եղվարդը (279 մարդ), Ալափարսը (267 մարդ), Բջնին (410 մարդ), Ջրառատը (790 մարդ), Մեղրածորը (336 մարդ), Սուլակը (363 մարդ), Քաղսին (246 մարդ), Արզականը (233 մարդ), Վ.Ախտան (349 մարդ), Ն.Քաղսին (246 մարդ) և այլն: Ներկայիս մարզկենտրոն Հրազդանի բնակչության թիվն այդ ժամանակ կազմում էր 339 մարդ, իսկ Արմավան քաղաքի տեղում էլար գյուղն ուներ 158 բնակիչ [ըստ 184-ի տվյալների]:

Մինչև 19-րդ դարի վերջը (1831-1897 թթ.) Կոտայքի մարզի ժամանակակից տարածքում բնակչության թիվն ավելացել է 6,8 անգամ (աղ. 50), իսկ գյուղերի թիվը 53-ից հասել է 94-ի:

Կոտայքի մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացը
(1831-2015 թթ.)¹

տարիներ	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության մյուսվիստով բնակչության	-իումը Գյուղական բնակչության մյուսվիստով	Միլիոնում նվազ Գյուղական բնակչության
	Քաղաքային	Գյուղական	Սրբորոն	Քաղաքային	Գյուղական			
1831	-	53	7964	-	7964	3,8	3,8	151
1897	-	94	54118	-	54118	26,0	26,0	576
1926	-	82	59528	-	59528	28,5	28,5	726
1959	6	69	78615	19356	59259	37,7	28,4	859
1970	7	59	149580	75415	74165	71,7	35,6	1257
1979	8	59	213682	124869	88813	102,4	42,6	1505
1988	8	61	271588	170985	100603	130,2	48,2	1649
2001	7	62	272469	153981	118489	130,6	56,8	1911
2011	7	62	254397	137481	116916	122,0	56,0	1886
2015	7	62	254990	138465	116525	122,2	55,9	1879

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ նշտական բնակչության և բնակավայրերի թվի վերաբերյալ ՀՀ ԱԾ հրապարակումների, 1970, 1979, 2001 2011 թթ. մարդահամարի և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, ժողովածուի տվյալների հիման վրա:

Կոտայքն ՀՀ այն մարզերից է, որտեղ 20-րդ դարի 50-ական թվականներից հետո տեղի է ունեցել արդյունաբերության բուռն զարգացումը, որը հանգեցրել է դեպի մարզ բնակչության մեծ ներհոսքի, ինչպես հանրապետության այլ շրջաններից (հատկապես՝ բարձրադիր լեռնային շրջանների գյուղական բնակավայրերից), այնպես էլ հարևան Վրաստանի և Ադրբեջանի հայաբնակ շրջաններից: 1926-1988 թթ. ընթացքում մարզի բնակչության թիվն ավելացել է 4,6 անգամ: Միայն 1959-1988 թթ. ընթացքում մարզի քաղաքային բնակչության թիվն ավելացել է 8,8 անգամ: Եթե մինչև 1950-ական թվականների կեսերը մարզում չկար քաղաքի կարգավիճակ ունեցող

ոչ մի բնակավայր, ապա 1988 թ-ին այդպիսիք ութն էին: Արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը և ուրբանացման գործընթացներն իրենց անմիջական ազդեցությունն են թողել Կոտայքի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի վրա: Ավելի քան 60 տարվա ընթացքում (1926-1988 թթ.) մարզի գյուղական բնակչության թիվն ավելացել է ընդամենը 1,7 անգամ: 1950 -ական թվականներին քաղաքի (կամ քաղաքատիպ ավանի) կարգավիճակ են ստացել Հրազդանը (իր մեջ ներառելով նաև շրջակա մի քանի այլ գյուղեր), Արզնին, Լուսակերտը, Նոր Հաճնը: 1961 թ-ին Էլար գյուղի տեղում հիմնադրվում է Աբովյան քաղաքը: Այնուհետև կազմավորվել են նաև Չարենցավան և Բյուրեղավան քաղաքները և քաղաքի կարգավիճակ է ստացել Ծաղկաձորը: Մարզում ամենից ուշ՝ 1996 թ-ին, քաղաքի կարգավիճակ է ստացել նաև Եղվարդը: Ուրբանացման նշված գործընթացների պատճառով ոչ միայն դանդաղ է աճել գյուղական բնակչության թիվը, այլև նվազել է գյուղերի թիվը (1926-1988 թ-ի ընթացքում մարզի գյուղերի թիվը նվազել է 21-ով): Դրանցից որոշների տեղում հիմնվել են քաղաքներ կամ բնակավայրեր ստացել է քաղաքի կարգավիճակ, սակայն մեծամասնությունը բնագրկվել և վերացել են: 1970-ական թվականներից հետո մարզի գյուղական բնակավայրերի թիվը էական փոփոխություններ չի կրել (աղ. 50):

ՀՀ անկախացումից հետո երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական նոր իրավիճակը, մասնավորապես՝ էներգետիկ և տնտեսական ճգնաժամը, մեծ ազդեցություն թողեցին Կոտայքի մարզի արդյունաբերական ներուժի վրա: Դադարեցին գործել տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ, որի պատճառով մարզի քաղաքային բնակավայրերում կտրուկ մեծացավ գործազրկության մակարդակը: 1988 թ-ից հետո մարզի բնակչության թիվը ոչ միայն չի ավելացել, այլ 2015 թ. դրությամբ նվազել է շուրջ 16600-ով (6,1 %-ով): Ընդ որում, մարզի բնակչության թվի նվազումը տեղի է ունեցել բացառապես քաղաքային բնակչության թվի նվազման պատճառով (1988-2015 թթ. մարզի քաղաքային բնակչության թիվը նվազել է ավելի քան 32500-ով կամ 19 %-ով), քանի որ այդ ժամանակահատվածում մարզում դիտվել է գյուղական բնակչության թվի 15,8 % աճ: Կոտայքի մարզում ևս 2001 թ-ից հետո դիտվել է գյուղական մշտական բնակչության թվի նվազում, որը 2001-2015 թթ-ին կազմել է 1963 մարդ կամ 1,7 %:

Աղյուսակ 51

Կոտայքի մարզի և տարածաշրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ մարդաքանակի (2015 թ.)¹

Տարածաշրջանները և մարզը	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ մարդաքանակի (մարդ)														Ընդամենը	Ընդամենը Երևանում		
	Մինչև 50		51-100		101-200		201-500		501-1000		1001-3000		3001-5000				5000-ից ավելի	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ			ա	բ
Արմավյանի	-	-	-	-	1	171	4	1366	6	4290	13	23734	3	11415	3	19543	30	60519
Յրազդանի	1	30	-	-	1	101	1	400	4	2807	9	20787	-	-	-	-	16	24125
Նաիրիի	-	-	-	-	-	-	1	375	3	2090	6	9955	2	6897	4	22886	16	42203
Կոտայքի մարզում	1	30	-	-	2	172	6	2141	13	9187	28	54476	5	18312	7	42429	62	126847

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

2015 թ. դրությամբ Կոտայքի մարզը բնակչության ընդհանուր թվով հանրապետությունում երրորդն էր Արմավիրից և Արարատից հետո, իսկ գյուղական բնակչության թվով՝ չորրորդը (Արարատից, Արմավիրից և Գեղարքունիքից հետո): Ներկայումս (2015 թ.) մարզի բնակչության 45,7 %-ը ապրում է գյուղական բնակավայրերում, այն դեպքում, երբ 1988 թ-ին գյուղական բնակավայրերին բաժին էր ընկնում մարզի բնակչության 37 %-ը:

Մարզի գյուղական տարածքներն առանձնանում են բնակավայրերի համեմատաբար մեծ միջին մարդաշատությամբ (2144 մարդ): Այս ցուցանիշով Կոտայքը երրորդն է ՀՀ-ում Արարատից և Արմավիրից հետո: Այստեղ մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերի թիվը 8-ն է, որոնցում ապրում է մարզի գյուղական բնակչության ընդամենը 1,9 %-ը: Մարզում առավել մեծ թիվ են կազմում բնակչության թվով մեծ (1001-3000 մարդ) գյուղերը (28 գյուղ), որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության շուրջ 43 %-ը, իսկ խոշոր և գերխոշոր գյուղերին՝ 47,9 %-ը: Մարզի 13 գյուղ ունեն 501-1000 բնակիչ, որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 7,2 %-ը: Կոտայքի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխվածությունն ըստ տարածաշրջանների տրված է թիվ 51 աղյուսակում:

Կոտայքի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (2015 թ.)¹

Մարզը և տարածաշրջանները	Բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մետր)										Ընդամենը ա թ			
	1001-1200 ա թ		1201-1400 ա թ		1401-1600 ա թ		1601-1800 ա թ		1801-2000 ա թ				2001-2200 ա թ	
Կոտայքի	-	-	8	28755	12	21503	6	9159	1	368	3	734	30	60519
Յրազղանի	-	-	-	-	4	8901	8	11004	4	4220	-	-	16	24125
Նաիրիի	5	19873	4	12935	5	7265	2	2130	-	-	-	-	16	42203
Կոտայքի մարզում	5	19873	12	41690	21	37669	16	22293	5	4588	3	734	62	126847

¹ Աղյուսակը կազմված է «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

Կոտայքի մարզում բնակչությունը տեղաբաշխված է ծովի մակարդակից 1100-ից 2040 մ բարձրության շրջաններում: Ամենացածրադիրը Նաիրիի տարածաշրջանի Ջովուհի գյուղն է (1100 մ), իսկ բարձրադիրը՝ Կոտայքի տարածաշրջանի Սևաբերդ գյուղը (2040 մ): Մարզի գյուղական բնակավայրերի մեծ մասը (62.6 %) տեղաբաշխված է ծովի մակարդակից 1201-1600 մ բարձրության շրջաններում: 1601-2000 մ բարձրություններում ապրում է Կոտայքի գյուղական բնակչության 21.2 %-ը, իսկ մինչև 1200 մ բարձրություններում կա ընդամենը հինգ գյուղ, որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 15,7 %-ը: Մարզում ծովի մակարդակից 2000 մ-ից բարձր շրջաններում կա ընդամենը երեք գյուղ, որոնք միասին 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ունեին 734 բնակիչ: Կոտայքի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխվածության մասին (ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության և տարածաշրջանների), հանգամանալից պատկերացում են տալիս թիվ 52 աղյուսակի տվյալները:

Կոտայքի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացն ըստ մարդաշատության խմբերի (1926-2015 թ.)¹

Տարեթիվեր	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ բնակավայրերի մարդաքանակի (մարդ)											
			մինչև 200		201-1500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի	
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
1926	82	59528	15	1380	29	8160	21	15804	16	30992	1	3192	-	-
1988	61	100603	1	200	14	5067	11	7311	26	44113	6	22621	3	21291
2011	62	116916	3	291	8	2832	16	11844	23	43545	5	16945	7	41459
2015	62	126847	3	302	6	2141	13	9187	28	54476	5	18312	7	42429
Նույնը տոկոսներով														
1926	100.0	100.0	18.3	2.3	35.4	13.7	25.6	26.5	19.5	52.1	1.2	5.4	-	-
1988	100.0	100.0	1.6	0.2	23.0	5.0	18.0	7.3	42.6	43.8	9.8	22.5	5.0	21.2
2011	100.0	100.0	4.8	0.2	12.9	2.4	25.8	10.1	37.1	37.3	8.1	14.5	11.3	35.5
2015	100.0	100.0	4.8	0.2	9.6	1.7	21.0	7.3	45.2	43.0	8.1	14.4	11.3	33.4

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության և բնակավայրերի թվի վերաբերյալ ՀՀ ԱԿԾ հրատարակումների, 2011 թ. մարդահամարի և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015 թ., ժողովածուի տվյալների հիման վրա:

ա/ Բնակավայրերի թիվը բ/ Բնակչության թիվը:

Հայաստանի Հանրապետության այլ մարզերի ու տարածաշրջանների նման Կոտայքում ևս անցած տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի և բնակչության թվի ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության և բնակավայրերի մարդաքանակի բաշխվածության նկատելի փոփոխություններ [աղ. 53, 54]: 1926-2015 թթ. ընկած ժամանակահատվածում մարզում կտրուկ կերպով նվազել են մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերի թվի ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական մեծությունները: Եթե 1926 թ. այդպիսի գյուղերում ապրում էր Կոտայքի մարզի գյուղական բնակչության 42.5 %-ը, ապա 2015 թ-ին՝ ընդամենը 9,2%-ը: Մյուս կողմից՝ տեղի է ունեցել մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերի թվի և դրանց բնակչության մասնաբաժնի կտրուկ ավելացում: Եթե 1926 թ. 1000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղերը մարզում կազմել են 20,7 %,

ապա 2015 թ-ին՝ 64.6 %: Առավել ակնհայտ է այդ կարգի գյուղերի բնակչության մասնաբաժնի շարժընթացը մարզում: 2015 թ.-ին 1926 թ-ի համեմատությամբ 1000-ից ավելի մարդ ունեցող գյուղերի բնակչության մասնաբաժինը մարզում ավելացել է տոկոսային 33.3 կետով (աղ. 53):

Աղյուսակ 54

Կոտայքի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (2015 թ.)¹

Տարեթվեր	Բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մետր)												Ընդամենը	
	1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000		2001-2200			
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
1926	-	-	12	10210	24	17744	24	23875	15	5364	7	2335	82	59528
1988	5	12789	12	39520	20	25265	16	18242	7	4468	1	319	61	100603
2011	5	18284	12	40442	21	32690	16	20283	5	4557	3	660	62	116916
2015	5	19873	12	41690	21	37669	16	22293	5	4588	3	734	62	126847
Նույնը տոկոսներով														
1926	-	-	14.6	17.2	29.3	29.8	29.3	40.1	18.3	9.0	8.5	3.9	100.0	100.0
1988	8.2	12.7	19.7	39.3	32.8	25.1	26.2	18.1	11.5	4.5	1.6	0.3	100.0	100.0
2011	8.1	15.6	19.3	34.6	33.9	28.0	25.8	17.3	8.1	3.9	4.8	0.6	100.0	100.0
2015	8.1	15.6	19.3	32.9	33.9	29.7	25.8	17.6	8.1	3.6	4.8	0.6	100.0	100.0

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988 թթ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության և բնակավայրերի թվի վերաբերյալ ՀՀ ԱԿԾ հրապարակումների, 2011 թ. մարդահամարի և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա: ա/ Բնակավայրերի թիվը բ/ Բնակչության թիվը

Կոտայքի մարզում ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գյուղական բնակավայրերի և բնակչության թվի 1926-2015 թթ. շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- մարզի ցածրադիր, ծովի մակարդակից մինչև 1400 մ բարձրության շրջաններում ավելացել են ինչպես գյուղերի թիվը (12-ից 17), այնպես էլ դրանցում ապրող բնակչության մասնաբաժինը մարզի գյուղական բնակչության մեջ (1926 թ.՝ 17.2 %, 2015 թ. 48.6 %),
- ծովի մակարդակից 1800 մ-ից բարձր շրջաններում տեղի է ունեցել ինչպես գյուղերի թվաքանակի նվազում (22-ից՝ 8), այնպես էլ բարձրության

այդ գոտու բնակչության մասնաբաժնի նվազում (1926 թ.՝ 12,9 %, 2015 թ.՝ 4.2 %),

➤ մարզում բնակեցման հիմնական գոտի համարվող 1401-1800 մ բարձրության շրջաններում գյուղերի բացարձակ թիվը նվազել է 9-ով, իսկ այդ գոտու գյուղական բնակչության մասնաբաժինը մարզի գյուղական բնակչության մեջ նվազել է 22,6 տոկոսային կետով:

Կոտայքի մարզի գյուղական բնակավայրերն առավելապես իրականացնում են գյուղատնտեսական գործառույթ: Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են հողային ընդհանուր ֆոնդի 74 %-ը (154627.6 հա): Վարելահողերը կազմում են 37765.8 հա (24.4 %-ը), արոտավայրերը և խոտհարքերը՝ 72.4 %, բազմամյա տնկարկները՝ 3.2 %-ը: 2015 թ-ին մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվել է մշակելի հողատարածքների (վարելահողերի) 52 %-ը: Մարզի 60 գյուղական համայնքներում (62 գյուղ) արտադրատնտեսական գործունեություն են իրականացնում մոտ 38700 գյուղացիական տնտեսություններ, որոնց թիվը 1990-ական թվականների համեմատությամբ նվազել է մոտ 500-ով:

Մարզի տարածքի ագրոկլիմայական պայմանները, մայրաքաղաքի նկատմամբ աշխարհագրական դիրքը, տնտեսության մեջ զբոսաշրջության և ռեկրեացիայի որոշակի դերն իրենց ազդեցությունն են թողել գյուղական բնակավայրերի տնտեսական գործունեության (արտադրական մասնագիտացման) վրա: Աբովյանի տարածաշրջանի բարձրադիր գոտու գյուղերն ունեն առավելապես տավարաբուծական մասնագիտացում (երկրագործության հետ զուգակցված), իսկ տարածաշրջանի միջին և ցածրադիր գոտու գյուղերը մասնագիտացված են այգեգործության (խնձորենի, տանձենի) և բանջարաբուծության ուղղություններով: Հրազդանի տարածաշրջանում բարձրադիր գյուղերն ունեն տավարաբուծության և ոչխարաբուծության մասնագիտացում, իսկ ցածրադիր գոտու գյուղերը՝ հացահատիկայինների (աշնանացան ցորենի, գարու և հաճարի) մասնագիտացում (ամասնապահության հետ զուգակցված):

Նաիրիի տարածաշրջանի գյուղական համայնքներից երկուսը (Արայի և Բուժական գյուղերը), որոնք բարձրադիր են, ունեն ամասնապահական մասնագիտացում (երկրագործության հետ զուգակցված), իսկ մնացած գյուղերը՝ այգեգործկան և բանջարաբուծական:

Վերջին 25 տարում մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման մեջ էական փոփոխություններ չեն կատարվել,

բացառությամբ այն բանի, որ մարզում վերացել է ծխախոտի մշակությունը և ձևավորվել են ջերմատնային տնտեսություններ (բաց պայմաններում հատապտուղների՝ հաղարձի, ելակի և մոշի մշակությունը), մոտ 67 հա տարածքի վրա:

Մարզի գյուղացիական տնտեսությունները ոռոգման համար օգտագործում են Արզնի – Շամիրամի և Կոտայքի ջրանցքների ջրերը: Աշխատանքներ է տարվում նաև ինքնահոս ոռոգման մակերեսների ընդլայնման ուղղությամբ, որը հնարավորություն կտա բարձրացնել գյուղացիական տնտեսությունների ինտենսիվացման մակարդակը և եկամտաբերությունը:

Կոտայքում գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության քիչ թե շատ բարձր ցուցանիշներով կարելի է առանձնացնել Նաիրիի տարածաշրջանի գյուղական համայնքները, որոնք բացի նպաստավոր ագրոկլիմայական պայմաններից ունեն նաև ինտենսիվացման առավել մեծ հնարավորություններ: Մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրած գյուղմթերքներն իրացվում են ինչպես ներքին շուկայում, այնպես էլ արտահանվում են արտերկիր:

Մարզի գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հրատապ խնդիրներից մեկը գյուղացիական տնտեսությունների ինտենսիվացման ցածր մակարդակի պատճառով եկամտաբերության ոչ բավարար ցուցանիշներն են, որի պատճառով չեն օգտագործվում վարելահողային տարածքների մոտ 48 %-ը:

Կոտայքի գյուղական համայնքների տրանսպորտային կապն ապահովում են մոտ 52 կմ միջպետական, 231 կմ հանրապետական և 250 կմ ներմարզային ավտոճանապարհները: Մարզի ցածրադիր գոտու և մայրաքաղաքին մոտ ընկած գյուղական համայնքներն ունեն ինչպես ներմարզային, այնպես էլ ներհամայնքային ավելի բարեկարգ ավտոճանապարհներ, իսկ մարզկենտրոնից և տարածաշրջանային կենտրոններից հեռու ընկած բարձրադիր գոտու գյուղերի (Յատիս, Սևաբերդ, Կապուտան, Ջովաշեն, բուժական, Մեղրածոր) ավտոճանապարհները գտնվում են վատ վիճակում և բարեկարգման կարիք ունեն: Բարեկարգման կարիք ունեն նաև մարզի մի շարք գյուղական բնակավայրերի ներհամայնքային ճանապարհները (Մեղրածոր, Յանքավան և այլն): Կոտայքի գյուղական բնակավայրերը, բացառությամբ Գեղարդ գյուղի, տրանսպորտային սպասարկման խնդիրներ չունեն: Մի շարք գյուղեր անմիջական տրանսպորտային- երթուղային սպասարկում ունեն մայրաքաղաքի հետ:

Կոտայքի մարզի գյուղական բնակավայրերում, բացառությամբ մի քանիսի, որոնք ունեն հիմնական դպրոցներ, գործում են միջնակարգ դպրոցներ, իսկ Գառնի գյուղում գործում է նաև ավագ դպրոց: Մարզի 22 գյուղական համայնքներում գործում են մանկապարտեզներ (միայն Նոր Գեղիում գործում է երեք մանկապարտեզ): Գյուղական համայնքներից Քանաքեռավանում, Քասախում, Նոր Գեղիում և Ջովուհիում կան արվեստի, իսկ Գեղաշենում և Արամուսում՝ երաժշտական դպրոցներ: Քասախ, Գառնի, Ջրվեժ գյուղերում գործում են սպորտդպրոցներ (ընթշամարտ, ծանրամարտ): Մարզի 50 գյուղական բնակավայրեր ունեն գրադարաններ, իսկ 30 գյուղ՝ մշակույթի տներ: Մարզի բոլոր գյուղական համայնքներում կան առողջապահական սպասարկման տարբեր կարգի օբյեկտներ (բժշկական կենտրոններին, պոլիկլինիկաներին, բժշկական ամբուլատորիաներն կից բուժ-մանկաբարձական կետեր, առողջության առաջնային պահպանման կենտրոններ, դրանց կից բուժ-մանկաբարձական կետեր):

Կոտայքի գյուղական բնակավայրերը, բացառությամբ Բուժական, Սևաբերդ, Հանքավան, Սարալանջ, Ողջաբերդ գյուղերի, գազաֆիկացված են: Մարզում բացի Լեռնանիստ գյուղից, մնացած բոլոր գյուղերն ունեն խմելու ջրի ջրագծեր:

Այսպիսով՝

➤ Կոտայքի նպաստավոր աշխարհագրական դիրքը, ռելիեֆային և կլիմայական քիչ թե շատ բարենպաստ պայմանները, արգավանդ սևահողային և լեռնամարգագետնային արոտավայրային տարածքները և անցած տասնամյակների ընթացքում ձևավորված ենթակառուցվածքային տարրերը պայմանավորել են մարզի ժամանակակից գյուղական տարածքների ու տարաբնակեցման ձևավորումը:

➤ Կոտայքի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի փոփոխությունների վրա էական ազդեցություն են թողել 19-րդ դարի ընթացքում տեղի ունեցած բնակչության ներհոսքի ալիքները, խորհրդային տարիներին՝ մարզի տարածքում արդյունաբերության բուռն զարգացումը, բնակչության ներհոսքը և ուրբանացման գործընթացները, իսկ անկախացումից՝ հետո՝ մարզի արդյունաբերական և տնտեսական ներուժի նվազումը:

➤ Մարզի գյուղական բնակավայրերն առանձնանում են միջին մարդաբանակի համեմատաբար մեծ ցուցանիշով, գյուղական բնակավայրերի և բնակչության հիմնական մասը բաժին է ընկնում տարածքի 1201-1600 մ բարձրության գոտուն:

➤ Անցած տասնամյակների ընթացքում մարզում տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի և բնակչության թվի ըստ մարդաքանակի և ծովի մակարդակից ունեցած բարձրության համեմատ բաշխվածության զգալի փոփոխություններ (մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերի թվի, ինչպես նաև դրանց բնակչության մասնաբաժնի կտրուկ ավելացում, ցածրադիր՝ ծովի մակարդակից մինչև 1400 մ բարձրության շրջաններում՝ ինչպես գյուղերի թվի, այնպես էլ դրանցում ապրող բնակչության մասնաբաժնի ավելացում):

➤ Տարածքի աշխարհագրական դիրքը, ագրոկլիմայական պայմանները և տնտեսության մեջ զբոսաշրջության ու ռեկրեացիայի որոշակի դերը պայմանավորել են մարզի գյուղական բնակավայրերի արտադրական մասնագիտացման հիմնական ուղղությունները:

➤ Մարզի գյուղական բնակավայրերի միջև առկա է ինչպես գյուղացիական տնտեսություններից ստացված եկամտաբերության, այնպես էլ գյուղական բնակավայրերի սոցիալ-մշակութային և կենցաղային ծառայություններով ապահովվածության և սպասարկման որոշակի տարբերություններ, որը պայմանավորված է առավելապես բնակավայրերի տնտեսաաշխարհագրական դիրքով ու տեղադիրքով (ծովի մակարդակից ունեցած բարձրությամբ):

➤ Մարզի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հրատապ հիմնախնդիրներից են մշակելի հողատարածքների ամբողջական ու լիարժեք օգտագործումը, գյուղացիական տնտեսությունների ինտենսիվացման մակարդակի բարձրացումը և եկամտաբերության ավելացումը:

6.7 Գեղարքունիքի մարզ

Գեղարքունիքի մարզի տարածքը եռանկյունաձև գոգավորություն է, որի հատակը զբաղեցնում է Սևանա լիճը: Տարածքի մակերեսով Գեղարքունիքն ամենամեծն է հանրապետությունում (5348 քկմ, որից 1271 քկմ-ը Սևանա լիճը): Մարզին բաժին է ընկնում 33 տարածքի մոտ 18 %-ը: Գեղարքունիքում է ապրում 33 բնակչության 7,7, գյուղական բնակչության՝ 14,8%-ը: 2015 թ. տվյալներով, Արարատի և Արմավիրի մարզերից հետո, Գեղարքունիքը 33-ում երրորդ մարզն էր գյուղական բնակչության թվով: Գեղարքունիքին բաժին է ընկնում հանրապետության մշտական բնակչություն ունեցող գյուղերի 9,6 %-ը (88 գյուղ): Մարզում կան մշտական բնակչություն չունեցող 4 գյուղ (այդ թվում նաև Արծվաշենը), իսկ մեկ գյուղ (Գագարին) մտնում է Սևան քաղաքի համայնքի մեջ:

Գեղարքունիքի մարզում մեծ տարածք են զբաղեցնում Սևանա լիճը եզրավորող տափարակ դաշտերը և մեղմաթեք լանջերը, որոնք աչքի են ընկնում տարաբնակեցման համար համեմատաբար նպաստավոր պայմաններով: Բարձրաչափական առումով Գեղարքունիքը 33-ի ամենաբարձրադիր մարզն է: Գոգավորության հատակը Արարատյան հարթությունից բարձր է մոտ 1000մ: Մարզի տարածքի բաշխումն ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության ունի հետևյալ պատկերը. մինչև 1500մ բարձրության տարածքները կազմում են մարզի 2.4%-ը, 1501-2000մ-ը՝ 21.1%-ը, 2001-2500մ-ը՝ 46.8 %-ը և 2500 մ-ից բարձրը՝ 29.7 %-ը [հաշվարկներն ըստ 128-ի էջ 156-ի տվյալների]: Գեղարքունիքում մինչև 8⁰ թեքությունները կազմում են տարածքի շուրջ 48, իսկ 20⁰-ից բարձր թեքության տարածքները՝ 10,8 %-ը:

Տարածքի նման ուղղաձիգ բաշխվածության պատճառով էլ Գեղարքունիքում տիրապետողը լեռնատափաստանային ու ալպյան լանդշաֆտներն են՝ բերրի սևահողերով, որոնք բարձր լեռնային գոտում փոխարինվում են մարգագետնային հողերով:

Մարզի տարածքում Արեգունու և Սևանի լեռնաշղթաների դեպի լիճն ուղղված լանջերը զառիթափ են, ժայռոտ, խիստ կտրտված են ձորերով: Գեղարքունիքի արևմտյան մասում լանջային տարածքները մեղմաթեք են: Մարզի ամենահարթ տեղամասերը գտնվում են հարավային և հարավարևելյան մասում՝ 1900-2200 մ բարձրություններում, որոնք ունեն բնակեցման համար լավ և նպաստավոր պայմաններ: Այստեղ լճի և լեռնազանգ-

վածի միջև ընկած է Մասրիկի եռանկյունաձև դաշտը, որը ծածկված է լճային հզոր, ալյուվիալ և պրոլյուվիալ նստվածքներով, որոնք օգտագործվում են կամ որպես վարելահողեր, կամ՝ արոտավայրեր: Բնակեցման համար բարենպաստ պայմաններ ունեն նաև Արզիճիի և Գավառագետի դաշտերը, որոնք ծածկված են արգավանդ հողերով:

Գեղարքունիքի մարզի կլիմայական պայմանները բավական խիստ են և ձմեռային ամիսներին միջբնակավայրային տրանսպորտային կապի որոշակի խնդիրներ են առաջացնում: Լճի ափամերձ հատվածում միջին հունվարյան ջերմաստիճանը -5°C -ից -6°C է, իսկ մարզի տարածքի մեծ մասում տիրապետում են մինչև -8°C ջերմաստիճանները: Ամառը բավականին տաք է: Տեղումների տարեկան քանակը մարզի մեծ մասում տատանվում են 350-ից 600 մմ-ի սահմաններում, Գեղամա և Վարդենիսի լեռներում հասնելով մինչև 900 մմ-ի:

Չնայած բարձր լեռնային դիրքին, գյուղատնտեսության և գյուղական բնակավայրերի զարգացման համար Գեղարքունիքի մարզում առկա են բոլոր պայմանները. լեռնային խոտառատ արոտներ, ամառային մեղմ կլիմա, երկրագործության համար ընդարձակ ու արգավանդ հողակտորներ: Մարզի գյուղատնտեսության առաջատար ուղղություններն են հացահատիկայինների, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնապահական մթերքների արտադրությունը: Գեղարքունիքը ԳՀ-ում թարմ ձկան հիմնական մատակարարներից է: Վերջիններս բավարար նախադրյալներ են ստեղծում մարզում գյուղական տարածքների ու բնակավայրերի ձևավորման ու զարգացման համար:

Նշված բնատնտեսական պայմանները և պատմական ու սոցիալ-տնտեսական գործոնները նախադրյալներ են ստեղծել Գեղարքունիքի մարզի բնակչության ինքնատիպ տարաբնակեցման և գյուղական տարածքների ու բնակավայրերի ձևավորման համար: Այստեղ բնակավայրերը հիմնականում մեծ և խոշոր գյուղեր են և տեղաբաշխված են Սևանա լճի մերձափնյա նեղ գոտում: Դրանք Սևանա լճից որոշ չափով հեռանում են գետահովտային շրջաններում:

Գեղարքունիքը բնակեցված է պատմական հնագույն ժամանակներից: Այդ մասին են վկայում մարզի տարածքում հայտնաբերված Կիկլոպյան ամրոցները, Ուրարտական ժամանակաշրջանի բերդերը, Ռուսա թագավորի սեպագիր արձանագրությունները և պատմամշակութային հարյուրավոր այլ հուշարձաններ: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո

Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից (Ալաշկերտից, Մուշից, Բայազետից, Իգդիրից, Բուլանղից և այլն) և Պարսկահայքից (հիմնականում Մակուից) հարյուրավոր հայ ընտանիքներ հիմնադրվեցին այստեղ: 1831-ին Գեղարքունիքի մարզի ներկայիս տարածքում գոյություն ունեին 69 գյուղական բնակավայր, որոնց բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 17915 մարդ [184]: Բնակչության խտությունը կազմում էր 4.4 մարդ /քմ:

Աղյուսակ 55

Գեղարքունիքի մարզի բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը (1831-2015 թթ)¹

Տարեթվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության խտությունը	Գյուղական բնակչ. խտությունը	Գյուղերի միջ. մարդաքանակը
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական			
1831	-	69	17915	-	17915	4.4	4.4	260
1897	1	107	101169	8486	92683	24.8	22.7	866
1926	1	115	121701	8447	113254	29.9	27.8	985
1959	1	122	161872	8751	153121	39.7	37.6	1255
1970	5	96	209276	48789	160486	51.4	39.4	1672
1979	6	89	238145	71902	166243	58.4	40.8	1868
1989	6	89	254363	90287	164076	62.4	40.2	1844
2001	5	93 ²	237650	78957	158693	58.3	39.0	1783 ³
2011	5	93 ²	235075	71423	163662	57.7	40.0	1839 ³
2015	5	93 ²	232988	70194	16274	57.0	40.0	1829 ³

¹ Աղյուսակը կազմված է Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг., Е., 1962, վիճակագրական ժողովածուի, 1988թ., ՀՀ բնակչության և բնակավայրերի վերաբերյալ ԱԿԾ հրապարակումների, 1970, 1979, 2001, 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով 2015 թ.», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Այդ թվում նաև Սևան քաղաքի վարչական ենթակայության տակ գտնվող Գագարին գյուղը:

³ Հաշվարկված է մշտական բնակչություն ունեցող գյուղերի հաշվով:

Համեմատաբար խիտ էին բնակեցված Սևանի և Գավառի ժամանակակից տարածաշրջանների տարածքները (համապատասխանաբար 8.8 և 8.1 մարդ /քմ): Այդ տարածաշրջաններում էլ գտնվում էին առավել մարդաշատ գյուղական բնակավայրերը (Նոր Բայազետ՝ 1346, Կարմիր Գյուղ՝ 709, Նորատուս՝ 605, Սարուխան՝ 700, Ծովագյուղ՝ 845 մարդ և այլն): Նոսր էին բնակեցված Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանները, որտեղ

բնակչության խտությունը տատանվում էր 2.1–ից 3.6 մարդ/քվմ սահմաններում: Մինչև 19-րդ դարի վերջը Գեղարքունիքի մարզի բնակչությունը 1831թ. համեմատությամբ ավելացել է ավելի քան 5.6 անգամ: 1897 թ-ին մարզի բնակչության թիվն անցնում էր 101 հազ.-ից: Գյուղերի ընդհանուր թիվն այդ նույն ժամանակամիջոցում ավելացել էր 38-ով (1850թ-ին դառնալով նոր կազմավորված Երևանի նահանգի վարչական միավորներից մեկը, Նոր Բայազետը փաստորեն դարձել էր գավառական քաղաք):

19-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը Գեղարքունիքի բնակչությունն աճել է համեմատաբար դանդաղ: 1897թ-ից մինչև 1926 թ-ն ընկած ժամանակամիջոցում բնակչության տարեկան միջին բացարձակ հավելածը կազմել է ընդամենը 733 մարդ: 1926 թ-ից մինչև 1989 թվականը մարզի բնակչությունն ավելացել է ավելի քան 2.1 անգամ: Ընդ որում, գյուղական բնակչությունն ավելացել է ընդամենը 1.5 անգամ, իսկ քաղաքային բնակչությունն՝ ավելի քան 10 անգամ (աղ. 55): Ներկայումս Գեղարքունիքը հանրապետությունում բնակչության թվով 5-րդ մարզն է:

Աղյուսակ 56
Գեղարքունիքի մարզի գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխությունները (1926-2015 թթ.)¹

	Բնակավայրերի թիվը ժամանակահատվածի ընթացքում				
	1926-1959	1959-1970	1970-1988	1988-2015	1926-2015
ա) Գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը ժամանակահատվածի սկզբում և վերջում	$\frac{115}{125}$	$\frac{125}{94}$	$\frac{94}{89}$	$\frac{89}{93}$	$\frac{115}{93}$
բ) Վերագված գյուղական բնակավայրերի թիվը այդ թվում՝ գյուղեր	8	24	2	-	34
գ) Քաղաքներ դարձած գյուղերի թիվը	6	3	2	-	11
դ) Այլ բնակավայրերի միացած գյուղերի թիվը	1	2	1	-	4
ե) Նոր ստեղծված գյուղական բնակավայրերի թիվը, այդ թվում՝ գյուղեր	1	5	2	-	8
ե) Նոր ստեղծված գյուղական բնակավայրերի թիվը, այդ թվում՝ գյուղեր	20	-	-	-	20
զ) Վերականգնված գյուղերի թիվը	4	-	-	-	4
զ) Վերականգնված գյուղերի թիվը	-	-	-	2	2
է/ Նախկին քաղաքային բնակավայրերից առաջացած գյուղեր				1	1

¹ Աղյուսակը կազմված է Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг., Ե., 1962, վիճակագրական ժողովածուի և 1970, 1988 և 2015 թթ., ԱԿԾ ՀՀ բնակչության և բնակավայրերի վերաբերյալ հրապարակումների տվյալների հիման վրա:

Գեղարքունիքը ՀՀ մյուս մարզերից տարբերվում է բնակչության վերարտադրության առանձնահատկություններով: Այդ են վկայում 1990-ական թվականների ժողովրդագրական ցուցանիշների համեմատությունը: Այստեղ այդ ժամանակաշրջանում բնակչության ծնելիության, մահացության և բնական աճի այնպիսի մեծ տատանումներ չեն եղել, ինչպես հանրապետության այլ մարզերում, մասնավորապես՝ Շիրակում կամ Լոռիում: Մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ քաղաքային և գյուղական բնակչության միջև վերարտադրության ցուցանիշների տարբերությունը փոքր է [92]:

Գեղարքունիքում ևս գյուղական բնակավայրերի թվաքանակի համեմատաբար կայունացում է տեղի ունեցել 1970 թ.-ից հետո, երբ ծովի մակարդակից 2200մ-ից բարձր գտնվող ժամանակավոր բնակատեղերը և առանձին փոքր գյուղական բնակավայրեր բնագրկվեցին կամ վերացան, 4 գյուղ դարձան քաղաքներ, 8 գյուղական բնակավայր միացան այլ գյուղերի:

Բնակչության խտությամբ Գեղարքունիքի մարզը 1,8 անգամ զիջում է հանրապետության միջին ցուցանիշին, իսկ գյուղական բնակչության խտությամբ (40 մարդ /քվմ) հավասար է ՀՀ միջին ցուցանիշին: Մարզում բնակչության խտության տարբերությունները բավական մեծ են: Խիտ են բնակեցված Սևանի արևմտյան և հարավարևմտյան մերձլճային տարածքները: Գավառի և Սևանի տարածաշրջաններում բնակչության խտությունը կազմում է համապատասխանաբար 81 և 103 մարդ /քվմ: Նոսր են բնակեցված Սևանա լճի հարավարևելյան և արևելյան շրջանները: Կրասնոսելսկի և Վարդենիսի տարածաշրջաններում ամբողջ բնակչության խտությունը կազմում է 19 և 33 մարդ /քվմ, իսկ միայն գյուղական բնակչության խտությունը՝ համապատասխանաբար 11 և 22 մարդ/քվմ:

Գեղարքունիքում բնակչությունը տեղաբաշխված է ծովի մակարդակից 1201-2200 մ բարձրությունների վրա: Բնակչության ավելի քան 79%-ը ապրում է 1801-2000մ բարձրության գոտում: Այս գոտում են ընկած բացի ճամբարակից մնացած բոլոր քաղաքային բնակավայրերը և մշտական բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերի 51 %-ը, որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության ավելի քան 73%-ը: Գեղարքունիքի տարածքի 1801-2000մ բարձրության գոտին հանրապետության առավել խիտ բնակեցված շրջաններից մեկն է: Այստեղ բնակչության խտությունը կազմում է 195, իսկ գյուղական բնակչության խտությունը՝ մոտ 100 մարդ/քվմ: Վերջինս հարապետության գյուղական բնակչության միջին խտությունից բարձր է մոտ 2.5 անգամ:

Գեղարքունիքի մարզում գյուղական բնակչության քանակով հաջորդը ծովի մակարդակից 2001-2200 մ բարձրությամբ գոտին է , որտեղ ապրում է մարզի ամբողջ գյուղական բնակչության մոտ 25%-ը: Այստեղ են գտնվում մարզի մշտական բնակչություն ունեցող գյուղերի 36%-ը: Չնայած գյուղական բնակչության խտությամբ այս գոտին զգալիորեն զիջում է նախորդ գոտուն, սակայն հանրապետության տարածքում 2001-2200մ բարձրության գոտու առավել խիտ բնակեցված շրջաններից է (փոքր մեծությամբ զիջում է Արագածոտնի մարզի համապատասխան գոտուն):

Գեղարքունիքի գյուղական տարածքների ու բնակավայրերի ցանցի ձևավորման վրա իր ազդեցությունն է թողել Սևանա լիճը: Այստեղ բնակավայրերը տեղաբաշխված են հիմնականում մերձլճային հարթություններում: Առանձին շրջաններում գյուղերի միջև եղած հեռավորությունը չի անցնում 3-4 կմ-ից: Մշակելի հողատարածքների մեծ չափերի և հյութալի, ընդարձակ արոտավայրերի առկայությունը պայմանավորել է անասնաբուծության և բուսաբուծության զուգակցված զարգացումը Գեղարքունիքի գյուղացիական տնտեսությունների մեծ մասում: Դրա շնորհիվ այստեղ գերակշռում են բնակչության թվով մեծ և խոշոր գյուղերը: Գյուղերի միջին մարդաշատությունն ավելի քան 1903 մարդ է: Դրանց 46 %-ն ունեն 1000-ից ավելի բնակիչ, 25%-ը՝ 3000-ից ավելի, իսկ տասը գյուղական բնակավայր ունեն 5000-ից ավելի բնակիչ: Գեղարքունիքի գերխոշոր գյուղերում ապրում է մարզի գյուղական բնակչության գրեթե 40 %-ը, իսկ մարզի խոշոր և գերխոշոր գյուղական բնակավայրերին (3000-ից ավելի բնակիչ ունեցող) բաժին է ընկնում գյուղական բնակչության ավելի քան 68%-ը: Ոչ միայն Գեղարքունիքի մարզի, այլ նաև հանրապետության գերխոշոր գյուղերից են Վարդենիկը (8988), Սարուխանը (7914), Ներքին Գետաշենը (8541), Չուլաքարը (6704), Նորատուսը (6030) և այլն:

1926-2015 թվականների ընթացքում Գեղարքունիքում գյուղական բնակչության բաշխումն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գոտիների էական փոփոխություններ չի կրել: Մարզի գյուղական բնակչության տեղաբաշխման հիմնական գոտին ծովի մակարդակից 1801-2200 բարձրություններն են: 2015 թ-ին այդ տարածքներում ապրում էր Գեղարքունիքի գյուղական բնակչության ավելի քան 97 %-ը (1926 թ.-ին նշված բարձրության գոտում բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության 88,4%-ը): Սա բացառիկ երևույթ է ԳԳ-ի մասշտաբով: ԳԳ-ում այդ բարձրության գոտում (1801-2200 մ) ապրում է գյուղական բնակչության 21.5%-ը: Մարզում

գյուղական բնակավայրերի և բնակչության փոքր մասնաբաժին ունի 1201-1600 մ բարձրության գոտին: Այս գոտում 1926թ. համեմատությամբ 2015 թ. գյուղերի թիվը պակասել է մեկով (աղ. 57), իսկ բնակչության մասնաբաժինը նվազել է 3,2 կետով:

Դեռևս 1926 թ. ըստ գերակշռող մարդաքանակի Գեղարքունիքին բնորոշ էր մեծ գյուղային տարաբնակեցումը: 1926-2015 թթ. ընթացքում մարզում 30,9 տոկոսային կետով նվազել է մեծ գյուղերի բնակչության մասնաբաժինը: Նույն ժամանակահատվածում աննախադեպ կերպով ավելացել է գերխոշոր գյուղերի բնակչության մասնաբաժինը (աղ. 58): Եթե նախկինում ըստ գերակշռող մարդաքանակի Գեղարքունիքի մարզին բնորոշ էր մեծ և խոշոր, ապա ներկայումս՝ գերխոշոր, խոշոր և մեծ գյուղային տարաբնակեցումը:

ՀՀ-ում անկախացումից հետո տեղի ունեցած հասարակական և սոցիալ-տնտեսական բնույթի շրջադարձային իրադարձություններն իրենց կնիքն են թողել նաև Գեղարքունիքի մարզի գյուղական բնակչության ու բնակավայրերի թվի և դրանցում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա: Ի տարբերություն ՀՀ մի շարք այլ մարզերի, այստեղ գյուղական բնակչության թվի և գյուղերի միջին մարդաքանակի նվազումը համեմատաբար փոքր է եղել: Վերջինս, նախ և առաջ, պայմանավորված է դեռևս խորհրդային տարիներից գոյություն ունեցող և այնուհետև պահպանվող ՀՀ մյուս տարածաշրջանների համեմատությամբ գյուղական բնակչության բնական աճի համեմատաբար բարձր ցուցանիշներով:

Իրենց արտաքին տեսքով, բարեկարգվածության աստիճանով և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով Գեղարքունիքի գյուղերն (մասնավորապես՝ Մարտունու և Գավառի տարածաշրջանների) աչքի ընկնող տեղ են զրավում ՀՀ-ում: Նախկին խարխուլ գյուղերն արմատապես վերափոխվել են, դարձել բարեկարգ բնակավայրեր: Բացի տեղային ռեսուրսներից (Սևանա լճի ձկնային հարստությունները եկամտի լրացուցիչ աղբյուր են եղել ավազանի բազմաթիվ գյուղերի համար), այդ գործընթացում էական դեր են ունեցել նաև դեռևս խորհրդային տարիներին ձևավորված և այժմ ավելի մեծ ծավալների հասած արտագնա աշխատանքից ստացված բնակչության եկամուտները, արտերկրից (հատկապես Ռուսաստանից) Գեղարքունիքի տասնյակ գյուղեր մուտք գործող դրամական միջոցները:

Ի տարբերություն հանրապետության մյուս շրջանների, Գեղարքունիքում հստակորեն առանձնանում են տարաբնակեցման արեալներ, որոնք սովորաբար համընկնում են լեռնային գոգահովիտների հետ (Արգիճի,

Ծակքար, Գավառագետ, Գեղարքունիջուր, Մասրիկ և այլ գետերի հովիտներ) և տարածված են գոգավորության առավել հարթ շրջաններում, որտեղ կան մշակելի հողերի խոշոր զանգվածներ: Մարզին առավել բնորոշ է տարաբնակեցման խմբային ձևը: Հանդիպում են նաև շղթայածև և գծային տարաբնակեցման ձևերը:

Մարզի տարածքը, բացառությամբ Կրասնոսելսկի տարածաշրջանի մեծ մասի, հիմնականում համապատասխանում է միջլեռնային գոգավորությունների, լեռնահովիտների և հարթությունների տարաբնակեցման շրջանին, որտեղ առանձնացվում են տարաբնակեցման տեղական երեք տիպ և երկու ենթատիպ:

Գեղարքունիքում գյուղատնտեսական նպատակների համար պիտանի հողատարածքների ընդհանուր տարածքի մակերեսը 345143 հա է (մարզի ընդհանուր տարածքի 64,5%), որից վարելահողերը՝ 81777 հա (52.5 %), բազմամյա տնկարկները՝ 15 հա (0.00 %), այլ հողատեսքերը՝ 46521 հա (13.5 %): Ըստ մարզպետարանի գյուղվարչության տվյալների, գյուղացիական մոտ 63500 տնտեսությունների կողմից վերջին տարիներին օգտագործվում է մարզի մշակելի հողատարածքների շուրջ 96 %-ը: Մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից վերջին տարիներին (2011-2015 թթ.) տարեկան միջին հաշվով արտադրվել է 190 մլրդ դրամի գյուղատնտեսական համախառն արտադրանք: Այս ցուցանիշով մարզն առաջինն է ՀՀ-ում:

Մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման մեջ անկախացումից հետո տեղի ունեցած հիմնական փոփոխությունը Վարդենիսի և Մարտունու տարածաշրջաններում ծխախոտագործության փոխարեն կարտոֆիլի և հացահատիկի մշակության ընդլայնումն է: Մարզի գյուղերի արտադրական մասնագիտացումն ըստ տարածաշրջանների ունի հետևյալ պատկերը.

- **Գավառի տարածաշրջան** տավարաբուծություն, ոչխարաբուծություն, կարտոֆիլի և հացահատիկի մշակություն,
- **Մարտունու տարածաշրջան**՝ ոչխարաբուծություն, տավարաբուծություն, կարտոֆիլի, հացահատիկի և բանջարեղենի (կաղամբի) մշակություն: Տարածաշրջանի առանձին տնտեսություններում ապրանքային նշանակություն ունի նաև այգեգործությունը (տանձենու՝ անտառային գեղեցկուհու մշակությունը),
- **Վարդենիսի տարածաշրջան**՝ կարտոֆիլի մշակություն, տավարաբուծություն, հացահատիկի մշակություն և մեղվապահություն,

գեղադրումիցի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժմբացն ըստ բարձրության գոտիների (1926-2015 թթ.)¹

Տարիներ	Միլիոններ	Միլիոնների թիվը	Գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մ)													
			1000-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000		2001-2200		2200-ից բարձր	
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1926	115	113254	2	882	1	1157	4	3387	7	5767	53	73645	40	26486	8	1930
1970	94	162209	2	1576	1	1910	3	4604	9	11847	45	97654	32	43394	2	1524
2011	88 ²	162273	2	665	1	911	3	356	3	1812	45	121422	32	37072	2	35
2015	88 ²	167483	2	734	1	908	3	328	3	2163	45	122559	32	40623	2	168
Սույնը ստույգներով																
1926	100.0	100.0	1.7	0.8	0.9	1.0	3.5	3.0	6.1	5.1	46.1	65.0	34.8	23.4	6.9	1.7
1970	100.0	100.0	2.1	1.0	1.1	1.2	3.2	2.8	9.6	7.3	47.9	60.0	34.0	26.8	2.1	0.9
2011	100.0	100.0	2.3	0.4	1.1	0.6	3.4	0.2	3.4	1.1	51.1	74.8	36.4	22.9	2.3	0.0
2015	100.0	100.0	2.3	0.4	1.1	0.5	3.4	0.2	3.4	1.3	51.1	73.2	36.4	24.3	2.3	0.1

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1970 և 2011 թթ. մարտահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով- 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:
² Մարզի գյուղական բնակավայրերի իրական թիվը 93 է, որից 4-ը մշտական բնակչություն չունեն, իսկ 1-ը գտնվում է Սևան քաղաքի ենթակայության տակ:

Գեղարքունիքի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության բլի փոփոխությունները ըստ գյուղերի մարդաբանակի (1926-2015 թթ.)¹

Վերջին տարի	Գյուղի մակերեսը, հա	Գյուղի բնակչության ընդամենը	Գյուղական բնակավայրերի բաշխումը ըստ մարդաբանակի (մարդ)											
			մինչև 200		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից բարձր	
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
1926	115	113254	19	1618	34	1110	23	23945	34	57707	5	18874	-	-
1979	89	163259	-	-	14	5492	20	14766	38	68647	13	48945	4	25409
2011	88 ²	162273	13	1574	21	7719	16	11447	19	36419	9	38485	10	66629
2015	88 ²	167483	12	1598	17	5984	18	11965	19	33600	12	48315	10	66021
Նույնը տոկոսներով														
1926	100.0	100.0	16.5	1.4	29.6	9.8	20.0	21.1	29.6	51.0	4.3	16.6	-	-
1979	100.0	100.0	-	-	15.7	3.4	22.5	9.0	42.7	42.0	14.6	30.0	4.5	15.6
2011	100.0	100.0	14.8	1.0	23.8	4.8	18.2	7.0	21.6	22.4	10.2	23.7	11.4	41.1
2015	100.0	100.0	13.6	1.0	19.3	3.6	20.5	7.1	21.6	20.1	13.6	28.8	11.4	39.4

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Е., 1962, վիճակագրական ժողովածուի, 1979 և 2011 թթ. մարտահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով- 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա;

² Մարզի գյուղական բնակավայրերի իրական թիվը 93 է, որից 4-ը մշտական բնակչություն չունեն, իսկ 1-ը գտնվում է Սևան քաղաքի ենթակայության տակ:

➤ *Սևանի տարածաշրջան*՝ տավարաբուծություն և ոչխարաբուծություն, հացահատիկի (գարու և ցորենի) մշակություն, մի քանի գյուղերում նաև՝ բանջարաբուծություն,

➤ *Կրասնոսելսկի տարածաշրջան*՝ տավարաբուծություն և ոչխարաբուծություն՝ հացահատիկային տնտեսության հետ զուգակցված:

Մարզի գյուղացիական տնտեսություններից մասնագիտացման և ինտենսիացման ավելի բարձր մակարդակ ունեն Վարդենիսի տարածաշրջանի գյուղական բնակավայրերը, որն էլ ապահովում է վերջիններիս ավելի բարձր եկամտաբերությունը: Դա պայմանավորված է Վարդենիսի տարածաշրջանի գյուղական բնակավայրերի մշակելի հողակտորների ավելի մեծ չափերով, ոռոգման, պարարտացման, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի ավելի արդյունավետ և ժամանակակից միջոցների կիրառմամբ, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների կողմից ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման ավելի բարձր մակարդակով (հատկապես՝ ցանքաշրջանառության ճիշտ կազմակերպումը):

Գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության ցուցանիշով Վարդենիսին հաջորդում են Մարտունու և Գավառի տարածաշրջանների գյուղերը: Եկամտաբերության առավել ցածր ցուցանիշ ունեն Սևանի և Կրասնոսելսկի տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունները, որոնցում շարքից դուրս է եկել ոռոգման համակարգը, սահմանափակ են տնտեսությունների ինտենսիվացման հնարավորությունները:

Մարզի գյուղական բնակավայրերի ցանքատարածքների ոռոգման համար օգտագործվում են տեղական ջրային ռեսուրսները (Մասրիկի ջրանցք, գետերի ջրեր, պոմպակայաններով Սևանից ջրի օգտագործում և այլն): Նախատեսվում է կառուցել նոր ջրամբար Արգիճի գետի վրա, որը հնարավորություն կտա ոռոգել Գեղիովիտ, Մադինա, Վ. Գետաշեն, Ն. Գետաշեն գյուղերի և Մարտունի քաղաքի հողատարածքները:

Գեղարքունիքի մարզի լճափյա գյուղական բնակավայրերի համար եկամտի լրացուցիչ աղբյուր են համարվում Սևանի ձկնային պաշարները և ռեկրեացիոն ռեսուրսները, ինչպես նաև գյուղական և ագրոգրոսաշրջության զարգացման առկա նախադրյալները:

Գեղարքունիքում գյուղական բնակավայրերի տրանսպորտային սպասարկումն իրականացվում է 283 կմ միջպետական, 113 կմ հանրապետական և 420 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների միջոցով: Մարզի 816 կմ ընդհանուր ճանապարհներից 500 կմ-ը ասֆալտապատ են,

իսկ մնացածը հիմնամորոգման կարիք ունեն: Գյուղական համայնքների կապը մարզկենտրոնի և նախկին շրջկենտրոնների հետ ապահովում են ներմարզային 25 երթուղիները: Գործում են նաև միջմարզային 15 երթուղիներ: Մարզի առանձին խոշոր գյուղեր անմիջական տրանսպորտային կապ ունեն մայրաքաղաք Երևանի հետ: Գեղարքունիքի լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերը ձմեռային ամիսներին ձնաբքերի պատճառով ունենում են տրանսպորտային սպասարկման խնդիրներ:

Մարզի Գավառի, Սևանի և Մարտունու տարածաշրջանների բոլոր գյուղերը գազաֆիկացված են, իսկ Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանի 31 գյուղեր ներառված են մարզի 2017-2020 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերում: Մարզի բոլոր գյուղերն ունեն կենցաղային և խմելու ջրի կանոնավոր մատակարարում, բոլոր գյուղական բնակավայրերում կան բժշկական անբուլատորիաներ կամ առողջության կենտրոններ:

Գեղարքունիքի մարզի գյուղական բնակավայրերից 22-ը չունեն մշակույթի տուն կամ ակումբ: Մնացած գյուղերը թեև ունեն մշակույթի տուն կամ ակումբ, սակայն դրանց մեծ մասում այդ օբյեկտները գտնվում են ոչ բարվոք վիճակում (ունեն հիմնամորոգման կարիք, զգացվում է գույքի պակաս և այլն): Մարզի 30 գյուղում չկա գրադարան, բազմաթիվ գյուղերում գրադարանը տեղակայված է մշակույթի տան կամ գյուղապետարանի շենքերում կամ էլ չեն գործում: Ծովասար գյուղում կա երկրագիտական թանգարան, որը մասնավոր հավաքածու և ցուցադրվում է մշակույթի տանը: Մարզի Գանձակ, Կարմիրգյուղ, Նորատուս, Սարուխան, Լճաշեն և Վարդենիս գյուղերում գործում են երաժշտական կամ արվեստի դպրոցներ:

Գեղարքունիքի մարզի գյուղական բնակավայրերում գործում են 99 հանրակրթական դպրոցներ: Դրանց զգալի մասն ունեն համակարգչային տեխնիկայի և սպորտային գույքի պակաս և գրադարանային ֆոնդի թարմացման անհրաժեշտություն: Մարզի սահմանամերձ 18 գյուղական բնակավայրի դպրոցներում կա ուսուցիչ-մասնագետների պակաս: Նախակրթական հաստատություններ (մանկապարտեզներ) ունեն մարզի ընդամենը 30 գյուղ:

Բերված վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ.

➤ Գեղարքունիքում հարթավայրային բերրի հողերի և Սևանա լճի առկայությունը ինչպես նաև մարզին բնորոշ պատմաաշխարհագրական և ժողովրդագրական գործոնները պայմանավորել են հիմնականում գերխոշոր, մեծ և խոշոր գյուղական բնակավայրերի ձևավորումը, որին նպաստել

են նաև մշակելի հողատարածքների համեմատաբար մեծ չափերը, հյութալի ու ընդարձակ արոտավայրերի առկայությունը և բուսաբուծության ու անասնապահության ճյուղերի զուգակցված զարգացումը:

➤ Մարզում հստակորեն առանձնանում են տարաբնակեցման արեալներ, որոնք համընկնում են լեռնային գետահովիտների հետ և տարածված են գոգավորության առավել հարթ շրջաններում: Առավել տարածված են տարաբնակեցման խմբային, շրթայածև և գծային ձևերը,

➤ Գեղարքունիքի մարզի գյուղական բնակչության 79 %-ից ավելին տեղաբաշխված են ծովի մակարդակից 1801-2000 մ բարձրությունների վրա, որը ՀՀ առավել խիտ բնակեցված տարածքներից է: ՀՀ բարձրադիր մարզերի մեջ Գեղարքունիքն առանձնանում է գյուղական բնակչության բարձր և գյուղերի՝ ամենափոքր խտությամբ,

➤ Բացառությամբ Կրասնոսելսկի տարածաշրջանի, Գեղարքունիքն առանձնանում է գյուղական բնակչության ծնելիության և բնական աճի համեմատաբար բարձր ցուցանիշներով և վերջին երկու տասնամյակում գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշների ոչ մեծ տատանումներով,

➤ Մարզում 1926-1989 թթ. ընթացքում տեղի է ունեցել գյուղական բնակչության թվի կայուն աճ, որից հետո՝ նվազում: Այդ նույն ժամանակամիջոցում գյուղական բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների էական փոփոխություններ չի կրել: Գյուղերի միջին մարդաբանակի ավելացման և ըստ մարդաշատության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով փոխվել է ըստ գերակշռող մարդաբանակի մարզի գյուղական տարաբնակեցման բնույթը՝ դառնալով գերխոշոր, մեծ և խոշոր գյուղային տարաբնակեցում:

➤ Չնայած որ Գեղարքունիքը ՀՀ մի շարք այլ մարզերի համեմատ ունի գյուղական բնակչության ծնելիության և բնական աճի առավել բարձր ցուցանիշներ, սակայն Գեղարքունիքում ևս վերջին երկու տասնամյակում ստեղծված իրավիճակի պատճառով գյուղական գրեթե բոլոր բնակավայրերում առաջացել են ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և այլ հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են մարզի գյուղական բնակավայրերի առաջընթաց զարգացումը:

Մարզի գյուղացիական տնտեսությունների սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ խնդիրներից մեկը գյուղմթերքների իրացման հարցն է: Գյուղմթերքների ընդունման համեմատաբար ցածր գները (մասնավոր-

րապես կաթի) չեն նպաստում գյուղացիական տնտեսությունների զարգացմանը, չի կազմակերպվում մարզից կարտոֆիլի արտահանում: Բացի նշվածներից մարզում զգացվում է նաև գյուղտեխնիկայի պակաս, հնացել է գյուղատնտեսության մեջ օգտագործվող մեքենատրակտորային պարկը (օգտագործվող տեխնիկայի մեծ մասը 25-30 տարվա հնության են):

6.8 Սյունիքի մարզ

Սյունիքը զբաղեցնում է մեր երկրի տարածքի 15,1%-ը: Այստեղ 2015 թ. դրությամբ ապրում էր ՀՀ-ի մշտական բնակչության 4,6 %-ը: Նույն այդ ժամանակ մարզի բաժինը ՀՀ գյուղական մշտական բնակչության մեջ կազմել է 4,2 %: Մարզը Շիրակից հետո երկրորդն է ՀՀ-ում գյուղերի ընդհանուր թվաքանակով (127 գյուղ):

Սյունիքը բնության հակադրությունների երկիր է: Այն ՀՀ-ի առավել մասնատված մակերևույթ ունեցող տարածքներից է: Ըստ հորիզոնական մասնատվածության այստեղ որոշակիորեն առանձնացվում են չմասնատված (21 %), թույլ (5.3%), միջին (14.1%), ուժեղ և խիստ (53.5%) մասնատված մակերևույթ ունեցող տեղանքներ [29]: Գյուղատնտեսական օգտագործման և բնակեցման համար նպաստավոր համարվող 0-16⁰ թեքություն ունեցող հողահանդակներն այստեղ կազմում են հողատարածությունների 44, իսկ ոչ պիտանի (30⁰- ից բարձր) հողահանդակները՝ 13.6%-ը: Տարածքի 77%-ն ընկած է ծովի մակարդակից 1500 մ-ից բարձր, իսկ 2000 մ-ից բարձր տարածքը զբաղեցնում է մարզի 53.6 %-ը: Մարզի տարածքի ընդամենը 6.4 %-ն ունի ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրություն [Հաշվարկներն ըստ 128-ի տվյալների]: Ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության Սյունիքում միմյանց են հաջորդում չոր մերձարևադարձային, չափավոր ցուրտ կիսախոնավ, բարեխառն կիսաչոր, ցուրտ լեռնային, լեռնատունդրային դաժան և ցուրտ կլիմաները [29]:

Սյունիքն առանձնանում է նաև տնտեսական գործունեության ձևերի պարզ արտահայտված վերընթաց գոտիականությամբ: Այստեղ բարձրության յուրաքանչյուր գոտի մի ինքնուրույն բնատնտեսական միավոր է՝ իրեն հատուկ կլիմայական և հողաբուսական պայմաններով, գյուղատնտեսության մասնագիտացման բնույթով, բնակչության զբաղմունքով և բնակեցման

ծներով:

Մակերևութի խիստ մասնատվածությունը, մեծ թեքություններն ու դիրքադրություններն, ինտենսիվ էրոզիոն և սելավային գործընթացները, ինչպես նաև մարդու տնտեսական գործունեությունը պայմանավորել են մարզի տարաբնակեցման առանձնահատկությունները: Մարզի բնակավայրերի մեծ մասը կենտրոնացած է Որոտան, Շաքի, Վարարակ, Սիսիան, Դարբաս, Գորիս, Սեղրի, Գեղի և Ողջի գետերի հովիտներում, որոնք աչքի են ընկնում գյուղատնտեսության զարգացման համար առավել նպաստավոր պայմաններով:

Սյունիքը ՀՀ-ի ամենավաղ բնակեցված տարածքներից է: Այն համեմատաբար քիչ է ենթարկվել օտար նվաճողների հարձակումներին և ավերածություններին, որը բացատրվում է մարզի աշխարհագրական դիրքով և լեռնային բարդ ռելիեֆով: Սակայն թշնամու գերազանցող ուժերը երբեմն ներխուժել են Սյունիք, քայքայել են նրա տնտեսությունը, ավերել բնակավայրերը և ոչնչացրել բնակչության մի մասին:

Աղյուսակ 59

Սյունիքի մարզի գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխությունները (1926 – 2015թթ.)¹

	1926 - 1959	1959- 1970	1970- 1988	1988 - 2015	1926- 2015
ա/Գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը ժամանակահատվածի սկզբում և վերջում	$\frac{206}{160}$	$\frac{160}{126}$	$\frac{126}{122}$	$\frac{122}{127}$	$\frac{206}{127}$
բ/Վերացված գյուղական բնակավայրերի թիվը	36	35	1	-	72
այդ թվում՝ գյուղեր	31	24	1	-	56
գ/ Քաղաքներ դարձած գյուղերի թիվը	6	-	-	-	6
դ/ Այլ բնակավայրերի միացած գյուղերի թիվը	17	3	3	-	23
ե/ Նոր ստեղծված գյուղական բնակավայրերի թիվը՝	13	4	-	-	17
Այդ թվում գյուղեր	3	4	-	-	7
զ/ Վերականգնված գյուղերի թիվը	-	-	-	-	-

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг. Статистический сборник», Е., 1962, 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Ե., 1991 թ., «Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները», Ե., 2003 թ. և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015», Ե., 2015 վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

Սյունիքի գյուղական բնակավայրերի ներկայիս ցանցը հիմնականում ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Մարզում գյուղական բնակավայրերի և բնակչության կայուն աճ է սկսվել միայն 19-րդ դարի 30-ական թթ.-ից, երբ Պարսկաստանից և Թուրքիայից Արևելյան Հայաստան տեղափոխված բազմաթիվ հայեր բնակություն հաստատեցին Սյունիքում, հատկապես Սիսիանում և նրա հարակից գյուղերում (Անգեղակոթ, Ույծ, Շաղաթ և այլն) [41]:

Սյունիքի մարզի և նրա առանձին տարածաշրջանների բնակչության թվի փոփոխությունների մասին հանգամանալից պատկերացում է տալիս ստորև բերված թիվ 60 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 60
Սյունիքի մարզի տարածաշրջանների բնակչության թվի փոփոխությունները (1831 – 2015 թթ., հազ. մարդ)¹

Մարզը և տարածաշրջանները	Տարեթվեր							
	1831	1897	1926	1959	1979	2001	2011	2015
Սյունիքի մարզայն թվում՝	14.0	87.3	77.9	117.4	140.7	164.1	141.8	140.2
Սիսիանի տարածաշրջան	5.0	25.2	22.4	28.8	32.0	36.2	30.3	30.2
Գորիսի տարածաշրջան	3.6	25.9	23.4	29.4	36.0	51.3	41.6	41.1
Կապանի տարածաշրջան	3.2	26.3	23.1	47.4	58.0	62.5	58.5	57.8
Մեղրու տարածաշրջան	2.2	9.9	9.0	11.8	14.7	14.1	11.4	11.1

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1979, 2001, 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով- 2015», Ե., 2015 վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

Մարզի բնակչության թիվը 1831-1897 թթ. աճել է մոտ 6 անգամ: Այս ժամանակամիջոցում էլ հիմնականում ձևավորվել է մարզի ժամանակակից գյուղական բնակավայրերի ցանցը: Ստեղծվել են տարածաշրջանային, առևտրային և մշակութային կենտրոն Գորիս քաղաքը և պղնձարդյունաբերական կենտրոն Կապանը:

1831-1897 թթ. մարզի տարածքում գյուղական բնակավայրերի թիվն ավելացել է 97-ով՝ 116-ից հասնելով 213-ի: Իսկ վերջին շուրջ հարյուր տարիների ընթացքում այստեղ գյուղական բնակավայրերի թիվը զգալիորեն նվազել է: Այդ գործընթացն առավել ինտենսիվ է եղել հատկապես 1950-70-ական թթ.-ին, երբ մարզում մեծ վերելք էր ապրում արդյունաբերությունը:

Ներկայումս մարզի գյուղական բնակավայրերի թիվը 127 է, որից 11-ը մշտական բնակչություն չունեն: Գյուղական բնակավայրերի թիվն առավել մեծ չափով նվազել է Կապանի և Մեղրու տարածաշրջաններում (աղ.61):

Բացառությամբ 1831-1897թթ. ընկած ժամանակահատվածի, հետագա տասնամյակների ընթացքում Սյունիքում գյուղական բնակչության թիվը մշտապես նվազել է և վերջին մոտ 20 տարիների ընթացքում այն տատանվում է 47-46 հազարի սահմաններում: 1897թ-ի համեմատությամբ մարզի գյուղական բնակչության թիվը 2015 թ. նվազել է գրեթե 1.8 անգամ: Այդ ժամանակաշրջանում մի քանի գյուղեր դարձել են քաղաքային բնակավայրեր և վերջիններիս սահմանագծի մեջ են ներառվել նաև մերձակա առանձին գյուղական բնակավայրեր: Այդուհանդերձ, մարզի գյուղական բնակչության թվի նվազման հիմնական պատճառը եղել է միգրացիան դեպի մարզի և հանրապետության քաղաքային բնակավայրեր, իսկ վերջին երկու տասնամյակների ընթացքում՝ նաև արտերկիր: Եթե 1926 թ. Սյունիքի մարզում ապրում էր 33-ի գյուղական բնակչության 10,5 %-ը, ապա 2015 թ.-ը՝ ընդամենը 4,2 %-ը:

Եթե խորհրդային տարիներին Սյունիքի մարզի բնակչության ընդհանուր թիվը կայուն կերպով աճել է, ապա նույնը չի կարելի ասել գյուղական բնակչության համար: Բացառությամբ Գորիսի տարածաշրջանի, մնացած երեք տարածաշրջաններում գյուղական բնակչության թիվը 1926-2015 թթ. ընթացքում խիստ նվազել է. Կապանի տարածաշրջանում՝ մոտ 2,7, Մեղրիում՝ 3,6 և Սիսիանում՝ 1,4 անգամ (աղ.60):

Մարզի գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակի վրա, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ մեծ ազդեցություն են թողնում բնակչության միգրացիոն շարժերը: Տնտեսության, հատկապես արդյունաբերության, զարգացման ոչ բավարար մակարդակը, աշխատուժի օգտագործման, սահմանափակ հնարավորությունները, մշակելի հողերի սակավությունը և ծայրամասային աշխարհագրական դիրքը 19-րդ դարի վերջերից սկսած պայմանավորել են Սյունիքի գյուղական բնակչության արտահոսքը նախ դեպի Բաքվի արդյունաբերական շրջան, իսկ խորհրդային ժամանակաշրջանում՝ Երևան և նրա մերձակա արդյունաբերական կենտրոններ: Բնակչության ինտենսիվ արտահոսքը երկարատև ժամանակահատվածում զգալի ազդեցություն է թողել մարզի գյուղական բնակչության սեռատարիքային կազմի վրա. պակասել է երիտասարդ, աշխատունակ տարիքի տղամարդկանց թիվը: Ներկայումս մարզի լեռնային շատ գյուղերում բնակչության հիմնական մասը կազմում են մեծահասակները:

Սյունիքի մարզի գյուղական բնակավայրերի թվի և միջին մարդաշատության փոփոխություններն ըստ տարածաշրջանների (1831-2015 թթ)¹

Տարածաշրջան ները և մարզը	1831		1897		1926		1959		1970		2001		2011		2015	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
Գորիսի	20	244	32	809	33	626	30	635	29	716	27 ²	858	27	874	27	909
Կապանի	49	57	109	241	102	227	70	239	50	320	53 ³	186	53 ³	192	53 ³	164
Մեղրու	20	82	27	365	30	299	24	293	13	492	13	202	13	182	13	174
Սիսիանի	27	100	45	560	41	547	36	629	34	683	34	492	34	443	34	509
Սյունիքի մարզում	116	123	213	410	206	365	160	408	126	527	127	415	127	431 ²	127	420

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Е., 1962, վիճակագրական ժողովածուի, 1970, 2001, 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը քվերով-2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա;

Գյուղատնտեսության զարգացման համեմատաբար ոչ բարձր մակարդակի և օգտագործվող հողատարածությունների փոքր չափերի պատճառով Սյունիքի մարզի տարաբնակեցման համակարգում գերակշռում են փոքր գյուղերը: ՀՀ-ում մինչև 50 բնակիչ ունեցող 26 գյուղերից 9-ը Սյունիքում են, մինչև 100 բնակիչ ունեցող գյուղերի՝ 49%-ը (36 գյուղ) և մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերի՝ 38%-ը:

Սյունիքի մարզում գյուղական բնակավայրերի առավել փոքր մարդաքանակով առանձնանում են Կապանի և մեղրու տարածաշրջանները: Կապանի տարածաշրջանում չկա հազարից ավելի բնակիչ ունեցող ոչ մի գյուղ: Բնակեցված 45 գյուղից 37 -ն ունեն մինչև 200 բնակիչ, որից 22-ը՝ մինչև 100 բնակիչ: Կապանի տարածաշրջանը ոչ միայն Սյունիքի մարզում այլ նաև ՀՀ-ում գյուղական բնակավայրերի ամենափոքր միջին մարդաքանակ ունեցողն է:

Մարզում գյուղական բնակավայրերի համեմատաբար մեծ մարդաքանակ ունեն Գորիսի (909 մարդ) և Սիսիանի (509 մարդ) տարածաշրջանները: Ներկայումս մարզի տարածքում գերակշռում են մինչև 200 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերը (56 գյուղ): Մարզի միայն 12 գյուղ ունեն 1000-ից ավելի բնակիչ: Համեմատաբար խոշոր գյուղերից են Շինուհայրը, Վերիշենը, Տեղը, Բռնակոթը, Անգեղակոթը և Խնձորեսկը, որոնք ունեն 2000-ից ավելի բնակիչ: Դրանք բոլորն էլ գտնվում են մարզի հյուսիսում՝ առավել հարթավայրային հատվածներում, մինչդեռ հարավային լեռնային մասում զգալի են փոքր (մինչև 200 բնակիչ) գյուղերը:

Սյունիքը Հայաստանի ամենանոսր բնակեցված մարզերից է, միաժամանակ աչքի է ընկնում բնակչության խիստ անհավասարաչափ տեղաբաշխումով: Բարգուշատի լեռնաշղթայով Սյունիքի տարածքը բաժանվում է հյուսիսային և հարավային հատվածների: Մարզի հյուսիսային մասը մակերևույթի բնույթով, ինչպես նաև տարաբնակեցման առանձնահատկություններով զգալիորեն տարբերվում է հարավից: Հյուսիսում ընկած են Եռաբլրի սարահարթը և Տեղի դաշտը, որոնք Սյունիքի ամենահարթ և խիտ բնակեցված շրջաններն են: Այստեղ են գտնվում մարզի վարելահողերի հիմնական զանգվածները:

Որպես տիպիկ լեռնային տարածաշրջան Սյունիքում գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման մեծ տարբերություններ կան նաև ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գոտիների:

Այուդիքի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի բալի շարժմբացն ըստ բարձրության գոտիների (1926 -2015 թթ.)¹

Տարեթիվ	Գրություն	Միլիոնում	Բնակչության և բնակավայրերի բալի բաշխումն ըստ բարձրության գոտիների (մ)															
			801-800 մ		1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000		2000-2200			
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1926	206	75193	7	3239	12	6352	29	10769	57	11833	22	11700	41	19817	29	8112	9	3371
1970	126	66418	3	2785	7	2461	25	8725	20	9202	20	12529	28	19105	19	9517	4	2091
2011	116 ²	46601	6	2106	7	948	26	6159	17	7301	17	9295	24	15681	16	3780	3	1331
2015	116 ²	48757	6	1870	7	791	26	6141	17	7312	17	10141	24	16860	16	4220	3	1422
Նույնը տոկոսներով																		
1926	100.0	100.0	3.4	4.3	5.8	8.4	14.1	14.3	27.7	15.7	10.6	15.6	19.9	26.4	14.1	10.8	4.4	4.5
1970	100.0	100.0	2.4	4.2	5.5	3.7	19.8	13.0	15.9	13.9	15.9	18.9	22.2	28.8	15.1	14.3	3.2	3.2
2011	100.0	100.0	5.1	4.5	6.0	2.0	22.4	13.2	14.7	15.7	14.7	19.9	20.7	33.7	13.8	8.1	2.9	2.9
2015	100.0	100.0	5.1	3.8	6.0	1.6	22.4	12.6	14.7	15.0	14.7	20.8	20.7	34.6	13.8	8.7	2.6	2.9

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Ե., 1962 Դ., վիճակագրական ժողովածուի, 1970 և 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը բալերով- 2015», Ե., 2015 վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզի գյուղական բնակավայրերի ընդհանուր բիվը 127 է, որից 11-ը մշտական բնակչություն չունեն:

Մարզում բնակչության տեղաբաշխումը սկսվում է ծովի մակարդակից մոտ 600 մ-ից և հասնում է մինչև 2150 մ բարձրությունը: Գյուղերի ճնշող մեծամասնությունն (մշտական բնակչություն ունեցող գյուղերի 36 %-ը) ընկած են 1001 – 2000 մ բարձրության գոտիների միջև, որտեղ ապրում է մարզի գյուղական բնակչության մոտ 92 %-ը:

Լեռնային երկրներին բնորոշ՝ ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացմանը համեմատ բնակավայրերի մարդաշատության նվազումը Սյունիքում չի պահպանվում: Գյուղերի մարդաշատությունը բարձր է 1401 - 1600 մ և 1601 -1800 մ բարձրության գոտիներում և մյուս բոլոր գոտիներին գերազանցում են 1.3 - 1.7 անգամ: Մարզի տարածքի 1401-1800 մ բարձրության գոտին աչքի է ընկնում անասնապահության և երկրագործության զարգացման համար համեմատաբար նպաստավոր պայմաններով և ընդարձակ մակերեսով: Ցածրադիր գոտում ռելիեֆի մասնատվածության, մեծ թեքությունների և հողակտորների փոքր չափերի պատճառով գյուղերն հիմնականում փոքր են, սահմանափակ են դրանց զարգացման հնարավորությունները:

Սյունիքի մարզում անցած տասնամյակների ընթացքում գյուղական բնակչության և բնակավայրերի թվի ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության տեղաբաշխման առավել նկատելի փոփոխություններից են.

- մինչև 1000 մ բարձրության գոտում գյուղական բնակչության մասնաբաժնի կտրուկ նվազումը (եթե 1926 թ. այդ գոտուն բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության 12,7 %-ը, ապա 2015 թ.՝ 5,4 %-ը),

- 1401-1800 մ բարձրության գոտու գյուղական բնակչության մասնաբաժնի կտրուկ ավելացումը (եթե 1926 թ. այդ գոտուն բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության 42 %-ը, ապա 2015 թ-ին՝ 55,4 %-ը),

- 1970-ական թվականներից հետո մարզի 1800 մ-ից բարձր շրջաններում գյուղական բնակչության մասնաբաժնի նվազումն ընդհանուր բնակչության մեջ (1970 թ. 1800 մ-ից բարձր շրջաններում ապրում էր մարզի գյուղական բնակչության 17,5 %-ը, իսկ 2015 թ.՝ 11,5 %-ը),

- 1201-1400 մ բարձրության գոտում գյուղերի թվաքանակի կտրուկ նվազումը, որի հետևանքով 1926-2015 թթ. ընթացքում 1,9 անգամ նվազել է բարձրության այդ գոտում գյուղական բնակավայրերի մասնաբաժինը գյուղերի ընդհանուր թվաքանակում:

Սյունիքի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժմբացն ըստ գյուղերի մարդաբանակի (1926-2015 թթ.)¹

Տարեթիվ	Գյուղերի թիվը	Բնակչությունը	Բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ գյուղերի մարդաբանակի (մարդ)											
			Մինչև 200		201-500		501- 1000		1001-3000		3001-5000			
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1926	206	75193	102	7971	56	19433	31	21758	17	26031	-	-		
1970	126	66418	26	3678	52	17208	35	23808	14	21724	-	-		
2011	116 ²	46601	55	5390	34	10803	17	12392	10	18016	-	-		
2015	116 ²	48757	57	5436	28	8902	20	13899	11	20520	-	-		
Սույնը տույումներով														
1926	100.0	100.0	49.5	10.6	27.2	25.8	15.0	29.0	8.3	34.6	-	-		
1970	100.0	100.0	19.8	5.5	42.3	25.9	27.8	35.9	11.0	32.7	-	-		
2011	100.0	100.0	47.4	11.6	29.3	23.2	14.7	26.6	8.6	38.6	-	-		
2015	100.0	100.0	49.2	11.1	24.1	18.3	17.2	28.5	9.5	42.1	-	-		

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1970 և 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով-2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա;

² Մարզի գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը 127 է, որից 11-ը մշտական բնակչություն չունեն:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1926-2015 թթ. Սյունիքում ըստ գյուղերի մարդաքանակի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի հիմնական փոփոխությունը մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերի բնակչության մասնաբաժնի (1926թ.՝ 36,4, 2015 թ.՝ 29,4) նվազումն է և հազարից ավելի բնակչություն ունեցող գյուղերի բնակչության մասնաբաժնի ավելացումը (1926 թ.՝ 34,6 %, 2015 թ.՝ 42,1%) մարզի գյուղական բնակչության մեջ (աղ. 63):

Մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի մասին ըստ գերակշռող մարդաքանակի և բարձրության գոտիների առավել հանգամանակից պատկերացում են տալիս թիվ 62 և 63 աղյուսակներում բերված տվյալները:

Սյունիքի մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման մեջ գերակշռում է անասնապահությունը, որը հիմնականում ներկայացված է էքստենսիվ բնույթի տավարաբուծությամբ ու մանր եղջրավոր անասնապահությամբ: Մարզի գյուղացիական տնտեսությունների մեծ մասը մանր են ու սպառողական:

Ֆիզիկա և տնտեսաաշխարհագրական տեսանկյունից մարզը կազմված է հյուսից հարավ հերթափոխվող, հստակ առանձնացված Սիսիանի, Գորիսի, Կապանի և Մեղրու տարածաշրջաններից, որոնք գյուղատնտեսական արտադրական մասնագիտացման առումով ունեն միմիանցից որոշակի տարբերություններ՝ պայմանավորված բնաաշխարհագրական պայմաններով: Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններն ավելի բարձրադիր են ու հարթ, տեղադրված են Սյունիքի հրաբխային բարձրավանդակում, որի կլիման բարեխառն ու ցուրտ լեռնային է, իսկ վերընթաց գոտիները՝ լեռնատափաստանային ու լեռնամարգագետնային՝ իրենց բնորոշ հողաբուսական ծածկով և կենդանական աշխարհով: Գորիսի տարածաշրջանի հարավային փոքր մասը և Կապանի ու Մեղրու տարածաշրջաններն ամբողջովին տեղադրված են Որոտանի աջափնյա, Ողջի, Մեղրագետ և Ծավ գետերի ավազանը զբաղեցրած Ջանգեզուրի ու նրա լեռնաբազուկները կազմող Բարգուշատի ու Մեղրու ծալքաբեկորավոր լեռներում: Սյունիքի հարավային այս հատվածին բնորոշ են բացարձակ բարձրությունների մեծ տատանումները (375-ից 3906 մ), ռելիեֆի խիստ մասնատվածությունը, չոր մերձարևադարձայինից մինչև ձնամերձի հերթափոխվող վերընթաց գոտիները՝ անտառների և թփուտների առավել մեծ տարածմամբ:

Ըստ առանձին տարածաշրջանների մարզի գյուղացիական տնտե-

սությունների արտադրական մասնագիտացումն ունի հետևյալ պատկերը .

Սիսիանի տարածաշրջանն ընդգրկում է մարզի գյուղատնտեսական հողահանդակների 51%-ը կամ 137 հազ. հա, որից վարելահող՝ 21300 հա (մարզի վարելահողերի 49 %-ը), բազմամյա տնկարկներ՝ 268 հա (մարզի այգիների 24 %-ը), արոտավայրեր՝ 74 հազ հա (մարզի արոտավայրերի 59 %-ը) և խոտհարքեր՝ 3330 հա (մարզի խոտհարքերի 45%-ը):

Տարածաշրջանում հիմնականում բերրի սևահողեր են, իսկ հողակտորներն առավելապես մեծ ու միջին չափեր ունեն, որոնցում առկա են քարամաքրման խնդիրներ:

Տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունները հիմնականում մանր ու միջին են, որոնք մասնագիտացված են խոշոր ու մանր եղջերավոր անասնապահության, խոզաբուծության, մեղվաբուծության, հացահատիկի (աշնանացան ցորեն և հաճար), կարտոֆիլի ու կաղամբի մշակության ուղղություններով: Դրանք առավելապես էքստենսիվ են, բայց ունեն ապրանքային ուղղվածություն: Գետահովիտներում առկա է մալ ալյուրաբուծություն՝ հիմնականում խնձորի և ուշահաս կեռասի մշակությամբ: Ընդարձակ վարելահողային տարածքներ հատկացված են կերաբույսերին (կորնզան, առվույտ): Արտադրանքի մթերմամբ ու մշակմամբ զբաղված են տեղական պանրի արտադրության տնայնագործական փոքր տնտեսություններ, գործում է «Աշտարակ կաթի» մթերման կետ:

Գորիսի տարածաշրջանն ընդգրկում է մարզի գյուղատնտեսական հողահանդակների 18%-ը կամ 48800 հա, որից վարելահող՝ 15940 հա (մարզի վարելահողերի 37 %-ը), բազմամյա տնկարկներ՝ 495 հա (մարզի այգիների 44 %-ը), արոտավայրեր՝ 16100 հա (մարզի արոտավայրերի 13 %-ը) և խոտհարքեր՝ 1890 հա (մարզի խոտհարքերի 26%-ը):

Տեղի և եռաբլրի սարահարթերում գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացումը մնան է Սիսիանի տարածաշրջանին՝ խոշոր և մանր եղջերավոր անասնապահություն, հացահատիկ, կերաբույսերի և հյուսիսային բանջարեղենների մշակում: Տարածաշրջանի ընդհանուր պատկերից տարբերվում է նրա մի փոքր մաս կազմող Որոտանի առափնյա հատվածը, որն ինչ-որ տեղ համանման է Մեղրու և Կապանի ցածրադիր հատվածներին (չոր մերձարևադարձային բնություն, սակայն թթաստանների գերակշռությամբ): Գյուղացիական տնտեսությունների մեծ մասը մանր ու միջին են:

Կապանի տարածաշրջանն ընդգրկում է մարզի գյուղատնտեսական հողահանդակների 21%- ը կամ 60364 հա, որից վարելահող՝ 4880 հա (մարզի վարելահողերի 12 %- ը), բազմամյա տնկարկներ՝ 164 հա (մարզի այգիների 14 %-ը), արոտավայրեր՝ 29800 հա (մարզի արոտավայրերի 23 %-ը) և խոտհարքեր՝ 1500 հա (մարզի խոտհարքերի 21%-ը): Գյուղացիական տնտեսություններն արտադրական ցուցանիշներով զիջում են Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններին: Դրանք առավելապես էքստենսիվ ու սպառողական մանր տնտեսություններ են, որոնք զբաղված են խոշոր ու մանր եղջրավոր անասնապահությամբ, խոզաբուծությամբ, բանջարաբուծությամբ ու պտղաբուծությամբ: Որոշ տնտեսություններ էլ դրանք համատեղում են մեղվապահության հետ, ինչը վերջին տարիներին մյուսներից ավելի արագ է զարգանում: Խորհրդային տարիներին առկա էր ծխախոտագործություն մասնագիտացված ուղղությունը:

Տարածաշրջանում ձևավորվել են թռչնաբուծական երկու և անասնաբուծական մեկ համալիրներ: Թռչնաբուծական համալիրներից մեկը՝ «Սյունիք» ՍՊԸ-ն, հիմնվել է դեռևս խորհրդային տարիներին, աշխատել է որոշակի ընդմիջումներով, իր հզորությունների նվազագույն չափերով, այժմ գտնվում է հարկադիր պարապուրդում: Թռչնաբուծական մյուս համալիրը նորակառույց ու ժամանակակից է, մասնագիտացած է թռչնամսի արտադրությամբ՝ առայժմ տեղական սպառողի համար: Տավարաբուծական համալիրը «Լամաքս» ՍՊԸ-ն է, որը զտարյուն եվրոպական ցեղերի կաթնամսատու կովերի հիման վրա արտադրում է հանրապետությունում «Մարիլա» մակնիշով հայտնի կաթնամթերքն ու մսամթերքը:

Մեղրու տարածաշրջանն ամենափոքր է մարզում: ՀՀ ամենահարավային, ամենասակավահող, ամենատաք ու չոր հատվածն է: Չոր մերձարևադարձային կլիմայով պայմանավորված Մեղրու գյուղատնտեսությունն էապես տարբերվում է մարզի մյուս տարածաշրջաններից: Հիմնական ուղղվածությունն այգեգործությունն է (խաղողագործություն՝ սեղանի սորտերի գերակշռությամբ և մերձարևադարձային պտղաբուծություն՝ նռան, թզի ու արքայախնձորի մշակմամբ): Ինչպես դաշտավարության այնպես էլ անասնապահության զարգացման համար տարածաշրջանի հնարավորությունները սահմանափակ են: Տարածքը խիստ մասնատված է, զգալի են թեք լեռնալանջերը, շատ փոքր են հաղակտորների չափերը: Ընդգրկում է մարզի գյուղատնտեսական հողահանդակների 10 %-ը կամ 26350 հա, որից վարելահող՝ 940 հա (մարզի վարելահողերի 2 %-ը), բազմամյա տն-

կարկներ 200 հա (մարզի այգիների 18 %-ը), արոտավայրեր 5750 հա (մարզի արոտավայրերի 5 %-ը) և խոտհարքեր 600 հա (մարզի խոտհարքերի 8 %-ը): Արտադրանքի մթերմամբ ու մշակմամբ զբաղված են Մեղրու գինու և պահածոների գործարանները:

Սյունիքի մարզում գյուղացիական տնտեսությունների ինտենսիվացման մակարդակն առավել բարձր է Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում, որոնք աչքի են ընկնում համեմատաբար ընդարձակ ու բերրի հողերով, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման ավելի լայն հնարավորություններով:

Սյունիքի մարզի տարածքն ունի 359,6 կմ միջպետական, 166 կմ հանրապետական և 515 կմ մարզային նշանակության ավտոճանապարհներ: Բացառությամբ մի քանի գյուղերի (Շաքի, Սպանդարյան, Բռնակոթ, Խնձորեսկի, Ակներ, Քարահունջ), մյուսները զուրկ են մարզկենտրոնի և տարածաշրջանային կենտրոնների հետ կապող երթուղային տրանսպորտային սպասարկումից: Այդ տեսակետից շատ ավելի անմխիթար վիճակում են Մեղրու և Կապանի տարածաշրջանները: Տրանսպորտային սպասարկումն առավել բարվոք է մարզկենտրոնին և տարածաշրջանային կենտրոններին մոտ գտնվող բնակավայրերում, որոնց որակի և հիշյալ կենտրոններից ունեցած հեռավորության միջև հակադարձ համեմատական կապ կա՝ որքան հեռու այնքան անբարեկարգ: Համեմատաբար բարվոք տրանսպորտային սպասարկում ունեն Երևան-Մեղրի և Գորիս-Ստեփանակերտ մայրուղիներին մերձակա գյուղական բնակավայրերը:

Մարզի ոչ բոլոր գյուղերն են օգտվում սեփական ջրամատակարարման ներքին ցանցից: Շնորհիվ վերջին տարիներին իրականացված ծրագրերի, շատ գյուղերում բարեկարգվել են ջրագծերը, կառուցվել նոր ջրատարներ: Այդ տեսակետից բավարար իրավիճակում են Մեղրու, Սիսիանի և Գորիսի տարածաշրջանները: Առանձին դեպքերում, հատկապես Կապանի տարածաշրջանում, ոռոգման ջրի խնդիրը կորցրել է երբեմնի սրությունը, գյուղական բնակչության թվի և մշակվող հողատարածքների մակերեսի կրճատման պատճառով:

Մարզի գյուղական բնակավայրերի մեծ մասը, բացառությամբ 35-ի, գազաֆիկացված չեն: Բնական գազից չեն օգտվում Մեղրու տարածաշրջանում, Կապանի գյուղերի մեծ մասում, Սիսիանի և Գորիսի բարձրլեռնային առանձին բնակավայրերում: Գազաֆիկացման բացակայության գլխավոր պատճառն այդ գյուղերի սակավաթիվ բնակչությունն է, ինչը

գազաֆիկացումը դարձնում է անշահութաբեր:

Առողջապահական հաստատություններ կան մարզի ոչ բոլոր բնակավայրերում: Առողջապահական կենտրոններ կան բժշկական ամբուլատորիաներ են գործում 10 համայնքներում (մեկը՝ Կապանի, չորսը՝ Գորիսի և հինգը՝ Սիսիանի տարածաշրջանում), որոնք սպասարկում են նաև հարակից գյուղերի բնակչությանը: Առանձին գյուղերում գործում են տարածաշրջանային առողջապահական կենտրոնների ենթակայության տակ գտնվող 114 բուժման կաբարձական կետեր:

Մարզի մշտական բնակչություն ունեցող 115 գյուղական բնակավայրերից 86-ն ունեն գործող հանրակրթական դպրոց, ընդ որում Տեղ գյուղում այդպիսիք երկուսն են, իսկ նախակրթական հաստատություններ առկա է միայն 26-ում: Տեսականորեն է գործում ակումբ-գրադարանային համակարգը (բացառությամբ մարդաշատ գյուղերի, դրանք մատնված են անգործության): Վերջին տարիներին մարզում՝ ոչ առանց վարչական ռեսուրսի միջամտության, իրականացվում է համայնքների խոշորացման ծրագիր, ինչն ավարտվել է Գորիսի և Մեղրու տարածաշրջաններում (Խնձորեսկի, Գորիսի, Տեղի, Տաթևի և Մեղրու բազմաբնակավայր համայնքներ), ընթացքի մեջ է Սիսիանում, դեռ չի սկսվել Կապանում:

Վերջին շուրջ երկուսուկես տասնամյակում Սյունիքի մարզի գյուղական բնակավայրերում տեղի են ունենում սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական նշանակալից փոփոխություններ, որոնք լուրջ խնդիրներ են առաջացնում դրանց անրապնդման, կայունացման և հետագա առաջընթացի համար: Այդ փոփոխություններն առավել տիպիկ ձևով են արտահայտվում Մեղրու, Կապանի և Սիսիանի տարածաշրջանների լեռնային ու սահմանամերձ փոքր գյուղական բնակավայրերում:

Մեր կողմից կատարված դաշտային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ.

- գնալով նվազում է Սյունիքի մարզում գյուղերի առանց այն էլ փոքր միջին մարդաշատությունը,
- բարձրանում է գյուղաբնակների միջին տարիքը,
- բնակչության սեռատարիքային կառուցվածքում աճում է կանանց և տարեցների տեսակարար կշիռը, նվազում է երիտասարդների մասնաբաժինը և կյանքի միջին տևողությունը,
- նվազել է ծնելիությունը, աճել՝ մահացության ցուցանիշը, կազմելով համապատասխանաբար՝ 11,3 և 10,4 ‰, (2015 թ.): Մեղրու տարածա-

շրջանի գյուղական բնակչության մահացության ցուցանիշը (13.4 %) 1.9 անգամ գերազանցում է ծնելիությանը,

➤ տարեց-տարի աճում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը,

➤ աշակերտների թվի նվազման պատճառով փակվել կամ փակման վտանգի տակ են հայտնվել Կապանի և Մեղրու տարածաշրջանների փոքր գյուղերի դպրոցներն ու նախակրթական հաստատությունները,

➤ ակունք-գրադարանների, բուժկետերի, արտադրական ենթակառուցվածքների փակումը հանգեցրել է աշխատատեղերի կրճատման և գործազրկության ավելացման,

➤ անբարեկարգ, առանձին դեպքերում գրեթե անանցանելի են դարձել հանդամիջյան, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները: Դժվարացել է կապը մարզկենտրոնի և տարածաշրջանային կենտրոնների հետ,

➤ ընդհանուր հողային ֆոնդում կրճատվում է գյուղատնտեսական հողահանդակների մասնաբաժինը: Մշակովի հողատարածքները և խոտհարքերը Կապանի տարածաշրջանում վեր են ածվում արոտավայրերի, իսկ բոլորը միասին՝ թփերի և մացառուտների,

➤ գյուղական բնակավայրերի զգալի մասում գյուղատնտեսությունն ավելի ու ավելի սպառողական և էքստենսիվ բնույթ է ստանում, դառնում է ավելի խոցելի՝ հաճախակի կրկնվող տարերային աղետներից (մինչ այդ էլ Կապանի տարածաշրջանը համարվել է գյուղատնտեսության տեսանկյունից բարձր ռիսկայնության շրջան): Այդ են վկայում բերքատվության և մթերատվության տարեկան տատանումները,

➤ խիստ վնասվել են պտղատուների տեղական սորտերը, վերացման վտանգի տակ են խնձորենու և տանձենու տեղական սորտերը: Վերջին մեկուկես տասնամյակում գրեթե բերք չեն տվել բալենին և կեռասենին (պատճառը հաճախակի կրկնվող ուշ գարնանային ցրտահարություններն ու կարկտահարություններն են, մյուս կողմից էլ՝ օդի աղտոտումից տարածված հիվանդությունները),

➤ Կապանի տարածաշրջանում այգեգործության կառուցվածքում փոքր ինչ ավելացել է մերձարևադարձային մշակաբույսերի (խաղող, նուռ, թուզ, արևելյան խուրմա) տեսակարար կշիռը (հավանաբար կլիմայի տաքացման շնորհիվ),

➤ զգալիորեն կրճատվել են անտառատարածքները, առավել շատ բնակավայրամերձ ու դաշտապաշտպան անտառաշերտերը: Արժեքավոր

փայտանյութի համար հատվում են ընկուզենիներ և տանձենիներ, որոնց բերքը մինչ այդ համարվել է գյուղացիների կայուն եկամտի աղբյուր:

Վերը բերված փաստերը վկայում են այն մասին, որ Սյունիքի մարզի գյուղական բնակավայրերում, մասնավորապես՝ փոքր, սահմանամերձ ու լեռնային գյուղերում, էականորեն թուլանում է բնակավայրերի գոյատևման և զարգացման տնտեսական և սոցիալական բազան, ինչի հետևանքով շարունակվում է բնակչության արտահոսքն այդպիսի գյուղերից և ստեղծում վտանգ վերջիններիս բնագրկման համար:

Այսպիսով՝

➤ Տարածքի խիստ մասնատվածության, բարձրաչափական միջերի 3500 մ-ի հասնող տատանումների, տարբեր դիրքադրությունների և մեծ թեքությունների պատճառով Սյունիքն առանձնանում է տարաբնակեցման բնույթի հակադրություններով:

➤ Մարզի գյուղական տարածքների ու տարաբնակեցման առանձնահատկությունները պայմանավորված են նաև պատմաաշխարհագրական և ազգագրական գործոններով և տնտեսական գործունեության խիստ բազմազանությամբ, որոնք իրենց ազդեցությունն են թողել նաև գյուղական բնակչության և բնակավայրերի շարժընթացի վրա:

➤ Մշակելի հողատարածքների փոքր չափերը և գյուղատնտեսության զարգացման ոչ բարձր մակարդակը պայմանավորել են մարզի տարաբնակեցման համակարգում փոքր գյուղերի գերակշռությունը: 1926 թ. համեմատությամբ 33-ում մարզի գյուղական բնակչության բաժինը նվազել է 2,5 անգամ:

➤ Գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկությունների պատճառով ըստ բարձրության գոտիների գյուղական բնակչության շարժընթացը համահունչ չէ 33-ում տեղի ունեցած գործընթացներին: Վերջին քառասուն տարում մարզում 2,2 անգամ ավելացել է մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերի թիվը, իսկ 500-1000 մարդ ունեցող գյուղերի թիվը նույնչափ նվազել է:

➤ Մարզի, հատկապես փոքր գյուղական բնակավայրերում, բնակչության շարժընթացի ժամանակակից միտումների պահպանումը կարող է հանգեցնել դրանցում սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրների և բնագրկման վտանգի առաջացմանը:

➤ Քանի որ Սյունիքը համարվում է 33 հարավային դարպասը և մեր երկրի համար ունի ռազմա-ստրատեգիական հույժ կարևոր նշանակություն,

ՀՀ տարածաշրջանային քաղաքականության անհետաձգելի խնդիրներից մեկը պետք է լինի Սյունիքի սահմանամերձ և լեռնային գյուղական բնակավայրերի տնտեսաարտադրական և սոցիալական բազայի ամրապնդումը, սոցիալ-ժողովրդագրական բարենպաստ իրավիճակի ստեղծումը և ՀՀ պաշտպանունակության հզորացումը:

6.9 Վայոց ձորի մարզ

Վայոց ձորի մարզն ընդգրկում է Արփա գետի վերին և միջին հոսանքների ավազանները և Նախիջևան գետի Ջահուկ վտակի վերնագավառը: Այն երեք կողմից շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով մարզի և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն: Մարզին բաժին է ընկնում ՀՀ տարածքի 7,7, բնակչության՝ 1,7 %-ը:

Մարզի տարածքի մակերևույթը տիպիկ լեռնային է, խիստ կտրտված է գետահովիտներով և կիրճերով: Շատ են լեռն ժայռերը: Այստեղ տարածքի մակերևույթի ծովի մակերևույթից ունեցած բարձրությունների տարբերությունները հասնում են 2600 մ-ի: Վայոց ձորի տարածքի մակերեսի ընդամենը 16,5 %-ն ընկած է ծովի մակարդակից մինչև 1500 մ բարձրություններում, իսկ 2000 մ-ից բարձր շրջանները կազմում են 53 %-ից ավելին: Մակերևույթում գերակշռում են 8-20⁰ թեքություն ունեցող տարածքները (մոտ 60 %) [հաշվարկներն ըստ 128-ի տվյալների]: Բարձրաչափական նիշերի մեծ տարբերություններից բացի մարզի ռելիեֆին բնորոշ են մակ ուղղաձիգ և հորիզոնական մասնատվածությունը, ինտենսիվ էրոզիան ու դենուդացիան, ինչպես մակ ակտիվ սելավային երևույթները:

Մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն ջերմաստիճանը հարավային շրջաններում հասնում է +41⁰C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35⁰C-ի: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 300-700 մմ-ի սահմաններում [29]:

Վայոց ձորի մարզի հողային ռեսուրսները սահմանափակ են: Անտառապատ է տարածքի 5,7%-ը: Նպաստավոր կլիմայի և արհեստական ոռոգման պայմաններում այստեղ զբաղվում են հիմնականում պտղաբուծությամբ և

խաղողագործությամբ: Սակայն մարզի գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է: Մշակովի հողակտորները մեծ մասամբ տեղաբաշխված են խորը ձորերի և ձորակների ցածրադիր մասերում:

Բնակլիմայական պայմանների նշված առանձնահատկությունները և աշխարհագրական գործոնների ընդհանրությունը պատմական տարբեր ժամանակաշրջաններում, կախված արտադրողական ուժերի զարգացման մակարդակից, ներքին ու արտաքին այլ գործոններից, իրենց ազեցությունն են թողել Վայոց ձորի մարզի բնակեցման, գյուղական տարածքների ու բնակավայրերի ձևավորման, զարգացման և առաջնթացի վրա:

Չարյուրամյակների ընթացքում Վայոց ձորի բարձր լեռնալանջերում գտնվող կարստային և վիմափոր քարանձավները ծառայել են ժամանակավոր պաշտպանական բնակավայրեր: Քարանձավային գառիթափ լանջերի ստորոտներում և ձորակների հարմարավետ հատվածներում կառուցվել են բազմաթիվ գյուղակներ, մի քանի տասնյակ բնակչով, որոնք հաղորդակցվել են իրար հետ թշնամու համար անմատչելի լեռնային կածաններով: Արփա գետի դարավանդներում եղել են ծաղկուն բնակավայրեր՝ կառուցված Ջաքարյանների և Օրբեյանների կողմից: Սրանք հետագայում, մոնղոլական և թուրքմենական տիրապետության տարիներին, պարբերաբար լքվել են բնակչության կողմից [93]:

Վայոց ձորի մարզի ներկայիս բնակավայրերը հիմնականում վերականգնվել և բնակեցվել են XVII դարի երկրորդ կեսից սկսած, իսկ առավել ինտենսիվ՝ XIX դարի 30-ական թվականներից՝ Պարսկաստանից (Խոյից, Սալմաստից, Թավրիզից) ներգաղթածների շնորհիվ:

1831 թ. Վայոց ձորի մարզի ժամանակակից տարածքում կար 70 գյուղական բնակավայր, որոնցում ապրում էր 6728 մարդ, իսկ 1897 թ. գյուղերի թիվն այստեղ կազմել է 112, բնակչությունը՝ 42080 մարդ: Հետագա մոտ երեք տասնամյակի ընթացքում գյուղերի թիվը նվազել է 31-ով, իսկ գյուղական բնակչության թիվն՝ ավելի քան 12000-ով (աղ.64):

1926-2015 թթ. ընթացքում մարզի գյուղական բնակավայրերի, դրանց բնակչության թվի և մարդաշատության փոփոխությունների մասին հանգամանալից պատկերացում է տալիս թիվ 66 աղյուսակում բերված տվյալները: 1926 թ-ին մարզ գյուղերի մոտ կեսն ունեցել են մինչև 200 բնակիչ, դրանց մասնաբաժինը գյուղական բնակչության ընդհանուր թվում կազմել է մոտ 12 %: Ըստ գերակշռող մարդաքանակի մարզին բնորոշ էր միջին և մեծ գյուղային տարաբնակեցումը: Այդպիսի գյուղերում ապրում էր մարզի գյու-

ղական բնակչության 72 %-ից ավելին: 2015 թ. միջին և մեծ (501-3000 բնակիչ) գյուղերին բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության ավելի քան 70 %-ը: Հարկ է նաև նշել, որ 1926-2015 թթ. ընկած ժամանակահատվածում մարզում կտրուկ նվազել է միջին մեծության գյուղերի բնակչության մասնաբաժինը (38,6 %-ով) և 36,9 %-ով ավելացել է խոշոր գյուղերի բնակչության մասնաբաժինը:

Աղյուսակ 64

Վայոց ձորի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թիվը (1831 - 1926 թթ.)¹

Տարածաշրջանները և մարզը	1831 թ.			1897 թ.			1926		
	Գյուղերի վիճակը	Բնակչության թիվը	Գյուղերի միջին մարտահամարը	Գյուղերի վիճակը	Բնակչության թիվը	Գյուղերի միջին մարտահամարը	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը	Գյուղերի միջին մարտահամարը
Եղեգնաձորի	38	3953	104	59	23890	405	43	18345	427
Վայքի	32	2775	87	53	18190	343	38	11729	309
Վայոց ձորի մարզ	70	6728	96	112	42080	376	81	30074	371

¹ Աղյուսակը կազմված է “Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 г.”, Е., 1962 г., վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

Վայոց ձորը գյուղական բնակչության և բնակավայրերի թվով ՀՀ-ում ամենափոքր մարզն է: 2015 թ-ին այստեղ ապրում էր ՀՀ-ի գյուղական բնակչության ընդամենը 3.0 %-ը, որը բաշխված էր մշտական բնակչություն ունեցող 46^{*} գյուղում (ՀՀ-ի մշտական բնակչություն ունեցող գյուղերի 4,9 %-ը): Սյունիքից հետո Վայոց ձորի մարզը հանրապետությունում ամենանոսր բնակեցվածն է: Մակերևույթի խիստ կտրտվածության, լեռնալանջերի մեծ թեքությունների, հողմահարված տարածքների գերակշռության պատճառով մշակովի հողակտորներն շատ փոքր են (հաճախ 20-25 հողակտոր կազմում են հազիվ մեկ հեկտար), որի հետևանքով, սահմանափակ են նաև գյուղական տարածքների ու բնակավայրերի ընդարձակման, խոշորացման և

* Այդ թվում նաև Ջերմուկ քաղաքի ենթակայության տակ գտնվող Կեչուտ գյուղը:

գարգացման հնարավորությունները:

Գյուղերի միջին մարդաշատությունը մարզում կազմում է 724 մարդ: Գերակշռում են բնակչության թվաքանակով փոքր և միջին մեծության գյուղերը: Տասնչորս գյուղ ունեն 1001-3000, մեկ գյուղ՝ 5000-ից ավելի բնակիչ: Մարզի 6 գյուղ մշտական բնակչություն չունի:

Աղյուսակ 65

Վայոց ձորի մարզի գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխությունները (1926-2015 թթ.)¹

	Բնակավայրերի թիվը ժամանակահատվածի ընթացքում				
	1926-1959	1959-1970	1970-1988	1988-2015	1926-2015
ա) Գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը ժամանակահատվածի սկզբում և վերջում	$\frac{81}{55}$	$\frac{55}{54}$	$\frac{54}{49}$	$\frac{49}{52}$	$\frac{81}{52}$
բ) Վերացված գյուղական բնակավայրերի թիվը	22	4	5	5	36
այդ թվում՝ գյուղեր	20	2	5		32
գ) Քաղաքներ դարձած գյուղերի թիվը	2	1	-	-	3
դ) Այլ բնակավայրերի միացած գյուղերի թիվը	4	-	-	-	4
ե) Նոր ստեղծված գյուղերի թիվը	2	4 ⁵	-	-	6
այդ թվում՝ գյուղեր	0	4	-	-	4
զ) Վերականգնված գյուղերի թիվը	-	-	-	7	7

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Статистический сборник, Е., 1962, 1989 թ., համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Ե., 1991 թ., «Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները», Ե., 2003 թ. և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով 2015.», Ե., 2015, վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

Մարզի գյուղական տարածքներն ու բնակավայրերն աչքի են ընկնում բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բացարձակ բարձրությունների մեծ տատանումներով (1000-2250 մ): Գյուղերի հիմնական մասն (74.5%) ընկած է ծովի մակերևույթից 1401-2000 մ բարձրության գոտում: Մարզի 2000 մ-ից բարձր շրջաններում կա մշտական բնակչություն ունեցող ընդամենը չորս գյուղ: Վայոց ձորի գյուղական բնակչության ավելի քան 77 %-ն

ապրում է ծովի մակարդակից 1001-1600 մ բարձրության գոտում, որտեղ գտնվում են մշտական բնակչություն ունեցող գյուղերի ընդամենը 49 %-ը (22 գյուղ): Վայոց ձորում մարդաշատ են 1201-1400 մ բարձրության գոտում գտնվող գյուղերը (միջինը՝ 3297 մարդ):

Ներկայումս ըստ գերակշռող մարդաքանակի մարզին բնորոշ է մեծ, խոշոր և միջին մեծության գյուղային տարաբնակեցումը: Այդպիսի գյուղերը թվով 20 են, դրանց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության ավելի քան 84 %-ը: Մարզում թվով 25 գյուղ ունեն մինչև 500 բնակիչ, մինչդեռ դրանցում ապրում է մարզի գյուղական բնակչության ընդամենը 15,8 %-ը:

Ռելիեֆի կտրտված և բացարձակ բարձրությունների մեծ տատանումներով այլ տարածքների նման Վայոց ձորում ևս անցած տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի և բնակչության ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության բաշխվածության զգալի փոփոխություններ: 1926 թ. մարզում գյուղական բնակչության մոտ 51 և բնակավայրերի 58 %-ը գտնվում էին ծովի մակարդակից 1600 մ-ից բարձր շրջաններում: Ներկայումս նշված բարձրություններում ընկած են մշտական բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերի 53 %-ը, սակայն էապես նվազել է դրանցում ապրող բնակչության մասնաբաժինը մարզում (1926թ.՝ 50,8 %, 2015 թ.՝ 22,7 %): Դրան հակառակ՝ մարզի տարածքի ծովի մակարդակից 1600 մ-ից ցածր շրջաններում, չնայած որ 1926 թ-ի համեմատությամբ գյուղական բնակավայրերի թիվը նվազել է 11-ով, սակայն բնակավայրերի բնակչության թվաքանակի ավելացման շնորհիվ զգալիորեն մեծացել է բարձրության այդ գոտիներում ապրող գյուղական բնակչության մասնաբաժինը մարզում (աղ.67):

Չնայած զբաղեցրած փոքր տարածքին, մակերևույթի խիստ մասնատվածության և բարձրաչափական միջերի մեծ տարբերությունների պատճառով, Վայոց ձորի մարզում գյուղերի մորֆոլոգիական տիպերը, տարաբնակեցման ձևերը և համալիրային տիպերը բազմազան են: Մի շարք գյուղեր տեղադրված են խոր ձորերի և ձորակների ցածրադիր մասերում, որտեղ կան մշակելի հողատարածություններ և ոռոգման հնարավորություններ: Մարզի տարածքի բնակեցվածության աստիճանը բարձր է:

Աղյուսակ 66
Վայոց ձորի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության և բնակչության քվի փոփոխություններն ըստ գյուղերի մարդաբանակի (1926-2015 թթ.)

Սկզբնական տարի	Միլիոնավոր բնակիչ	Միլիոնավոր բնակիչ	Գյուղական բնակավայրերի քվի բաշխումն ըստ մարդաբանակի (մարդ)											
			201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի			
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1926	81	30074	39	3580	16	4737	21	14674	5	7083	-	-	-	-
1970	54	41122	4	453	16	5210	20	14024	13	17897	1	3538	-	-
2011	46 ²	32931	14	1391	12	4000	8	6026	11	17054	1	4460	-	-
2015	45 ²	37538	9	907	16	5024	5	3814	14	22698	-	-	1	5095
Երևանի տոկոսներով														
1926	100.0	100.0	48.1	11.9	19.8	15.8	25.9	48.8	6.2	23.5	-	-	-	-
1970	100.0	100.0	7.4	1.1	29.6	12.7	37.0	34.1	24.1	43.5	1.8	8.7	-	-
2011	100.0	100.0	30.4	4.2	26.1	12.2	17.4	18.3	23.9	51.8	2.2	13.5	-	-
2015	100.0	100.0	20.0	2.4	35.6	13.4	11.1	10.2	31.1	60.4	-	-	2.2	13.6

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 г.», Ե., 1962 թ., վիճակագրական ժողովածուի, 1970 և 2011 թ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով- 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզի գյուղական բնակավայրերի իրական թիվը 52 է, որից 5-ը մշտական բնակչություն չունեն, իսկ 47-ը մշտական բնակչություն ունեն:

Առանձնանուն են Արփայի և Եղեգիսի գոգավորությունները, որտեղ էլ գտնվում են գյուղերի ճնշող մեծամասնությունը:

Վայոց ձորի մարզի տարածքում առանձնանուն են գյուղական տարաբնակեցման համալիրային հետևյալ տիպերը. 1) Արփայի գոգահովտի և հարակից սարավանդային տարածքների ցրված տարաբնակեցում, հիմնականում մեծ և միջին մեծության գյուղական բնակավայրերով, 2) Շատին-Աղնջաձորի շղթայածև տարաբնակեցում, հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերով, 3) Եղեգիսի գոգավորության շղթայածև-ցրված տարաբնակեցում, առավելապես փոքր և միջին մեծության գյուղերով, 4) Արփայի վերին հոսանքի ցրված տարաբնակեցում, առավելապես փոքր և միջին մեծության գյուղերով և 5) Ջահուկի վերնագավառի ցրված տարաբնակեցում, հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերով: Սրանք կազմում են մեկ ամբողջություն և առաջացնում են Դահնակ-Վայքի առանձին օջախներով տարաբնակեցման շրջանը՝ հիմնականում փոքր և միջին մեծության գյուղական բնակավայրերով, ամասնապահության և երկրագործության տարբեր ճյուղերի զարգացումով:

ՀՀ սահմանամերձ ու լեռնային այլ մարզերի ու տարածաշրջանների նման Վայոց ձորում ևս անկախացումից հետո ստեղծված իրավիճակի պատճառով էապես թուլացել է գյուղական բնակավայրերի արտադրատնտեսական և սոցիալական բազան, նվազել է գյուղական բնակչության թիվը, գյուղական բնակավայրերում ստեղծվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքի և բնական շարժի (2,8 % բնական աճ) ոչ բարենպաստ իրավիճակ:

Թեև Վայոց ձորի մարզի տարածքի շուրջ 82.5 %-ը կազմում են գյուղատնտեսական հողատարածքները (2015 թ. դրությամբ՝ 190337,6 հա), սակայն մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվող մշակելի հողատարածքների բաժինը գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի մեջ կազմում է ընդամենը 8,5% (16181 հա): Առավել մեծ բաժին ունեն արոտավայրերը (մոտ 49 %) և այլ հողատեսքերը (39.2 %), բազմամյա տնկարկները կազմում են 0,7, իսկ խոտհարքերը՝ 2,6 %:

Աղյուսակ 67
Կայոց ծոփի մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի փոփոխությունները ըստ բարձրության գոտիների (1926-2015 թ.)¹

Տարեթիվ	Գյուղերի թիվը	Բնակչության թիվը	Բնակչության և բնակավայրերի թվի բաշխումը ըստ բարձրության գոտիների (ն)																	
			1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000		2001-2200		2200-ից բարձր					
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ				
1926	81	30074	1	613	3	1503	9	5350	21	7335	18	6370	17	6824	9	1899	3	180		
1979	50	40065	2	2289	3	3417	3	7681	14	11116	12	7003	12	6365	3	1657	1	537		
2011	46 ²	32931	2	2921	3	3980	3	8322	14	9988	12	4825	8	2565	4	330	-	-		
2015	45 ²	37538	2	3242	3	4762	3	9891	14	11100	12	5204	8	2996	4	343	-	-		
Նույնը տոկոսներով																				
1926	100.0	100.0	1.3	2.0	3.7	5.0	11.1	17.8	25.9	24.4	22.2	21.2	21.0	22.7	11.1	6.3	3.7	0.6		
1979	100.0	100.0	4.0	5.7	6.0	8.5	6.0	19.2	28.0	27.8	24.0	17.5	24.0	15.9	6.0	4.1	2.0	1.3		
2011	100.0	100.0	4.3	8.9	6.5	12.1	6.5	25.3	30.4	30.3	26.1	14.6	17.4	7.8	8.7	1.0	-	-		
2015	100.0	100.0	4.4	8.6	6.7	12.7	6.7	26.4	31.1	29.6	26.7	13.8	17.8	8.0	8.9	0.9	-	-		

¹ Աղյուսակը կազմված է « Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Ե., 1962, վիճակագրական ժողովածուի, 1979 և 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով-2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

Վայոց ձորը գյուղացիական տնտեսությունների թվով ամենափոքրն է հանրապետությունում: Այստեղ 2016 թ-ին գործում էին 12032 գյուղացիական տնտեսություններ: Տարածքի բնակլիմայական պայմանների և ագրոկլիմայական ռեսուրսների բազմազանությունը պայմանավորել են այստեղ գյուղացիական տնտեսությունների արտադրական գործունեության մեջ տարբեր ուղղությունների առկայությունը: Այդ տարբերություններն առկա են ինչպես տարածաշրջանների, այնպես էլ ծովի մակարդակից բարձրության տարբեր գոտիների միջև: Եղեգնաձորի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններն առավել մեծ չափով մասնագիտացված են խաղողագործության, այգեգործության և անասնապահության (տավարաբուծություն և ոչխարաբուծություն) ուղղություններով: Այդպիսի գյուղական համայնքները տարածաշրջանում 11-ն են, սակայն դրանց բաժին է ընկնում տարածաշրջանի գյուղական բնակչության մոտ 72 %-ը (հայտնի են Մալիշկա, Արենի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Գլաձոր, Գետափ, Ելփին, Խաչիկ, Չիվա, Վերնաշեն գյուղերը): Բացի Խաչիկից, որն ընկած է ծովի մակարդակից 1800-1840 մ բարձրությունների վրա, մնացած գյուղերն՝ 1025-ից մինչև 1550 մ բարձրությունների վրա: Եղեգնաձորի տարածաշրջանի մնացած գյուղական բնակավայրերը, որոնք գտնվում են ծովի մակարդակից 1550-ից մինչև 2050 մ բարձրությունների վրա, մասնագիտացված են տավարաբուծության, ոչխարաբուծության, հացահատիկայինների մշակության և այգեգործության ուղղություններով:

Վայքի տարածաշրջանի ցածրադիր գոտու (մինչև 1700 մ) մի քանի գյուղական համայնքների գյուղացիական տնտեսություններում արտադրական գործունեության հիմնական ուղղություններ են այգեգործությունը, տավարաբուծությունը և ոչխարաբուծությունը: Մնացած գյուղական բնակավայրերում, որոնք ընկած են ծովի մակարդակից 1700-2100 մ բարձրությունների վրա, տնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են տավարաբուծությունը, ոչխարաբուծությունը, հացահատիկայինների մշակությունը և այգեգործությունը: Գնդեվազ գյուղում գոյություն ունի նաև թռչնաբուծական ֆարմիկա, որը թռչնամիս և ձու է մատակարարում Ջերմուկ ամռաշարանային քաղաքի բնակչությանը և հանգստացողներին:

Ոռոգման համար օգտագործվում են մարզի տարածքով հոսող գետերի (գլխավորապես Արփայի և նրա վտակների) ջուրը, որը գործող մեկ տասնյակից ավելի ջրհան կայանների միջոցով մղվում է ավելի բարձրադիր շրջաններում գտնվող տարածք և բաշխվում է մշակելի հողատարածքներին: Այդ նպատակին են ծառայում նաև Հերիերի և Կեչուտի ջրամ-

բարները:

Այսպիսով՝

➤ Վայոց ձորի տարածքի յուրահատուկ աշխարհագրական ամբողջականությունը՝ շրջապատված բնական պատմեշնեռով, տիպիկ լեռնային, կտրատված մակերևույթով, չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով, ինչպես նաև սահմանափակ հողային ռեսուրսները, կախված տնտեսության զարգացման մակարդակից և ներքին ու արտաքին այլ գործոններից, առանձնահատուկ պայմաններ են ստեղծել մարզի բնակեցման և գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման համար:

➤ Վայոց ձորը ՀՀ-ում առանձնանում է նույն բնակեցվածությամբ, գյուղերի ամենափոքր թվաքանակով և ոչ մեծ մարդաշատությամբ: Գյուղական տարածքների ու բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բարձրությունների միջև մեծ տարբերությունների և բազմաբնույթ ռելիեֆային պայմանների պատճառով առկա է գյուղերի ձևաբանական տիպերի, տարաբնակեցման ձևերի ու տեղական տիպերի բազմազանություն, որոնք մարզի տարածքի սահմաններում առաջացնում են տարաբնակեցման մեկ ամբողջական շրջան:

➤ Անցած տասնամյակների ընթացքում Վայոց ձորի մարզում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական գործընթացների պատճառով նկատելիորեն նվազել է գյուղական բնակավայրերի, իսկ 1970 թ-ից հետո՝ նաև գյուղական բնակչության թիվը: Այդ գործընթացներն իրենց ազդեցությունն են թողել նաև մարզի տարածքում ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխվածության վրա:

➤ Մարզում էապես նվազել է ծովի մակերևույթից 1600 մ-ից բարձր շրջաններում ընկած գյուղական բնակավայրերի բնակչության բաժինը: Այդ ամենի հետևանքով ներկայումս մարզի գյուղական բնակավայրերում ձևավորվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքի և բնական շարժի ոչ բարենպաստ իրավիճակ:

➤ Ագրոկլիմայական ռեսուրսների բազմազանությունը պայմանավորել է մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրական գործունեության և մասնագիտացման տարբերություններ, ինչպես տարածաշրջանների, այնպես էլ ծովի մակարդակից բարձրության տարբեր գոտիների միջև:

Վայոց ձորի համար առաջնահերթ խնդիր է գյուղական բնակչության թվաքանակի նվազման դադարեցումը, սահմանամերձ և լեռնային գյուղերի ամրապնդումը և մի շարք լքված բնակավայրի վերականգնումն ու զարգացումը:

6.10 Տավուշի մարզ

Տավուշի մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 9,1 %-ը: Նրան բաժին է ընկնում հանրապետության 4,2 և գյուղական բնակչության 6,7 %-ը: Մարզը գյուղական բնակավայրերի ընդհանուր թվով գերազանցում է միայն Վայոց ձորին և ունի նույնքան գյուղ, որքան Կոտայքի մարզը (62 գյուղ): Գյուղական բնակչության բացարձակ թվով գերազանցում է միայն Սյունիքի և Վայոց ձորի մարզերին:

Տավուշը ՀՀ-ի ամենալեռնոտ և մասնատված մակերևույթ ունեցող մարզերից է: Նրա ռելիեֆին բնորոշ են զառիվեր լանջերով խորը ձորերն ու կիրճերը, ուղղորդ քարափային լանջերն ու սեղանաձև լեռնակատարները: Այստեղ ըստ հորիզոնական մասնատվածության աստիճանի առանձնացվում են թույլ (0.2-0.6 կմ/քկմ), միջին (0.6-10. կմ/քկմ) և ուժեղ մասնատված (1.0-1.6 կմ/քկմ) տարածքներ [186]: Մարզում տիրապետող են 12⁰-ից բարձր թեքություն ունեցող լանջերը և միայն հովիտների հատակային, ոչ ընդարձակ տարածություններն են, որ տափարակ են և պիտանի են բնակեցման համար: Տավուշում մշակության համար պիտանի հողատարածությունները և գրեթե ամբողջ բնակչությունը կենտրոնացված են գետահովիտներում: Ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրություն ունեցող շրջանները կազմում են մարզի տարածքի մոտ 29 %-ը, իսկ մինչև 1500 մ-ը՝ շուրջ 60%-ը [հաշվարկներն` ըստ 128-ի տվյալների]:

Տավուշի մարզն ունի համեմատաբար մեղմ կլիմայական պայմաններ: Տարածքի մեծ մասում հունվարյան միջին ջերմաստիճանը -2⁰C-ից չի իջնում և միայն սահմանային լեռնաշղթաների մերձկատարային հատվածներում է, որ հասնում է -6⁰ C-ի: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 18-22⁰ C-ի միջև, իսկ տեղումները՝ 450-800 մմ:

Մարզի բնական լանդշաֆտների մեջ գերակշռողը լեռնային անտառներն են, որոնք կազմում է տարածքի 40.3 %-ը: Գյուղատնտեսական նշանակության հողատարածքները կազմում են մարզի տարածքի 40%-ը:

Տավուշի մարզի գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխությունները (1926-2015 թթ.)¹

	Գյուղերի թիվը ժամանակահատվածի ընթացքում				
	1926-59	1959-70	1970-88	1988-2015	1926-2015
ա/ Գյուղական բնակավայրերի ընդհանուր թիվը ժամանակահատվածի սկզբում և վերջում	$\frac{100}{112}$	$\frac{112}{63}$	$\frac{63}{61}$	$\frac{61}{62}$	$\frac{100}{62}$
բ/ Վերացված գյուղական բնակավայրերի թիվը, այդ թվում՝ գյուղեր	10 7	49 4	- -	- -	59 11
գ/ Քաղաքներ դարձած գյուղերի թիվը	2	-	1	1	4
դ/ Այլ բնակավայրերի միացած գյուղերի թիվը	5	-	2	1	8
ե/ Նոր ստեղծված գյուղական բնակավայրերի թիվը, այդ թվում՝ գյուղեր	29 12	- -	1 1	- -	30 13
զ/ Վերականգնված գյուղերի թիվը	-	-	-	-	-

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», Статистический сборник, Е., 1962, 1989 թ., համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Ե., 1991 թ., «Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները», Ե., 2003 թ. և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

Հողակլիմայական համենատարբար բարենպաստ պայմանների և անտառային հարուստ ռեսուրսների համենատ, մարզն աղքատ է հանքահումքային ռեսուրսներով, փոխարենը՝ հարուստ է ռելիեֆային և զբոսաշրջային ռեսուրսներով, որոնք իրենց դերն ունեն մարզի առանձին բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Մարզի տարածքի որոշ շրջաններում, մասնավորապես Դիլիջանի գոգավորության սահմաններում, տարաբնակեցման համար անբարենպաստ պայմաններ են ստեղծում սողանքները և ֆիզիկաաշխարհագրական այլ գործընթացներ: Խոշոր սողանքային տարածքներ են նաև Իջևանի և Բերդի տարածքները:

Տավուշի մարզի բնակեցման ժամանակակից պատկերի վրա իրենց ազդեցությունն են թողել նաև պատմական իրադարձությունները, հատկապես՝ ավերիչ պատերազմները: Այստեղ հարյուրամյակների ընթացքում բազմիցս ավերվել և կործանվել են բազմաթիվ բնակավայրեր, նվազել է բնակավայրերի թիվը և մարդաշատությունը, փոփոխություններ է կրել բնակչության ազգային կազմը: Մինչև 18-րդ դարի վերջը Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները եղել են ռազմատենչ ցեղերի և աշխարհակալ հզոր տերությունների արյունալի ընդհարումների և անվերջանալի ասպատակությունների թատերաբեմ: Թաթար-մոնղոլների աննախադեպ բռնություններից հետո ներկայիս Տավուշի մարզի տարածքը գրեթե հայաթափվեց [104^ա]:

18-րդ դարի երկրորդ կեսից Ղարաբաղից արտագաղթած տասնյակ հազարավոր հայերի մի զգալի մասը հաստատվել է նախորդ տասնամյակների ընթացքում հայազգի բնակչության մեծ մասը կորցրած ժամանակակից Տավուշի մարզի տարածքներում: 18-րդ դարի հատկապես երկրորդ կեսին Հայաստանի այս հատվածի հայ բնակչությանը վիճակված էր անցնել գորաշարժեր հիշեցնող գաղթերի միջով [104^ա]:

Աղյուսակ 69

Տավուշի մարզի տարածաշրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի թվի փոփոխությունները (1831-2015 թթ.)¹

Տարածաշրջանները և մարզը	Տարեթվեր								
	1831	1897	1926	1959	1970	1988	2001	2011	2015
Իջևանի ²	$\frac{5196}{15}$ ³	$\frac{21033}{33}$	$\frac{28124}{43}$	$\frac{24962}{44}$	$\frac{29231}{27}$	$\frac{28978}{27}$	$\frac{33732}{27}$	$\frac{33041}{28}$	$\frac{32991}{28}$
Նոյեմբերյանի	$\frac{3942}{11}$	$\frac{11100}{15}$	$\frac{14354}{22}$	$\frac{23297}{32}$	$\frac{27290}{18}$	$\frac{24191}{18}$	$\frac{26475}{17}$	$\frac{21910}{18}$	$\frac{221684}{18}$
Տավուշի	$\frac{3063}{10}$	$\frac{11268}{14}$	$\frac{20142}{35}$	$\frac{31814}{36}$	$\frac{28341}{18}$	$\frac{22456}{16}$	$\frac{23445}{16}$	$\frac{19472}{16}$	$\frac{18466}{16}$
Տավուշի մարզում	$\frac{12201}{36}$	$\frac{43401}{62}$	$\frac{62620}{100}$	$\frac{80073}{112}$	$\frac{84862}{63}$	$\frac{75625}{61}$	$\frac{83635}{60}$	$\frac{74423}{62}$	$\frac{73141}{62}$

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Арм. ССР за 1831-1959 гг.», 1962, վիճակագրական ժողովածուի, «ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները», Ե., 2003, ժողովածուի, ՀՀ 2011 թ. մարդահամարի տվյալների և ՀՀ մշտական բնակչության 2015 թվաքանակի վերաբերյալ ԱՎԾ հրապարակումների տվյալների հիման վրա:

² Հաշվառված է նաև Դիլիջանի ենթակայության տակ գտնվող գյուղերի թիվը և բնակչությունը, 1926 թ.՝ նաև Դիլիջանի բնակչությունը:

³ Համարիչում՝ բնակչության թիվը, հայտարարում՝ բնակավայրերի:

Տավուշի մարզի բնակեցման նոր ալիքը կապված է 1828-1830 թթ. ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների հետ, որոնք առաջացրին բնակչության զանգվածային ներգաղթ դեպի Արևելյան Հայաստան, այդ թվում նաև Տավուշի մարզ:

Դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Տավուշի մարզի տարածքով անցնող ռազմավարական բնույթի ճանապարհների շինարարությունը (Երևան – Սևան- Դիլիջան - Իջևան - Թիֆլիս, Դիլիջան - Վանաձոր - Իջևան - Նոյեմբերյան - Այրում), ինչպես նաև բազմաթիվ այլ բանուկ ճանապարհների վերակառուցումը մեծ դեր են խաղացել մարզի տարածքի բնակեցման, բնակավայրերի ձևավորման և զարգացման գործում: Այդ առումով մեծ դեր ունեցան հատկապես երկաթուղագծերի շինարարությունը: Դրանց կառուցման բանավանները և կիսակայարանները հետագայում վերածվեցին կայարանամերձ ավանների:

Տավուշի մարզի բնակեցման, գյուղական տարածքների ու բնակավայրերի ձևավորման և զարգացման համար առանձնահատուկ դեր է խաղացել նրա աշխարհագրական դիրքը: Տավուշը միաժամանակ սահմանակցում է թե՛ Վրաստանին, թե՛ Ադրբեջանին: Խորհրդային իշխանության շուրջ 70 տարիների ընթացքում Տավուշի մարզի ժամանակակալից տարածքը ՀՀ-ի համար գլխավոր դարպասի դեր է կատարել: Մարզի տարածքով էին Հայաստան մուտք գործում գլխավոր երկաթուղիները, գլխավոր ավտոմայրուղին, գլխավոր գազատարը: Մարզով էր անցնում Հայաստանը Անդրկովկասի միասնական էներգահամակարգին կապող էլեկտրահաղորդման բարձր լարման գիծը: Աշխարհագրական դիրքով պայմանավորված ենթակառուցվածքային նշված տարրերի ստեղծումը, անշուշտ, դրական դերն են ունեցել մարզի տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման, մասնավորապես՝ տարածքի բնակեցման և բնակավայրերի զարգացման համար:

Վերջին ավելի քան քսանվեց տարիներին Ադրբեջանի կողմից Հայաստանի տրանսպորտային շրջափակման և միջպետական հաղորդակցության բացակայության պայմաններում, Տավուշի մարզի ՏԱԴ-ի վերը նշված հնարավորություններն ըստ էության սառեցված են, չեն ծառայում մարզի տնտեսական զարգացմանը և բնակավայրերի առաջընթացին:

ՀՀ անկախացումից հետո մարզի գյուղական տարածքների և բնակավայրերի վրա էապես ազդող գործոն է դարձել սահմանամերձ գոտին: Ներկայումս Տավուշի սահմանները կատարում են հիմնականում երկու գործառույթ՝ միավորման և բաժանարար: Վրաստանի Հանրապետության հետ

մարզի սահմանն ավելի շատ կատարում է միավորման գործառույթ, քանի որ սահմանի վրա գտնվող բնակավայրերը սահմանամերձ առևտրի և տարանցիկ փոխադրումների զարգացման դեպքում աճի նախադրյալներ են ստանում, իսկ Ադրբեջանի Հանրապետության հետ՝ ընդհակառակը, կատարում է բաժանարար գործառույթ, քանի որ կաշկանդում է մարզի ընդհանուր զարգացմանը: Մարզի համայնքներից 46-ը Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով համարվում են սահմանամերձ: Դրանցում ապրում է մարզի բնակչության կեսից ավելին, իսկ գյուղական բնակչության՝ 72%-ը:

Մինչև 1970-ական թվականները Տավուշի մարզում ըստ մարդաքանակի մեծ թիվ էին կազմում մանր և փոքր (մինչև 500 մարդ) գյուղական բնակավայրերը: 1926 թ. այդպիսիք կազմում էին մարզի գյուղերի ընդհանուր թվի 61 %-ը, դրանց բաժին էր ընկնում գյուղական բնակչության ընդամենը 13,8 %-ը: Ըստ գերակշռող մարդաքանակի մարզում 1926 թ. շատ էին մեծ (1000-3000) և միջին մեծության (500-1000) գյուղերը, որոնց բաժին էր ընկնում գյուղական բնակչության 75,8 %-ը, իսկ գյուղերի ընդհանուր թվի՝ 37 %-ը (աղ.70): 1926-1970 թթ-ի ընթացքում մարզի գյուղական տարաբնակեցման մեջ տեղի ունեցած առավել էական փոփոխությունը գյուղերի խոշորացում էր և ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական տարաբնակեցման բնույթի փոփոխությունը:

1970-2015 թթ. ընթացքում Տավուշում գյուղական բնակչության թիվը նվազել է ավելի քան 8 հազ-ով: Այդ ընթացքում ըստ մարդաքանակի մարզի գյուղական բնակավայրի թվաքանակում փոփոխություններն աննշան են (աղ.70)

Ներկայումս մարզում առավել ընդգծված է դառնում ըստ գերակշռող մարդաքանակի մեծ և խոշոր գյուղերի դերի բարձրացումը: 2015 թթ. այդպիսի գյուղերում (դրանք թվով 29-ն են) ապրում էր մարզի գյուղական բնակչության 80 %-ը: Դա նշանակում է, որ մարզում առկա է ըստ գերակշռող մարդաքանակի մարզի գյուղական տարաբնակեցման բնույթի բևեռացում: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ մարզում մեծ և խոշոր գյուղերի

**Տախտիչի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացն ըստ մարտաբանակի
(1926-2015 թթ.)¹**

Աղյուսակ 70

Ստրբեր	Գրուերի թիվ	Բնակչոթան թիվ	Գյուղական բնակավայրերի բաշխումն ըստ մարտաբանակի (մարտ)											
			201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի			
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1926	100	62620	43	3067	18	5555	17	11877	21	35605	-	-	1	6516
1970	63	84862	2	281	12	4275	19	13847	25	46454	5	20005	-	-
2011	59 ²	74423	2	208	13	4804	18	12928	21	37489	5	18994	-	-
2015	59 ²	76847	2	183	12	4125	16	11124	22	36188	7	25227	-	-
Նույնը տուրումներով														
1926	100.0	100.0	43.0	4.9	18.0	8.9	17.0	19.0	21.0	56.8	-	-	1.0	10.4
1970	100.0	100.0	3.2	0.3	19.0	5.0	30.2	16.3	39.7	54.8	7.9	23.6	-	-
2011	100.0	100.0	3.4	0.3	22.0	6.4	30.5	17.4	35.6	50.4	8.5	25.5	-	-
2015	100.0	100.0	3.4	0.2	20.3	5.4	27.1	14.5	37.3	47.1	11.9	32.8	-	-

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 г.» և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը բվերով- 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի, 1970 և 2011 թթ. մարդահամարների և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը բվերով- 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզի գյուղական բնակավայրերի իրական թիվը 62 է, որից 3-ը մշտական բնակչություն չունեն:

Տախտի մարզի գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժմբացն ըստ բարձրության գոտիների (1926-2015 թթ.)¹

Արևիկ	Գրուհրի թիվ	Գրուհրի թիվ	Գյուղական բնակչության և բնակավայրերի թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (ն)													
			801-1000		1001-1200		1201-1400		1401-1600		1601-1800		1801-2000			
			ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ		
1926	100	62620	27	20714	20	19608	13	5494	10	13711	15	1862	5	523	10	708
1970	63	84862	30	36875	17	26603	6	9171	6	9877	2	1921	2	415	-	-
2011	59 ²	74423	31	36836	13	20698	7	8934	5	6587	2	1357	1	8	-	-
2015	59 ²	76847	31	37922	13	21539	7	8958	5	6976	2	144	1	8	-	-
Նույնը տուկաներով																
1926	100.0	100.0	27.0	33.1	20.0	31.3	13.0	8.8	10.0	21.9	15.0	3.0	5.0	0.8	10.0	1.1
1970	100.0	100.0	47.6	43.5	27.0	31.4	9.5	10.8	9.5	11.6	3.2	2.2	3.2	0.5	-	-
2011	100.0	100.0	52.5	49.5	22.0	27.8	11.9	12.0	8.5	8.9	3.4	1.8	1.7	0.0	-	-
2015	100.0	100.0	52.5	49.3	22.0	28.0	11.9	11.7	8.5	9.1	3.4	1.9	1.7	0.0	-	-

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 г.», Е., 1962 г., վիճակագրական ժողովածուի, 1970և 2011 թ. մարտահամարների և «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով- 2015», Ե., 2015, վիկագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Մարզի գյուղական բնակավայրերի իրական թիվը 62 է, որից 3-ը մշտական բնակչություն չունեն:

բնակչության մասնաբաժնի ավելացումը տեղի է ունեցել ոչ թե դրանցում բնակչության բացարձակ թվի ավելացման, այլ մարդաշատությամբ ավելի փոքր խմբերում գյուղերի միջին մարդաշատության նվազման հետևանքով:

Տավուշի մարզը ՀՀ-ում առանձնանում է նաև գյուղական բնակչության և բնակավայրերի ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության տեղաբաշխմամբ: ՀՀ-ում ծովի մակարդակից մինչև 800 մ բարձրությունում ապրող գյուղական բնակչության 76,5 և գյուղերի թվի 67 %-ը գտնվում են Տավուշի մարզում: Մարզի գյուղական բնակչության 89 և գյուղական բնակավայրերի ավելի քան 86 %-ը տեղաբաշխված են ծովի մակարդակից 400-ից մինչև 1200 մ բարձրություններում, իսկ 1201-1400 մ բարձրության գոտում բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 9,1 %-ը: Մարզի տարածքի 42 %-ը կազմող ծովի մակարդակից 1400 մ-ից բարձր շրջաններում կա ընդամենը 4 բնակավայր, որոնցից ճերմակավան գյուղը մշտական բնակչություն չունի:

Տավուշում ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրության գոտում 1926-2015 թթ-ի ընթացքում տեղի է ունեցել գյուղական բնակչության բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացում: Եթե 1926 թ. նշված շրջաններին բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության 64,4%-ը, ապա 2015 թ-ին 77,3 %-ը: Ընդհանուր առմամբ Տավուշի մարզում ևս անցած տասնամյակների ընթացքում տեղի է ունեցել առավել ցածրադիր շրջանների գյուղական բնակչության մասնաբաժնի ավելացում: Եթե 1926 թ. ծովի մակարդակից մինչև 1200 մ բարձրություններում ապրում էր մարզի գյուղական բնակչության 73,2 %-ը, ապա 2015 թ.՝ 89 %-ը:

Տավուշի տարածքին առավելապես բնորոշ է գետահովտային և ավազանային տիպի տարաբնակեցումը, երբ գետերի ջրահավաք ավազաններում ստեղծվում է բնակավայրերի որոշակի ամբողջություն, սպասարկման միասնական համակարգ, տրանսպորտային և այլ ենթակառուցվածքների ընդհանրությամբ և միջբնակավայրային սոցիալ-տնտեսական կապերով [88]: Այստեղ բնակավայրերը կուտակված են լեռնահովիտներում (երբ այն զուգակցվում է ջրային ուղիների հետ) և գետերի հովիտներում: Լեռնահովիտներում բնակավայրերի խտությունը և մարդաշատությունը մեծանում է գետերի վերին հոսանքներից դեպի ստորին հոսանքները շարժվելիս: Բնակավայրերը գտնվում են գետահովիտների ավելի ցածրադիր հատվածներում և ճանապարհների երկայնքով կենտրոնացված են ենթակառուցվածքային տարրերը: Գետահովիտներում ձևավորվել են տա-

րաբնակեցման օջախներ:

Տավուշի մարզի Իջևանի և Նոյեմբերյանի տարածաշրջաններին առավել բնորոշ է շրթայածև կամ գծային տարաբնակեցումը: Տարաբնակեցման այդպիսի ձևերը տարածված են լեռնաշղթաների միջև ստեղծված զառիթափ լանջեր ունեցող նեղ գետահովիտներում: Մարզի Տավուշի տարածաշրջանին առավել բնորոշ է խմբային տարաբնակեցումը (գետահովիտների մոտ խմբված բնակավայրերի ամբողջությունը):

Մարզի տարածքն ամբողջությամբ մտնում է ՀՀ հյուսիս-արևելքի նախալեռնային հարթությունների և հովիտների ստորին հատվածների առանձին օջախներով խմբային և ցրված տարաբնակեցման շրջանի մեջ: Առանձնանում են Խնձորուտ-Ոսկեպարի ցրված տարաբնակեցման (առանձին տեղերում խմբային տարաբնակեցման օջախներով) և Կոթի-Բագրատաշենի բլրահարթավայրային ցրված տարաբնակեցման տիպերը:

Վերջին ավելի քսանհինգ տարում ՀՀ-ում առկա սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, տարածաշրջանում աշխարհաքաղաքական անկայուն վիճակը և տեղական այլ գործոններ իրենց ազդեցությունն են թողել Տավուշի մարզի գյուղական տարածքների ու բնակավայրերի տարբեր կողմերի վրա: Մարզի տնտեսական ներուժին և գյուղական բնակավայրերի զարգացմանը չափազանց մեծ վնաս հասցրին շուրջ 10 հազ. աշխատատեղ ապահովող արդյունաբերական համալիրի քայքայումը, 1990-ական թվականների պատերազմական գործողությունները, ականապատված հողերի առկայությունը և հաճախակի դարձած բնական աղետները: Մարզի գրեթե բոլոր գյուղական համայնքներում գյուղատնտեսության ոչ բարձր արդյունավետությունը, բնական աղետների ինտենսիվությունը, սոցիալական ծառայությունների և հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման հետ կապված հիմնախնդիրներն էապես խոչընդոտում են գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

2015 թ. դրությամբ մարզում անմշակ հողտարածքները կազմել են 600 հա: Բազմաթիվ գյուղերում այն անցնում է 100 հա-ից, իսկ Կոթի և Բերդավան գյուղերում՝ համապատասխանաբար 340 և 560 հա: Բացի այդ, 2004 թ.-ից սկսած մարզի գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում տեղի ունեցած փոփոխության հետևանքով սահմանափակվում են արտահանման հնարավորությունները և նվազում են գյուղացիների եկամուտները: Այս ամենը նվազեցնում են մարզի գյուղերի տնտեսական ներուժը, պատճառ դառնում դրանց ժողովրդագրական իրավիճակի վատթարացման

և արտագաղթի: 2015 թ. մարզում գյուղական բնակչության ծնելիության գործակիցը կազմել է 11.7 ‰, իսկ բնական աճը՝ -0.5 ‰: Դրությունն առավել տագնապալի է Տավուշի տարածաշրջանի գյուղերում, որտեղ ծնելիությունը կազմել է 9,4, իսկ մահացությունը 16.3 ‰:

Մարզի գյուղական համայնքապետերի շրջանում կատարված հարցումը ցույց է տալիս, որ բնակավայրերի զարգացման համար առավել հրատապ հիմնախնդիրներ են. 1/ միջբնակավայրային ճանապարհների բարեկարգումը, 2/ ոռոգման համակարգի բարելավումը, 3/ խմելու ջրի համակարգի վերակառուցումը, 4/ աշխատատեղերի ստեղծումը և գործազրկության վերացումը, 5/ գյուղատնտեսական տեխնիկայի պակասը և 6/ գյուղմթերքներ վերամշակող ձեռնարկությունների ստեղծումը: Դրանց լուծումը կբարձրացնի մարզի գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետությունը և կնպաստի սահմանային գոտու գյուղական բնակավայրերի ամրապնդմանն ու ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը:

Այսպիսով՝

➤ Տավուշի մարզի գաղիվեր լանջերով խոր ձորերն ու կիրճերը, տարածքի հորիզոնական և ուղղաձիգ խիստ մասնատվածությունը և տարածքում տիրապետող համարվող 12⁰-ից բարձր թեքությունները զգալիորեն կրճատում են բնակեցման արեալը:

➤ Մարզում մշակովի հողատարածությունները և գրեթե ողջ բնակչությունը կենտրոնացված են գետահովիտներում, որի պատճառով առավել բնորոշ են ավազանային և գետահովտային տիպի տարաբնակեցումը, որն ըստ տարածաշրջանների ունի որոշակի տարբերություններ:

➤ Վերջին ավելի քան երկուսուկես տասնամյակում Տավուշի մարզի գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման վրա ազդող էական գործոն է դարձել սահմանամերձ գոտին: Մարզի տնտեսաաշխարհագրական դիրքի նախկինում ունեցած հնարավորություններն ըստ էության սառեցված են և չեն նպաստում տնտեսության և բնակավայրերի առաջընթացին:

➤ Տավուշին մշտապես բնորոշ է եղել ըստ գերակշռող մարդաքանակի մեծ և խոշոր գյուղերի բարձր տեսակարար կշիռը, իսկ փոքր և միջին մեծության գյուղերում, որոնք կազմում են գյուղերի թվաքանակի գրեթե կեսը, վերջին տասնամյակների ընթացքում դիտվում է միջին մարդաքանակի նվազում, որն էականորեն խոչընդոտում է դրանց սոցիալ-տնտեսա-

կան զարգացմանը և սահմանամերձ բնակավայրերի ամրապնդմանը:

➤ Տավուշն առանձնանում է ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գյուղական բնակչության և բնակավայրի տեղաբաշխմամբ: Մարզի տարածքի ընդամենը 13.2 %-ը կազմող ծովի մակարդակից մինչև 800 մ բարձրության գոտում տեղաբաշխված են գյուղական բնակչության և բնակավայրերի կեսը:

➤ Մարզի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման առավել հրատապ խնդիրներից են սահմանամերձ բնակավայրերի կայունացումը, դրանց տնտեսաարտադրական ներուժի հզորացումը, գյուղատնտեսական և տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, բնակչության սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և արտագաղթի դադարեցումը: Այդ ամենը կնպաստեն սահմանամերձ բնակավայրերի զարգացմանը և ՀՀ հյուսիս-արևելյան սահմանների պաշտպանունակության ամրապնդմանը:

ԳԼՈՒԽ 7

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

7.1 Գյուղական տարածքների ու տարաբնակեցման դերը լեռնային երկրների կայուն հասարակական զարգացման գործում

Լեռնային տարածաշրջանների առանձնացման եվրոպական Խարտիայում նշվում է, որ դրանք տարածքներ են, որտեղ տեղանքի բարձրությունը, ռելիեֆը և կլիման ստեղծում են առանձնահատուկ պայմաններ, որոնք ազդում են մարդու ամենօրյա գործունեության վրա [121, 211]: Դրանց առանձնացման վերաբերյալ գրվել են մեծ թվով աշխատանքներ [106, 108, 111, 146 և այլն]: Քարտեզաչափական նորագույն հաշվարկները պարզել են, որ երկրագնդի տարածքի 48 %-ն ընկած է ծովի մակարդակից 500 մ-ից բարձր, որից 27 %-ը՝ 1000-ից, 11 %-ը՝ 2000-ից, 5 %-ը՝ 3000-ից և 2 %-ը՝ 4000 մ-ից [121, 215, 216, 217]: Բերված փաստերն ու տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ.

➤ լեռները և բարձրավայրերը ձևավորում են ցամաքի խոշորագույն էկոհամակարգ,

➤ այն փաստը, որ երկրագնդի գրեթե կեսն ընկած է ծովի մակարդակից 500 մ-ից բարձր, քիչ հեռանկարային է դարձնում փորձերը գտնել լեռնային տարածքների առանձնացման վերաբերյալ համընդհանուր բնորոշում:

Լեռնային տարածքների դեպոպուլյացիան և էթնոմշակութային ավանդույթների աստիճանական վերացումը, անտառազրկումը, հողերի էրոզիան, բնական աղետների հաճախականության մեծացումը և բազմաթիվ այլ բացասական երևույթներ բնորոշ են երկրագնդի լեռնային տարածքների մեծ մասին: Լինելով բազմազան ծառայությունների, գյուղատնտեսական, ջրային, հանքային, կենսաբանական, ռեկրեացիոն և այլ ռեսուրսների մատակարար, լեռնային տարածաշրջանները շուկայական տնտեսության գլոբալացման պայմաններում չեն կարող մրցակցել հարթավայրային և ուրբանացված կենտրոնների արտադրողների հետ: Լեռնային և հարթավայրային տարածքների անհավասարության գործընթացները

ստեղծում են լարվածություն լեռնային շրջաններում, որոնք հաճախ վերածվում են զինված հակամարտության (միջտարածաշրջանային, էթնիկական, կրոնական և այլն) [212]:

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի և զարգացման 1992 թ. կոնֆերանսից հետո, որում լեռների թեման XXI դարի օրակարգում զբաղեցնում էր հավասարազոր տեղ մյուս առաջնային թեմաների հետ միասին, լեռնային տարածքների հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ մեծացավ [121]: Բազմաթիվ երկրների կառավարություններ և հասարակությունը գիտակցեցին լեռնային տարածաշրջաններին աջակցելու անհրաժեշտության մասին: Շատ երկրներում ոչ միայն հասկացան լեռնային տարածքների ռեսուրսների կարևորությունը, այլ նաև ընդունեցին լեռնային տարածքների (շրջանների) դերն ու տեղը ողջ հասարակության սոցիալական և քաղաքական կայունության պահպանության համար [նույն տեղում]:

Եվրոպացի փորձագետները կարևորում են մի շարք բազային սկզբունքներ, որոնք բնութագրում են լեռնային տարածքները, դրանցից կարևորագույնը համարելով հունանիտար արժեքների սկզբունքը [տես 213]:

Լեռնային տարածքների կտրտված մակերևույթը, լանջերի թեքությունները, բնական աղետաբեր գործընթացները (երկրաշարժերը, հրաբուխները, քարաթափվածքները, սելավները և այլ երևույթներ), մի կողմից զգալիորեն նվազեցնում են մարդու տնտեսական գործունեության հնարավորությունները, մյուս կողմից ավելացնում են մարդու օրգանիզմի էներգիայի ծախսը և վթարների հավանականությունը: Կլիմայի վատթարացումը և օդ-տազործման համար պիտանի տարածքների նվազումը սահմանափակում են լեռնային տարածքների երկրագործական յուրացումը:

Լեռնային տարածքների բացասական կողմերի շեշտադրումն ամենևին չի նշանակում թե լեռնային տարածքները չունեն դրական կողմեր: Մասնավորապես՝ դրանք հայտնի են իրենց կազդուրիչ հատկություններով: Լայնորեն հայտնի են լեռնային կլիմայական կուրորտները: Լեռներում երկրագործության վերին սահմանը հասնում է 4650 մ-ի, իսկ մշտական բնակչություն կա 5000 մ-ից բարձր շրջաններում [152]:

Մարդն ապրել է լեռնային տարածքներում իր առաջացման ժամանակաշրջանից: Արխանտորպի համաշխարհային 13 հիմնական գտածոներից տասը վերաբերվում են լեռնային և նախալեռնային շրջաններին [133]: Վկայություններ կան այն մասին, որ նախապատմական և նույնիսկ ավելի ուշ ժամանակաշրջանում աշխարհում շատ լեռնային տարածքներ ավելի

խիտ էին բնակեցված, քան շրջակա հարթավայրային տարածքները: Ներկայումս աշխարհում կան երկրներ, որտեղ լեռնային շրջաններում բնակչության խտությունն ավելի բարձր է, քան հարթավայրերում: Լեռնային տարածքների 1000 մ-ից բարձր շրջաններում ապրում է աշխարհի բնակչության մոտ 8 %-ը [170]:

Լեռնային տարածքներն առանձնանում են նաև ուրբանացման իրենց առանձնահատկություններով: 21-րդ դարի սկզբներին աշխարհում հաշվվում էր 266 քաղաք, որոնք ունեցել են մեկ մլն-ից ավելի բնակչություն: Դրանցից 26-ը գտնվում են լեռնային շրջաններում և ընկած են ծովի մակարդակից 1000 մ-ից բարձր շրջաններում: Դրանցից ամենա «բարձրլայնականը» մեր մայրաքաղաք Երևանն է:

Լեռնային երկրներում, հատկապես, վերջին երեք-չորս տասնամյակների ընթացքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործընթացներն աննպաստ են ինչպես այդ երկրների շահերի տեսակետից, այնպես էլ իրենց (լեռնային տարածքների) սոցիալ-տնտեսական զարգացման համար: Այդպիսի տարածքներից բնակչության, մասնավորապես՝ երիտասարդության շարունակվող հոսքը նվազեցնում է ոչ միայն աշխատունակ բնակչության թվաքանակը, այլ զգալիորեն խախտում է բնակչության սեռատարիքային կառուցվածքը: Ժողովրդագրական այդպիսի գործընթացները մի կողմից զգալիորեն արգելակում են տնտեսության զարգացման հնարավորությունները, մյուս կողմից՝ նվազեցնում են այդ տարածքների բնակչության վերարտադրության (ծնելիության և բնական աճի) ցուցանիշները: Իհարկե, ոչ բոլոր լեռնային երկրներում են առաջացել ժողովրդագրական նման իրավիճակ, սակայն բնակչության արտահոսք այս կամ այն աստիճանով կատարվում է լեռնային շրջանների մեծ մասում [121, 137, 183, 152, 188, 191]: Այդ երևույթն առանձնահատուկ գծերով է դրսևորվում հետխորհրդային լեռնային երկրներում, որտեղ բնաաշխարհագրական գործոնների հետ միաժամանակ իրենց զգացնել են տալիս նաև անցումը շուկայական տնտեսական հարաբերությունների և անցումային տնտեսության հարուցած խնդիրները:

Տնտեսագիտորեն հիմնավոր է այն կարծիքը, որ մարդիկ ձգտում են ապրել այնտեղ, որտեղ բնատնտեսական գործոնները թույլ են տալիս ստեղծել հարմարավետ կենսապայմաններ: Սակայն, չպետք է անտեսել նաև այն փաստը, որ ժամանակակից ԳՏՀ պայմաններում այդպիսի կենսապայմաններ կարելի է ստեղծել նաև լեռնային շրջաններում, որոնք ունեն

պակաս նպաստավոր բնատնտեսական պայմաններ: Դեռևս 1974 թ. Շվեյցարիայում ընդունվել է Դաշնային օրենք (LIM) լեռնային տարածքների զարգացման վերաբերյալ, որն ունեցավ կարևոր դեր ժամանակակից Շվեյցարիայի լեռնային քաղաքականության զարգացման գործում [214]:

Բնակչության հեռացումը լեռնային շրջաններից նեղացնում է բնակեցված տարածքը կամ տարաբնակեցման արեալը, արդյունավետ չեն օգտագործվում հողային ռեսուրսները: Նման գործընթացները ոչ մի կերպ չեն համընկնում բնակչության աճի ժամանակակից բարձր տեմպերի հետ, երբ վերջին 12 տարում աշխարհի բնակչությունն ավելացավ ևս մեկ միլիարդով, իսկ առանձին տարածաշրջաններում բնակչության խտությունը հասել է չափից ավելի բարձր մակարդակի: Այս ամենի հետ կապված մարդկության առջև դրված է միանգամայն իրական խնդիր՝ բնակեցված տարածքի ընդարձակում, այլ ոչ թե նրա սահմանների նեղացում: Նշված խնդիրն ավելի սուր բնույթ ունի հողային սահմանափակ ռեսուրսներ ունեցող լեռնային երկրներում, ինչպիսին նաև մեր համրապետությունն է, հարևան Վրաստանը և այլ երկրներ:

Առավելապես լեռնային տարածքներ ունեցող երկրներում ցածրադիր-հարթավայրային տարածքները բնակեցված են բավական խիտ և յուրաքանչյուր հեկտար հող այդ շրջաններում գնահատվում է շատ բարձր: Իսկ լեռնային տարածքները բնակեցված են առանձին օջախներով և նոսր: Այդ շրջանների տարածքային և բնական մյուս ռեսուրսներն օգտագործվում են ոչ բավարար մակարդակով: Լեռնային տարածքներից բնակչության շարունակվող հոսքը և ցածրադիր ու լեռնային տարածքների ոչ համաչափ զարգացումն էլ ավելի են սրում բնակչության առանց այն էլ անհավասարաչափ տեղաբաշխումը, իսկ առանձին դեպքերում կարող են հանգեցնել բնակեցված լեռնային տարածքների բնազրկմանը:

Լեռնային տարածքներում բնակավայրերի հետագա զարգացման և այդ շրջաններից բնակչության միգրացիայի վերաբերյալ եղել են միանգամայն տարբեր և հակասական մոտեցումներ: Մեր կարծիքով առավել հիմնավոր է վրաց աշխարհագետ Վ.Ջառշվիլու մոտեցումը, ըստ որի լեռնային տարածքներում (շրջաններում) պետք է ապրի այնքան բնակչություն, որքան թույլ է տալիս այդ տարածքների «տարողությունը»: Վերջինս որոշվում է ոչ այնքան տարածքի մակերեսով, այլ գլխավորապես նրա որակով (արտադրողական ուժերի զարգացման մակարդակով), որն ընդգրկում է ոչ միայն բուն արտադրողությունն, այլ նաև արտադրողների սոցիալ-մշակու-

թային վիճակը [146]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լեռնային երկրները համընդհանուր բնորոշ առանձնահատկությունների հետ միաժամանակ, առանձնանում են նաև տնտեսության և տարաբնակեցման ոչ քիչ թվով անհատական գծերով, որոնք պայմանավորված են ինչպես բնական, այնպես էլ սոցիալ-տնտեսական, ազգագրական և պատմական գործոններով:

Լեռնային երկրների զարգացումը և բնակչության ամրացումը դրանցում պահանջում է նաև գոյություն ունեցող տարաբնակեցման, մասնավորապես՝ գյուղական տարաբնակեցման կատարելագործում: Չնայած որ բնակչության տարածքային կազմակերպումը կրում է բնական գործոնների ուժեղ ազդեցությունը, սակայն տարաբնակեցման որոշակի ձևի կազմավորման ու զարգացման համար որոշիչ դեր ունեն սոցիալ-տնտեսական պայմանները, արտադրության բնույթը և արտադրողական ուժերի զարգացման մակարդակը: Լեռնային գոտում ավելի հստակ է արտահայտված տարաբնակեցման կախվածությունը բնական պայմաններից: Բնական բաղադրիչներն անմիջական ազդեցություն են թողնում բնակավայրերի ձևի և մեծության վրա: Ոչ պակաս կարևոր է նաև դրանց միջնորդավորված ազդեցությունը տարաբնակեցման վրա՝ տնտեսության միջոցով: Մինչև այժմ էլ շատ լեռնային տարածքներում գյուղական տարաբնակեցման ձևերը բնութագրվում են որոշակի պահպանողականությամբ, ուժեղ ձևով զգացվում է բնաաշխարհագրական պայմանների և պատմականորեն ձևավորված ավանդույթների դոմինանտ ազդեցությունը:

Լեռնային տարածքների հետագա կայուն հասարակական զարգացումը մեծապես պայմանավորված է նաև տարաբնակեցման վերափոխումներից: Լեռնային շատ շրջաններում ժամանակակից տարաբնակեցումը (մասնավորապես՝ գյուղական) զգալիորեն խոչընդոտում է տնտեսության զարգացմանը, դժվարացնում է բնակչության կյանքի պայմանները և դրանով հանդերձ նպաստում է երիտասարդ բնակչության արտագաղթին: Այդ իմաստով ***կարևորագույն խնդիր է համարվում զարգացման հետագա հնարավորություն ունեցող գյուղական բնակավայրերի խոշորացումը:*** Ուսումնասիրությունները ցույց են տվել լեռնային շրջանների գյուղական բնակավայրերի տրանսֆորմացիայի հետևյալ օրինաչափությունները՝ 100-500 մարդ ունեցող գյուղերը գրավելով անցումային դիրք, առավել անկայուն են: Դրանցից շատերը վերանում են, կամ էլ անցնում են ավելի փոքրերի կատեգորիան (100 մարդուց պակաս), իսկ մյուսները՝ ընդհակառակը,

մեծանում են և դառնում ավելի խոշոր բնակավայրեր [146]:

Մարդաշատությունը հանդիսանում է գյուղական բնակավայրերի աճին նպաստող կարևորագույն գործոն: Այդպիսի բնակավայրերում հեշտ է ստեղծել սպասարկման ծառայությունների հիմնական մասը և դառնում են ձգողական կենտրոն շրջակա բնակավայրերի համար: Լեռնային շրջանների գյուղական տարաբնակեցման մեջ խոշոր գյուղերի դերը կարևորվում է նրանով, որ դրանք հաճախ կատարում են տեղական կենտրոնի դեր, դրանցում կենտրոնանում են նաև վարչական և կառավարման որոշ օրգաններ: Այդ ծառայություններից օգտվում են նաև շրջակայքի գյուղերը, որոնք գտնվում են ամենօրյա մատչելիության սահմաններում: Լեռնային շրջաններում տեղական այդպիսի կենտրոնների ցանցի զարգացումը, նախ և առաջ, կապված է տարաբնակեցման զարգացման հետ:

Լեռնային երկրների կայուն հասարակական զարգացման գործում իր դերն ունի նաև ուրբանացումը: Այն որպես քաղաքային ապրելակերպի զարգացման և տարածման գործընթաց աստիճանաբար նպաստում է հարթավայրային և լեռնային տարածքների, քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև սոցիալ-տնտեսական և մշակութային-կենցաղային տարբերությունների նվազեցմանը: Ուրբանացման գործընթացը գյուղական բնակավայրերում փոփոխություններ է մտցնում բնակչության սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքում և նպաստում բնակավայրերի խոշորացմանը: Հասարակական արտադրության զարգացումը հանդիսանում է այն հիմնական շարժիչ ուժը, որը գյուղական բնակչության կյանքում սոցիալական գործընթացների փոփոխություններ է առաջացնում և ապահովում է ռեալ հնարավորություններ քաղաքային ապրելակերպի տարածման համար գյուղական բնակչության գործունեության բոլոր ոլորտներում: Դրա հետ միաժամանակ, ժամանակակից պայմաններում գյուղական բնակավայրերում ուրբանացման գործընթացների ներթափանցումն իրականացվում է նաև հաղորդակցության զանգվածային միջոցներով (կապի ու լրատվության նորագույն տեխնոլոգիաների) և ի տարբերություն նախորդի, այս դեպքում լեռնային տարածքների բնական գործոնները և խոշոր ուրբանացված գոտուց հեռու գտնվելն էական դեր չեն կատարում [174]:

Այսպիսով, բերված փաստարկները թույլ են տալիս եզրակացնել, որ.

➤ երկրագնդի ցամաքային տարածքում լեռնային երկրները և տարածաշրջանները զբաղեցնում են զգալի մակերես և ձևավորում են ցամաքի խոշորագույն էկոհամակարգ,

➤ Լեռնային երկրներն ունեն տարածքային և բնական այլ ռեսուրսների նշանակալից ներուժ, որոնց դերն ու կարևորությունը գնալով մեծանում է, պայմանավորված աշխարհի բնակչության թվաքանակի աստիճանական ավելացմամբ,

➤ Երկայուն, երբ մարդկությունն ընդունել է կայուն հասարակական զարգացման հայեցակարգը, ամբողջ հասարակության սոցիալական, տնտեսական, էկոլոգիական և քաղաքական կայունության պահպանման և հետագա առաջընթացի համար իրենց առանձնահատուկ դերն ունեն Լեռնային երկրներն ու տարածաշրջանները,

➤ Լեռնային երկրներում կայուն հասարակական զարգացում ապահովելու, դրանց տարածքային, մարդկային և մնացած ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու նախապայմաններից մեկը գյուղական տարածքների ու բնակավայրերի, մասնավորապես՝ տարաբնակեցման համակարգի պահպանումն ու կատարելագործումն է, ինչպես նաև գյուղական տարածքներում ուրբանացման գործընթացների տարածումը և խորացումը,

➤ Հայաստանի Հանրապետությունը լինելով տիպիկ Լեռնային երկիր, առանձնանում է բնաաշխարհագրական պայմանների, տնտեսության զարգացման և տեղաբաշխման ինչպես նաև Լեռնային երկրներին բնորոշ տարբերակեցման, գյուղական տարածքների ու բնակավայրերի առանձնահատկություններով և հիմնախնդիրներով: ՀՀ-ում ևս Լեռնային տարածաշրջանների կայուն հասարակական զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկը տարաբնակեցման համակարգի, մասնավորապես՝ գյուղական տարածքների ու բնակավայրերի վերափոխումն ու զարգացումն է: Վերջինս հնարավորություն կտա նպատակային և արդյունավետ օգտագործել ՀՀ-ի առանց այն էլ սահմանափակ տարածքային, հողային և այլ ռեսուրսները:

7.2 Գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման և վերափոխման վրա ազդող հիմնական գործոնները և դրանց տարածաշրջանային տարբերությունները

Հայտնի է, որ գյուղական տարածքների ու բնակավայրերի հետագա զարգացումը, վերափոխումն ու կատարելագործումը տեղի է ունենում բնական, արտադրատնտեսական, ֆինանսական, սոցիալ-ժողովրդագրական, վարչատարածքային, ուրբանացման և այլ գործոնների ազդեցության տակ: Գյուղական բնակավայրերի զարգացման վրա այդ գործոնների ազդեցության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս բացահայտել ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ գյուղական տարածքների ու տարաբնակեցման զարգացման միտումները և վերափոխման ու կատարելագործման ուղիները:

Ցանկացած տարածքում բնական համալիրի տարրերից գյուղական բնակավայրի զարգացման վրա իրենց ազդեցությունն են թողնում ռելիեֆային ու կլիմայական պայմանները, հողաբուսական և ջրագրական ցանցը, ինչպես նաև տեղային այլ գործոններ, որոնք ենթակա են փոփոխության տեղից-տեղ՝ կախված աշխարհագրական լայնությունից և ծովի մակարդակից ունեցած բարձրությունից [97]:

ՀՀ համեմատաբար փոքր և լեռնային մակերևույթ ունեցող տարածքում բնական համալիրի տարրերից առանձին գյուղական տարածքների և տարաբնակեցման համակարգի զարգացման ու վերափոխման վրա ազդող ինտեգրալ ցուցանիշ կարելի է համարել տեղանքի ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, քանի որ վերջինիս փոփոխմամբ, որպես կանոն, փոփոխվում են նաև բնական համալիրի մյուս տարրերը: Ընդ որում, ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացմանը զուգընթաց ընդհանուր առմամբ վատանում են բնակչության կենսագործունեության պայմանները և նվազում են գյուղական տարածքների զարգացման հնարավորությունները:

Շուկայական հարաբերությունների ժամանակակից պայմաններում գյուղական տարաբնակեցման վերափոխումն ու կատարելագործումը և առանձին գյուղերի զարգացումը մեծապես կախված է ֆինանսական և արտադրատնտեսական գործոններից: Դրանց թվում առավել մեծ դեր ունեն գյուղական համայնքի վարչական բյուջեի փաստացի եկամուտները, համայնքի բնակչության բյուջեի սեփական եկամուտները, գյուղական բնակավայրի գյուղատնտեսական հողատարածքներով և մշակելի հողատա-

րաձքներով ապահովվածությունը:

Վարչատարածքային ու ուրբանացման գործոններից գյուղական տարածքների, առանձին բնակավայրերի և տարաբնակեցման զարգացման ու վերափոխման վրա առավել մեծ է տարածաշրջանային, մարզային և հանրապետական նշանակության կենտրոններից գյուղական բնակավայրերի ունեցած հեռավորության մեծությունը: Այդպիսիք են նախկին վարչական շրջկենտրոնները, մայրաքաղաք Երևանը և տարաբնակեցման համակարգի տեղային այլ կենտրոններ: Բացի նշվածներից, գյուղական տարածքների և տարաբնակեցման վերափոխումն ու կատարելագործումը մեծապես կախված են նաև սոցիալ-ժողովրդագրական և այլ գործոններից: Դրանցից առավել մեծ դեր ունեն գյուղական բնակավայրերի ապահովվածությունը սոցիալ-մշակութային ծառայություններով և առկա ժողովրդագրական իրավիճակը (բնակչության սեռատարիքային կառուցվածքը, վերարտադրության և միգրացիոն գործընթացները, սոցիալ-հոգեբանական այլ գործոններ):

ՀՀ տարբեր մարզերում, տարածաշրջաններում և նույնիսկ առանձին գյուղական բնակավայրերում վերը նշված գործոնների խմբի և առանձին գործոնների ազդեցությունը գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման և տարաբնակեցման վերափոխման ու կատարելագործման վրա դրսևորվում են տարբեր կերպ: Հանրապետության բարձրադիր-լեռնային շրջաններում գյուղական բնակավայրերի զարգացման վրա դեռևս էական դեր ունեն բնական համալիրի տարրերը, սահմանամերձ շրջաններում՝ առկա տարածաշրջանային իրավիճակը, քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքը, մայրաքաղաքային ռեգիոնում՝ տրանսպորտային ցանցի խտությունը, մայրաքաղաքից ունեցած հեռավորությունը և տրանսպորտային ապահովվածության աստիճանը: Միաժամանակ, ինչպես առանձին գյուղական տարածքների ու բնակավայրերի, այնպես էլ տարաբնակեցման հետագա զարգացումը, վերափոխումն և կատարելագործումը կախված են վերը նշված գործոնների խմբի համալիր ազդեցությամբ [97]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առանձին գյուղական բնակավայրերի, տարածաշրջանների և ՀՀ գյուղական տարաբնակեցման զարգացման, վերափոխման ու կատարելագործման համար առավել մեծ է հետևյալ գործոնների դերը. **գյուղական բնակավայրի ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, վարչական բյուջեի փաստացի եկամուտները, մշակելի հողատարածքների և գյուղատնտեսական ընդհանուր հողա-**

տարածքների մեծությունը, նախկին շրջկենտրոններից և մարզկենտրոններից ունեցած հեռավորությունն, ուրբանացման մակարդակը, ինչպես նաև գյուղական բնակավայրի հեռավորությունը գյուղատնտեսական և առևտրային մեծ շուկաներից, մայրաքաղաք Երևանից [190]: Դրանց ազդեցությունը տարածաշրջանի գյուղական տարածքների ու տարաբնակեցման վրա դրսևորվում է տարաբնակեցումը բնութագրող այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են գյուղական բնակավայրի միջին մարդաքանակը, տարածաշրջանի գյուղական բնակչության և բնակավայրերի խտությունը:

Գյուղական տարաբնակեցման հիմնական բնութագրերի վրա նշված գործոնների ազդեցությունը պարզելու համար կոռելյացիոն վերլուծության մեթոդով կատարել ենք հետազոտություն և բացահայտել յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը գյուղական տարաբնակեցումը բնութագրող ցուցանիշների, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի մարդաքանակի վրա: Վերջինս ինտեգրալ այն ցուցանիշն է, որն ընդհանրական ձևով արտահայտում է գյուղական տարաբնակեցման ընդհանուր պատկերը և գյուղական բնակավայրի զարգացման ու վերափոխման արդյունքը:

ՀՀ գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածաշրջանային ընդհանրական ցուցանիշների՝ *գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակի, գյուղական բնակչության թվի և գյուղական բնակավայրերի խտության վրա* առանձին գործոնների ազդեցության վերլուծությունը կատարել ենք տարածաշրջանների կտրվածքով, իսկ մնացած դեպքերում՝ հետազոտության առարկա են համարվել նույն այդ տարածաշրջանների մեջ մտնող գյուղական համայնքներն ու բնակավայրերը:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ տարածաշրջանների գյուղական բնակչության խտությունը սերտ կապ ունի դրանց տարածքում գյուղատնտեսական հողատարածքների մասնաբաժնի հետ: Դրանց միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը կազմում է 0,59: Դա նշանակում է, որ ՀՀ-ում, նրա առանձին տարածաշրջաններում, գյուղական բնակչության թիվը և խտությունն անմիջական, սերտ կապ ունի բնակավայրերի զարգացման հիմնական արտադրական բազայի՝ գյուղատնտեսական հողատարածքների մեծության հետ: Միաժամանակ պետք է նշել, որ առանձին տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հարաբերական մեծությունների և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակչության խտության ցուցանիշների միջև կապ գրեթե չկա: Պատճառն այն է, որ ՀՀ տարբեր տարածաշրջաններ ունեն ոչ

միայն ընդհանուր տարածքում գյուղատնտեսական հողատարածքների տարբեր տեսակարար կշիռներ, այլ նաև գյուղատնտեսական հողատարածքների կառուցվածքում մշակելի հողատարածքների, արոտավայրերի ու խոտհարքերի տարբեր չափաբաժիններ, որոնք տարբեր տարածաշրջաններում գտնվում են ծովի մակարդակից մեծ տարբերություններ ունեցող բարձրությունների վրա և ունեն հողակլիմայական պայմանների նկատելի տարբերություններ: Կոռեյացիոն կապ չկա նաև տարածաշրջանների գյուղատնտեսական հողատեսքերի մասնաբաժինների և այդ շրջանների գյուղական բնակչության թվաքանակի միջև: Սրա պատճառը ևս ՀՀ տարբեր տարածաշրջանների բնական և ագրոկլիմայական զգալիորեն մեծ տարբերություններ ունեցող պայմաններն են, որի հետևանքով դրանցում կարող են ձևավորվել և զարգանալ տարբեր մեծության և քանակի գյուղական բնակավայրեր (օրինակ՝ Արմավիրի և Ամասիայի տարածաշրջաններում գյուղատնտեսական հողատարածքների մասնաբաժինը կազմում է 67-ական տոկոս, սակայն Արմավիրն ունի 37 գյուղական բնակավայր, 2016 մարդ միջին մարդաքանակով, իսկ Ամասիան՝ 26 գյուղական բնակավայր, 276 մարդ միջին մարդաքանակով):

Ցանկացած տարածաշրջանում գյուղական տարածքների ու տարաբնակեցման համակարգի զարգացման և վերափոխման գործընթացները մեծապես կախված են նաև գյուղական բնակավայրերի խտությունից, որն արտահայտվում է 100 կմ² տարածքին կամ էլ 100 կմ² գյուղատնտեսական հողատարածքին բաժին ընկնող գյուղերի քանակով (երբեմն գյուղական բնակավայրերի խտությունն արտահայտում են գյուղական բնակավայրերի միջև միջին հեռավորությամբ):

ԳԳ-ում տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հարաբերական մեծությունների և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակավայրերի խտության միջև կոռեյացիոն կապ չկա: Դրա պատճառը հանրապետության տարբեր տարածաշրջաններում ագրոկլիմայական ռեսուրսների զգալիորեն մեծ տարբերություններն են, որոնք այս կամ այն տարածաշրջանում ստեղծում են տարբեր քանակի և մեծության գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման համար միանգամայն տարբեր նախադրյալներ: Օրինակ՝ Արտաշատի և Սևանի տարածաշրջաններն ունեն ընդհանուր տարածքում գյուղատնտեսական հողատարածքների գրեթե հավասար հարաբերական մեծություններ, սակայն Արտաշատի տարածաշրջանում գյուղատնտեսական հողատարածքների

հաշվով գյուղական բնակավայրերի խտությունը մոտ երեք անգամ գերազանցում է Սևանի տարածաշրջանի համապատասխան ցուցանիշին:

Հանրապետության գյուղական տարածքներն ու տարաբնակեցումը բնութագրող մյուս կարևորագույն ցուցանիշը գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունն է, որը բավական սերտ կապ ունի ՀՀ տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հարաբերական մեծությունների հետ: Դրանց միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը հավասար է 0,617-ի: Սա ցույց է տալիս, որ որքան մեծ է տվյալ տարածաշրջանում գյուղատնտեսական հողատարածքների տեսակարար կշիռը, այնքան շատ են և խիտ են տեղաբաշխված գյուղական բնակավայրերը:

ՀՀ տարածաշրջանների գյուղական տարածքներն ու տարաբնակեցման մյուս կարևոր բնութագրիչը՝ գյուղերի միջին մարդաքանակը, որոշակի կախվածություն ունի այդ տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների մեծությունների հետ, որը պայմանավորված է տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների կառուցվածքի, հողակլիմայական պայմանների և ծովի մակարդակից ունեցած բարձրությունների տարբերություններով: Վերջիններս ստեղծում են տարբեր մեծության գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման համար բնական և արտադրատնտեսական միանգամայն տարբեր պայմաններ:

Գիտագործնական առումով կարևոր և նաև գյուղական բնակավայրերի զարգացման և վերափոխման վրա ազդող գործոնների վերլուծությունն ըստ գյուղական համայնքների կամ բնակավայրերի: Դա հնարավորություն կտա բացահայտել տարաբնակեցման համակարգի սկզբնական օղակի միավորների վրա ազդող հիմնական գործոնները:

ՀՀ գյուղական բնակավայրերի զարգացման, վերափոխման և կատարելագործման գործում մեծ դեր ունի գյուղական համայնքների վարչական բյուջեի փաստացի եկամուտները: ՀՀ 37 տարածաշրջաններից 22-ում վարչական բյուջեի մեծության և գյուղական համայնքի բնակչության թվաքանակի միջև կոռելյացիոն կապի գործակիցը անցնում է 0, 90-ից, Ամասիայի տարածաշրջանում այդպիսի կապ չկա, իսկ մնացած տարածաշրջաններում այն տատանվում է 0,7-0,9-ի սահմաններում (աղ. 72):

Մեր հանրապետության գյուղական համայնքների ու բնակավայրերի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեն մշակելի հողատարածքները: Դրանց չափերից և արդյունավետ օգտագործումից է կախված գյուղական բնակավայրերի մարդաքանակը: Բացառությամբ Մեղրու, Մարտունու, Կո-

տայքի, Անիի, Ամասիայի և Բաղրամյանի տարածաշրջանների մյուսներում գյուղական համայնքների մշակելի հողատարածքների չափերի և գյուղերի մարդաքանակի միջև կոռելյացիոն անմիջական կապ կա (աղ. 72): ՀՀ 15 տարածաշրջաններում գյուղական համայնքների ու բնակավայրերի մարդաքանակը մեծապես կախված է ընդհանուր գյուղատնտեսական հողատարածքների չափերից (աղ. 72):

Չնայած լեռնային երկրներում ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացմանը զուգընթաց նվազում է բնակչության թիվը և խտությունը, սակայն ՀՀ-ում գյուղական համայնքների ծովի մակարդակից ունեցած բարձրության և գյուղերի մարդաքանակի միջև կապը թույլ է: Այդպիսի կապն առավել սերտ է Ամասիայի (0,82), Եղեգնաձորի (0,77), Վարդենիսի (0,74), Կոտայքի (0,60), Նաիրիի (0,63), Բաղրամյանի (0,69), Արարատի (0,56) և Ախուրյանի (0,57) տարածաշրջաններում: Անիի տարածաշրջանում այդպիսի կապը մոտ է հակադարձին, իսկ մնացած տարածաշրջաններում այն կամ շատ թույլ է կամ էլ բացակայում է (աղ. 72):

Ցանկացած շրջանում գյուղական տարածքների ու տարաբնակեցման վրա մեծ ազդեցություն են թողնում տարածքի ուրբանացման մակարդակը, քաղաքային բնակավայրերի թիվը և տարածաշրջանային ու տեղական կենտրոնների զարգացման մակարդակը: ՀՀ ժամանակակից գյուղական բնակավայրերի զարգացման վրա բավական երկարատև ժամանակաշրջան իրենց ազդեցությունն են թողել տարածաշրջանային կամ վարչական շրջանների կենտրոնները, որոնք այդ շրջանների սահմաններում կատարել են վարչական, տնտեսական, առողջապահական և մշակութային ոլորտների կազմակերպիչ կորիզի դեր: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ նախկին շրջկենտրոններից ունեցած հեռավորության և գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև կա որոշակի կապ: Հանրապետության տասնինը տարածաշրջանում տարածաշրջանային կենտրոնից ունեցած հեռավորության և գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև աստիճանային կոռելյացիայի գործակցի ցուցանիշները մեծ են 0,4-ից (աղ. 72):

ՀՀ-ի և առանձին տարածաշրջանների ու մարզերի գյուղական բնակավայրերի վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև մարզկենտրոնները: ՀՀ 18 տարածաշրջանում մարզկենտրոնից ունեցած հեռավորության և տարածաշրջանի գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև աստիճանային կոռելյացիայի մեծությունը տատանվում է 0,4-0,7-ի սահման-

ներում:

Այսպիսով, ՀՀ մարզկենտրոններում և նախկին շրջկենտրոններում վարչական գործառույթին զուգահեռ տնտեսական, սոցիալական, մշակութային, առողջապահական և ծառայությունների այլ ձևերի, ինչպես նաև ուրբանացման գործընթացների համաչափ զարգացումն էական դեր կունենա գյուղական տարածքների զարգացման ու առաջընթացի, տարաբնակեցման վերափոխման, կայունացման և կատարելագործման համար:

Աղյուսակ 72

ՀՀ գյուղական բնակավայրերի մարդաքանակի և բնական, արտադրատնտեսական, ֆինանսական, վարչատարածքային ու ուրբանացման գործոնների միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցներն ըստ տարածաշրջանների¹

Տարածաշրջանները	Կապը մշակելի հողատարածքների և գյուղելի մարդաքանակի միջև	Կապը գյուղատնտեսական հողատարածքների և գյուղելի մարդաքանակի միջև	Կապը գյուղական համայնքների վարչական բյուջեի և գյուղելի մարդաքանակի միջև	Կապը գյուղելի բացարձակ բարձրությունների և դրանց մարդաքանակի միջև	Կապը գյուղելի մարդաքանակի և նախկին շրջկենտրոնների ունեցած հեռավորություն միջև	Կապը գյուղելի մարդաքանակի և մարզկենտրոններից ունեցած հեռավորության միջև
1	2	3	4	5	6	7
Ախուրյանի	0,79	0,36	0,94	0,57	0,41	0,59
Ամասիայի	0,09	-0,42	0,13	0,82	0,32	0,70
Աշոցքի	0,78	0,30	0,77	0,06	0,44	-0,03
Արթիկի	0,51	0,67	0,96	-0,37	0,23	-0,10
Անի	0,09	0,69	0,88	-0,75	0,75	0,41
Աշտարակի	0,60	0,31	0,97	0,44	0,44	0,47
Ապարանի	0,57	0,46	0,97	0,18	-0,05	0,46
Արագածի	0,77	0,55	0,95	-0,29	0,04	-0,19

¹ Աղյուսակը կազմված է ՀՀ գյուղական համայնքների 2015 թ. դրությամբ բնակչության թվաքանակի, գյուղատնտեսական և մշակելի հողատարածքների, վարչական բյուջեի եկամուտների, նախկին շրջկենտրոններից և մարզկենտրոններից ունեցած հեռավորության տվյալների հիման վրա:

1	2	3	4	5	6	7
Թալիհի	0,48	0,53	0,94	0,06	0,28	0,42
Գորիսի	0,64	0,68	0,96	0,21	0,54	-0,40
Կապանի	0,38	0,47	0,86	0,12	0,29	0,29
Մեղրու	-0,03	0,23	0,73	0,59	0,21	-0,32
Սիսիանի	0,79	0,51	0,89	0,34	0,41	0,44
Իջևանի	0,57	0,48	0,98	0,29	0,43	0,43
Նոյեմբերյանի	0,92	0,77	0,95	-0,13	0,42	0,07
Տավուշի	0,57	0,59	0,98	0,02	-0,22	-0,45
Գուգարքի	0,75	0,56	0,92	-0,08	0,37	0,26
Թումանյանի	0,63	0,44	0,76	0,43	0,21	0,07
Սպիտակի	0,43	0,68	0,99	-0,14	0,19	0,05
Ստեփանավանի	0,76	0,21	0,95	0,15	0,07	0,41
Տաշիրի	0,82	0,25	0,93	-0,11	0,00	0,04
Կոտայքի	0,23	-0,06	0,84	0,60	0,43	0,43
Նաիրիի	0,46	-0,06	0,93	0,66	0,63	-0,36
Ջրազղանի	0,77	0,05	0,89	0,33	0,42	0,42
Գավառի	0,90	0,94	0,94	0,02	0,53	0,51
Կրասնոսելսկի	0,71	0,69	0,93	-0,26	0,44	0,43
Մարտունու	0,37	0,09	0,86	0,23	0,57	-0,10
Սևանի	0,89	0,67	0,80	0,21	0,43	0,02
Վարդենիսի	0,47	0,27	0,92	0,74	0,45	0,56
Արտաշատի	0,71	0,68	0,93	0,25	0,43	0,43
Արարատի	0,54	-0,22	0,96	0,56	0,55	0,68
Մասիսի	0,47	0,42	0,83	-0,30	0,24	0,00
Էջմիածնի	0,82	0,72	0,96	-0,29	-0,28	0,19
Արմավիրի	0,53	0,60	0,97	0,21	0,32	0,40
Բաղրամյանի	0,02	-0,72	0,90	0,69	0,29	0,40
Եղեգնաձորի	0,51	-0,29	0,94	0,77	0,63	0,61
Վայքի	0,74	0,44	0,77	0,03	0,29	0,02

ՀՀ-ի մեծ փոքր տարածք ունեցող երկրներում գյուղական տարածքների ու բնակավայրերի և տարաբնակեցման համակարգի զարգացման վրա իր նշանակալից ազդեցությունն է թողնում նաև երկիր մայրաքաղաքը: Այդ ազդեցությունն ավելի մեծ է լինում մայրաքաղաքային տարածաշրջանում և աստիճանաբար թուլանում է մայրաքաղաքից ունեցած հեռավորության ավելացմանը համեմատ:

ժամանակակից պայմաններում, երբ ՀՀ-ում աստիճանաբար զարգանում և խորանում են շուկայական տնտեսական հարաբերությունները, գյուղական տարածքների, տարաբնակեցման և առանձին բնակավայրերի զարգացման վրա իրենց ազդեցություն են թողնում նաև մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկաները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ բոլոր մարզերում գյուղական բնակավայրերի համար մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկայի դեր են կատարում մարզկենտրոնները և տարածաշրջանային կենտրոնները: Մայրաքաղաքին սահմանակից մարզերի առանձին գյուղերի համար այդպիսի գործառույթ է իրականացնում նաև Երևանը, իսկ որոշ դեպքերում նման դեր են կատարում տարածաշրջանային նշանակության քաղաքային բնակավայրերը և տեղական կենտրոնները: ՀՀ մարզկենտրոնները և տարածաշրջանային կենտրոնները, բացի վարչակազմակերպչական գործառույթից, գյուղական բնակավայրերի համար ունեն նաև արտադրատնտեսական և առևտրային կենտրոնի նշանակություն և մարզկենտրոններից ու տարածաշրջանային կենտրոններից գյուղական բնակավայրերի ունեցած հեռավորությունը կարևոր դեր ունի ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ տարաբնակեցման ողջ համակարգի զարգացման և վերափոխման համար:

Հետազոտության շնորհիվ ստացված արդյունքները թույլ են տալիս անել որոշակի եզրահանգումներ.

➤ շուկայական հարաբերությունների ժամանակակից պայմաններում գյուղական տարածքների զարգացումը և վերափոխումը ՀՀ տարբեր մարզերում, տարածաշրջաններում և գյուղական համայնքներում ու բնակավայրերում դրսևորվում են տարբեր կերպ՝ կախված դրանց աշխարհագրական դիրքից, բնատնտեսական առանձնահատկություններից, սոցիալ-ժողովրդագրական ու տարածաշրջանային իրավիճակից,

➤ ՀՀ տարածաշրջանների գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցանիշներից գյուղական բնակչության խտությունը և գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունը սերտ կապ ունեն տվյալ տարածաշրջանի գյուղատնտեսական հողատարածքների բացարձակ և հարաբերական մեծությունների հետ: Առանձին գյուղական բնակավայրերի և գյուղական տարաբնակեցման վերափոխումն ու կատարելագործումը նախ և առաջ պայմանավորված է գյուղատնտեսական հողատարածքների արդյունավետ օգտագործումից և գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումից,

➤ ՀՀ տարածաշրջանների մեծ մասում գյուղական բնակավայրերի մարդաքանակի և դրանց ծովի մակարդակից ունեցած բարձրության միջև կոռելյացիոն թույլ կապը կամ դրա բացակայությունը վկայում է գյուղական տարաբնակեցման վերափոխման և զարգացման գործում բնական գործոնների դերի աստիճանական նվազման և այլ գործոնների դերի մեծացման մասին,

➤ ՀՀ գյուղական բնակավայրերի բնակչության թվաքանակի ավելացումը, սոցիալական ու տնտեսական շատ խնդիրների լուծումը մեծապես կախված է դրանց բյուջեի փաստացի եկամուտներից և նպատակային օգտագործումից,

➤ եթե հանրապետության գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցանիշներից գյուղական բնակչության բացարձակ թիվը, խտությունը և գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունը սերտ կապ ունեն տարածաշրջանների ընդհանուր գյուղատնտեսական հողատարածքների մեծությունների հետ, ապա մյուս կարևորագույն ընդհանրական ցուցանիշը՝ գյուղական բնակավայրերի մարդաքանակը, մեծապես կախված է մշակելի հողատարածքների մեծությունից: Մշակելի հողատարածքների նպատակային օգտագործումն ու դրանց արդյունավետության բարձրացումն վճռորոշ դեր կունենա գյուղական բնակավայրերի կայունացման ու ամրապնդման և սոցիալ-տնտեսական առաջընթացի համար,

➤ ՀՀ բոլոր մարզերում և տարածաշրջաններում գյուղական տարաբնակեցման վերափոխումը և կատարելագործումը կախված է նաև մարզային և տարածաշրջանային կենտրոնների դերի բարձրացումից, համապատասխան տարաբնակեցման համակարգերում դրանց գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրականացումից, որը կհանգեցնի մարզկենտրոն-գյուղական բնակավայր, տարածաշրջանային կենտրոն - գյուղական բնակավայր կապերի ամրապնդմանն ու կայունացմանը տարաբնակեցման տեղական համակարգի զարգացմանը,

➤ շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում մարզկենտրոնները, տարածաշրջանային կենտրոնները, առանձին քաղաքային բնակավայրերը, տեղական նշանակության կենտրոններ ՀՀ գյուղական բնակավայրերի համար հանդիսանում են նաև մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկաներ: Այդ կենտրոնների և գյուղական բնակավայրերի միջև կայուն տրանսպորտային հաղորդակցության ապահովումն ու զարգացումը կնպաստի գյուղական բնակավայրերի տնտե-

սական բազայի ամրապնդմանը, ի վերջո՝ գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

7.3 Վարչատարածքային բաժանման կատարելագործումը որպես գյուղական տարածքների ու տարաբնակեցման զարգացման գործոն

Ցանկացած երկրում վարչատարածքային բաժանումը պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման իրականացման անհրաժեշտ ձևերից մեկն է: Դրա միջոցով ապահովվում է պետական իշխանության ու տեղական մարմինների տարածական բաշխումը և արդյունավետ կազմակերպումը: Վարչատարածքային միավորների սահմաններում տեղի է ունենում սոցիալ-տնտեսական և մշակութային շինարարության կոորդինացում ու կառավարման միավորում: Գիտականորեն հիմնավորված վարչատարածքային բաժանումը նպաստում է երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացին և արդյունավետ տարածաշրջանային քաղաքականություն իրականացնելու նախապայմանն է: Վարչական կարգավիճակը, դրանով պայմանավորված սոցիալ-տնտեսական, կազմակերպական և կառավարման առումով կապերը, բավականին կայուն են և զգալի դեր ունեն գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացներում:

Վարչատարածքային բաժանումն ու տարաբնակեցումն ունեն սերտ առնչություններ և փոխազդեցության մեջ են: Հասարակության տարածքային կազմակերպման այլ բաղադրիչների հետ համեմատած սրանք ավելի իներցիոն են (դանդաղ են ենթարկվում փոփոխությունների): Վարչական միավորների սահմանները, դրանցում կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծումը, վերջիններիս լիազորությունների հստակեցումը նշանակալից ազդեցություն են թողնում տարաբնակեցման վրա: Վարչական տարբեր ենթակարգության կենտրոնների միջև ձևավորվում են բազմաբնույթ կապեր (կառավարման, տնտեսաարտադրական, մշակութային բնույթի և բնակչության սպասարկման գծով): Վարչական կենտրոնների առանձնացումը, դրանցում համապատասխան «պարտադիր» օբյեկտների և ծառայությունների կենտրոնացումը, շրջակա (ենթակա) տարածքի հետ վարչական և սոցիալ-տնտեսական բնույթի կապերի հաստատումը տարաբնակեցման մեջ որոշակիորեն համակարգաստեղծ դեր են

կատարում: Իր ժամանակին ՀԽՍՀ քաղաքային և գյուղական խորհուրդների մի մասը ենթակա բնակավայրերի նկատմամբ իրականացնում էին տեղական կենտրոնների գործառույթներ:

Տասնյակ տարիներ լինելով ՀՀ-ի վարչատարածքային հիմնական միավորներ, գյուղական շրջանները վարչական սահմանների առկայության պայմաններում ստեղծել են տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների միասնական ցանց, մշակութային և սոցիալ-կենցաղային ծառայությունների ընդհանրություն: Նախկին շրջկենտրոնների մեծագույն մասը, ունենալով շրջանների սահմանների նկատմամբ կենտրոնական և տրանսպորտաաշխարհագրական բարենպաստ դիրք, ժամանակի ընթացքում ստեղծել են սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բավարար ներուժ, իսկ ենթակա բնակավայրերի հետ՝ համակարգաստեղծ կապեր [44]: Դրանց շնորհիվ նախկին վարչական շրջանների սահմաններում ձևավորվել էին շրջանային տարաբնակեցման համակարգեր, որտեղ վարչական կապերից բացի համակարգաստեղծ դեր են ունեցել նաև արտադրական, աշխատանքային և սպասարկման գծով կապերը: Ընդ որում, նախկին վարչական միավորների սահմաններում ձևավորված տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացները շարունակվում են նաև ժամանակակից վարչատարածքային բաժանման պայմաններում:

Լեռնային և կտրտված մակերևույթ ունեցող երկրներում վարչատարածքային բաժանման համակարգն առավել մեծ դեր ունի գյուղական տարաբնակեցման, առանձին գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման և վերափոխման համար:

ՀՀ տարաբնակեցման համակարգի և վարչատարածքային բաժանման առանձին հարցեր քննարկվել են Մ.Մանասյանի [45, 50] կողմից, իսկ Ս.Սելբունյանն առաջ է քաշել ՀՀ վարչատարածքային նոր բաժանման և վերջինիս օպտիմալացման հարցը՝ որպես ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր նախապայման [տես 61, 62, 63, 64]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ ներկայիս վարչատարածքային բաժանման սխեման մշակելիս հաշվի չեն առնվել երկու կարևորագույն հանգամանք.

➤ անցումային ժամանակաշրջանում նոր վարչատարածքային բաժանումը պետք է իրականացվեր ոչ թե վարչական միավորների խոշորացման, այլ համեմատաբար փոքր միավորների ստեղծման ճանապարհով,

➤ նոր վարչատարածքային բաժանման սխեմայում անտեսվել է

տնտեսական հատկանիշը: Չափի չեն առնվել առանձնացված վարչական միավորների տարածքի բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչության տարաբնակեցման առանձնահատկությունները, տնտեսության բնույթն ու զարգացման մակարդակը, հաղորդակցության ճանապարհների ուղղությունը, խտությունը և այլ գործոններ:

Եթե Արարատի և Արմավիրի մարզերում համեմատաբար հարթավայրային ռելիեֆը, արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների քիչ թե շատ զարգացած լինելը, մայրաքաղաքի մոտիկությունն ինչ որ չափով նպաստում են գյուղական տարածքների ու բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին և վարչատարածքային կառուցվածքը չի խոչընդոտում գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացմանը, ապա նույնը չի կարելի ասել մնացած, մասնավորապես՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի համար: Արարատի և Արմավիրի մարզերն ընդգրկում են վարչական նախկին երեքական միավոր և տարածքի մեծությամբ հանրապետությունում ամենափոքրերից են (Արարատի մարզը 7 քկմ-ով մեծ է Կոտայքից), իսկ Շիրակի, Լոռու, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերն ընդգրկում են վարչական նախկին 4-5 տարածաշրջան, որոնք առանձնանում են ռելիեֆի, կլիմայական պայմանների, աշխարհագրական դիրքի և սոցիալ-տնտեսական զարգացման յուրահատուկ գծերով: Եթե Արարատի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերն իրենց մարզկենտրոններից ունեն առավելագույնը մեկժամյա տրանսպորտային մատչելիություն և անհրաժեշտության դեպքում օգտվում են մայրաքաղաքի տարաբնույթ ծառայություններից, ապա նույնը չի կարելի ասել Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի հարյուրավոր գյուղական բնակավայրերի համար: Շիրակի մարզի Աշոցքի և Անասիայի տարածաշրջանների գյուղական տարածքներն ու բնակավայրերն առանձնանում են իրենց ոչ բարենպաստ բնակլիմայական պայմաններով, սահմանային աշխարհագրական դիրքով, տնտեսության մասնագիտացման և զարգացման ցածր մակարդակով, փոքր մարդաքանակով և տարաբնակեցման ոչ նպաստավոր այլ հատկանիշներով (առավել մանրամասն տե՛ս Շիրակի մարզ պարագրաֆում): Այդ տարածաշրջաններն ընկած են Աշոցքի բարձրադիր սարահարթում և Շիրակի լեռնաշղթայով բաժանված են Շիրակի դաշտից: Տարվա ձմեռային ժամանակահատվածում (որն այստեղ տևում է 5-6 ամիս) Անասիայի և Աշոցքի տարածաշրջանների շատ գյուղական բնակավայրեր մեծ դժվարություններ են ունենում մարզկենտ-

րոն Գյուճընը հետ տրանսպորտային կապ հաստատելու համար: Այս հանգամանքը և սոցիալ-տնտեսական մի շարք այլ հիմնախնդիրներ զգալիորեն խոչընդոտում են այդ տարածաշրջանների, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի զարգացմանը: Մեր կարծիքով նշված խնդրի լուծման ճանապարհին էական դեր կունենա նաև այդ տարածաշրջանների առանձնացումը Շիրակի մարզից և նոր վարչական միավորի՝ Աշոցքի մարզի ստեղծումն Ամասիա կենտրոնով: Դրա շնորհիվ Ամասիա գյուղը տարածաշրջանի գյուղական բնակավայրերի համար կդառնա տեղական կենտրոն, ձեռք կբերի տնտեսական, վարչական, մշակութային և սպասարկման բազմազան գործառույթներ և կնպաստի մնացած գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

Վարչատարածքային նման վերակազմման կարիք ունեն նաև Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի և Տավուշի մարզերը ևս, որոնք նույնպես առանձնանում են սահմանամերձ աշխարհագրական դիրքով, մակերևույթի խիստ կտրտվածությամբ և բարձրադիր դիրքով, գյուղական բնակավայրերի տեղագրական առանձնահատկություններով և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներով:

Համամիտ ենք այն կարծիքին, որ ներկայումս առավել հրատապ և հիմնավորված են վարչատարածքային վերակազմման հետևյալ փոփոխությունները [63,64].

➤ Սյունիքի մարզում Կապանի և Մեղրու տարածաշրջաններով ստեղծել նոր մարզ, իսկ Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններով՝ առանձին մարզ,

➤ Լոռու մարզից առանձնացնել Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջանները և ստեղծել նոր մարզ, իսկ Լոռու մարզի Թումանյանի և Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանները միավորել մեկ նոր վարչատարածքային միավորի սահմաններում,

➤ Կրասնոսելսկի տարածաշրջանը, որը տրանսպորտային մատչելիության առումով ավելի հարմար դիրք ունի Իջևանի հետ, միացնել Տավուշի մարզին,

➤ Գեղարքունիքի մարզից առանձնացնել Մարտունու և Վարդենիս տարածաշրջանները և ստեղծել նոր մարզ,

➤ Աշոցքի և Ամասիայի տարածաշրջաններով ստեղծել նոր՝ Աշոցքի մարզ, Ամասիա մարզկենտրոնով:

Վարչատարածքային այդպիսի վերակազմումների շնորհիվ նշված

մարզերի մեջ ընդգրկված, հատկապես, Մեղրու, Սիսիանի, Տաշիրի, Կրասնոսելսկի, Վարդենիսի, Նոյեմբերյանի և Տավուշի տարածաշրջանների սահմանամերձ և լեռնային տասնյակ գյուղական տարածքներ ու բնակավայրեր ձեռք կբերեն սոցիալ-տնտեսական զարգացման առավել նպաստավոր պայմաններ, կնվազի բնակչության միգրացիան այդ տարածաշրջանների գյուղական բնակավայրերից, առավել արդյունավետ կօգտագործվեն հարյուրավոր գյուղական բնակավայրերի ենթակայության տակ գտնվող տարածքային, հողային և աշխատանքային ռեսուրսները:

Այսպիսով, ՀՀ ներկայիս գործող վարչատարածքային բաժանման սխեման և նրա առաջին աստիճանի միավորները՝ մարզերը, ըստ եռթյան լիարժեքորեն չեն նպաստում իրենց ենթակայության տակ գտնվող գյուղական տարածքների ու բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Մինչդեռ, վարչատարածքային բաժանման կարևորագույն գործառույթներից է ոչ միայն պետական և տարածքային կառավարման իրականացումը տեղերում, այլ նաև առանձնացված վարչատարածքային միավորների ու բոլոր բնակավայրերի համալիրային սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելը:

ՀՀ վարչատարածքային բաժանման երկրորդ աստիճանի միավորները քաղաքային և գյուղական համայնքներն են, որոնք հանդիսանում են տարբերակեցման համակարգի սկզբնական բաղադրիչները: 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ 953 գյուղական բնակավայրերից 866-ը հանդիսանում էին գյուղական համայնքների կենտրոններ, իսկ 87 գյուղ ինքնուրույն համայնքներ չէին և գտնվում էին քաղաքային կամ գյուղական համայնքների ենթակայության տակ: Ինքնուրույն համայնք չհանդիսացող առավել մեծ թվով գյուղեր գտնվում են Սյունիքի (25 գյուղ), Շիրակի (12 գյուղ), Լոռվա (11 գյուղ) և Վայոց ձորի (10 գյուղ) մարզերում: Այդպիսի հնգական գյուղ կան Տավուշի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում, երկուական՝ Կոտայքի և Արարատի մարզերում, ընդամենը մեկ գյուղ Արմավիրի մարզում: Հանրապետությունում 9 գյուղ վարչական առումով ենթակա են քաղաքային բնակավայրերին:

Հայտնի է, որ ՀՀ հատկապես լեռնային և սահմանամերձ տարածաշրջանների գյուղական բնակավայրերն ունեն բազմազան տեղադիրք և մեծություն, սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության կենսագործունեության համար միանգամայն տարբեր պայմաններ: Դրանց բացահայտումն ու գնահատումը հնարավորություն կտա պարզել այդ տարածա-

շրջանների, ինչպես նաև գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, որոնք կօգտագործվեն հեռանկարային զարգացման ծրագրեր մշակելիս:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ բարձրլեռնային և սահմանամերձ տարածաշրջաններում տարաբնակեցման տեղական մակարդակով համակարգաստեղծ բնույթ է կրում առավելապես մարդկանց արտադրական գործունեությունը, իսկ կրթական, մշակութային, կենցաղային և սպասարկման այլ ոլորտներում թույլ են արտահայտված միջբնակավայրային կապերը, տարբեր տեսակի ծառայությունների փոխլրացումն ու ներդաշնակումը [57]: Այդպիսի տարածաշրջանների գյուղերի ամենօրյա օգտագործման ապրանքներով ու ծառայություններով ապահովվածության և գյուղերի բնակչության թվի աճի միջև կա ուղիղ կախվածություն: Բնակչության արտահոսք և թվի նվազումը է նկատվում առաջին անհրաժեշտության ապրանքներով ու ծառայություններով վատ ապահովված գյուղերից [նույն տեղում]: Դրանք առավելապես փոքր և միջին մարդաշատության գյուղերն են:

Հաշվի առնելով գյուղական համայնքների բնակչության կենսագործունեության պայմանների ձևավորման վրա գյուղական համայնքի բացարձակ բարձրությունը, հեռավորությունը մարզկենտրոնից, տրանսպորտային մայրուղիներից, բնակավայրի մարդաշատությունը, բնակչության ապահովվածությունը վարելահողերով և այգեգործական տարածքներով և բնակչության բյուջեի սեփական եկամուտները կատարվել է [44] ՀՀ գյուղական համայնքների բնակչության կենսագործունեության պայմանների գնահատումն: Ըստ այդմ՝ խիստ անբավարար պայմաններ ունեն 69 գյուղական համայնք, որից 33-ը գտնվում են Սյունիքի մարզում, իսկ մնացածները Արագածոտնի, Գեղարքունիքի և Լոռվա մարզերի լեռնային փոքր համայնքներ են: Լավ պայմաններ ունեն 95 գյուղական համայնք, որոնք ընկած են մայրաքաղաքային տարածաշրջանի Արարատի և Արմավիրի մարզերում: Շիրակի, Լոռվա և Տավուշի մարզերի գյուղական համայնքների կեսից ավելին ունեն բնակչության կենսագործունեության համար լավ և բավարար պայմաններ: Գյուղական համայնքների բնակչության կենսագործունեության պայմանների մեծ տարբերություններ կան բնատնտեսական բազմազան պայմաններ ունեցող Սյունիքի, Լոռվա և Վայոց ձորի մարզերում, իսկ Շիրակի և Գեղարքունիքի մարզերի գյուղական համայնքների բնակչության կենսագործունեության պայմանների խիստ մեծ տար-

բերություններ չկան [44]: ՀՀ գյուղական համայնքների զգալի մասը տարածական, ֆինանսական և ժողովրդագրական առումներով խիստ փոքր են, չեն ապահովում մարդկանց օրական կենսագործունեության լիարժեք ու արդյունավետ իրականացում և առաջարկվում է [44] գյուղական համայնքների խոշորացում, միջհամայնքային միավորումների ստեղծում, որոնք կնպաստեն բնակչության ամենօրյա կենսագործունեության համար բավարար պայմանների ստեղծմանը:

Փորձնական նպատակով ներկայումս հանրապետությունում ստեղծվել են Տաթևի, Դիլիջանի և Թումանյանի համայնքները: Դրանցից առաջինը ընդգրկում է Տաթև, Հալիձոր, Հարժիս, Շինուհայր, Սվարանց, Խոտ, Տանձատափ և Քաշունի գյուղերը, Դիլիջանի համայնքը (կենտրոնը Դիլիջան քաղաք), Թեղուտ, Գոշ, Աղվանավանք, Խաչարձան և Հովք գյուղերը, իսկ Թումանյանի համայնքը՝ Թումանյան, Մարց, Քարինջ, Լորատ, Շանուտ, Աթան և Ահնիձոր բնակավայրերը:

Անշուշտ, խոշոր գյուղերը կան էլ համայնքներն ավելի լայն հնարավորություններ ունեն բնակչության կենսագործունեության պահանջները բավարարելու, տնտեսական և սոցիալական առաջընթացի համար: Սակայն ՀՀ-ում գյուղական համայնքների թվի կրճատումը հղի է մի շարք բացասական հետևանքներով: Գտնում ենք, որ գյուղական համայնքների խոշորացման հարցերը քննարկելիս պետք է ելակետ ունենալ հետևյալ հանգամանքները.

➤ Արարատյան հարթավայրի, Շիրակի և Լոռվա դաշտերի, ինչպես նաև հարթավայրային մակերևույթ ունեցող այլ տարածքներում, գյուղական համայնքների խոշորացումը կարելի է համարել նպատակահարմար, եթե չկան դրան խանգարող տեղային առանձնահատկություններ և համայնքի մեջ մտնող գյուղերի բնակչությունը դեմ չէ: Այսպիսի համայնքի օրինակ է Էջմիածնի տարածաշրջանում Փարաքարի համայնքը, որը միավորում է Փարաքար և Թաիրով գյուղերը և ունի մոտ 9300 մարդ մշտական բնակչություն:

➤ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից իրավիճակի պայմաններում ցանկալի չէ Լեռնային և սահմանամերձ շրջաններում գյուղական համայնքների թվի կրճատումը: Այդպիսի տարածաշրջաններում փոքր գյուղերի համայնքի կարգավիճակի պահպանումը որոշակի դեր ունի այդ բնակավայրերի համար: Չնայած այդպիսի գյուղերում բնակչության կենսագործունեության ապահովումը կապված է մեծ դժվարությունների

հետ, սակայն այդ տարածաշրջանների և պետության ռազմավարական շահերը պահանջում են պետական դոտացիայի միջոցներով ապահովել լեռնային ու սահմանամերձ շրջանների գյուղական բնակավայրերի ամրացումն ու զարգացումը: Այդպիսի տարածաշրջաններում նույնիսկ հազարից ավելի բնակչություն ունեցող գյուղերի միավորումը մեկ համայնքի մեջ կարող է պատճառ դառնալ դրանց քայքայման համար: Ընդհուպ համայնքի ղեկավարի ընտրությունը, որի ժամանակ մեծ դեր ունեն նաև գյուղական բնակչության շրջանում ազգակցական և այլ կապեր, կարող է պատճառ դառնալ նոր ստեղծված համայնքի մեջ մտնող գյուղերից մեկնումեկի քայքայմանը: Հետևաբար՝ հարթավայրային տարածք և միջբնակավայրային համեմատաբար զարգացած տրանսպորտային ուղիներ և լեռնային ու կտրտված մակերևույթ, միջբնակավայրային թույլ կապեր ունեցող տարածաշրջանների գյուղական համայնքների խոշորացման հարցերի նկատմամբ պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում:

Այսպիսով, ՀՀ վարչատարածքային բաժանման վերակազմումն ու կատարելագործումը կարևորագույն խնդիր է: Այն կնպաստի ՀՀ, մասնավորապես՝ լեռնային ու սահմանամերձ գյուղական տարածքների ամրացմանը, դրանց սոցիալ-տնտեսական զարգացմանը և տարաբնակեցման համակարգի կատարելագործմանը:

7.4 Գյուղական տարածքների և բնակավայրերի համալիրային տիպայնացումը որպես դրանց հեռանկարային զարգացման հիմք

ՀՀ գյուղական բնակավայրերի զարգացման ժամանակակից միտումները բացահայտելու և տարաբնակեցման հեռանկարը պարզելու անհրաժեշտությունը պահանջում են կատարել համալիրային այնպիսի տիպայնացում, որի ժամանակ հաշվի կառնվեն բոլոր այն հատկանիշները, որոնք գտնվում են պատճառահետևանքային փոխադարձ կապի մեջ և հնարավորություն կտան որոշել յուրաքանչյուր բնակավայրի տեղը տարաբնակեցման ենթակարգային կառուցվածքում: Բացի այդ, այդպիսի տիպայնացումը թույլ է տալիս ստանալ տվյալներ գյուղական տարաբնակեցման հետագա կատարելագործումը գիտականորեն հիմնավորված պլանավորելու և բնակավայրերի զարգացման գործընթացները կառավարելու համար [93]:

Նկատի ունենալով գյուղական բնակավայրերի բացառիկ տեղը ՀՀ-ն և

տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև ՀՀ գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման առանձնահատուկ պայմանները, համալիրային տիպերի առանձնացման համար առավել նպատակահարմար է հաշվի առնել հետևյալ հիմնական ցուցանիշները. *1/ գյուղերի մարդաշատությունը, 2/ ապահովվածությունը հողային ռեսուրսներով, 3/ աշխարհագրական դիրքը և տեղադիրքը, 4/ հեռավորությունը քաղաքային բնակավայրերից, մարզկենտրոններից և տարածաշրջանային կենտրոններից, 5/ գյուղական համայնքներում բնակչության տարիքային կառուցվածքի ցուցանիշները , 6/ գյուղական համայնքների ապահովվածությունը տրանսպորտային ուղիներով և 7/ գյուղական բնակավայրերի տարածաշրջանային բնութագիրը* (դիրքն ըստ սահմանային գոտիների) [92]: Սրանք այն հիմնական բնութագրիչներն են, որոնց միասնությունը ամբողջական պատկերացում է տալիս ինչպես յուրաքանչյուր գյուղի կամ համայնքի, այնպես էլ դրանց առանձին խմբերի մասին:

ՀՀ գյուղական բնակավայրերի համալիրային տիպայնացման խնդրի լուծումը պահանջում է նախօրոք կատարել ըստ տարբեր հատկանիշների գյուղերի խմբավորում և բնութագրում:

Ըստ *մարդաքանակի* ՀՀ-ում կարելի է առանձնացնել մինչև 50, 51-100, 101-500, 501-1000, 1001-3000, 3001-5000 և 5000-ից ավելի մարդ ունեցող բնակավայրերի խմբեր, որոնք ունեն իրենց առանձնահատուկ կողմերը:

Լեռնային երկրներում գյուղական բնակավայրերի բնութագրման կարևոր հատկանիշներից է դրանց *աշխարհագրական դիրքը և տեղադիրքը*: Ըստ այդ հատկանիշի ՀՀ գյուղական բնակավայրերը բաժանվում են երեք խոշոր խմբի. *լեռնային, բարձր լեռնային և նախալեռնային-հարթավայրային*: ՀՀ գյուղական համայնքների շուրջ 65 %-ը նախալեռնահարթավայրային տեղադիրք ունեն (562 գյուղական համայնք), 21,6 %-ը՝ լեռնային են, իսկ 117 գյուղական համայնք՝ (13.5 %-ը) բարձր լեռնային են:

ՀՀ գյուղական համայնքների ու բնակավայրերի ըստ բնակչության թվաքանակի առանձնացված խմբերը միմյանցից էապես տարբերվում են նաև *վարչական և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներով կամ հողային ռեսուրսներով ապահովվածությամբ*: Մեկ բնակչի հաշվով հողային ռեսուրսներով առավել բարձր ապահովվածություն ունեն մինչև 100 բնակիչ ունեցող գյուղական համայնքները (17,3 հա) [20], իսկ առավել ցածր (0,73 հա)՝ 1500-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական հա-

մայնքները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում գյուղական համայնքների միջին մարդաքանակի ավելացմանը զուգընթաց նվազում է դրանց ապահովվածությունը հողային ռեսուրսներով մեկ բնակչի հաշվով: Մարզային կտրվածքով գյուղական մեկ բնակչի հաշվով հողային ռեսուրսներով առավել ցածր ապահովվածություն ունեն Արարատի (0,51 հա/ մեկ բնակիչ), Արմավիրի (0,58) և Կոտայքի (1,00), իսկ առավել բարձր Սյունիքի (4,77) և Վայոց ձորի (4, 03) մարզերը: Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Լոռու և Շիրակի մարզերի գյուղական համայնքներն ունեն համապատասխանաբար 1,12, 1,29, 1,65 1,78, 1,76 հա/ բնակիչ ապահովվածություն [20]:

Ցանկացած երկրի համար կարևոր դեր ունեն *բնակավայրերի տարածաշրջանային բնութագրերը*, որոնք զգալի ազդեցություն են թողնում բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: ՀՀ գյուղական համայնքների տարածաշրջանային բնութագրերի մասին ավելի հստակ պատկերացում է տալիս դրանց *բարձրաչափական և սահմանամերձության* համատեղ օգտագործմամբ ձևավորված տիպաբանությունը: Ըստ այդմ ՀՀ գյուղական համայնքների մոտ 50 %-ը նախալեռնային (կամ հարթավայրային) և ոչ սահմանամերձ են, և այդ առումով զարգացման համար ունեն նպաստավոր պայմաններ: ՀՀ գյուղական համայնքների 14,4 %-ը (125 համայնք) նախալեռնային-հարթավայրային և սահմանամերձ են, 18.1 %-ը՝ լեռնային ոչ սահմանամերձ, 3.5 %-ը՝ լեռնային սահմանամերձ, 11.4 %-ը՝ բարձրլեռնային ոչ սահմանամերձ, 2,1 %-ը՝ բարձրլեռնային սահմանամերձ: Վերջիններս համարվում են զարգացման համար առավել անբարենպաստ պայմաններում գտնվող գյուղական համայնքներ:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ-ի 37 տարածաշրջաններից 26-ն ունեն սահմանամերձ դիրք: Սահմանային առաջին գոտում կան 51, երկրորդ գոտում՝ 217, երրորդ գոտում՝ 208 գյուղ, իսկ այլ տարածքներում՝ 269 գյուղ [93]:

Առանձին տարածաշրջանների գյուղական տարածքների ու բնակավայրերի համար կարևոր նշանակություն ունի *քաղաքային բնակավայրերից ունեցած հեռավորությունը*: Դա իր ազդեցությունն է թողնում գյուղերի սպասարկման ոլորտի զարգացման, բարեկարգվածության աստիճանի, տրանսպորտային պայմանների, ճոճանակային միգրացիայի ինտենսիվության, բնակչության տեղեկացվության և այլ երևույթների վրա:

ՀՀ գյուղերի շուրջ 65 %-ը գտնվում են քաղաքների ազդեցության

ոլորտում: Հանրապետության գյուղական բնակչության 60 %-ից ավելին ապրում է մայրաքաղաքի, Գյումրու և Վանաձորի մերձակա գյուղերում: Հասկանալի է, որ որքան մեծ է քաղաքը, այնքան ավելի մեծ են շրջակա գյուղական բնակավայրերի վրա ազդեցության և զարգացման հնարավորությունները: ՀՀ հատկապես սահմանամերձ և հեռավոր տարածաշրջանների գյուղական բնակավայրերի զարգացման համար առանձնակի նշանակություն ունեն հեռավորությունը մարզկենտրոնից և տարածաշրջանային կենտրոններից:

ՀՀ գյուղական բնակավայրերն ըստ քաղաքային բնակավայրերից ունեցած հեռավորության և դրանցից ազդեցության աստիճանի կարելի է բաժանել երեք խմբի [12].

1. Մայրաքաղաք Երևանի և միաժամանակ մարզկենտրոնների ու այլ քաղաքների ազդեցության գոտում գտնվող գյուղական բնակավայրեր: Այս խմբի մեջ մտնում են Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի այն գյուղերը, որոնք ընկած են Երևանից մինչև 50 կմ շառավղային գոտում և ունեն Երևանի հետ մինչև մեկ ժամյա տրանսպորտային մատչելիություն: Սրանք առավելապես գյուղատնտեսական գործառույթ իրականացնող մեծ, խոշոր և գերխոշոր գյուղեր են, որոնց գլխավոր խնդիրներից մեկը Երևանին և մերձակա քաղաքային բնակավայրերին գյուղատնտեսական մթերքներով, իսկ արդյունաբերական ձեռնարկություններին՝ համապատասխան հումքով ապահովելն է: Այս գոտում գտնվող գյուղերի մեծ մասն ունեն աշխատանքային, արտադրական, մշակութային-կենցաղային սերտ կապեր Երևանի և մարզկենտրոնների հետ, իսկ շատ գյուղեր՝ անմիջական տրանսպորտային կապ մայրաքաղաքի հետ: Գյուղական բնակավայրերի խտությունն այս գոտում ամենաբարձրն է հանրապետությունում:

2. Մարզկենտրոնների և միաժամանակ տարածաշրջանային կենտրոնների ազդեցության գոտում գտնվող գյուղեր: Սրանք Գյումրի, Վանաձոր, Գավառ, Իջևան, Կապան, Եղեգնաձոր մարզկենտրոնների և տարածաշրջանային կենտրոնների ազդեցության գոտում գտնվող գյուղերն են, որոնք ընկած են նշված քաղաքներից առավելագույնը 25-30 կմ շառավղային գոտում: Նախորդի համեմատությամբ այստեղ գյուղերի արտադրական, աշխատանքային, կենցաղային և մշակութային կապերը մարզկենտրոնների և տարածաշրջանային կենտրոնների հետ համեմատաբար թույլ է, վերջիններիս արտադրատնտեսական ներուժի կրճատման պատճառով: Մինչև 1990-ական թվականներն այս գոտում, հատկապես Վանաձորի և

Գյուճարու մերձակա գյուղերը, զարգանում էին վերջիններիս արդյունաբերական զարգացման շնորհիվ՝ նպաստելով դրանց ազլոներացիաների ձևավորմանը: Ներկայումս այս գոտու գյուղերի և նշված քաղաքային բնակավայրերի միջև կապերը զարգանում են առավել մեծ չափով վարչական և սոցիալ-առողջապահական խնդիրների առումով, միաժամանակ մարդկենտրոնները և տարածաշրջանային կենտրոնները շրջակա գյուղական բնակավայրերի համար կատարում են կազմակերպիչ-կորիզի գործառույթ:

3. Տարածաշրջանային կենտրոնների և այլ քաղաքների ազդեցության գոտում գտնվող գյուղեր: Սրանց վրա տարածաշրջանային կենտրոնների ազդեցությունը համեմատաբար թույլ է: Քաղաքների հետ այս գյուղերի կապերի ինտենսիվությունը միատեսակ չէ և պայմանավորված է տեղանքի ռելիեֆային և տրանսպորտային պայմաններով: Բացի այդ, այս խմբի գյուղերի վրա իրենց ազդեցությունն ունեն մաս մերձակա այլ քաղաքային բնակավայրեր, որոնք չունենալով վարչական գործառույթ, սակայն որոշակի արտադրատնտեսական ներուժով և տարաբնույթ այլ գործառույթներով իրենց ազդեցությունն են թողնում շրջակա գյուղական բնակավայրերի վրա: Այդպիսիք են Չարենցավանը, Բյուրեղավանը, Ծաղկաձորը, Ջերմուկը, Քաջարանը, Ագարակը, Մեծամորը, Այրումը, Ախթալան և այլն:

Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական իրավիճակի կարևորագույն բնութագիր է **բնակչության տարիքային կառուցվածքի պատկերը**, որը հնարավորություն է տալիս գնահատել բնակավայրի աշխատանքային ռեսուրսներով ապահովվածությունը և ներուժը, բնակչության թվաքանակի աճի հնարավորությունները, պլանավորել սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներ: ՀՀ-ի գյուղական համայնքներում բնակչության տարիքային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակչության թվաքանակի ավելացմանը համապատասխան նվազում է 65 և ավելի տարիք ունեցող մարդկանց տեսակարար կշիռը: Մինչև 100 մարդ ունեցող գյուղական համայնքներում այդպիսիք միջինը կազմում են 26.3 %, որը երկու անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշին, իսկ 1500-ից ավելի մարդ ունեցող գյուղական համայնքներում՝ 12 % [20]: Սա վկայում է փոքր գյուղական համայնքների բնակչության ծերանալու մասին: Գյուղական համայնքների բնակչության թվաքանակի ավելացմանը համապատասխան ավելանում է աշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշիռը: Ամենաբարձր ցուցանիշն ունեն (63.19 %) 1500-ից ավելի մարդ ունեցող գյուղական համայնքները, որը վկայում է խոշոր գյուղական

համայնքների զարգացման ավելի մեծ հնարավորությունների մասին: Տարիքային մյուս խմբերում (0-5 տարեկան և 6-15 տարեկան) գյուղական համայնքների բնակչության թվաքանակի փոփոխման հետ կապված որոշակի օրինաչափություն չի դիտվում: Միայն փաստենք, որ 0-15 տարեկան բնակչության տեսակարար կշիռն ամենացածրը մինչև 100 մարդ ունեցող համայնքներում է, որը ևս վկայում է այդ կարգի գյուղերում բնակչության միջին թվի կրճատման մասին [20]:

Գյուղական բնակավայրերի զարգացման կարևոր գործառույթներից է **ենթակառուցվածքներով ապահովվածությունը**: ՀՀ գյուղական համայնքների ենթակառուցվածքների կազմում առանձնահատուկ դեր ունեն ճանապարհները: Դրանց վատ վիճակը հանգեցնում է գյուղական համայնքների արտադրանքի իրացման բարդությունների և զգալի կորուստների: Գյուղական համայնքներում բիզնեսի զարգացումը պայմանավորված է նաև քիչ թե շատ բարվոք ճանապարհների առկայությամբ, որը հնարավորություն է ստեղծում տնտեսության զարգացման և աղքատության հաղթահարման համար:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ գյուղական համայնքների 24.6 %-ը մայրուղուն և այլ համայնքներին միացնող ճանապարհների տեսակետից ունի շատ վատ, 31.7 %-ը՝ վատ, 35.1 %-ը՝ միջին, 8.2 %-ը լավ և 0.0 %-ը գերազանց վիճակ [20]: Ըստ բնակչության թվաքանակի ճանապարհային ապահովվածության լավ և միջին վիճակի առավել բարձր ցուցանիշ ունեն 3501-5000 մարդ ունեցող գյուղական համայնքները (76.3%): Հանրապետության 116 գյուղական համայնքներում ճանապարհներն անանցանելի են ծնուն ամիսներին, որոնք առավել մեծ թիվ են կազմում Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի և Շիրակի մարզերում: Հանրապետության ներհամայնքային ճանապարհների վիճակը նույնպես բավարար գնահատել չի կարելի: Գյուղական 279 համայնքի ներքին ճանապարհներն ընդհանրապես պինդ ծածկույթ չունեն, 421 համայնքում ճանապարհները հիմնականում ծածկույթ չունեն և միայն 12 համայնքներում բոլոր ճանապարհները ասֆալտապատ են: Տավուշի և Վայոց ձորի մարզերում այդպիսի համայնքներ ընդհանրապես չկան, իսկ մյուս մարզերում դրանք խիստ սահմանափակ են (1-4 համայնք): Ներհամայնքային ճանապարհները բարվոք վիճակ ունեն ՀՀ-ի գյուղական համայնքների միայն 20 %-ը [20]:

ՀՀ գյուղական համայնքների մոտ 30 %-ի (241 համայնք) տարածքով

չեն անցնում միջհամայնքային կամ ներհանրապետական հասարակական տրանսպորտի միջոցներ՝ այսինքն այդ համայնքների համար մատչելի չեն հասարակական տրանսպորտի միջոցները և դրանցից օգտվելու համար բնակիչները պետք է անցնեն 3-ից մինչև 20 կմ ճանապարհ: Հանրապետության 51 գյուղական համայնք բոլոր օրերին տրանսպորտ չունեն [20]:

Ընդհանրացնելով կատարված վերլուծության արդյունքները կարող ենք առանձնացնել ՀՀ գյուղական բնակավայրերի (համայնքների) համալիրային 7 տիպ:

Առաջինը մինչև 100 մարդ ունեցող մանր գյուղական բնակավայրերի տիպն է, որոնք կազմում են 74 բնակավայր կամ ՀՀ բնակելի գյուղերի 8.1 %-ը: Սրանք առավել մեծ թիվ են կազմում Սյունիքի (36 գյուղ), Շիրակի (12) և Լոռվա (12 գյուղ) մարզերում: Դրանց մի մասը հանդիսանում են ինքնուրույն համայնքներ և կատարում են նաև վարչական գործառույթ, մնացածները մտնում են գյուղական այլ համայնքների կազմի մեջ: Առավելապես ունեն գյուղատնտեսական նշանակություն, իսկ որոշներն էլ ժամանակին ստեղծվել են երկաթուղային կայարաններին, անտառտնտեսություններին, օդերևութաբանական կայաններին և այլ կառույցներին կից: Ունեն բարեկարգվածության ցածր մակարդակ, տրանսպորտային վատ ապահովվածություն: Շիրակի մարզում այդպիսի գյուղերն առավելապես լեռնային բնակավայրեր են (բացառությամբ Մայիսյան, Ախուրյան, Ջաջուռ ե/կ կից ավանների), իսկ Սյունիքի և Լոռվա մարզերում դրանք ունեն բարձրաչափական տարբեր տեղադիրք և ընկած են ծովի մակարդակից 900-ից մինչև 2100 մ բարձրությունների վրա: Տարաբնույթ ծառայությունների և կենցաղային սպասարկման տեսակետից այս խմբի գյուղերն ամբողջությամբ կախված են մերձակա ավելի մեծ գյուղերից (համայնքային կենտրոններից) կամ էլ քաղաքային բնակավայրերից: Մեկ բնակչի հաշվով ապահովվածությունը հողային ռեսուրսներով հանրապետության միջինից բարձր է ավելի քան 10 անգամ:

Աշխարհագրական ոչ բարենպաստ դիրքի ու տեղադիրքի և տրանսպորտային վատ ապահովվածության պատճառով այս տիպի գյուղերի մեծ մասի վրա շատ թույլ է կամ գրեթե բացակայում է մարզկենտրոնների կամ այլ քաղաքների ազդեցությունը: Տարածաշրջանային նշանակության առումով առանձին գյուղեր համարվում են սահմանամերձ: Այս տիպի գյուղեր չկան Արարատի և Արմավիրի մարզերում, իսկ մնացած մարզերում՝ 1-5 (աղ.9):

Երկրորդ 101-200 մարդ ունեցող փոքր գյուղերի տիպն է, որոնք կազմում են ՀՀ բնակելի գյուղերի 8.4 %-ը (77 գյուղ): Այս տիպի գյուղեր կան բոլոր մարզերում, սակայն դրանք առավել մեծ թիվ են կազմում Սյունիքի (21), Լոռու (14), Արագածոտնի (12) և Շիրակի (10) մարզերում (աղ. 9): Սրանք առավելապես գյուղատնտեսական գործառույթ իրականացնող և մեծամասամբ համայնքի կարգավիճակ ունեցող բնակավայրեր են: Շիրակի մարզում այս տիպի գյուղերը տարածված են հիմնականում Աշոցքի սարահարթում՝ Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, ունեն գլխավորապես անասնապահական մասնագիտացում և բարձր լեռնային բնակավայրեր են: Սյունիքի մարզում դրանք մեծ թիվ են կազմում Կապանի և Սիսիանի տարածաշրջաններում: Սիսիանի տարածաշրջանում դրանք հիմնականում լեռնային են, իսկ Կապանում՝ ունեն աշխարհագրական դիրքի և տեղադիրքի բազմազանություն: Տարածաշրջանային առումով դրանց մեծ մասը սահմանամերձ բնակավայրեր են: Լոռու մարզում այս տիպի գյուղերի մեծ մասը տարածված են Տաշիրի և Թումանյանի տարածաշրջանում և ունեն անասնապահական-երկրագործական մասնագիտացում, Արագածոտնի մարզում՝ անասնապահական-այգեգործական և ոչխարաբուծական:

Գյուղական բնակավայրերի այս խումբը ևս առանձնանում է մեկ բնակչի հաշվով հողային ռեսուրսների առավել բարձր ապահովվածությամբ, տարաբնույթ ծառայությունները և կենցաղային սպասարկումն իրականացվում է մերձակա ավելի խոշոր գյուղերի կամ համայնքային կենտրոնների կողմից, թույլ է կապը մարզկենտրոնների և քաղաքային այլ բնակավայրերի հետ:

Երրորդ տիպին են պատկանում 201-500 մարդ ունեցող գյուղերը, որոնք կազմում են ՀՀ գյուղերի գրեթե 18.2 %-ը (166 գյուղ): Սրանց ճնշող մեծամասնությունը նույնպես միագործառութային է: Նախորդ երկուսից տարբերվում են տրանսպորտային քիչ թե շատ լավ և կայուն պայմաններով, որը նպաստում է գյուղերի տնտեսաարտադրական, սոցիալական, մշակութային և կենցաղային սպասարկման հարցերի կազմակերպմանը: Հիմնականում համայնքային կենտրոններ են: Ունեն հողօգտագործման և տնտեսական զարգացման ավելի լավ հնարավորություններ քան նախորդները, սակայն վերջին երկու տասնամյակում ստեղծված սոցիալ-տնտեսական և անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակի պատճառով այս տիպի գյուղերի զգալի մասն անցել է նախորդ խումբը: Տարածման

հիմնական շրջաններն են նախալեռնային և լեռնային շրջանները և շատ քիչ են Արարատի և Արմավիրի մարզերում (աղ.9): Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու և Վայոց ձորի մարզերում և Սիսիանի տարածաշրջանում այս տիպի գյուղական բնակավայրերը մեծամասամբ լեռնային և բարձրլեռնային են, իսկ դրանց մի մասն էլ սահմանամերձ են: Տավուշի մարզում և Կապանի ու Մեղրու տարածաշրջաններում այս տիպի գյուղերն ունեն նախալեռնային հարթավայրային տեղադիրք, տարածաշրջանային բնութագրի առումով՝ սահմանամերձ:

Վերջին երկու տասնամյակում այս տիպի գյուղերում նկատելիորեն փոխվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքը՝ ավելացել է մեծահասակ բնակչության և միայն ծերերից բաղկացած ընտանիքների տեսակարար կշիռը: Սրանց սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտում են ոչ նպաստավոր աշխարհագրական դիրքը, մարզկենտրոններից և քաղաքային բնակավայրերից ունեցած համեմատաբար մեծ հեռավորությունը և վերջիններիս հետ թույլ կապը: Արագածոտնի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում ձմեռային ամիսներին այս գյուղերից մի մասն ունենում են տրանսպորտային կապի խնդիրներ (ճանապարհները դառնում են անանցանելի):

Չորրորդ տիպը 501-1000 մարդ ունեցող գյուղերն են, որոնք թվաքանակով 11-ով գերազանցում են նախորդին: Առավել մեծ տարածում ունեն Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Սյունիքի և Գեղարքունիքի լեռնային և բարձրլեռնային շրջաններում, սահմանափակ տարածում՝ Արմավիրի և Վայոց ձորի մարզերում: Առավելապես գյուղատնտեսական գործառույթ իրականացնող այս գյուղերը միաժամանակ նաև համայնքային վարչական կենտրոններ են: Գտնվելով առավել նպաստավոր աշխարհագրական, տեղադիրքային և տրանսպորտային պայմաններում այս տիպի գյուղերի մի մասն իրականացնում է նաև սպասարկման որոշ գործառույթներ, սակայն մշակութային և կենցաղային սպասարկման առումով զգալիորեն կախված են մերձակա խոշոր գյուղերից և քաղաքային բնակավայրերից: Եթե նախկինում այս խմբի բնակավայրերի որոշ մասը զարգանալով համալրում էր հաջորդ գյուղերի խումբը, ապա ստեղծված սոցիալ ժողովրդագրական և տնտեսաարտադրական արդի իրավիճակի պատճառով վերջին երկու տասնամյակում այս տիպի գյուղական բնակավայրերից տասնյակներն անցել են նախորդ խումբը և 1970-ական թվականների համեմատությամբ մոտ 10 %-ով նվազել է այս տիպի գյուղերի տեսակարար կշիռը 33-ում:

Արագածոտնի, Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում այս խմբի գյուղերն ունեն մեծամասամբ անասնապահական-երկրագործական ուղղվածություն, իսկ մնացած շրջաններում՝ այգեգործական-տավարաբուծական: Սոցիալ-տնտեսական զարգացման և առաջընթացի համար ներկայիս պայմաններում խոչընդոտող գործոններ են հանդիսանում գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման ոչ բարձր արդյունավետությունը, մարզկենտրոնների և քաղաքային այլ բնակավայրերի ազդեցության թուլությունը, առկա ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակը և ենթակառուցվածքային տարրերի ոչ բավարար զարգացվածությունը:

Պինդերորդը 1001-3000 մարդ ունեցող գյուղերն են, որոնք կազմում են 33 գյուղական բնակավայրերի 34 %-ից ավելին: Սրանց շուրջ 36 %-ն գտնվում են Արարատի և Արմավիրի մարզերում, իսկ 49.2 %-ը՝ Արարատի, Արմավիրի և Շիրակի մարզերում: Քիչ են Սյունիքի մարզում: Առավելապես ընկած են մայրաքաղաք Երևանի, մարզկենտրոնների և քաղաքային այլ բնակավայրերի ազդեցության գոտում (մայրուղիների, ջրանցքների երկարությամբ կամ դրանց մերձակայքում), հիմնականում հարթավայրային և նախալեռնային-հարթավայրային տարածքներում (Արարատյան, Շիրակի և Լոռվա դաշտերում), իսկ Գեղարքունիքի, Կոտայքի և Արագածոտնի մարզերում՝ նաև լեռնային և բարձր լեռնային շրջաններում: Շատ գյուղական համայնքներ գյուղատնտեսական և վարչական գործառույթից բացի իրականացնում են սպասարկման, սոցիալ-մշակութային, առողջապահական և այլ գործառույթներ: Գյուղերի մի մասում խորհրդային տարիներին ստեղծվել էին արտադրական-տնտեսական կառույցներ և արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր, որոնք ներկայումս հիմնականում չեն գործում: Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերի որոշ գյուղերում գործում են գյուղատնտեսական հումքի ընդունման և վերամշակման ձեռնարկություններ: Վերջին երկու տասնամյակում այս գյուղերում լիարժեք չեն օգտագործվում առկա տնտեսական բազան և մարդկային ռեսուրսները, ինչը հանգեցրել է գյուղերի միջին մարդաշատության նվազմանը: Եթե 1970-ական թվականներին սրանց բաժին էր ընկնում 33 գյուղական բնակչության 53-54 %-ը, ապա ներկայումս՝ 45 %-ը:

Այս տիպի գյուղական բնակավայրերի զգալի մասն ունեն հատակագծման և կառուցապատման գլխավոր սխեմաներ, գազամատակարարում, ջրմուղ և կոյուղի, բարեկարգման մակարդակը բավարար է: Կառուցա-

պատման համար բնորոշ է բազմահարկ տների և հասարակական շենքերի զգալի տեսակարար կշիռը: Գյուղերի մեծ մասը մշտական տրանսպորտային կապ ունեն մարզկենտրոնների, իսկ որոշ մասն էլ՝ Երևանի հետ: Տարածաշրջանային առումով առավել մեծ թիվ են կազմում ոչ սահմանափակ գյուղական բնակավայրերը:

Վեցերորդ տիպին են պատկանում 3001-5000 մարդ ունեցող գյուղական համայնքները, որոնք թվաքանակով 72-ն են (7.9 %): Բացակայում են Սյունիքի և Վայոց ձորի մարզերում և առավել մեծ թվաքանակ ունեն Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում: Սրանք հիմնականում բազմագործառույթային գյուղական համայնքներ են, ունեն նպաստավոր աշխարհագրական դիրք և տեղադիրք, կառուցապատման և բարեկարգման պայմանները համեմատաբար բարենպաստ են: Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերում, բացառությամբ Բյուրական, Արագած, Կարբի և Կոշ գյուղերի, մնացածները հարթավայրային գյուղեր են, ծովի մակարդակից մոտ 850-ից 1100 մ բարձրությունների վրա: Ոչ սահմանամերձ են և ունեն խաղողագործական, այգեգործական և բանջարաբուծական մասնագիտացում: Մի շարք գյուղերում կան գյուղատնտեսական հումքի մթերման և վերամշակման ձեռնարկություններ: Շիրակում, Կոտայքում և Գեղարքունիքում դրանք հիմնականում նախալեռնահարթավայրային և լեռնային տեղադիրք ունեն՝ հացահատիկայինների, կարտոֆիլագործության և տավարաբուծության ճյուղերի մասնագիտացումով: Մինչև 1990-ական թվականների կեսերը սրանցից շատերը գյուղատնտեսության և արդյունաբերության որոշ ճյուղերի ինտեգրացման շնորհիվ ձեռք էին բերել ագրարային-արդյունաբերական բնակավայրերին բնորոշ գծեր՝ դառնալով կոլտնտեսային և սովխոզային խոշոր բանավաններ, իրենց ենթակառուցվածքային համապատասխան տարրերով: Ներկայումս սրանք կառուցապատվում են մշակված գլխավոր հատակագծերին համապատասխան: Ունեն մշակույթի ժամանակակից տներ, բուժհիմնարկներ, առևտրի և սպասարկման այլ ծառայություններ: Շատ դեպքերում շրջակա ավելի փոքր բնակավայրերի համար հանդիսանում են միջհամայնքային սպասարկման տեղական կենտրոններ:

Ներկայումս գյուղական բնակավայրերի այս տիպի համար սոցիալ-տնտեսական կարևորագույն հիմնախնդիր է համարվում խորհրդային տարիներին ստեղծված արտադրատնտեսական հզոր ներուժի վերականգնումը՝ գյուղատնտեսության ինտենսիվացումը և հողային ռեսուրսների

արդյունավետ օգտագործումը, կրթական, առողջապահական, մշակութային, կենցաղապասարկման և այլ հաստատությունների գործունեության լիարժեք վերականգնումը և այդ ամենի շնորհիվ՝ աշխատատեղերի ստեղծումը: Հակառակ դեպքում դրանց զգալի մասը կկորցնի իր գլխավոր արտադրական ներուժի՝ մարդկային ռեսուրսների մի մասը և կունենան ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներ:

Վերջին՝ յոթերորդ տիպին են պատկանում 5000-ից ավելի մարդ ունեցող գյուղական բնակավայրերը, որոնք թվաքանակով շատ չեն (34), սակայն դրանց բաժին է ընկնում ՀՀ գյուղական բնակչության 17.7 %-ից ավելին: Այդպիսի գյուղեր չկան Սյունիքի և Տավուշի մարզերում, իսկ առավել մեծ թիվ են կազմում Գեղարքունիքում, Կոտայքում և Արարատում: Դրանցից Փարաքար, Այնթափ, Նոր Խարբերդ, Մխչյան, Առինջ, Ջովունի, Նոր Գեղի, Պռոշյան, Ջրվեժ, Քասախ և Օշական համայնքներից որոշներն ընկած են մայրաքաղաքի անմիջական մերձակայքում և հեռանկարում կարող են դառնալ Երևանի թաղամասեր, իսկ մյուսները գտնվում են Երևանից 10-15 կմ շառավղային գոտում: Հասկանալի է, որ այս բնակավայրերի զարգացման վրա էական է Երևանի ազդեցությունը: Արագածավան, Նոր Խարբերդ, Գուգարք և Ախուրյան գերխոշոր գյուղերից առաջին երկուսն ունեցել են քաղաքատիպ ավանի կարգավիճակ, իսկ վերջին երկուսը եղել են շրջկենտրոններ և այժմ ևս որոշակիորեն պահպանում են տարածաշրջանային կենտրոնների այդ կարգավիճակը՝ հանդիսանալով սպասարկման տեղական կենտրոններ և տարաբնակեցման հենակետեր շրջակա գյուղական բնակավայրերի համար:

Արարատի և Արմավիրի մարզերի մնացած գյուղերը (Արարատ, Ավշար, Ոսկետափ, Մրգաշատ, Նալբանդյան, Սարդարապատ), չնայած գտնվում են մայրաքաղաքից ավելի մեծ հեռավորության վրա, սակայն ունենալով նպաստավոր աշխարհագրական դիրք (ընկած են գլխավոր մայրուղիների վրա կամ դրանց մերձակայքում, գտնվում են տարածաշրջանային կենտրոններից և մարզկենտրոններից ոչ մեծ հեռավորության վրա) և ոռոգելի երկրագործության համար առավել բարենպաստ ագրոկլիմայական ռեսուրսներ ունեցող տարածքներում, օգտվելով նաև մերձակա քաղաքային բնակավայրերի (Արարատ, Արմավիր) արդյունաբերական ներուժի հնարավորություններից, դարձել են գերխոշոր գյուղական բնակավայրեր:

Գեղարքունիքի մարզի բոլոր 12 գյուղերը գերխոշոր են դարձել ոչ միայն նպաստավոր դիրքի և ագրոկլիմայական համեմատաբար բարե-

նպաստ ռեսուրսների, այլև Սևանա լճի ձկնային ռեսուրսների, հանրապետության մյուս տարածաշրջանների համեմատությամբ գյուղական բնակչության բնական առավել բարձր աճի և դեռևս խորհրդային տարիներին (1960-ական թվականներից սկսած) ձևավորված և այժմ էլ շարունակվող արտագնա աշխատանքից բնակչության որոշ հատվածի վաստակած եկամուտների շնորհիվ: Այս խմբի մնացած բնակավայրերի (Մալիշկա, Մեծավան, Օձուն, Գառնի, Ագատան) համար ևս իրենց կարևոր դերն են ունեցել նպաստավոր աշխարհագրական դիրքը և բնատնտեսական ներուժի բաղադրիչները: Սակայն վերջիններիս համար պակաս կարևոր նշանակություն չի ունեցել նաև պատմական գործոնը:

Չնայած որ ՀՀ-ի գերխոշոր գյուղական համայնքները գտնվում են բարձրաչափական տարբեր տեղադիրքերում (ծովի մակարդակից 825-ից 2100 բարձրությունների վրա), սակայն դրանք ընկած են հարթավայրային կամ բլրահարթավայրային մակերևույթի վրա և համարվում են նախալեռնահարթավայրային, լեռնային և բարձրլեռնային համայնքներ: Այս տիպի գյուղերում մեկ շնչի հաշվով հողային ռեսուրսներով ապահովվածությունն ամենացածր է հանրապետությունում և ՀՀ միջին ցուցանիշից պակաս է մոտ 2 անգամ: Տարածաշրջանային նշանակության առումով դրանք բոլորն էլ ոչ սահմանամերձ բնակավայրեր են:

Շուկայական տնտեսական հարաբերությունների անցնելուց հետո սոցիալ-տնտեսական առավել խոշորամասշտաբ հիմնախնդիրներ են առաջացել ՀՀ գյուղական բնակավայրերի այս տիպում: Պլանային-պետական տնտեսական համակարգի պայմաններում ձևավորված արտադրատնտեսական կառույցների և ենթակառուցվածքային տարրերի գործունեության խթանումն էականորեն նվազեցրել է այս տիպի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական ներուժի օգտագործման հնարավորությունները. գրեթե չեն գործում խորհրդային տարիներին ստեղծված արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղերը, էականորեն նվազել է գյուղատնտեսական արտադրության ինտենսիվության մակարդակը և արդյունավետությունը, ոչ լիարժեքորեն կամ մասամբ են գործում սոցիալ-մշակութային և առողջապահական ծառայությունների ոլորտի հաստատությունները: Եթե մինչև 1990-ական թվականներն այս տիպի գյուղերի բնակչության զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսության բաժինը չէր անցնում 50 %-ից, ապա այժմ այն անցնում է 80 %-ից, [20] և խիստ նվազել է տնտեսության մնացած ոլորտներում զբաղվածների տեսակարար

կշիռը: Էականորեն մեծացել է գյուղական համայնքների այս խմբում բնակչության մշտական և առկա թվաքանակի տարբերությունը (առանձին գյուղերում այն հասնում է 1500-2000 մարդու): Այս ամենը նպաստում են նշված գյուղերից արտագնացության և արտագաղթի ծավալների մեծացմանը, բնակչության սեռատարիքային կառուցվածքի խախտմանը և սոցիալ-տնտեսական առկա հիմնախնդիրների խորացմանը:

Կատարված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ.

1. ՀՀ-ի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական համալիրային տիպերի առանձնացումը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել գյուղական տարաբնակեցման մեջ բնակավայրերի առանձին խմբերին բնորոշ սոցիալ-տնտեսական բնութագրիչների և առկա խնդիրների մասին,

2. առաջիկա տարիների ընթացքում գյուղական բնակավայրերում տեղի ունեցող բազմաբնույթ տեղաշարժերը կարող են փոփոխություններ մտցնել վերը նշված տիպերի բնութագրական առանձնահատուկ կողմերի մեջ, որոնց ուսումնասիրումը թույլ կտա բացահայտել գյուղական բնակավայրերի առանձին տիպերի և ողջ գյուղական տարաբնակեցման մեջ տեղի ունեցող գործընթացների էությունը և զարգացման միտումները,

3. շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորումը զգալի չափով փոխել է ՀՀ գյուղական բնակավայրերի տարբեր խմբերին բնորոշ սոցիալ-տնտեսական պատկերը և ծնել հիմնախնդիրներ, որոնց լուծումից է կախված գյուղական բնակավայրերի զարգացման հեռանկարը,

4. ՀՀ գյուղական բնակավայրերի համալիրային սոցիալ-տնտեսական տիպերի առանձնացումը հանդիսանում է հիմք, որի վրա հենվելով կարելի է նշակել և իրականացնել գյուղական տարաբնակեցման զարգացման գործընթացների կազմակերպման և կառավարման գիտականորեն հիմնավորված ծրագիր:

7.5 Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը և տարաբնակեցման կատարելագործումը որպես ՀՀ տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կայուն զարգացման նախադրյալ

Մարդու կողմից օգտագործվող բնական ռեսուրսների շարքում կարևոր տեղ ունի տարածքը: Դրա օգտագործումն ունի բազմակողմանի բնույթ, քանի որ մարդու արտադրական գործունեության ցանկացած ձև կապված է տարածքի օգտագործման հետ: Տարածքն օգտագործվում է ոչ միայն գյուղատնտեսական և արտադրական նպատակների, այլ նաև քաղաքային ու գյուղական բնակավայրերի և նյութական այլ օբյեկտների անմիջական տեղաբաշխման համար: Որքան մեծ են տարածքի չափերը, այնքան բազմազան ու շատ են դրանում առկա բնական ռեսուրսները: Դրանք ստեղծում են բնակավայրերի և արտադրության տեղաբաշխման համար բազմազան տարբերակներ:

ՀՀ տարածքային ռեսուրսների սահմանափակ լինելու հանգամանքը խիստ կարևոր է դարձնում դրանց նպատակային և արդյունավետ օգտագործման խնդիրը: Բացի այդ, ՀՀ քաղաքաաշխարհագրական ներկա վիճակը և սոցիալ-տնտեսական զարգացման շահերը պահանջում են հանրապետության տարածքի քիչ թե շատ հավասարաչափ և կայուն բնակեցում, տարածքի արդյունավետ օգտագործում: ՀՀ-ի նման լեռնային մակերևույթ ունեցող երկրներում որքան մեծ է բնակավայրերի խտությունը, այնքան ավելի բարձր են հողային ու տարածքային ռեսուրսների օգտագործման հնարավորությունները և դրանց արդյունավետությունը: Եթե նկատի ունենանք, որ հանրապետության տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից 1800 մ է, իսկ տարածքի ավելի քան 70 և բնակավայրերի 50.7 % գտնվում են ծովի մակարդակից 1500 մ-ից ավելի բարձրության վրա, հասկանալի է դառնում, որ ՀՀ տարածքի քիչ թե շատ կայուն և համաչափ բնակեցումը և տարածքային ռեսուրսների լիարժեք օգտագործումը համապետական կարևորագույն խնդիր է:

ՀՀ տարածքի լեռնային բնույթի ազդեցությունը մարդկային գործունեության ամբողջ համալիրի վրա առավել ցայտուն է դրսևորվում տարաբնակեցման միջոցով: Բարձրության գոտիների փոփոխմամբ փոփոխվում են նաև գոտիների բնական համալիրների մյուս տարրերը, իսկ այդ փոփոխման հետևանքով էլ մարդկանց արտադրական գործունեությունը և

տարաբնակեցումը: ՀՀ տարածքի բարձրության յուրաքանչյուր գոտի առանձնանում է որպես համասեռ տարածքային միավոր, իրեն բնորոշ բնական պայմաններով, հողահանդակների կառուցվածքով, օգտագործման բնույթով, տնտեսության մասնագիտացումով, բնակչության զբաղմունքով, տարաբնակեցման ձևերով և բնակավայրերի մարդաշատությամբ [93]:

Բազմաթիվ այլ գործոնների շարքում ՀՀ տարածքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը կախված է նաև գոյություն ունեցող տարաբնակեցումից, մասնավորապես՝ գյուղական տարաբնակեցումից, քանի որ գյուղական տարածքները ոչ միայն մարդկանց բնակության վայրերն են, այլ նաև մշակելի այն ամբողջ տարածքները և արտադրական հանդակները (արոտավայրերը, խոտհարքերը և անտառները), որոնք անմիջականորեն հարում են գյուղական բնակավայրին կամ ոչ մեծ տարածքներով ջրված են գյուղերի միջև և ակտիվորեն օգտագործվում են գյուղական բնակչության կողմից: Բնակավայրերին հարող տարածքների օգտագործման բնույթը, յուրացվածության աստիճանը և արդյունավետությունը մեծապես կախված է գյուղական տարաբնակեցման բնույթից, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի խտությունից, դրանց մեծությունից, արտադրատնտեսական մասնագիտացման ուղղությունից և գյուղական բնակավայրը բնութագրող այլ ցուցանիշներից [93]: Հայաստանի նման լեռնային երկրներում նշվածներին ավելանում է նաև գյուղական բնակավայրերին հարող տարածքների ռելիեֆի բնույթը, դրանց հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածությունը, թեքությունների աստիճանը, դիրքադրությունները և այլ գործոններ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անցած տասնամյակների ընթացքում ՀՀ-ում գյուղական տարաբնակեցման կրած փոփոխությունների հետևանքով տարբեր տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի թվաքանակի փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողել օգտագործվող տարածքային ռեսուրսների և գյուղատնտեսական հողահանդակների մակերեսի վրա: Եթե Արարատյան հարթավայրում և այն եզրավորող սարահարթերում գյուղական նոր բնակավայրերի ստեղծումը նպաստել է հողատարածքների յուրացմանը և գյուղատնտեսության զարգացմանն ու համախառն արտադրանքի ավելացմանը, ապա մյուս տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի թվաքանակի կրճատման հետևանքով զգալիորեն նեղացել է մշակելի հողատարածքների մակերեսը:

Խորհրդային տարիներին գյուղական տարածքների, բնակավայրերի և

տարաբնակեցման հեռանկարային զարգացման ծրագիր էր համարվում գյուղացիական տնտեսությունների (կոլտնտեսությունների և սովխոզների) խոշորացումը և փոքր ու մանր գյուղերի վերացումը: Գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացումը տարվում էր այն ուղղությամբ, որպեսզի ապացուցվեր կոլտնտեսային և սովխոզային արտադրության առավելությունները: Այդ քաղաքականությունն ամբողջ երկրի մասշտաբով իրականացվում էր նույն սկզբունքներով և չափանիշներով, հաշվի չառնելով առանձին տարածաշրջանների, մասնավորապես՝ լեռնային շրջանների բնաաշխարհագրական պայմանների, գյուղական տարածքների ու տարաբնակեցման առանձնահատկությունները: Նման քաղաքականության պատճառով տուժում էր ոչ միայն գյուղատնտեսությունը, այլ նաև գյուղական տարածքներն ու տարաբնակեցումը: Ռուսաստանի ոչ սևահողային գոտում վերացվեցին հազարավոր գյուղեր: Դրանից շարք առանձնահատկությունների պատճառով, այդ քաղաքականության հետևանքներն ավելի վատթար են եղել: 1926-1988 թթ. ընթացքում հանրապետությունում գյուղական բնակավայրերի թիվը նվազել է 361-ով [72]: Այդ ընթացքում ԴԴ-ում վերացել է 274 գյուղ և 138 գյուղական տիպի ժամանակավոր բնակելի կետեր, 97 գյուղ միացել են այլ բնակավայրերի [նույն տեղում]: Հասկանալի է, որ գյուղերի վերացման հետևանքով դրանց գոտում կրճատվում և տնտեսական շրջանառությունից դուրս էին գալիս վարելահողեր, տնամերձ հողատարածքներ և այլն: Ամենահամեստ հաշվարկներով դրանք կազմում են 173 հազար հեկտար [58]: Բնակչության հեռացումը բնակեցված տարածքներից նեղացրել է հանրապետության առանց այն էլ փոքր տարաբնակեցման արեալը, արդյունավետ չեն օգտագործվել տարածքային, մասնավորապես՝ գյուղատնտեսական հողահանդակները: Այդ երևույթն առավել անցանկալի և վտանգավոր դրսևորումներ է ունեցել ԴԴ նախալեռնային, լեռնային և սահմանամերձ շրջաններում:

ԴԴ-ում արտադրողական կարողությունների անհամաչափ տեղաբաշխման և բնաաշխարհագրական գործոնների ազդեցության պատճառով բավական մեծ է բնակչության խտության տարբերությունները տարբեր շրջանների, մասնավորապես՝ հարթավայրային և լեռնային տարածքների միջև: Դա տեղի է ունեցել ԴԴ-ում անհամաչափ ուրբանացման և լեռնային շրջաններից դեպի հարթավայրային-ցածրադիր շրջաններ բնակչության միգրացիայի պատճառով: Այդ ամենի հետևանքով հարթավայրային շրջաններում մեծացել է բնակեցված տարածքների մակերեսը, իսկ լեռնային

շրջաններից շարունակվող արտահոսքի հետևանքով նվազել է առանց այն էլ սահմանափակ բնակեցված տարածքը: Գնալով մեծացել է Արարատյան դաշտի արժեքավոր հողերը բնակեցման և շինարարության համար օգտագործելու չափերը: Ներկայումս յուրաքանչյուր 100 քլմ-ն Մասիսի տարածաշրջանին բաժին է ընկնում 15, էջմիածնի տարածաշրջանին՝ 11, Արտաշատի տարածաշրջանին՝ 7.5 գյուղ, իսկ Մարտունու, Գավառի, Հրազդանի և Վայքի տարածաշրջաններին՝ 1,5-1,7 գյուղական բնակավայր: Գյուղական բնակավայրերի խտությունը հանրապետության միջին ցուցանիշից ցածր է 14 տարածաշրջանում, իսկ գյուղատնտեսական հողատարածությունների հաշվով գյուղական բնակավայրերի խտությունը հանրապետության միջինից ցածր է 17 տարածաշրջանում (աղ. 2):

Մարդկանց ձգտումը կյանքի լավագույն պայմանների համար միանգամայն բնական է, սակայն ԳՏՀ-ի ժամանակակից պայմաններում այդպիսի պայմաններ կարելի է ստեղծել նաև այն շրջաններում, որոնք ունեն պակաս նպաստավոր պայմաններ, այդ թվում նաև լեռնային շրջաններում:

ՀՀ լեռնային և սահմանամերձ շրջանների տարաբնակեցման համակարգում ավելի մեծ դեր ունեն գյուղական բնակավայրերը: Դրանց զարգացումից և առաջընթացից է կախված այդ շրջանների տնտեսության հիմնական ճյուղի՝ գյուղատնտեսության զարգացման մակարդակը, լեռնային տարածքների լիարժեք օգտագործումը, ինչպես նաև բնակչության միգրացիայի կարգավորումը:

Անհրաժեշտ է առավելագույնս ուսումնասիրել և գնահատել ՀՀ լեռնային տարածքների բնատնտեսական առանձնահատկությունները, դրանց սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները: ՀՀ յուրաքանչյուր լեռնային տարածաշրջան պետք է դառնա երկրի տնտեսական համալիրի օրգանական, անքակտելի մասը, որն էապես կնպաստի այդ տարածաշրջաններում տարաբնակեցման համակարգի կատարելագործմանը, առանձին գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին, վերջապես՝ կընդարձակի այդ շրջանների բնակեցման արեալը, կմեծանա տարածքային ռեսուրսների օգտագործման աստիճանը:

ՀՀ լեռնային շրջանների զարգացումը և դրանցում բնակչության ամրացումը պահանջում է գոյություն ունեցող տարաբնակեցման կատարելագործում, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի խոշորացում: Չնայած գյուղական տարածքներն ու բնակավայրերը կրում են բնական գործոնների ուժեղ ազդեցությունը, սակայն տարաբնակեցման որոշակի

ձևի կազմավորման ու զարգացման համար որոշիչ դեր ունեն նաև սոցիալ-տնտեսական նախադրյալները: Որպես կանոն, գյուղերի փոքր մարդաքանակը զգալիորեն խոչընդոտում է լեռնային շրջանների զարգացմանը և հանդիսանում է այդ շրջանների բնագրկման պատճառ: Այդպիսի գյուղերը, մի քանի տասնյակ բնակչով բնակեցման համար հարմար չեն: Բնակչության փոքր թվաքանակի պատճառով դրանցում երբեմն հնարավոր չի լինում ունենալ դպրոց, մանկապարտեզ, կենցաղային ծառայություններ և այլն: Չնայած 33-ն առանձնանում է գյուղական բնակավայրերի մարդաքանակի համեմատաբար մեծ չափերով, սակայն լեռնային շատ շրջաններում այն հանրապետության միջինից ցածր է 1,5-2 անգամ, իսկ Ամասիայի, Մեղրու և Կապանի տարածաշրջաններում՝ 4.5-7.3 անգամ:

Ոչ միայն բնակչության աճն է գյուղերի մարդաքանակի աճի վրա ազդող գործոն, այլ գյուղական բնակավայրերի մարդաքանակն իր հերթին հանդիսանում է գյուղական բնակչության աճին նպաստող գործոն: Խոշոր գյուղերում հեշտ է ստեղծել սպասարկման ծառայություններ: Դրանք, սովորաբար, ունենալով նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրք, իրենց ձգողական ուժի շնորհիվ դառնում են տեղական կենտրոններ գյուղական տարաբնակեցման տվյալ արեալում: 33 լեռնային տարածաշրջանների մեծ մասում տեղական կենտրոնների ցանցը դեռևս բավարար մակարդակով զարգացած չէ և դրանց կայացումը կապված է տարաբնակեցման համակարգի կատարելագործման հետ:

33 37 տարածաշրջաններից 24-ը սահմանամերձ է, իսկ լեռնային շրջանների քանակը, չնայած որ վերջնականապես հստակեցված չէ, նույնպես մեծ թիվ է կազմում: Այդ սահմանամերձ 24 տարածաշրջաններից 14-ը միաժամանակ նաև լեռնային են (Սյունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզերի բոլոր տարածաշրջանները և Կրասնոսելսկի, Վարդենիսի, Ամասիայի, Աշոցքի, Տաշիրի տարածաշրջանները): 2015 թ. դրությամբ այդ տարածաշրջաններն ունեին 367 գյուղ: Դրանց բաժին էր ընկնում 33 գյուղական բնակչության 21.3 %-ը: Այդ տարածաշրջանների գյուղերի ճնշող մեծամասնությունը (290 գյուղ) գտնվում են բուն սահմանամերձ գոտում, որից 39-ը՝ առաջին, 136-ը՝ երկրորդ և 115-ը՝ երրորդ գոտում:

Աղյուսակ 73

ՀՀ էթնոսային և սահմանամերձ շրջանների գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացն ըստ մարդաշատության խմբերի (1959-2015 թթ.)¹

Տարեթիվ	Գյուղերի քանակ	Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ գյուղերի մարդաբանակի (մարդ)													
		201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի		Ը միաց ըվծվը			
		ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ				
1959	446	283057	111 24.9	12164 4.3	152 34.1	49203 17.4	102 22.9	70001 24.7	71 15.9	108528 38.3	7 9.0	25401 9.0	3 0.6	17760 6.3	635
1970	377	310480	42 11	5392 1.7	125 33.2	41347 13.3	114 30.2	79729 25.7	88 23.3	150579 48.5	7 1.9	27000 8.7	1 0.3	6433 2.1	824
1988	354	275026	72 20.3	8170 3.0	116 32.8	40323 14.7	75 21.2	56055 20.4	81 22.9	130329 47.4	9 2.5	33255 12.0	1 0.3	6894 2.5	777
2011	368	212312	115 33.7	11912 5.6	101 29.5	34068 16.0	66 19.3	45686 21.5	52 16.2	88830 41.9	8 2.3	31816 15.0	-	-	620
2015	367 ³	234271	107	10955	93	29728	68	46418	62	103449	9	32840	2	10881	687
			100	4.7	27.3	12.7	19.9	19.8	18.2	44.2	2.6	14.0	0.6	4.6	

¹ Աղյուսակը կազմված է «Населенные пункты и население Армянской ССР за 1831-1959 годы», Е., 1962 г., ժողովածուի, ՀՀ մշտական բնակչության բաժանման վերաբերյալ ՀՀ ԱԿԾ 1988 թ. հրատարակումների, «ՀՀ առկա և մշտական բնակչության բաշխումն ըստ վարչատարածքային միավորների և սեռի 2011թ. մարդահամարի» և «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա:

² Համարիչում բացարձակ թիվը, հայտարարում նույնը տրվումներով (ա/ բնակավայրեր, ր/ բնակչություն)

³ 26 գյուղ մշտական բնակչություն չունեն:

ՀՀ խոնային և սահմանամերձ շրջանների գյուղական բնակավայրերի և բնակչության բաշխումն ըստ մարդաբանակի (2015թ.)¹

Տարածա- շրջաններ	Գյուղական բնակավայրերի և բնակչության բաշխումն ըստ գյուղերի մարդաբանակի (մարդ)																Ընդամենը	
	201-500		501-1000		1001-3000		3001-5000		5000-ից ավելի		*		ա	բ				
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ						
Կրասնուբլսկի	4	473	2	793	7	4863	2	2260	-	-	-	-	-	-	2	17	8389	
Վարդենիսի	8	1125	11	3839	8	5088	6	10148	2	7613	-	-	-	-	1	36	27813	
Տաշիրի	11	1326	5	1526	1	837	5	6699	-	-	1	5786	-	-	-	23	16174	
Ամասիայի	8	629	9	2278	5	2838	1	2094	-	-	-	-	-	-	3	26	7839	
Աշոցքի	8	876	10	3241	6	3955	1	2842	-	-	-	-	-	-	0	25	10914	
Կապանի	37	3594	4	978	4	2789	-	-	-	-	-	-	-	-	8	53	7361	
Գորիսի	4	445	6	1898	7	5631	7	13843	-	-	-	-	-	-	3	27	21817	
Մեղրու	8	545	4	1053	1	670	-	-	-	-	-	-	-	-	0	13	2268	
Մխիթանի	8	852	14	4973	8	4809	4	6677	-	-	-	-	-	-	0	34	17311	
Եղեգնաձորի	4	402	8	2580	1	860	13	21168	-	-	-	1	5095	-	4	31	30105	
Վայքի	5	505	8	2444	4	2954	1	1530	-	-	-	-	-	-	2	20	7433	
Իջևանի	2	183	8	2858	5	3122	5	9621	3	10815	-	-	-	-	2	25	26599	
Նոյեմբերյանի	-	-	3	949	7	5129	5	8599	2	7760	-	-	-	-	1	18	22437	
Տավուշի	-	-	1	318	4	2873	10	15364	1	3101	-	-	-	-	0	16	21656	
Դիլիջանի ք/հ	-	-	-	-	-	-	2	2604	1	3551	-	-	-	-	0	3	6155	
Ընդամենը	107	10955	93	29728	68	46418	62	103449	9	32840	2	10881	-	-	26	367	234271	

¹ Աղյուսակը կազմված «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015», Ե., 2015, վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա: ա) Գյուղերի թիվը, բ) Բնակչության թիվը: * Մշտական բնակչություն չունեցող գյուղերի թիվը:

1970-2015 թթ. ընթացքում այդ 14 տարածաշրջաններում գյուղական բնակչության թիվը նվազել է ավելի քան 76 հազարով (24.5 %-ով), իսկ գյուղական բնակավայրերի թիվը՝ 10-ով (աղ.73): 1959 թ-ից հետո նշված տարածաշրջաններում գյուղական բնակավայրերի թիվը նվազել է 105-ով: Ներկայումս այդ տարածաշրջանների 26 գյուղական բնակավայր մշտական բնակչություն չունի: 1970-2015 թթ. ընթացքում, երբ հանրապետությունում տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի թվի կայունացում, այդ տարածաշրջաններում 2,5 անգամ ավելացել է մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերի թիվը, իսկ 501-1000 բնակիչ ունեցող գյուղերի թիվը նվազել է ավելի քան 1,3 անգամ: Եթե 1970 թ. նշված 14 լեռնային և սահմանամերձ տարածաշրջաններում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության 29.8 %-ը, ապա 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ այն կազմում էր ընդամենը 21.3 %: ՀՀ-ում այդ տարածաշրջանների գյուղական բնակչության տեսակարար կշռի այդպիսի աննախադեպ նվազումը, անշուշտ կրճատել է նաև դրանց տնտեսական ներուժը, նվազել է դրանց տարածքային ռեսուրսների և գյուղատնտեսական հողահանդակների օգտագործման արդյունավետությունը: Նույն այդ ժամանակահատվածում 137-ով նվազել է գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակը՝ հասնելով 824-ից 687-ի: Նշված տարածաշրջանների գյուղական բնակավայրերի բաշխումն ըստ մարդաքանակի տրված է թիվ 74 աղյուսակում: Աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ տարածաշրջանների գյուղերի 29 %-ից ավելին մանր և փոքր են, ունեն մինչև 200 բնակիչ, իսկ մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերը կազմում են գյուղերի ընդհանուր թվի 54 %-ից ավելին, սակայն դրանց բաժին է ընկնում գյուղական բնակչության ընդամենը 17.4 %-ը:

Վերլուծության արդյունքները թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ-ի գյուղական տարածքների և տարաբնակեցման հեռանկարային զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը պետք է համարել լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր ու մանր գյուղերի խոշորացումը: Անթույլատրելի պետք է համարել այդպիսի գյուղերի վերացումը, քանի որ կկրճատվի ՀՀ բնակեցված տարածքը: Բացի այդ, հանրապետության լեռնային ու սահմանամերձ շրջաններում գյուղերի թվի նվազումը կխոչընդոտի տարածքային ռեսուրսների և գյուղատնտեսական հողահանդակների ինտենսիվ օգտագործմանը, կվճարի բնական միջոցների վերարտադրությանը, կթուլացնի երկրի պաշտպանունակությունը: Ոչ միայն ամբողջովին պետք է պահպանվի ՀՀ գյուղական բնակավայրերի ներկայիս ցանցը,

այլ նաև անհրաժեշտ է աշխատանքներ տանել ՀՀ տարբեր շրջաններում լքված և ավերված տասնյակ գյուղերի վերականգնման և բնակեցման ուղղությամբ:

ՀՀ լեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր գյուղական բնակավայրերը սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական առումով առավել անկայուն են և դրանց որոշ մասը ժամանակի ընթացքում կարող են կանգնել վերացման վտանգի առաջ: Անհրաժեշտ է աշխատանքներ տանել ավելացնելու այդպիսի գյուղերի բնակչության թվաքանակը, որպեսզի հնարավոր լինի դրանցում ունենալ դպրոց, մանկապարտեզ, խանութ, կենցաղսպասարկման կետ և այլ ծառայություններ: Միաժամանակ պետք է աշխատանքներ տանել, որպեսզի փոքր գյուղերի մշակութային, կենցաղային և նույնիսկ արտադրական սպասարկման որոշ գործառույթներ իրականացվեն հարևան մեծ գյուղերի կողմից: Դրանք կհանդիսանան բավարար նախադրյալ մարզերի և բոլոր տարածաշրջանների կայուն հասարակական զարգացման, ՀՀ սոցիալ-տնտեսական առաջընթացի և երկրի պաշտպանունակության հզորացման համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ ազգի տարաբնակեցումը Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում պատմական խորը արմատներ ունի: Այստեղ անհիշելի ժամանակներից զբաղվել են հողագործությամբ և ընդերքի հարստությունների օգտագործմամբ: Բ.ծ.ա. երկրորդ հազարամյակում Հայկական լեռնաշխարհում հիմնվել են գյուղական տիպի առաջին մշտական բնակավայրերը, իսկ Բ.ծ.ա. առաջին հազարամյակի սկզբում՝ առաջ են եկել քաղաքները:

Հայաստանի Հանրապետության ժամանակակից գյուղական տարածքներն ու տարաբնակեցման ձևերն արդյունք են ոչ միայն բնական տարրերի բազմազանության, այլ նաև անցյալի պատմական իրադարձությունների: Վերջիններիս պատճառով կործանվել և ավերվել են բազմաթիվ բնակավայրեր, նվազել է բնակավայրերի թիվը և մարդաքանակը, փոխվել է բնակչության ազգային կազմը, կենցաղն ու տնտեսությունը, բնակավայրերի արտաքին տեսքը: Դրանք իրենց նկատելի հետքն են թողել բնակավայրերի դիրքի, խտության, արտաքին տեսքի, մարդաքանակի և տնտեսական գործունեության վրա:

Բնական և պատմաազգագրական գործոններով պայմանավորված ՀՀ տարածքում առանձնանում են հինգ խոշոր գոտիներ, որոնք միմյանցից տարբերվում են բնակեցման բնապատմական առանձնահատկություններով: Այդ գոտիներն են.

1. **Փոքր Կովկասի արտաքին, ծալքաբեկորավոր, խորը գետահովիտներով մասնատված, անտառային լանջերով լեռնաշղթաների գոտի:** Սրա մեջ են մտնում Աղստևի, Հախումի, Տավուշի, Խնձորուտի, Միափորի, Մռավի, Խաչենի, Ղարաբաղի, Բարգուշատի, Խուստուփի շղթաները, դրանցից տարարձակվող լեռնաբազուկները, լեռնահովտային և գետահովտային տարածքները:

2. **Փոքր Կովկասի ներքին, ծալքավոր, չափավոր մասնատված, անտառներով աղքատ, մարզագետնային լանջերի և լեռնաշղթաների գոտի:** Սա ընդգրկում է Վիրահայոց, Բազումի, Փամբակի, Ծաղկունյաց և Արեգունու շղթաներին հարակից տարածքները,

3. **Հրաբխային լեռնավահանների և բարձրադիր սարավանդների, միջլեռնային գոգավորությունների մարզագետնատափաստանային գոտի:** Ընդգրկում է Խոնավ, Արագածի, Գեղամա, Վարդենիսի և Սյունիքի լեռնավահանները՝ շրջակա սարավանդներով, ինչպես նաև Աշոցքի, Շիրակի և

Սևանի գոգավորությունները,

4. *Արարատյան դաշտի և հարակից ցածրադիր սարավանդների կիսաանապատային գոտի,*

5. *Փոքր կովկասի մերձարաքսյան, խիստ մասնատված, ծալքաբեկորավոր շղթաների, անտառազուրկ կամ ֆրիգանաքսերոֆիլ բուսականությամբ լանջերի գոտի:* Սրա մեջ են մտնում Ուրծի, Երանոսի, Հայոց ձորի և Մեղրու շղթաներին հարակից տարածքները:

ՀՀ տարածքի խիստ արտահայտված լեռնային բնույթը, փոքր մակերեսը, հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածությունը, բացարձակ մեծ բարձրությունները և թեքությունները, կլիմայի բազմազանությունը, ջրային և հողային ռեսուրսների անհամաչափ բաշխումը, սեյսմիկ ակտիվությունը, մի շարք շրջաններում սողանքները, սելավները, մակերևութին մոտ գտնվող գրունտային ջրերը և ակտիվ գործող այլ բնաաշխարհագրական երևույթներ, ինչպես նաև տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը պահպանելու անհրաժեշտությունը զգալիորեն նեղացրել են ՀՀ-ի բնակեցման արեալը և իրենց անմիջական ու միջնորդավորված ազդեցությունն են թողել գյուղական տարածքների ու բնակավայրերի ձևավորման և հետագա զարգացման վրա:

Զնայած ՀՀ ժամանակակից գյուղական տարածքներն ու տարաբնակեցումն ունեն պատմական խորը արմատներ, սակայն դրանք հիմնական գծերով սկսել են ձևավորվել 19-րդ դարի 30-40-ական թվականներից: Հետագա տասնամյակների ընթացքում շարունակվող ներգաղթի, բնակչության թվի ավելացման, գյուղական նոր բնակավայրերի ստեղծման և նախկինում ավերված ու բնազրկված գյուղերի վերականգնման շնորհիվ հիմնական գծերով ձևավորվել է հանրապետության ժամանակակից գյուղական տարածքների ու տարաբնակեցման համակարգի հիմքը:

Խորհրդային տարիներին ՀՀ գյուղական տարածքների զարգացումը տեղի է ունեցել պլանային տնտեսության պայմաններում, երբ արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ իշխում էր պետական սեփականությունը: Սեփականության համայնավարական-պետական ձևը նպաստում էր խոշոր գյուղերի առաջացմանը, իսկ երկրում ստեղծված միասնական տարածքաարտադրական համալիրը՝ միասնական-միակենտրոն տարաբնակեցման համակարգի ձևավորմանը՝ մայրաքաղաք կենտրոնով: Այդ տարիներին երկրում ձևավորված գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը, տարածքային կազմակերպումը և մասնագիտացումը եղել են այն հիմնա-

կան ազդակները, որոնք պայմանավորել են հանրապետության գյուղական տարածքների և տարաբնակեցման բնույթը:

Վերջին ավելի քան քսանհինգ տարիներին տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները (հողի և գյուղատնտեսական արտադրության այլ միջոցների սեփականաշնորհումը) միանգամայն նոր պայմաններ են ստեղծել ՀՀ գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման համար: Սակայն, տարաբնակեցումն արտադրության համեմատ ավելի իներցիոն և պահպանողական է, ոչ միանգամից և ոչ բոլոր դեպքերում է համարժեքորեն հետևում արտադրության մեջ և արտադրական հարաբերություններում տեղի ունեցած փոփոխություններին: Այդուհանդերձ, վերը նշված գործընթացների պատճառով ՀՀ-ում խոշոր գյուղերի զարգացման տնտեսական հնարավորությունները սահմանափակվել են: Լեռնային ու սահմանամերձ շրջաններում գյուղական տարածքների ու բնակավայրերի վրա իր ազդեցությունն է թողել քաղաքաաշխարհագրական անկայուն իրավիճակը:

ՀՀ-ում գյուղական բնակչության և բնակավայրերի հիմնական մասը կենտրոնացված են նախալեռնային հարթություններում, լեռնային զոգավորությունների ցածրադիր հատվածներում, գետահովիտներում և սարահարթերում: Դրանց տեղաբաշխման տարածքային տարբերություններ կան ոչ միայն հորիզոնական, այլ նաև ուղղաձիգ ուղղությամբ: Երկրի ցամաքային տարածքի 17.8 %-ին (Արարատյան դաշտին և այն եզրավորող գոտուն) բաժին է ընկնում գյուղական բնակչության 46.2 %-ը, իսկ 24.3 %-ին (Սյունիքի և Վայոց ձորի մարզերին)՝ ընդամենը 7,2 %-ը: Տարածքի բնակեցվածության աստիճանն արտահայտող մյուս ցուցանիշով (գյուղական բնակավայրերի խտությամբ) ևս առանձնանում է Արարատյան հարթավայրը, որտեղ գյուղերի խտությունը ՀՀ միջին ցուցանիշին գերազանցում է 3,2 անգամ, իսկ տարածքի մոտ 60 %-ի վրա այդ ցուցանիշը ցածր է ՀՀ-ի միջինից (3.1 գյուղ/100 քկմ):

ՀՀ-ն առանձնանում է նաև ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխմամբ: Լեռնային երկրներին բնորոշ՝ ըստ բարձրության գոտիների գյուղական բնակչության խտության, բնակավայրերի թվի և միջին մարդաշատության նվազման օրինաչափությունը ՀՀ-ում չի պահպանվում: Գյուղական բնակչության առավել մեծ խտություն ունեն Արարատյան, Շիրակի և Լոռվա դաշտերը, Սևանի մերձլճային հարթությունները, չնայած որ ընկած են ծովի մակար-

դակից տարբեր բարձրությունների վրա: Բարձրության 1401-1600 և 1800-2000 մ գոտիներում գյուղական բնակչության ու բնակավայրերի թիվը և դրանց խտությունն ավելի մեծ է, քան 1201-1400 և 1601-1800 մ բարձրության գոտիներում:

ՀՀ-ում ամբողջ բնակչության համեմատ գյուղական բնակչությունն ըստ բարձրության գոտիների ավելի հավասարաչափ է տեղաբաշխված: Եթե հանրապետության բնակչության 54.5 %-ն ապրում է 801-1000 մ բարձրության գոտում, ապա գյուղական բնակչության բաժինն այդ գոտում կազմում է 35 %: Սյուս կողմից՝ 1801-2000 մ գոտում բաժին է ընկնում ՀՀ-ի ամբողջ բնակչության 8,8 %-ը, իսկ գյուղական բնակչության՝ 16 %-ը:

Լեռնային երկրների գյուղական տարաբնակեցմանը բնորոշ գյուղերի մարդաշատության մեծ տարբերությունները յուրահատուկ գծերով է դրսևորվում ՀՀ-ում: Խոշոր և գերխոշոր գյուղերին (3000 մարդուց ավելի), որոնք կազմում են ՀՀ-ի գյուղերի ընդհանուր թվի 11,2 %-ը, բաժին է ընկնում գյուղական բնակչության 39.3 %-ը, իսկ գյուղերի ընդհանուր թվի 33,7 % կազմող մինչև 500 մարդ ունեցող գյուղերին՝ ընդամենը 5,6 %-ը: ՀՀ-ում գյուղական բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացման համեմատ միջին մարդաշատության նվազման կամ ավելացման որոշակի օրինաչափություն չկա: Հանրապետության տարածքում գյուղերի մարդաքանակը կախված է ոչ միայն տարածքի բացարձակ բարձրությունից, այլ նաև տեղանքի մասնատվածության և թեքությունների աստիճանից, բնատարածքային համալիրի տարրերի զուգակցությունների շնորհիվ ստեղծված տեղային պայմաններից ու առանձնահատկություններից, սոցիալ-տնտեսական գործոններից:

ՀՀ-ում գրեթե բոլոր գյուղերին բնորոշ է գյուղատնտեսական գործառույթը, սակայն դրանց ճնշող մեծամասնությունն ունեն արտադրական մասնագիտացման բազմազանություն: Հանրապետության գյուղական բնակավայրերի արտադրական տիպերի ողջ բազմազանությունից կարելի է առանձնացնել *անասնապահական, տավարաբուծական, տավարաբուծական-դաշտավարական, ոչխարաբուծական, բանջարաբուծական, բանջարաբուծա-խաղողագործական, այգեգործական և ծխախոտագործական-տավարաբուծական* մասնագիտացման գյուղերի տիպերը: Հարկ է նաև նկատի ունենալ, որ շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացումը և խորացումը կարող են որոշակի փոփոխություններ մտցնել ՀՀ-ի գյուղական բնակավայրերի արտադրական տիպերի մասնագիտացման մեջ:

Լեռնային երկրների գյուղական տարածքների ու տարաբնակեցման յուրահատուկ առանձնահատկություններից է գյուղերի տեղադիրքի և արտաքին տեսքի խիստ բազմազանությունը: Բացի բնաաշխարհագրական և տնտեսական գործոններից ՀՀ-ում գյուղական բնակավայրերի ձևաբանական բնութագրի վրա էական ազդեցություն են թողել նաև պատմական, ազգագրական և տեղային այլ գործոններ: Նախկինում անընդհատ կրկնվող հարձակումները հնարավորություն չեն տվել որպես գյուղատեղ ընտրել բնակվելու համար առավել հարմար տարածքները: Մի շարք դեպքերում որպես գյուղատեղ ընտրվել են պաշտպանության համար նպաստավոր, անմատչելի լեռնալանջերը, ձորերով ու կիրճերով մեկուսացված վայրերը:

Ռելիեֆային պայմանների բազմազանության պատճառով ՀՀ-ում առկա է տեղանքում գյուղական բնակավայրերի տեղադրման բազմազան տիպեր, որոնցից ըստ բարձրաչափական միջի կարելի է առանձնացնել *Մախալեռնային հարթությունների և հովիտների, Մախալեռնային գոտու, լեռնային և բարձր լեռնային շրջանների գյուղեր*: Դրանցից յուրաքանչյուրում կան գյուղերի ձևաբանական նկատելի տարբերություններ, որոնք պայմանավորված են տեղային պայմաններով ու գործոններով:

ՀՀ-ն առանձնանում է նաև տարածքի բնակեցման բազմազանությամբ: Դրանք ՀՀ-ում բաշխված են ոչ թե համատարած շրջաններով, այլ մեծ ու փոքր արեալներով, որի պատճառով բնակեցման միևնույն տիպը երբեմն հանդիպում է երկրի շրջանների մեծ մասում կամ նույն շրջանում հանդիպում են բնակեցման տարբեր տիպեր: ՀՀ-ի համար առավել բնորոշ են տարածքի բնակեցման հետևյալ տիպերը.

- 1. համատարած խիտ բնակեցված շրջաններ՝ առավելապես մեծ և խոշոր գյուղերով, քաղաքային բնակավայրերի զարգացած ցանցով,*
- 2. համատարած խիտ բնակեցված շրջաններ՝ տարածքի անհավասարաչափ բնակեցումով, խոշոր և մեծ գյուղերով, քաղաքային բնակավայրերի համենատարար թույլ զարգացած ցանցով,*
- 3. լեռնային օջախներով բնակեցման շրջաններ՝ փոքր, միջին և մեծ գյուղերով, քաղաքային բնակավայրերի թույլ զարգացած ցանցով,*
- 4. նոսր բնակեցված շրջաններ՝ հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերով, առանձին շրջաններում քաղաքային բնակավայրերի բացակայությամբ,*
- 5. կոմպակտ բնակեցված շրջաններ՝ բնակչության և բնակավայրերի միջին խտությամբ, առանձին շրջաններում քաղաքային բնակավայրերի*

բացակայությամբ:

ՀՀ ոչ մեծ տարածքն աչքի է ընկնում նաև գյուղական տարածքների ու տարաբնակեցման ձևերի, համալիրային տիպերի ու ենթատիպերի բազմազանությամբ: Դրանք ձևավորվել են պատմական երկարատև զարգացման արդյունքում՝ բնական, սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնների ազդեցության տակ: Գյուղական տարածքների ու տարաբնակեցման ձևավորման և զարգացման բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական և այլ պայմանները ՀՀ-ում փոփոխվում են ոչ միայն մեկ լանդշաֆտային գոտուց մյուսին անցնելիս, այլ նաև դրանցից յուրաքանչյուրի ներսում: Մինևույն բնալանդշաֆտային գոտու ներսում առանձնանում են գյուղական տարածքների ու տարաբնակեցման մի քանի տիպեր և ենթատիպեր: Հաշվի առնելով տարածքի աշխարհագրական դիրքը և տարաբնակեցման արտաքին պատկերը, բնակավայրերի մարդաշատությունն, արտադրական մասնագիտացման ուղղությունը, միջբնակավայրային տրանսպորտային ապահովվածությունը և բնակեցման տիպը ՀՀ-ն առանձնանում են գյուղական տարածքների ու տարաբնակեցման շրջաններ (7), տեղական տիպեր (37) և ենթատիպեր (20):

ՀՀ-ում առանձնանում են գյուղական տարածքների ու տարաբնակեցման հետևյալ շրջանները.

1. *Արարատյան հարթավայրի և այն եզրավորող նախալեռնային գոտու համատարած տարաբնակեցման շրջան՝ առավելապես մեծ և խոշոր գյուղերով, ոռոգելի հողագործության ինտենսիվ և աշխատատար ծյուղերի զարգացումով, առանձին տեղերում, տավարաբուծության հետ զուգակցված,*

2. *սարավանդային մարզերի խոշոր օջախներով տարաբնակեցման շրջան՝ տարբեր մեծության գյուղական բնակավայրերով, անասնապահության և երկրագործության տարբեր ծյուղերի զարգացումով (ընդգրկում է Շիրակի, Ապարանի, Արագածոտնի և Աշոցքի սարահարթերը),*

3. *Լոռի-Փամբակի ցրված, տեղ-տեղ բնակավայրերի խմբային կուտակումներով տարաբնակեցման շրջան՝ տարբեր մեծության գյուղական բնակավայրերով, հիմնականում տավարաբուծության, կարտոֆիլագործության և հացահատիկային տնտեսության մասնագիտացմամբ,*

4. *միջլեռնային գոգավորությունների, լեռնահովիտների և հարթությունների տարաբնակեցման շրջան՝ հիմնականում մեծ և խոշոր գյուղերով, անասնապահության և բուսաբուծության տարբեր ծյուղերի զարգացումով*

(ընդգրկում է Սևանի գոգավորության մերձլճային տարածքները, Մարմարիկի հովիտն ու մերձակա տարածքները),

5. *ՀՀ հյուսիս-արևելքի նախալեռնային հարթությունների և հովիտների ստորին հատվածների առանձին օջախներով խմբային և ցրված տարաբնակեցման շրջան՝ առավելապես մեծ, միջին, հաճախ նաև խոշոր գյուղերով, այգեգործության, դաշտավարության և անասնապահության տարբեր ճյուղերի զարգացումով,*

6. *Դահնակ - Վայքի առանձին օջախներով տարաբնակեցման շրջան՝ հիմնականում փոքր և միջին մեծության գյուղական բնակավայրերով, անասնապահության և երկրագործության տարբեր ճյուղերի զարգացումով,*

7. *Զանգեզուրի օջախային և ցրված տարաբնակեցման շրջան՝ առավելապես փոքր, միջին և մանր գյուղական բնակավայրերով, երկրագործության և անասնապահության տարբեր ճյուղերի զարգացումով:*

ՀՀ գյուղական տարածքներն ու տարաբնակեցումը 1831-ից 2015 թ. ընթացքում կրել են բնակավայրերի և բնակչության թվի, գյուղերի միջին մարդաքանակի, բնակչության ու բնակավայրերի ըստ տարածաշրջանների և բարձրության գոտիների բաշխվածության զգալի փոփոխություններ: 1831-1926 թթ. ընթացքում ՀՀ-ի ժամանակակից տարածքում գյուղական բնակավայրերի թիվն ավելացել է ավելի քան 1,8 (702-ից՝ 1277), բնակչության թիվը՝ շուրջ 5, իսկ գյուղերի միջին մարդաքանակն՝ ավելի քան 2.7 անգամ:

Ժամանակագրական առումով ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցն առավել մեծ փոփոխություններ է կրել 1926-1970 թթ.-ին: Եթե 1926-1970 թթ.-ին տեղի է ունեցել նվազում, ապա 1970-1990 թթ.-ին՝ կայունացում: 1926-1990 թթ.-ի ընթացքում ՀՀ-ում գյուղական բնակավայրերի թիվը նվազել է 361-ով (վերացել են 274 գյուղ և 138 գյուղական տիպի ժամանակավոր բնակելի կետ, 41 գյուղ դարձել են քաղաքային բնակավայրեր, 97 գյուղ միացել են այլ բնակավայրերի՝ քաղաքների կամ գյուղերի): Այդ ժամանակահատվածում ՀՀ-ում ստեղծվել են 97 նոր և վերականգնվել նախկինում վերացած 2 գյուղ: 1980-ական թվականների կեսերից սկսած ՀՀ-ում ի հայտ է եկել նոր երևույթ՝ սկսել են վերականգնվել նախկինում բնազրկված և վերացված գյուղական բնակավայրեր: Նշված ժամանակաշրջանում բացի Բաղրամյանի, Էջմիածնի և Նաիրիի տարածաշրջաններից, որտեղ գյուղական բնակավայրերի թվաքանակն ավելացել է, մնացած տարածաշրջաններում տեղի է ունեցել դրանց թվաքանակի նվազում: 1926-1988 թթ.-ի ընթացքում ՀՀ բնակչության թիվն ավելացել է ավելի քան 3.9

անգամ (քաղաքային բնակչությունը՝ 14.1, գյուղականը՝ 1.5 անգամ): Եթե 1926 թ-ին քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը կազմում էր 19.0 և 81.0 %, ապա 1988 թ-ին 69.0 և 31.0 %:

1926-1988 թթ-ի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ տարբեր տարածաշրջանների և մարզերի միջև գոյություն ունեցող գյուղական բնակչության բաշխման տարբերությունների մեծացում, որի պատճառով ՀՀ գյուղական բնակչության խտությունների տարբերությունն ըստ մարզերի 2.8-ից հասել է 11-ի, իսկ տարածաշրջանների միջև՝ 6-ից 32 անգամի: Այդ ընթացքում էապես բարձրացել է Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի բաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ (1926 թ-ին՝ 22 %, 1988 թ-ին՝ 39%), իսկ Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերինը՝ նվազել (1926 թ-ին՝ 39 %, 1988 թ-ին 25.3 %):

1926-1988 թթ-ի ընթացքում տեղի է ունեցել ըստ մարդաքանակի ՀՀ գյուղական բնակավայրերի խոշորացման գործընթաց: Այդ ընթացքում գյուղերի միջին մարդաքանակն ավելացել է ավելի քան 2 անգամ (580-ից՝ 1180 մարդ), որը տեղի է ունեցել ինչպես մանր և փոքր գյուղերի վերացման, այնպես էլ գյուղական բնակչության բացարձակ թվի ավելացման շնորհիվ: Արմատական փոփոխություններ են կրել նաև ըստ մարդաքանակի գյուղական բնակավայրերի տարբեր խմբերը և դրանց բնակչության քանակը: Եթե 1926 թ-ին մանր, փոքր և միջին մեծության գյուղական բնակավայրերը կազմում էին ՀՀ գյուղերի ընդհանուր թվի 83.2 %-ը և դրանցում ապրում էր գյուղական բնակչության 48.2 %-ը, ապա 1988 թ-ին՝ համապատասխանաբար 58.5 և 22.6 %: Այդ ընթացքում ավելացել է 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերի թիվը և դրանց բնակչության թվաքանակը: Եթե 1926 թ-ին այդպիսի գյուղերում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության 51.8 %-ը, ապա 1988 թ-ին՝ 77.4 %-ը: Արագ տեմպերով ավելացել է խոշոր և գերխոշոր գյուղերի թիվը: 1926 թ-ին դրանք կազմում էին ՀՀ գյուղերի թվի ընդամենը 1.1 %-ը, իսկ 1988 թ-ին՝ 7.5 %-ը: Այդ ժամանակահատվածում 20.2 տոկոսային կետով ավելացել է այդպիսի գյուղերի բնակչության մասնաբաժինը ՀՀ գյուղական բնակչության թվաքանակում (1926 թ-ին՝ 8.3 %, 1988 թ-ին՝ 28.5 %):

ՀՀ գյուղական բնակավայրերի և բնակչության թիվը փոփոխություններ է կրել նաև ըստ վերջիններիս ծովի մակարդակից ունեցած բարձրության բաշխվածության: Անցած տասնամյակների ընթացքում ՀՀ տարածքի բարձրության բոլոր գոտիներում տեղի է ունեցել գյուղական բնակավայ-

րերի թվաքանակի նվազում: 1926-1988 թթ-ին հարաբերական մեծությամբ գյուղերի թիվն ավելացել է միայն մինչև 1000 և 1401-1600 մ բարձրության գոտիներում: Հանրապետության գյուղական բնակչության տեղաբաշխման մեջ ավելի քան 2 անգամ ավելացել է 801-1000 մ բարձրության գոտու տեսակարար կշիռը: Ձգալիորեն մեծացել է գյուղական բնակչության խտության տարբերությունները բարձրության տարբեր գոտիների միջև, որի հետևանքով հանրապետության կենտրոնական-հարթավայրային շրջաններում գնալով ավելացել է Արարատյան հարթավայրի արժեքավոր հողերը բնակեցման և շինարարության համար օգտագործելու չափերը, մյուս կողմից՝ նվազել է հանրապետության լեռնային և սահմանամերձ շրջանների առանց այն էլ սահմանափակ բնակեցված տարածքները:

Հանրապետության գյուղական տարածքներն ու տարաբնակեցումը, մասնավորապես՝ գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխվածությունը, նշանակալից փոփոխություններ են կրել նաև անկախացումից հետո: Այդ ընթացքում գյուղական բնակչության թվաքանակի շարժընթացի և ըստ մարդաքանակի գյուղական բնակավայրերի տարբեր խմբերում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով ՀՀ-ում առաջացել է ըստ մարդաքանակի բնակավայրերի տարբեր խմբերի միջև տարբերությունների մեծացում: Եթե մինչև 1990-ական թվականները գյուղական բնակավայրերի բնակչության թվի նվազումը բնորոշ էր հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերին, ապա հետագա ժամանակաշրջանում այդ երևույթը դիտվել է նաև բազմաթիվ մեծ, խոշոր և նույնիսկ գերխոշոր գյուղերում: 2001 թ.-ից հետո գյուղական բնակավայրերի բնակչության թվի նվազում տեղի է ունեցել ՀՀ բոլոր մարզերում և տարածաշրջաններում, ընդգրկելով նաև առավել նպաստավոր բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ ունեցող մարզերի ու տարածաշրջանների մեծ, խոշոր և գերխոշոր գյուղական բնակավայրերը:

2001-2015 թթ. ընթացքում ՀՀ հարյուրավոր գյուղական բնակավայրերում մշտական բնակչության թվի նվազման պատճառով ստեղծվել է անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակ, որի հետևանքով առաջացել են գյուղական բնակավայրերի տնտեսական, սոցիալական ու կենցաղային կյանքի կազմակերպման բազմաթիվ հիմնախնդիրներ: Ներկայումս ըստ գերակշռող մարդաքանակի հանրապետության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև գյուղական բնակչության բաշխման տարբերություններն ավելի են մեծացել: Մինչև 1000 բնակիչ ունեցող 493 գյուղական բնա-

կավայրերում (ՀՀ մշտական բնակչությունն ունեցող գյուղերի 54,1 %-ը) ապրում է երկրի գյուղական բնակչության ընդամենը 15.7 %-ը: Ի թիվս այլ գործոնների բնակավայրերի փոքր մարդաքանակի պատճառով նվազում է դրանց տարածքային և գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետությունը:

ՀՀ գյուղական բնակչության շարժընթացի և դրանով պայմանավորված գյուղական տարածքների ու տարաբնակեցման համակարգում առաջացած հիմնախնդիրներն առավել սուր և տագնապալի բնույթ ունեն հանրապետության բարձրլեռնային և սահմանամերձ շրջաններում, որտեղ գյուղերի միջին մարդաշատությունը փոքր է և շարժընթացի նման միտումների պահպանման դեպքում մոտ ապագայում դրանք կարող են հայտնվել բնազրկման վտանգի առաջ:

ՀՀ-ում հստակորեն առանձնանում են որոշակի բնատնտեսական ներքին տարբերություններ, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է ոչ միայն պամաազգագրական, բնական համալիրի, տնտեսության զարգացման ու մասնագիտացման, այլև գյուղական տարածքների ու տարաբնակեցման ինքնատիպ առանձնահատկություններով: Բնատնտեսական այդ միավորներից Շիրակը, Գուգարքը, Ուտիքը, Սևանը, Վայքը և Ջանգեզուրը հիմնականում համապատասխանում են Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերին, իսկ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի տարածքները միասին վերցրած մասնակի շեղումներով համապատասխանում է Արարատ բնատնտեսական շրջանին:

Արագածոտնի մարզի ժամանակակից տարածքի բնակեցման, բնակավայրերի ցանցի ձևավորման և հետագա զարգացման համար առանձնահատուկ դեր են ունեցել 1829-30 և 1915-22 թթ.-ին Արևմտյան Հայաստանից բնակչության ներգաղթերը, տնտեսաաշխարհագրական և տրանսպորտաաշխարհագրական համեմատաբար նպաստավոր դիրքը, սոցիալ-տնտեսական գործոններն ու ռեսուրսները: Մարզում բնակչության թվաքանակի կայուն աճ է դիտվել խորհրդային իշխանության տարիներին: 1926 - 1989 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում մարզի բնակչության բացարձակ թվաքանակն ավելացել է 1,7, իսկ գյուղական բնակչությունը՝ 1,2 անգամ: Վերջին երկու տասնամյակի ընթացքում մարզում տեղի է ունեցել ինչպես ընդհանուր, այնպես էլ գյուղական բնակչության թվաքանակի նվազում:

Արագածոտնի տարածքում բարձրաչափական նիշերի մեծ տարբե-

րությունների, մակերևույթի բազմազանության, առանձին շրջանների միջև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների տարբերության և այլ պատճառներով առկա է բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և խտության նկատելիորեն մեծ տարբերություններ: Մարզի գյուղական բնակչության ավելի քան 43 %-ը տեղաբաշխված է 1000-1400, իսկ մոտ 33 %-ը՝ 1800-2200 մ բարձրության գոտում: Գյուղական բնակավայրերի առավել մեծ թվաքանակով աչքի է ընկնում 1801-2200 մ բարձրության գոտին, որտեղ ընկած են մարզի գյուղերի ընդհանուր թվի ավելի քան 47 %-ը (54 գյուղ): Արագածոտնին բնորոշ են մեծ, խոշոր և միջին մեծության գյուղական բնակավայրերը: Դրանց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 82,5 և գյուղերի ընդհանուր թվի՝ 64 %-ը:

Անցած տասնամյակների ընթացքում Արագածոտնի մարզում տեղի է ունեցել գյուղական բնակչության և բնակավայրի բաշխվածության փոփոխություններ՝ ինչպես ըստ բարձրության գոտիների, այնպես էլ ըստ գյուղական բնակավայրերի մարդաշատության խմբերի: Ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշներով գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում ավելացել է մարզի ցածրադիր՝ մինչև 1400 մ բարձրության գոտու բնակչության բաժինը: Մյուս կողմից՝ մարզի գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում տեղի է ունեցել լեռնային և բարձրլեռնային շրջանների (1801-2250 մ) գյուղական բնակչության մասնաբաժնի նվազում:

Արագածոտնում գյուղական տարածքների տնտեսական զարգացման լուրջ հիմնախնդիրներից է ոռոգման ջրի պակասը: Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են մոտ 24 հազ. հա և ոռոգվում են տարեկան միջին հաշվով 2,5-3 անգամ, որը բարձր բերք ապահովելու համար բավարար չէ:

Արարատի մարզն առանձնանում է գյուղական տարածքների ձևավորման ու զարգացման համար առավել նպաստավոր և նպաստավոր ռելիեֆային պայմաններով, աշխարհագրական դիրքով և ագրոկլիմայական ռեսուրսներով: Մարզի բնակեցման, գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման համար առանձնահատուկ դեր են ունեցել պատմական նախադրյալները և ենթակառուցվածքների զարգացումը: Խորհրդային տարիներին դիտվել է մարզի և՛ ընդհանուր և՛ գյուղական բնակչության թվի կայուն աճ, իսկ վերջին մեկուկես տասնամյակում՝ այդ ցուցանիշների նվազում:

Վերջին 90 տարիների ընթացքում Արարատի մարզի գյուղական տարաբնակեցման մեջ տեղի է ունեցել փոքր գյուղերի թվաքանակի կտրուկ

նվազում, մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերի թվի՝ կտրուկ ավելացում, բնակչության կենտրոնացում խոշոր գյուղերում, մարզի հիմնական բնակեցված գոտում (մինչև 1000 մ բարձրության շրջաններում)՝ ինչպես գյուղական բնակավայրերի, այնպես էլ բնակչության հարաբերական մեծությունների ավելացում:

Արարատի մարզին բնորոշ է մեծ, խոշոր և գերխոշոր գյուղային տարաբնակեցումը, որը պայմանավորված է ագրոկլիմայական նպաստավոր պայմաններով ու ռեսուրսներով, ինչպես նաև գյուղատնտեսության աշխատատար ու եկատմաբեր ճյուղերի զարգացումով: Մարզի տարածաշրջանների և առանձին գյուղական բնակավայրերի արտադրական մասնագիտացման մեջ առկա են որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են ագրոկլիմայական պայմանների տեղային առանձնահատկություններով, բնակչության տասնամյակներով ձևավորված արտադրական հմտություններով և ավանդույթներով: Մարզի գյուղական բնակավայրերն ԳԳ-ում առանձնանում են սոցիալ-մշակութային ու կենցաղային սպասարկման և ենթակառուցվածքների զարգացման համեմատաբար բարձր մակարդակով:

Արարատի մարզի գյուղական տարածքների ու բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման թիվ մեկ հիմնախնդիրը գյուղմթերքների իրացման և մթերող կազմակերպությունների կողմից դրանց գնման ցածր գներն են, որի պատճառով գյուղացիական տնտեսությունները կրում են ֆինանսական կորուստներ: Վերջինիս լուծման համար պետք է իրականացվեն տնտեսական և իրավական կարգավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք կնպաստեն գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվող մթերքների քանակի և տնտեսությունների եկամտաբերության ավելացմանը, ի վերջո՝ գյուղական տարածքների ու բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

Արմավիրի մարզը ևս առանձնանում է գյուղական տարածքների ձևավորման ու զարգացման համար ռելիեֆային առավել նպաստավոր պայմաններով, բարենպաստ աշխարհագրական դիրքով և ագրոկլիմայական ռեսուրսներով: Մարզում բնակավայրերի ձևավորման և զարգացման համար առանձնահատուկ դեր են ունեցել պատմական նախադրյալները և խորհրդային տարիներին ձևավորված արտադրական ենթակառուցվածքները:

Արմավիրը ԳԳ-ում առանձնանում է անցած տասնամյակների ընթացքում գյուղական բնակչության և բնակավայրերի թվի կայուն աճով, գյուղական նոր բնակավայրերի կազմավորումով: Առկա նախադրյալները պայմանա-

վորել են մարզի տարածքում մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերով հարթավայրային համատարած և բլրա-հարթավայրային ցրված տարաբնակեցման ձևավորմանը: Մարզի գյուղական բնակավայրերն ունեն առավելապես պտղաբանջարաբուծական արտադրական մասնագիտացում, որը բոլոր տարածաշրջաններում զուգակցված է կաթնային տավարաբուծության, երբեմն ոչխարաբուծության հետ:

Արմավիրի մարզի գյուղական համայնքների տնտեսական զարգացման և գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության բարձրացման ուղիներից մեկը ջերմատնային տնտեսությունների ընդարձակումն ու զարգացումն է: Մարզի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հրատապ լուծում պահանջող խնդիրներից են գյուղմթերքների իրացման հարցը, պարբերաբար կրկնվող բնական աննպաստ երևույթներից գյուղացիական տնտեսությունների կրած վնասները նվազագույնի հասցնելը և գյուղացիական տնտեսություններին առավել նպաստավոր պայմաններով վարկերի տրամադրումը:

Բնատնտեսական համեմատաբար նպաստավոր ու բավարար պայմանները, պատմական զարգացման ընթացքը և տնտեսաաշխարհագրական քիչ թե շատ նպաստավոր դիրքը պայմանավորել են Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի ցանցի ձևավորումը և զարգացումը: Խորհրդային տարիներին մարզի տնտեսական հզոր ներուժը և Գյումրի քաղաքը էապես նպաստում էին գյուղական տարածքների զարգացմանը: Սպիտակի երկրաշարժը և ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը խստորեն նվազեցրին մարզի տնտեսական ներուժը և Գյումրիի ազդեցությունը գյուղական տարածքների ու տարաբնակեցման, առանձին գյուղերի սոցիալ-տնտեսական առաջընթացի վրա:

Բնակեցվածության և տարաբնակեցման առումով Շիրակի մարզը բաժանվում է երեք արեալների. Ախուրյանի, Աշոցքի և Արթիկ-Անիի, որոնք միմյանցից տարբերվում են գյուղական բնակչության և բնակավայրերի խտությամբ, բնակավայրերի մարդաշատությամբ, տնտեսական մասնագիտացումով և գործառույթներով: Գյուղական բնակավայրերի մարդաշատության վրա առավել մեծ ազդեցություն ունի մարզկենտրոն Գյումրին և գլխավոր տրանսպորտային ուղիների նկատմամբ բնակավայրերի ունեցած դիրքը:

Շիրակի մարզի գյուղական բնակչության 2/3-ից ավելին տեղաբաշխված է 1401-1800 մ բարձրություններում, իսկ 2000 մ-ից բարձր շրջաններում՝ ընդամենը 4,9%-ը (վերջինիս բաժին է ընկնում մարզի տարածքի

գրեթե կեսը): Ըստ գերակշռող մարդաբանակի մարզին բնորոշ է մեծ, միջին և խոշոր գյուղային տարաբնակեցումը:

Նախկինում ունեցած տնտեսական ներուժի անկումը և վերջին ավելի քան քսանհինգ տարիներին Շիրակի մարզում ստեղծված սոցիալ-տնտեսական ճգնաժամային իրավիճակն առավել սուր դրսևորում ունի հատկապես Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանների և մարզի լեռնային ու բարձր լեռնային գյուղական բնակավայրերում: Դրանք առանձնանում են փոքր մարդաշատությամբ, ոչ նպաստավոր աշխարհագրական դիրքով, մարզկենտրոնից ունեցած մեծ հեռավորությամբ և վերջինիցս ունեցած թույլ ազդեցությամբ: Նման իրավիճակը զգալիորեն խոչընդոտում է գյուղական բնակավայրերի զարգացման ու առաջընթացի գործին և կարող է պատճառ դառնալ նշված տարածաշրջաններում առանձին բնակավայրերի բնազրկման ու վերացման:

Լոռու բնական պայմանների բազմազանությունը, ագրոկլիմայական ռեսուրսների և սոցիալ-տնտեսական զարգացման նախադրյալների նշանակալից տարբերությունները ստեղծել են գյուղական տարածքների ձևավորման և զարգացման համար միանգամայն տարբեր պայմաններ: Վերջինս արտահայտվում է մարզի ժամանակակից գյուղական տարածքների ու տարաբնակեցման բնորոշ գծերով և ինքնատիպությամբ: Դրանում իրենց դերն են ունեցել նաև Լոռու տարածքի բնակեցման պատմական և ազգագրական գործոնները: Տարածքի յուրացվածության և տնտեսության տարածքային կառուցվածքի նկատելիորեն մեծ տարբերությունների պատճառով մարզում գյուղական բնակչությունը և բնակավայրերը տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ: Գյուղերն առավելապես գտնվում են 1201-1800 մ բարձրության գոտիներում՝ տրանսպորտային ուղիների երկայնքով և մերձակա հատվածներում՝ Լոռվա սարահարթում և գետահովտային ու լեռնահովտային հարմար շրջաններում՝ առաջացնելով տարաբնակեցման միանգամայն տարբեր ձևեր, համալիրային տիպեր և ենթատիպեր:

Սպիտակի երկրաշարժի, մեր տարածաշրջանում տեղի ունեցած քաղաքաաշխարհագրական իրադարձությունների և բնակչության շարունակվող արտագաղթի պատճառով վերջին քսանհինգ տարում Լոռու մարզում նվազել է բնակավայրերի մարդաբանակը, տասնյակ գյուղական բնակավայրերում առաջացել են աննպաստ ժողովրդագրական իրավիճակ և սոցիալ-տնտեսական մի շարք հիմնախնդիրներ: Առանձնապես նկատելի է մարզի 1401-1800 մ բարձրություններում գյուղական բնակչության մասնա-

բաժնի նվազումը, որը 1979 թ-ից հետո պակասել է 7,3 տոկոսային կետով: Վերջինիս հետևանքով նշված շրջանների գյուղական բնակավայրերի ժողովրդագրական իրավիճակի վատթարացումից բացի էապես նվազում է նշված տարածքների յուրացվածության աստիճանը և տնտեսական արդյունավետությունը:

Լռու նարզի գյուղական տարածքների առավել հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներից են համարվում գյուղական բնակավայրերի նարդաքանակի նվազման կանխումը, տասնյակ գյուղերում ստեղծված բնակչության ծայրահեղ աննպաստ սեռատարիքային կառուցվածքի ու ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, դրանց տարածքային, մարդկային և այլ ռեսուրսների արդյունավետ ու նպատակային օգտագործումը:

Կոտայքի նպաստավոր աշխարհագրական դիրքը, ռելիեֆային և կլիմայական քիչ թե շատ բարենպաստ պայմանները, արգավանդ սևահողային և լեռնամարգագետնային արոտավայրային տարածքները, անցած տասնամյակների ընթացքում ձևավորված ենթակառուցվածքային տարրերը պայմանավորել են նարզի ժամանակակից գյուղական տարածքների ու տարաբնակեցման ձևավորումը: Մարզի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի փոփոխությունների վրա էական ազդեցություն են թողել 19-րդ դարի ընթացքում տեղի ունեցած բնակչության ներհոսքը, խորհրդային տարիներին արդյունաբերության բուռն զարգացումը, բնակչության ներհոսքը և ուրբանացման գործընթացները, իսկ անկախացումից հետո՝ արդյունաբերական և տնտեսական ներուժի նվազումը: Մարզի գյուղական բնակավայրերն առանձնանում են միջին մարդաքանակի համեմատաբար մեծ ցուցանիշով, իսկ գյուղական բնակավայրերի և բնակչության հիմնական մասը բաժին է ընկնում տարածքի 1201-1600 մ բարձրության գոտուն:

Անցած տասնամյակների ընթացքում Կոտայքի նարզում տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի և բնակչության թվի ըստ նարդաքանակի և ծովի մակարդակից ունեցած բարձրության համեմատ բաշխվածության զգալի փոփոխություններ (մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերի թվի, ինչպես նաև դրանց բնակչության մասնաբաժնի կտրուկ ավելացում, ցածրադիր՝ ծովի մակարդակից մինչև 1400 մ բարձրության շրջաններում ինչպես գյուղերի թվի, այնպես էլ դրանցում ապրող բնակչության մասնաբաժնի ավելացում): Տարածքի աշխարհագրական դիրքը, ագրոկլիմայական պայմանները և տնտեսության մեջ զբոսաշրջության ու ռեկրեացիայի որոշակի դերը պայմանավորել են Կոտայքի գյուղական բնակավայրերի տնտեսական մասնա-

գիտացման հիմնական ուղղությունները: Մարզի գյուղական բնակավայրերի միջև առկա է ինչպես գյուղացիական տնտեսություններից ստացված եկամտաբերության, այնպես էլ գյուղական բնակավայրերի սոցիալ-մշակութային և կենցաղային ծառայություններով ապահովածության և սպասարկման որոշակի տարբերություններ, որը պայմանավորված է առավելապես բնակավայրերի տնտեսաաշխարհագրական դիրքով ու տեղադիրքով:

Կոտայքի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հրատապ հիմնախնդիրներից են մշակելի հողատարածքների ամբողջական ու լիարժեք օգտագործումը, գյուղացիական տնտեսությունների ինտենսիվացման մակարդակի բարձրացումը և եկամտաբերության ավելացումը:

Գեղարքունիքում հարթավայրային բերրի հողերի և Սևանա լճի առկայությունը, ինչպես նաև մարզին բնորոշ պատմաաշխարհագրական և ժողովրդագրական գործոնները պայմանավորել են գերխոշոր, մեծ և խոշոր գյուղական բնակավայրերի ձևավորումը: Դրան նպաստել են նաև մշակելի հողատարածքների համեմատաբար մեծ չափերը, հյութալի ու ընդարձակ արոտավայրերի առկայությունը և բուսաբուծության ու անասնապահության ճյուղերի զուգակցված զարգացումը: Մարզում հստակորեն առանձնանում են տարաբնակեցման արեալներ, որոնք համընկնում են լեռնային գետահովիտների հետ և տարածված են գոգավորության առավել հարթ շրջաններում: Առավել բնորոշ են տարաբնակեցման խմբային, շղթայածև և գծային ձևերը:

Գեղարքունիքի մարզի գյուղական բնակչության 79 %-ից ավելին տեղաբաշխված են ծովի մակարդակից 1801-2000 մ բարձրությունների վրա, որն այդ բարձրության գոտում ԶԶ առավել խիտ բնակեցված տարածքներից է: ԶԶ բարձրադիր մարզերի մեջ Գեղարքունիքն առանձնանում է գյուղական բնակչության մեծ և գյուղերի՝ ամենափոքր խտությամբ: Բացառությամբ Կրասնոսելսկի տարածաշրջանի, Գեղարքունիքն առանձնանում է գյուղական բնակչության ծնելիության և բնական աճի համեմատաբար բարձր ցուցանիշներով և վերջին երկու տասնամյակում գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշների ոչ մեծ տատանումներով: Մարզում 1926-1989 թթ. ընթացքում տեղի է ունեցել գյուղական բնակչության թվի կայուն աճ, որից հետո՝ նվազում: Այդ նույն ժամանակամիջոցում գյուղական բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների էական փոփոխություններ չի կրել: Գյուղերի միջին մարդաքանակի ավելացման և

ըստ մարդաշատության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով փոխվել է ըստ գերակշռող մարդաքանակի մարզի գյուղական տարաբնակեցման բնույթը՝ դառնալով գերխոշոր, մեծ և խոշոր գյուղային տարաբնակեցում:

Զնայած Գեղարքունիքը ՀՀ մի շարք այլ մարզերի համեմատ ունի գյուղական բնակչության ծնելիության և բնական աճի առավել բարձր ցուցանիշներ, սակայն այստեղ ևս վերջին երկու տասնամյակում ստեղծված իրավիճակի պատճառով գյուղական գրեթե բոլոր բնակավայրերում առաջացել են ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և այլ հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են մարզի գյուղական բնակավայրերի առաջընթաց զարգացումը:

Գեղարքունիքի գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ խնդիրներից մեկը գյուղմթերքների իրացման հարցն է: Գյուղմթերքների ընդունման համեմատաբար ցածր գները (մասնավորապես կաթի) չեն նպաստում գյուղացիական տնտեսությունների զարգացմանը, չի կազմակերպվում մարզից կարտոֆիլի արտահանում: Բացի նշվածներից, մարզում զգացվում է նաև գյուղտեխնիկայի պակաս, հնացել է գյուղատնտեսության մեջ օգտագործվող մեքենատրակտորային պարկը (օգտագործվող տեխնիկայի մեծ մասը 25-30 տարվա հնության են):

Տարածքի խիստ մասնատվածության, բարձրաչափական միշերի 3500 մ-ի հասնող տատանումների, տարբեր դիրքադրությունների և մեծ թեքությունների պատճառով Սյունիքի մարզն առանձնանում է տարաբնակեցման բնույթի հակադրություններով: Մարզի գյուղական տարածքների ու տարաբնակեցման առանձնահատկությունները պայմանավորված են նաև պատմաաշխարհագրական և ազգագրական գործոններով և տնտեսական գործունեության խիստ բազմազանությամբ, որոնք իրենց ազդեցությունն են թողել նաև գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացի վրա:

Մշակելի հողատարածքների փոքր չափերը և գյուղատնտեսության զարգացման ոչ բարձր մակարդակը պայմանավորել են Սյունիքի մարզի տարաբնակեցման համակարգում փոքր գյուղերի գերակշռությունը: 1926 թ. համեմատությամբ ՀՀ-ում մարզի գյուղական բնակչության բաժինը նվազել է 2,5 անգամ:

Գյուղական բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկությունների պատճառով Սյունիքում ըստ բարձրության գոտիների գյուղական բնակչության շարժընթացը համահունչ է ՀՀ-ում տեղի ունեցած

գործընթացներին: Վերջին քառասուն տարում մարզում 2,2 անգամ ավելացել է մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերի թիվը, իսկ 501-1000 մարդ ունեցող գյուղերի թիվը նույնչափ նվազել է: Մարզում, հատկապես փոքր գյուղական բնակավայրերում, բնակչության շարժընթացի ժամանակակից միտումների պահպանումը կարող է հանգեցնել դրանցում սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրների և բնագրկման վտանգի առաջացմանը:

Քանի որ Սյունիքը համարվում է ՀՀ հարավային դարպասը և ունի ռազմաստրատեգիական հույժ կարևոր նշանակություն, ՀՀ տարածաշրջանային քաղաքականության անհետաձգելի խնդիրներից մեկը պետք է լինի մարզի սահմանամերձ և լեռնային գյուղական բնակավայրերի տնտեսաարտադրական և սոցիալական բազայի ամրապնդումը, սոցիալ-ժողովրդագրական բարենպաստ իրավիճակի ստեղծումը և ՀՀ պաշտպանունակության ամրապնդումը:

Վայոց ձորի տարածքը՝ շրջապատված բնական պատնեշներով, տիպիկ լեռնային, կտրատված մակերևույթով, չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով, ինչպես նաև սահմանափակ հողային ռեսուրսները, կախված տնտեսության զարգացման մակարդակից, ներքին ու արտաքին այլ գործոններից, առանձնահատուկ պայմաններ է ստեղծել մարզի բնակեցման և գյուղական տարածքների ու բնակավայրերի զարգացման համար: Մարզը ՀՀ-ում առանձնանում է նոսր բնակեցվածությամբ, գյուղերի ամենափոքր թվաքանակով և ոչ մեծ մարդաշատությամբ: Գյուղական տարածքների ու բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բարձրությունների միջև մեծ տարբերությունների և բազմաբնույթ ռելիեֆային պայմանների պատճառով մարզում առկա է գյուղերի ձևաբանական տիպերի, տարաբնակեցման ձևերի ու տեղական տիպերի բազմազանություն, որոնք մարզի տարածքի սահմաններում առաջացնում են տարաբնակեցման մեկ ամբողջական շրջան:

Անցած տասնամյակների ընթացքում Վայոց ձորի մարզում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական գործընթացների պատճառով նկատելիորեն նվազել է գյուղական բնակավայրերի, իսկ 1970 թ-ից հետո՝ նաև գյուղական բնակչության թիվը: Դրանք իրենց ազդեցությունն են թողել նաև մարզի տարածքում ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխվածության վրա: Մարզում էապես նվազել է ծովի մակերևույթից 1600 մ-ից բարձր շրջաններում ընկած գյուղական բնակավայրերի բնակչության բաժինը, որի հետևանքով ներկայումս

մարզի գյուղական բնակավայրերում ձևավորվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքի և բնական շարժի ոչ բարենպաստ իրավիճակ:

Վայոց ձորի մարզի համար առաջնահերթ խնդիր է գյուղական բնակչության թվաքանակի նվազման դադարեցումը, սահմանամերձ և լեռնային գյուղերի ամրապնդումը և մի շարք լքված բնակավայրի վերականգնումն ու զարգացումը:

Տավուշի մարզի տարածքի գառիվեր լանջերով խորը ձորերն ու կիրճերը, հորիզոնական և ուղղաձիգ խիստ մասնատվածությունը, տիրապետող համարվող 12⁰-ից բարձր թեքությունները զգալիորեն կրճատում են բնակեցման արեալը: Մարզում մշակովի հողատարածությունները և գրեթե ամբողջ բնակչությունը կենտրոնացված են գետահովիտներում, որի պատճառով առավել բնորոշ է ավազանային և գետահովտային տիպի տարաբնակեցումը:

Վերջին ավելի քան երկուսուկես տասնամյակում Տավուշի գյուղական տարածքների զարգացման վրա ազդող էական գործոն է դարձել սահմանամերձ գոտին: Մարզի տնտեսաաշխարհագրական դիրքի նախկինում ունեցած հնարավորություններն ըստ էության սառեցված են և չեն նպաստում տնտեսության և բնակավայրերի առաջընթացին:

Տավուշին մշտապես բնորոշ է եղել ըստ գերակշռող մարդաքանակի մեծ և խոշոր գյուղերի բարձր տեսակարար կշիռը: Փոքր և միջին մեծության գյուղերում, որոնք կազմում են գյուղերի թվաքանակի գրեթե կեսը, վերջին տասնամյակների ընթացքում դիտվում է միջին մարդաքանակի նվազում:

Տավուշն առանձնանում է նաև ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գյուղական բնակչության և բնակավայրի տեղաբաշխմամբ: Մարզի տարածքի ընդամենը 13.2 %-ը կազմող ծովի մակարդակից մինչև 800 մ բարձրության գոտում տեղաբաշխված են գյուղական բնակչության և բնակավայրերի կեսը:

Տավուշի մարզի գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման առավել հրատապ խնդիրներից են սահմանամերձ բնակավայրերի ամրապնդումը, դրանց արտադրական ներուժի հզորացումը, գյուղատնտեսական և տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, բնակչության սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և արտագաղթի դադարեցումը: Այդ ամենը կնպաստեն սահմանամերձ բնակավայրերի զարգացմանը և ՀՀ հյուսիս-արևելյան սահմանների պաշտպանունակության ամրապնդմանը:

Շուկայական հարաբերությունների ժամանակակից պայմաններում ՀՀ գյուղական տարածքների զարգացումը և վերափոխումը տարբեր մարզերում, տարածաշրջաններում, գյուղական համայնքներում ու բնակավայրերում դրսևորվում են տարբեր կերպ՝ կախված դրանց աշխարհագրական դիրքից, բնատնտեսական առանձնահատկություններից, սոցիալ-ժողովրդագրական ու տարածաշրջանային իրավիճակից:

ՀՀ տարածաշրջանների գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցանիշներից գյուղական բնակչության խտությունը և գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունը սերտ կապ ունեն տվյալ տարածաշրջանի գյուղատնտեսական հողատարածքների բացարձակ և հարաբերական մեծությունների հետ: Առանձին գյուղական բնակավայրերի և գյուղական տարաբնակեցման վերափոխումն ու կատարելագործումը նախ և առաջ պայմանավորված է գյուղատնտեսական հողատարածքների արդյունավետ օգտագործումից և գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումից:

ՀՀ տարածաշրջանների մեծ մասում գյուղական բնակավայրերի մարդաքանակի և դրանց ծովի մակարդակից ունեցած բարձրության միջև կոռելյացիոն թույլ կապը կամ դրա բացակայությունը վկայում է գյուղական տարաբնակեցման վերափոխման և զարգացման գործում բնական գործոնների դերի աստիճանական նվազման և այլ գործոնների դերի մեծացման մասին:

ՀՀ գյուղական բնակավայրերի բնակչության թվաքանակի ավելացումը, սոցիալական ու տնտեսական շատ խնդիրների լուծումը մեծապես կախված է դրանց բյուջեի փաստացի եկամուտներից և նպատակային օգտագործումից,

Եթե հանրապետության գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցանիշներից գյուղական բնակչության բացարձակ թիվը, խտությունը և գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունը սերտ կապ ունեն տարածաշրջանների ընդհանուր գյուղատնտեսական հողատարածքների մեծությունների հետ, ապա մյուս ընդհանրական ցուցանիշը՝ գյուղական բնակավայրերի մարդաքանակը, մեծապես կախված է գյուղական տարածքների մշակելի հողատարածքների մեծությունից:

ՀՀ բոլոր մարզերում և տարածաշրջաններում գյուղական տարաբնակեցման վերափոխումը և կատարելագործումը կախված է նաև մարզային և տարածաշրջանային կենտրոնների դերի բարձրացումից, համապատաս-

խան տարաբնակեցման համակարգերում դրանց գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրականացումից, որը կհանգեցնի մարզկենտրոն-գյուղական բնակավայր, տարածաշրջանային կենտրոն - գյուղական բնակավայր կապերի ամրապնդմանն ու կայունացմանը, տարաբնակեցման տեղական համակարգերի զարգացմանը:

Շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում մարզկենտրոնները, տարածաշրջանային կենտրոնները, առանձին քաղաքային բնակավայրերը, տեղական նշանակության կենտրոններ ԶԶ գյուղական բնակավայրերի համար հանդիսանում են նաև մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկաներ: Այդ կենտրոնների և գյուղական բնակավայրերի միջև կայուն տրանսպորտային հաղորդակցության ապահովումն ու զարգացումը կնպաստի գյուղական բնակավայրերի տնտեսական բազայի ամրապնդմանը, ի վերջո՝ գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

ԶԶ գյուղական տարածքների և առանձին բնակավայրերի զարգացման վրա իր ազդեցությունն է թողնում նաև վարչատարածքային բաժանումը և տեղական ինքնակառավարման համակարգը: Հանրապետության վարչատարածքային բաժանման վերակազմումները կնպաստեն մի շարք տարածաշրջանների գյուղական տարածքների ու բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծմանը: Արարատյան հարթավայրի, Շիրակի և Լոռվա դաշտերի, ինչպես նաև հարթավայրային մակերևույթ ունեցող այլ տարածքներում, գյուղական համայնքների խոշորացումը կարելի է համարել նպատակահարմար, եթե չկան դրան խանգարող տեղային առանձնահատկություններ և համայնքի մեջ մտնող գյուղերի բնակչությունը դեմ չէ:

ԶԶ սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից իրավիճակի պայմաններում ցանկալի չէ լեռնային և սահմանամերձ շրջաններում գյուղական համայնքների թվի կրճատումը: Այդպիսի տարածաշրջաններում փոքր գյուղերի համայնքի կարգավիճակի պահպանումը որոշակի դեր ունի այդ բնակավայրերի համար: Չնայած այդպիսի գյուղերում բնակչության կենսագործունեության ապահովումը կապված է մեծ դժվարությունների հետ, սակայն այդ տարածաշրջանների և պետության ռազմավարական շահերը պահանջում են պետական դրոշմախի միջոցներով ապահովել լեռնային ու սահմանամերձ շրջանների գյուղական բնակավայրերի ամրացումն ու զարգացումը: Այդպիսի տարածաշրջաններում նույնիսկ հազարից

ավելի բնակչություն ունեցող գյուղերի միավորումը մեկ համայնքի մեջ կարող է պատճառ դառնալ դրանց քայքայման համար: Ընդհուպ համայնքի ղեկավարի ընտրությունը, որի ժամանակ մեծ դեր ունեն նաև գյուղական բնակչության շրջանում ազգակցական և այլ կապեր, կարող է պատճառ դառնալ նոր ստեղծված համայնքի մեջ մտնող գյուղերից մեկնումեկի քայքայմանը: Հարթավայրային տարածք և միջբնակավայրային համեմատաբար զարգացած տրանսպորտային ուղիներ և լեռնային ու կտրտված մակերևույթ, ինչպես նաև միջբնակավայրային թույլ կապեր ունեցող տարածաշրջանների գյուղական համայնքների խոշորացման հարցերի նկատմամբ պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում:

Հայաստանի Հանրապետության գյուղական տարածքների ու տարաբնակեցման հեռանկարային զարգացման քաղաքականության հիմնական ուղիներից մեկը պետք է լինի նախալեռնային, լեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր ու մանր գյուղերի խոշորացումը, տասնյակ լքված գյուղերի վերականգնումը: Դա կնպաստի նշված շրջանների տարածքային ու գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, մարզերի սոցիալ-տնտեսական համալիրային զարգացմանը, կհանդիսանա բավարար նախադրյալ հանրապետության կայուն հասարակական զարգացման և պաշտպանունակության ամրապնդման համար:

РЕЗЮМЕ

А.А. ПОДОСЯН **СЕЛЬСКОЕ НАСЕЛЕНИЕ И ПОСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ** **АРМЕНИЯ (комплексное географическое исследование сельских** **местностей РА)**

Расселение армянского народа на Армянском нагорье и прилежащих территориях происходило на протяжении длительного исторического периода. Здесь с незапамятных времен занимались земледелием, ремеслами, использовали богатство недр. Во втором тысячелетии до н.э. на Армянском нагорье появились первые поселения сельского типа, а уже в первом тысячелетии до н.э. были основаны первые города.

Современные сельские местности и формы расселения в Республике Армения обусловлены не только разнообразием природных условий, но и событиями исторического прошлого. Особенно следует отметить непрерывно повторяющиеся опустошительные войны, во время которых грабились и разрушались многочисленные поселения, что явилось причиной не только сокращения численности населения и уменьшения людности поселений, но и привело к изменению этнического состава, оказало значительное влияние на бытовые особенности, характер хозяйственной деятельности, а также на внешний вид и расположение поселений.

Несмотря на длительный исторический путь развития, основные черты современной картины сельских местностей и расселения Республики Армения начали формироваться лишь в 30-40-ые годы 19-ого века. В последующие десятилетия, претерпев некоторые изменения в результате иммиграции, роста численности населения, возникновения новых и восстановления разрушенных и обезлюденных в прошлом сел, сформировалась основа современных сельских местностей и сеть расселения РА.

Сложившаяся в советское время отраслевая структура сельского хозяйства, его специализация и территориальная организация обусловили основные направления развития и характер сельских местностей республики.

В советский период государственная форма собственности являлась

благоприятным фактором для формирования крупных сельских поселений, а единый территориально-производственный комплекс привел к централизованной системе расселения с центром в столице.

Совершенно новые социально-экономические условия для развития сельских поселений РА сложились в результате коренных политических и социально-экономических перемен, имевших место за последние два с половиной десятилетия. Особенно следует отметить приватизацию земель и других средств сельскохозяйственного производства, проведенную в начале 90-ых годов, что явилось причиной ограничения возможностей экономического развития крупных сельских поселений. Негативное влияние на расположение сельских населенных пунктов в горных и приграничных районах оказало ухудшение геополитической ситуации Армении.

Основная часть сельского населения и поселений РА сосредоточена в долинах рек, на предгорных равнинных территориях, пониженных участках межгорных котловин и плоскогорьях. Значительная часть сельского населения страны - 46,2 %- проживает в Араратской долине и прилегающих к ней районах, составляющих 17,8% всей территории (без учета водной поверхности), в то время как в Сюникском и Вайоц Дзорском марзах, занимающих 24,3% территории страны, сельское население составляет лишь 7,2% от общей численности. Плотность сельских населенных пунктов наиболее высока в Араратской долине, где она превышает среднереспубликанский показатель в 3,2 раза, тогда как на большей части территории республики (примерно на 60%-ах) этот показатель оказался значительно ниже среднего по республике (3,1 село на 100 кв.км).

Характерная для горных стран закономерность убывания плотности сельского населения, числа сел и их средней людности по высоте над уровнем моря в РА не сохраняется. Показатели плотности сельского населения наиболее высоки в Араратской, Ширакской и Лорийской долинах, в приозерных районах Севана, имеющих относительно равнинный рельеф, хотя все они находятся на разных высотных отметках относительно уровня моря. На высоте 1401-1600 и 1800-2000 м показатели численности сельского населения, количество сел и их плотность выше, чем в высотных поясах 1201-1400 и 1601-1800 м соответственно.

Размещение сельского населения по сравнению с размещением всего населения РА имеет более равномерный характер. На высоте от 800 до 1000 м проживает более половины населения страны -54,5%, тогда как доля сельского населения в этом высотном поясе составляет всего 35%. На высотную зону 1800 - 2000 м приходится лишь 8,8% всего населения по республике, сельское же население здесь составляет 16%.

Для сельских местностей РА характерна повышенная сосредоточенность населения в крупных и сверхкрупных селах с численностью населения 3000 человек и более, доля которых в стране немногим более 11%, однако здесь проживает почти 40% всего сельского населения. В малых селах (с численностью населения до 500 человек), которые составляют 33,7 % от общего числа, проживает лишь 5,6% сельского населения. В РА не наблюдается определенной связи между изменением средней людности сельских поселений и их расположением над уровнем моря.

Для сельских поселений страны характерна однородность функциональных типов: почти всем селам присущи сельскохозяйственные функции и разнообразие производственной специализации. Из всего разнообразия производственных типов сельских поселений РА можно выделить типы сельских поселений со следующей специализацией: **животноводческой, скотоводческой, скотоводческо-полеводческой, овцеводческой, овощеводческой, овощеводческо-виноградарской, садоводческой и табаководческо-скотоводческой**. Следует отметить, что развитие и углубление рыночных отношений может внести определенные изменения в специализацию производственных типов сельских поселений РА.

Специфической особенностью сельского расселения горных стран является расположение поселений на местности и большое разнообразие их внешнего вида. В РА на морфологическую характеристику сельских поселений кроме природно-географических и экономических факторов существенное влияние оказали исторические, этнографические и некоторые локальные факторы. Нередко для населенных пунктов выбирались труднодоступные горные склоны, местности, окруженные оврагами и ущельями, имеющие преимущество с точки зрения защищенности от внешних вторжений. Наиболее характерными для РА считаются 17 морфологических

типов сельских поселений.

Разнообразие типов заселения территории РА обусловлено прежде всего расчлененным горным рельефом страны. Типы заселения расположены не сплошными районами, а отдельными большими или малыми ареалами, из-за чего одни и те же типы встречаются иногда в большей части районов страны, а в одном и том же районе могут оказаться разные типы заселения.

Небольшая территория РА характеризуется значительным разнообразием форм, комплексных типов и подтипов сельского расселения и сельских местностей, что также обусловлено горным характером рельефа. Физико-географические, социально-экономические и прочие условия формирования и развития сельских местностей и расселения в РА меняются не только в результате смены ландшафтных поясов, но и внутри каждой из них. На территории РА можно выделить семь районов, тридцать семь местных типов и двадцать подтипов сельского расселения.

Сеть сельского расселения РА претерпела наибольшие изменения за период с 1831 по 1970 гг., последующие же периоды характеризуются относительной стабильностью. Территориальные различия динамики сельского населения привели к большим контрастам в размещении и плотности марзах и регионах РА. За прошедшие десятилетия наблюдалась тенденция к уменьшению количества сельских поселений во всех высотных поясах на территории РА. Вследствие этого за период с 1926 по 1988 гг. доля численности сельского населения высотного пояса 800-1000м возросла более чем в 2 раза. Значительно увеличилась разница показателей плотности сельского населения между разными высотными поясами, в том числе сократилась доля и без того слабозаселенных территорий в горных и приграничных районах.

На территории РА четко выделяются природно-экономические единицы, которые характеризуются различием как историко-этнографического и природного комплекса, специализацией хозяйства, так и особенностями сельских местностей и расселения. Из подобных единиц Ширак, Гугарк, Утик, Вайк и Зангезур в основном соответствуют Ширакскому, Лорийскому, Тавушскому, Гегаркуникскому, Вайоц Дзорскому и Сюникскому мар-

зам, а территории Араратского, Армавирского, Арагацотнского и Котайкского марзов с некоторыми отклонениями соответствуют природно-экономической единице Арарат.

Наиболее характерными изменениями в сельских местностях и расселении республики на протяжении последних полутора десятков лет являются:

1. Сокращение численности населения во всех марзах и регионах;
2. Сокращение численности населения не только в малых, но и в больших, крупных и крупнейших селах;
3. Неблагоприятная демографическая ситуация в большинстве сел;
4. Углубление различий между отдельными группами сельских поселений по преобладающему количеству людности;
5. Наиболее острые проблемы сельских местностей в высокогорных и приграничных районах РА;
6. Снижение доходов в крестьянских хозяйствах сельских поселений.

Современная система административно-территориального деления РА на марзы, как единицы первого порядка, по существу не способствует социально-экономическому развитию сельских поселений. Араратский и Армавирский марзы обладают по сравнению с другими марзами рядом преимуществ; это прежде всего равнинный рельеф, непосредственная близость к столице, относительно развитая производственная и социальная инфраструктура, что в определенной мере способствует развитию сельских поселений, однако дело обстоит иначе в марзах, лишенных подобных преимуществ, с менее благоприятным горным рельефом.

Крупные села и общины обладают более широкими возможностями и условиями для обеспечения потребностей населения, его жизнедеятельности и социально-экономического развития. В осуществлении программы укрупнения сельских общин необходим дифференцированный подход в отношении сельских поселений, расположенных в районах, имеющих равнинный рельеф и относительно развитую инфраструктуру и для сельских поселений, расположенных на территориях с расчлененным рельефом и, соответственно, со слабо развитыми коммуникациями. Ввиду создавшейся в последнее время геополитической ситуации крайне нецелесообразным и

нежелательным является сокращение количества сельских поселений в горных и приграничных районах.

Одним из основных направлений проводимой политики перспективного развития сельских местностей и расселения РА должно заключаться в укрупнении небольших и малых сел в предгорных, горных и приграничных районах, а также восстановление десятков заброшенных сел, что будет способствовать повышению эффективности использования территориальных и сельскохозяйственных ресурсов указанных районов, комплексному социально-экономическому развитию марзов, что в свою очередь может способствовать устойчивому социальному развитию РА.

В условиях рыночных отношений развитие и преобразование сельских местностей РА в марзах, регионах, сельских общинах и поселениях происходит по разному в зависимости от географического положения, природно-хозяйственных особенностей, социально-демографической и региональной ситуации.

Из обобщенных показателей сельского расселения в регионах РА показатели плотности сельского населения и расстояние между сельскими поселениями тесно связаны с абсолютной и относительной величинами сельскохозяйственных земельных угодий. Преобразование и совершенствование сельского расселения отдельных сельских поселений обусловлено прежде всего эффективным использованием сельскохозяйственных угодий и интенсификацией сельскохозяйственного производства.

В большинстве регионов РА слабая корреляционная связь или ее отсутствие между численностью населения сельских поселений и их расположением над уровнем моря свидетельствует о постепенном уменьшении роли природных факторов и повышении социально-экономических факторов в преобразовании и развитии сельских местностей.

Увеличение численности населения сельских поселений РА, решение многих социальных и экономических вопросов в значительной степени зависит от фактических доходов и целевого использования их бюджетов.

Среди обобщенных показателей сельского расселения республики абсолютная численность сельского населения, ее плотность и расстояние между сельскими поселениями имеют тесную связь с общей величиной

сельскохозяйственных угодий регионов, тогда как не менее важный показатель - численность населения сельских поселений, в значительной мере зависит от конкретной величины обрабатываемых в селах земель. Целевое использование обрабатываемых земель и повышение их эффективности может играть решающую роль в укреплении и стабилизации позиций сельских поселений, в их социально-экономическом развитии.

Преобразование и совершенствование сельского расселения во всех марзах и регионах РА в немалой степени зависит от повышения роли региональных центров и центров марзов, от полноценного и эффективного осуществления их функций в соответствующей системе расселения, что играет важную роль в укреплении и стабилизации связей региональных центров и центров марзов с сельскими поселениями, а также способствует развитию местной системы расселения.

В условиях рыночных отношений центры марзов, отдельные городские поселения и центры местного значения одновременно являются для сельских поселений РА наиболее крупными близлежащими торговыми и сельскохозяйственными рынками. Устойчивое транспортное сообщение между этими центрами и сельскими поселениями может способствовать укреплению хозяйственной базы сельских поселений, их социально-экономическому развитию в будущем.

В сложившейся в РА социально-экономической ситуации является крайне нежелательным сокращение числа сельских общин в горных и приграничных районах, поскольку сохранение статуса малых сел на этих территориях играет немаловажную роль в сельских поселениях. Обеспечение условий жизнедеятельности и качества жизни в подобных селах сопряжено с определенными трудностями и из стратегических интересов государства исходит принятие соответствующих мер по укреплению и развитию сельских поселений в горных и приграничных районах. В качестве действенной меры может быть предоставление сельским общинам государственных дотаций. В указанных регионах объединение в единую общину даже крупных сел с населением, превышающим, к примеру 1000 человек, может стать причиной разложения и вымирания последних. Причины этого могут быть самыми разными, вплоть до выборов главы общи-

ны, когда большую роль играют родственные и иные связи. В вопросах укрупнения сельских общин необходимо применение дифференцированных подходов, поскольку последние должны быть принципиально разными для регионов с равнинным рельефом и относительно развитой инфраструктурой и для регионов с горным, расчлененным рельефом и слабо развитыми коммуникациями. Совершенствование административно-территориального деления РА является важнейшей из задач, так как это способно сыграть значительную роль в укреплении и социально-экономическом развитии сельских местностей страны, что особенно важно для сельских местностей, расположенных в горных и приграничных районах. Улучшение системы расселения страны непосредственно связано с осуществлением преобразований административно-территориальной структуры РА.

Таким образом, можно заключить, что укрупнение небольших и малых сел, расположенных в предгорных, горных и приграничных районах, восстановление десятков заброшенных сел является одной из основных стратегических задач и проблем перспективного развития сельских местностей Республики Армения. Осуществление подобных мероприятий несомненно будет способствовать повышению эффективности использования территориальных и сельскохозяйственных ресурсов, комплексному социально-экономическому устойчивому развитию марзов республики.

SUMMARY

AKSEL H.POTOSYAN

THE RURAL POPULATION AND SETTLEMENTS OF RA (THE COMPLEX GEOGRAPHICAL STUDY OF THE RURAL SETTLING OF RA)

The Armenian contemporary rural settlement, which has deep historical roots, has started to originate with its main features since the 30's and 40's of the 19th century. The basis of the Armenian contemporary rural settlement has been formed with its main features due to the continued immigration, population growth, creation of new rural residences and the renovation of previously destroyed and emptied villages during the following decades.

In the years of the Soviet Union the sectoral structure of agriculture, the territorial organization and specialization of the Republic of Armenia (RA) had greatly conditioned the way and the nature of the development of the rural settlement of the RA.

The political and socio-economic changes, especially the privatization of land and other means of agricultural production held in the last two decades, have created quite new conditions for the rural residences of the Republic of Armenia. The economic opportunities of development of extensive rural settlement have been restricted. The change of the political and geopolitical situation has influenced rural residences in mountainous and frontier areas.

In the Republic of Armenia the main part of the rural residents and residences are located in foothills, low-lying areas of mountainous concavity, river-valleys and plateaus. In the Republic of Armenia 17.8% of the terrestrial areas (The Ararat plain and its outlining zones) have 46.2% of the rural residents and 24.3% of the territory (the regions of Syunik and Vayots Dzor) have only 7.2%.

In the RA the plains Ararat, Shirak, Lory and the nearby areas of Lake Sevan, which have relatively plain surface, have higher density of rural residents, although they are settled at different heights above sea level.

In the Republic of Armenia the rural residents have less disproportions of distribution compared with the whole population. If the 54.5% of the residents of the Republic live in the 801-1000 meters altitudinal belt, then the part of the rural residents is 35% in that zone. At the same time, if the zone of 1800-2000 meters contains 8.8% of all the residents of the RA, then it owns 16% of rural residents.

The strict polarization of dense population of rural residences is typical of the RA. The large and super-large villages (more than 3000 people), which comprise the 11.2 % of the total amount of the villages in the Republic of Armenia, have 39.3% of the rural population and the villages having up to 500 hundred population which comprise the 33.7% have only the 5.6% of the rural population. There is no certain pattern in the RA, concerning the increase of the sea level height of the rural residences compared with the reduction and increase of the average population amount.

The homogeneity of the functional types is typical of the Armenian rural settlements, the agricultural function and the variety of industrial specialization are typical of almost all the villages.

In the RA, besides the geographical and economic factors, the historical, ethnographic and other local factors have had a substantial influence on the morphological characteristic of the rural settlements. 17 morphological types of rural settlements are considered to be more typical of the RA.

The not large territory of the RA also excels in the variety of the forms of the rural settlement and complex types and subtypes, which is first of all conditioned by the mountainous characteristic of the territory. As in the Republic of Armenia the geographical, socio-economic and other conditions of the formation and development of settlement change not only while passing from one landscape zone to another, but also inside each of them. In the RA 7 regions, 37 types and 20 subtypes of rural settlement are segregated.

The net of the rural settlement of the Republic of Armenia was greatly changed during the 1831-1970's, after which a stabilization of the net of the settlements occurred. A strict polarization of the distribution and density of the rural population has occurred among different regions and areas of the Republic of Armenia in the result of the great territorial differences of the dynamics of the

rural population's number. In all the high-up zones of the RA some reduction of the number of rural settlements has occurred.

The density of the zone of 801-1000 meters' height has increased more than twice in the distribution of the rural population of the Republic. The differences of the density of the rural population have increased significantly within different altitude zones, especially the mountainous and frontier areas of the Republic, already with limited population, have been particularly reduced.

There are clearly segregated certain natural and economic inner differences in the RA, each of which is characterized not only by historical-ethnographical natural complex, development and specialization of economy, but also by original features of rural settlement. Such units as Shirak, Gugark, Utiq, Sevan, Vayq and Zangezur basically correspond with the regions Shirak, Lori, Tavush, Gegharkunik, Vayots Dzor and Syunik, and the areas of the regions Ararat, Armavir, Aragatsotn and Kotayq combined with partial deviations correspond with the natural-economic region Ararat.

The more characteristic features of the changes that have been taking place in rural settlement of the RA during the recent 2 decade are: 1. There has been a decrease of rural population in all the regions and areas, 2. the decrease of population's number is noticed not only in small villages, but also in big, large and largest villages, 3. inauspicious demographic situation has originated in hundreds of villages, 4. according to the number of humanity the difference between different groups of rural habitats has become deeper, 5. the problems that have originated in the rural settlement system, have more acute and alarming essence in highlands and frontier regions of the RA.

The current administrative division scheme of the RA and its first class units-provinces, essentially don't contribute to socio-economic development of the rural settlements liable to them. If more or less development of industrial and social infrastructures and closeness of the capital promote the development of rural settlements to some extent and the administrative structure doesn't prevent the rural settlements from socio-economic development in the provinces Ararat and Armavir, which have plain surface, then we cannot say the same for the provinces with mountainous surface.

Although large villages or communities have broader opportunities to satisfy the needs of population's vital activity and provide socio-economic progress, when discussing the matter of enlargement of the rural communities of the RA, a differentiated approach should be shown to the rural residences which have plain territory and relatively developed interresidential transport routes and to the ones which have mountainous and rugged surface and weak interresidential communication. Under the conditions of the current situation, it isn't expedient to reduce the number of rural communities in mountainous and frontier regions.

One of the main issues of the prospective development and policy of the rural settlement of the RA should be enlargement of small villages in mountainside, mountainous and frontier regions and restoration of villages abandoned for decades. It will help to increase the effective usage of the territorial and agricultural reserves of the above-mentioned regions, as well as, it will contribute the socio-economic complex development of the Armenian regions and will be a sufficient pre-requisite for the steady social development of the Republic of Armenia.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբելյան Պ., Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում, Պետհրատ, Ե., 1931, 156 էջ:
2. Ադոնց Մ., Լեռնային շրջանների տնտեսական և սոցիալական զարգացումը և բնակչության միգրացիան, «Սովետական Հայաստան» օրաթերթ, 1983, թիվ 277:
3. Ավագյան Գ. Ե., Հայկական ՍՍՀ բնակչությունը: ԵՊՀ հրատ., Ե., 1975, 303 էջ:
4. Ավագյան Գ. Ե., Հանրապետության լեռնային և նախալեռնային շրջանների հետագա արագընթաց զարգացման համար, «Գյուղատնտեսական գիտությունների տեղեկագիր», 1986, թիվ 1, էջ 32-38:
